3. Ցերրորդն՝ միջնորդ բառն յեզրակացութեանն չկարէ գտանիլ. զի եզրակացութիւնն է երրորդ առաջարկութիւն հաւաքաբանութեան՝ ծագեալ և բղխեալ ի բաղդատութենէ երկուց ծայրիցն, որ եղեւ ի նախընթացսն ընդ միջնորդին. ուստի պատճառն չկարէ խառնիլ ի բնութիւն՝ ինամանէ հետեւեալ ներգործութեան որ է հետեւութիւնն. յորում վասն եղեալ բաղդատութեանն՝ ստորոգելին առեալ լինի ենթակային, Ուրեմն Պետրոս է բանական կենդանի։

4. Ի չորրորդն՝ միջնորդ բառն պարտի գոնէ մի անգամ ընդհանուր լինել. զորօրինակ մարդ (ԼԷ). զի կարացէ պարունակիլ ընդ իւրեւ զամենայն առանձս, որք գտանին պարունակեալ յիմաստն ստորոգելւոյն՝ որ յեզրակացութեան, այսինքն բանական կենդանի. քանզի ասացաք (ԼՀ) որ ինչ յարմարի ընդհանուր ճշմարտութեան իմիք, այն յարմարեցի և մասնաւորի նորին ճշմարտութեանն. նմին իրի թէ միջնորդն չիցէ ի նախընթացսն՝ գոնէ մի անգամ ընդհանրապէս առեալ, չկարէ պարունակիլ զամենայն տեսակս որք գտանին յեզրակացութեանն, այսինքն զենթակայն և զստորոգելին որք բաղդատեցան ընդ միջնորդին՝ որ է ընդհանուր. զորօրինակ՝ ձի է կենդանի. իսկ արդ մարդ անգամ է կենդանի. ուրեմն ձի է մարդ. ուր միջնորդ բառդ ﻫﻮﻣﻮ ի նախադասսն առեալ լինի երկիցս մասնաւորապէս, և յեզրակացութեան ընդհանրապէս. բայց ստորոգելին ﻫﻮﻣﻮ կարէ յարմարիլ միջնորդին այսինքն կենդանւոյն յայն մասն ևեթ յորում մի են, այսինքն ի կենդանութեան. բայց ոչ կարէ յարմարիլ յամենայն մասունս. զի ի նախադասսն մասնաւորապէս առեալ է և ոչ ընդհանրապէս. որպէս ստութիւն ենթադրի յեզրակացութեանդ, ուրեմն Ջ է ﻫﻮﻣﻮ, Ուստի առ ի քաջ հետեւեցուցանել միշտ պարտ է զի ենթակայն ըստ ամենայն լայնութեանն առեալ լիցի. իսկ ստորոգելին ոչ այսպէս, այլ ըստ մասին՝ յոր բաղդատեալ յարմարի միջնորդին,

3. Ի հինգերորդն՝ ոչինչ կարեն եղբայացացանել երկու նախադասութիւնքն որք ժխտեն. քանզի պարտին առորոշել, թէ այս յարմարի միջնորդին կամ ոչ. կամ միւն առորոշել թէ այս յարմարի միջնորդին, և միւսն բացասել կամ ընդհակառակն. զորօրինակ՝ մարդ չէ ընդունակ խորհրդոյ, Պետրոս չէ ընդունակ խորհրդոյ. ուրեմն չիք եղրայացութիւն։

6. Ի վեցերորդն՝ թէ երկոքին իսկ առաջարկութիւնք առորոշեն, հետեւութիւնն չկարէ բացասական լինել. այնու ոչ հետեւութեանս բնութիւն՝ բղխէ ի նախադասիցն բնութենէն. զորօրինակ՝ մարդն է բանական կենդանի, իսկ արդ Պետրոս է մարդ՝ ուրեմն Պետրոս է բանական կենդանի։

7. Ցեօթներորդն՝ յերկուց մանաւորաց ոչինչ հետեւի. քանզի չունելով զընդհանուր միջնորդն (տես ի վերոյ 4) չկարէ պարտնակել զմանաւորս ընդ ինքեանք. զորօրինակ՝ ոմանք ի մարդկանէ են խմնասունք. իսկ արդ Սաբել, Մարկիոն, Արիոս, Նեստոր, Եւտիքէս, են. են ոմանք ի մարդկանէ. ուրեմն են խմնասունք են. զի պատճառն մանաւոր (ԺԴ) չկարէ պարտնակել զամենայն մանաւորս, զի տարբերին յատկութեամբ. նմին իրի և ասի ի միոջէ առ բազումս՝ չէ ուղիղ հետեւութիւնն.

8. Ցութներորդն՝ ակարագոյն կամ յոռեգոյն մասին հետեւի եղրայացութիւնն. զի թէ յերկուց նախադասութեանց միոն բացասական իցէ, պարտ է հետեւութեանն ևս այնպէս լինել. կամ եթէ միոն իցէ մանաւոր, նոյնպէս լիցի և հետեւութիւնն. զի ըստ սկզբան յերկուց թէ միոն յարմարեցոյն ընդ երրորդի իմիք և միւսն ոչ, ոչ յարմարին ընդ միմեանս. զի միոն յարմարելով միջնորդին՝ և միւսն ոչ, հարկաւորապէս ի հետեւութեանն չկարէ միոն առորոշել լինել միւսոյն, այսինքն ենթակային, որք չյարմարեցան ի նախադասութիւնս. նոյնպէս թէ միոն յառաջարկութեանց մանաւոր իցէ, և հետեւութիւնն պարտի այնպէս լինել վասն նոյն պատճառի. զորօրինակ՝ ամենայն մարդ է զգայուն, իսկ արդ Պետրոս և Պօղոս



են մարդ. ուրեմն Պետրոս և Պօղոս են զգայական. լայն լինելը առորոշելին թէ ասէի՝ ուրեմն ամենայն մարդ է զգայական. զի կամիմ միայն հաստատել զզգայութիւնն զմանաւորացն՝ զՊետրոսէ և զՊօղոսէ, զորս նմին իրի բազդատեցի ընդ միջնորդին, և ոչ զամենայն մարդ. ուստի լայն էր հետեւութեանն իմաստ քան զայն՝ որ ի նախադասութիւնս ընդդէմ կանոնի (1.)։

Ի. Ասացաք (ԼՀ.) հաւաքաբանութեանն իսկ լինել երկու տեսակ, դ-ը և բ-ը-գ-ը-ը. զառաջնոյն և գկանոնացն խօսեցաք. բայց ծանօթութեան աղագաւ յատկութիւք և զայս, զոր գոգցես ամենայն փիլիսոփայք արժան չհամարեն ընդ լռութեամբ անցանել. ընդ որս ծանուցանեմք բազմապիսի լինել եղանակ հաւաքաբանութեան. ըստ ի-միք բազմապիսի շարիւ կամ կարգաւորութեամբ հնար է կերտել զերիս բառս կամ առաջարկութիւնս, յորոց կազմի հաւաքաբանութիւնն. բայց խոստովանիմ միաբերան ամենեքին թէ ոչ միայն ի բազմութիւ եղանակաց կամ ի պատկերացն անտի, որք են առաւել քան զվաթսուն և չորս՝ մանկունք քաղեն զշահ և ոչինչ, չիմքին իսկ ի միտս խառնակելով զդաղափարս. նա զի և ոչ այժմեան փիլիսոփայք զմին ի նոցանէ ի կիր արկանեն. ուստի զայսչափ յիշելով՝ դամք ի բազադրել առեսակս հաւաքաբանութեանն։

Երեքկին են գլխաւորապէս բարդ հաւաքաբանութիւնք, [illegible], [illegible], [illegible]. յորս ամենեսին են ոչ երեք առաջարկութիւնք՝ այլ բազումք. զորօրինակ՝ 1. Թէ ականն՝ եթէ լինքնին շարժի մարդն, ապա կենդանի է. իսկ արդ Աղեքսանդր արբեալ շարժի, ապա Աղեքսանդր կենդանի է, եթէ լայս է, տիւ է. իսկ արդ չէ լոյս, ապա գիշեր է, Ըստ կանոնի (ԼԹ. 8) թէ թէոթիւնն ճշմարիտ լիցի, և հետեւութիւնն ճշմարիտ է. թէ ոչ. և ոչ հետեւութիւնն։ 2. Ջառողականն՝ յորում յառաջարկութիւնս զառես զմին յերկուց. զորօրինակ՝ կամ ննջէ, կամ արթուն կայ. իսկ արդ արթուն կայ, ուրեմն ոչ ննջէ։ 3. Բաղխիւսականն է, յորժամ շաղկապաւ՝ կամ բազում ենթակայք կապեալք ի միասին առնուն զառորոշելի մի, կամ բազում առորոշելիք

կապակք վերադրին ենթականայի իմիք . զորօրինակ՝ բարեկամք Աստուծոյ փառասոցին . իսկ արդ Կիրեղ , և Գրիգոր և Աթանաս , են , բարեկամք Աստուծոյ են , ապա փառասոցին . և կամ այսպէս . որ սիրէ զազդ իւր , սիրի և պատուի ենդանէ . իսկ արդ Գրիգոր սիրէ զազդ իւր , ապա ուրեմն սիրելի և պատուելի է յազդէն ։

ԽԱ . 1 . Ընդդէմ վերոյիշեալ կանոնաց կերտեալ որ և իցէ հաւաքականութիւն իմաստակութիւն կոչի . զի սովիմբ հին սոփեստք չանային աղօտացուցանել զճշմարտութիւն հաւաքականութեանն . ո՛չ բան կանոնի զերիս բառս և զերիս առաջարկութիւնս ի միում հաւաքականութեան յառաջ բերելով , այլ զչորս բառս՝ պատրուակելով զնոսա իբրև զերիս , որով չփոթէին զտրամաբանան ոչ միայն զանվարժս , այլ զհմտադոյնն անգամ . զորօրինակ՝ շունն հայէ . իսկ արդ աստղն է Շուն , ուրեմն աստղն հայէ ։ 2 . Երկրորդ տեսակ ծպտեալ հաւաքականութեանն է -ի-ի-ել իմաստ , և -ը-ը իմաստ . յորժամ ենթականային ըստ ամիսոխման իմաստին չյարմարի առորոգելին , այլ ըստ այլ մասին . զորօրինակ՝ թէ ոք ասէ , կուրին անհնար է տեսանել . իսկ արդ Պետրոս կոյր տեսանէ զՅովհաննէս . ուրեմն կոյրն կարէ տեսանել ։ Յարմարի տեսութեան առորոգելին չ-ը-ը իմաստն , այսինքն որոշելով զհոգուոյն աչս ի մարմնոյ աչացն , բայց ո՛չ յամիսոխ իմաստն . այսինքն առանց որոշելոյ զերկու տեսակս աչաց , խորհելով զմարդն կոյր մարմնով ։ 3 . Երրորդ տեսակ ընդդէմ կանոնացն հաւաքականութեանն է , յորժամ առ ի ցուցանել զիմն՝ զորոյ ճշմարտութիւնէն տարակոյս կայ , ի կիր առնուն ո՛չ զծանօթագոյն իմն ճշմարտութիւն , այլ զայն իրր ծանօթ և ճշմարիտ՝ զորմէ նմանապէս տարակոյս կայ . զորօրինակ՝ ի ցուցանել թէ աչխարհս է նիւթապէս , ի կիր առնուցեալ էութիւն երկրի , լերանց , ծովու . զորօրինակ լերինք են , կան և են և տեսանին . իսկ արդ աչխարհս բազկացեալ է յաստեղաց և լերանց են . ուրեմն աչխարհս է նիւթապէս . զայս ձև հաւաքականութեան կոչեն անդրադարձութիւն ի նոյն ակզբունս , այսինքն ի նոյն տարակոյս . քանզի նովիմբ՝ զի ի տարակուսի կայ ճշմարտութիւն էութեան աչխարհի , տարակուսի և էութիւն լերանց , աստղաց , են . բայց տարակուսելին զտարակուսանալն ցուցանել ոչ կարէ ։ 4 . Ամին նման է և ձևն ի-ը-ը , որ է յետ բազմաց ի հաւաքականէն մնանել յայն՝ յորմէ խոյս տալ փափաքէր . զորօրինակ՝ երկբայելով զվկայութենէ պատմագրացն Հռովմայեցւոց՝ թէ Հռովմ նուաճեաց զաչխարհս ամենայն , բերել ի վկայութիւն հաստատութեան զրանս առենաբանին ցկնապար . « տիրեցեր աղանց , անթիւ աչխարհաց » . զի յայլոց , ո՛չ թէ ի Հռովմայեցւոց վկայութենէ հաստատել զայն պարտ էր ։ Են և այլ եղանակք հաւաքականութեան մանկտուցն՝ որք չրջեն զիմաստիմն յայլն . և առեալ զմի ինչ փոխանակ այլում իմիք , որք դիւրաւ գտանին արտաքոյ ընաբանին . որք ամենեքին ընդդէմ են քաջ տրամաբանութեան մտաց , բայց լուծցեն դիւրաւ եթէ զայս ունիցին մանկունք ի մտի յառաջարկութիւնս , եթէ ենթականայն նեղէ և փոքրագոյն քան զվերագիրն , ըստ ամենայն իմաստին և տարածմանն առեալ լինի (ԺԵ) . և վերագիրն ըստ մասին միայն պարփակման . իսկ թէ վերագիրն նեղէ քան զենթականային տարածումն , առեալ լինի ըստ ամենայն իմաստին , և ըստ մասին միայն տարածումն . զորօրինակ՝ մարդ է կենդանի . բայց ոչ է ամենայն կենդանի . զորօրինակ մարդ չէ անասուն , բայց է կենդանի ընդ անասուն ։ Մարդ է իմաստուն , այսինքն ունակ ի մարդկանէ ,

---

## ՑՕԴՈՒԱԾ Գ .

### ԶՂԱՂԱԳ ԱՑԼ ԵԻ ԱՑԼ ՏԵՍԱԿԱՑ ՀԱԻԱՔԱԲԱՆՈՒԹԵԱՆ , ԱՐՏԱՔԻՆ ԿԱՆՈՆԱՑՆ

ԽԲ . Ասացաք (ԼԹ . 1 .) թէ ի հաւաքականութեանն երեք պարտին լինել բառք , յորոց և երեք առաջարկութիւնք . բայց են այլ և այլ ազգք հաւաքականութեան , որք կամ նուազ են քան զերիս առաջարկութիւնս , և կամ առաւել քան զերիս . բայց չեն իմաստակութիւնք , այլ զի դիւրիմաց է ճշմարտութիւնն՝ որ ունի հաստատիլ , և այս պատճառի ի հասարակ կենցաղավարութեան մարդ-

կան : Սոցին գլխաւորքն երեք համարին , Էրիւթէ՛ , համբարձ . Էէյ+էչէ՛ փառաւոր , և Վէլէ՛՛ երկայրի , ևն ,

1 . Առաջինն է յորժամ զմին առաքինութեանց ևեթ յիշեն վասն գիւրութեան իմաստին . նմին իրի Ղ՛՛՛ Հ՛՛՛-Բ՛՛Ա՛՛Ր՛՛Ն՛՛ կոչի տիրապէս . զորօրինակ՝ մարդն խօսի . ուրեմն է բանական :

2 . Չ՛՛Ի՛՛Բ՛՛Ր՛՛՝ յորժամ ի ձեռնարկութեան իմիք բազում առաքինութիւնք կան , այնպէս զի վերադիրն առաքինոյն՝ լինի ենթակայ երկրորդին . և սորին վերադիր՝ ենթակայ երրորդին , ևն . մինչև ենթակայ առաքինոյն՝ լիցի և վերջնոյն ենթակայ . զորօրինակ՝ մեծ սպարապետն Թեմիստոկղէս ասէր հրամայել որգուն ամենայն աշխարհի . « Թեմիստոկղիտէս հրամայէ մօրն , մայրն ինձ , ես Յունաստանի , Յունաստան ամենայն աշխարհի » . ուրեմն Թեմիստոկղիտէս հրամայէ ամենայն աշխարհի . կամ այսպէս՝ Քահանայապետն Հռոմայ ունի զիրաւունս զամենայն պատրիարգաց , պատրիարգունք զամենայն մետրապօլտաց , մետրապօլիտք զամենայն արքեպիսկոպոսաց , և արքեպիսկոպոսք զամենայն եպիսկոպոսաց , և եպիսկոպոսք զամենայն գղերէն . գղերն զամենայն աշխարհէ . ուրեմն Քահանայապետն Հռոմայ ունի զիրաւունս իշխանութեան զամենայն աշխարհէ : Բայց առ ի քոջ տրամարանել այսու եղանակաւ , առաքինութիւնքն պարտին ամենեքին պարզ լինել և ճշմարիտ . թէ ոչ՝ յայնքան խառնիճաղանճ դաղափարս չիմանին միտք և հմտագունից :

3 . Կոչի Էէյ+էչէ՛ որ է փառաւոր , այսինքն մեծ յիւրաքանչիւր առաքինութիւն դնի կից և փառս իւր . զորօրինակ՝ որ յանխրատ գրկեալ յիւրաւանց խրոց դիմէ առ մեծագոյնն , քան իրաւանց գործէ . զի արգարութեան օրէնք զայգ պահանջեն . իսկ արգ Ռակեբեանն յանխրատ գրկեալ յամառոյն գիմեաց բազմամբ առ Գահն Հռոմայ , քանզի մեծ ճանապէրք գԱխտան Պետրոսի . ուրեմն Ռակեբեանն քան իրաւանց գործեաց :

4 . Կոչի Էէյ+չէ՛ Հ՛՛՛+Բ՛՛Ն՛՛Ի՛՛՝ յորում ձեռնարկութիւնն ունի գերկու մասունս , և յերկոցունց իսկ մասանց



գնեա բնել տրամարանն զվախճանն . զորօրինակ՝ Հռչակեալն այն մեծին Տերտուդիանոսի առ կայսրն անօրէն , որ երկնչէր մի գուցէ հալածելով քրիստոնէիցն ի հեթանոսաց , առնել բազմացի թիւ նոցա , արգելոյր զհեթանոսս ի հալածելոյ . բայց յղմբռնել քրիստոնէի ուրուք չարաչար տանջէր զնա , ասէ . « կամ մեզ պարտ են քրիստոնեայք կամ անմեղ . թէ մեզ պարտ՝ առ ի՞նչ հալածել արգելուս . թէ անմեղ՝ առ ի՞նչ ի կտտանս մատնես : » Բայց կարի գեղուշութեամբ մի գուցէ կարծեալգ երկայրի՝ զերրորդ իմն իմաստ յինքն ունիցի և ի վնաս ձեռնարկողի անդրադարձցի . զորօրինակ՝ նմին՝ որ չանայր համարձել զոմն մի յանձն առնուլ զկառավարութիւն հասարակապետութեան առել « կամ վարեսցես զայն լաւ կամ ոչ . թէ լաւ՝ լիցիս մարդկան անհաճոյ . թէ չար՝ աստուածոց . » զոր դարձուցեալ ինձ ասէ . « կամ լաւ վարեցից կամ չար . թէ լաւ՝ աստուածոց հաճոյ թուեցայց , թէ չար՝ մարդկան . ուստի յերկուց իսկ մասանց լատպոյն է յանձն առնուլ զկառավարութիւն հասարակապետութեան : » Բայց վերջինս այս լուծանի ի զատոզական հատաբանութիւնն (Թ . 2 .) զորս ամենեսին զգուշութեամբ ի կիր առնել պարտ է , բայց այժմիկ չէ և չէ երբէք ընդունելի կիրառութիւն նոցա :

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ .

### ՅԱՂԱԳԱՑ ՄԱԿԱԲՈՒԹԵԱՆ

**Թգ .** Մակաբական ձեռնարկութիւնն է՝ յորժամ գմասնաւոր առաքինութիւնս մի մի յատուկ բերեալ , ի նոցանէ գրականացութեամբ զընդհանուր իմն ճշմարտութիւն . զորօրինակ Պետրոս է մահկանացու , Պօղոս է մահկանացու , Յովհաննէս է մահկանացու , ևն . ուրեմն ամենայն մարդ է մահկանացու : Ա՛յս ձեւ ձեռնարկութեան գուցէ ընդդէմ կանոնաց հատաբանութեան երևեսցի . զի ճշմարիտ հատաբանութիւնն գմասնաւորս իմն ճշմարտութիւն հանէ

յընդհանուր ճշմարտութենէն. բայց յէական առորոշելիս, որ ամենեցուն յարմարի և մասնաւորաց յարմարի, և որ մասնաւորաց յարմարի, և ամենեցուն ընդհանրոց յարմարի. ուստի ի մասնաւորաց առ ընդհանուրն եզրակացուցանել հնար է. բայց յէականն, և ոչ ի պատահականն. զի մտկածութիւնն հայի բնական իրացն սկզբան կամ ֆիզիքականաց. զի նոյն պատճառք ֆիզիքականք զնոյն գործողութիւն առնեն. և կամ ֆիզիքական օրէնք ամիսոխոխ են, որպէս ի մասնաւորս՝ նոյնպէս յընդհանուրն. բայց միշտ լաւագոյն համարի մտկածութիւնն, որ թուէ զամենայն մասնաւորս, քան զայն՝ որ զոմանս միայն։

Ի. Ի վախճանի առաջնոյ մասինս ծանուցանեմք թէ սկզբունք՝ զորս ի կիր առնու հաւաքաբանութիւնն, կամ են ճշմարիտք բացարձակապէս և ի բնէ, և կոչին մեթաֆիզիքականք կամ համաբնաբանականք, այլք ֆիզիքականք և այլք բարոյականք։

1. Առաջինքն բղխին ի ներքին բնութենէ իրացն և ի կարգէն, և են այնքան հիմնական, այնքան ընդհանուր, այնքան հաստատուն, այնքան հաստատուն և անխախտելի, մինչ զի և ոչ Ամենազօր իւրով ամենակար զօրութեամբ կամացն կարէ ընդդէմ նոցա առնել կամ փոփոխել զնոսա և զկարգն։

2. Են բնական կամ ֆիզիական սկզբունք, զորս կարգեաց Ամենազօր կամօքն իւրովք. և են նմանապէս հաստատուն, հիմնական, հաստատուն ամենայն իրաց և անխախտելի, զորս բայ ի կամացն Ամենազօրէ և բայ ի կարողութենէն՝ ոչինչ կամք ոչինչ զօրութիւն փոփոխել կարէ զնոսա կամ զկարգ նոցա։

3. Երրորդ՝ են բարոյական հիմունք, որք այնքան ճշմարիտք, հաստատուն և հաստատուն են, որքան կամք ազգաց, միտք և համոզմունք ժողովրդեանն ի մի ինչ հաստատեալք կամ միաբանեալք հաստատուն կան։

Առաջնոյն օրինակ. բոլորն է մեծ քան զիւր մասն. յորոց երկոքին յարմարին ընդ երրորդի իմիք, յարմարին և միմեանց. նոյնն չկարէ ի միասին լինել և չլինել. չիք չրջանակ քառակուսի, չիք եռանկիւն քառակուսի. չիք ներգործութիւն առանց բանաւոր պատճառի իւրոյ, են,



Երկրորդին օրինակ. չիք մարմին առանց ծաւալութեան. մարմին ի վեր ձգեալ ինքնին հարկաւ անկանի յերկիր. մարմինն յաւիտեան անշարժ կայ, մարմինն հարկաւ ունի զմիջոց. մարմինն հարկաւ ունի զերիս քանակութիւնս՝ զերկարութիւն, զլայնութիւն, զերկայնութիւն, են։

Բարոյականին օրինակ. Ամէնք չինեցաւ ի Ցունաց, Հռովմ ի Հռովմայեցւոց, ամենայն վիպասանք միաբան պատմեն ականատես գոլով. ուրեմն ճշմարիտ է բարոյապէս վկայութիւն նոցա։ Առնել զբարին, խորշել ի չարէն, օրէնք ամենայն աղանց միաբան հրամայեն. ուրեմն ճշմարիտ է վկայութիւն նոցա։ Քրիստոս ծնաւ ի քաղաքի Դաւթի. թէ՛ հնութեամբ, թէ՛ Քրիստոնէիցն պատմութիւնք և աւանդութիւնք միաբանին. ուրեմն ճշմարիտ է վկայութիւն նոցա։

Ի. Սոցին ամենեցուն սկզբունք ճշմարիտ են. նմին իրի և հետեւութիւնք նոցա ճշմարիտք են. բայց զառաջնոցն չիք երբեք և չկարէ լինել իմն տարակոյս. զերկրորդացն նմանապէս ոչինչ տարակոյս զճշմարտութենէն ի յառեղծեալ կամաց, թէ՛ երկնայինք իցեն, թէ՛ երկրայինք. և քանզի Ամենազօր իսկ ամենայն իմաստութեամբ և կանխագիտութեամբ կարգեաց զօրէնս բնութեան զիզիքականս՝ որք բառական են վախճանի իւրեանց. վասն որոյ թէև կարէ՝ բայց չկամիցի երբէք փոխել զնոսա յառաջ քան զորոշեալ ժամն, զի անվայել է իմաստութեան նորա և կատարելութեան, ուստի ամիսոխոխ լիցին և սկզբունքս բան ամիսոխոխութեան կամացն Ամենազօրէ. ուստի ամիսոխոխ գոլով՝ միշտ և հանապազ նոյն լիցին, միշտ և հանապազ հաստատուն և ընդհանուր լիցին որպէս մեթաֆիզիքականքն։ Զնոյն կարելի է ասել ի բազում և զբարոյական ճշմարտութենէ սկզբանց. զի տալով Ամենազօրէ մարդկան զմիտս և զբնական զդայութիւնս՝ իբր կանոն և առիթ և միջոց գտանելոյ և յարելոյ ի ճշմարտութիւնն՝ կարգեաց զնոսա. եթէ անթիւ անհամար ազգաց և ազանց միտք և բնական զդայութիւն յընտրութեան իւրեանց զիմն իբր ճշմարիտ, ամենեքեան յայն սխալէին.

հետևէր թէ ամենեսեան ճարտարապետն չիցէ տուեալ արարածոց իւրոց գոնէ ի հարկաւորսն զուգիլ կարդ և գբաւական առիթ գտանելոյ գճշմարտութիւնն, և վախճանին հասանելոյ. բայց զայս ասել սխալ է և անվայել. ուստի ինքնին հետևի թէ՝ ազգաց և ազանց բարոյական և միաբան հաւանութիւն իմն ինչ իբր ճշմարիտ՝ է բաւական կանոն գտանելոյ գճշմարտութիւն. է -ճ-ն-ի-ե-լ-է յամենայն գարս, դ-ր-ը և հ---ր-ի և հ---ր-ա-ծ յամենայն ժամանակի. ուստի ի բազում առիթս գտանելոյ գճշմարտութիւն՝ բարոյական սկզբունք ոմանք որպէս մեթոդիզքն ի ճշմարտութեանն վայելեն, նոյնպէս և սոքա, Ս.հաւատիկ պատճառն, առ ինչ հաւաքաբանութիւնն բան կանոնաց որամարանութեան կարգեալ և բան այսոցիկ եռաւոտեան ճշմարիտ սկզբանց արտասանեալ, իցէ քաջ նպատաւ հասանելոյ ճշմարտութեանն.

---

## ՑՕԳՈՒԱԾ Ե.

### ՑԱՂԱԴԱՍ ԿԱՐԴԻ Ի ԴԱՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ ՀՆՏԵԻԵԼՈՑ

ԽԶ. Յետ քան ճանաչելոյ զօրէնս հաւաքաբանութեան, ի սկիզբն առնել ճառելոյ զբովանդակ գիտութիւնէ իմիք՝ երկու եղանակաւ կարէ ձեռն արկանել այնմ. կամ սկսեալ ի մտացն և ի պարզիցն գիւրաքանչիւրն մեկին հաստատելով հասանէ հուսկ ուրեմն ի բոլորն, և կամ ընդհակառակն՝ սկսեալ ի սմանէ իմանէ ի մասունս. զառաջինն կարդն առեմք ը-ն-ծ-ո-ւ-մ-ն, զերկրորդն՝ դ-ա-ս-ա-խ-ո-ս-ո-ւ-մ-ն. զօրէնակ՝ թէ ոք ճառել կամիցի զմարդկան մեռէ, նախ սկսանիցի ի պարզագոյն մասնէ, այսինքն ի բանական կենդանոյ. յետ ասարեալոյ սկսանիցի ճառել զսպիտակ մեռակէն, և ապա զմեռոյն, ապա զմասնաւորսդ. հուսկ ուրեմն ի յատկանիշսն Պետրոս, Ս.յոպիոն ասի թէ ընթացաւ ը-ն-ծ-ո-ւ-մ-ն կարգաւ. քանզի յայտ է թէ ընդ հա-



նուրք պարզագոյնք են քան զեզակի և մասնաւորս ի գաղափարս (ԺԵ). և կամ զաշխարհէս խօսիլ կամեցեալ, նախ զչորս տարերց ուրոյն ուրոյն խօսեր, և ապա զչորեքեան ի միասին, կամ ընդհակառակն, որ ի մասանց այսինքն ի պարզագունիցն սկսանէր և հասանէ ցբազում կամ ցբոլորն, միաւորէ կամ գումարէ. իսկ որ ի բաղադրեալոյն կամ ի բոլորէն սկսանի՝ լուծանէ. զորօրինակ՝ արհեստաւորն թէ չիննել կամիցի զպատատ մի, նախ զբաբինս մի մի գտեալ տաշէցէ, և յետ կատարման այսր գործոցդ բաբինս ուրոյն ուրոյն տաշեալս միացուցանելով յօրինէր զբոլորն պատատին չինուած, այսպիսին սակ ընթացեալ ը-ն-ծ-ո-ւ-մ-ն կարգաւ կամ արհեստիւ ի գիտութիւնս. իսկ թէ քակտել կամիցի նոյն ճարտարապետն զպատատ մի, և ելեալ զտանեսց նորա զմի մի քարինս խախտելով ի չինուածոյն հասանէ մինչեւ ցկործանել և ցրուել զամենայն չինուածն բոլոր, այսպիսին ը-ն-ծ-ո-ւ-մ-ն արհեստիւ ընթացեալ կոչի. Նմանապէս զգիտնական ուսմանց առեմք զայս.

ԽԷ. Երկոցունց իսկ տեսակացս այսոցիկ պէտս ունին ճառողք զդիտնական ուսմանց՝ յորոց մին է բանական փիլիսոփայութիւնն. չէ և չէ հնար միւսմ ի հեղինակացն զմին միայն ի կիր արկանել թողեալ զմիւսն. քանզի զորօրինակ ի վերոյ ցուցեալ գաղափարս, յորժամ (ԺԸ) ի մասնաւորաց զընդհանուր իմն և զպարզագոյն գաղափարս յօրինեմք. զորօրինակ զգաղափարս տեսակաց և սեռից, զկենդանութեան, զկանաչին, զկարմրութեանն են. ևս յորժամ միտք մարդոյ թողեալ ի բաց զայլ բազում յատկութիւնս մարդոյն, քննէ զմին. զորօրինակ զազատութիւնն, և ի մակածութեան (ԽԹ) յորժամ յաւել բերեալ զիւրաքանչիւր մասնաւոր ճշմարտութիւնս յամենեցունց հուսկ ուրեմն հետեւեցուցանեմք և հանեմք զընդհանուր իմն և զպարզագոյն ճշմարտութիւն և զայլ բազումս ոգին նմանս, ո՞չ ապաքէն բացարձակապէս ը-ն-ծ-ո-ւ-մ-ն կարգի պէտս ունիմք և նովիմք միայն հասանեմք ծանօթութեան նոցա. Նմանապէս յորժամ զներ-

գործութիւնս ի պատճառացն ցուցանելոք, յորժամ ազգի ազգի առաջս ճշմարիտս և զսկզբունս մանաւորացն տամք յարմարել. և ի չինուած հաւաքաբանութեան (Լ.) զմասնաւոր ճշմարտութիւն յընդհանրոյն յառաջ բերեմք, ո՛չ ապաքէն դ---ու--ն-ն կարգի ձեռնտուութեամբ յայդհասանելոք: Նմին իրի բազում ինչ մարդկային մտայ յայտնի և ծանօթ են, և յայնս դ---ւ-ն կանոնի պէտս ունիմք, և բազումք ևս ո՛չ այդքան ծանօթք, այլ յաւէտ մթինք են, յայնժամ ը--ն-ն պէտս ունիմք: Են վիճաբանութիւնք որ այսուիկ, և են՝ որ այնուիկ ցուցանին: Վասն որոյ՝

Խ. Ինչ միտ դիցեն մանկտին, զի ի պաշտպանել նոցա զվիճաբանութիւն իմն՝ պաշտպանողն

1. Նախ՝ պարզ և յստակ բանիւք դիցէ զսահման նիւթոյ վիճաբանութեան ըստ պատուէրի Տուիղիոսի թէ ամենայն բան զսկիզբն առցէ ի սահմանէ անտի իւրմէ. (Յաղագս Պաշտամանն. Գլուք. Ա. Գլուխ 2) որով լսողացն կամ ընթերցողացն՝ բնութիւն իրին յայն երեւան գայ:

2. Երկրորդ՝ բաժանեսցէ ի մասունս զբովանդակ վիճաբանութիւնն, և զնոսա մի մի ցուցանել խոստասցի. յերկուս յայսոսիկ կայանայ դնելն զնպատակ վիճին առաջի աչաց:

3. Մասունքն որք նիւթոյն յարաբերին՝ բացատրեսցին և ցուցցին վաստիւք այնպէս՝ զի մին միւսոյն լոյս տացէ, և զանպիտանն ի բաց դիցէ. իսկ թէ թողեալ կամ մոռացեալ զվիճին վերաբերեալն, և չգիտութեամբ ստերիւրեալ յոչ վերաբերեալն չեղիցէ, այսպիսին ընթանալ ասի յղբօսանս արտաքոյ քաղաքին, և կամ գոանն արտաքոյ նպատակին:

4. Սկզբունք որովք հաստատել կամի զնպատակն, ծանօթ և յայտնի լիցին. իսկ ի կողմանէ առարկողին պարտ է զի

5. Զընդդիմութիւնս և զվնասս գոցէ, որք կամ ուղղապէս և բովանդակապէս և կամ անուղղապէս և



մանաւորապէս հակառակ իցեն նիւթոյն կամ փաստից նոցին ընդհանրապէս. ապա թէ ոչ նմանէին երկուց մեծամարտից ձիաւորաց, որոց սլաքքն առտի անտի անցեալ հանդիպին միմեանց և ոչինչ և ի դերեւ ելանեն:

6. Ոչ երբէք կրկուք կամ ոխակալութեամբ վիճեսցեն ընդ միմեանս, այլ քաղցրութեամբ և սիրով և վայելչութեամբ: Եւ եւս ի կողմանէ յարգոյ դասատուին պարտ է զի զմանկտին հրով հասակին բորբոքեալս ամոք բանիւք զիջուսցէ, մի՛ թողցէ նոցա արտաքս ելանել ի նպատակէն, և մի՛ երբէք կողմնակցութեան սիրով արատեսցի, այլ սիրով ճշմարտութեան, զոր քաջ ուսանողքն գտանեն անտարակոյս ձեռնտուութեամբ տրամաբանութեանն:

---

## ՄԱՍՆ Բ.

# ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Խթ. Ասացաք (Զ.) ի սահմանի տրամաբանութեանն, թէ սա նախ ուսուցանէ քաջ տրամաբանել, և երկրորդ՝ ծանուցանել զաղբիւրս ճշմարտութեան: Զառաջինն մասին զպաշտօն բացատրեցաք. ինչ մեզ այժմիկ յերկրորդն միջամուխ լինել, այսինքն է բանալ և ճանաչել զնպատաս զայնոսիկ, որք մեծապէս օժանդակեն ծանօթութեանցն, զորս ցայսր քննեալ գտաք. այսինքն է բաց ի հաւաքաբանութենէն, որ է ճանապարհ և միջոց, որով հասանելոք ի ճշմարտութիւն իրացն, պարտիմք յուզել և գտանել զայն տեղիս կամ զաղբիւրս յորոց բղխէ ճշմարտութիւն. զորօրինակ զներքին գործողութենէ, զմտաց մարդկան, զբանէ, այսինքն զբանական կարողութենէ մարդկան, զբնական զդացողութենէն, զմարդկան հնդինակութենէ, որք են իբրև աղբիւրք՝ յորոց բառնամք զճշմարտութիւնն. կամ իբրև առաջնորդ՝ որք ցուցանեն մեզ զճշմարտութիւն: Ասեմք երրակի եղանակաւ ճըշ-

մարտութիւն իրաց կարէ յայտնի լինել մեզ, կամ -ՆՂԸ-ԴԷ-, կամ ՀՅԵՂԵՂԴԷ-, կամ ՆՂԸԴԷ-. այսինքն ի ձեռն ճշմարիտ սկզբանց և հաւաքաբանութեան զոր ի կիր արկանէ բանական կարողութիւն մարդոյ, և կամ յարտաքուստ ի վկայութենէ մարդկան. զայսոսիկ ամենայն յառաջիկայս յիւրաքանչիւր գլուխս տրոհեմք. բայց յառաջ քան զայդ առնել՝ պարտ է նախ գիտել՝ ինչ է ճշմարտութիւնն ընդհանրապէս յինքեան՝ և զպէսպէս աստիճանս ըմբռնման մարդկային մտաց որովք առների ի ճշմարտութիւնն, և ապա զաղբերացն ճշմարտութեան: Ա. յսոցիկ այսպէս եղելոյ. զայս երկրորդ մասն տրամաբանութեան ի չորս գլուխս բաժանեմք, Նախ զճշմարտին կամ զճշմարտութենէն, երկրորդ զներքին զդացողութենէ և զմտաց, երրորդ զբանէն կամ զբանական կարողութենէ մարդոյ, չորրորդ զդայութենէ կամ զհեղինակութենէ մարդկան. վասն որոյ՝

---

# ԳԼՈՒԽ Ա.

## ԾԱՂԱԳՍ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՉՃՇՄԱՐՏԻՆ

---

## ԾՕԳՈՒԱԾ Ա.

### ՉԻՆՉ Է ՃՇՄԱՐԻՏՆ

Ճ-ՄԻՆ ի գերազանցական բառից (ԺԼ) է ճշմարիտն, ի վեր քան զոր ոչ գոլով տեսակ կամ սեռ, գոգցես անհաս լինելով իմաստի նորա տիրապէս, վասն որոյ ծնայ և անսահմանելի. բայց թէ իրական սահմանաւն և իսկապէս չկարելով սահմանել զայն, ճարտասանական սահմանաւն ըստ կարի ըմբռնման մտացս փոքր ի շատէ մատչիմք ի նորա ծանօթութիւն (ԻԳ), Ճշմարիտն՝ ըստ սուրբ Օգոստինեայ՝ ասէ -Ն ԷՆ Ը Է(*) Ե ԸՆ ՏԵՍ Է.

(*) Օգոստին. յԱստուածաբանութեան Գիրք երկրորդ. Գլուխ 3.



և քանզի բայց յԱստուծոյ չիք իմն յէից՝ որ չինքնէ իցէ, այլ յայլմէ, նմին իրի միմիայն ճշմարիտն Օգոստինեայ, ըստ է, Աստուծոյ յարմարի: Ուրեմն այն ինչ որ էն՝ Աստուած է. ուրեմն ճշմարիտն իսկապէս առաջին Աստուած է միայն: Ամենայն ինչ որ է՝ յԱստուծոյ է. զորօրինակ ճառագայթք արեգական՝ յարեգականէ են և անտի ելանեն. նմանապէս այն ինչ որ է՝ Աստուած է, և այն իրք որք ըստ որում են՝ այսինքն ըստ Աստուծոյ են, էակք են և ճշմարտութիւնք բղխեալք յառաջին աղբերէն ճշմարտութեան: Երկրորդ ճշմարտութիւնք ասին սոքա, քանզի յառաջնոյ անտի ճշմարտութենէ ելանեն. զարձեալ ճշմարտութիւն ասին՝ զի են ըստ ներքին յատկութեանց իւրեանց, որք յԱստուած կան, և նոցին յամենայնի յարմարք: Վասն որոյ ասեմք՝ քանզի կայ Աստուած, այն ինչ -Ը Է, նմին իրի կան և էակք՝ ամենայն ինչ, ըստ որում են: Ճշմարիտն առաջին հաղորդի առարկայից կամ ի լինելութեան նոցա, կամ ի յայտնիլ նոցա բառիւք, կամ ի ճանաչիլ նոցա ի մտաց ըստ մեծին Աստուածբնդի: Ուստի յորժամ ըմբռնեմք զառարկայս մտօք, յայնժամ ունիմք զարտամաբանական ճշմարտութիւնն. յորժամ յայտնեմք բանիւք զըմբռնմունս ներքինս արտից մերոց որպէս երեւին արտաքս, ասի բարոյական ճշմարտութիւն իրաց, որում հակառակ կայ ստութիւնն, որ է յայտնել արտաքս զանմանն ներքին գաղափարին: Իսկ յորժամ ի միտ առնումք և ճանաչեմք անգամ, կամ կարեմք ճանաչել, թէ այս ինչ է ըստ յատկութեանց իւրոց, և յարմարի նոցին յատկութեանց որք և էականք են և կացուցիչք բնութեան իւրոյ, յայնժամ ծանօթութիւն այսր իրի կոչի ԴՐ-ՓԻԼԻ-Ն կամ ԳՆ-Ի-ՏՐ-ՈՒՆ: Ճշմարտութիւնք իրաց և յարմարութիւն նոցա ընդ միմեանս կան յէութեանն Աստուծոյ, որք և ասին ՆԽ-ԳԷ- և ՏԷ-ՏԻ- Ա-Ր-Ծ-Ոյ և ԴՐ-ՓԻԼԻ-Ն ԵՐ-ՈՒՆ ՆԻՑ. ըստ օրինակի կամ պատկերի ոչոց իրք ստեղծանին և ի թանձրացեալն գան ի գոյութիւն, ոչ թէ Աստուած՝ իբրև թէ զմտան իւր հատեալ յէութենէ իւրմէ, ստեղծանէ և ածէ ի գո-

յութիւն, այլ յոյնէ ստեղծանին ամենեքեան որք ի ժամանակի ստեղծանն, բայց ըստ մեթաֆիզիքական ճշմարտութեան իւրաքանչիւրոցն կամ ըստ նախատակին իւրեանց՝ որք ի յաւիտենից յէութեանն Աստուծոյ պարունակեալ գոյանին, Ա.հասարիկ պատճառն՝ որ վասն իրք կոչին ՏՀ-ԷՒ, ըստ որում ի յարմարութեան կան ընդ մեթաֆիզիզական էութիւնս իւրեանց որ յԱստուած կան. և ըստ այսմ իմաստնապէս ասացին երկու սուրբ վարդապետք, Օգոստինոս ընդհանրապէս՝ ՏՀ-ԷՒՏ Է ՈՅ ԸՆՀ ՈՒ Է. և մեք յաւելումք զայլոցն՝ ԸՈՒ ՈՒՈՀ Է, իսկ Սուրբն Թոմաս զմեթաֆիզիքական ճշմարտութիւնն ասէ լինել ՅՈՒՈՒՔՒՆ ԷՒՆ ԸՆԴ ԸՄԲՌՆԻՑԻՆ. քանզի թէ ոչ ճանաչին(*) իրին յատկութիւնք և յարմարութիւնք նոցա ի մտաց, չկարէ լինել մեթաֆիզիքական ճշմարտութիւն իրաց նկատմամբ մտաց մերոց, բայց ոչ նկատմամբ Աստուծոյ. քանզի ասէ անդ թէ՝ էութիւնք իրաց ճշմարտագոյնք են և կան յէութեան նորա՝ քան ի նոյն ներելոցն իրս. զի ճշմարտագոյն է էութիւն քարի յԱստուած քան ի նոյն քարն, ըստ որում էութիւն և նախատիպք իրացն են և կան ամփոփոխք և հաստատունք և յաւիտենական՝ յԱստուած: Բայց զայսմանէ բազում ասացուք ի համաբնաբանութեան կամ յընդհանուր մեթաֆիզիքայն: Զայս միայն պինդ կալջիք ի մտի. միտք մեր՝ քանզի առարկայք կան յինքեանս՝ ճանաչէ զնոսա. իսկ նկատմամբ Աստուծոյ՝ նմին իրի առարկայք կան, զի գաղափարք նոցա կան ի միտս Աստուծոյ: Կամ այսպէս՝ ծանօթութիւնք մտաց մերոց ճշմարիտ են, քանզի յարմարին առարկայից, և առարկայք ճշմարիտ են, քանզի յարմարին նախատիպ գաղափարացն որք ի միտս Աստուծոյ:

ԾՌ. Բառիցն տալ նշանակութիւնս կախի յաղաւտ կամս մարդոյ: Բայց յետ որոշելոյ զգաղափար իւրաքանչիւրոցն զորս նշանակեն, չկարեն բարոյապէս յայլ իմաստ բերել առանց աւութեան. ուստի և բառք ըստ որում

(*) Իով. Աստուածաբանութեան. Մասն Ա. Վիճ. ԺԶ. Ցօգ. 2:



յարմարեալք գաղափարացն և նշանակիչք նոցա՝ ճշմարիտ են. բայց երբեմն ևս պատահի առ տկարութեան մտաց մարդկան, զի խորհուրդք մեր և մտածութիւնք իրաց չյարմարին տիրապէս իրացն ընութեան կամ ճշմարտութեան. վասն որոյ սխալիմք առ բազումս, և բազմիցս ևս զճշմարտութիւն՝ տկարութեամբ՝ մեզ իբրեւ ստութիւն համարիմք և արտասանեմք, և ընդհակառակն զստութիւն իբրեւ ճշմարտութիւն. սակայն ոչ այնպէս առ Աստուած. զի թէև առ իմէնջ վրիպանօք իբրեւ ստութիւն առարկայք ըմբռնիցին, առ Աստուած ճշմարիտք են, որ ոչ վրիպի և ոչ իսկ կարէ վրիպել:

ԾԳ. Աստացաք զմեթաֆիզիքականէն՝ և զբարոյական ճշմարտութենէ, մնայ և ՓՐՕՔԱՆՀ ՏՀ-ԷՒՐՈՒՆ, որ է նմանութիւն գաղափարի մտաց և յարմարութիւն նորա ընդ առարկայս իւր: Առարկայքս այսոքիկ կամ արտաքոյ ներհակային, այսինքն արտաքոյ մտաց են, կամ կան կից մտաց. և նոյն իսկ միտքն կարէ լինել առարկայ ինքեան. զորօրինակ յորժամ ոք խորհի զմտաց իւրոց, նոյն միտք են որ խորհին զինքենէ: Ամենայն զգուշութեան պէտք են՝ և ուշի ուշով զիւրաքանչիւր առարկայիցն միտք խորհեցին, և այնպէս զգաղափարս իւր և զգատմունս առցեն յառարկայից, որք, այսինքն՝ թէ՛ պարզ ըմբռնմունք լիցին, թէ՛ գաղափարք, թէ՛ գատմունք, միայն թէ իւրմարութեան կայցեն ընդ առարկայս յորոց առեալ եղեն, ամենեքեան ճշմարտութիւնք են: Բայց մտաց տկարութիւնն և փորձ ուսուցանեն մեզ, թէ միտք մեր զառարկայս իւր աղագի աղագի աստիճանաւ պարզութեան ներկայացուցանէ ինքեան, քանզի

ԾԴ. Ամենայն առարկայք ճանաչելիք, կամ ոչ երբէք ներկայանան մտաց, կամ ներկայանան: Թէ չներկայանան, և ոչ միտք կարէ ըմբռնել զնոսա, և այս վիճակ մտացն նկատմամբ նոցա կոչի ՀՒՓՈԹԵԶ ԱՆՏԻՊՈՒՆ ՏՈՒ ՊՏՒՊՈՒՆ. բայց ի հարկէ և ներկայանան՝ թէ ոչ ամենեքեան՝ գոնէ նոքին, որոց ծանօթութիւնն հարկ է մեզ ի հասանել ճշմարտութեան և ի յագուրդ բաղձանաց մարդ-

կային մտացն կարողութեանց. բայց ո՛չ մի և նոյն օրինակաւ ներկայանան մտացս. 1. զի են ոմանք, զորս ի տեսանել անդ մտացս յայտնապէս ճանաչէ՝ և առանց իրիք տարակուսի յարի ինոսա և դատի զնոսա, այս այսպէս է, և այդ այդպէս. 2. են և այլք, զորս ի տեսանելն ըստ միոյ մասին ճանաչէ, բայց ճանաչելս այս ո՛չ բառնայ, որպէս զառաջինն, զամենայն տարակոյս ըղձմարտութենէ հակառակ մասին, վասն որոյ հաւանի ընդ այն բայց ոչ լիովին. 3. են և առարկայք, զորս որքան ի միոյ կողմանէ ըմբռնեալ ճանաչէ, այնքան և ի միւսոյ կողմանէ տարակուսի զնոցանէ, թէ արդեօք իցեն որպէս ըմբռնեմն թէ ո՛չ. Աստի ծագին չորեքկին էյ-ւ ֆէթ-ըն մարդկային մտաց. էյ-ւ ընֆէթ-ըն կամ թֆէթ-ըն ֆթ-ց. էյ-ւ պթ-ըն ֆթ-ց, էյ-ւ հ-ան-ւ-ան-ըն կամ ն-ջթ-ց, և էյ-ւ թ-ւ-ւ-ւ. Զայսոսիկ ամենայն առանձին իւրովք օրինակօքն բացատրեացուք ի

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՑԱՂԱԴՍ ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ, ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԾԵԱՑ, ՏԱՐԱԿՈՒՍԻ ԵՒ ՏԳԻՏՈՒԹԵԱՆ

**ԾԵ.** Ստուգութիւն մտաց է հաստատ և անվհեր հաւանութիւն մտաց ճշմարտութեան առարկայի. այս հաստատ հաւանութիւն մտաց՝ ծագի ի պարզութենէ ըմբռնման և առարկային, որք միմեանց յայտնապէս յարմարին, և յատկութիւն առարկային՝ որ է ճշմարտութիւն, յայտնի և ճանաչի ի մտաց ի ձեռն բառիցն. զի վախճան մտաց է՝ գտանել զճշմարտութիւնն. զորօրինակ ստուգութիւն ասի՝ 4 և 4 առնեն 8, կամ բազմապատկեալ 16. քարինք անշարժ կան ի տեղիս իւրեանց. են, են. եթէ ստուգութիւնն առցի իբր գործողութիւն մտաց՝ ասի ընդ-յ-ւ պթ-ըն. իսկ եթէ առեալ լիցի իբրև յայտնու-



թիւն իրին, կոչի պթ-ըն-ւ պթ-ըն, կամ լաւ ևս ճշմ-ըն. բայց լաւ միտ դիր. քանզի առարկայք կամ ֆ-ըն-ֆէչէթ-ւ-ւ են, կամ ֆէչէթ-ւ-ւ և կամ բ-ըյ-ւ. ըստ վերոյիշեալ բացատրութեան հարկ է զի լիցի որպէս ստուգութիւնն՝ նոյնպէս և ճշմարտութիւնն՝ մեթաֆիզիքական, ֆիզիկական և բարոյական. (տես ԽԴ. և Խե)։ Ցերկրակի ճշմարտութեանցս յայտոյիկ ոմանք են և ճանաչին ի մէնջ անմիջապէս, և ոմանք միջնորդութեամբ կամ միջապէս. զորօրինակ՝ ցուցանեն մեզ ներքին զգայողութիւնք մտաց, ես խորհիմ, ես կեամ, ես ինդամ, ես ցաւիմ, են, կամ զգայարանք մեր, տեսանելիք զարև. մարմինք ծանուցանք են. աստեղք յերկինս փայլին. կամ առաջին սկզբունք մտաց յայտնեալք, յորոց երկուք յարմարին երրորդի խիք, յարմարին և միմեանց. նոյնն չկարէ ի միասին լինել և չլինել։ Եւ ոմանք միջապէս կամ միջնորդութեամբ վստահից հաւաքաբանութեան, կամ վկայութեամբ մարդկային հեղինակութեան. զորօրինակ՝ հաւաքաբանութեամբ ցուցանեմք զէութիւն Աստուծոյ, գհոգւոյ, են. են։ Դարձեալ գիտելի է՝ զի ըստ աստիճանի ուշիմութեան և գիրաքանչիւրոց, գերազանց կամ նուաստ կարէ լինել ստուգութիւնդ. զի ոմանիք և իմաստունք ըմբռնեն զմի և զնոյն առարկայ, բայց ո՛չ ըստ նոյն աստիճանի ստուգութեան ճանաչեն զայն։ Եւ ևս ոմանք բաժանեն զճշմարտութիւնն ենթակայական ի պթ-ըն և ի բ-ըյ-ւ-ըն. սոյն այս է նոյն ստուգութիւնն, բայց յաւելու ի վերայ ստուգութեան զառաւել իմն լոյս, որով ո՛չ միայն միտք անվհեր և հաստատուն եղանակաւ հաւանի ճշմարտութեան առարկային, այլ և հանդչի խաղաղ և խայտայ ընդ գտեալ ճշմարտութիւնն. փոքր գոլով զանազանութիւն նորա յստուգութենէ, չդնեմք զայն իբրև հինգերորդ վիճակ մտացն, թէև ստուգութիւնն առանց բացայայտութեան կարէ լինել, բայց սա առանց նորա չկարէ լինել։

**ԾԶ.** Հ-ան-ւ-ան-ըն-ն է, որպէս ասացաք ճանաչել զիմն ըստ մեծի մասին, բայց միտք մարդոյ ոչ հանգչի լիովին

ինա, այլ ասայ առիք այլով իւիք և եւս կամ այլով վկայութեամբ առուգելոյ պըմբռնեալ կարծիս, ճայտնի իմն է և անժխտելի թէ բազում ծանօթութիւնք մեր միայն կան յատուկեան հատանականութեան, և զբազում առաջարկութիւնս թէ՛ փիլիսոփայութեան, թէ՛ աստուածաբանութեան իւր անտարբերս ունիմք. և այս վասն ամիսոփման մնացս, որ աղագաւ անհաս են մեզ լիովին իմաստք և ծանօթութիւնք նոցա. զորօրինակ՝ յասել ուրուք խորհիմ թէ՝ աչօք իմովք լուայ և աչօք ընթերցայ, թէ վենետիկ առաւ ի ձեռաց Գերմանիոյ ի պատերազմի. Ա՛յ, այսպիսի վկայութեան արժան է հաւատս ընծայել, զի այր խոհեմ է և իմաստուն, վասն որոյ և վկայութիւն նորա մեզ ճշմարտութիւն թուի հատանական. բայց և չիմնէն կատարելապէս՝ այնպէս՝ հնար է, և առաւել ստուգութեան պէտք են.

ԾԼ. Տ-ը-ի-ր է, ըմբռնումն կամ ծանօթութիւն առարկայի, որոյ ճշմարտութեանն աղագաւ որքան են փոյթք աստրասականք, վասն ստութեանն եւս այնքան գոյանին բացասականք. վասն զի կայ ի միջի երկոցունց և չկարէ որոշել ո՛չ զմին և ո՛չ զմիւս մնան. զորօրինակ անձինք հինգ թէ վկայեն վասն առմանն Ա.թենայ, և հինգ եւս զհակառակն վկայեն, տասնեքին իսկ ժամանակակիցք՝ լռէն անշուշտ ի տարակուսի կացցէ.

ՃԼ. Տ-ի-ր-ն-ն վ-ի-ն պատճառք բազումք են. նախ ի կողմանէ նիւթոյն, զի բազում դիտութիւնք են նուրբք և դժուարինք, զորս ի միտ առնուլ անդուլ աշխատանաց պէտք են. ի պակասիլ սոցա՝ պակասին և դիտութիւնք, և պակասութիւն դիտութեան է անդիտութիւն. Երկրորդ՝ ի կողմանէ անկարգ ընթացից յուսմունս, այսինքն ձեռն տալ բարձր դիտութեանց՝ առանց ի ձեռս բերելոյ նախ զպարտուպատշաճան նոցին գիտութեանց, կամ դեռ չառեալ ի միտ զառաջին դաս, յերկրորդն աճապարել. և միով բանիւ անսալ շահատէտ աղդարարութեանց յարդոյ դասատուին. Երրորդ՝ ենթակայարէս ի կողմանէ մտացն և կարողութեան հոգւոյն, զորս ստրկացուցանէ և նուաճէ



ընդ իշխանութեամբ հաճոյիցն մարմնոյ, որով մարդ գոլով ինամանութիւն Աստուծոյ՝ անասնոց հաւասարի և խանդարէ զմտացն կատարելութիւն ընդ յատկութիւնս անբանից՝ և եւս միտ չդնելով պարզութեան գաղափարացն, զդատմանց, զկանոնացն որամաբանութեան են, են, Աչալափ զճշմարտութենէն ընդհանրապէս. ժամ է արդ խօսիլ ի մասնաւորի զաղբերացն ճշմարտութեան,

---

## ԳԼՈՒԽ Բ.

### ՅԱՂԱԳՍ ԱՂԲԵՐԱՑՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

---

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳՍ ԽՂՃԻ ՄՏԱՑ ԿԱՄ ՆԵՐՔԻՆ ԶԳԱՅՄԱՆ

ՃԹ. Առաջին յաղբերս ճշմարտութեան է ներքին զգայութիւն հոգւոյն, որ է խորհիլ հոգւոյն զանձնէ, զէութիւնէ և զներքին գործողութեանց իւրոց, և ճանաչել զինքն գոլ նախ ենթակայ էութեան իւրոց ներգործութեանց, այսինքն խորհելոյ իւրոց, ուրախութեանց իւրոց, ցաւոց իւրոց, և առհասարակ նոցին՝ որք անմիջապէս ի հոգին սկսեալ ի հոգին կատարին. զայսոսիկ ամենայն կոչեմք Ներքին ը-ը-ը-ն-ա-ս-ի-ր կամ Ներքին ի-ն-ը-ա-ս-ի-ր, անմիջապէս ճշմարտութիւնք կամ առ հասարակ Խ-ճ-ի-ա-ն-ի-ր. Ա.յսոքիկ ներքին զգայմունք հոգւոյն ճշմարիտք են, և չի՛ք երբէք տարակոյս ինն զնոցանէ, և չկարէ իսկ լինել. քանզի անմիջապէս ի հոգւոյ ելանեն և կից են նմին, և ենթակայն նոցա միշտ մի և նոյն կայ և մնայ. Ուստի ամենայն յատկութեամբ ֆիզիկական ճշմարտութեան զգեցեալ են. և վասն այնքան ստոյգ և բացայայտ լինելոյ նոցա՝ ամենեւին ընդ վորձիւ չանկանին. զորօրինակ չանկանի արեգակն ի

միջօրէի ընդ փորձիւ՝ թէ կայ, զի ամենեցուն յայտ է այդ։ Նմանապէս միտք մարդոյ կամ հոգին միացեալ գոլով ընդ ներգործութիւնս իւր, չկարէ չճանաչել զնոսա. դարձեալ եթէ միշտ և յարատեւ չխորհէր և չճանաչէր ընդ թէ կայ և է, չկարէր պահել զնոյնութիւն իւր. զի յարատեւ զէութիւն իւր ճանաչելով՝ գաւառ թէ է՛, և ոչ է՛, և գործողութիւնքդ իմ են։ Եւ քանզի միշտ զինքն ճանաչէ, ճանաչէ և զիւր ներգործութիւնս՝ որ չինքն լինին կամ չինքեան պատահին. ուստի յորժամ միտք մեր վկայեն զսոցանէ, անտարակոյս և բացարձակապէս ճշմարիտք են. ուստի յայտնիկ այսպէս արտասանեցէք և զառաջարկութիւնս թէ՝ ներքին զգայութիւն մեզ է առկայ և միջոց կամ աղբիւր ճշմարտութեան։ Ա.յսոքիկ ամենայն ոչ են փաստք, որով հաստատի և ցուցանի ճշմարտութիւն առաջարկութեանս, այլ յայտնի և բացատրի։

Կ. Եթէ եղանակ զգայման կամ պատճառն զգայման ինոյն հոգւոյ է, որպէս և ամենայն գործողութիւնք նորա, և ի հոգին կատարին, այն ամենայն գործողութիւնք հոգւոյ կոչին ներքին և հոգեւոր զգայմունք. իսկ թէ պատճառն կամ առթիվն յառաջ գայ յարտաքուստ անտի, այսինքն է ի մարմնոյ հոգւոյն և յայլոցն էութեանց, որք շուրջ պատեն զմեզ, կամ մարմին իւրք ներքինին, և կամ անդնիւթ իմն գոյութիւն, յայնժամ կոչին ֆոյ հոֆոյ ոֆոֆոյ, յորս հոգին ճանաչէ զգործողութիւնս իւր գալ յարտաքին մարմնոյ կամ ի գոյութեանց, ո՛չ ի ներքնոյ անտի սկզբանէ գործողութեանց, այսինքն չինքնին։ Խօսեցաք ուրոյն և զգայարանացն թէ որպէս և նոքա, որք կից են հոգւոյն ի ցուցանել զարտաքին առարկայս, են աղբիւրք ճշմարտութեան և զգործողութիւնս իւրեանց հաղորդեն ընդ ներքին զգացողութիւնս։

ԿԱ. Քարթեզիոս սկսաւանօք զնոր իմն ոճ խօսից ի վեր հան, վեր ի վայր տապալեալ գկարգ բնութեան էից. նախ եդ զներգործութիւնն, և յայտնեալ եհան զէութիւն պատճառին առելով, ԵՊԵ ԽՈՒՀՒ, ՈՂ ԵՄ։ Քանզի ասէր թէ առ ի հաստատել ի գէութիւն ամենայն ճշմարտու-



թեանցն՝ զոր ուսուցանէ փիլիսոփայութիւնն, պարտ է նախ մարդոյն ուրանալ զամենայն և զամենեցունց տարակուսիլ. բայց հուսկ ուրեմն խիղճ մտացն ազդ արասցէ նմին, թէ խորհիմ. և քանզի որ խորհին՝ անհնար է չգնել. ուրեմն եթէ եմ, եմ զի խորհիմ։ Ա.յսպիսի տարակուսանաւք տակաւ տակաւ հասանէ մարդ ի ծանօթութիւն ամենայն փիլիսոփայութեանն ճշմարտութեանց, Ցոյժ վրիպեցաւ, նախ զի են ճշմարտութիւնք կամ սկզբունք որք պայծառութեամբ և բացայայտութեամբ իւրեանց այնպէս զմիտս լուսաւորեն, զի անհնար է տարակուսիլ զնոցանէ, զորօրինակ 4 և 4 առնեն 8. են։ Երկրորդ՝ որ ի տարակոյս արկանէ զբացայայտ սկզբունս, նոյնպէս կարէր տարակուսիլ և զխորհելոյ խղճի մտաց, թէ արդեօք խորհի ատուգապէս թէ ո՛չ։ Երրորդ՝ ո՛չ միայն խորհելոյն ենթակայ է հոգին, այլ և ամենայն կարողութեանց, մտաց, բանականութեան, յիշողութեան. զորօրինակ՝ որ ուղիղ գաւառ զխորհելն, նոյնպէս կարէր և ուղիղ գաւառ զայսպիսի կարողութիւնս կամ գյատկութիւնս իւր։ Զորրորդ՝ պատ է և անարժան փիլիսոփայի հեռեւութիւնն, ԵՊԵ ԽՈՒՀՒ, ՈՂ ԵՄ. զի նոյնն՝ որ աղդէ զնա զարտակոյսն, ԵՊԵ ԽՈՒՀՒ, կարէր և հնար էր աղդել զնա, ԵՊԵ ԸՆՈՒՀՒ, ՈՂ ՉԵՄ. բայց անմտութիւն է ասել զնա՝ է, կամ տալ չէին աղդել զխորհիլն։ Զի չկայ ինչ ներգործութիւն առանց բացառոտ պատճառին, և մեծ անմտութիւն այն է, զի ի խորհելոյ յառաջ բերել զխորհողին էութիւն. ո՛չ թէ՝ որպէս մեք յԱստուածաբանութեան՝ յէութենէ ներգործութեանց կամ յարարածոց գամք ի ծանօթութիւն Աստուծոյ. քանզի ո՛չ թէ զի խորհիմք, նմին իրի եմք, այլ ընդհակառակն եմք, նմին իրի և խորհիմք։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԴԻՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ

ԿԲ. ա. Ճշմարտութեան աղբիւր լինել խղճմտանաց ո՛չ ցուցանի. ուրեմն սխալական է. բ. Ա.ռ ի գիտել թէ մեք ունիմք զայր կամ զայնր ճշմարտութեան ընդերքին

զգացումն, այլում իմիք զգացման պէտս ունիմք, որ հաստատեցէ զառաջինն, նոյնպէս վասն երկրորդին և երրորդին մինչև ցյաւիտեան, որ անտեղի է ասել, ուրեմն և այլն. գ. Խղճմտանք գնեցրին զգացողութեանց կամ ներգործութեանց ո՛չ զպատճառն, ո՛չ զնպատակ՝ որով ծրնանին ի մէջ՝ ո՛չ զորպիսի լինելն նոցա բնութեամբ ծանուցանեն մեզ, և ո՛չ դչրջան արեանն յերակս յայտնեն մեզ. դ. Մտաթափքն, երազողքն համարին ունել բազում ներգործութիւնս նեցրին, զորս չունին երբեք. ուրեմն վկայութիւն խղճի մտաց սուտ է։

Ա՛ռ առաջինն պատասխանեմ, ընդունիմ գնախընթացսն. ժխտեմ գհետևեալն, քանզի ո՛չ այն ամենայն որք չփորձին՝ սուտ են, զի են առաջարկութիւնք յայտնի և բացարձակապէս ճշմարիտք, որք փորձի և հաստատութեան պէտս ոչ ունին երբեք, ի մէջ այսոցիկ ճշմարտութեանց դասի և վկայութիւն խղճի մտաց, որ կից և ի մեզ իսկ զօրով ամենայայտ է մեզ, և չունիմք զառարկայս իմն գնմանէ. իսկ արդ յայտ և ծանօթ է մեզ, ո՛չ պիտի փորձի. քանզի պաշտօն ցուցման և փորձի է զանյայտսն ընդ յայտնագոյնան բազդատել՝ և անտի ճանաչել զճշմարտութիւն նոցա. բայց վկայութիւն խղճի մտաց արդէն յայտ է. ուստի և հետևութիւնն սխալ է, Ա՛ռ երկրորդն՝ ժխտեմ գնախընթացսն և գհետևութիւնն. քանզի զորօրինակ՝ արեգակն չունի պէտս այլում իմիք արեգական՝ առ ի ճանաչել գնա, նոյնպէս յընդհանուրն և ի բացայայտ սկզբունս, որք ճշմարիտք են և բացայայտք. նա զի յամենայն ծանօթութիւնս հոգւոյն խիղճ մտացն միշտ թէ՛ զանձնէ, և թէ՛ զայլոց ներգործութենանց տայ վկայութիւն թէ -ու՛ր կամ -ո՛ր ներգործութեան ենթակայ նոյն հոգին է, և ներքին զգայմամբ ճանաչէ թէ ներգործութիւնք և զգայութիւնք միջնորդութեամբ այսր կամ այդր զգայարանաց առացեալ՝ յինքն հանդչին վերջապէս։ Ա՛ռ երրորդն առեմ, թէ ո՛չ է պաշտօն խղճմտանանց զպատճառ և զնպատակ զգայմանցն գննել, այլ այլոց կարողութեանցն հոգւոյն. և ո՛չ իսկ պարտ է միշտ



դչարժումն արեանն զգալ. զի չրջանն արեան անընդհատ միատեսակ դոլով զոգեկս անզգալի է, բայց ո՛չ միշտ. զի երբեմն ևս չարժմունք արեան առաւելեալ՝ զորօրինակ ի չերմութեան, կամ նուազեալ զգալի լինին հոգւոյն և կիրքդ այդոքիկ։ Ա՛ռ չորրորդն՝ առեմք թէ բանք մեր ո՛չ են զանկատար կազմուածոց կամ զկանոնսն անդամոցն, այլ զմտաց խղճէն՝ որ ի մարդիկ ըստ կարգի և բնութեան մարդկային սեռի կատարեալս և կարգաւորեալս։

---

## ՅՕԳՈՒԱԾ Բ.

### ՅԱՂԱԳՍ ՄՏԱՑՆ, ԻՐ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀՈԳՒՈՑՆ

ԿԳ. Ի ազբիւր ճշմարտութեան և միտք մեր, և այնոցիկ ճշմարտութեանց՝ որք ինքեանք յայտնի և բացայայտ են և մեթաֆիզիկական ճշմարտութեամբ զարդարեալ. զի բացայայտ գոլով ոչինչ իմիք լուսաւորութեան պէտս ունին, և ոչ ցուցմամբ՝ այլ իբրև զարեգակն զմիտս լուսաւորեն լուսով իւրեանց անմիջապէս, և գոգեկս յափշտակեն զմիտս յինքեանս. զորօրինակ՝ բոլորն մեծ է քան զիւրաքանչիւր մասն իւր. 4 և 4 առնեն 8. չիք հնի ներգործութիւն առանց բանական պատճառի, են. բայց ի չնորհս պարզութեան գիտել պարտ է՝ թէ ի ծանօթութիւնս հոգւոյն են գաղափարք կամ առաջարկութիւնք և դատումնք, որք յարտասանել անդ իւրեանց յայտնի բացայայտ գոլով՝ միտք անդէն և անդ ճանաչեն գյարմարութիւն ենթակային և վերադրի նոցա. զորօրինակ՝ բոլորն մեծ է քան զիւրաքանչիւր մասն իւր, 4 և 4 առնեն 8, չիք ներգործութիւն առանց իւրոյ պատճառի, են. այսքիկ կոչին --ը՛ն ի՛նքնա՛ւ դ-ր՛ւյ, կամ ծ-ն՛օ՛ --ը՛ւ-ր՛ւ-ն՛ւ, կամ հ-ր՛ւ---ր՛ւ, ընդհան---ր՛ւ, ան՛ւ-ի՛ւ, հ---գ---ն՛ւ, կամ ---ծ՛ւ ի՛ն-ց-ի՛ն՛ւ և բ-ն՛ւ-ի՛ն դր---ր՛ւ-ն՛ւ, որք ինքնովին բացայայտ են, են այլ և այլ տեսակք առաջարկութենանց, որք ինքնին

յայտնի չէն, այլ նպաստիւք առաջնոյն ճանաչին. և են այլք՝ որք կամ փորձիւ ի յայտ գան, զորս անհնար է ճանաչել, բայց միայն գիտի փորձողին, և կախին յառաքելոյն կամ ի սկզբանց, որք արտաքոյ մեր են. զորոց ամենեցուն յառաջիկայ գլուխն որ հետեւի,

ԿԻ. Եղեն և են փիլիսոփայք չաստագոլք բանաւորութեան մարդկային մտաց՝ որք կոչին բ-ն-ո-ւ-թ-ե-ա-ն, որք յանդգնեցան զամենայն գիտել, և ընդ լծով մտաց նուաճել. Եղեն ոմանք եւս, որք ուրացան գիտել ինչ բանական մտաց. զորոցանէ գեղեցիկս խօսի Լադիանցիոս. «Այլք համարեցան (ասէ) զանձինս գիտել զամենայն ինչ. ոմքին յիրաւի չեղեն խմաստունք, և այլք ոմանք գիտել և ոչինչ, և ո՛չ իսկ ոմքին եղեն խմաստունք. նոքա՝ զի բազում շնորհեցին մարդոյն. ոմքա՝ զի ո՛չինչ։ Երկոցունց իսկ յերկուս կողմանս պակասեցաւ խոհեմութիւնն, Ո՛ւր ուրեմն (դիցես) զիմաստութիւնն, զի ո՛չ զբնչ գիտել զամենայն խորհիցիս, որ է արարչին. և ո՛չ չգիտել զամենայն, որ է ոչխարին»։ Այսմ հետեւիմք և մեք ասելով զայդ ամենայն, զորս պիտանիս վարկանիմք ի հասանել ճշմարտութեան՝ ճանաչեն միոք մարդկան, բայց ո՛չ զամենայն, զի է ընդդէմ ճշմարտութեան. ուստի ասեմք յառաջարկութիւնս թէ՝

ԿԵ. Միոք մարդոյ ճանաչէ զայդ ամենայն ակըզբունս և զառաջարկութիւնս, որք յայտնի և բացայայտք են ինքեանք՝ անմիջապէս առանց իմն նպաստի, կամ հաւաքաբանութեան և կամ փորձի. և սկզբունքս այսոքիկ ընդհանուրք գոլով յամենեցունց ճանաչին. և քանզի որպէս բազմիցս ասացաք, պաշտօն հաստատութեան ո՛չ է այլ ինչ՝ բայց միայն զանյայտսն և զմանաւանդն բազդատեալ ընդ յայտնի և ծանօթագոյնն՝ յուցանել. ուստի սոքա արդէն յայտնի և բացայայտ գոլով չկարեն ընդ յուցմանէ անկանիլ. այնպէս՝ զի թէ ոք կամիցի յուցանել զնոսա, չիմիջ բնաւին զպայծառութիւն նոցա, և զիաւար զդենուն։ Նոյնպէս և ոչ կարեն սահմանիլ. զի սոքա բացայայտ գոլով՝ չունին ի վեր քան զինքեանս զայլ պայ-



ծառագոյնս, որով և առաւել բացայայտեացին. ուստի միոյն անսահման։ Զպայծառութենէ և զհարկաւորութենէ սոցին սկզբանց ասէ Սուրբ Թովմաս. «Սկզբանցս այսոցիկ սեփական իմն է, զի ո՛չ միայն ճշմարիտք իցեն, այլ և ճշմարիտս լինել երեւիցին». և այլուր զերկրորդ սկզբանցս, որք բազդատութեամբ առաջնոյն ճանաչին, ասէ. «Բնական լուսոյն միտքն սուրգէ զինքն զայսոցիկ, զորս նոյն բնական լուսոյն ճանաչէ իբրև զառաջին սկըզբունս (*). և այլուր եւս «Գոյանի ճշմարտութիւն իմն յորոչինչ իմն երեւոյթ սուտութեան ընդխառնիլ կարէ, որպէս յայտ է յարժանաւորսն (այսինքն յառաջին սկզբունս) յորոց մտացն խոյս տալ՝ առանց նախ զհաւանութիւն նոցին ընծայելոյ անհնար է (**)»։

Ուստի և միոք մեր կարէ և հարկադրի ճանաչել զնոսա. քանզի գոլով նորա հարկաւոր կարողութիւն անգէն ի հանդիպիլ առարկային, որք լուսոյն իւրեանց փայլին, պարտի ճանաչել զնոսա. և յայսմիկ առաջարկութեան ոչինչ առնեմք փաստիւքս այսոքիւք բայց միայն յայտնեմք զնոսա արտաքս. ուրեմն ամենայն իրաւամբ կարեմք արտասանել զայս առաջարկութիւն թէ միոք մեր է աղբիւր ճշմարտութեան. այս՝ բացարձակապէս խօսելով, կարէ սխալանաց ենթակայ լինել, և մի միայն անսխալն դերազանցապէս է Աստուած։

ԿԶ. Յայսմ վայրի արժան համարիմ յառաջ բերել զյօդուածն գիտնական տեառնակին Յիսուսեանց, յորում նրբութեամբ իմն վարդապետէ զյատկութենէ մարդկային մտաց։ «Մի միայն միոք աստուածային է բացարձակապէս անսխալ. զի նա միայն է անսահման, ամենապարզ, միշտ գործունեայ, նոյնն մի գոլով ընդ հայեցողութիւն ամենայն ճշմարտութեան՝ չկարէ հետեւաբար շեղիլ անտի, առանց նախ շեղելոյ յէութենէ անտի իւրմէ։ Այլ ամենայն միոք արարածոց էականապէս սխալա-

(*) Ընդդէմ Հեթանոսաց. Գլ. 134։
(**) Բ. Զանազանութիւնք. 25. Յօդ. Բ.

կան է. այսինքն այնպէս՝ որ բացարձակապէս խօսելով, կարէ հեռանալ ի ճշմարտութենէ՝ որոյ հայեցողութիւնն ոչ կացուցանէ զբնութիւն իւր։ Այլ՝ ճշմարիտ է ո՛չ միայն զառանձինն ուրուք մտաց, այլ և զամենեցունց մարդկային սեռին և ընդհանրապէս ման ամենայն արարածոյն մտաց, բաժանելոցն յԱստուածայնոյն անտի։ Բայց սխալական գոլն՝ զկարողութիւնն ասէ, և ո՛չ զգործ։ Սխալական է ուստի այն միտք՝ որ երբեմն վրիպիլ կ՚ուէ, բայց չէ հարկ գի գէր և -ըդե-ից կամ է-ը-վ վրիպիցի։ Նա՛ գի և կարողութիւնս այս վրիպելոյ՝ կարէ գերծ լինել քաջապէս, արգեամբք իսկ ի վրիպելոյն, նպաստիւք գերբնական ձրի բարերարութեան, որպէս յերանելին։ Կամ՝ և խնամով մանաւանդ ներկայութեան Աստուծոյ՝ որպէս եկեղեցւոյն և նկատմամբ մասանց հաւատոյ և բարուց։ Ցերկոսին իսկ յայսոսիկ անսխալութիւնն չասի բնածին և բացարձակապէս, այլ հաղորդեալ և յարաբերական։ Եթէ առանձին միտք մարդոյ՝ առեալ քան զուտ բառից բնութեան (այսինքն բնականապէս խորհեալ) միշտ և յամենայնի սխալէր, չլինէր պարզեւ Աստուծոյ, և ո՛չ պատկեր անսահման ճշմարտութեանն. գի ոչ է բարերարութիւն այն՝ որ միշտ մեզ ձեռամբ, և ո՛չ պատկեր այն՝ որ չնմանի երբէք նախատիպի իւրում՝, և ո՛չ իսկ ի մասին։ Զի՞նչ այլ եւս՝ դադարէր ինձմա նոյն իսկ մտացն անուն. գի չկարէ միտք կոչիլ կարողութիւնն այն, որ ո՛չ երբէք ի միտ առնու գիմն, և ո՛չ երբէք ունել զդաղափարս յարմարս առարկայից։ Եւ բայց յայտնի՝ զի՞նչ է վերջապէս սխալն. է վրիպիլ ի բնական գործոյ անտի. չէ մարթ ուրեմն տալ զհնար զօրութեան ճանաչելոյ կարողութեան իմիք, առանց նախ ենթադրելոյ թէ ընդդէմն (այսինքն առարկայն)՝ որ է ճշմարտութիւն՝ բնականապէս նմին յարմարի։ Ուստի նոյն իսկ իմաստ սխալականութեան յինքն բերէ թէ ճշմարտութիւնն է սեփական և բնական գործ մտաց, որ կոչի սխալական, և ոչ առանց այդպիսի ենթադրութեան սխալման՝ ընդունակութիւն ունէր տեղի. յորմէ հետեւի թէ բոլորովին անհնար է՝ ո՛չ երբէք ի



միտ առնուլ առանձինն մտաց զճշմարիտն, հակառակն գոլով բնութեանն պակասիլ ի բնական գործողութենէ, և կամ լինել գործ բնածին, որ ո՛չ երբէք ծնանի. ի յեսմին բանիցս կալ զայս խնամս, եթէ սխալիլ է շեղիլ ի բնական գործոյ. նոյնպէս միտք թէ սխալին՝ ի բնական գործողութենէ իւրմէ շեղի. ուրեմն բնական գործ մտացն է ճանաչել զճշմարտութիւնն, յորում թէ պակասի՝ շեղի ի բնական գործոյ իւրմէ, այսինքն ի ճանաչելոյ զճշմարտութիւնն»։ Զայսքան առ այժմ բաւական համարեալ՝ զառաւելն թողեալ հոգեբանութեան (Մ՚Մ՚. Մ՚Ո՚. ևն)՝ գամք յաւէտ ի լուծումն գժուարութեանցն։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Կէ. ա. Առարկեն՝ միտք մարդոյ ընդ սահմանաւ պարտնակի. ուստի ի բնէ անտի սխալական է և տկարութեամբ լի, ուստի յամենայն գաւառութիւնս իւր սխալի. գոնէ յամենայն իւրաքանչիւր գաւառութիւնս իւր կարեմք տարակուսիլ, թէ արդեօք յայտիկ սխալեցա՞։ բ. Կամք մարդոյ հակի ի բնէ առ չարն, ուրեմն նմանապէս միտքն ի սխալանս. բայց ընկալեալ զհակումն ընդհանրապէս ի սխալն՝ ոչինչ մնայ հաւաստեաց ի մանաւորի վասն մտաց. ուրեմն միտք չեն աղբիւր մեթաֆիզիքական ճշմարտութեան, գ. Առ ի աստուգապէս գիտել, թէ գաւառղութիւնք մեր անմիջապէս մտացն յայտնին և բացայայտին, այլում իմիք առաջնորդի պէտս ունիմք, այսինքն նպաստի բանաւարութեան. ուստի ճշմարտութիւն ոգին գաւառանց կամ սկզբանց է առարկայ բանաւարութեան և ոչ իմացականութեան կամ մտաց։ դ. Բազում համարեալ թէ զոմանս ի գաւառանց իւրեանց հայեցողութեան, այսինքն յայտնի բացայայտ առանձինն ճշմարտութիւն սկզբանցն, և սխալեցան արդեամբ. ուրեմն միտք մարդոյ չեն վկայ ճշմարտութեան։

Առ առաջինն առեմք՝ ընդունիմ զնախադասան. բայց առեմ զհետեւեալն և զհետեւութիւնն. քանզի ոչ ոք

*ասէ թէ միտք մարդոյ չէ ամիսոփեալ, բայց սուտ է ան-
ոի ելեալ հեռեւութիւնն թէ՝ ուրեմն յամենայնի սխալի.
քանզի դատումունքն առարկայք մեռայ պայծառք են և
բացայայտք, և շուրջ զնոքօք չիք պարադայ իմն որ աղօ-
տացուցէ զճշմարտութիւն սկզբանցս։ Տիեզ կարողու-
թիւն մեռայ ի հարկաւորացն է. չիք իմն հարկաւոր կա-
րողութիւն, որ ակնարկու ունիցի զառարկայն և ոչ յա-
փշատակիցի առնա, որպէս միտք մարդոյ։ Դարձեալ չա-
սեմք՝ թէ միտք մարդոյ զամենեսեան ճանաչէ, ուստի և
յամենեսին անսխալ է, այլ յոմանս միայն։*

*Ա.ռ երկրորդն՝ ժխտեմ զբազդատութիւնն և զհե-
տեւեալն. քանզի յերկուց բաղկացեալ է մարդն, ի հոգ-
ւոյ և ի մարմնոյ. իւրաքանչիւր օք խնդրէ զիւր բարու-
թիւն։ Հակիրն կամաց մարմնով ի ղգայականան ո՛չ է միշտ
չար, նա՛ մանաւանդ միշտ բարի է նիւթապէս. զի մար-
մին հակի ընդհանրապէս ի զգալի բարութիւնան, և միտք
մարդոյ ի հոգեւորան. է ազատութիւն ի մարդն՝ որում
միտք, բանականութիւնն լոյս տան չառնել զչարն, բայց
չանսայեալ կամաց աղդարարութեանց մեռայ ընտրէ զչարն,
հասանելով այնմ. յայնժամ որ նիւթապէս բարին էր,
զգենու զկերպարանս չարութեան ի կամաց հատանութե-
նէ և ի վախճանէ անտի. բայց ոչ է ազատ միտքն իբրեւ
զկամս, զի հարկիւ պարտի տալ զհատանութիւնն բացա-
յայտ առարկայից իւրոց։*

*Ա.ռ երրորդն՝ ժխտեմ զամենայն. զի ըղձրնակ
չունի պէտս արեգակն ցուցման իւրում լուսոյն՝ այլում
արեգական, նմանապէս և ո՛չ միտք՝ այլում մեռայ. նա զի
ի կարգի իմացականութեան ո՛չ ներքին զգայնան՝ ամե-
նայն ծանօթութիւնք մեր ընդ իշխանութեամբ մեռայ ան-
կանին, թէ և բանական կարողութեամբ ստուգեալ իցեն։*

*Ա.ռ չորրորդն՝ և զայդ առ պակասութեան մեռա-
դրութեան՝ ընդունիմ, առ պակասութեան մեռայ՝ ժխտեմ։*

---

# ԳԼՈՒԽ Գ.

## ՅԱՂԱԴՍ ԱՂԲԵՐՑ ՈՐՈՑ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՀԱՍԱՆԵՄՔ Ի ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԲԱԶՄԱՑՆ

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԴՍ ԲԱՆԻ ԿԱՄ ԲԱՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ

*ԿԸ. Խօսեցաք ցայս վայր զորոց անմիջապէս վկայեն մեզ
զճշմարտութիւնք առարկայից, այսինքն զիւղճմտանաց և
զմտաց՝ որովք անմիջապէս հասանեմք ի գիտութիւն ճըշ-
մարտութեան բացայայտ սկզբանց. ժամ է արդ զբանա-
վարութիւնք (ratio) գիտել։ Գիտել պարտ է թէ խղճմը-
տանք, միտք և բանն՝ թէ և զօրութեամբ բաժանին, այսինքն
իւրաքանչիւրն ունի զանձինական զօրութիւն, բայց են կարո-
ղութիւնք հոգւոյն, և նոյն հոգին է զգացող, նոյնն մտածող,
նոյն և բանիւ մեռայ իւրոց խօսի զղանագան առաջարկու-
թեանց և հանէ զմին ի միւսմէ՝ բազդատելով զանյայտն ընդ
յայտնագոյնն. այլ սակայն թէ և սկիզբն գործողութեանց
նոյն հոգին է, բայց զանագան տեսութեամբ. այսոցիկ
զանագան տեսութեանց հոգւոյն՝ տամք զանուանս խղճը-
մտանց, հոգւոյ, բանի կամ բանավարութեան. ուստի բանն կամ
բանավարութիւնն է կրօնքն կամ յարգութիւն հոգւոյն՝
որով հոգին միջնորդութեամբ բանի իւրոյ, որ է բազ-
դատութիւն առաջարկութեանց ընդ պարզ և յայտնի
սկզբունս, հանէ զմիոյն ճշմարտութիւն ի միւսոյն ճշմար-
տութենէ. զեզանակս և զօրինս գործեացն բանավարու-
թեան անդ յառաջին մասին տրամաբանութեան աւան-
դեցաք. գործիս այս է քաջ հաստատել։*

*ԿԹ. Ի զանագան սկզբանց անտի՝ զորս ի կիր առնու
բանն առ ի հաստատել և ցուցանել զճշմարտութիւն առա-
ջարկութեանցն՝ որք ինքնին անժխտելի են և մթին, հա-*

ւաքաբանութիւնն անդամ առանայ զպէսպէս անուանս. զորօրինակ հաւաքաբանութիւնն՝ որ ի նախընթացան ունի զճշմարիտ և զբացայայտ սկզբունս, կոչի ցուցանելոյն կամ ցոյնէ հաւաքբանութիւն (demonstratio) որոյ չորս են տեսակք. 1. ցուցական է յայելութիւն, մերթ ի պատճառացն անտի ճանաչելմբ զներգործութիւնս. զորօրինակ՝ զանմահութիւն հոգւոյն ի փափաքանացն առ կատարելութիւնն, և զպատգանութիւն նորա ի բանականութենէ յառաջ բերել. 2. ցուցական է չերոյ, զորօրինակ՝ զծանօթութիւն էութեան պատճառին ճանաչելմբ ի ծանօթութենէ ներգործութեանն. որպէս ի պատահական էութեան արարածոց, զէութեանն Աստուծոյ զգիտութիւն. 3. ցուցական ընդ միայն ծանօթութենէ ենթակային՝ զայլ ինն յառաջ բերելմբ, որ յօգիս յարմարութեան մի լոյեն. զորօրինակ՝ ի կատարելութենէ Աստուծոյ յառաջ բերցես զպատգութիւն նորա. 4. ցուցական ընդդէմ. երբ զմի ինչ յառաջ բերելմբ ի նախադասից, ապա թէ ոչ բազում անտեղութիւնք հետեսցին. զորօրինակ՝ զերջանկութիւն միւսոյ կենաց, զոր թէ չդիցես, պարտիս դնել զխանդարումն բնական կարգի յԱստուծոյ. զի կարգեաց զամբարիշտս առանց պատուհասի կալ, և զառաքինիս նուաճել և խոշտանգիլ ի նոցանէ. Գերագոյնն ի սոսին է՝ ցուցական է չերոյ, որ յայտնի լինելով ի նախադասութիւնս իմասցին՝ հետեւութիւնն կոչեր ի հնոց վերջ, այսինքն՝ վասն յայտնի իմասցին. Իսկ հետեւութիւնն ի յետնոց առ չլինելոյ նորա ինքնին ամենապարզ, այլ վասն պարզութեան սկզբանց՝ ընդ որս բազդատեր, կոչեր ոճիր, այսինքն՝ քանզի սկզբունքն պարզ են.

Երկրորդ՝ բաժանի հաւաքաբանութիւնն ի դրէ, ի էությունս և ի ներգործս. զորօրինակ՝ բոլորն է մեծ քան զիւրաքանչիւր մասն, իսկ արդ հարիւր է բոլոր տասն տասանց, ուրեմն հարիւրն մեծ է քան զիւրաքանչիւր տասն տասանց. էությունն է՝ յորժամ ի նախադասութիւնս ունի զսկզբունս փորձառականս. զորօրինակ՝ ձիւնն է ցուրտ, իսկ արդ որ ծածկեալ է ղեւտան՝ նրբիսս է ձիւն, ուրեմն է ցուրտ. Ներգործն՝ կամ խառն հաւաքաբանութիւնն է՝ յորժամ յերկուս նախադասութիւնս գտանին երկու սկզբունք, մինն դրէ, և միւսն է էությանէ. զորօրինակ՝ չկարենն լինել պատահական էութիւնք, թէ չիցէ հարկաւոր էութիւն. իսկ արդ են և կեան պատահական էութիւնք, ուրեմն պարտ է լինել հարկաւոր էութեան. և է հաւաքաբանութիւն որ կոչի ներգործ, այսինքն ի գրութենէ ոստին առեալ ընդդէմ նորա գարձուցանել. զայդ ցուցանելով առանամբ զդիտութիւն՝ որ է յայտնէ և ցուցանէ ծանութեան ցուցմանէ ներգործ. Իմաստութիւն է ծանօթութիւն բարձրագոյն պատճառաց և սկզբանց, ուստի զԱստուծոյ չկարենմբ ասել՝ գիտուն է Աստուած, այլ իմաստուն. զի կատարելագոյն է իմաստութիւն քան զգիտութիւն. Պարտ ձեռալ գիտութիւնն կարէ բաժանիլ ի տեսական և ի գործնական, այդ կայանայ ի գիտողութիւն և ի հայեցողութիւն բնութեան իրաց, իսկ այս զդիտութիւնն առացեալ ի գործ դնէ.



Է. Ասացեալ յարդարեալ զնպատակ վիճաբանութեանն ներկայ առաջարկութեանս ասեմք՝ թէ բանավարութեամբ բացարձակապէս կարեմբ հասանել ի ստոյգ և յանսայթաք գիտութիւն որոց ոչն երեւին մեզ և ոչ ճանաչին ի մէնջ, Նախ՝ ի հաւաքաբանութեան միտք մարդոյ հասանելոյ նախադասութեանցն՝ անհնար է ժխտել զհաւանութիւն եղրակացութեանն ի նախադասութեանց անտի ծագելոյ. քանզի որպէս առացաք զձեռնարկութենէն՝ կամ ենթակայն և առորոգելին որք յեղրակացութեանն համեմատեալ ընդ միջնորդ բառին յարմարին նմին, կամ ոչ. թէ յարմարին՝ պարտին նոյնին ճշմարտութեամբ ընդունելի լինել մտաց, որով ընդունելի են սկզբունք, կամ ոչ յարմարին, յայնժամ յայտնի առութիւն կամ անյարմարութիւն նոցա ընդ ճշմարիտ սկզբանց, վասն որոյ և ոչ են ընդունելի: Բայց եդեալ միանգամ թէ յարմար են, կամ պարտիս ընդունիլ զհետեւութիւնն՝ որպէս ընդունիս զսկզբունս, և կամ ուրացիս զայսոսիկ ևս. զի

Ճշմարտութիւն սկզբանց չկարէ կալ առանց ճշմար-

տութեան եղրակացութեանն որ ի նախադասան գտանի. զի ճշմարտութիւն անբաժանելի է, կամ բոլորովին ընդունելիս զայն, կամ բոլորովին ուրացիս։ Պաշտօն հաւաքաբանութեան է զանյայտսն ի յայտնագունից յընդհանուր սկզբանց անտի հանել. ի գտանելն մնաց գյարմարութիւն ընդ նախընթացան յեղրակացութեան՝ ո՛չ այլ ինչ արտասանել, բայց միայն գյայտնի ըմբռնուիլն իւր, այսինքըն գյարմարութիւն անծանօթին ընդ ծանօթագունին. ուստի ո՛չ երբեք կարէ սխալիլ։

Դարձեալ միտք մարդոյ ի ձեռն հաւաքաբանութեան գտեալ յայտնապէս զկապ միոյն ընդ մեծագունին՝ չկարէ առերիւրիլ յուղիղ գտանելն, զի որպէս ասացաք, է կարողութիւն հարկաւոր. որոյ գտեալ զբուն առարկայն յանհնարինն է յետս կալ ի ճանաչելոյ զնա, և կամ սխալել ի ճանաչել զնա։ Նա զի կանոնք հաւաքաբանութեան այնպիսի ինչ յարդարեալք են. որովք և սխալելն անհնարին լինի մարդոյն. ամին իրի ուղղապէս ասէ Սուբլեն Թովմաս, թէ ամենայն առուգութիւն գիտութեան յառաջ գայ ի առուգութենէ սկզբանց, զի յայնժամ եղրակացութիւնք առուգութեամբ ճանաչին, յորժամ լուծանին (խառնին) յակզբունս (*) Հուսկ ուրեմն, միտք մարդոյ տեսանէ յայտնապէս զառարկայն, ճանաչէ ինքնուին գյարթարերութիւնս նոյն առարկային ընդ այլսն։ Սոյն այս անմիջական և յայտնի տեսութիւն առարկային և յարթարերութիւն գաղափարաց ընդ միմեանս և յարմարութեան նոցա միմեանց տայ յօրինել մտաց սկզբունս, զորս յետոյ բանաւարութիւն մարդոյ յայլսն տարածէ և հանէ զայլոցն ճշմարտութիւն. ուստի որպէս յայտնի են սկզբունք և ճշմարիտք, նոյնպէս և ի նոցանէ բղխեալ ճշմարտութիւնք, այսինքն՝ եղրակացութիւնք, զորօրինակ ընդունիմք զճառագայթս արեգական իբր զլոյս ի լուսոյ,

(*) Վերնադիր. գճշմարտ. ցօգ. Ա.



## ԼՈՒԾԱՆԻՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ

Հաւաքանավարութիւն կամ հաւաքաբանութիւնն եթէ էր աղբիւր ճշմարտութեան, ապաքէն ո՛չ երբեք գտանէին սխալանք ի գիտութիւնս, և իմաստասիրացն երկպառակութիւնք զմի և զնոյն նիւթոյ։ բ. Ի հաւաքաբանութեանն ի կիր արկանելմք գյիշողութիւնն. իսկ արդ այն այս սխալական է, ուրեմն և հաւաքաբանութիւնն։ գ. Հաւաքաբանութիւնն զճշմարտութիւնս մանաւանդ յընդհանուր ճշմարտութեանց հանէ ընդդէմ կարգի ընթացից բնութեան, որ ի մանաւանդին ծանօթութենէ յընդհանուրս ընթանայ։

Ա. առաջինն՝ զանազանեմ զնախադասութիւնդ. չլինէին սխալանք և երկպառակութիւնք, եթէ ամենեքին միաբանութեամբ և առանց կրից և առանձինն վախճանի ըմբռնէին զկզբունս և ի կիր արկանէին զայնս՝ ընդունիմ. թէ ո՛չ ժխտեմ, նոյնպէս ժխտեմ և զհետեւանսն և զհետեւութիւնն։ Երկու են մոլորութիւնք՝ որք գրկեն զհաւաքաբանութիւնն ի բնական վախճանէն, այն է ի ճանաչելոյ զճշմարտութիւնն. մինն անափառութիւն բերեալ սիրով նոր ինչ գիւտի և կամ չարութիւն կամ առելութիւն մերոյն ընդդէմ միւսոյն. երկրորդ չարաչար կիրառութիւն օրինացն քալ հաւաքաբանութեան և անպատեհ ըմբռնումն գաղափարաց և սկզբանց. զի թէ սիրով ճշմարտութեան ևեթ զգածեալ էին բաղումք ի փիլիսոփայից՝ և քալ միտ դնէին հաւաքաբանութեանն կանոնաց ի հնոց և յամենայն իմաստնոցն մեզ առանդելոց, ոչ ապաքէն ի սէնապէս անտեղութիւնս չրջէին զԱրարչին ուղիղ պարգև՝ զմիտս, որում չէ պարտ երբեք տալ զայդ՝ան սխալանս, այլ յատեա չարութեան կամաց ոմանց. զորոց խօսեացուք ի վախճանի նպատակիս։

Ա. երկրորդն՝ ժխտեմ. զի չիք ոք այնքան անմիտ և թանձրամիտ՝ որ յարտասանել անդ զեղրակացութիւնն՝ մոռացի զնախադասան. այն զի ի հաւաքաբանութեանն ոչ անցանեմք ի գաղափարաց ի գաղափարս, այլ զմի և զնոյն

դաղափար՝ զորմէ տարակուսիմք, բաղդատեմք ընդ մեծագունին. ուստի չունի իմն տեղի յիշողութիւնն ի հաւաքականութեան. զի յիշողութիւնն է ի ներկայ դաղափարէն ի միտս վերադարձել զանցեալ դաղափարն։

Ա.ռ երրորդն՝ ասեմք, այլ է եղանակ ըմբռնման դաղափարաց, և այլ եղանակ ընթացից հաւաքականութեան. սա յընդհանուր և ի վերացեալ սկզբանց յառաջ բերէ գճշմարտութիւն մանաւանդ առաջարկութեան. նա յեզակի և ի մանաւանդ դաղափարաց ճանաչելոյ հանէ զըմբռնումն վերացեալ դաղափարաց և սկզբանց. բայց զինչ, և ո՛չ իսկ ընդդէմ հաւաքականութեան է ի մանաւանդ յընդհանուրն հետեւեցուցանել, եթէ հաշուեալ յիշեցին ամենայն պարագայք մանաւանդին, զորօրինակ՝ ի մակածութեան տեսանելմք (խգ). և նոյն իսկ յեզակի առաջարկութենէ հետեւեցուցանելմք առ եզակին. զորօրինակ՝ Մարիամ է մայր Քրիստոսի. իսկ արդ Քրիստոս է Ա.ստուած. ուրեմն Մարիամ է մայր Ա.ստուծոյ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՅԱՂԱԳՍ ԲՆԱԿԱՆ ՉԴԱՑՈՒԹԵԱՆ

Ա.ռ՝ չ-ր-ր՝ ի բն-ն ը-յ-ր-ն է -ը-ր-ր ն-ր-ր-ր.

ՀՐ. Մի՛ընդդութեամբ ճշմարտութեան բնական զգայութեանն՝ զոր յամենայն գաս, յամենայն տեղիս, բանական բնութիւն մարդոյ ի վեր երեւեցոյց միշտ -ի-ի-ի և ն-ր-ր-ր-, ասեմք թէ՝ բանական բնութիւն մարդոյ ի բնական զգայութիւնս իւր՝ է աղբիւր ճշմարտութեան, Բնական զգայութիւն կամ բարոյական եւս՝ զոյն մանաւանդ դատումն բանական բնութեան կոչեմք, որք վերաբերին պահպանութեան կենաց մարդկան և բարոյական վարուց մերոյս սեռի. դատողութիւնքս այսոքիկ՝



որպէս հաստատուն և մշտնջենաւոր փորձն վկայէ մեզ, որք հաստատունք եղեն յամենայն ժամանակի, համաճայն և նոյն ամենայն ազգի, և անփոփոխ յամենայն մարդ. զորօրինակ՝ ր-ր-ի- ե՛. ո-ր-ի- բն-ր-ի- հ-ր-ր-ր-ի- ե՛. Ա.ր-ր-ր-ն ի-յ. -ր-՝ ը-ր-ր-. ի-ր-ը-՝ է ը-ր-ր-. -ր-ի-ն-ր-ի-ն է ը-յ-ի-ի, ը-ր-ր-ի-ն յ-ր-ր-ի. ը-ն-ը ղ-ր-ր է յ-ր-ի-ի. հ-ի-ի բ-ն-ի-ն յ-ր-ի-ի-ն ի-յ. ի-ր-ի- -ր-ր-ր-՝ ղ-ն-ը-ի- ը-ր-յ յ-ն-ղ-ի ի-ն- ղ-յ-ր-, ևն. ո՛չ ոք ուրանալ կարէ, թէ բարոյական առաջարկութիւնքս այսոքիկ ի բանական զօրութենէ բնութեանն յառաջ գան։ Ա.րդ՝ ներգործութիւնք կամին զպատճառս նմանս իւրեանց. եթէ ներգործութիւնքս այսոքիկ ընդհանուրք են, մշտնջենաւորք են, հաստարակ են ամենեցուն և համաձայնք, նոյնպէս պարտին և պատճառք նոցա լինել ընդհանուր, մշտնջենաւոր, հաստարակ ամենեցուն և համաձայն. ուրեմն բնական զգայութիւնն ցուցանէ թէ բանական բնութիւն մարդոյ է աղբիւր ճշմարտութեան, Զայս ցուցանէ և զանապականութիւն ազգաց որով մարդիկ թէ՛ քաղաքային սովորութեամբք, թէ՛ հայրենեօք, տեղեօք, կրօնիւք, ժամանակաւ զանազան գոլով՝ պարտէր զի և բարոյական սկզբունք ոչգա զանազան լինէին. բայց ո՛չ այնպէս. զի ամենայն ազգք վկայեն թէ՝ պարտ է զԱ.ստուած. առաքինութիւնք փափաքելի են, են. են. ուրեմն պատճառ ներգործութեանցս այսոցիկ յամենեսեան միևնոյն բանական բնութիւնն է, որ զմի և զնոյն ներգործութիւնս ծնանի, Իսկ արդ բնական զգայութիւնքս այսոքիկ ճշմարիտ են, ուրեմն բանական բնութիւնն է աղբիւր ճշմարտութեան, Դարձեալ բնական զգայութիւնքս այսոքիկ բղխին ի ներքին զօրութենէ սրտին, և կամք իսկ մարդոյ չկարէ ընդդէմ կալ նոցա. զի թէև ամբարիշտք իցեն ոմանք, միշտ հարկապրին սրտիւք խոստովանիլ թէ՝ առաքինութիւնն է ըղձալի. ուրեմն են,

ՀԴ. Հաստարակ կարծիքս այսոքիկ, որպէս կոչէ զայնս Ա.րիստոտէլ, կամ դատունքս այսոքիկ չկարեն սխալական լինել. քանզի ընդհանուրք են, հաստարակք են ամենեցուն, անփոփոխք և սկզբանց մտացն համաձայնք. և-

թէ մնացն սկզբունք ճշմարիտք են, ոչքա ևս պարտին ճշմարիտք լինել։ Երկրորդ՝ զի են բնական ըմբռնմունք և գաղմունք մնաց, և ո՛չ կոյր կամաց. զորօրինակ՝ իմաստական կարողութիւնն կամ միտք՝ տեսեալ զառարկայ իւր, չկարէ չճանաչել զնա, և ճանաչելով արտասանէ զնոսա՝ առիպեալ ի ներքին զօրութենէ բանական բնութեանն՝ հարկիւ պարտին ճշմարիտք լինել։ Երրորդ՝ զի գաղտղութիւնքս այսոքիկ ամենեցուն բնութեան հասարակք գոլով՝ են և համարին օրէնք բնութեան. զի զայդ ամենայն՝ յորս գտանի ամենեցուն հաւանութիւն, օրէնս բնութեան համարիմք, ասաց Տուլլիոս (*). իսկ արդ ասելն, Աբարիչն ետ մարդկային բնութեան զօրէնս՝ որ սխալանաց ենթակայ է, լինէր ընդդէմ իմաստութեան Աբարչին. ուրեմն ասել պարտ է՝ թէ բնական զգայութիւնն չկարէ սխալել։ Դարձեալ նոյն իսկ բնական և գոգցես հարկաւոր հակումն մարդկան առ այդպիսի գաղտղութիւնս ճշմարիտս ցուցանէ, թէ յարարչէն չնորհեալ է բնութեան, որում հետեւեալ մարդկան՝ անսուրիւր ընթացսն և ժամանեցոյն ճշմարտութեանն. որոյ գոլով միջոց պարգեւեալ բնութեան Աստուածոյ՝ թէ սխալական լինէր յայդ գաղտղութիւնս, միշտ բնութիւնն մարդկային սխալել հարկադրէր. ուրեմն անմտութեան և անխնամակալութեան արարիչ գաղէր՝ կերտողն բնութեան և կարգի օրինաց աշխարհի, որ անվայել է։ Ուրեմն պարտիմք ասել նոյն իսկ բնական և ինքնայօժար բերիլն բնութեան առ այդպիսի գաղտղութիւնս, և կամաւոր կիրառութիւն նոցա՝ արդեամբ իսկ յամենայն ազգս, առեղս և յամենայն դարս, ակն յանդիման ցուցանեն թէ՝ բնութիւնն է աղբիւր ճշմարտութեան, կամ բնական զգայութիւն մարդոյ է աղբիւր ճշմարտութեանց բազմաց, որովք վարեմք զընկերական և զառանձինն կեանս, և որք յանցանել դարուց ի դարս, կամ սերնդոց ի սերունդս. և յառաջադիմութիւնք գիտութեանց ո՛չ ի մուռացօնս ար-

(*) Տուսկուլ. վիճ. Ք. Գիրք. Ա.



կանին, այլ յօրէ օր հաստատին, և յարդութեամբ ծանուցեալ յամենեցունց միօրինակ ընդդրկին։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՀԴ. Ա. Թշնամիք այսր նպատակիս առարկեն՝ եթէ բնական գաղտղութիւնքս այսոքիկ և հասարակ կարծիք էր աղբիւր ճշմարտութեան կամ ծագէին յաղբերէն ճշմարտութեան, ապաքէն ամենեքեան թէ՛ ռամիկք, թէ՛ իմաստունք՝ զնոսա յայտնապէս ճանաչել պարտաւոր էին. իսկ արդ առաջինքն ո՛չ երբէք գիտեն զինչ է բնական զգայութիւնն. ուրեմն՝ Ր. թէ աղբիւր էր ճշմարտութեան բնական զգայութիւնս, ո՛չ ապաքէն յայնքան դարս և մինչև իսկ ցմեր ժամանակս հեթանոսք անկանէին ի բազմաստուածութեան սխալանս, որք այնքան էին՝ մինչ գոգցես որքան էին աղգք զանազանք, այնքան Աստուածք աղգայինք. թողում ասել քաղաքացին իւրաքանչիւրոց, և մանաւանդ յԵլլադա Յունաց, և յԻտալիա Հռովմայեցւոց իւրաքանչիւր տանց և անձանց ևս Աստուածք պահապանք բնականեկանք կացեալ կային. ուրեմն ևն, Գ. թէ բնական գաղտղութիւնքս ամենեցուն գոգցես հասարակ կարծիք էին, ապա չելանէին այնքան իմաստասէրք մոլորութեանց ուսուցիչք, չելանէին սերութիւնք՝ աղգացն իրաւանց յափշտակողք՝ ևն, ուրեմն.

Ա.ռ Ա. զանազանեմ զմեծագոյնդ. ապաքէն և ռամիկք պարտէին ճանաչել զնոսա, դիտութեամբ կամ դասական եղանակաւ կամ անուանբ՝ ժխտեմ. դործադրութեամբ և արդեամբ՝ ընդունիմ. ասացաք թէ դասական փիլիսոփայութիւնն կամ արհեստականն է կատարելութիւն բնական փիլիսոփայութեան (Զ)։ Ա.ռ ի ունել զբնական զգայութիւնն՝ չէ պարտ զի ռամիկք դիտանական ոճիւ ծանիցեն զինչ է բնական զգայութիւնն. բայց արդեամբ քաջ ճանաչեն թէ պարտ է զծնողս մեծարել, թէ մի՛ յափըշտակիր զոր չէ քոյդ, թէ առաքինութիւնն է փախաքելի, ո՛ ի ռամկաց զիտէ զգայական սահման հոգւոյ կամ մարմնոյ, բայց ունին և զնոսա և գմարմին։

Ա. Ռ. զանազանեմ զնախընթացսդ. ոչ անկանէին ի բազմաստուածութեան սխալանս, եթէ հետեւէին աղգաբարութեան բնական ղդայութեանն, ընդունիմ. առ ոտն կոխելով զբնական ղդայութիւնն, և ապականութեան սըրտիցն հետեւելով և կրից յամենայն տեղիս, յամենայն դիպուածս, յամենայն գործս իւրեանց։ Դարձեալ զանազանեմ, միշտ՝ ուրանամ. երբեմն և այդ անկատարելապէս՝ ընդունիմ։ Ապաքէն հնախօսութիւնք աղգայ վկայեն մեզ, թէ պատճառ բազմաստուածութեան հեթանոսացն եղեն գլխաւորապէս երեք. մինն՝ յարդութիւն և սէր նախնեացն և քաջաց իւրաքանչիւր աղգաց, որով պաշտէին զնոսա, և առաջի աչաց ունէին զյիշատակս նոցա և զպատկերս նոցա։ « Արդ զայն ժամու զմեռեալ մարդն՝ այժմ իբրև զԱստուած պատուեցաք (*) », որպէս Սիւրոսի տայ խօսիլ Քսենոփոն ընդ որդին՝ յառաջ քան զմեռանիլն, որոյ նախագուշակեալ զմեռանիլն և զանմահ ճնալ հոգւոյ իւրոյ՝ « Վասն որոյ (ասէ Սիւրոս), եթէ այսպէս է, այնպէս պաշտեցէք զիս որպէս զԱստուած. իսկ թէ հոգի մարմնոյս անկորուստ ճնասցէ, դուք երկնչելով զԱստուածոց, որք այդմ ամենայն վայելչութեան խնամս տանիցեն և սիրեն նմին՝ գյիշատակս մեր առաքս և անարատս պահեսջիք (**) »։ Երկրորդ պատճառն բազմաստուածութեան էր յորդոր շարժել զմարդիկ, զի քաջութեամբ վասն հայրենեաց պատերազմելք՝ ունէին զյոյս ընդ դաս դիւցազանց և Աստուածոց դասիլ և պաշտիլ ի մարդկանէ։ Երրորդ էր երկիւղն՝ զի կամ վասն ահի բռնաւորաց և քաջաց՝ մարդիկ երկուցեալ զպաշտօնն գերադոյն՝ նոցա մատուցանէին, « Եւ աւանդեալ իւրոց հնազանդելոցն խորհուրդս և նուէրս. ևն. (***) »։ Եւ կամ զի անվնաս լիցին ի վնասակարացն անտի. բայց միաք մարդկան և բնական բնութիւնն միշտ զայս ունէր

(*) Խնամութիւն. Գլ. ԺԴ. 15, 16, 17։
(**) Առ Ալկիբոնի. Յաղագս աստուածութեան. Իբ. 81։
(***) Անդ. Խնամութեան։



զԱստուածոյ՝ թէ գերադոյն էակն է Աստուած, և զայս սկզբունս աղճատելով ի նչմարիտն համակաց զնչան ինն զօրութեան կամ կարողութեան յորպիսի և իցէ արարած՝ տկարամտութեամբ և առ պակասութեան մտադրութեան զնոսա ևս ի կարգս աստուածոց դասէին, այսպէս՝ զօձս, զկարիճս, զկոկորդիլոսն, զսոխ և զխստորն անդամ, ևն. ևն. բայց միշտ անուանէին զնոսա --ԴԲ--Ն- Ի-ՒՐԻ-, կամ --ՂԻ-ՆԻ- կամ ԸՆԴ-ՆԿ-. ոչ էին այնք ծագեալ ի ներքին զօրութենէ բնական ղդայութեանն, այլ հնչմունք էին տկարամտութեան մարդկան և կրից, Բայց ի յանկարծահաս և յերկիւղի դիպողութիւնս չասէր բնութիւնն՝ ո՛վ Աստուածք, այլ՝ ո՛վ Աստուած, Նախախնամութիւն Աստուծոյ, Աստուա՛ծ մեծ՝ որպէս ասէ Տերտուղիանոս, որով յայտնէր թէ աստուածոյն բազմութիւն ո՛չ ի սկզբանց անաւ բանական բնութեանն էր, այլ խանգարումն սկզբանց և մոլութեանց՝ որում ընդդէմ կացին միշտ իմաստասէրք ի հեթանոս, և զոմանս ևս ի մահ մատնեցին վասն ուսուցանելոյն զմիութիւն Աստուծոյ, որպէս Սոկրատէս և աշակերտք նորին։ Եւ ըստ Սենեքայի՝ մի և նոյն Աստուծոյ՝ ըստ զանազան պաշտամանցն անուանս բազումս ետուն մարդիկ, որպէս զՀերքիւղեայ՝ զՀերմեայ ևն. (*)։

Ա. Գ. արդէն վերոյիշեալ փաստից առ խանգարման բնութեանն ձայնի, և առ չանազատելոյ նմին, անիրաւք ոմանք բռնութեամբ մտանեն և մտին յայլոց իրաւունս։ Քանզի ե՞րբ հեթանոսք ոչ ծանեան ընդհանրապէս, թէ որ ինչ քո է՝ այդ չէ իմ. կամ ե՞րբ խուռն բազմութիւն իմաստասիրաց յառաջ գասեաց զմարմնոյ հաճոյն՝ առաքինութեանց հոգւոյն, որպէս ուսուցին Եպիկուրեանք՝ հրաշալիք բնութեանն. կամ ո՞վ ոք յիմաստասիրացն ուսոյց՝ թէ հոգի մարդոյ յոչնչէ եղեալ՝ յոչնչ դառնայ յետ լուծման կազմուածոյ մարմնոյս, որպէս ասաց Ովրատիոն. զնոյն ասել վայել է և պարտի փիլիսոփայիցն, որք անհաւատութեամբ լցեալ և մոլութեամբ այնքան ջատագո-

(*) Յաղագս Բարերար. Գիրք. Դ. Գլ. Ի.

վել փութան զբանական միտս, մինչև ասել Քանթեանց, զԱստուած առեղծել ի մտաց անտի և զբովանդակութիւն արարածոց նոյնպէս ի մտացն հարկաւոր ձեւոց արտահանել. միթէ զայդ համոզէ՞ բանականութիւն մարդոյ. ո՛չ ապաքէն որ զայդպիսին առնէ, զանձն իւր բանական՝ անբան առնէ։ Եւ եւս գիտել պարտ է թէ բարոյական ճշմարտութիւնք հաղորդին ի մեթաֆիզիքական ճշմարտութեանց անտի առ բազումս. որպէս նոքա հաստատունք և անփոփոխք և համաճայնք և ճշմարիտք, նոյնպէս և սոքա կարեն առ բազումս այնպէս լինել։ (Տես ԽԹ. խե)։

---

## ՑՕԴՈՒԱԾ Գ.

### ՑԱՂԱԴՍ ԱՐՏԱՔԻՆ ՉԴԱՑՈՒԹԵԱՆՑ

Ա֊ը֊բ֊ր֊ի֊ն՝ ի֊ր ը֊ր֊ո֊ւ֊թ֊ի֊ւ֊ն զ֊է֊յ֊ր֊ի֊ն֊ւ֊ն֊ե֊ր֊ն ե֊ւ ը֊ն֊թ֊ա֊ց֊ի֊կ֊ն֊ե֊ր֊ն.

ՀԵ. Բայց ի բանաւորութենէ և ի բնական զգայութենէ՝ են և արտաքին զգայութիւնք, որք ի ձեռն հինգ զգայարանաց մարմնոյն առացեալք՝ են նմանապէս աղբիւրք ճշմարտութեան անտարակոյս մեզ. զի որպէս առաջք (ՄԹ), ներգործութիւնքն այնօրիկ՝ որք յոգւոյն սկսեալ՝ յոգին կատարին, կոչին ներքին փորձք. նոյնպէս են և արտաքին փորձք, այսինքն ծանօթութիւն այնոցիկ՝ որք են արտաքոյ քան զՀոգին մեր. զորօրինակ մարմին մեր և արտաքոյ մարմնոյ մերոյ մարմինք և առարկայք նիւթեղէնք, որոց էութիւնք յայտնի լինին մեզ յարտաքին առացեալ զգայութեանց, ի ձեռն միջոցին զգայարանացս՝ նպաստիւք խղճի մտաց և նպաստիւք բնական զգայութեանն՝ որք ազդեն մեզ, թէ են արտաքոյ մերոյ Հոգւոյս առարկայք նիւթեղէնք։ Դարձեալ և զգայութիւնք արտաքինք զնոյն ցուցանեն մեզ. ուստի ընդդէմ Ռերրոնեանց՝ որք ուրանան զէութիւն արտաքին մարմնոց, և զամենայն



բնութիւն իրրև զպէսպէս զգայմունս հոգւոյ ունին՝ այսպէս ցուցանեմք. նախ՝ խղճմտանք մարդոյ զգայ յանձին զէութիւն պէսպէս զգայմանց՝ ցաւոց, ջերմութեան, ցրտութեան և այլն, և ի միասին զգայ լինել այնց ո՛չ ի հոգւոյ անտի պատճառեալ, այլ արտաքուստ և յառարկայից՝ որք են այլ և այլ բնութեամբ. զի առիթն զգայման ջերմութեան այլ է, և ցրտոյն առիթն՝ այլ է, և են։ Բայց յատկութիւնքս այսոքիկ չկարեն լինել հոգեկանք, զի չի՛ք հոգի ջերմային և ո՛չ հոգի ցրտային, այլ հարկիւ են նիւթեղէնք, են մարմնեղէնք. ուրեմն արտաքոյ հոգւոյն են մարմինք նիւթեղէնք. ուրեմն բաց ի հոգւոյ են և մարմինք։ Դարձեալ հոգին մեր զգայ զվատակիլ նիւթոյն՝ որ կից նմին կայ, առանց իւր կամաց զնուազիլ այնորիկ՝ և թմբրիլ առ ժամանակ մի, զուտեըլովն զբրանալ, զչուտեըլովն կատիլ անմիջապէս, գաստ թէ ո՛չ է հոգեկան՝ այլ մարմնեղէն, նոյնպէս աստուածք զծանրութեննէ նոցա, որոց յատկութիւնք ո՛չ երբեք վայելեն հոգւոյն, այլ հակառակք են բնաւին։

ՀԶ. Իսոյն յայս մարմին, որ անմիջապէս կից կայ հոգւոյն՝ են մասունք այլ և այլք, որք ածեալք յայլ մարմինս՝ հաղորդեն հոգւոյն զէութիւն նոցա և զպէսպէս յատկութիւնս. այսոցիկ մասանց մարմնոյ՝ տամք զանունս ը֊ն֊կ֊ե֊ր֊ք, և զգործողութիւնս նոցա՝ նպաստիւ և զբրութեամբ և ներկայութեամբ հոգւոյն պատճառեալ՝ կոչեմք ը֊ն֊կ֊ե֊ր֊ա֊կ֊ա֊ն֊ք. զի զարտաքուստ եղեալ մարմինս հաղորդեն ընդ հոգւոյ, որք և հինգ համարին. տ֊ե֊ս֊ի֊լ֊ք, ը֊ն֊կ֊ա֊լ֊ք, հ֊ո֊տ֊ո֊վ֊ի֊լ֊ք, ճ֊ա֊շ֊ա֊կ֊ի֊լ֊ք և ը֊ն֊դ֊ո֊ւ֊ր֊կ֊ա֊լ֊ք, որք ամենեքեան են միջոցք հարկաւորք, այսինքն՝ գտեալ իւրաքանչիւրոյն որպէս պարան է՝ զառարկայն իւրեանց, հարկաւ հաղորդեն զոյն իրրև զծառայ հաւատարիմ տեառն իւրեանց, որ է հոգին՝ սկիզբն ամենայն զգայութեան. և չկարեն երբէք ատերիւրել յազդ առնելն հոգւոյն զսեպհական առարկայն. զի ի բնութենէ անտի կարգեալ են առ այդ, և օրէնք բնութեան և ճշմարտութիւնք ֆիզիկականք, զորս ո՛չ ոք կարէ զրկել ի ներգործութենէ անտի իւրեանց,

բաց յԱստուծոյ։ Դարձեալ՝ ընդդէմ իմաստութեան չէ-
ղինակին բնութեան լինելը, թէ զգայարանք սխալէին ի
վկայութիւնս իւրեանց. զի ըստ բաւականին չգաւեր կար-
գեալ զբնութիւնն առ վախճան իւր։ Ո՞յր երբէք աչք ի
միջօրէի չտեսանէն զլոյս արեգական՝ թէ ոչ կուրացեալ
իցեն. ո՞յր երբէք լսելիք չլսեն զմարդիկ զաւրինթեր բար-
բառողս. ո՞յր երբէք ճաշակելիք ի բերան առեալ զխո-
րիսխ, չխոթիցեն զայն ընդ կաթին. ո՞յր երբէք ոտք կոխ-
եալ զհուր՝ ցրտացան ոտք իմ գոչիցէ ևն. բայց

ՀԻ. Կանոնք և թէութիւնք են զգայարանաց, որք
եթէ կատարեալ իցեն, զգայարանք լինին ազբիւրք ճըշ-
մարտութեան ի վկայել նոցա հոգւոյն զառարկայիցն. նախ՝
բնական մերձաւորութիւն առարկայից առ զգայարանս,
և ո՛չ կարի հեռի. երկրորդ՝ կատարելութիւն և անարա-
տութիւն նոցին զգայարանաց։ Դիտելի է, զի զյայտնի և
զբացայայտ ճշմարտութիւնս որքան ցուցանել չանայցէ ոք,
այնքան աղօտացուցանէ զնոսա. վասն որոյ չատ առ այժմ
զարտաքին զգայութեանցն՝ թողեալ զկուռլի ծանօթա-
թիւնս հոգեբանութեան անդ։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՀՀ. Նախ՝ զգայարանք մարդոյ զերկու հակառա-
կանս առաջի ընծայեն հոգւոյն, զտրօրինակ՝ զկերմութիւն
և զցրտութիւն ի միասին. իսկ արդ հակառականացն չի՛ք
էութիւն, զի մին զմիւսն եղծանէ, զտրօրինակ՝ հուր
զջուրն. ուրեմն զգայարանք յառաջ բերեն զէութիւն,
այսինքն զոչինչ։ Երկրորդ՝ զգայարանք խաբեն զմեզ ի
վկայեն թէ ի մարմինս են կերմութիւն, համ, ցրտու-
թիւն, գոյն են. զորս կոչեմք պատահական և երկրոր-
դական էութիւն, կամ մարմին բուն իմիք. իսկ արդ
այսպիսիք չեն ի մարմինս, այլ յոգին մեր՝ յենթակայն
ամենայն զգայութեանց. ուրեմն զգայարանք չեն ազբիւրք
և վկայք ճշմարտութեան։ Երրորդ՝ զգայարանք խաբեն
զմեզ յորոշելով զգաւաղանն կիսով չափ ընկղմեալ ի



ջուր՝ իբր բեկեալ. զբաղդն՝ իբր գառն և լեզի են.
զվօքրն՝ իբր մեծ և ընդհակառակն։

Ա.ռ Ա. ընդունիմ զերկու նախադասան, ժխտեմ
զհետեւութիւնն։ Ցիրաւի զգայարանք յառաջ բերեն զեր-
կու հակառակս և զհակասականս, և այդ ի միասին, բայց
ո՛չ մի և նոյն եղանակաւ. զի ո՛չ մի և նոյն՝ զտրօրինակ՝ աչ
ձեռն յառաջ բերէ կամ զգայ ի միասին զկերմութիւն և
զցրտութիւն, այլ աչն ուրոյն ընկղմեալ ի կերմացեալ
ջուր՝ զգայ զկերմութիւն, մերթ ի միասին ձախն ի միւ-
սոյ կողմանէ ընկղմեալ ի բնական ջուրն զգայ զցուրտ։
Բայց զի՞նչ լինի զի զգայութիւնք երկու միմեանց հա-
կառակք ի միասին ըմբռնին ի հոգւոյ. այդ ցուցանէ
զպարզութիւն հոգւոյն, որ մի է և անմասն և անբաժա-
նելի և ենթակայ ամենայն զգայարանաց. մի՝ և յամենայն
զգայարանս զառեալս ներկայ նոյն միութեամբ։ Բայց
զի՞նչ, այլք ևս են զտրմանալիք ի բնութեան. զի զկինդ
մատունս (թէ կամիցիս) եդեալ ի ջուրն կերմ, կերմագոյն
ևս կերմ, և զայլ երկուս՝ մին ի բնական ցուրտ ջուր և
զմիւսն ի վերայ ձեռն, զպէսպէս զգայութիւնս ունիցիս
ի միասին։ Դարձեալ միով ակամբ հայեցեալ ի դիշերաճաղիկն, նշմարես ի՛նա զճաղիկս սպիտակս,
զկարմիր, զմանուշակ, զտերեւն կանաչ և զերկին սեաւ,
և այս ամենայն ի միասին, որք ամենեքեան չբաժանէին,
բայց միայն զի հոգին պարզ է։ Եւ ևս դիտել պարտ է
թէ հակառակութիւնն իսկապէս լինի. զտրօրինակ զգալ և
չզգալ հոգւոյն զմի ինչ ի միասին, ո՛չ թէ զգալ զբազում
հակառակս միմեանց և ճանաչել զնոսա, ապա թէ ո՛չ
չկարէաք առանձալ զծանօթութիւն քառակուսի անկեան և
չրջանակի. ընդհակառակն ունիմք և ըմբռնեմք զնոսա ի
միասին թէև քառակուսին և չրջանակն միմեանց հակա-
ռակք իցեն։

Ա.ռ Բ. ժխտեմ զմեծագոյնն, և զանազանեմ զվօքրա-
գոյնդ. այսպիսիք չեն ի մարմինս, այլ յենթակայն. չեն
ի մարմնի, այսինքն՝ նոյն նիւթեղէն մարմինն չունի զըզ-

գայութիւն, զի նիւթ է. այլ զգայութիւն ամենայն ի հոգին կայ. զի ճանաչել և զգալ է հոգեղէն գործողութիւնք, ընդունիմ. չեն ի մարմնի, այսինքն՝ ջերմութիւնն և ցրտութիւնն, որք են որպիսութիւնք մարմնոց և ունին ընդունակութիւն որպիսութիւնքս այսոքիկ, որք յարուցանեն զզգայութիւն ի հոգին մեր, ուրանամ, զի մի՞շտ զերկու ինչ ի զգայարանաց գործողութեան գիտել պարտ է, նախ՝ ի մարմնի զորպիսութիւնն որ յարուցանել կարէ զզգայութիւն յոգին, և երկրորդ՝ զոյն զայս զգայութիւն, որ է ճանաչել զառարկայս և զորպիսութիւնն նոցա և զեղանակ, իսկ զգայարանք մեր մի միայն են առիթք, որք ներկայացուցանեն զառարկայս հոգւոյն, և յայնժամ հոգին յզգայարանս ներկայ ճանաչէ զնոսա, և սմին իրի սուտ է դրութիւն նոցին փիլիսոփայից, որք ասեն թէ՝ չի՛ք մանն ինչ զգայութեան ի մարմինս, այլ զամենայն տան զգացման հոգւոյն. քանզի թէ այդպէս էր, ո՛չ ապաքէն խնդրել իշխէաք ի խոհարարաց զայս կամ զայդ կերակուր այսր այնր ճաշակի. քանզի համարձակ պատասխանէր մեզ, մի՛ խնդրէք զայս կամ զայդ կերակուր, զի այս կամ այդ ճաշակ ի քիմս ձերս է. և կամ ի մի և նոյն տեսակէն կարէք հայցել զայլևայլ համեղութիւնս, միայն թէ կամիցի հոգիդ ձեր. Զոր չարարին արդեամբ նոքին իսկ հակառակորդք արտաքին զգայութեանն ճշմարտութեան. զի յընդդէմ գալ կատարի չանն ի փողոցի, խոյս ետ ահաբեկ եղեալ նոյն Բերրոնն. որ հարցեալ ի բարեկամաց՝ զի՞ է զի փախեար յայնմանէ, որ չէրն՝ ետ պատասխանի. դժուարին իմն է ի բաց մերկանալ զբնութիւնն, ի վերայ այսր ամենայնի վաստակել պարտ է. և ընկեցեալ Բերրոնեան ոք ի ծով, աղաղակեաց յօդնութիւն հասանել զի խեղդէր. և ընկալաւ պատասխանի թէ հոգին՝ յոշնչէ ոչ խեղդի, և ոչ մեռանի. և սատակեցաւ այնպէս, քանզ առեալ զփորձն թէ ծով կայ,

Ա.ռ Գ. Զանազանեմ զնախընթացսն, թէ իցեն ամենայն պարտուպատշաճ թէութիւնք, ժխտեմ. թէ ո՛չ իցեն՝ դարձեալ զանազանեմ. և այդ խոթիլ մեր յառաջ



գայ ի պակասութենէ ուշադրութեանս, ընդունիմ. առ պակասութեան զգայարանաց՝ ժխտեմ. այո՛ զգաւազան ընկղմեալ ի ջուր իբրև զբեկեալ տեսանէ, քանզի թէութիւնք պակասին. զի բնականապէս դնել պարտին առարկայք առաջի իւրաքանչիւր զգայարանաց, Եւ որպէս ասէ Օգոստինոս, հարկ է զի բեկեալ ձեւացուցցեն աչք ջ՛ի ջուր ընկղմեալ գաւազանն, քանզի չկարեն աչք զճառագայթս իւրեանց թափանցել ի ջուր անդր, այլ մնացին է յայնժամ դառնալ զուղղութենէ առարկայից՝ և ո՛չ զգայարանաց, Հուսկ ուրեմն գիտել պարտ է թէ՝ հաստատութիւն օրինացն արտաքին զգայութեան կախի ի հաստատութենէ բնական կամ ֆիզիքական օրինաց, որք ի բազում պարագայս հաղորդին ընդ մեթաֆիզիքական օրէնս, տես (Խ՝. և Խե.) և լինին բացարձակապէս անփոփոխք,

---

## ԳԼՈՒԽ Դ.

### ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՑԻՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ

ՀԹ. Են ճշմարտութիւնք՝ որք անմիջապէս մեզ յայտնին, են այլք՝ որք միջապէս, և են՝ որք ո՛չ անմիջապէս և ո՛չ միջապէս. այսինքն՝ կամ բանաւարութեամբ կամ բնական զգայութեամբ և կամ արտաքին զգայարանօք յայտնի են մեզ, այլ զուրկ գոլով ի ծանօթութենէ նոցա՝ դիմեմք առ այլս և հատատս ընծայեմք վկայութեան որոց յայտնի են. և պատճառ ապաւինելոյն յայլոյն վկայութիւն՝ է բնական հակումն մարդկային բանական բնութիւն, որ ստիպէ գոգցես զմեզ առ ի ընդունել զվկայութիւն արանց, որք բարի են և տեղեակ որոց վասն վկայենն, որոց վկայութիւնք պահեալ զպարտուպատշաճ թէութիւնս՝ են մեզ աղբիւրք ճշմարտութեան, և կոչին

[illegible] կամ հելլին-ի-մի-ն ս-ը-ղ-ի-չ, որ սահմանի Ի-ա-ֆ-ի-ա-ի կամ գ-ո-ն-մ-ի-ն ա-ն-ա-ր-ա-ն Ե ինչ ա-ն-ա-ն-ո-ւ-ն ե-ւ ինչ ա-ն-ա-ն-ո-ւ-ն ի-ն-ք-ն-ա-ր-ա-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն ե-ւ ի ի-ն-ք-ն-ա-ր-ա-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն ա-ն-ա-ն-ո-ւ-ն ե-ւ ա-ն-ա-ն-ո-ւ-ն ի-ն-ք-ն-ա-ր-ա-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն, Եւ նախ պիտի պարտ է, թէ Վ-ա կոչի՝ որ այլուամ ումեք նշանաւ իմն կամ որպիսի և իցէ եղանակաւ յայտնէ զիմն՝ զոր քաջ ճանայէ. Ի-ն-ո-ւ-ս Վ-ա՝ եթէ աչօք տեսեալ իցէ զիրն. Ծ-մ-ն-ի-կ՝ եթէ աչօք չիցէ տեսեալ, բայց յիւրում ժամանակի պատահեալ. Ա-ն-կ-ա-ր-ծ՝ թէ ականջօք լուեալ իցէ զդիպուածն. Հ-ա-ս-ա-ր-ա-կ Վ-ա՝ եթէ ճշմարտասէրն և իմաստուն անծանօթ է դիպուածոյն, Իսկ գործողութիւն նոցա կոչի Վ-ա-ր-ի-ն, և զօրութիւն վկայութեանն՝ որով հաստիչեմք տալ զհաւանութիւն պատմելոցն՝ կոչի հե-լի-ա-կ-ա-ն-ո-ւ-թ-ի-ւ-ն, Հաւանութիւնն զոր տամք վկայութեան արանց վասն ճշմարտախօսութեան և հեղինակութեան մարդկան՝ կոչի ս-ը-ղ-ի-չ հ-ա-մ-ո-զ-մ-ո-ւ-ն, Հաւանութիւնն զոր տամք առանց վկայութեան արանց, ո՛չ վասն ճշմարտախօսութեան և չարկութեանց արանց, ո՛չ վասն հաստիչման մտաց, ասի ի-ն-ք-ն-ա-ր-ա-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն վկայութեան նոցա, այլ վասն հաստիչման մտաց, ասի ի-ն-ք-ն-ա-ր-ա-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն հ-ա-մ-ո-զ-մ-ա-ն, Հաւանութիւնն՝ զոր տամք բանից կամ ա-ն-ա-ն-ձ-ի-ն հ-ա-մ-ո-զ-մ-ա-ն վկայութեան այլոց՝ վասն ճշմարտախօսութեանն Աստուած, ասի Ա-ս-տ-ո-ւ-ա-ծ-ա-յ-ի-ն հ-ա-մ-ո-զ-մ-ա-ն է-ն-ի-ն, Եթէ օժանդակիմք ի գերբնական շնորհաց և հաւանիմք ընդ յայտնութիւնս եղեալս ի տուրբ գիրս, և Եկեղեցւոյ՝ կոչի Ա-ս-տ-ո-ւ-ա-ծ-ա-բ-ա-ն-ո-ւ-թ-ի-ւ-ն կամ ի-ր-ա-ւ-ո-ւ-ն-ք հ-ա-մ-ո-զ-մ-ա-ն,

Զ. Թէութիւնք, որովք յատկացեալ վկայութիւն կամ հեղինակութիւն մարդկան մեզ առնի և աղբիւր լինին ճշմարտութեան, են նախ՝ ս-ր-ա-տ-ո-ւ-թ-ի-ւ-ն, երկրորդ՝ ի-մ-ա-ս-տ-ո-ւ-թ-ի-ւ-ն, Սոքա են գլխաւոր թէութիւնք. ևս յաւելուն ինոսա համաձայնութիւնք վիպասանութեանց և պատմութեանց՝ ո՛չ սակաւուց վկայից այլ բազմաց. Ա-ղ-ա-ն-դ-ա-ւ-ո-ր վկայից, որով աներկիւղ կարասցեն պատմել զբաւոյդ եղելութիւն իրաց. ո՛չ կողմնասիրութիւն, ո՛չ ընչասիրութիւն, ո՛չ փառասիրութիւն, են են, և պատմելոցն առարկայք հնարաւորք լինին, Ուստի վերոյիշեալ թէութեամբք զարդարեալ վկայութիւն մարդկան, ցուցանի լինել աղբիւր բարոյական ճշմարտութեան, որ և ի պարագայս ոմանս անցանէ ընդ մեթաֆիզիքական ճշմարտութիւնն,



ԶՍ. Նախ՝ զի բնական բնութիւն մարդոյ և կատարելութիւնք նորա հաստատեն թէ՝ վկայութիւն մարդկան է աղբիւր ճշմարտութեան. զի միտք մարդոյ և բանականութիւն և բնական զգայութիւնն ստիպեն զիւրաքանչիւր ոք պատմել զճշմարտութիւնն. ապա թէ ո՛չ պարտէաք ասել թէ կարողութիւնք մտաց մարդկան ուղղապէս ո՛չ ըմբռնեն զառարկայս իւրեանց, և ո՛չ առձգեն զճշմարտութիւն իրաց որով և համարին տիրապէս բանական մարդ. ո՛ր միայր և զի՞նչ չահ յայդպիսի բանականութենէ անտի, որ սխալէր միշտ յըմբռնման և յարտասանութեան գաղափարացն իւրոց, Երկրորդ՝ ներքին փորձն և խիղճ մտացս վկայեն՝ թէ առ բերիմք ի ճշմարտութիւնն յօժարութեամբ և ի ճշմարտախօսութիւնն՝ բնական տրամադրութեամբ և հակմամբ. վասն որոյ իրաւամբ ասաց Տուլիոս «թէ ամենեքեան մեք ձգիմք և առ բերիմք յիշձ և ի փափաք ծանօթութեան և գիտութեան. յորում գյառաջադիմութիւն գովելի համարիմք, և ընդհակառակն զհեղգութն անտի և զբախտելն, և զգիտելն զխաբելն՝ գատիմք իրաւամբ, ուրոյն և անվայելուչ (*)», Երրորդ՝ մարդիկ միշտ վախճանաւ մի միայն բարութեանն չարժին ի գործողութիւնս իւրեանց, Արդ զի՞նչ բարութիւն անտի, եթէ զդիպողութիւնս ո՛չ ըստ ճշմարտութեան սերնդոցս աւանդեմք, և արկանեմք զորդիս մեր յանճողոպրելի խաբէութեան սխալանաց, որ է ընդդէմ բնութեան և կարգի օրինաց բնութեան, Զի՞նչ, մի միայն վասն հեղինակութեանն չընկերութեան մարդկան են գաչինք, խոստմունք, երդմունք առից և տրոց, Զորրորդ՝ գիցուք թէ ոմն ընդդէմ ճշմարտութեան աւանդեաց զդէպս ինչ, միթէ այլքն ամենեքեան ժամանակակիցք և ականատեսք, ճշմարտասէրք և իմաստունք լո՞ւռ կայցեն զայնմանէ. ո՛չ ապաքէն զայդ ասելն նման է ամին՝ թէ աստուածն և սխալանք միոյն

(*) Կիկերոն. Ցաղագս պաշտամանց. Գիրք Ա. Գլ. Զ.

յաղթեցին ճշմարտասիրութեան և բարութեան և խնամատարութեան ամենայն աշխարհի, Հինգերորդ՝ ո՛չ միայն յատկութիւնք բնութեանս զճշմարիտն ցանկանալ, այլև անձնասիրութիւն իշխանութեանց և թագաւորութեանց զայդ հրամայեն, Ո՛ ոք յանդգնէր ի պատմագրաց զյաղթութիւնս Ալէքսանդրի մեծի, զՏիգրանայ, զՄիհրդատայ, զՇիփիոնի, զԱննիբաղայ, զկայսերն և զամենայն կայսերս և զամենայն տէրութեանցն աղաւաղել և ստութեամբ արձանագրել. ո՛չ ապաքէն զվարձս ստութեան իւրեանց առնային անդէն և անդ զկոտոնս և զմահ. Զի՛րդ ստութիւնն յաղթէր ճշմարտութեան. այնքան կամարք յաղթութեան, այնքան անդրիւք և սիւնք կանգնեցան, և այնքան արձանագրութիւնք ի ժամանակացոյց անտի վկայից բազում ծախիւք, բազում վաստակօք, և ի բազում ամն գրեցան. միթէ ցնորեա՛լք էին ի մտաց ամենայն ժողովուրդն, ամենայն ազգք և ազինք, որք ընդդէմ չկային և յօժարութեամբ ընկալան զստութիւնս, և իբրև զարբութիւնս պահէն զկանգնեալսն, և յարգէն զգբեալսն: Հուսկ ուրեմն՝ յորժամ բազում պատմիչք՝ ազգաւ, հայրենեօք, սովորութեամբ, կրթութեամբ, քաղաքօք զանազանք, ի գրելն միաձայն միաբերան հաստատեն զմի ինչ, այդ անցանէ յօրէնս բնութեան ըստ Կիկերոնի. եթէ սխալէին այնքան անթիւ բազմութիւն մարդկան, ապա՛ քէն ասել պարտ էր թէ օրէնք բնութեան և բարուց չեն հաստատունք, և թէ բնութիւնն սխալի յօրէնս իւր, զոր արտասանէն իսկ անպատեհ է բանական մտաց: Ի վախճանի՝ առարկայք, զորոց լինին վիպասանութիւնք, կամ մտաւորականք և տեսականք են և կամ նիւթականք, այսինքն վիպասանութիւն նիւթական իրաց և դիպուածոց գրով կամ բանիւ: Եթէ տեսական, այդոքիկ մտօք, բանիւ կամ բանաւարութեամբ գտանին՝ ճշմարի՛տք իցեն թէ ստուտք, և յայդպիսիս վկայութիւնք արանց այնքան հաւանականք են, որքան զօրաւորք են վաստք նոցա. բայց թէ նիւթականք են, քանզի դիւրինք են. վասն որոյ վկայութիւն ճշմարտասէրը և խնամատուն արանց մեզ են ազբիւր,



և բարոյապէս իսօսելով՝ բանական պատճառ ճշմարտութեան և մերժումն կասարեալ հաւանութեան, այսինքն բնական հաւատոց, ըստ բանի արբոյն Օգոստինոսի՝ «Թէ ի գիտութիւն երկակի բերիմք, հեղինակութեամբ և բանիւ (բանավարութեամբ), ի ժամանակի՝ հեղինակութիւնն, յորին՝ բանն նախագասի (*)»: Զոր աւելմբ գհեղինակութենէ, գնոյն և զաւանդութենէ մարդկան, որ է վկայից անընդհատ շարունակութիւն՝ զդէպսաժամ բանիւ ի հարցն յորդիս անվհերի անցուցանելով, որ եթէ գրով իցէ՝ կոչի ընդհանրապէս գ-ր-ք-ն կամ է-պ-ս-տ-լ-ն, որոց երկուցունց են թէութիւնք. նախ՝ զի իցեն անընդհատ ի հարց յորդիս, ի մեծաց ցփոքունս: Երկրորդ՝ զի իցեն արարեալ ի բազմաց, միաբան ընկալեալ և գրեալ կամ աւանդեալ. անթերի՝ ո՛չ մտաւոք պատմեալ կամ աւանդեալ. համառօտի՝ ո՛չ այլապէս, այլ յամենեցունն միօրինակ աւանդեալ, ևն:

## ԼՈՒԾԱՆԻՆ ԴԻՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ

ԶԲ. Վկայութիւն թէ միոյն իցէ, թէ բազմաց՝ չկարէ լինել կատարեալ աղբիւր ճշմարտութեան և ստուգութեան. քանզի իւրաքանչիւրն ի մարդկանէ սխալական է: Ուրեմն ամենևքեան կարեն հաւաքապէս սխալիլ. քանզի որ միում անհատի յարմարի՝ ամենեցուն յարմարի նորայն սեռին. ուրեմն վկայութիւն թէ՛ միոյն՝ թէ՛ բազմաց՝ չկարէ բերել զիւրև ստուգութիւն և ճշմարտութիւն,

Պա. Ժխտեմ գնախադասութիւնդ. առ Ա. փաստդ զանազանեմ. իւրաքանչիւրն ի մարդկանէ սխալական է. տ-ե-ս-ո-ղ-ա-կ-ա-ն իսօսելով՝ ընդունիմ. ս-ր-բ-ա-զ՝ դարձեալ զանազանեմ. միշտ՝ ուրանամ. երբեմն՝ ընդունիմ. առ հաւատուութիւնն Ա. փաստի՝ զանազանեմ. բայարձակապէս իսօսելով կարեն սխալիլ՝ ընդունիմ. արդեամբ՝ ուրանամ: Առ Բ. փաստդ՝ որ յարմարի միոյն ի մտասանց, յարմարի

(*) Յաղագս կարգի. Գիրք Բ. Գլ. Գ:

և բոլորին. յեսական յասկութիւնս ընդունիմ, ի բարոյականն և ի պատահականն՝ ուրանամ. ուրանամ և գՀեռուԹիւնն, --ջնջե վե-րնե--, ևն. և ի բացայայտուԹիւն զանազանուԹեանցն՝ ասեմ, ԹէԹև բնուԹիւն մարդոյ տկարուԹեամբ զգաձեալ է, և միտք մեր սահմանեալ, և չիք ինն ի մեր մարդկային բնուԹեան՝ որ անհնարին ցուցցէ զիւրաքանչիւրոց զհասկիլն. բայց այդ՝ երբ առանձինն և անհատաբար առցին, այո՛ իւրաքանչիւր ոք կարէ ասերիւրիլ. բայց ԹէԹ առանձինն իսկ ոմանք ունիցին զԹէԹուԹիւնս, այսինքն զճշմարտասիրուԹիւն և զկամ պատմելոյ զասոյդն և տեղեակ լինին դիպուածոյն և դիւրին իմիք, ոչ դիտեմ զի՞ է՝ որ արգելս դիցէ այսպիսւոյն պատմել զիսկուԹիւն իրին. զորօրինակ՝ եԹէ մին ի զօրացն Ա՛ննիբայեայ դրեր և աւանդեր յետնոցն զանցանել սպարապետին իւրեանց բանակօք հանդերձ ընդ Ա՛լպեան լերինս, զի՞նչ է անհնարինդ այդ յայտ իրի, մինԹէ առ այնքա՞ն ևս անկար լինի մարդն: Բայց դիցուք ԹէԹև վկայուԹիւն միոյն կասկածելի իցէ, և զհաւանուԹիւնն միայն ծնանիցէ, եԹէ ամենայն վիպասանք յայդմիսանիցին ի դրելն՝ ո՛չ սպասքէն բարոյապէս անհնարին լինի սխալելն այդքան իմաստուն արանց և հաւատոի բանք նոցա, և յետ այնքան պայմանաց չհաւատացողն՝ ո՛չ սպասքէն իրրև ցնորեալ ի մտաց դասէր. ո՛չ սպասքէն ամենայն ազգք մարդկան յառնեն ի վերայ և իրաւունս խընդրեն վասն արարեալ նախատանացն ազգի մարդկան: ԹէԹև յարմարի բնուԹեանս սխալելն տեսականապէս, որ է վիճակ տկար բնուԹեանս և ԹէԹուԹեանս մերոյ, և կոչի իսկ արդեամբ մեքանիկական չարուԹիւն՝ զոր Ա՛ստուած իսկ բառնալ չկարէ, բայց այս ոք կամ այդ կարեն սխալել, ո՛չ ԹէԹ ամենեքեան ի միասին, և յայդքան դիւրինն: Դարձեալ յարմարուԹիւնդ այդ է ի պատահականն, ո՛չ ԹէԹ յեսականս, որ քարշիցէ զազգ մարդկան հարկիւ յայդ տկարուԹիւն արգեամբ: Եւ ևս անտեղուԹիւնք ընդդէմ Ա՛րարչին յառնէին՝ իրրև ԹէԹ չիցէ տուեալ մարդկային սեռին զհաստատուն և զբաւական առիԹ հասանելոյ ճըշ-



մարտուԹեան, և վարելոյ զկեանս երջանկուԹեամբ: Նա՛ զի և վիճակ անասնոցն լաւագոյն լինէր քան զմարդկան. զի դէպ ուղիղ և անտեսիւր ընԹանան առ առարկայս բնուԹեան իւրեանց, և չխաւխին երբէք:

Ա՛ռարկեն Բ. զօրուԹիւն հեղինակուԹեան ի գառնալ անդ դարուց և սերնդոյ՝ նուազի. ուրեմն գոնէ զհնադոյնն չկարէ առուգել:

Պա. Ժխտեմ զնախընԹացոյդ. քանզի եԹէ անընդհատ և անդադար է աւանդուԹիւնն գրով կամ բանիւ՝ ոչ կորուսանէ զզօրուԹիւն իւր. այլ յաւէտ հզօրագոյն լինի. զի մի միայն ճշմարտուԹիւնն՝ զառեալ ի կրից անձանց ոմանց ընդունելի է յամենեցուն, պատմի և յաղԹող հանդիսանայ, և վիպասանք ճշմարտասէրք միշտ յետ վճարմանն դիպուածոյ՝ յորժամ ի հանգստի կեան ոգիքն և հոգիքն, ի զննին եղեալ գրեն զճշմարիտն:

Ա՛ռարկեն Գ. վկայուԹիւն մարդկային չկարէ գոնէ զօրս ի վեր են քան զբնականն՝ պատմել. զօրօրինակ՝ գնոցա Թիւնս կամ գհրաշալիս. ուստի յայսմ մասին անօգուտ է փիլիսոփայուԹիւն Ա՛ստուածաբանուԹեան:

Պա. Ջանազանեմ զնախադասուԹիւնդ. չկարէ զպատճառն, զզօրուԹիւն և զեղանակ հրաշիցն ի միտ առնուլ և պատմել՝ ընդունիմ. չկարեն զսա աչօք պատահեալ դիպուածն զբնականն ի միտ առնուլ և պատմել՝ ուրանամ: Երկու ինչ որոշել պարտ է ի գերբնական հրաշս. գբնուԹիւն, զպատճառ, զեղանակ, և զվախճանն գերբնական զօրուԹեանց և գնիւԹական առարկայն զգայուԹեանց. զօրօրինակ՝ այլ է գիտել զգերբնական զօրուԹիւն և զպատճառ, որով հրաշալիք լինին, և այլ է տեսանել զբնական առարկայն արտաքին զգայուԹեանց: Այո՛ բնականապէս չկարեմ ի միտ առնուլ զգերբնական զօրուԹիւնն, որ յարուցանէ զՂազարոս՝ զմեռեալն չորեքօրեայ և պատմել. բայց քաջ կարեմ աչօք տեսանել զյառնել Ղազարու. զօրօրինակ՝ տեսանեմ զյառնել որոյ և իցէ ի քնոյ անտի: Ուստի աստ է հաւատուԹիւն թշնամեացն Ա՛ստուածայինն կրօնիս, զորոյ զաղախինն՝ զիմաստասիրու-

թիւն՝ ընդդէմ յարուցանել կամին Աստուածային Տիկնոջ իբրու Աստուածաբանութեան ,

## ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա .

### ՅԱՂԱԳՍ ԿԱՆՈՆԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

ԶԳ . Ասանդեցաք յայսր գիւղ է ճշմարտութիւնն , և ո՛յք են միջոցք , որք մուծանեն զմեզ ի ճշմարտութիւնն , Մնայ մեզ տեսանել զայն կանոն , որ ստիպէ զմեզ ընդունել իբրև ճշմարտութիւն զայդ՝ առ որ բերեն զմեզ վերոյիշեալ աստուածային և բարերար միջոցքն որք այս՛ ցուցին մեզ զճշմարտութիւնն , բայց չստիպեցին զմեզ ընդունել զայն , Ոմանք ի փիլիսոփայից գկանոնն ստիպեալ ընդունել զայն զմեզ ընդունիլ զառաջի եդեալ ճշմարտութիւնն՝ համարին զոլ գյատեւենական ձեւս ոմանս՝ որք հաղորդեալ զոլ այլոց էակացն՝ կացուցանեն զնոսա , որպէս Պղատոն . ոմանք զհաւանութիւնն ամենեցուն , որպէս Արիստոտէլ . ոմանք զզգալի հեշտութիւնս , որպէս անբան Եպիկուրեանք . Քարթեզիոս՝ զպարզ և զպայծառ գաղափարս . Մթոռգենաւ՝ զնոյն աղբիւրս ճշմարտութեան . Լէյպնից՝ գկանոնս տրամաբանութեան . Վոլֆիոս ամին հետեւեցաւ , գկանոնս տրամաբանութեան . Վոլֆիոս ամին հետեւեցաւ , և այլք բազումք զբազումս ասացին . մերձաւորքն ճշմարտութեան եղեն ի հնուամբ Աստիկեանք , որք ասացին գոլ զառաւգութիւնն իրաց . բայց՝ ըստ սրբոյն Թովմայի՝ կանոնն ճշմարտութեան է բացայայտութիւն իրաց , որք ստոյգք ասին՝ գի ասէ « ստուգութիւնն որ է ի գիտութեան և ի միտս՝ է ինոյն բացայայտութենէ նոցին՝ որք ստոյգք կոչին (*)» Եւ յիրաւի՝ որ յատկանակն գմիտս մեր հասանել ի ճշմարտութիւնն՝ է յայտնի պայծառութիւն իրին , որում հակառակ կալ չկարեմք , այլ ընդունիմք գնա , և միտք մեր խայտայ ի պայծառութեան նորա ,

(*) Ս . Թոմ . Գ . Ձանազ . խնդ . Բ . Յօդ . Բ .



## ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ .

### ՅԱՂԱԳՍ ԹՇՆԱՄԵԱՑՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԶԴ . Բազումք առ այնչ ջանան ունել գտրամաբանութիւնն , բայց յանխրատ . գտրօրինակ՝ Պաքքօնիոս , Լօք , Քօնտիլլաք , Թուաս են , որք ընդդէմ վկայութեան ազգաց և ազանց և խնամառնոյն գաւուց՝ որք գրուատեցին գտրամաբանութիւնն , առքա տխմարքն և յետնեալք յամենայն բնական ղգայութենէ՝ յառնեն ընդդէմ գերազանց գիտութեանս այսմիկ , առելով չլինել բաւական տրամաբանութեանն հասանել ո՛չ միայն ի գիտութիւն ազբերացն ճշմարտութեան , այլ և ո՛չ օգտի իմիք բաց ի ձեռաւէ : Բայց զարմանք ունիցին զամենայն ոք ի լսելն զայդ միայն . ո՞վ այսօր ուրացի ղյառաջադիմութիւն բանական փիլիսոփայութեանն յետքս , որ ի ձեռն տրամաբանութեանն : Եւ զարմանաց և արժանի այն է՝ գի նոքին իսկ առաջք տրամաբանութեան՝ յանգոնեն զանգիւթանց գգեղեցիկ և գշահաւէտ ուսումնս զայս՝ ի կիր առնուն զձեռնարկութիւնս տրամաբանութեան : Իսկ թէ ոմանք առ տկարութեանն մոլորեցան ի կիրառութեան առքին՝ այդ ոչ է մոլութիւն տրամաբանութեան , այլ նոցին անձանց իրանց , և ո՛չ ամենեքեան զրկին յօժանգամութենէ և ի նպաստակ տրա , Ս . յոյսիս չառ ,

## ՎԱԽՃԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ

# ՀԱՄԱԲՆԱԲԱՆՈՒԹԻՆ

## ՏԵՍՍԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԲՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Զն. Աւանդեցաք ցայսր վերապատիցն, կամ զարգեբրացին ճշմարտաբիեան, որ է վախճան տեսական փիլիսոփայութիեան, ժամ է արդ՝ պատել մեր զդրունս քաղաքիս փիլիսոփայութիեան (եթէ արժան է այսպէս խօսիլ), մնանելք ի ներքս և զգանազան առարկայս ի նա տեսանել, բան այնմ ծանելոյս զնոսա և քաղելոյս անտի զդիտութիեն իրացն։ Զառարկայիցս այսոցիկ խօսել պարտիմք երկու եղանակաւ, նախ ի վերացեալն և ընդհանրապէս խորհելով զվիճակ իրացն յառաջ քան զլինել նոցա, այսինքն զէակս և զյատկութիեանս զայնոսիկ որք համարակք են ամենայն իրաց. և երկրորդ ի մնանելոյն այսինքն զԱռաւծոյ, զՀոգւոյ, և զաշխարհէս, խորհելով զնոսա ոչ նիւթապէս այլ տեսականապէս. այսինքն զինելով մնօք զակիզբն նոցա՝ զբնութիեն, զյատկութիեանս, և զընդհանուր զօրէնսն, որովք իւրաքանչիւրն կայ իւրով անփոփոխ դոյութիեամբ և էութիեամբ։ Վասն որոյ առաջինն գոլով ընդհանուր և գեր ի վերոյ քան զլինելն իրաց, նշմարելով զնոսա յառաջին վիճակի այսինքն յառաջ քան զլինելն նոցա, կոչի է-ի-բա-ռին կամ ընդհանուր հո-գե-բա-նին, և երկրորդն՝ գոլով զառեալսդ իրացն և զմնանելոյ յատկութեանց և զառօրեայ գործոց նոցա, կոչի հա-ռա-որ հո-գե-բա-նին։ Զերկոցունց ըստ կարգի խօսելոցս, և գիտելով միշտ թէ անուանդ հո-գե-բա-նին նշանակէ ըն-ի-ն էնէ-գի-ին, որ սեփական է պիտութեան ճշմարտութեանն, պի մնօք տեսանելմբ և բերիմբ ի ճշմարիտն. իսկ գերկ-

*բորգ մեան կոչեմք բ–ր–յ–ն ֆէլէ–ֆ–յ–ր–ն, զի կամք բե–րիմք ի բարեմիտն. վասն որոյ զայս՝ որպէս ամենեքին, կոչեմք բ–ր–յ–ն ֆէլէ–ֆ–յ–ր–ն. և զայդ՝ թ–ր–յ–ն ֆէլէ–ֆ–յ–ր–ն, կամ հ–ր–ք–ք–ն–ր–ն. որ և յերկուս որոմի, յընդհանուրն և ի մասնաւորն։ Ուսոմ։*

---

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՌՈՒԹԻՒՆ

**29.** *Որպէս յամենայն արհեստս սովոր են մարդիկ նախ զայդ ի ձեռն բերել, որ պիտանագոյն է արհեստին՝ և առանց որոյ չկարէ կեալ, որպէս շինուածն առանց պըղխաւոր վիմին անկեան, նոյնպէս ի պիտութիւնս նախ պըտկըզունս զայնոսիկ գտանել պարտ է՝ և ծանուցանել յորոց վերայ չինին և կայանան ամենայն պիտութիւնք, և ապա ձեռնամուխ լինել ի առաւակս ասպին պիտութեանց, և ի մասնաւորի ճառել զնոցանէ և գյատկութեանցն, վասն որոյ յառաջիկայ գլուխդ երկու յօդուածովք առաջի դնեմք զգլխաւորութիւն և զգերազանցութիւն երկու միայն սկզբանց, որք գոզցես սկիզբն են այլոցն ամենեցուն, և ամենեքեան հուակ ուրեմն առ երեսին և յենուն ի նոսա։*

---

# ԳԼՈՒԽ Ա.

## ՑԱՂԱԳՈՒ ՍԿԶԲԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՀԱԿԱՍՈՒԹԵԱՆ

**2Ա.** *Յակզբունս որք անմիջապէս (*) մեզ յայտնի կոչին՝ (ԿՊ.) երկու են առաւակք. նախ՝ սկզբունք ինքնին ե–*

(*) *Առ բառագ –ն–ջ–ա– յայտնի խնայեալ լինի, ոչ բաց ձիշտ խնասանին՝ որ ի տրամաբանութեան, այլ բաց խիտք. այսինքն թէ ոչ միջնորդութեամբ վկայութեան այլոցն, այլ անմիջապէս միջնորդութեամբ մերոց զգայարանաց, խղճի մտաց, և նց։*



*ր–ր–ր՝ որք և ը–ն–ն կոչին և ի մտաց ճանաչին, զորօրինակ՝ բոլորն է մեծ քան զիւրաքանչիւր մասն, 4 և 4 առնեն 8 են. և են՝ որք ինքնին չեն բացայայտք, այլ փորձիւ իմն, զորօրինակ միջնորդութեամբ խղճի մտաց, բանաւարութեան, և զգայութեանց կամ զգայարանաց առացեալ լինին. զոսոս ևս ասա –ն–ջ–ա– կոչեմք, այսինքն –ն–ջ–ա– ֆ–յ–ն– հ–ք–ր–ն, և ՛ր զ–ր–ք–ր–ն–ր–ն այլոցն. զորօրինակ ես խորհիմ, ես ցաւիմ, մարմինք ծանուցանք են, ձիւնն ցուրտ է. են, որք կոչին ընդհանրապէս գ–ր–ր–ն. և կամ զառաջինն կոչեմք սկզբունս ի յ–ա–ջ–ք–ն–ն կամ յ–ա–ր–ը–ն, և զերկրորդն է–ք–ք–ն–ն։ Ա.րդ յառաջինս այս յօդուածոյ ասեմք՝ թէ ամենայն սկզբունք բացայայտք եւրին ի մի միայն սկիզբն հակասութեան, բայց նոսա ոչ ցուցանին, այլ բացատրին։ Ցուցանեմք զառաջինն մասն առաջարկութեանս, սկիզբն հակասութեան ն–ղ–ն է–ր–ե է–ն–ե և է–ր–ն է գ–ր–ն։ Ամենայն սկզբունք բացայայտք հարկաւորապէս են, եթէ հարցանես էրը վասն են, առնուս զպատասխանի. քանզի որ հարկաւորապէս է, չկարէ յետ լինելոյն և ի միասին չլինել. այսինքն է՝ նոյնն որ է, չկարէ լինել և չլինել ի միասին. երկրորդ՝ եթէ որ միանգամ է, ի միասին լինէր է, հետեւէր թէ՝ որ ո՛չ է, ո՛չ է, այսինքն ոչինչ, որ անատակ է, և հիմնայատակ տապալէր զամենայն էութիւն իրաց։ Ուսոմ պարտիմք ասել թէ՝ որ է՛, չկարէ ի միասին լինել չ՛. երրորդ՝ ամենայն սկզբունք բացայայտք, զորօրինակ՝ բոլորն է մեծ քան զիւրաքանչիւր մասն իւր են, առնուն զհատատութիւն իւրեանց ի հակասութեան սկզբնէս. զի է բոլորն մեծ, զի թէ չէր մեծ՝ լինէր և չլինէր, կամ լինէր ի միասին փոքր և մեծ, որ է ընդդէմ բանի։ Զի նոյնն չկարէ լինել և չլինել ի միասին. ուրեմն ամենայն սկզբունք հարկաւորք, որք են՝ նմին իրի են, զի չկարեն լինել և չլինել. չորրորդ՝ գաղափարն էութեան յամենայն գատունս կայ զօրութեամբ և ենթադրի. զի զորօրինակ՝ յառաջարկութեանս 4 և 4 առնեն 8, ենթադրի էութիւն թուոյս 4, ապա թէ ո՛չ՝ ոչինչ լինէր բառ 4։ Որպէս ենթադրի*

դաշափարն՝ հարկաւ պարտի զօրութեամբ ենթադրիլ, և այն ինչ որ անմիջապէս էութեան դաշափարին հետեւի, նոյնպէս ի դատումն յայտնիկ բացայայտ՝ պարտի և կից նոցին ենթադրիլ առաջարկութեանն՝ որ անմիջապէս յառաջ գայ յէութենէ նոցա. արդ այս ինչ որ ենթադրի, և զօրութեամբ ծածկեալ կայ յամենայն սկզբունս՝ է մի միայն հակասութիւնն. զի ճանաչելով մեռած զնա՝ անմիջապէս ճանաչէ զհակառակն նորին զնա, և կամ որ է՝ ամին իրի է. զի չկարէ լինել ի միասին չէ՝ որ է. նոյնն չկարէ լինել և չլինել ի միասին, Դարձեալ որքան բացայայտ են հարկաւոր սկզբունք, այնքան և բացայայտ է նոցին հետեւող սկիզբն հակասութեան. և որքան տարագ են սքին սկզբունքք՝ յամենեսին և կայ հակասութիւնն. և չիք այլ ինն պատճառ այսոցիկ սկզբանցս. ի հարցանելն ուրուք թէ առ ինչ են, բայց միայն պատասխանին, են՝ զի չկարէ որ էն՝ լինել և չլինել ի միասին։ Ուստի ամենայն հարկաւոր սկզբունք բերին հուսկ ուրեմն առ առաջին սկիզբն հակասութեան. բայց թէ և ի վախճանի առ սկիզբն հակասութեան բերին ամենայն սկզբունք ոչ ցուցանին նուազ. քանզի ցուցանել է զանյայտն ի յայտնագունից անտի հանել և հաստատել։ Իսկ արդ հարկաւոր սկզբունք առ հասարակ ամենեքեան բացայայտք են, ուրեմն ցուցանելոյ չունին տեղի, զի ինքնին յայտնի սեռանին. և զոր սեռանելոյն աչօք իմով՝ չունիմ պէտս ցուցման այլոցն նպաստի. երկրորդ՝ յերկուց նախընթացից ցուցանի ճշմարտութիւն իրիք. իսկ արդ սկիզբնդ հակասութեան մի է, ուստի չկարէ միայն ցուցանել զայլ սկզբունս. ուստի մի միայն առաջին ասի լինել. վասն զի զօրութեամբ յամենեսին գտանի և թէութիւն ինն ընդհանուր ամենայն սկզբանց, որք եթէ են՝ են. զի նոյնն չկարէ լինել և չլինել ի միասին։ Ուստի առ ի լինել հակասութեանս սկզբան առաջին՝ չէ պարտ զի իցէ այլոցն սկզբանց բացայայտագոյն, և ոչ իսկ պարտ է՝ զի այլքն ի նմանէ կամ ծնանիցին, և ոչ իսկ պարտ է՝ զի այլքն ցուցցին նմա. այլ միայն՝ զի զօրութեամբ գոյի յամենայն սկզբունս,



## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՔՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԻՄ ՍՈՐԱ

**ՁՐ.** Սկիզբն հակասութեան է ժխտողական, ուրեմն չէ առաջին. զի ժխտողականն է պակասութիւն դրականին, և նախ՝ ենթադրէ զդրական իւր, Եւ նա է ի Յ ԵՂԾ-ԿՒ, և ղանազան ենթադրէ զերն՝ զորով կայ և փոփոխի։ Երկրորդ՝ սկիզբն հակասութեան ենթադրէ զբացայայտութիւն կամ զպարզութիւնն. ուրեմն, Երրորդ՝ սկիզբն հակասութեան զհետ գայ սկզբանն նոյնութեան. զորօրինակ՝ որ է՝ է՝,

**Ա.Ռ Ա.** Ձանազանեմ զնախընթացսն. է ժխտողական նուիրապէս և ըստ բառից՝ ընդունիմ. ըստ իմաստին՝ դարձեալ զանազանեմ. ըստ ամենայնի՝ ժխտեմ. ըստ մասին միայն՝ ընդունիմ։ Ա.ռ փաստն ասեմ, է պակասութիւն դրականին, բայց պակասութիւնս այս է իրրև հարկաւոր թէութիւն դրականին, առանց որոյ չկարէ միւսք հանգչիլ, յարտասանելն զդրականն՝ ընդունիմ. է պակասութիւնն ըստ ամենայնի, և չպարփակէ զմնան ինչ դրականին յինքեան՝ ուրանամ։ Ա.յ՛ սկիզբն հակասութեան ունի զերկրորդ իւր մնան ժխտողական, բայց յառաջինն ունի զդրականն. զի նախ յառաջ բերէ զերն՝ որ է. զորօրինակ՝ նոյնն որ է՝ ԼՔՒԼ, ահա ՔՐ-Ի-ՀՀ, և ԼՔՒԼ չկարէ ի միասին, ահա ՔՒՔՓԼ-ՀՀ. յայսմ երկոքինն իսկ են առաջարկութիւնք՝ առորոգականն և բացասականն. ուստի ոչ կայանայ մի միայն ի բացասականն, այլ յառորոգականն իսկ. ուստի առ այս է թէ սկիզբնս այս իցէ պակասութիւն դրական իրին։ Ասացաք և ևս (Լ) թէ զլինելն առաջարկութեան իրիք՝ ժխտողական ոչ դատիմք ի հնչմանէ բառիցն, այլ իմաստին. և ո՛չ իսկ միասս անտի է, զի հակասութեանս սկիզբն ենթադրէ զդրականն. զի զօրութեամբ պարփակեալ կայ ի նոցին, և ոչ զատն ի նմանէ. և զատ զատիար միոյն կից ունի զդատ միւսոյն։ Եւ ո՛չ եզանակն՝ որով յօրինեալ արտաբերի սկիզբնս այս՝ միասէ առաջարկութեան իւրում. զի այո՛ եզանակն է այն ինչ, որ

կարէ լինել և չլինել. բայց սուտ եղանակս այս կայանայ յընդդիմութեան էին ընդ չէին, որ արտաքոյ գոյէն և հաստատէ գոյն, Եւ յիրս հարկաւորս և յարիւնականս որքան հաստատուն է էութիւն նոցա, այնքան հաստատի և եղանակ նոցա, և չկարեմ ճանաչել զիրս՝ առանց սեփական եղանակի նոցա, որով և ճանաչին. նոյնպէս զեղանակէ սկզբանս զայս առացեալ.

Առ Բ. Ասեմ. պարզութիւնն և բացայայտութիւնն կամ պայծառութիւնն են յատկութիւնք ամենայն ճշմարիտ սկզբանց՝ ընդունիմ. է պատճառ և սկիզբն նոցա ուրանամ. զի հակասութեան սկիզբն ոչ ծագի ի բացայայտութենէ անտի, նա մանաւանդ սա զայնմանէ կախի՝ որպէս յայտ է: Դարձեալ բացայայտութիւնն իրաց ոչ է էութիւն իրին, այլ որպիսութիւն իրին ըմբռնեալ ի մտաց, որ և կայ ի սկիզբն հակասութեան անդամ, և հարցեալ թէ առ ի՞նչ այս է բացայայտ, ոչ կարես այլով իւիք հանդչիլ, բայց միայն յենլով յսկիզբն հակասութեան առլով. քանզի որ բացայայտն է, չկարէ լինել և չլինել այնպէս ի միասին.

Առ Գ. Նմանապէս առեմք թէ նոյնութեան սկիզբն, որ էն է, յատկութիւն է կից ամենայն հարկաւոր սկզբանց՝ ընդունիմ. է սկիզբն յորմէ ելանեն ամենայն սկզբունք՝ ուրանամ. այո՛ խնդրի զի կայ յարմարութիւն ի մէջ բառից և վերադրի, բայց ոչ կարէ լինել սկիզբն հարկաւոր սկզբանց՝ յորմէ ելանիցեն առքա, այլ միայն հարկաւոր թէութիւն. զի որ էն՝ ամին իրի նոյն է, քանզի չկարէ լինել և չլինել նոյն ի միասին. Հուսկ ուրեմն յոյժ սխալին որ զայնպիսիս առաջարկեն. քանզի զերկու իմասս չիմանեն ընդ միմեանս. քանզի պէտ է լինել իրիք առանձին բնութեամբ կամ էութեամբ, և պէտ է լինել առանձին ի հակասութեանն. ի միտս՝ այո՛ նախ դրականն պարտի լինել յէութեան, զի և հակառակն նորին լիցի. բայց ի կարգս սկզբանց առանձինն է այդ հակասութիւն. մեք զառանձինն լինելոյ սկզբանց խօսիմք, և ո՛չ զէութեանէն. և էութիւնք իրաց չին սկզբունք, այլ հիմն



սկզբանց, որք անտի ելանեն և մնօք արտաքոյ. և էութիւնք իրաց առանձինն առեալ են անհատք, մերթ սկզբունք ընդհանուրք են.

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՅԱՂԱԳՍ ՍԿԶԲԱՆ ՊԱՏՃԱՌԱՑ

ԶԹ. Թէպետև ճշմարտութեանն և ուրացող զգօրութիւն սկզբանս եղև Պեկվէյլի Գերմանացին, որ ասաց թէ անյայտ է և անկար և անպիտան ի տուգումն բնական և փորձառական ճշմարտութեանց սկիզբնս պատճառաց, և չիմիմեաց զայն ընդ բանաւոր պատճառս: Վասն զոր նորա էր ուրանալ զայս ճշմարտութիւն, յորմէ յիրաւի յառաջ գայ հաստատութիւն ամենայն պատահական և բնական իրաց, և հաստատել զնոսա վարդապետութիւն իւր, [illegible] և [illegible], որոց ասէր զլինելն բնական իրաց, և արտաքսելով զպատճառն ամենեցուն՝ ասէր լինել յինքինէ պատահմամբ և բաղդիւ, այսինքն առանց պատճառի. բայց նախ առեմք, չէ պարտ չիմանալ զերկու սկզբունս [illegible] ընդ սկզբան պատճառի՝ [illegible]: Զի Առաւած է ինքեան բանաւոր պատճառ, որով կայ. բայց Առաւած չասի ներգործութիւն. մերթ յայտնիկ չիք ինչ ներգործութիւն առանց պատճառի. բառդ ներգործութիւն նշանակէ զէութիւն իրին՝ որ յընչէ ի գոյ ածեալ է կամ եղեալ. և զօրութիւն պատճառին ի ներքին բնութիւն իրին անցեալ գործէ, և իրր թէ ի խորոց՝ այն է յընչէ հանէ և առեղծէ զնա. վասն որոյ յսկիզբն՝ [illegible], այս է բուն իմաստն. որ կայ, բանաւոր պատճառաւ կայ, զօրութեամբ և եղանակաւ իւիք բնութեան, զոր բանիւ մտացս բառական համարիմք էութեան նորին, բայց ո՛չ յընչէ եղանի. ուստի լայնագոյն և ընդարձա-

զարդարեալս հնձովք, ղղաչաս և զպարտէզս ազգի ազգի ծաղկօք, այսպէս զչինուածս քաղաքաց, տանց, ևն. ևն. յորս ամենեսեան յայտնապէս և հարկաւորապէս խնդրի՝ ըստ ներդործութեանն և պատճառ իւր։ Որպէս թէ մարդն՝ որ է մին ի պատահական էակաց, չունի և չխընդրէ զպատճառ իւր· արդ այսպէս հնար է ընդ միտս խօսիլ. մարդս այս կամ եղեալ է ի կարելութենէ, և կամ յոչնչէ. չկարէ կարելութիւն իրին տալ զեղելութիւն իրին. այսպէս կատարելութիւն մարդոյ չկարէ տալ զեղելութիւն մարդոյ, զի առաւել իմն է եղելութիւնն քան զկարելութիւնն, այսինքն նոյն կարելութիւն ածեալ ի գոյացութիւն և ի գործ. ուստի հետեւէր թէ ներդործութիւնն է առաւել քան զպատճառն, և կամ փոքրն եհան զմեծագոյնն քան զինքն, որ է ընդդէմ բնութեան և բանի։ Եւ եւս եթէ կարելին տայր ինքեան զեղելութիւնն, ապա ամենայն հնարաւորք եղանէին արդեամբ, որ առա է. զի լաւ է լինել քան զչլինելն, և ոչ յոչնչէ. քանզի որ ոչինչն է՝ և ներդործութիւն նորա ոչինչ է. զի ոչ ոք տայ զոր չունի. և ընդդէմ բանի է ասել, մարդն՝ որ է, եղեւ յայնմանէ՝ որ չէ. և նոյն իսկ ընդդէմ սկզբան հակառութեան, զի նոյն լինելը առել՝ լինել և չլինել իրիք ի միասին. նոյնպէս և առաջնոյ զամենայն եղելոցն. զի եղելքն հարկաւորապէս ինքեանս պարփակեն զծանօթութիւն այնր իրին, որ ետ նոցա զայդ՝ զոր չունի կարելութիւնն ինքեան, այսինքն զեղելութիւն։ Իրիս այսորիկ զանուանն կոչեմք դոյ՝ և կամ բաւ դոյ, որոյ ծանօթութիւնն է յարաբերեալ հարկաւորապէս ի յարաբերականէ իրմէ, որ է ներդործութիւն։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՂԲ. Առարկեն նախ՝ սկզբամբ պատճառի ոչ ցուցանի անմիջապէս և ուղղապէս լինելութիւն կամ եղելութիւն իրաց, այլ ընդոստումամբ անցք լինելը այդ, առանց յարաբերութեան, ուրեմն առ ոչինչ օգտէ։



կազդոյն է սկզբանն իմաստ, «չիք ներդործութիւն առանց պատճառի», «քան չիք ինչ առանց բանաւոր պատճառի». զի ամենայն ներդործական պատճառ ըստ իմիք ունի զիմաստ բանաւոր պատճառի, բայց ոչ ամենայն բանաւոր պատճառ՝ է ներդործական պատճառ. սակայն վասն մերձաւորութեան իմաստից իւրաքանչիւրոցն՝ ի կիրառութեանն մին առեալ լինի երբեմն փոխանակ միւսոյն, Աստանօր

ՂԱ. Արժան համարիմ տալ զիմաստ հարկաւոր էակին և պատահական անտարբեր էակին, այն է միշտ էակ գոյութեամբ բնութեան իւրոյ, ոչ յումեքէ՝ այլ յինքեան կայ յ--ի-ե-ի-ն՝ ն-ի-ի-ի՝ հ-ի---ր ե-ի-ն ա-ի-ն եի-ը-ն, ա---ց ը-ը ո- ի-ե ի-ւ յե-ի-ը-ն։ Իսկ պատահականն այն է, որ կարէ լինել և չլինել, այսպէս կամ այնպէս լինել, այսքան կամ այնքան լինել, ոչ յինքենէ՝ այլ յայլմէ պատճառէ եղեալ է, որ կամելոյն կայ, և չկամելոյն չկայ. այսպէս

ՂԱ. Բացայայտելով զիմաստ պատահական իրաց՝ դամք այժմ ցուցանել թէ բացայայտ է, և ի բացայայտ սկզբանց մինն է՝ սկիզբն «չիք ներդործութիւն առանց պատճառի». զբացայայտութենէ և զճշմարտութենէ նորա չիք և չկարէ լինել տարակոյս, և բաւական է առ այդ մի միայն ընդունումն գաղափարացն ներդործութեան և պատճառի. զի թէ ներդործութիւնն յինքեան հարկաւ բերէ և պահանջէ զիմաստ այլոյ իրիք՝ յորմէ եղանիլ սկիզբն առնու, այո՝ այլ ինչ է՝ պատճառ նորա։ Դարձեալ է մի միայն սկիզբն առ ի ցուցանել զայլ և այլ ճշմարտութիւնս պատահական և անտարբեր իրաց։ Զանազի յամենայն պատահական ճշմարտութիւնս կամ ներդործութիւնս ի ձեռն առնումք զայս պատճառաց սկիզբն, զորօրինակ՝ տեսեալ զքարն անկանիլ յերկիր առաջի աչաց մերոց, այսպէս ձեռնարկեմք. չիք ներդործութիւն առանց պատճառի. իսկ արդ անկանիլ քարինն է ներդործութիւն. ուրեմն անկանիլ քարի ունի զպատճառ։ Նիւթեղէնն մարմինն չէ ընդունակ շարժման. իսկ արդ շարժի. ուրեմն ունի զպատճառն։ Այսպէս ի տեսանելն մեր զարտորայս

Պիս. Ասելով զանազանեմ. ոչ ցուցանի անտի անմիջապէս և ուղղապէս եղելութիւն իրաց, որպէս ի փորձառական սկզբանց ցուցանի՝ ընդունիմ. ոչ ցուցանի անտի, այսինքն սկիզբն պատճառի՝ ոչ յայտնէ հարկաւորապէս ընդհանրապէս և ի վերացեալն զօդ և գյարմարութիւն ներգործութեան իրիք ընդ ներգործականն պատճառի իւրոյ՝ ուրանամ, ուրանամ և զհետեւութիւնն։ Առ բացատրութիւն իրին ասեմ, իմաստ սկզբանն՝ չէ՛ նշանդ-ցուցիչ բան պարտ ոչինչ է՝ հարկաւորապէս ըմբռնի ի մտացս այսպէս. եթէ կայ ներգործութիւնն, կայցէ և ներգործողն կամ ներգործական պատճառ սորա, առանց որոյ չկարէ կալ, որպէս ասացաք ի վերոյ՝ ոչ յինքենէ, ոչ ի հնարաւորութենէ և ոչ յոչնչէ։ Ոչ յինքենէ, քանզի յառաջ քան զլինելն՝ ոչ էր. ոչ ի կարելութենէ, քանզի փոքր է քան զեղելութիւնն. և ոչ յոչնչէ, քանզի ոչնչին պարտ ոչինչ է, և չկարէ տալ զոր ոչ ունի։ Ապա որոյ յայտ իմն է սկիզբնս պատճառի. և միանն ի բացայայտ և յառաջին սկզբանց է առեալն՝ չիք ինչ ներգործութիւն առանց իւրոյ պատճառի։ Եւ այնքան ճշմարիտ է, զի թէև յեղելոցն և ոչ միւն լինէր՝ արդեամբ դարձեալ նոյն միայր ի ճշմարտութեան իւրում սկիզբնս այս. քանզի ի վերացեալն է և ազատ է յամենայն նիւթականացն ճշմարտութիւն սկզբանս, այսինքն ոչ կախի ի նիւթականացն՝ իբրեւ զֆիզիքական սկզբունս, թէև այդ ևս ճշմարիտ է թէ՝ յուղղակի ծանօթութիւնս մեր միտք չճանաչէն զգայականս, այլ ուղղակի զառարկայս, ըստ որում իմաստնասէրս առնէ Արիստոտէլ Մետաֆիզիքայ. յատկութիւնք՝ որք են ընդմէջ այնոց՝ զորս միտք մարդոյ ճանաչէ, նոյն են և ընդմէջ իրացն տիրապէս. զի միտք յըմբռնելն ոչ առնէ զյարաբերութիւնդ զայդոսիկ, այլ մեկնեալ բացայայտէ զնոսա։

Առարկեն Բ. Ի ցուցանել զսկիզբն բանաւոր պատճառի կամ ներգործական պատճառի՝ զնոյնպէս չգիտան ի կիր արկանեն. զի ցուցանել դիցի ոչ է այլ ինչ, բայց միայն գտանել զբանաւոր պատճառս իւր։



Պիս. Որպանալով զնախադասութիւնդ. քանզի սկիզբն բանաւոր պատճառի, կամ չիք ինչ ներգործութիւն առանց պատճառի՝ դոլով ի բացայայտագունից և յառաջին սկզբանց, ոչ ցուցանի։ Եւ առ փաստն առեմ՝ ցուցանել պիտի է գտանել զբանաւոր պատճառ իրին, ի նոյն բանաւոր պատճառէն՝ ուրանամ. է գտանել զբանաւոր պատճառն յայլոց սկզբանց, որք թէև յինքեանս են բանաւոր պատճառ, բայց ոչ յօրինեն զայդ սկիզբն՝ չիք ինչ առանց բանաւոր պատճառի՝ ընդունիմ. և առ բացայայտութիւն բաժանմանս առեմ, անկանէաք ի մտայր չրջանն, եթէ առ ի ցուցանել զճշմարտութիւն բանաւոր պատճառի՝ առնուաք զնոյն բանաւոր պատճառսն սկիզբն ի նախադասութեանն. բայց մեք զայդ չառնեմք և չարարաք, զի մտայր է չրջան, յորժամ ի ցուցանել զառաջարկութիւն իմն ի հետեւութեանն՝ նոյն առաջարկութիւնն առնոյր իբրեւ ճշմարիտ ի նախադասութեանն, և կամ զնոյնն նոյիմբ փորձեալ կամ հաստատեալ։ Մեք նախ ոչ ցուցաք հաստատութեամբ զճշմարտութիւն սկզբանս այսորիկ, այլ յայտ արարաք զայն. և դիցուք թէ ցուցեալ իսկ իցեմք զայդ՝ բայց ոչ միջնորդութեամբ սկզբան բանաւոր պատճառի, այլ այլոցն՝ որք թէև յինքեանս են իւրաքանչիւր բանաւոր պատճառք՝ նկատմամբ ծանօթութեանն, որ յեղբակացութեան իւրաքանչիւրոցն, բայց այնու ոչ են և սկիզբն բանաւոր պատճառի, [illegible]։

Առարկեն Գ. Եդեալ զբացարձակ հարկաւորութիւն սկզբան բանաւոր պատճառի, դիցես և զճակատագիրն բազդի, որ է հարկաւորութիւնն երկրորդական պատճառաց, ըստ Սենեքայի յաշխարհ եդեալ և յառաջ եկեալ յաստեղացն կարգադրութենէ և աղդեցութենէ ի վերայ մարդոյ, և որում ոչ կարէ հակառակ կալ աղատութիւնն մարդկային. զի դոլով սկզբանդ բացարձակապէս հարկաւոր, ամենայն ճշմարտութիւնք կամ եղրակացութիւնք անտի յառաջ եկեալք՝ լինէին բացարձակապէս հարկաւորք, որպէս են եղրակացութիւնք եղեալք յառաջին սկզբանց. Բ. բառնայր նոսա և աղատութիւն գործելոյ. զի եդեալ զպատ-

ճառն հարկաւոր՝ դիցես և զներդործութիւնն հարկաւոր։

Աս Ա. Հերքեմ զնախընթացն. առ Ա. փաստն զանազանեմ, եթէ երկոքին իսկ նախադասութիւնք լինելին ի հարկաւոր և բացարձակ սկզբանց՝ ընդունիմ. եթէ միւն իցէ բացարձակապէս ---՝ և փոքրն ---՝ կամ ---՝ ուրանամ. քանզի յառնդունին հետեւի ներակայութիւնն (ԼԹ. 8.) և ֆիզիքական սկիզբն՝ առ մեթաֆիզիքական կամ բացարձակապէս հարկաւորն՝ կոչի յառնդոյն, և ճշմարտութիւնն ներակայութեան յայնժամ ասի հարկաւոր թէականապէս, այսինքն միշտ կարդ և կամք վերնոյն սեպհականն կամիցի ի հաստատութեան պահել զօրինս բնականացն կամ արարածոյն (յոն). զոր օրինակ՝ չիք ներդործութիւն առանց իւր պատճառի, իսկ արդ չինուած ապարանից է ներդործութիւն, ուրեմն չինուածդ այդ ունի զպատճառ իւր. ուր ճշմարտութիւն ներակայութեանդ՝ է ճշմարտութիւն ֆիզիքական հաստատութեան, այսինքն՝ այնքան հաստատուն է ճշմարտութիւն նորա, որքան հաստատուն է օրէնք արարածոյն աշխարհի. ուստի աստ և անհնին է գիւտդ ճակատագրին և բաղդին. զի բաղդդ այդ և ճակատագիր չունի զէութիւն իւր դրական, այլ յառէտ հնութեանն են ցիորք բանաստեղծութեան, և զարուղ անգիտութեանն առեղծ և բնութեան նոցին, զորմէ ասս (ՄՀԽ)։

Աս Բ. առնմ զանազանելով զներակայութիւնդ և զիմաստդ՝ եթէ հարկաւորութիւն ծանօթութեան պատճառին ծնանիցէ զհարկաւորութիւն ներդործութեանն՝ ընդունիմ. իսկ եթէ ի ծանօթութիւնէ ներդործութեանն ծնանիցի ի մէզ ծանօթութիւն պատճառին՝ ուրանամ. քանզի առ խօսիմք զմի միայն ծանօթութիւնէ պատճառին՝ որ հարկաւորապէս ծագի ի մէզ, և միտք մեր հարկաւորապէս ըմբռնէ զնա յըմբռնելն զծանօթութիւն ներդործութեանն. և ի գիտութիւնէ պատճառին, և հարկաւոր իսկ պատճառին՝ ոչ գնի հարկաւորապէս ներդործութիւնն, բայց միայն զի իցէ պատճառն հարկաւոր, և ներդործութիւնն նորա ևս լինի հարկաւոր, եթէ ամենայն թէ-



թեանցն և միջոցաց առ ներդործութիւնն հարկաւոր լիցի որոմնագրութիւն. եթէ ապատ՝ ապատ. ուստի են. բայց զզործոցութիւնէ հարկաւորապէս պատճառաց խօսեցուք այլուր (ՃԼԴ են.)։

---

## ԳԼՈՒԽ Գ.

### ՅԱՂԱԳԱՑ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱԺԱՆՄԱՆ ԷԱՏԱՑ

ԳԳ. Ասացաք ի որոմնագրութեան առն (ԻԼ) թէ միւն ի գերազանցականացն բառիդ է ---՝ որոյ բացատրութիւն դոլով յիմաստն՝ և ի վեր քան զամենայն անուս գոյութիւնց կամ ընդհանուր՝ չունի զոհնման կամ չկարէ ճանաչել սիրտդ։ Բայց ճարտասանական իմն կերպիւ կարելի ասել զէութիւն կամ զվէն լինել «այն որ և իցէ իմն կամ ինչ, որ ինքնոմին և գրականապէս իմանալի է», և կամ «այն ինչ որ է իմանալի իսկապէս»։ Բաժանի յերկուս՝ և ի ---՝ և ի ---՝։ Իրականն է այն ինչ, որ արտաքոյ միտոյ իսկ ունի զէութիւն իւր, և է իմանալի՝ որպէս էն իսկապէս և կամ կարէ իմանալի լինել, իբր այսպէս կամ այնպէս։ Տրամաբանական էակն չունի զէութիւն իւր արտաքոյ միտոյ, և է ծանօթութիւն միտոյ միայն, վասն որոյ կոչի ի հնոց ---՝ ---՝. զորօրինակ՝ ունիմք զդատարկ հաւաքականութեան, սահմանեն են, որք մի միայն են ի միտս. բայց ո՛չ այնպէս է ---՝ ---՝. զորօրինակ՝ Պետրոս առեղծանել և Պօղոս առեղծանելի, յորմէ և ---՝ ---՝ կամ ---՝, և ---՝ ---՝. քան որում է ոք արդեամբ կամ առեղծանել, և է ոք առեղծանելոյ ընդունակ, և զօրութեամբ առեղծանելի կամ կարելի և հնարաւոր ի առեղծել. յորմէ էակն կարելի երբեմն կոչի ---՝, որում հակառակ կայ միւսն՝ որ է ---՝. զորօրինակ՝ չիմն քառակուսի՝ որ ո՛չ երբէք կարէ լինել և ո՛չ իսկ կարելի. զի յատկութիւնք քառակուսի անկեան զէ

ընդդէմ են յատկութեանց չքնաղի, և եղծեն զմիմեանս. նմին իրի բուն սահման կարելութեան «է համաձայնութիւն և յարմարութիւն յատկութեանց»: Էակն գարձեալ բաժանի յե-ին ե-ո-ւ և յե-ին ե-ո-ւ-ը, ի ե-ր-է-ն և ի պ-ա-ճ-ո-ւ-ն, ի բ-ա-ր-ի-ն և յա-ռ-ա-ջ-ի-ն, որոց առաջինքն՝ այսինքն ե-ո-ւ, ե-ր-է-ն, բ-ա-ր-ի-ն յարմարին միայն այնմիկ՝ որ է էիցն էակ ի յանդոյից (*), այսինքն մի միայն Աստուծոյ. և երկրորդականքն էիցին՝ թէ՛ եղելոց, թէ՛ իմանալեացն իսկապէս:

ՂԴ. Եթէ խնդրիցէ ոք՝ բառդ ե-ւ իցէ՞ արդեօք ընդհանուր, այնպէս զի ընդ իւրև պարփակիցէ զամենայն գոյութիւն՝ թէ՛ զանաճմանն, թէ՛ զսահմանեալն, զորօրինակ՝ ընդհանուրդ ինչ-ն ունի ընդ իւրև զամենայն առեալս իւր՝ զմարդ, զձի, զոչխար, զարծիւ և այլն, Ասեմք նախ՝ էակն եթէ առեալ լիցի ըստ առաջնոցն՝ որք ի վերոյ, մի և նոյն է ընդ Աստուծոյ, և յայնժամ ո՛չ երբեք կոչիլ կարէ ընդհանուր, իբր թէ Աստուած ունիցի զմիմանս յատկութեանց իւրոց էականաց, որք հատարակապէս և հատասարապէս իցեն ի մարդիկ, որ է մերկութիւն բազմաստուածութեան. զի ընդհանուր բառդ ինչ-ն, այո՛ կենդանութիւնն որպէս է ընդհանուրն, նոյնպէս ըստ մասին է ի առեալս իսկ իւրաքանչիւրս որք ի ներքոյ են առի իւրեանց. բայց ո՛չ այնպէս նկատմամբ գերագոյն էակին, որ է Աստուած, որոյ յատկութեանցն ըստ նմանութեան անթիւ հաղորդիմք, և նուաստութեամբ՝ և ո՛չ իսկապէս կամ ըստ առեալի գոյացութեան, Իսկ եթէ առեալ լիցի ըստ երկրորդ իմաստից, յայնժամ ո՛չ իսկապէս, այլ համեմատութեամբ և հանգոյն ճշմարիտ առի, զորօրինակ՝ կենդանւոյ, կարէ կոչիլ ընդհանուր առի, զի պատճառ առագապէս և իսկապէս չկոչելոյ կամ առ. և պատճառ առագապէս և իսկապէս չկոչելոյ էակին առ՝ է, քանզի չկրնանէ ի առեալս իւր այլայլել իմաստ էակին և առեալացն. զի յասէ ինչ՝ այո՛ իմաստ էակին և առեալացն. զի յասէ ինչ՝ նամբ զէակն ի կարելութենէ անցեալ յեղելութիւն, բայց

(*) Աշնորհալի. Եարական:



չթողլ այլ ևս իմաստ էակին, որպէս յառաջնում էր. բայց չընդհանուրդ ինչ-ն, յասելդ ինչ՝ իմանամք զնոյն կենդանութիւն, որ ի սեռին՝ և անխտիր միոյ ի տեսակին մտանն այդ կենդանութեան չքնաղն ի տեսակին. Ի տեսակին ինչ բ-ա-ն-ի՝ իմաստ տարբերացուցիչ մարդոյն յառելեալ լինի արտաքուստ չընդհանուրն ինչ-ն. բայց ո՛չ է այնպէս էակին. զի մին ի տեսակաց էակին՝ դիցուք թէ է գոյութիւնն. հարցեալ զսահման գոյութեան՝ առցես պատասխանի, թէ է այն ինչ, ոչ ինչ-ն չէ, և չունի պէտս այլում. իսկ արդ բառք տարբերացուցիչք եղեալ գոյութեանն ի պատահական գոյութեանց են, որ կայ ինքնին չինքեան, որք են նոյն իմաստ սահմանի էակին. բայց ի ճշմարիտ տեսակին իմաստ տարբերական գաղափարն չէ պարտ զի գտանիցի չիմաստ ընդհանրոյն. զորօրինակ՝ չգտանի չընդհանուրդ ինչ-ն՝ տարբերականն մարդոյ՝ բ-ա-ն-ի-ն. ուրեմն չկարէ էակն իսկապէս գոլ սեռ, բայց միայն համեմատութեամբ իւրք կարեմք կոչել զնա ընդհանուր, ըստ որում՝ ամենայն ինչ որ կայ ինքնին՝ էակ է, և ամենայն ինչ որ կայ ինքնին գոյութիւն է, և տեսակք գոյութեանց են, և համեմատութեամբ ընդհանուր գոլ սահմանեալ և առնչական էակաց յայսմ միայն կայանայ, այսինքն՝ ի նմանիլ նոցա էութեամբ իւրեանց ըստ կարի և ըստ տեսական կերպի կալոյ նոցա՝ էութեանն անսահման էակին. Ամին իրի էակն չկարէ կոչիլ անդամ ա-ր-է-ա-կամ ե-ր-է-ն, որ կարիցէ բնութեամբ յառաջագոյն լինել քան զԱստուած, ըստ բանի Սրբոյն Թովմայի (*). վասն որոյ համեմատութեան (կամ յարմարութեանս) այսորիկ՝ ոչ հեռանի թէ էակն յառաջագոյն իցէ երկոցունց, այդ է Աստուծոյ և առեղծուածոց. զորօրինակ յառաջագոյն է էակն գոյութեան և պատահականի՝ զրոց յարմարութեամբ լինել ասի, որոյ ի բացայայտութիւն գիտել պարտ է, թէ յորժամ ամենայն համեմատութեանն պատճառ գտանիցի ի միմին ի նոցանէ՝ զրոց վերագիր լինի,

(*) Ի Գիրս 42. Ցաղագս բնութեանս սեռին:

որպէս ամենայն պատճառ էակին յԱստուած պահանջի բացատրակապէս, յայնժամ վերապրելն ևս չկարէ յաւերժական լինել երկաքանչիւրոցն, մինչ վերապրելն (աստուածելին) ոչ անցանէ յաւուր գան դնեմականին։

Դ. Էակացն՝ որպէս ամենայն իրաց՝ են յատկութիւնք անփոխականք, որք չեն ինչ բաժանելիք ի բնութենէ էակացն, և մնօք ի մէնչ ըմբռնելին, և խոկապէս ամենայն էակաց յատնարին. ամէն իրի առեմբ՝ էակացն յատկութիւնք գլխաւորքն են երեք, գ--ն-, ճ-ր--ն-, և բ--ր--ն-. յատկութիւն միութեան, է՝ էական իւրաքանչիւր էակին, զի ամենայն էակ, թէ և ի միմեանց բաժանելն, բայց իւրաքանչիւրն անբաժանելի է, և որ անբաժանելի է, է. քանզի չունի մասունս, որ չունի մասն՝ է մի, ուրեմն միութիւնն է մին ի յատկութեանցն էակաց. երկրորդ՝ էակքն ճանաչին ի մտաց, և են արտաքոյ մտաց իսկապէս այնպէս՝ որպէս են (Օ). ուրեմն իրքն առարկայ մտաց իսկապէս ունին գճշմարտութիւն, և ճշմարիտք են. ուրեմն ճշմարտութիւնն է մին ի յատկութեանցն էակին, որ ամենեցուն յատնարի. երրորդ՝ էակքն իրք իրք և կատարեալք իւրաքանչիւր ի մտաց վերապրելի են. ուրեմն ունին պրատութիւն, որ ոչ է այլ ինչ, բայց միայն միջոց որ ծառայէ վախճանին կամաց. և այս է դոյգիս ընդհանուր ամենայն բարութեանց. ուրեմն միութիւնն, ճշմարտութիւնն և բարութիւնն են երեք յատկութիւնք ընդհանուր էակաց, որք յամենայնին և յիւրաքանչիւրն կան, նաև որք էակաց, որք յամենայնին և յիւրաքանչիւրն կան,

Ղ. Զէակն իրական բնութեամբ կամ խորհրդով միանէ բան ներքին հանդամանացն, կամ բան զօրութեան պատճառի ուրոյ ընդ որում ունիցի գործարարութիւն. բան ներքին հանդամանացն նկատեալ՝ անասնեամբ միանն էակք անձինք, որ ունին պրիդունակութիւնս անգործութիւնն, կամ առ լինելին այդեամբ. և ընդունակութիւնս այս յառաջ գայ ի յարմարութենէ յատկութեանցն՝ կամ հանգամանացն ընդ միմեանս. բայց առ պակասութեան պատճառի՝ են ի վիճակի կարելութեան, և ապրին էակք կոչին ներքին կարելի էակք. քանզի չունին ընդգործութիւն և



հակառակութիւն իմն գործարարացն իրենց. իսկ եթէ էակին կարելի կամ ընդունակ ի լինել՝ վարիցի ի զօրութենէ պատճառի ուրուք, և նոքիմբ ի կարելութենէ անցցէ յգործելութեանն վիճակ, յայնժամ ասի կարելի արարածին. զորօրինակ լեառն ոսկեղէն, ձի թեւատու, այլ իմն աշխարհ կարէ լինել ազդեամբ՝ այլ մարդկէ կարեն առնուլ անել. ոք յաստղին օրինակս թէ և չիցեն ոսկեղէն լերինք, և երկիրք թեւատուք, բայց միք իմն ընդգործութիւն ընդ մէջ գործարարի լերինն և ոսկւոյ, ձիոյն և թեւոց, և առ պակասութեան կամացն զօրութեան գերազոյն պատճառի կան և միանն միայն ի վիճակ կարելութեան։ Նկատմամբ Աստուածայնոյն զօրութեան՝ ամենայն ինչ՝ որ կարելի է ի ներքոյս, պատրաստ են կարելի լինել, այլ ազատ և յոչ միոյն ասի, միք ինչ առ Աստուծոյ անհնարին։ Բայց են և գործարարք ոմանք, որք հակառակ մնարանչին ընդ միմեանս, և երբեմն զիրար ոչնչացուցանեն, վասն որոյ չեն ելով ի կարելութենէ անցցեն ի վիճակ անկարելի. զորօրինակ չորք տարերք, լեառն առանց գաչառակցի, որք գէմ ընդ գէմ միմեանց գոլով, գաղտնիար չկրնանին գործարարի քարակոտոյ, և լերինն գործարարին գաշտի, որ ոչ է, զիմ լեառնս երգանեն. վասն որոյ առաքինեքն ասին կարելի բարեգործս և ի ներքոյս, և համ կարելի բարեգործս պատճառս։ Իսկ յեմենքս ներքոյս և պատճառս բարեգործս անկարելի և անհնարին են, եթէ առերգնելքն կամ երգնելքն չունիցին զգօրութիւն պատճառի ուրուք առհնարելոյ, որով յայլ իմն ներքոյ արժանութիւն փոխադրեցին կամ յօրինիցին, զորօրինակ վայոյոց չերքարն յաթոռն, և գրակալն են՝ կոչին կարելի միայն ի ներքոյս բնականապէս. եթէ ունիցին՝ կոչին կարելի էակք բնականք պատճառաւս. գորօրինակ ի վայոյոց աթոռք կազմին. իսկ ընդհակառակն՝ եթէ բնականքն ունիցին զայդպիսի պատճառս, բայց յինչևաւս մին երգանիցէ գործան, կոչին բնականապէս անհնարին կամ անկարելի. զորօրինակ՝ թռչել ձիոյ, մարդոյ՝ թեւոք են. յամենքն ներքոյն

եղեալ ի վերայ հրոյն՝ չայրիլ. գէպ ի վեր ընթանալ գետոց բնականապէս. հուսկ ուրեմն որ ի ներքուստ և արտաքուստ հնարաւորք են, բայց առ այդ խնդրի համբերաթացութիւն պարագային, յորոց կախի ներգործութիւն նոցա՝ կոչին հնարաւորք բարոյապէս. զորօրինակ՝ ընկերութիւն մարդկան և հաւանութիւն կամաց նոցա ի կանգնել զթագաւորութիւն ինչ. իսկ թէ բացարձակապէս հնար լիցի իմն, բայց ոչ համընթացին պարագայք մտաց և բարոյից՝ կոչին բարոյապէս անհնարին. զորօրինակ՝ առեալ ընդհանրապէս զծնողս։ Բայց գիտել պարտ է թէ՝ որք բնականապէս՝ այսինքն ֆիզիքապէս առ մարդիկ անհնարինք են, առ Աստուած հնարաւորք են. միայն թէ էակքն ունիցին զներքին ընդունակութիւն և զկարելութիւնն իւրեանց. վասն որոյ որք չունին զայս կարելութիւն ներքին, չունին զէակս իւրեանց, և կոչին տիրապէս [illegible], նկատմամբ [illegible]՝ որ է պարզ կարելին. զի առքա դրականապէս իմանալի են, զի ունին զէութիւն. և նոքա անիմանալի մի միայն որպէս, այսինքն մտօք և ոչ իմանամբ զնոսա՝ իբր պակասութիւն և հակառական և հակառակ դրականացն. զորօրինակ՝ իմանամբ զիաւարն իբր պակասութիւն լուսոյն, զի չէք էակ խաւարի, զի ի բացառութեան ամենայն մտաց իմանալի լիցի դրականապէս. որպէս ամենայն դրական էակք և կարելի՝ որք նմին իբր իմանալի են՝ զի են, և ոչ թէ են՝ զի իմանալի են, որպէս ոչինչն բացասական։

ՂԼ. Ասա ընդառաջ եկանեն մեզ խնդիրք ոչ դիւրինք զակզբնէ և զրնութենէ կարելի էակաց, զորս առանձինն մտադրութեամբ և յարատեւութեամբ միտք ընկալանցին ուշիմամիտ կամ փութաջան մանկանցդ. նախ՝ զի եղիցի ամանք ի փիլիսոփայից, որք ասացին թէ չէք ներքին կարելութիւն իրաց, այլ զոր ինչ Աստուածային կարողութիւնն և կամք կամեցան կարելի լինել արտաքուստ՝ եղեն այնպէս, և զորս չկամեցան՝ մնացին. զորօրինակ՝ թէ կամէին չլինել լինել, չլինն և քառակուսի ի միասին, լինէր այնպէս։ Եղիցի ամանք՝ որք ասացին թէ պատճառն



ամենայն՝ զի անհնարինքն ի ներքուստ չեն հնարաւորք, կամ կարելի ի ներքուստ և արտաքուստ՝ է պակասութիւն կարողութեանն Աստուծոյ և տկարութիւն նորա։ Եղիցի և այլք, որք ասացին՝ թէ ներքին կարելութիւն իրաց ոչ միայն չկախի ի զօրութենէ և ի կամացն Աստուծոյ, այլ և ոչ ի մտաց և յէութենէ նորա։ Մեք ընդդէմ ասացս փոյթ կալեալ վասն ճշմարտութեանն, երեք հետեւեալ յօդուածովքս ցուցցուք. ա. թէ ներքին կարելութիւն իրաց է և ոչ կախի ի զօրութենէ և ի կամաց Աստուծոյ, բայ ի յարտաքուստ կարելութենէ. բ. թէ պատճառ ի ներքուստ անկարելեացն՝ կարելի չլինելոյն, ոչ է տկարութիւն Աստուածայնոյն կարողութեանն և զօրութենէն, կամ կամաց. գ. թէ ներքին կարելութիւն իրաց կախի մերձաւորապէս ի մտացն Աստուծոյ, և վերջապէս և ապերթաբար յԱստուածայնէն էութենէ. վասնորոյ։

---

## ՅՕԳՈՒՒԱԾ Ա.

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԹԷ՝ [illegible] Է ԵՒ ՉԼԻՆԵԼ ՍՏԵՂԾԱԿԱՆ ԵՆ ՆԱ ԵՒ ՉԻ [illegible]

ՂՐ. Յուցանել առաջին մասն. նախ՝ այն ինչ՝ որ ունի զէութիւն իւր միայն կարէ լինել առարկայ իմացականութեան մտաց, իսկ արդ միտք մարդոյ իսկապէս ըմբռնէ և ճանաչէ զէակս, ուրեմն արտաքոյ մտաց մարդկան են էակք տիրապէս, ուրեմն կարելութիւնն ևս ներքին իրաց է՝ որ չէ ինչ զանազան յէակաց։ Երկրորդ՝ ոչինչն ինքնին չէ գոլով, չկարէ երբէք առարկայ լինել տեսութեան մտաց։ Իսկ արդ անթիւ անհամանն են ըմբռնմունք իրաց, որք յարատած չեն, այլ միայն կան ի կարդ իմանալեացն. զորօրինակ՝ մարդն թէև առ կարէ լինել, նոյնպէս ձին

և այլ չորքոտանիք կարէին, և չէր իմն ընդդիմութիւն՝ զի լերինք ամենք ակնդէնք լինէին և այլք արծամէղէնք, այլ չէն արդեամբ, բայց զօրութեամբ հնարաւոր են, Երրորդ՝ ամենայն արարածք յառաջ քան զնդելութիւնն՝ ընդունակ են ի բազում ձեւս և կերպարարութիւնս եղանել. քանզի չէր իմն ընդդիմութիւն ի բնութենէ՝ զի քարինք ամենք՝ որք եռանկիւն են ձեւով՝ քառակուսի լինէին. կամ վեցանկեան և բիւրանկեան լինէին, չէր իմն ընդդիմութիւն զի երկու իրք լիովին և կատարելապէս հաւասար լինէին միմեանց ի բնութեան: Եւ զորօրինակ՝ արհեստաւորն զմի և զնոյն մարմարիոն՝ կամ զմի և զնոյն փայտն՝ յայս կամ յայդ պատկեր ձեւացուցանել կարէ անդրիս կանգնել, և դարձեալ կոտորել և փոշիացուցանել՝ անթիւ այլ ձեւս մուծանել, առանց առեղծանելոյ զայդ ձեւս. քանզի մարդն բնութեանբ էակս և զկարելիս՝ ոչ առեղծանէ զնոսա, այլ բացայայտէ զի յատկութեանց էակս կարելի կարգեալս և մուծանէ բնութեաւբ. նոյնպէս Աստուած յառեղծանել զարարած ըստ յանթիւս և յանհամս կարելեաց՝ առ որս իւրաքանչիւր արարած ընդունակ է, ի մի ձեւ կարելի միայն մուծանել կարէ զայդ, և այլքն ամենեքեան ձնան կարելի ի ներքսա. քան զայս է բանն Ս. Օգոստինոսի, «Համանալեացն հաչիւ անթիւ են առեղ (Աստուած)», և դարձեալ քան նոյն Արբոյ՝ «կայցէ ճշմարտութիւնն, թէև աչխարհ յոչինչ դարձցի (*)». իսկ էակն կամ կարելիսն՝ որ է, ճշմարտութիւն է. ուրդ էակն կամ կարելիսն ներքին կայ յատկանս: Չատկ ուրեմն ի առեղծանել (Աստուծոյ) ոչ թէ գներքին կարելութիւնն փոխէ յորոգիսն և առեղծանէ զնա, այլ քան նոցա, կամ հանդոյն նոյն ներքին կարելութեանն՝ որ և չ-ե-փ-ե կոչին՝ առեղծանէ զարարածս. ապա թէ ոչ՝ չլինէր ճշմարիտ, թէ յոչնչէ Աստուած առեղծանէ զամենայն արարածս, այլ վասն չ-ե-փ-ե են և յ-ե-ե-ե ներքին կարելութեանցն. այսպէս և մնանկամ ոչ փորձիս՝ այլ

(*) Առանձնախոսութիւն. ԺԲ. 2:



մուօք յառաջեմք ընդունելն զգաղափար չքնաղ և եռանկեան և քառակուսոյն, և քան ընդունելոյ էակացն կամ քան նախատապէն իւրեանց գծեն զգաղափարն չքնաղ և քառանկեան են:

Զ. Յուցանել երկրորդ մասն առաջարկութեանս, նախ՝ եթէ առասպել, թէ ներքին կարելութիւնն կախէ ի կարողութենէ և ի կամացն Աստուծոյ՝ հետեւիցն անտեղութիւնք բազումք, նախ ընդդէմ անչափ կարողութեանն. զի եթէ ամենայն կարելութիւնն և հնարաւոր էակք նմին իրի են՝ զի կարողութիւնն Աստուծոյ զօրէ զայդ առնել, և որ ինչ հնարաւոր է, այդ ամ միոյն յԱստուծոյ կարողութենէն է. ապա ուրեմն չքնաղ քառակուսի, որ անհնար է, եթէ ընդ կարողութեամբ Աստուծոյ անկցի՝ հնարաւոր և կարելի լինէր. որ է ընդդէմ ուղիղ սկզբանց մտացն և ընդդէմ կարողութեան Աստուծոյ. իբրեթէ սկսար և սկսաս իցէ զայդ առնել, և ուրեմն Աստուած ի բազում անկատար իցէ: Երկրորդ՝ եթէ կամէր իսկ Աստուած դչքնաղն՝ քառակուսի առնել, ի մերձեցուցանել զգաղափարն չքնաղի գաղափարին քառակուսոյ՝ զմիմեանս հերձէն, և ներդործութիւն աստուածային զօրութեանն լինէր հերձումն իրաց, կամ ոչինչն՝ որ է ընդդէմ խնամատարութեան Աստուծոյ. զի կամիլ գործել, և ի գործելն և ոչինչ առնել, տխմարացն է և ապիկարացն. ուրեմն են, Երրորդ՝ եթէ էակքն կամ ներքին կարելութիւնն իրաց կախէր ի կարողութենէ և ի կամացն Աստուծոյ, հետեւէր թէ կարողութիւնն և զօրութիւնն Աստուծոյ սահմանեալ և ի չափ դրուեալ է, որպէս իցեն հնարաւոր էակքն՝ այնքան լիցի և զօրութիւնն Աստուծոյ. իսկ արդ՝ որպէս առաք, ամենայն էակքն և հնարաւորք սահմանեալ են և չափաւոր, նոյնպէս և Աստուծոյ կարողութիւնն, որ զԱստուծոյ անվայել է: Զորրորդ՝ այլ մտացն է առաջիկայ գործոցութեանն, և այլ զօրութեանն. կարելիք են էակք խմնամելիք, վասն որոյ և մտացն առաջիկայք և զօրութեանն Աստուծոյ առաջիկայք են գործք. ուր ոչ առնէ՝ թէ ներքին կարելութիւնն իրաց՝ է իրակաս էակ խմնամելի, և

ո՛չ թէ գործողութիւն արդեամբ։ Հինգերորդ՝ էակքն ներքուստ կարելիք՝ նմին իրի են կարելիք, քանզի ունին զընդունակութիւն կամ զյարմարութիւն յատկութեանց, ո՛չ եթէ զի այսպէս կամեցաւ Աստուած. նա՛ զի են կարելիք յառաջ քան զվճիռ աստուածային կամացդ. վասն որոյ եթէ անհնարին է մարդոյ ընդունել զնոսա, է՝ զի չունի զընդունակութիւն կամ զյարմարութիւն յատկութեանց, այլ ունի զընդհակառակն զնոցիկ յատկութիւնս, որք ո՛չ ինչ են, ըստ որում ասէ Ս. Թովմաս (*), զի գործունեայ կարողութեանն և կամաց առարկայ և ներգործութիւն ա՛է եղեալ էակն, և չիք իմն կարողութիւն, որ ունիցի զգործողութիւն ինչ անդ՝ ուր չիցէ առարկայն իւր. զորօրինակ աչք ոչ կարեն տեսանել, յորժամ տեսանելին արգեամբ պակասիցի։ Պարտ է ասել թէ՝ Աստուած չկարէ առնել զոր ինչ ընդդէմ բնութեան իցէ էակին՝ ըստ որում է էակ. ընդդէմ բնութեան էակին է՝ որ ինչ բառնայ զբնութիւն էակին. բառնի բնութիւն էակին այնու՝ որ հակառակն է այնմիկ. զորօրինակ՝ բնութիւն մարդոյ հակառակ կորդաւն կամ մտաւոյ սորին։ Հակառակ էակին է չէակն (կամ էին չէն), և զայս չկարէ առնել Աստուած. զի մի և նոյն ինչ իցէ և չիցէ ի միասին ու։ Յայտնի է յառաջ բերէ իմաստութեամբ սուրբ վարդապետն՝ վայելչապէս կարեն ասել թէ՝ այդպիսի առարկայք անկարելի են ի լինել՝ քան թէ Աստուած զնոսա առնել չկարէ. ապա ուրեմն եթէ անկարելիքն ի ներքուստ ի բնութենէ անտի անկարելիք են և ո՛չ թէ յաստուածային կարողութենէ կամ ի կամացդ, և ո՛չ ներքին կարելիքն կախին յաստուածային կամացդ, զորօրինակ՝ մարդ թևաւոր կարէ լինել. զի գաղափար մարդոյ ոչ է եղծիչ գաղափարին թևոյ. վասն որոյ սոյն այս կարելի էակ՝ է կարելի ներքուստ. և թէև կարէ Աստուածային կարողութիւնն առնել զայդ արտաքուստ իսկ կարելի՝ է, սակայն և այնուհետև ոչ հեռւի թէ կամք աստուածային արար զայդ ի ներքուստ

(*) Ընդդէմ Հեթանոսաց. Գիրք Բ. Գլ. 25։



ևս։ Վեցերորդ՝ զի կամքն աստուածային ոչ է սկիզբն կամ պատճառ ամենայն իմանալեացն, այլ և յաւէտ միտք աստուածային իմանան, և էութիւնն աստուածային է պատճառ ամենայն իրաց, ըստ որում տեսցուք յերրորդ յօդուածն։ Եօթներորդ՝ կամք և կարողութիւնն Աստուծոյ չկարեն փոփոխել զներքին էութիւն իրաց, այլ ըստ այնց և իմանալութիւնն նոցա ևեթ՝ զգոյն ի գոյ ածեն. յորմէ յառաջ գայ անփոփոխութիւն և յաւիտենականութիւն ներքին կարելի էակացն, զի ի յաւիտենից է և ցյաւիտեան չիջանն լիցի չիջան, և քառակուսին քառակուսի. և Աստուած իւրոյն ամենակար զօրութեամբ և կամօք չկարէ երբէք փոփոխել զբնութիւն իրաց, այնպէս զի չիջանն լիցի չիջան և քառակուսի իմիասին. այլ որ է՝ լիցի ցյաւիտեան՝ է, և որ չէ՝ լիցի ցյաւիտեան՝ չ։ Այսչափ շատ ընդդէմ Վարթեզիոսի, որ յանվայելուչ փիլիսոփայի ումեք մոլորութիւն անկեալ, գիտելով չափ՝ սխալեալ գրէ այսպէս։ (*)

(*) Պատասխանի առ մատուցեալ առարկութիւնս՝ թէ Զ. Քանզի հակառակ է թէ կամքն աստուածային լեալ իցէ ի յաւիտենից անտարբեր առ ամենայն ինչ, որք եղեն կամ եղիցին միանգամ. զի չէ մարթ ձեւակերպել իմն բարութեան, ճշմարտութեան՝ թէ հաւատալի իմն իցէ, թէ առնելի կամ լքանելի, որոյ գաղափարն յաւէտ նախ առաջին ի մտա Աստուծոյ իցէ՝ քան թէ կամք նորա որոշեալ իցէ առնել՝ զի այդպէս լիցի։ Եւ ոչ իսկ աստ խօսիմ զառաջին լինելոյն ըստ ժամանակի, այլ և ոչ առաջին եղև ըստ կարգի կամ ըստ բնութեան. և կամ որպէս ասի, քանի հոգի քանի՞ն. կամ քան վերջինն։ այսինքն այնպէս զի՝ գաղափարդ այդ բարութեան առիթեալ իցէ զԱստուած յետոյ յաւէտ զմինդ ընտրել քան զայլն յայնքան էից. օրինակի աղագաւ, ո՛չ նորին վասն կամեցաւ առեղծել զաշխարհ ի ժամանակի, քանզի ետես թէ այդպէս լաւագոյն լիցի, քան թէ առեղծանել ի յաւիտենից. եւ ո՛չ իսկ նորին վասն կամեցաւ զի երեքին անկիւնք եռանկիւնւոյն հաւասարեացին երկուց ուղիղ անկեանց, քանզի ծանեաւ թէ այլապէս լինել չէր հնար, ևն։ Այլ ընդհակառակն՝ քանզի կամեցաւ առեղծել զաշխարհ ի ժամու՝ նորին վասն այսպէս լաւագոյն է քան թէ ի յաւիտենից առեղծեալ էր. և քանզի կամեցաւ զի երեքին անկիւնք եռանկիւնւոյն հաւասարեացին երկուց ուղղորդաց, նորին վասն արդէն սոյն ճշմարիտ է և այլապէս լինել անհնար է. այսպէս և

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԹԷ՝ ՆԵՐՔԻՆ ՆԻՒԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՅ Է ԳՈՒՅԱՑՈՒՆ ՅՈՐՁՈՐԱԿԱՆ
Ե ՅՈՐԴԻ ԱՍՏՈՒԱԾՈՅ։

Ա. Յուցանի նախ՝ որպէս ի վերոյ ցուցաք, բնութիւն էակացն ոչ կարի ի կարողութենէ և ի կամացն Աստուծոյ, և ապա ոչ են սկիզբն կամ պատճառ էակացն ներքնաւոր կարելեաց. ապա ուրեմն որ ինչ ունի՝ ընդունակութիւն ի լինել կամ եղանել, այդ ոչ ի կարողութենէ Աստուծոյ է. ամին նման որ ինչ չունի՝ զայս ընդունակութիւն կամ զյարմարութիւն յատկութեանց, ոչ յԱստուծոյ կարողութենէն է, այլ յիւրմէ անտի է։ Ուրեմն կամ իցէ յարմարութիւն յատկութեանց և կամ ոչ իցէ, կամ իցէ իմն ներքին կարելի կամ անկարելի, այն ոչ յԱստուածային կամացն և կարողութենէն է. ուրեմն պատճառն անկարելեացն ի ներքնաւոր՝ չլինելոյն կարելի ներքնաւոր, ոչ է տկարութիւն աստուածային զօրութեան։ Երկրորդ՝ դիցուք թէ Աստուած կամիցի զանկարելին կարելի առնել, զերկրինակ՝ զշինանն՝ քառակուսի առնել ի միասին. բայց ներքնորձութիւն աստուածային զօրութեան յոչինչ լինէր. քանզի յատկութիւնք բնութեան քառակուսի անկեանն ներհակք են՝ զէմ ընդ զէմ յատկութեանց հոգևկիւնոյն կամ շրջանի. զի որ շրջանն է՝ չկարէ ի միասին քառակուսի և լինել, կամ մին իցէ կամ միւսն. այսինքն է՝ եթէ կամէր առնել զշրջանն՝ քառակուսի, պարտէր եղ-

---

զոյլդն են»։ Այն աս յայտ մասին և ի բազում փիլիսոփայութեան կոյր գոլով, ոչ խնացաւ երբէք թէ կատարելութիւն կամաց է կոյր յատկութիւն որում առաջնորդեն միտք հանապազ յամենայն գործողութիւնս իւր։ Նոյն իսկ հնթանոտացն խմտասէրք՝ իրր ընդ առաջս գան, թէ անձանօթին չիք փոփոք, և թէ ծանօթութիւն մտաց յառաջանայ քան զկամեցողութիւնս կամաց և է պատճառ քան իմիք փոփոխման կամաց։



ծանել զընութիւնս իրաց (թէև բնութիւնք իրաց անփոփոխ են և անխոտորելի) և ներգործութիւն ամենակատարելութեանն Աստուծոյ լինէր ոչինչ, որ է ընդդէմ բանի՝ մտաց, խմտասէր թեանն և անչափութեանն Աստուծոյ։ Երրորդ՝ դիցուք և թէ ներքին անկարելին կախիցի ի կարողութենէ և ի կամացն Աստուծոյ, և թէ կամիցի զերկու հակառականս ի մի հատանել և միաւորել. զօրութիւնն միշտ հաղորդեալ նոյն ձեռոյ, բայց ներգործութիւնն ոչինչ. քանզի երկուց հակառակաց և հատասար զօրութեանց ի մի ընդհարեալ՝ ներգործութիւն նոցա ոչինչ է. զրկութենական երկուց քարանց ձգեալ յերկուց հատասար զօրութեանց զէմ ընդ զէմ՝ չընդհարկանիցին երկոքեան իսկ միշտին և յոչինչ դառնան. բայց յոչնչութենէ ներգործութեանն ոչ հետեւի թէ զօրութիւնն ներգործական անգամ ոչինչ է կամ թէ տկար։ Եւ եթէ արհեստաւորն ումեք՝ որ զքառակուսի սեղանն ի մարմարիոնէն յօրինեցէ, հարցցես առ ինչ զքառակուսիդ չառնես, զի և ի միասին շրջանաձև լիցի, ոչ պատասխանեսցէ՝ թէ չկարեմ զայդ առնել, այլ թէ այդ անկարելի է. դուցէ և զհարցանողն այսպէս ասասցէ, իբր մնամեծ դատիցի. իսկ արդ եթէ զայդ ի խոհելով ահմանեալ միտք մարդկան բնական բերեալ ղայսութենամբ՝ ոչ երբէք ձեռս մխեն յայդպիսի զօրծողութիւն. միթէ արժա՞ն է ասել զայդ զԱստուծոյ՝ զանսահման իմաստութենէն և զամենակատարողութենէ անսահման։ ուրեմն անմտութիւն է ասել՝ թէ ներքին անկարելութիւնն է՝ զի առ Աստուած տկարութիւն կայ. նա կոյր տկար, որ զընդդէմ կացեալ ասխն չկարէ նուաճել, ոչ եթէ նա՝ որոյ զօրութենէն չիցէ առարկայ և ոչինչ։

## ՅՕԳՈՒԱԾ Գ.

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ .

Նեւրէն ւ-բէլ-ըն-ն -ռն-ն է-ւ-ն ծբյ---ւ-ե- ւ-իէ յԱ.-ւ---ն-ց
ւ-ւ-ց և ՇԷԼ-Բ-Ր յԱ.-ւ---ն-ւէն է--ըՆն :

ՃԱ. Յուցանէ առաջին մնան առաջարկութեանս . ա-
մենայն կարելի էակքն երկակի են , կամ բաղ որում իրա-
կան էակք և բնութիւնք իրականք , և կամ իբր իմանալի
էակք և իմանալի բնութիւնք . բաղ այսմ մասին ասեմք
թէ կարելիքն ոչ այլ ինչ են բայց միայն էակք իմանա-
լիք . և քանզի չիք ի յաւիտենից այլ միայն , որ իմանայիցէ
զի յաւիտենից էակս և զկարելիս բաց ի յաւիտենական
կամ Աստուածային մնաց . զի միայն արարածոց ժամա-
նակաւորք են , և ի ժամանակի սկսեալ . ուստի պարտ է
ասել՝ թէ միայն Աստուածային յաւիտենական իմա-
ցաւ զյաւիտենական էակս կարելիս և զնոսա այսր Աստուա-
ծային մնաց և էակքն իմանալի են ի յաւիտենից՝ և այն-
պէս կոչին , յ--է-ն-ն-ն է-ւ+ է-ն-ը-է+ , զնոսա որոյ և սկիզբն
յորմէ իմանալի են՝ ե՛ն միայն Աստուածային : Երկրորդ-
չիք այլ ինչ միայն բաց յԱստուածայնոյն , յորմէ որոշէին
իւրաքանչիւր էակքն իմանալիք ըստ իւրաքանչիւր բնու-
թեանն , զի ոչ կինքինէ կարեն իմանալիքն որոշել իւրա-
քանչիւրն յիւր բնութիւն իմանալի , որպէս յայտ է , և ոչ
արարած մնաց զի ժամանակաւոր են , ուրեմն պարտ է զի
յաւիտենական մնաց իմանալի լիցին էակքն և իմանալի
և ոչ խառնեալ և շփոթեալ մին ի միւսն , կամ գաղափար
միոյն ի միւսն այլ որոշակի իւրաքանչիւրն ըստ բնութեան՝
իւրում . ուրեմն կարելիքն ը--ր-ն իւրեանց ն-ն-ն և
ը-ը-ւ-ւ-ն՝ ոչ ն-ւ-ն , ունին մի միայն յԱստուածայինն
մնաց . ըստ այսմ Ալէքսիոսէ իմաստութեամբ ասէ , միայն
Աստուածայինն է յաւիտենական ճշմարտութեանց կամ գա-
ղափարայն բնակարան , յորմէ կախին , և առանց որոյ



ոչինչ իրական լինելը ի կարելիսն , և ոչ միայն եղանելը ինչ ,
այլ և ոչ կարելի լինելը . ուրեմն են ;

ՃԲ . Յուցանէ երկրորդ մնան առաջարկութեանս . թէև
միտք Աստուածային է աղբիւր գաղափարական էութեան
էակացն , այսինքն իմանալի լինելոյ կարելեացն , բայց
որպէս ասացաք միտք յերմռնելն զգաղափարս իմանալե-
ացն կամ կարելեաց , ոչ առեղծանէ զնոսա , այլ արտա-
յայտէ զնոսա . ուրեմն ոչ է մայր էութեան էակացն միտք
Աստուածային ; Ը . միտք յառաջկայից անուն միշտ բաս
արբոյն Թովմայի առնուն զգաղափարս իւրեանց , զի միշտ
ենթադրեն զառարկայն , զոր նշմարեալ քաջ զոր ինչ ինձմա
այն է յառարկայն գտանէ՝ ըստ այնմ ըմբռնէ զգաղափարս
իմանալեացն ; Առարկայս այս իրական յոր միտք Աստուա-
ծային հայի և նշմարէ ի նմա զէութիւն էակաց՝ է էու-
թիւն Աստուածային , որ կայ միշտ արդեամբ . և քանզի
միտք Աստուածայինն ի յաւիտենից ճանաչէ զկարելիսն և
զիմանալիս , և այդ նշմարելով զյաւիտենական առարկայն
միայն՝ որ է՛ էութիւն Աստուածայինն . ուրեմն ասելի է՝
թէ ամենայն էութիւնք էակացն՝ կարելեացն կամ իմանալ-
եացն գտանին յէութեան Աստուծոյ միայն , իբր աղբիւր
ամենեցուն նոցա , յորում է և գտանի սկիզբն ամենայն
լինելութեանց , և՛ գոյաւորութեանց ; Գ . ասացեալ նըշ-
մարելով ը--է-ն-ն ---ւ-ն գ-ն , որ է է--ր-ն Ա.-ւ---ծ-
յին , քանզի եթէ միտք Աստուածայինն յըմբռնելն զկարե-
լիսն ի յաւիտենից , կարօտէր այլում առարկայի և ար-
տաքոյ Աստուածայինն էութեանն , հետևէր՝ թէ Աստուած
ի գիտութեան իւրում անկատար գոլով՝ կատարելագոյն
լինէր այնու , զոր զԱստուծոյ անվայել է ասել . և քանզի
Աստուած չէ՝ բայց միայն զի կատարեալ էջէ , նմին իրի
հետևի՝ զի ամենայն էակացն էութիւնք ըստ որում են իրա-
կան իմն բարութիւն՝ գոյի և ոչ ապակասիցի յԱստուած ,
զի չէ Աստուած , բայց միայն՝ զի կատարեալ էջէ և աղ-
բիւր ամենայն իրաց կամ բարութեանց ; Ըստ այսմ գարձ-
եալ՝ Ալէքսիոսէ իմաստութեամբ գրէ « Քանզի պարտ է՝ զի
եթէ էջէ իմն իրական էութիւնս , կամ ի կատարելութիւ-

նըս կամ լա և ասել, ի յաւիտենական ճշմարտութիւնս պարտ է՝ զի այս իրական էութիւնն հիմնիցի ի մի իմն իրական էութիւն, որ արդեամբ լիցի և հետևաբար յէութեանն հարկաւոր էակին, յորում էութիւնն պարունակէ զարդեամբ լինելութիւնն, և յորում բաւական է կարելի լինել. զի արդեամբ լիցի (*)ա Դարձեալ եթէ ներքին կարելութիւնն զոանէր յԱստուածային էութեանն՝որ սկիզբն լինէր նմին կարելութեանն, ի գիտութեան իւրում Աստուած կախէր յայդ կարելութենէ. բայց Աստուած անկախ է յումեքէ, որպէս ի բարութիւնս նոյնպէս ի գիտութեան իւրում. զի չէ Աստուած, բայց միայն զի կատարեալ իցէ, նա և եթէ ներքին կարելութիւնն չկախէր և չպարունակէր յԱստուածային էութիւն, Աստուծոյ սահման դնէր. զի ուր ներքին կարելութիւնն իրաց անկախ է, ոչ է անդ սահման էութիւնն Աստուածային. այսինքն ուր է ներքին կարելութիւնն, անդ չէ Աստուածային էութիւն, և սա ուր լիցի՝ նա չունի անդ տեղի, բայց չէր սահման էութեանն Աստուծոյ. և եթէ իցէ՝ այդ ո՛չ վնասէ Աստուծոյ. զի չէ Աստուած, բայց միայն՝ զի կատարեալ իցէ: Հետևակ ուրեմն Աստուածային մտացն գործողութիւնք արդեամբ են և ներգործութեամբ և ո՛չ զօրութեամբ. զի լաւագոյն է գործողութեամբ կամ արդեամբ կալ՝ քան զօրութեամբ. արդ ծանօթութիւն կարելեացն յԱստուած՝ է ներգործութիւն Աստուածային մտաց, և է ներգործութիւն իրական կամ արդեամբ՝ և ո՛չ զօրութեամբ: Եթէ այս ներգործութիւն Աստուածային մտաց ոչ ունէր ընդհան պատճառն կամ զտարակայն, հետևէր անտեղութիւնն՝ թէ ներգործութիւնն նման՝ չինդրէ ընդհան նմին պատճառն. ուստի գիտութիւն ներքին կարելութեանն՝ որ յԱստուածային միտս խնդրէ ընդհան նմին առարկայն՝ այսինքն թէ որպէս Աստուածային մտաց ներգործութիւնն է՝ արդեամբ՝ որ է գիտութիւն նորա, նոյնպէս և առարկայն՝ յորմէ մի միայն յաւաղ դայ գիտութիւնն, պարտ է

(*) Ակզբունք Փիլիսոփայութեան. Յօդ. 43. Գործ. Հատ. Ա.



գի իցէ արդեամբ և պարունակիցէ յինքն զամենայն կարելի էակս և ներկայացուցէ մտաց զնոսա. իսկ արդ յաւիտենականդ այդ առարկայ չկարէ այլ լինել, բայց միայն յաւիտենական Աստուածային էութիւն. ուրեմն ամենայն ներքին կարելութիւնն պարունակի հարկիւ յայս յաւիտենական և յարդիւնական առարկայ, որ է -ին-ը և հա և -ը-ութ իրացն, զոր նշանակելով միտք Աստուածային զոր ինչ ի յաւիտենական առարկային իւր առանձնէ՝ և զոր ինչ նմին յարմարի ըստ նմանութեան, և զոր ինչ չյարմարի նմին՝ զամենևսեան առ հասարակ նոյնպէս հարկաւորապէս ընդունի, և չկարէ այլապէս ընդունել. զի միտք՝ որպէս ասացաք՝ է հարկաւոր կարողութիւն զոր միանգամ յառարկային առանձնէ՝ հարկաւ ըստ այնմ պարտ է ընդունել զնոսա, և ըստ այնմ յօրինել զգիտութիւն իւր. վասն որոյ լուծանին խափան ամենայն անվայելուչ և անտեղի հետևութիւնք զկանխագիտութենէ Աստուծոյ, յորմէ կախ զվատասպակս նախասահմանութեանն վէճ երկիւզալի: Բայց զայսմանէ չատ խօսեացուք ի բնական Աստուածաբանութեան (ՃՁՉ. ՃՁԼ. ՃՁԸ. ՃՁԹ.). Եւ ի վախճանի ներքին կարելութիւնն իրաց՝ որպէս կախ և պարունակի յԱստուածային էութեանն, ասեմք թէ Աստուածային էութիւնն ո՛չ միայն ունի յարաբերութիւն ի ներքին կատարելութիւնս իւր, այլ և ունի զյարաբերութիւն առ արտաքս: զորօրինակ միտք ըստ ընդունման մերում՝ ունի զէութիւն իւր և զյարաբերութիւնս առ ներքին կատարելութիւնս իւր, և ունի և զյարաբերութիւնս առ արտաքս, այսինքն զնմանութիւն իւր և զպատկեր իւր: Նոյնպէս և էութիւնն Աստուածային՝ իւր բազմապատիկ եղանակաւ նմանելի առ արտաքս՝ բիւրապատիկս կարէ ունել զպատկերս. այո՛ միտք Աստուածային ի յաւիտենից թափանցեալ յէութեանն Աստուածային՝ ընդունէ արդեամբ նախ զբովանդակ էութիւնն, բայց և ընդ նմին զբիւրապատիկ զայս յարաբերութիւնս էութեան, զորօրինակ միտք մեր յարևու ընդունեն զմարդ, և զպատկեր մարդոյ ձևացեալ ի յերկրի առ արտաքս ի հովանի մարդոյ: Ուստի

գաղափարք այսոցիկ պատկերաց կամ նմանութեանց Աստուածային էութեանն՝ ընդունելաք յԱստուածային մտաց՝ են նոքին էակք կարելեաց, վասն որոյ յատկութեանք են և անփոփոխք՝ որպէս նախասիպ ասացաք. այսինքն՝ Աստուածային էութիւնն յատկութեան է և անփոփոխ, և ամենայն ինչ որ առեղծանիլ ըստ պատկերի իւրում և նմանութեան, այսինքն ըստ կարելի էակին՝ ոչ թէ նոյն պատկերքն կամ նոյն նմանութիւնք Աստուածային էութեանն առեղծանին, և ոչ իսկ նոյն Աստուածային էութիւնն առեղծանիլ և գոյանալի. Ըստ այսմ և մեծն Պետրոս երջ է. «Որու զամենայն ի վերին օրինակէդ յառաջ բերես. զդեղեցիկն գեղեցկագոյն ինքնիգ զայնարհ ի միտս բերելով, և ի նմանութենէ պատկերիդ յօրինելով (*)». Սմին նման ևս խօսի երջանիկն Եզեսիոս (**). Յառարկայն Աստուածային ամենակարողութեան զերկու տեսակ կարելութեան դնել կարեմք, զներքին և զարտաքին, (կամ) զհնարաւորն և զմերձաւորն. Ներքին կարելութիւնն է ընդունակութիւնն նոյն իրին, կամ ոչ ընդդիմութիւնն առ եղանիլն. նոյն իր ասիլ կարէ կարելութիւնն հեռաւոր. զի այսօրիկ վասն կարելի կոչի իրն, թէպէտև չլիցի կարողութիւն ինչ երբէք, որով կարիցէ արդիւնաւորիլ. զորօրինակ՝ գոյնն է յինքեան տեսանելի, թէպէտև չիցեն երբէք աչք, որք կարիցեն զնա տեսանել. Իրն ունի զայս կարելութիւն եղանակաւ իւիք յԱստուծոյ անտի. ոչ թէ ազատ կամ հարկաւոր գործողութեամբ իւիք, որով Աստուած կացուցէ կամ բղխեցէ զիրդ զայդ ի կարելի էութիւնն. (զի կարելի էութիւնն ըստ որում այնպէս՝ չկարէ լինել առարկայ առեղծմանն, և ոչ իսկ կարէ ունել զներգործական պատճառ) այլ ունի զայդ յԱստուծոյ՝ իբրեւ յօրինական գոյացս ի պատճառէ. Քանզի Աստուածային էութիւնն ըստ իմիք այդպիսի եղանակաւ է նմանելի և

(*) Յաղագս ինամատարական մխիթարութեան.

(**) Յաղագս կատարելութեան և բարութեան Աստուծոյ. Գիրք ե. Գլ. Ե. Յօդ. 10.



հաղորդելի, է պատճառ իրրև գործոյ. այլ աղագաւ բնութիւն մարդկային կարելի իցէ, և զայդպիսի ունելոյ զէութիւն (այսինքն գիրական և գկարելին) առարկական և զօրութենական, Նոյնպէս առնել պարտ է և գայլոցն ամենեցուն կարելեաց. Այսպէս գի նոյն ինքն էութիւնն է առաջին արմատ ամենայն իրական էութեան և ներքին կարելութեան ամենայն կարելեաց, և սակս ՅԱստուածային էութենէն՝ իրրև յատակոյ և սկզբնաւորէն ամենեցունց գաղափարէ, յորմէ իւրաքանչիւրն ունի գիւր առանձին, և գիմանալի պատճառն ըստ իւրոյ առեղծանի և կարգի, այլևայլ եղանակաւ առնմանեալ, ըստ որում բաժանարեցաւ. Ուստի ամենայն էակք կարելիք պարունակին յէութեանն Աստուածային իրրև [illegible] և գոգցես ի [illegible]. իսկ յիմնաւորութենանն Աստուածային իրրև ի կերպարատրական օրինակի, յորում իրարէս ևս կան լուսաւորեալ և կատարելագոյն եղանակաւ. Զի անդ (յիմնաւորութենանն Աստուածային) առաւել պայծառ փայլին, քան թէ յատեղծեալ բնութիւնս իւրեանց, այսինքն յաչխարհի. Ուստի յայսոցիկ ամենեցուն յառաջ բերեմք՝ թէ Ներքին կարելութիւնն, կամ էութիւն իրականն ամենայն կարելեաց չեն իմն անկախ ՅԱստուածային էութենէն. երկրորդ՝ թէ կախին ՅԱստուածային էութենէն, որպէս յառաջին արմատոյն իրենանց. երրորդ՝ թէ կարելիքն թէև կախին ՅԱստուածային էութենէ, բայց չեն գոգցես իրրև զմասունս ներքին էութեան, այլ նմանութիւն և պատկեր ներքին էութեան, և են առարկայ գիտութեան Աստուածային մտաց, ըստ որում նմանութիւն և յարաբերութիւն Աստուածային էութեան առ արտաքս. չորրորդ՝ թէ ամենայն ինչ որ առեղծանի, ըստ պատկերի իւրում առեղծանի, ոչ թէ նոյն կարելութիւնն. հինգերորդ՝ թէ էութիւնն Աստուածային է բուն նախատիպ պատկերացս, կարելիքն են պատկերք Աստուածային էութեան. առանց նախատիպի պատկերն չկարէ լինել, և հարկիւ նախատիպն պարտի պարունակել յատուկ ձեռնարկանց գիրական էութիւն պատկերացն, որք միշտ ՅԱստ-

ուածային էութեան դոլով՝ յաւիտենականք են և անփո-
փոխք։ Ուստի սխալեցաւ մեծապէս Սթուդենաւ, որ ա-
սաց թէ՝ յանդնարին թէ էութեան չլինելոյ էութենն Աս-
տուծոյ և մտաց նորա՝ էութիւնն էակաց կարէ կալ, և
իմանալի լինել գոնէ զօրութեամբ։ Ուստի կնքելով և
բովանդակելով զամենայն ասելմբ՝ թէ կարելիքն և է-
ութիւնք կարելեացն կախին և պարունակին ի նոյն Աս-
տուածային էութեան. նախ՝ ըստ որում ներգործիչ պատ-
ճառ է ամենեցուն. երկրորդ՝ ըստ որում օրինակական
կամ նախատիպ պատճառ է նոցա, թէ՛ կարելիք իցեն,
թէ՛ առեղծանելիք. երրորդ՝ ըստ որում պարունակիչ յին-
քեան զամենայն կատարելութիւնս իրաց ըստ գերազանց
աստիճանի։ Եւ այս է հաստատակ վարդապետութիւն ամե-
նայն հարցն եկեղեցւոյ և վարդապետացն, և թէ ի յա-
ւիտենից բնութիւնք և նախատիպ պատկերք ամենայն ի-
րացն յԱստուածային էութեանն եղելք պարունակին.
այսպէս Սուրբն Թովմաս, ընդդէմ Հեթանոսաց Գիրք Ա.
Գլ. 49։

## ԼՈՒԾԱՆԵՆ ԴԺՈՒԱՐԻԹԻՆԵՔ

ՃԳ. Եթէ ներքին կարելութիւնն կախէր կամ պարու-
նակէր յԷութեանն Աստուածային, բազմաստուածութիւնն
ի վեր ելանէր անտի. քանզի կարելիք յայնժամ չլինէին այլ
ինչ՝ բայց միայն էութիւնն Աստուծոյ, և դադափարք Աս-
տուածային մտաց։ Բ. լինէր ընդդէմ խնամոյ առեղծ-
ման, որ չէ այլ ինչ, բայց միայն առնել յոչնչէ զիմն. քան-
զի ենթադրել պարտ լիցի միշտ զէութիւն կարելեացն.
Դ. եթէ կարելիքն կախէին յԱստուածային էութենէ և
ի մտաց, ծանօթութիւն նոցա հարկաւ պարտ էր յարակ-
ցել ընդ ծանօթութիւն Աստուածային էութեան և մտացն.
իսկ արդ առանց խորհելոյ զԱստուածային էութենէ և
զմտաց՝ խորհիմք և ճանաչեմք զգանազան կարելիսն և զնո-
ցին առեալս. ուրեմն յաղթէ յայտնի վարդապետութիւն
Սթուբենաւին. Դ. Ազագայք պատահականք և յաղա-
կատաց մտրդկան թէ ակամաւորէս լինելիք՝ իբր առարկայք



ինքնին և որոշ դնին յԱստուածային էութենէն և ի մտաց
բաց քան Աստուածարանից ոմանց. նոյնպէս կարեմք խոր-
հիլ զկարելի էակացն։

Ա. Ա. Բացատրեմ զնախընթացսդ, և առ փաստն՝ զա-
նազանեմ զառաջին մտան նորա. կարելիքն են էութիւն
Աստուծոյ, այսինքն նմանութիւն և պատկերք էութեանն
Աստուծոյ. զորօրինակ պատկեր մարդոյ ըստ իմիք գտա-
նի ի մարդ՝ ընդունիմ. են էութիւնք Աստուծոյ, իբր ի-
րաքանչիւր մասունք յԱստուածային բնութենէ հատեալք՝
ժխտեմ. և նոյնպէս զանազանեմ զերկրորդ մտան փաստիդ.
են դաղափարք Աստուածային մտաց, ենթակայապէս ա-
նալ, ըստ որում միտք և գործողութիւնք, նորին դաղափարք
մի և նոյն են յԱստուած՝ հերքեմ. են դաղափարք Աստ-
ուածային մտաց՝ այսինքն նպատակ և առարկայ Աստուա-
ծային մտացն ծանօթութեան՝ ընդունիմ։ Եւ նմանապէս
ժխտելով զհետեւեալն և զհետեւութիւնն, ի բացայայտու-
թիւն զանազանութեանս ասեմ. արդէն ընդ երկար բա-
ցատրեցաք ո՛րպէս կարելեացն էութիւնք կախին յԱստ-
ուածային էութենէն, ո՛չ թէ կարելիքն են իբրև գճա-
ոաղայթս արեգական, որք հատեալք ինոյն յարեգականէ
հաղորդին բնութեամբ արտաքս յերկիր. այլ իբրև նմա-
նութիւնք և պատկերք Աստուածային էութեանն և կատա-
րելութեանց նորա. և իբր յարաբերութիւնք առ արտա-
քսն՝ ո՛չ հաղորդութեամբ Աստուածային բնութեանն կամ
էութեանն. զորօրինակ՝ թէ ոք ապէ զկնիք ի վերայ մո-
մեղէն գնատակին, այո՛ պատկեր կնքոյն եղանէ ի վերայ
գնատակիդ, բայց ո՛չ թէ բաժանի մասն էութեան տակնղէն
կնքոյն և հաղորդի մասն ինչ. քանզի կարելիքն
են նմանութիւնք և յարաբերութիւնք Աստուածային էու-
թեանն, և գոյանին յէութիւնն Աստուածային. և Աս-
տուածային էութիւն գոյանի իննոսա, բայց ո՛չ հաղորդու-
թեամբ էութեանն, այլ նմանութեամբ. և քանզի կարե-
լիք՝ ըստ որում նմանութիւնք Աստուածային էութեանն,
և այնպէս կան, են էութիւնք կարելիք և բարութիւնք,
վասն որոյ ըստ է ի գոյին Աստուածային էութեան,

ղի են նմանութիւնք. և որ ինչ գոյանի ի նմանութեան և ի պատկերի, պարտ է ղի հարկաւ գոյի և ի նախատիպ պատկերի և նմանութեան. նա մանաւանդ պարտ է ղի գոյի բարութիւնն այն գերազանցապէս ի նախատիպն՝ քան թէ ի պատկերն։ Այլ նախ միտք Աստուածային ունի առարկայ իւր զէութիւնն Աստուածային և կատարելապէս և հայեցողապէս ճանաչէ զէութիւն իւր յատկական և ի միասին զամենայն յարաբերութիւնս և զնմանութիւնս և զպակասութիւնս կամ զնուազիլ իրիք ի նմանութեանց անտի։ Վասն որոյ գործողութիւն ճանաչելոյ զնմանութիւնն և զպատկերն էութեան Աստուծոյ, ենթակայաբար առեալ՝ է մի և նոյն ընդ միտս Աստուածային, և չէ պարտ շփոթել զնա ընդ առարկային՝ որ ճանաչի ըստ իմիք նման Աստուածային էութեան։

Ա. Բ. լինէր ընդդէմ խնդրոյն առեղծման, եթէ Աստուած զնոյն կարելութիւնն յեղելութիւն դարձուցանէր՝ ընդունիմ. է ընդդէմ առեղծման, եթէ Աստուած ըստ նմանութեան կամ ըստ պատկերացս այսոցիկ գիրս յոչնչէ կամ ի չգոյէ ի գոյ ածէր՝ ժխտեմ. քանզի առ ի առեղծանել զիմն բառական է զի չիցէ նմին ֆիզիքական՝ յորմէ արտայայտիցի արարածն, այլ ոչինչ լիցի. բայց ըստ օրինակի կարելութեան իւրաքանչիւր իրաց՝ և կարելութիւնն նոյն ինքն յետ առեղծման իրին՝ իրրև զառաջինն. զորօրինակ՝ ճարտարապետ կերտէ զտուն ըստ ի մտի ծնեալ զաղափարին, և ո՛չ թէ նոյն զաղափարքն մնաց լինին քարինք չինուածոյն։

Ա. Գ. զանազանեմ զիմն ծագոյնդ. պարտ էր յատկել ծանօթութիւն կարելեաց ընդ ծանօթութիւն Աստուածային էութեան և մնաց՝ նկատմամբ մի միայն ըմբռնման կարելեացն ի մնաց մերոց և միշտ՝ ժխտեմ. երբեմն՝ ընդունիմ. նկատմամբ էութեան կարելեացն՝ ընդունիմ։ Ա. փոքրագոյնն առեմ. կարելիք խորհիլ զէակաց՝ առանց խորհելոյ զԱստուածային էութենէն. և այս ցուցանէ թէ էութիւն էակաց՝ ըստ մնոյն ծանօթութեան՝ ոչ է մի և նոյն ընդ էութեան Աստուծոյ՝ ընդունիմ.



ցուցանէ թէ՝ էութիւնք իրաց անկախ են յամենայնի յԱստուածային էութենէն՝ ուրանամ։ Նոյնպէս զանազանել զկարողութիւնդ՝ ընդունիմ կամ ժխտեմ. և ի բացայայտութիւն նոցա՝ առեմ, այլ է կարդ ծանօթութեան իրին, և այլ է կարդ էութեանն կամ բնութեանն։ Ո՛ որ ուրանայ՝ բաց յանաստուածիցն, թէ առեղծեալ բնութիւնն յԱստուծոյ անտի է. բայց և ի վերայ այսր ամենայնի՝ նախ ճանաչելիք զառեղծեալն, և ապա ի ծանօթութենէ արարածոյ հասանելիք բանիւ ի ծանօթութիւն Աստուծոյ էութեանն. զոյնպէս միտք մեր այո՛ ճանաչեն զկարելիս բացառութեամբ իւրաքանչիւր Աստուածային էութեանն, բայց առանի չհետեւի թէ՝ կարելութիւնն չկախի ըստ էութեան բնութեան իւրոյ յԱստուծոյ էութենէն. զի կարդ մարդկային մտացն ծանօթութեան՝ ո՛չ ըստ Աստուածային մտաց է, որ զէակս ըստ ծանօթութեան և ըստ ծննդեանն՝ ըստ կարդի ծանիցէ նախ զսկիզբն՝ և ապա զներգործութիւնս և զյարաբերութիւնս սկզբան, այլ առհասարակ գոլով՝ զոր զիւրացոյնն է ըստ կարդի ծանօթութեան, զայն ըմբռնէ, և ապա բանիւ մտացն կամ բանաւարութեամբ զմին ըստ բնութեան ի միւսմէ յառաջ բերէ։

Ա. Դ. Կարելեացն բնութիւն կամ էութիւն պարունակի յԱստուածային էութիւն անխոխոտապէս իբրև ոստք յարմատն. ըստ իմիք՝ որպէս կարելիքն կախին յԱստուածային էութենէն և ի մտաց, թէև ո՛չ մի և նոյն եղանակաւ և ապատնի ազատ գործողութիւնք մարդկան կախին յԱստուածային էութենէն, ըստ որում և սոքա էութիւնք իրականք են, և հետեւաբար նմանութիւնք կատարեալ կամ անկատար Աստուածային էութեանն և կատարելութեանն՝ գոանին իբրև զկարելիս Աստուածային էութիւնն. իսկ զանազան դրութիւնք Աստուածաբանից զէութենէ ապագայ պատահականաց՝ յաէութենէն են զեզանակէն՝ որով բացատրին զնոսա. բայց զայսմանէ շատ խօսելոյք յԱստուածաբանութեան անդ։

# ԳԼՈՒԽ Գ.

## ՅՕԳՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳԱՑ ԷՈՒԹԵԱՆ ԻՐԱՑ, ԳՈՑՈՒԹԵԱՆ, ԳՈՑԱՑՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԳՈՑԱՑԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԱՑ, ԲՆՈՒԹԵԱՆ, ԳՈՑԱԻՈՐՈՒԹԵԱՆ, ԵՆԹԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԵՆԹԱԿԱՑԻ ԵՒ ԱՆՁԻՆ ԿԱՄ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ

ՀԴ. Յամենայն իրս որք գոն, առանձինք խղճիւ և բանիւ մտացս և զգայութեամբ զգանաղան և զամենայնն հասարակ գյատկութիւնս զայնոսիկ, առանց որոց իրքն ոչ են՝ և ո՛չ իսկ ճանաչին, և նոքա են յամենայն իրս։ Զի նախ ընդհանրապէս առանձինք զիրս ընդ յատկութեամբք ոմանբք՝ որք թէ բարձցին յիրացն, ոչ կալցեն կալ իրքն. գորօրինակ՝ մարդն բաղկանայ յիւրում յատկութեանց՝ ի բանականութենէն և ի կենդանութենէն, և սովիմբք միայն էութիւն մարդոյ կարէ կալ և կարելի լինել, և լինել ՚ւբբ և ո՛չ այլ ինչ. նոյնպէս ամենայն իրք ունին իւրաքանչիւրն զյատկութիւնս զայնոսիկ, որք հարկաւորք են բնութեան-իւրեանց. զի իւրաքանչիւրն իցէ այն ինչ՝ որ էն, և ո՛չ այլ ինչ՝ որ չէն։ Ա.յսոյիկ յատկութեանց տամբ զանունդ է՝ն, և իրին՝ որ բաղկանայ ի յէական յատկութեանց՝ տամբ զանունդ է՝ կամ է՝ն։ զի կացուցիչ էութեանն իրին են յատկութիւնքդ այդոքիկ. նորին վասն և կոչին էական յատկութիւնք, այսինքն առանց որոց էութիւնք իրացն չկարեն կալ։

ՃԵ. Էութիւնք իրաց ունիփ են, ունքիւնէ են և յուիճն՝ն։ Ունիփ՝ քանզի յատկութեանց յարմարութիւնք՝ յորոց բաղկանայ էութիւնն, որպէս էիմն ի սկզբան՝ նոյն են և զնն և միշին ցյատիւեան, և չկարեն այլ լինել. զի չրջանին գաղափար միշտ նոյն ինայ, և եւանկիւնացն ի սկզբանէ ցյատիւեան եւանկիւնի ինայէ. զրանս զայս չէ պարտ իմանալ զնզնոց պատահականաց,



այլ զէութիւնէ իրացդ, որ կոչի գր-ֆիզիկ-ն. զի այս կարճմբ մեք զպատակեր իմն եւանկիւնին չինեալ ի մտրմանբիոնէ՝ առնել կամ փոփոխել, բայց գաղափար եւանկիւնացն է միշտ անփոփոխ, այսինքն ինայ եւանկիւնի, չրջանն ինայ չրջան, մարդն է բանական կենդանի, թէև Պետրոս յիմարեալ իցէ։ Ն՝ գիտ-ական-ի՛ բ-ց-ը-կ-դ-ս. զի էական յատկութիւնք չկարեն ո՛չ պակասիլ և ո՛չ առաւելուլ. գորօրինակ ընդ՝ որ ունի զկենանս և զզգայութիւն, մարդն է բանական կենդանի, յերկոցունց իսկ եթէ զմին բարձցես յատկացեցն, գորօրինակ զզգայութիւնն՝ ոչ ինայ նոյն գաղափարն, այլ եղծանի յատէա. զի որ ունի միայն կենանս և ո՛չ զզգայութիւն, գ՝ն՝ եւթէ է, և ոչ առի ընդ՝ն. եթէ յատելոցուս ի վերայ կենդանւոյ զբանականութիւնն, ունիս զմարդոյ էութիւն։ Չուսկ ուրեմն են յ՝ն՝ի՛ն՝ն էութիւնք իրաց. զի յատակ քան ընդ՝ն՝ գաղափարն մարդոյ էր միշտ նոյն՝ բանական կենդանի. երկրորդ՝ զի որպէս առաջաք ի գլուխն ի վեր, էութիւնք իրաց ըստ զերազանց առիճանի գտանին Աստուածայինն էութիւնն. և երրորդ՝ զի ի յատիճանից որպէս էութիւնն Աստուծոյ յատիճենական է և արմատ այլոցն էակաց կամ էութեանց, նոյնպէս միտք Աստուածայինն են յատիճենականք, և ի յատիճանից ընդբոնին էութիւնք իրաց յԱստուածայինն մտաց։

ՃԶ. Ի՛օք և աշակերտք իւր մերոյ Յիսուսի ի կարծիս իւրեանց, ի պնդելն թէ միտք մարդոյ չկարեն իմանալ զէական յատկութիւնս իրաց՝ կամ զէութիւնն իրապէս և իսկապէս, այլ անուանէ և ո՛չ արդեամբ տամբ զանուանս իւրաքանչիւրոցն էութեան. այսինքն՝ ո՛չ թէ զի ճանաչէիմբ զնոքին և զէական յատկութիւնս բնութեան իրին և ո՛չ զսեռս և զտարբերութիւնս նորա արդեամբ. այլ միտք մեր ըստ սովորութեան իւրում զբաղումն ի մի հաւաքեալ կոչէ զնոսա միով անուամբ. և ի բազումն գաղափարն ենթակայապէս միայն, այսինքն՝ ի միտս լոկ ճշմարիտ է և արտաքսանօրէն, ո՛չ թէ առարկաբար. այսինքն իմանան գաղափարին և ձայնին ոչ բովանդակ ինեբրին յատկութեանց

իրին և յէութենէն։ Մոլորութիւն ո՛չ երբէք վայելուչ փիլիսոփային անուանն. քանզի կարէր Լ՚օք այսպէս սրամտաբանել ինքնին. Նա ունի գիրական և գէական ծանօթութիւնն իրին, որ թէ բառնայ զայդ ծանօթութիւնն յիրէն յայնմանէ՝ բառնի եղծանի և ևս էութիւն իրին, և միայ իսպառ անհնանալի։ Իսկ արդ միտք մարդկան ունի գծանօթութիւն մարդոյ գէական և գիրականն, զոր թէ բառնան միտք մարդկային, եղծանի էութիւն մարդոյ. ուրեմն։ Յուցանեմ գփոխբրադոյնն. էական և իրական ծանօթութիւնն մարդոյ է բանականութիւնն և կենդանութիւնն, զորս թէ բարձցես՝ եղծանի բնաւին էութիւն մարդոյ. իսկ արդ միտք մեր տիրապէս իմանան զբանականութիւնն և գկենդանութիւնն, զորս թէ բարձցուք ի մարդոյ՝ եղծանի էութիւն իրին. ուրեմն ասելի է՝ թէ մեք ունիմք գիրական կամ գէական ծանօթութիւն իրաց. ուրեմն սխալի մեծապէս Լ՚օք, որ գհինին ճշմարտութեան՝ մոլար վարդապետութեամբն ի վեր տապալէր։ Ասա բանք մեր չեն զբազում բնութեանց իրաց ի մանուածոյն. գի ի կարգի բնութեան բազում և անթիւք են իրք կամ խորհուրդք՝ զորս կատարելապէս և մանրամասնապէս չկարեմք ճանաչել, այլ զընդհանուր էական յատկութեանց իրաց, որք բազկացուցանեն ընդհանրապէս և բաւականապէս զբնութիւն իրաց՝ որպէս ասացաք զմարդոյ, նոյնպէս ասեմք զայլոց տեսակաց էութեանց և բնութեանց իրաց, յառաջ բերելով գէական յատկութիւնս նոցա, զորս մարթիմք առնմանել մերձաւոյն սեռիս և յետին տարբերութեամբ։

ՃԼ. Էութիւնն իրաց՝ որպէս է մեթաֆիզիքապէս, եթէ տասցի գնգելութիւնն, այսինքն զարգեամբ գինեցն, և արտաքոյ մտաց իսկ ինքնին կամ չինքեան կեցցէ, զորօրինակ՝ ամենայն արարած ունին գէութիւնն իւրեանց, և կան իսկ առեղծմամբ՝ արդեամբ ի բնութեան, կոչի ֆյ–ընէ. այսինքն՝ ի չգոյէ ի գոյ ածեալ. կամ իսկապէս ևս խօսելով՝ ի պատահէ և ի նմանութիւն գերբնական էութեան իւրոյ առեղծեալ՝ կոչի ֆյ–ընէ, և



ի բազում անհատս գոյից իրը գաղափարն վերացեալ և ընդհանուր եղանէ գոյութիւն։ Գոյիցն՝ որքան են զանազան տեսակք առարկայից, այնքան են տեսակքն գոյութեանց։ Գոյութիւնն միոյն Աստուծոյ ևեթ ի չգոյէ չէ ածեալ ի գոյ, այլ ինքն ի բնութենէ և զօրութեամբ էութեանն միշտ արդեամբ կայ, սկիզբն և էակ ամենայն էիցն՝ որք ի յանգոյից. գոյութիւնն յոմանց ևս կոչի կատարելութիւն կարելութեան. Աստուած կայ էութեամբ իւրով և է բաւական պատճառ բնութեան իւրոյ. ո՛չ այսպէս կալ արարածոց, որ յայլմէ է։

ՃՂ. Թէև գոյացութիւնն առ բազում իրը գոյութիւն ի կիր արկանէ, և ընդհակառակն սա վոխանակ նորա գոլով՝ յիմասան միմեանց առնչական և յարաբերական, բայց գոն կամ գոյութիւնն՝ որպէս ասացաք, նշանակէ միայն գլինելութիւն իրաց արդեամբ, այսինքն զեղելութիւն, և չունի յարաբերութիւն առ այլ ինչ. կամ յիմասան զօրութեամբ ոչ ունի թաքուցեալ գայլ իմասառ. մերթ ընդհակառակն գոյացութիւնն նշանակէ զգոյութիւն ենթակայ այլոյն իրաց, Քանզի փորձիւ խղճի մտաց և արտաքին զգայութեանն տեսանեմք զի ի գոյութիւնս կամ կիրս ունիս են մասունք՝ որք էականք գոլով՝ միշտ անփոփոխ մնան. և են ոմանք՝ որ պատահեալ իրին՝ անյանեն յետ ժամանակի իրիք. զորօրինակ՝ ի հոգի մարդոյ՝ նոյն հոգին՝ խիղճ մտաց կամ ծանօթութիւն հոգւոյն ի միտս՝ բանական կարողութիւնն՝ ազատութիւնն նորա են, որք միշտ մնայունք կան և անփոփոխք։ Բայց են և այլք ինոյն հոգին՝ որք չմնան. զորօրինակ՝ խորհուրդք բազումք, նեղութիւնք, ցաւք են. զորօրինակ ի ծաղիկն և ի խնձորն և յայլ այդպիսի իրս՝ գոյնն, համն, որք անյանեն՝ սոքա կոչին պատահականք կամ որպիսութիւնք իրաց, եղանակ իրաց, կերպարանք իրաց են, որք ինքնին բնականապէս չկարեն կալ, այլ գոյութեան կամ ենթակայի իմիք կարօտին, յորոյ վերայ կայցեն։ Ուստի գոյացութիւնն է այն ինչ՝ որ ինքնին կայ, և ի կալն այլում չկարօտի՝ իբրև ենթակայի. և պատահական գոյա-

գութիւնն է այն ինչ՝ որ յարի յայլս ի կալն, իբրև յինքեանակայ չկարելով ինքնին կալ։ Զիսկական գոյացութենէն չիք իմն վէճ իմաստնոց, բայց ի մտաթափից ոմանց Եւրոպիոյ. միայն թէ ի սահմանի գմակբայդ էն չառնուցուս բացարձակապէս, այսինքն յինքենէ, այլ նկատմամբ պատահականաց էն, մերթ սոքա չկարեն ինքնին կալ, այլ միշտ կարօտեն այլում ի կալ. բայց նկատմամբ էութեանն բնութեան կամ եղելութեանն՝ գոյացութիւնն ոչ թէ ինքն ինքեան եւս զեղելութիւնն, այլ Աստուծոյ է, իբր յառաջին պատճառէ, և միոյն եւեթ Աստուծոյ յայս իմաստ վայել է մանաւիդ էն. զի մի միայն էն կեցող ի կարգ գոյութեանց՝ Աստուածային գոյացութիւնն է,

ՃԹ. Բայց վէճ է գժուարին գբնութենէ եղանակաց կամ պատահականաց իրաց. զի փորձառութիւնն ֆիզիկական գիտութեան չէ հասեալ ի կատարն։ Են ոմանք՝ որք ընդ Ֆարթեզեանս և Մալեպրանշեանն առեն՝ թէ չիք իմն համ, հոա, գոյն են՝ ի գոյացութիւնս. զորօրինակ՝ ի կերակուրս՝ ի ծաղիկս են. այլ ամենայն ինչ յենթակայն՝ ի յոդիս մեր կայ։ Եղեն և ոմանք ընդ նիւթականան՝ որք ասացին՝ թէ չիք իմն հոա կամ համ, կամ գոյն, կամ յատկենթակայն, այլ ամենայն ինչ յատարկայն կայ, և զգայութեանդ այդ յոգին՝ չեն իրական և ճշմարիտ իմն, այլ երեւակայութիւն մտաց։ Եղեն ոմանք և ի մէջ գասական Աստուածաբանից, որք ի պատճառս բացատրելոյ բնական փաստիս զգևրբնական և զգպարմանալի խորհուրդ գոյափոխութեան հացի և գինւոյն ի մարմին և յարիւն Տեառն՝ ասացին թէ՝ պատահականք կարեն կալ էն՝ առանց կարօտութեան այլում ենթակայի։ Յարդեմք զսոցայն յօժար կարծիս, բայց ոչ հնազանդիմք. անարգեմք և զառաջինն և զերկրորդ կարծիս, և գիտելով չափ՝ թէ ճշմարտութիւնն ի միջին կայ՝ ասեմք, յատարկայս կայ ընդունակութիւն յարուցանելոյ ի մեզ զվերմութիւն, զհամ, զհոա, զգոյն, բայց ոչ կայ զգայութիւն. ի հոգիս մեր կայ զգայութիւն ճանաչելոյ զվերմութիւն, զհամ, են. այլ է ունել զզգայութիւն իրին՝ որ է ի հոգին, և



այլ է ունել զընդունակութիւն յարուցիչ զգայութեան՝ որ յատարկայն. ապա թէ ո՛չ երբեմն պարտ էր զի չիք թէպէտ գբաղդըն ընդ լեզուին, և զաղտն ընդ խաղող և ընդ սոխ, բայց թէև բնականապէս՝ պատահականքն ինքնին չկարեցեն կալ, բայց գերբնականապէս կարեն կալ յարելով Աստուածայնոյն անխմանալի և ամենակարող զօրութիւն, առ որ չիք իմն անհնարին՝ թէ ո՛չ որ հակառակն իցէ. բայց կացուցանել Աստուծոյ զպատահականն զօրութեամբ իւրով, ոչ է կացուցանել և չկացուցանել, զի գոյացութիւնն՝ յոր յարին պատահականք, չեն իմն գերագոյն քան զզօրութիւնն Աստուածայնին, որով զամենայն ի չգոյից ի գոյ ածէ. վասն որոյ և բնական կամ ֆիզիքական օրէնք եղելոցն կախին յԱստուծոյ ամենակարող զօրութենէ անտի, որպէս յայտ է։ Ըստ այսմ գոյացութիւնք կոչին բացարձակք թէականապէս, այսինքն մինչև կամքն Աստուածայնին այնպէս լինել կամի զնոսա, և պատահականքն կոչին յարաբերականք՝ որք յարին ի գոյացութիւնս,

Ջանիթ՝ ընդդէմ երկոցունց իսկ յարուցեալ՝ թէ՝ գոյութեանց կամ գոյացութեանց, և թէ՝ պատահականացն՝ ասէ թէ գաղափարք մեր՝ որովք կոչեմք զիւրաքանչիւր նիւթս ըստ բնութեանն և ասհմանեմք զնոսա՝ ի մեզ են, ո՛չ՝ զի տիրապէս ճանաչեմք զարարած բնութիւնն՝ զայդ առնեմք, այլ զի ենթակայապէս՝ այսինքն ի հոգիս մեր են ձևք հարկաւորք. ի խորհիլն մտաց զիւրաքանչիւր նիւթոյ՝ յայտոցիկ ձևոց առեալ մտաց մարդկան՝ ասեն առարկայիդ և նիւթոց, Ուստի յայտնապէս երեւի թէ՝ և Ջանիթ ջատագով բանական կարողութեան մտացն՝ ասէ չճանաչել մտացն զառարկայն իսկապէս կամ էականապէս, այլ թէ միտք բաժանեն զէական ձևս, որք յշտեմարանն հոգւոյ ժողովեալ կան՝ իւրաքանչիւր նիւթոց. և յայտ, ասէ, կայանայ նպատակ և վախճան տեսութեան մտաց մերոց, և յայտ կայանան ամենայն ընթացք տեսական գիտութեանց, որք մի միայն լուսաւորել կարեն զմիտս և լայնել գծանօթութիւնս։ Բայց քանզի նա ձրի ասէ առանց իմն փաստի, և մեք ևս ձրիապէս ժխտելոյ զզրութիւնն իւր

ունիմք զկատաւնա. բայց և ցուցանեմք նմին զվերոյիշեալ փաստս, յորս ցուցաւ զոլ Ծանօթութեանց մերոց ո՛չ ենթակայական կամ տրամաբանական՝ այսինքն մտօք և եթ, այլ բղխել ի ներքին էութենէ բնութեան իրացն։ Եւ թէ յառաջ քան զլինել Գանխեան հոգւոյն, որպէս այլոցն ամենեցուն, կարէին՝ և չէք ի մեզ ընդդիմութիւն անտի, լինել տիեզերք, որպէս կան բազումք ըստ հաւարակ կարծեաց Մեծագոյնք բիւրեցս քան զաշխարհս, յերկինս և վեր՝ աստեղք անթիւք։

ՃԺԲ. Գոյութիւնն կամ գոյացութիւնն եթէ ունիցի զղօրութիւն ինչ յինքեան գործողական, կոչի բն-ուն, և ունի զբազում իմաստս բառդ բն-ուն. զի երբեմն առեալ լինի փոխանակ Աստուծոյ, ըստ որում Աստուած է պատճառ ամենայն արարածոց, առելով ի դիպողութիւնս ոմանս՝ բնութիւնն արար զայդ, երբեմն փոխանակ ամենայն իրաց՝ կամ աշխարհի, առելով ի բնութեան բազում են զարմանալիք, երբեմն փոխանակ էութեան իրաց, երբեմն սկզբան կամ ծննդեան իրին՝ կամ գործողութեան, առելով զիմեքէ՝ ի բնէ է այդպէս, և երբեմն այսպէս, և երբեմն այնպէս, որոյ իմաստն յայտնի և որոշի ի կարգէ անտի բանից. բայց բուն իմաստ բնութեանն է գոյութիւնն կամ գոյացութիւնն՝ որ ունի յինքեան զընդունակութիւն ի գործել, զղօրութիւն իմն կարող ի գործել։ Ի՝լատինն բառդ բն-ուն (natura) նշանակէ ծն-դ կամ ծնել-ուն, նմին իրի ասի ծնունդ իրին կամ բնութիւն իրին։

ՃԺԳ. Ինքնակացութիւնն կամ գոյաւորութիւնն չէ այլ ինչ, բայց միայն եղանակ կամ կերպ լինելոյ կամ կալոյ գոյացութեան իրիք՝ թէ կատարեալ իցէ, զորօրինակ մարդ, թէ անկատար՝ զորօրինակ մանն մարդոյ, զլուխն, կամ ոտն, կամ ձեռք։ Սակայն կերպ կամ եղանակս այս այնպէս առեալ լինին, և է որ զգոյացութիւն ինչ՝ յորոյ վերայ կայ՝ կատարելագործէ կամ տայ գոյացութեան այնպէս կատարելապէս կալ, զի ինքնին կացցէ ընդ իրաւամբ իւրով, և ո՛չ ընդ իրաւամբ այլոյ. սմին իրի ասի գոյաւորութիւն. այսինքն՝ որ իրաւամբ իւրով



ունի զգոյութիւն իւր. ևս կոչի ենթ-կ-ուն. այսինքն՝ որ ինքնին նկատմամբ եղանակի կալոյն անկախ է. վասն որոյ սահմանի «գոլ յետին կատարելութիւն գոյացութեան, որ անձնիշխան կացուցանէ զնա». այսինքն զգոյացութիւնն, և անհաղորդելի այլում՝ իրրև ենթադրելոյ կամ անձնաւորութեան։

ՃԺԴ. Ենթադրութիւն կամ ենթական բաղկանայ ի գոյացական բնութենէ և ի գոյաւորութենէ, այսինքն յեղանակէ կալոյ գոյացութեանն։ Եւ խոհրն ընդ մէջ երկոցունց նոցա՝ ենթականն և գոյաւորութեան՝ է, զի սա առեալ լինի ի վերացեալն, այսինքն եղանակ լինելոյ առանց գոյացութեան. իսկ ենթադրեալն կամ ենթականն առեալ լինի միշտ ի թանձրացեալն, այսինքն գոյացութիւնն ընդ իւր կերպ և եղանակին կալոյ. բայց եղանակս այս կարէ լինել ո՛չ միշտ իւրովն սեփհական եղանակաւ, այլ երբեմն կարէ կալ այլոյ գոյացութեանն եղանակաւ. ուստի զենթադրեալն կամ զենթականն կարեմք այսպէս սահմանել. «գոյացութիւն յամենուստ կատարեալ և ինքնիշխան, և այլոցն անհաղորդելի»։ Ի սահմանէդ այսմ յայտ է, սա ի լինել ենթադրեալ կամ ենթակայ՝ չէ բաւական զի լիցի առանձին և անհատ գոյացութիւն ինչ, այլ և ունիցի յինքեան զսկիզբն և զկարողութիւն գործողութեանց կամ զդադմանց։ Սորին վասն ո՛չ ձեռք առանձինն, և ո՛չ ոտք կոչին ենթակայք. զի ձեռք չեն անձնիշխան և ո՛չ ոտք, կախեալ միոյն ի մարմնոյ անտի՝ և միւսոյն յորմէ։ Եւ ո՛չ իսկ հոգի մարդկային և մարմինն բաժանեալք ի միմեանց ենթադրեալ կամ ենթակայ կարեն կոչիլ. զի հոգին կախի ի մարմնոյ, և սա յայնմանէ ի գործողութիւնս իւրեանց, և զանգհական եղանակ կալոյ չունին առանձինն (Մ՛Ծ), այլ ամենայն կազմուածն՝ որ կոչի ե-ղծ (*). բառդ ենթ-կ-ա յարմարի թէ անբան կենդանեաց և թէ բանականաց. բայց ո՛չ այսպէս և -անձն կամ -անձն-ու-թ-ուն։

(*) Տես Աստղ Համաբնարանութիւն, գանագ. Լդ. Հա. ԺԱ։

ՃԺԳ. Եթէ ենթադրեալն կամ ենթակայն ունիցի պիտոյականութիւն կամ զիւրս, աղնուագոյն ևս անուամբ ոչն կոչի, և է ներգործական բայից ներգործեալ և ընդունէր և ոչոչն ենթադրեալ է, ըստ մեծին Պոէտիոսի ենթադրեալն կամ ենթակայն սահմանի զոլ «անհատ գոյացութիւն կատարեալ բնութեան». և անձինն՝ «անհատ գոյացութիւն բանական բնութեանն». ուր բառդ անհատ ոչ միայն ունի զիտոյս բառիդ ոչինչ՝ այլ և զիտոյս անհատելի ըստ մեծին Աստուածոյ։ Ըստ Արբոյն Թովմայի՝ Աստուածայինն բնութիւնն՝ անձն Աստուածայինն ասի ըստ բերութիւն ոչ ինչ։

Աստենայն փիլիսոփայիցն գաս աստ առաջի դնել զկրկուս խնդիրս մանկանց. նախ՝ թէ անձն կամ անձնաւորութիւնն ի թանձրացեալն առնել, այսինքն գոյացական բնութիւնն ընդ գոյաւորութեան՝ այս է ընդ եղանակ կալոյ նորա առնել՝ իցէ արդեօք իրապէս զանազան կամ տարբեր ի բնութենէ, թէ ոչ. երկրորդ՝ թէ արդեօք գոյաւորութիւնն կամ եղանակ կալոյ գոյացական բնութեանն, է՝ զի չէ ազնուագոյն այլ գոյաւորութիւն որ ինքն առցէ զբնութիւնն, թէ գոյաւորութիւնն իցէ զրական իմն յաւելեալ ի բնութիւնն, և կատարիչ նորա։ Յայս խնդիր ոչ երբէք միջամուխ լինէին միտք մարդկան՝ եթէ ոչ Բանին Աստուծոյ մարդեղութեանն խորհուրդ տայր առիթ. ամին իրի օգուտ մեծ ի յուզելոյ և ի միտ առնելոյ զսուտ՝ նոցին որ զերբենական Աստուածաբանութիւնն ուսանել նկրտիցին, Նմին իրի առ առաջինն ասեմք առաքեալ՝ թէ եղանակ կալոյ բնութեանն ոչ միայն միօք կամ արտանաբանօրէն, այլ և երկուքիւք տարբերի և զանազանի ի բնութենէն, և եղանակն կարէ փոփոխել, և ապահական գոլով՝ կարէ լինել և չլինել, և բնութիւնն անվնաս կարէ կալ առանց նորա. քանզի չունի իմն ընդդիմութիւն, զի բնութիւնն ընդ այլ եղանակ զերազոյն կալոյ քան զիւրն՝ յարիցէ, թէ և ընդ հաւասարին ոչ միաբանիցէ, զի կատարեալ գոյացութիւն է և բնութիւն՝ բայց ընդ գոյաւորութիւն զերազոյն զիւրա յարի. այս-



պէս բանն Աստուծոյ վարեաց զմարդկային բնութիւնն Աստուածային իւրով անձնաւորութեամբ՝ անվնաս պահել զմարդկային բնութիւնս. այս ճշմարիտ է թէ բնութիւնն չկարէ կալ առանց եղանակի, բայց չէ պարտ զի եղանակս այս իւր սեփական իցէ. զորօրինակ ձեռք իմ զրկել կարէ ոչ սեփական ներգին գօրութեամբ հոգւոյս, այլ այլոյ գաստիարակին, այլ արուեստիւնս ևս բաւական է վարել զնա։ Զարարած գոյացութեանցդ միայն ճշմարտի բանս այս տարբերութեան՝ ոչ զԱստուածայինն բնութենէ, որոյ էութիւնն կամ բնութիւնն և անձն ոչ տարբերին երկուքիւք՝ այլ միօք միտս՝ ըստ տակաւ ընկալանման մերում։ Ա՛ն երկրորդն՝ ասեմ. զինանք ասեն թէ քանզի արարած բնութիւնն ինքնին թողեալ միոջ չէ յայլ ոչ երբեք զոյն սկզբնէ զգեցեալ՝ ինքնին կայ սեփական եղանակաւն, և ինքն ինքեան լինի անձն և սկիզբն կատարեալ գործողութեանցդ իւրոց. և զայն եղանակ ասեն զոլ բաւական գնելոյ զիւրական իմն տարբերութիւն ընդ մէջ բնութեան և անձին։ Ա՛յլքն ասեն թէ քայ ի բնութենէ, անձն է դրական այլ իմն ինչ՝ որ յաւելեալ ի բնութիւնն՝ որոշէ զնա, և անձնիշխան կացուցանէ զայդ. թէ և՝ ասեն, էութիւնդ այդ իցէ պատահական, և ի ցոյց կարծեացն յառաջ բերեն զայս, թէ լաւագոյն և առաւել իմն է բնութիւնն, որ ինքն եղանակաւն իւրով կայ, քան թէ մերկ բնութիւնն. և թէ ի հակառակ կարծիս յայնժամ ենթադրութիւնն կամ ենթակայն ոչինչ ունէր տարբերութիւն ի պարզ բնութենէ, և ոչինչ իմն յաւելոյր ի վերայ բնութեանն։ Ա՛յլքն և ասեն թէ անձնաւորութիւնն կամ անձն է դրական իմն էութիւն պատահական, բայց ի միաւորիլ անդ տարայն, որ տակարագոյնն է՝ ընդ զօրաւորագունին և աղնուագունի անձին. զորօրինակ՝ կամիլ մի ջրոյ աղբերն ի ծով անդ կորուսանէ բնաւին զէութիւն իւր։ Յայսոցիկ զո՞րն լաւագոյն դատիցիք ի դիտութիւնս Աստուածաբանութեանն, դուք ինքնին ընտրեցէք։ Ասեմ յայտ յանդիման երեւի՝ թէ փիլիսոփայական վաստիւք իսկ մարթի է ուղղախոհացոյն դասուց

ցուցանել զղանսպան նիւթս գերբնական Աստուածարա-
նութեան, և թէ ո՛րպէս բանական փիլիսոփայութիւնն
իրև զաղախին պաշտէ զՏիկին իւր։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՅԱՂԱԴՍ ՆՈՑՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՑ, ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ, ՅԱՐՄԱՐՈՒԹԵԱՆ, ՆՄԱՆՈՒԹԵԱՆ, ՋԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ, ԲԱԺԱՆՄԱՆ, ԲԱՂԱԴՐՈՒԹԵԱՆ, ՊԱՐՋՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻՋՈՑԻ ԻՐԱՑ

ՃԱԿ. Նոյնութիւնն կամ ինքնութիւնն իրաց՝ է անբաժանել և անփոփոխ մնալ իրին, և կամ նոյն ասի այն ինչ, որ որպէս էն՝ նոյն միշտ կայ, այսինքն ցվախճանն. վասն որոյ տիրապէս սահմանեմք զնոյնութիւնն «յարմարութիւն իրին ընդ ինքեան». այսպէս ի նոյնութեան կայ հոգին բանական յԷութեան իւրում և յէական յատկութիւնս իւր. թէ զմի միայն վայրկեան փոփոխիցի հոգի մարդոյ՝ չասէր մի և նոյն, Եւ քանզի մի և նոյն կայ հոգի մարդոյ, ննջեցեալ՝ սկիզբն՝ և աւեր գործողութենանց իւրոց, նորին վասն գործքն և գործողութիւնք մարդկային իւրաքանչիւր անհատին՝ տիրապէս հոգւոյն համարին և նմին վերադրին միայն, և ո՛չ այլում. և որին վասն մի և նոյն հոգին ցնծասցէ բարութեամբ գործոյն իւրոց, և ցաւեսցի չարութեամբ գործոյն, Արդ հոգի մարդոյ մի և նոյն գոլով՝ և ո՛չ վայրկեան մի կարէ դադարիլ ի ճանաչելոյ զինքն խղճիւ մնացին. և թէ դադարէր հոգին, չկարէր ինոյնութեան կալ՝ կամ նոյն հոգի կոչիլ, և վասն գործոցն յառաջ գործելոց ծագէր կասկած և չփոթութիւն մեծ՝ թէ արդեօք մի և նոյն հոգւոյ իցեն թէ այլոյ ուրուք, վասն որոյ և ո՛չ նմա համարելով գործողութիւնն՝ և ո՛չ իակ իրաւունս ունէր ցնծալոյ կամ ցաւելոյ այնու։

Բաժանի նոյնութիւնն ինդիւիդ էյ (Փիզիքական)



և ինդիւիդ բուալ. այն է յորժամ բնական մնասունք սպառազէն իրիք անթեղի և անփոփոխ մնան. զորօրինակ՝ քարինքն այնուքիկ նոյն ասին բնականապէս՝ որք պահեն զբանակութիւնս իւրեանց՝ որպէս ի սկզբան էին, նոյնպէս ցվախճան իւրեանց. նոյնպէս հոգի բանական՝ նոյն կոչի բնականապէս՝ զի անփոփոխ կայ ի յատկութիւնս իւր էականս, Իսկ բարոյական նոյնութիւնն է՝ յորժամ առմարդիկ՝ իմն նոյն գոլ գասի. զորօրինակ միաբանութիւն իմն՝ որ նոյն կոչի, թէ և անհատս միաբանքն պակասիցին անտի. Աստի յայտ է՝ ինդիւիդուն էյ և ինդիւիդուն գոհյ, այսինքն յորժամ իրն պահի կամ պակասի յէականացն կամ ի պատահականացն. Դարձեալ կոչի նոյնութիւնն ընդհանուր, յորժամ ընդհանուր յատկութիւնք իրաց պահին. և փուլն և ըուլն՝ այսինքն յորժամ պահին յատկութիւնք առեալին, և կամ յորժամ պահին յատկութիւնք միոյն՝ կոչի թուական նոյնութիւն, այսինքն ըստ ամենայն յատկութեանց՝ թուով քանի իցեն, մարդոք Պետրոս պահեալ իցէ կատարեալ։

ՃԺԵ. Են գաղափարք իրաց ոմանց՝ որք չինքեանս չպարունակեն ներգործութեամբ կամ զօրութեամբ գիմասս այլոյ գաղափարի՝ նկատմամբ ծանօթութեանն. զորօրինակ բառդ ֆըդ, հաչ, ֆը, են. բայց են և գաղափարք ոմանք՝ որք զօրութեամբ կիցեն չինքեանս ունին հարկաւ ընչանակութիւն և զկախումն այլոյ իրիք. զորօրինակ յասելդ ուդէ՝ իմանասս նախ զզաւակն, երկրորդ հետեւաբար պարտիս իմանալ զօրութեամբ գոնէ զգազափար հօր. այսպէս յասելդ հայր կամ մայր, կամ ծառայ կամ աէր, կապդ այդ իմաստի միոյն ընդ այլ ոք՝ կոչի յարաբերական, որ զայլ ինչ արտաքին բերեալ յարէ չինքն. զորօրինակ որդի յարէ չինքն զծանօթութիւն հօր. զի թէ որդի է, ուրեմն ունի զհայր, յայտ գոլով՝ թէ երկիրն ինքնին որպէս բերէ զպտուղ, ոչ բերէ և զորդիս. բառդ ուդէ աստ է յ-ը-ֆէը-յ-ն, բառդ հայր է յ-ը-ֆէը-լ. առայինքն ասին ֆ-ց-ղ-յ-ի, մարդ, հող, և այլն. յետինքն յ-ը-ֆէը-յ-նի, յորոց վերացեալն է

յ-բ-ի-ն, կամ որ նոյն է --ա-ն, երբեմն յիւրաքանչիւր կողմանց իսկ մին զմիւսն յարաբերէ, զորօրինակ հայր՝ զորդի, և որդի՝ զհայր և զմայր։ Երբեմն չիք յարաբերութիւն, այլ միայն պատկանութիւն յարաբերութեանն յարաբերի. զորօրինակ առուլ, բայց նկատմամբ կինոջ հայրն բացարձակ և անկախ է. ընդհակառակն որդին ի հօրէ անտի է։

Խնամատութեամբ ասաց զյարաբերութիւնէ, Հայր Մատնեաէ՝ Ախթամարեցի Յիսուսեան (*) թէ երիք ինչ իրընդրին ի յարաբերութեանն. ի-ն-ի-յ, --հմ-ա և հիմ կամ գ-փ-- յարաբերութեան. զորօրինակ՝ ենթակային է հայր, սահման կամ եղր յարաբերութեան է որդի, և հիմն կամ պատճառ՝ վասն որոյ որդին և հայր յարաբերին զմիմեանս՝ է հարկաւորութիւն կախման միոյն ի միւսմէ. Դարձեալ այլ է յ-բ-ի-ն-ի-ն գ-մ-բ-ա-ի-ն՝ և այլ է յ-բ-ի-ն-ա-ի-ն է-ի-ն. առաջինն է՝ յորժամ միտք մարդոյ դնէ կարգս ընդ մէջ ծանօթութեանց իրոց կամ իրաց՝ որք բնակա-նապէս չկախին ի միմեանց. զորօրինակ թէ ոք թուէր զիրս անկախս ի միմեանց՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, ևն. իսկ է-ի-ա է, յորժամ յարաբերութիւնն և կապն բնականապէս կայ. զորօրինակ՝ թագաւոր՝ հպատակ, զօրապետ՝ զօրական, հայր՝ որդի, ընդ մէջ պատճառն և ներգործութեան, և ամենայն արարածոյն կարգ և կախումն ի յարաբերութեան կայանայ. զի որդիք ի հայոց իրենց, հարք և որդիք, կենդանիք և անկենդանիք են արարածք. եթէ արարածք ամենայն, ուրեմն ամենայն են յարաբերին իրենց, որում ընդդէմ կալ անհնարութիւն է. և ըստ այսմ է յարաբերութիւնն փոխադարձ և անփոխադարձ. մեք կախիմք յԱստուծոյ, բայց ոչ նա ի մէնջ. և արարածոյն յարաբերութիւն առ Աստուած իրապէս կայ. իսկ այն առ արարածս յարաբերութիւն մտոյ է, զի առեղծանելի չյաւելու ինչ նոր յԱստուած։

ՃԺԶ. Յարաբերութիւնն դոգեղս միանայ ընդ յար-

(*) Լակրանութիւն. Յաղագս յարաբերութեան։



նարութեան, որոց ընդդէմն է անյարաբերութիւնն կամ անյարմարութիւնն. սակայն գիտել պարտ է՝ թէ յարաբերութիւնն կայանայ ի կախման միոյն ի միւսմէ՝ կամ նկատմամբ էութեանն, և կամ նկատմամբ ծանօթութեանն. բայց յարմարութիւնն է նմանութիւն յատկութեանց միոյն ընդ միւսոյն, այնպէս զի ամենայն յարմարութիւն է յարաբերութիւն, բայց ոչ ամենայն յարաբերութիւն է յարմարութիւն. զի առ բազումս նաւ յայժմեան ժամանակիս, որդին ի յատկութիւնս չյարմարի հօրն, թէ և ունի զյարաբերութիւնն հարկիւ ի հօրէ։

ՃԺԷ. Ի յարաբերութենէ և ի յարմարութենէ ծագի և նմանութիւնն, որ չէ այլ ինչ՝ բայց յարմարութիւն նշանաց կամ յատկութեանց բազում իրաց կամ մարդկան, որք թէև թուով և անձամբ զանազանք իցեն, այլ ի կատարելութիւնս և յորպիսութիւնս միաբանք են, և յարմարք միմեանց. և ոչ ըստ նմանք կոչին, որք սեռիւ՝ տեսակաւ նոյն են՝ թէ և թուով՝ ոչ, Աստ յատուկ գոյ և հատատարութիւնն, որ չէ այլ ինչ՝ բայց միոյն բազմացն նմանութիւն ի --ա-ի-ն-ի-ն-ա և յ-ա-ի-ն-ա միայն. նմին իրի ամենայն հատատարութիւն է նմանութիւն, բայց ոչ ընդհակառակն. նմանութեանն հատկառակ կայ այլայլութիւնն, և անհատատարութեանն հատատարութիւն. Աստ բնաւին յումեքեա լինել գտանիմք յատելոյ ինչ զգծատութենէ երկուց իմաստասիրացն Լէիպնից և Ջնլարք, յորոց առաջինն այնպէս՝ թէ չգտանին երկու անհատք ի բնութեան կատարելապէս միմեանց նմանք, երկրորդն այնպէս՝ թէ չիք իմն ընդդիմութիւն ոչ յԱստուծոյ և ոչ ի բնութենէ արարածոց, զի իցեն երկու անհատք կատարելապէս նմանք միմեանց. Յերկրորդումն կարծեացն զՋնլարբին համարիմք հատանական, թէև փորձ մարդկային չայն ասպճան ևս գիտութեան ժամանել չկարէ, մինչև մանրամասնաբար զամենայն յատկութիւնս բնութեան զներքինս և զարտաքինս գիտել. բայց միշտ ճշմարիտ է՝ թէ չլինել իրին՝ ոչ ցուցանէ զանհնարին լի-

ՀԱՒԼ. Ով չէ նդրէր իրէնէ իւրոյ տեղւոյն ։ Ով չէ ու ոչ է իմ ձէրկ իրէնէ իւրոյ տեղւոյն ։ Ով չէ նդրէր

յորժամ ըմբռնէ զմարդ, զոդեցս զայս միմին զաղափար մարդոյ բաղադատէ ընդ այլոց զաղափարն բանական կենդանւոյ, և հաւաքաբանութեամբ յայտնէ զպատահանութիւն որ ընդմէջ մարդոյ և բանական կենդանւոյ. կոչի պատահանութիւնս այս [illegible]։

ՃԺԹ. Այն ինչ՝ որ ունի զմասունս, կամ այն ինչ որ բաղկանայ յերկուց կամ ի բազում մասանց կոչի [illegible], յորմէ վերածեալն՝ [illegible]. յերիս բաժանի տեսակս, [illegible], ի [illegible] կամ [illegible], և ի [illegible] կամ [illegible]։ Առաջինն է յորժամ իրն ունի զերկու մասունս կամ զրազմայն իրապէս զանազանս, զորօրինակ՝ ի գրասեղանիդ ունիս զփայտ եղբեւրս, որք բազադրեն զսեղանդ։ Մ[illegible] է, յորժամ իրապէս չիցէ իմն բազադրեալ, այլ պարզ, և մասք ևեթ ստանձն զմասունս նմա. զորօրինակ Աստուծոյ էութեանն՝ ստանձք զմիտս և զկամս իբր զանազան ատորոգելիս [illegible] կամ [illegible]։ Հ[illegible] է՝ յորժամ ստանձք էութեան իրին զպատահանս մասունս ձևապէս կամ կերպարորակս զանազանս. զորօրինակ ի հոգի մարդոյ կատարելութիւնն զգայմանն՝ իմացմանն, բազադրութիւնն իրական գարձեալ բաժանի յ[illegible]. զորօրինակ ի բազադրեալն մարդ՝ են երկու մասունք էականք, մարմնաւոր և հոգևոր. բաժանի ի [illegible] կամ [illegible]. զորօրինակ՝ ի գնոտակն մանկէն, կամ փղոսկրեայ պատկերն, կամ եղանակն բոլորաձև, բոլոր, եռանկիւնի կամ քառակուսի, որք իւրաքանչիւրքն կարեն լինել՝ փոխոխելով ի վերայ մանկէն գնոտակի իրիք։ Բաժանելի իրականն՝ հուսկ ուրեմն ի բազադրութիւնն [illegible] կամ [illegible], որ թէև չվերաբերի էութեան իրին, այսինքն առանց որոյ իսկ կարէ իրն բազադրեալ կալ, թէև ոչ ըստ բնութեանն ամբողջ. զորօրինակ՝ ի մարդն թէ պակասիցի մի ոտն, կամ մի ձեռն. իսկ թէ բազադրութիւնն առաւելութիւ գեր քան զբնականն կարդ բնութեան՝ կոչի հրէշ. զորօրինակ՝ վեցմատանեայ ձեռն, երկագլուխ մարդ, որք երեւին երբեմն ի բնութեան։ Բազադրեալն [illegible] կամ է բազադրեալ ըստ չա-



փոյն՝ այսինքն չինչն ձգելով և միաւորելով զբազմութիւն, զորօրինակ հաղար՝ որ բազադրի ի յանհատից որք թուեալ՝ զհազար առնեն, և կամ ըստ լայնութեանն՝ որ երկակի կարէ լինել. զի ամենայն բազմութիւք բազադրեն զմի ինչ, առանց պահելոյ իւրաքանչիւրն զերգր և զսահման իւր սեփական. զորօրինակ հաղարն ունի զհատարակ ամենեցուն երգր կամ սահման. զի հազար ասելով ոչ զիւրաքանչիւր անհատ խորհիս, այլ զամենեցուն առհատարակ իբրև զմիոյ. կամ բազմութք թէև բազադրեն զմի բարդ կամ բազադրեալ. զորօրինակ՝ ժողովուրդն խուռն յեկեղեցին նստելով, և զօրք ի կրթութեան զէն ի ձախ ձեռին յողջոյն ունին, և կամ հանիւնչն կամ կոյտ ցորենոյ. բայց պահեն ի միասին իւրաքանչիւրն զսեփական երգր կամ զսահմանն կից յարելով յայլն։ Առաջնոյն տարք զանունդ [illegible], երկրորդին [illegible] և յ[illegible] [illegible]. Առաջինն դոյությական բազադրութեամբ կայ, երկրորդն պատահական միայն մանն արտաքոյ մասին կայ։

ՃԻ. [illegible] ըստ օրում է կուտակութիւն բազում սահմանեալ մասանց, չկարէ ծնանիլ զանսահմանն. զի սահմանեալն յաւելեալ ի սահմանեալն՝ չկարեն երբէք ծադել զանսահման. նախ՝ զի լինէր ընդդէմ բնական սկզբանց, զի ներգործութիւնն՝ ազնուագոյն լինէր քան զպատճառն, և զի լինէր երկրորդ՝ ընդդէմ բնութեան. քանզի լինէր մի և նոյն ինչ սահմանեալ և անսահման. կամ լինէր փոքր և մեծ ի միասին և կամ յաւէտ լինէր և չլինէր ի միասին. Զի թէպէտև առ թուաբանս ասի բազմանիլ բազադրելոյ իրիք յանսահմանն, և կամ ասի թիւ կամ հաշիւ անսահման, բայց այդ է ոճ խօսի թուաբանից, զոր ի կիր առնուն առ ի ցուցանել զբազմութիւն թուոյն, յոր կարէ բազադրեալ իմն բազմանիլ. ուստի զասելն թէ բազադրելոյն է թիւ բազմանման ցյաւիտեան կամ ցանսահմանն՝ պարտ է մեկնել զզօրութեամբ անթիւ կամ անսահման լինելոյն իրիք, այսինքն այնքան մեծ լինել թուով, մինչև միտք մարդկան չկարիցէ հաշուել զայն. բայց որ առ միտս արարածոց անսահման է, յայս Աստ-

ուսածային կարի յոյժ թուատոր և սահմանատոր է. զի որ ընդունակ է յաւելման՝ չկարէ անսահման լինել, իսկ արդ բնութիւն հաչուի է յաւելուլ կամ նուազեցուցանել զայլ յայլոց վերայ. ուրեմն չկարէ անսահման լինել։

ՃԻԱ. Ամենայն բաղադրելոյն իմանալի հասարակ է, իբր էական յատկութիւն երրակի չափն. այսինքն Է-էն, Էն-ի և ը-ի. կամ իւրաքանչիւր իմն բաղադրեալ ունի զկորութիւն, զերկայնութիւն և զլայնութիւն. Թողեալ զժայռս և զվէմս լերանց, առցուք զմանր իմն Թղթոյ. Թուղթն ունի զերրակի չափդ. առցուք զմազ մի ի գլխոյ, նոյնպէս առցուք զամենամանր Թել բամբակի՝ լոյկ նոյնպէս. այսպէս զայլոցն։

ՃԻԲ. Պ-ըշ կոչի այն միայն՝ որ չունի բնականապէս կամ իրապէս զմասն, և ասի յայտ է՝ Թէ պարզութիւնն ընդդէմ կայ բազմութեան կամ բաղադրութեան։

ՃԻԳ. Ասա իրաւամբ ի կարգի անորոշ վիճաբանութեան բանական փիլիսոփայութեան դասել ի հետեւեալդ. գԺամին նախ ջատագովքն կարծեաց Թէ յետ բաժանելոյ զմարմինս յետ ամենայնի հասանելմ յայն մանր մասն՝ որ պարզ է և մի, և ոչ է բազկացեալ։ Պնդեն ջատագովքն այլոց կարծեաց՝ Թէ մարմինք միշտ են բազադրեալ։ Նախ առաջնոյն փաստք են՝ եթէ է բաղադրեալն, ապա ուրեմն պարտ է զի իցէ պարզն՝ յորմէ բազադրեցաւ. ապա Թէ ոչ՝ չէր պարտ զի բազադրեալ կոչէր. և քանզի է բազադրեալ, ուրեմն պարտ է զի ի պարզ մասանցն բարդեցի կամ բազադրիցի։ Երկրորդ՝ Թէև առաջին հիւղէք և մանրիկ մարմնոցն մասունք՝ յորոց բազկանայ բազադրեալն՝ գոլով համակից և համագի, առաձգական իմն զօրութեամբ զմիմեանս միմեանց առձգեն, և յայսոցիկ հիւլէից և չամանդաղից՝ որք պարզ են, ծագին բազադրեալ մարմինք։ Բայց առցուք զնախակառուցորդացն փաստս։

Նախ՝ առնն Թէ մարմինք ապականին և յապականութենէ անտի նոցա ծնանի նոր իմն մարմին. եթէ պարզ լինէին առաջին հիւլէքդ՝ չկարէին ապականիլ, և Թէ չապականէին չլանէր անտի նոր իմն առեղծուած. զի ապականութիւն միոյն ծնունդ է միւսոյն։ Երկրորդ՝ Թէ առեղծուածն նորոյ իրին՝ չլինէր առեղծուած, կամ յոչնչէ։ Դարձեալ՝ որպէս առաջաւք երրակի չափն՝ խորութիւնն, լայնութիւնն և երկայնութիւնն՝ են զոգեբես էական յատկութիւնք ամենայն ֆիզիքական իրաց. այսպէս՝ զի չիք իմն մարմին՝ որ առանց սոցա իցէ. և ցուցանի, յետին կամ առաջին հիւլէն՝ կամ մանրիկ մասն՝ որ պարզ համարի՝ է մարմին, այսինքն իրրև զֆիզիքական իմն տիրապէս և ֆիզիքապէս կայ, զոր հակառակորդքն չուրանան. եթէ է մարմին, հարկաւ ունի կամ բովանդակէ զտեղի ինչ, զոր տեղին այլ մասն չկարէ բովանդակել. իսկ արդ որ բովանդակէ ֆիզիքապէս զտեղի ինչ, ունի զերրակիդ այդ չափ. այսինքն զլայնութիւն, զերկայնութիւն և զխորութիւն, ուրեմն չկարեն պարզ լինել առաջին բազկացուցիչ մասունք մարմնոց։ Դարձեալ՝ որքան պարզ իցեն մասունքդ այդոքիկ՝ կան ֆիզիքապէս և ոչ երբէք հոգեպէս. զի այս հոգիք անթիւք միացեալք իմի կան, և ոչ երբէք բովանդակեն զտեղի։ Դարձեալ՝ որ ամենատոյդ է, և հոգեբես սկզբունք մասց, ներգործութիւնն խնդրէ զնման իւր պատճառ՝ կամ որպէս է բազադրեալն՝ այնպէս պարտ է զի իցէ բազադրիչն. զիա՞րդ որ պարզն է և չունի զերիս զայդ քանակութիւնս կարիցէ ծնանիլ զնոսա, զորս չունի ի բնութեանն։

Բայց առարկիցէ Թերևս Պոգովիչ ջատագովն պարզութեան, Թէ յայսմ դրութեան՝ լինէր հնարաւոր Թիւն անսահման. զի միշտ բաժանեալն կարէ բաժանիլ ի մանրագոյնն, և այս՝ յետ մանրագոյնն՝ են. են. մինչև ցյաւիտեան։

Ուրանամք զձեռնարկութիւնդ. քանզի չէ պարտ չընդունելով զպարզութեանն կարծիս, դնել զիիւ յաւիտենական կամ անսահման. քանզի ամենայն ինչ ի հարկաւոր էակէն առեղծմամբ աւր զեղելութիւնն. չէ պարտ զի Աստուած պարտաւոր լիցի առեղծանել զմարմինս ի պարզ մասանց մարմնեղինաց և անտի բազադրել զմարմինս զայս

բաղադրութեան զոր և զդայութիւնք մեր յատուկ բերին զորս ասացաք գոլ առհասարակ ազբիւր ճշմարտութեան, Չուսկ ուրեմն թէև բաղադրեալ ասեմք զմարմինն, բայց և այսու չասեմք լինել արդեամբ զհաչիւ բաժանման նոցա՝ անսահման. քանզի բնութեամբ այդպէս են մարմինք, զի յեւս բաժանմանց ոմանց հասանելմբ յայդ մասն մանլիկ, որ չընդունի զայլ բաժանումն, և յատէտ զնդծանի քան թէ բաժանի. զորօրինակ՝ թէ ոք զմանրագոյն մասն ինծորոյն դանակաւ կամիցի բաժանել, յատէտ յոչինչ դառնայ՝ քան թէ բաժանի։ Այս կարծիք մեզ յատէտ հատանական են քան զպարզութեանն. բայց զերկոսունցն իսկ յարդեմք զիտասս։

ՃԻԴ. Մարմինք բաղադրեալք ուր կան, բովանդակեն զտեղի իւրն. այսմ տեղւոյ տամք զանունդ ՏԲՅ, այսինքն միջին տեղի մարմնոյ. զորօրինակ միջոց ձուոյն է նոյն ներքինն տեղի ձուոց բովանդակեալ ի մարմնոյ անտի ձուոյ որ ունի զերբակի չափն, զխորութիւն, զլայնութիւնն և զերկայնութիւնն, վասն որոյ միջոյն բաժանի յԼՀՀ և ի Ֆ–Ը–Ր–ՀՀ. նա՝ կախի ի մարմնոյ անտի. քանզի ուր կան մարմինք, հարկաւ պարտին բովանդակել զտեղին, վասնորոյ և սահմանի այսպէս. «միջոցն է տեղին բովանդակեալ ի ֆիզիքական մարմնոյ անտի»։ Իսկ Ֆ–Ը–Ր–Հ միջոցն է, յորժամ մեօք ներկայացուցանեմք մեզ զտեղի ինչ, զոր ընդունէր կամ բովանդակէր մարմինն՝ եթէ լինէր. զորօրինակ ոք ի միտս որոշէր զտեղի իւրն քառակուսի վասն չինելոյ զառն իւր՝ ի մանուածոյ այսքան երկայնութեամբ, այսքան լայնութեամբ և այսքան բարձրութեամբ կամ խորութեամբ։ Ի ռամկական խօսս կոչին ՏԲՅ այն տեղիք՝ որք ընդմէջ լերանց և լերանց կան, քաղաքաց և քաղաքաց, տանց և տանց, մարգոյ և մարգոյ. բայց ո՛չ այդպէս յաչս իմաստնոց. քանզի աշխարհս զանազան տեսակօք մարմնոց պաշարեալ է. ուր չեն լերինք, և քաղաքք և տունք՝ անդ ևս մարմինք կան, թէև ըլյծ եղէն և հողմեղէն. զի ջուրք անդամ և հողմունք և օդն մարմինք են, և բովանդակեն զտեղի. ուստի



յիրկրագունան՝ թէ ի ներքս՝ այսինքն ի մարմինս, և թէ ի վեր՝ արտաքս, այսինքն ի հողմն և յօդս՝ որք բաղում մղձաւ ի վեր կան քան զկարծրութիւն երկրի, կայ միջոյն իրական. զի ուր մարմինք կան իրապէս, անդ պարտ է զի և միջոցք իցեն իրականք։ Բայց ի տիեզերս քան ասեղագիտաց՝ բաց յաստեղացն, որք անթիւ ոմն պակասութեան մերձենային և տեսութեան աչաց, և հեռատեսութեան առաւել քան 80 միլիոն աստեղք նշմարին, ամենեքեան մի քան զմիւսն մեծագոյնք անկախք ի միմեանց, և ընդմէջ նոցա ոչ գոլով երբէք մարմին և՛չ իսկ հողային և օդական, տեղիք այդ միջանկեալ՝ կոչի սերպապէս դ–ը–դ և ֆ–ո–ը։ և այսպէս գոլով անչափ պահեալ զկարգն զարմանալի և ահաւոր իմն ի զանազան արարչին միայն իւրանց ամենակալ զօրութեամբ վարին և կան և չարժին և ժամանեն վախճանին։ Աւդարև զօրութիւն ահաւոր և երկրպագելի։

ՃԻԵ. Եղեն ոմանք ի փիլիսոփայից՝ որք ասացին զմիջոցն լինել գոյութիւն իմն անկախ յԱստուծոյ. այլքն ասացին գոլ նոյն անսահմանութիւնն Աստուածային, և ոմանք ձևք հարկաւորք մտաց. և ոմանք գոյութիւնք իմն, բայց կախեալ ի յԱստուծոյ. ոմանք այսպէս և այլքն այդպէս. ամենեքեան նորութեանցն սիրողք և անթիւ ողջամիտ փիլիսոփայիցն հասարակ կարծեաց անարգուք, զորս և ո՛չ հակառակորդս կոչել արժան է իմաստնոց՝ քան թէ փիլիսոփայութեանն չատագովս. ծնեալք ի Գերմանիա, անդ չքնեցան, անդ կեցին, և անդ մեռան։

---

## ԳԼՈՒԽ Գ.

ՃԻԶ. Խօսեցաք ցայսր զկարելեացն՝ զերացն և չատկութեանց, և զյարմարութեանցն իրաց. ժամ է արդ խօսիլ զանսօթութենէ հարկաւոր էակին, և զանհարկաւոր

առաջնոյն բացարձակապէս զօրութեամբ բնութեան իւրոյ, և յայլմէ ոչ ունել զբաւական պատճառ հարկաւոր լինելութեանն, և է ը-ր-ն, ը ինչ կամ ը-ո ին- ը-ց-ը-ե-հ-ը-ո-ր կոչի. զի անմիջապէս ընդ բացարձակապէս հարկաւորն կապի կամ անտի եղանէ և ինձմա ունի զհիմն և զարմատ լինելոյ իւրոյ։ Յայս կարգ հարկաւորութեան են ամենայն մեթաֆիզիքական ճշմարտութիւնք, և էութիւն ամենայն կարելեացն, որք ունին զբացարձակ հարկաւորութիւն էութեանց իւրեանց. բայց բաւական պատճառ այնպէս լինելոյն՝ կայ յէութիւնն և ի միտս Աստուածայինն՝ ընդ որս կապին հարկաւորապէս։ Եւ ամին իրի միայն չվայելէր ի փառս՝ լինելոյ կատարելապէս ը-ց-ը-ն, յոր վայել է մի միայն Աստուածային էութիւնն (տես ՃԱ. և ՃԲ). և հարկաւորութիւնս այս բացարձակապէս լինելոյ Աստուածայինն էութեանն՝ ոչ է մի միայն նկատմամբ էութեան ըստ որում էութիւն, այլ և նկատմամբ մշանջենաւոր արդեամբ լինելոյն, այսինքն գոյութեան էութեանն, որ չէ ինն զանազան յԱստուած։ Ուստի Աստուածայինն էութիւնն ոչ թէ լինի բացարձակապէս հարկաւոր, այլ արդէն է. ոչնպէս և այլ ճշմարտութիւնք իրր բացարձակապէս հարկաւորք, արդէն են բացարձակապէս հարկաւորք, բայց վասն էութեանն Աստուծոյ, ոչ միթէ վասն սեփական էութեանց իւրեանց կամ զօրութեամբ էութեանց իւրեանց։ Իսկ թէականապէս հարկաւորքն՝ ոչ թէ ի յաւիտենից այնպէս են, այլ լինին այնպէս՝ զի պատահականք գոլով՝ յառաջ քան զլինելն անտարբեր են, այսինքն ոչ հարկաւորք. զի այն ինչ՝ որ կարէ լինել կամ չլինել, ոչ է այն ինչ՝ որ չկարէ չլինել. այսինքն սա հարկաւոր է ի յաւիտենից, և նա անհարկաւոր, որ յետ ընդունելոյ յաղագս կամաց գերագոյն էակին զեղելութիւնն՝ ստանայ յայնժամ զհարկաւորութիւն եղելութեան իւրոյ. բայց այն՝ որ ի յետոյ, այնու՝ զի չէր յառաջնմէ հարկաւոր, եղև յետոյ յաղագս եղելոյ անտի Աստուածայինն կամաց։ Սորին վասն է զանազանութիւնն այն հարկաւորութեանն յ-ո-ը-ն, և հարկաւորութեանն ի յետոյ։





էակաց կամ իրաց, և թէ որպէս ի ծանօթութենէ ոտն առիպիմք մնանել ի ծանօթութիւն անսահման էակին, վասն որոյ յերկուս յօդուածս բաժանեմք զառաջիկայս գլուխ. յառաջինն ցուցցուք՝ թէ զի՞նչ է հարկաւոր էակն՝ և զի՞նչ անհարկաւորն. յերկրորդն ցուցցուք՝ զիա՛րդ ի ծանօթութենէ պատահականացն ստիպեալք գամք ի ծանօթութիւն անհուն, և անհարկաւոր էակին. վասն որոյ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳՍ ՀԱՐԿԱՒՈՐ ԷԱԿԻՆ, ԵՒ ՊԱՏԱՃԱԿԱՆԱՆ ԿԱՄ ԱՆՀԱՐԿԱՒՈՐ ԷԱԿԻՆ

ՃԻԼ. Այն ինչ կոչի էակ կամ էութիւն հ-ե-ր, որ կայ զօրութեամբ բնութեանն, և չկարէ չլինել. իսկ էակն կամ էութիւնն անհարկաւոր՝ անտարբեր կայ, այսինքն՝ կարէ լինել և չլինել. այսմիկ տան զանունն գ-ո-հ-ե-ն, որ պատահմամբ կայ՝ և ոչ ի հարկէ։ Դարձեալ էութիւն իմն երկակի կարէ հարկաւոր լինել. կամ հարկաւոր բացարձակապէս. այսինքն ոչ երբեք անհարկաւոր լինել, այլ միշտ հարկաւոր ի յաւիտենից ցյաւիտեան, այն, է՛ որ է, և ոչ երբեք չէ. և ոչ իսկ թէութեամբ իւիք չէ։ Բայց լինի և հարկաւոր իմն՝ եղեալ թէ կամք հարկաւոր էակին կամիցի զի իցէ յետոյ, որ եղևն՝ չկարէ չլինել՝ որ ինչ էնն. զորօրինակ՝ աշխարհս՝ յետ ստեղծանելոյն՝ չկարէ չլինել ստեղծեալ, և զայդ կամք Արարչին չկարէ դարձուցանել, կամ առնել՝ զի որ եղևն, չիցէ եղեալ. զի հակասութեան սկզբունք անտի ծագէր, այսինքն մի և նոյն իրն լինելք և չլինելք ի միասին։ Այսմիկ հարկաւոր էութեան տան զանունդ հ-ե-ր թէականապէս և ոչ բացարձակապէս։ Կոչի առաջին հարկաւորութիւնն ն-ի-ը-ց կամ յ-ո-ը-ն. իսկ թէականն հ-ե-հ-ե-լ, կամ ի յետոյ և յ-ե-ց-յ։ Ունակ ուրուք էակ ոք կարէ հարկաւոր լինել ըստ

## ԳՕԴՈՒԱԾ Բ.

### ԳԱՂԱԹԱ ԹԷ ՋԻՄՐԴ Ի ԺԱՆՕԹՈՒԹԻՒՆԷ ՊԱՏԱՀԱԿԱՆԱՑՆ ԵՒ ԱՆՀԱՐԿԱՒՈՐԱՑ ՍՏԻՊՄԱՄԲ ԳՈԳՑԵՍ ՀԱՍԱՆԵԼ Ի ԺԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԷԱԿԻՆ

**ՃԻՐ.** Յուզանէ նախ առաջարկութիւնս. խղճիւ մնայ, բանիւ և զգայութեամբ տեսանելւոյ և գիտելւոյ թէ որ ինչ յաշխարհի է, կոչի -ը-ը-ծ, կամ Եվ-ը, կամ ֆյ-յ-ը-ի-ծ, են. ծանօթութիւնս այս կամ դաղափարս -ը-ը-ծ է յարաբերական, այսինքն այնպէս է, դի յինքեան հարկաւորապէս պարփակէ դյարաբերեալն, և ինքնին առանձինն չկարէ կալ, զորօրինակ՝ ներգործութիւն լսի առանց պատճառի չկարէ լինել, Երկրորդ՝ արդէն ծանուցեալք թէ պատահականքն և անհարկաւորքն անստորբեր են ի լինել, այսինքն ինքնին անընդունակք են ի գործողութիւն կամ ի չարժուն, Երրորդ՝ տեղծանելն դիմի պահանջէ են- թակայապէս զանատմանն և զամենակար զօրութիւն: Ա.յ- սոյիկ այսպէս եղելոց, տեսմք նախ՝ թէ ի ծանօթութենէ ներքին յարաբերութեան դաղափարին արարածոց հանեմք դծանօթութիւն յարաբերելոյն, որ կիսց ընդ յարաբերա- կանն է. քանդի բառդ -ը-ը-ծ ենթադրէ հարկաւորապէս զարարիչն, առանց որոյ չկարէ կալ և լինել: Երկրորդ տեսցաք թէ անհարկաւոր և պատահական գոյացութիւնք ինքնին անստորբեր են ի լինել և ի չլինել. եթէ զօրու- թեամբ բնութեանն լինէին՝ տայ անստորբեր չլինէին, այլ միշտ հարկաւորապէս լինէին՝ ընդդէմ բնութեան իւրեանց, դի լինէին և չլինէին անստորբեր ի միասին. որ հակասութիւն է. Ա.պա ուրեմն եթէ ինքնին անկար են ի լինել և ի չարժիլ, և արդեամբ են. ուրեմն հարկա- ւորապէս են՝ ո՛չ յանձնէ, այլ յայլմէ՝ որ հարկաւորապէս է. դի չիք ներգործութիւն առանց պատճառի: Ո՛չ յանձ- նէ, քանդի անստորբեր գոլով ի լինել, այսինքն չլինելով զօրութեամբ բնութեանն՝ պարտին յայլմէ լինել, յոր և



ունիցին դբաւական պատճառ լինելոյն: Երրորդ՝ տեղ- ծանել դիմի կամ ի չգոյէ ի գոյ ածել՝ ամենակար զօրու- թեան վերաբերի, Իսկ արդ գոյութիւնք չունին զայդ կարողութիւն. դի ոչինչ էին յառաջ քան զլինելն, և որ չէն՝ ինքնին չկարէ լինել է. և դի գոյութիւնք արդեամբ կան, և կալ արդեամբ՝ առաւել է քան զկալն զօրու- թեամբ կամ կարելութեամբ: Ա.րդ որ զօրութեամբ է, դի՞արդ կարիցէ ինքնին լինել արդեամբ է, փոքրն և նուաստագոյնն զերարդ կարէ զմեծագոյն և զաղնուա- գոյնն քան զինքն տալ՝ չդիտեմ: Ուրեմն ի յարաբերա- կացն ծանօթութենէ, տեսիլեմք գալ ի ծանօթութիւն յա- րաբերելոյն, կամ ի պատահականացն ի հարկաւորն, ի տահմանելոցն յանատահմանն, ի ներգործութենէ ի պատ- ճառն: Ա.յժմ պատճառի որ զօրութեամբ բնութեանն այս- ինքն ի յարիտենից կայ, և տայ գլինելութիւն եղելոցն՝ տամք զանունդ գերագոյն էակին:

### ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

**ՃԻԹ.** Յարաբերականքն են տահմանելիք. ուրեմն չկարեն զանատմանն յարաբերել. և կամ որ նոյն է, տահ- մանեալն զանատմանն չկարէ յառաջ բերել. քանդի առ ի յառաջ բերել տահմանելոյն զանատմանն, պարտ է, դի յինքն պարփակիցէ զնա. իսկ արդ արարածն տահմանեալ գերագոյն էակն ո՛չ պարունակէ յինքն: Ուրեմն չկարէ ծանօթութիւն տահմանելոյն իրաց յառաջ բերել զանատ- մանն:

Պատասխանեմ՝ զանազանելով գհետևութիւն նախըն- թացիդ. չկարեն յարաբերել ըստ բովանդակութեան ամե- նայն ծանօթութեան անատմանն էակին՝ ընդունիմ. չկարեն յարաբերել այնչափ, որչափ կարին յանատմանէ անտի՝ ուրանամ: Ա.ռ երկրորդ նախընթացդ ասեմ, դարձեալ զանազանելով, տահմանեալն զանատմանն չկարէ յառաջ բերել. այսինքն չկարէ տահմանեալն լինել պատճառ էու- թեան անատմանելոյն՝ ընդունիմ. չկարէ ծանօթութիւնն

դերագոյն էակին, յորմէ կախի՝ ըստ իմիք յառաջ բե-
րել՝ ուրանամ. և ի բացայայտութիւն տրոհմանս՝ ասեմ.
այո՛ ճշմարիտ է, թէ որ սահմանեալ և պատահական է՝
չկարէ երբէք լինել պատճառ էութեան դերագոյն էակին,
բայց ո՛չ այնպէս է նկատմամբ ծանօթութեան միոյն ի միւ-
սոյն. այո՛ էութիւնն Աստուածային չունի իմն ներքին
յարաբերութիւն առ արարած առ ի լինել, և չկախի ի-
նոցանէ, զի կայ զօրութեամբ էութեան իւրոյ. բայց ո՛չ
ծանօթութիւն դերագոյն էակին՝ նկատմամբ մեզ. քանզի
կայ հարկաւոր զօդ և յարաբերութիւն ընդ մէջ սահմա-
նելոյն և անսահմանին, արարածոց և արարչին. զի չկա-
րով զօրութեամբ բնութեան իւրեանց՝ ի հարկէ կացցեն
զօրութեամբ այնր՝ որ գերագոյն գոլով և հարկաւոր, միշտ
կայ զօրութեամբ բնութեանն. միթէ մարթ է բառնալ
գկապ և գյարաբերութիւն՝ որ կայ ընդ մէջ ներգործու-
թեանն և պատճառի, քա՛ւ լիցի. և լինէր այդ ընդդէմ
ուղիղ դատման մտաց և ուղիղ սկզբանց բանականու-
թեանն. ուրեմն եթէ է սահմանեալն, պարտ է զի լիցի և
անսահմանն, Աստի կայ հարկաւոր զգ և յ-ը-ք-ե-ն-ի-ն,
քանզի յառելդ սահմանեալ, հարկաւ գաղափարդ այդ
յինքեան ենթադրէ կամ յառաջ բերէ զգաղափար ան-
սահմանին. զի որ սահմանեալ է՝ պակասի յանսահմանու-
թենէ. նմին իրի սահմանեալ է, քանզի անսահման չէ.
զրօրինակ՝ որ ասէ զանձնէ հիւանդ և տկար լինել, նմին
իրի հիւանդ է կոչի, քանզի ոչ է ողջ առողջ. որ տկար
կոչի՝ նմին իրի տկար է՝ քանզի չէ զօրաւոր. գաղափարդ
սահմանեալ՝ է պակասութիւն կամ իրը մասն անսահմա-
նին. զրօրինակ անկար է պակասութիւն կարողութեան,
Աչսպէս գոլով յաշխարհի սահմանելեացն և արարածոց,
հարկաւ մտօք բերցուք յանսահմանն և յԱրարիչն։

---

# ԳԼՈՒԽ Ե.

ՃԼ. Ասացաք ի նախընթաց գլխոջ՝ թէ բնութիւնք
իրաց յիրերաց կախին, այսինքն մինն ի միւսմէ յառաջ
գայ. և թէ հարկաւոր էակն միայն կայ զօրութեամբ
բնութեանն. և արարածքն ո՛չ այսպէս, այլ կան զօրու-
թեամբ բնութեան հարկաւոր էակին։ Սոյն այս կախումիս
ոմանց յոմանց, բնութեանցն ի բնութեանց, զոր խզճիւ
և բանիւ մտացս և զգայութեամբ գիտեմք, տայ մեզ
առիթ խօսելոյ զպատճառացն անդամ իրաց ի յետին
գլխոջ էակաբանութեան։ Նա զի հիմն գիտութեանն է
ծանօթութիւն պատճառաց, առանց որոյ չէ ուսումն՝ որ
գիտութիւն կոչիցի տիրապէս. և մի միայն ուսումն՝ որ
ունի զակզբունս ընդհանուրս և անփոփոխելիս, և ճանաչէ
զիրս պատճառաւքն իւրեանց։ Ուստի զներկայ գլխոջ ար-
ժան դատիմք բաժանել յերիս յօդուածս. նախ՝ թէ քա-
նի՛ իցեն տեսակք կախման միոյ իրին ի միւսոյն, և թէ
զի՛նչ է ծանօթութիւն և իմաստ պատճառին. երկրորդ՝
թէ ներգործական պատճառն ունի յինքեան զզօրութիւն
պատճառի և գործողութեան ընդունակ. երրորդ՝ թէ
վերջին վախճանն անգամ ունի յինքեան զճշմարիտ յառ-
կութիւնս պատճառի. վասն որոյ

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

ԹԱՂԱԴՍ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆ ԻՐԱՑ, ԱՌԱՋԱԻՈՐՈՒԹԵԱՆ
ՊԱՏՃԱՌԱՑՆ ԵՒ ՏԵՍԱԿԱՑ ՆՈՑԱ

ՃԼԱ. Այն ինչ յորմէ յառաջ գայ այլ իմն ինչ, կոչի
-ա-յ-ե-ն, և որ յառաջ գային՝ -ա-յ-ե-ա-ց-ե-լ կամ յա-ե-լ։ Ա-ռ ի
լինել միոյն -ա-յ-ե-ն և միւսոյն -ա-յ-ե-ա-ց-ե-լ, պարտ է նախ՝

ղի որ սկիզբն է՝ յառաջագոյն լիցի իւիք այնմ որ սկզբնաւորի. զորօրինակ՝ արեգակն քան զլոյս իւր, և աղբիւրն քան զվտակ իւր։ Երկրորդ՝ պարտ է ղի բնականապէս ունիցին զկապ -ինչքն ընդ -ինչքն---ւթ-ը. ոչ զօրէն կամիան և կապոյն, զոր ունի առաջին քար չինուածոյ իրիք ընդ այլ քարինս, կամ հաստ համիւչի ընդ միմեանս. այլ բնականապէս և ներքին զօդ և ներգործական զորձոզութիւն -ինչքն ի -ինչքն---ւթ-ը իւր։ Երրորդ՝ ընդ -ինչքն և -ինչքն---ւթ-ը պարտ է զի իցէ զանազանութիւն իրական. քանզի ընդ մէջ իւրանց ունին զփոխադարձ յարաբերութիւնն։ Աստուք պարտ է -ինչքն յառաջագոյն լինել իւիք -ինչքն---ւթ-ը. երբակի լինել կարէ առաջաւորութիւնս այս -ինչքն. նախ առաջինն ժամանակաւ. երկրորդ՝ առաջինն բնութեամբ. երրորդ՝ առաջինն սկզբամբ։ Նախ՝ ի-ն-ւ-- առաջին կոչի իրն քան զայլ ինն, յորժամ մինն ժամանակաւ յառաջ է քան զմիւսն. զորօրինակ հայրն ժամանակաւ յառաջագոյն կայ քան զորդին, դարուն քան զամառն, տիւն քան զգիշեր, Ադեքանդր քան զկնասար ևն. երկրորդ՝ բ-ն--ր-ն-ք առաջին կոչի ոք քան զայլ ոք, յորժամ սա թէև ի նմին ժամանակի կեայ՝ յորում նայն, բայց զգոյութիւնն բնութեան ընդունի ի նմանէ և կախի ի նմանէ տիրապէս. զորօրինակ հայրն ներկայմամբ որդւոյն՝ որ ընկալաւ զբնութիւն իւր յնտոյ ի հօրէ անտի, ճառագայթք ծագին յարեգակնէ անտի. երրորդ՝ առաջինն -ինչքն բ-ն-ք կոչի ինն քան զայլն, յորժամ սա ելանէ յայնմանէ միայն՝ առանց վերջաւոր լինելոյ նմա ո՛չ ըստ ժամանակի, և ո՛չ ըստ բնութեան. զորօրինակ վտակին ջուր ըստ բնութեանն է նոյն ընդ իւրոյ աղբերն ջրոյ, մի և նոյն գոլով՝ և ո՛չ ըստ ժամանակի առաջինն կարէ կոչիլ աղբիւրն քան զջուր վտակին, զի ի նոյն ժամանակի կան ջուրք թէ աղբերն և թէ վտակին, զի մի և նոյն ջուր են։ Բայց միայն՝ զի արտաքին ինն կայ կախումն վտակին յաղբերէն՝ մի միայն ըստ -ինչքն առաջին կոչի ըստ որում ի նմանէ բղխի իբրև ի սկզբնէ իւրմէ։ Յարտրաժս չառնանի երբէք արգեամբ յատկութիւնս այս առաջնաւորութեան



-ինչքն. և որ յայլ գերագոյն խորհուրդ հաւատոյ տիրապէս -ինչքն է՝ յարարած ս-ո-ծ-- կոչի. քանզի տան արարածք և հաղորդեն զբնութիւն իւրեանց որդւոցն զանազան ի բնութենէ ծնողին, բայց ո՛չ այսպէս է ի ներահրաշ խորհուրդ Սրբոյ Երրորդութեան, յորոյ շնորհս և առիթ միայն գամք յայս զանազանութիւն ս-ո-ծ-ւ և -ինչքն։ Զի հաւատքն Աստուածային մեզ ուսուցանեն թէ յամենասուրբ Երրորդութենէն է հայր՝ յորմէ ի յաւիտենից ծնեալ է որդին. հայրն է առաջին քան զորդին ըստ առաջնաւորութեան -ինչքն. և երկոքինն են առաջին, նոյնպէս նկատմամբ Հոգւոյն սրբոյ, որ բղխի ի նոցանէ, կամ որ է ի նոցանէ և ի նոսին ըստ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին (*). ուստի առ ի լինել ուրուք -ինչքն այլոյ՝ չէ պարտ զի ի-ն-ւ--, բ-ն--ր-ն-ք և -ինչքն-ք ի միասին լիցի առաջին այնմ, այլ բաւական է՝ զի մի միայն -ինչքն-ք լիցի. Բայց այդ հնարաւոր և անփոփոխ է Աստուածային բնութենէն, զի անսահման է կատարելութիւն Աստուածային բնութենէն, և մարդկային մտացն անհասանելի. միով գործողութեամբ նոյն բնութիւնն հօր հաղորդի որդւոյն և հոգւոյն՝ մի և նոյն ինչալով. այդ առեմք անհնար է արարածոյն բնութենէն՝ որք միշտ են ներգործութենէց իւրեանց ո՛չ -ինչքն, այլ ս-ո-ծ--.

ՃԼՐ. Պ-ո-ծ-ն է այն ինչ՝ որ բղխէ զայլ ինչ, կամ զօրութեամբ իւրով յառաջ գայ ներգործութիւն ինչ կախմամբ բնութենէն, և զանազանութեամբ ի պատճառէն. ուստի ներգործ-ն-ւթ-ն է այն ինչ՝ որ բղխի և չէ բնութեամբ մի և նոյն ընդ ս-ո-ծ-ն։ Պ-ո-ծ-ն պարտ է՝ զի միշտ յառաջագոյն լիցի քան զներգործ-ն-ւթ-ն իւր ժամանակաւ և բնութեամբ և սկզբամբ. թէ ո՛չ երբեմնք, գոնէ բնութեամբ և սկզբամբ, Եւ խորին՝ որ ընդ մէջ պատճառին և սկզբան այս է, զի ամենայն պատճառ է սկիզբն, բայց ո՛չ ընդհակառակն ամենայն սկիզբն է պատճառ. քանզի որպէս առաջք՝ սկզբնաւորեալն չկախի

(*) Ցառաջաբանսն։

բնութեամբ ի սկզբանէ, և չէ արտաքին գործողութիւն, այլ ներքին ի նոյն բնութեան սկզբանն կատարեալ։ Մերթ ներգործութիւնն բնութեամբ կախի ի պատճառէն և արտաքս քան զբնութիւնն կատարի։

ՃԼԹ. Այսպէս որոշելով զիմաստ պատճառի ընդհանրապէս՝ որոհետ զնա յերկուս դասս, այսինքն ի պատճառն ք-ա-ր-ի-, և ի պատճառն յ-ո-ք-ո-ւ- կամ ե-ղ-ե-ր-ա-կ-ա-ն։ Ք-ա-ր-ի- պատճառն է գերագոյն էիցն էակ ևնթ, կամ Աստուած, որ և կոչի պատճառ յինքենէ, անկախ ևն. քանզի կատարեալ է ի յատկութիւնս իւր, և այլքն ամենայն ի նմա, նովաւ և ի նմանէ են։ Ի նմա կեաամք, նովաւ կեամք, և ի նմանէ առեալ եղաք և մեք։ Մի միայն տիրապէս և իսկապէս անուանդ պատճառի նմին վայել է ի գերագոյն աստիճանի. և յերկրորդականս՝ որ ինչ է բարութեան և կատարելութեան՝ յինքեանն ունի զայդ ի գերագոյն աստիճանի մերկացեալ զամենայն պակասութիւն։ Եւ մնացս մերոց անհաս գոլով, անսահման իսկ ճեայ. միշտ ի չգոյէ ի գոյ ածելով զամենայն, զորմէ գեղեցիկս գրէ Սուրբն Թովմաս (*) ։ Զամենայն կարգադրեալ պատճառս ներգործութիւնն յատէտ կախի յառաջին պատճառէն, քան յերկրորդական պատճառէ. քանզի երկրորդական պատճառն ոչ գործէ՝ եթէ ոչ զօրութեամբ առաջին պատճառին ։ Զայս այսպէս ի մտի ունելով, դամբ հաստատել՝ եթէ երկրորդական պատճառքն բաժանին ի ներքինն, ի ներգործականն կամ յե-ֆ-ե-կ-տ-ի-վ-ն, ի ն-ր-ի-ն և ի ե-ր-ե-ւ-ա-կ-ա-ն։ Իւրաքանչիւրն ի սոցանէ ունի ընդ իւրև և զայլ որոհմունս, զորս ըստ կարգի և առանձ չխոհմութեան բացայայտեսցուք։

ՃԼԳ. Ներքինն պատճառն կոչի այն ինչ կամ այն ոք՝ որ բնական և իրական գործողութեամբ իւրով ինչ ինն գոյութիւն կամ ներգործութիւն ի լոյս հանէ. զորօրինակ անդրիագործն է ներգործական պատճառ, և անդրին ներգործութիւն իւր։ Բաժանի ի պատճառն ք-ա-ր-ի- և ի պատճառն ք-ա-ր-ի-. այսինքն յորժամ կամ բնա-

(*) Բոլանդական թիւն Աստուած. Ա. Բ. Բ. Գ։



կան գործողութեամբ կամ զօրութեամբն ի կատար հանէ ինքերգործութիւնն. զորօրինակ կոտորել ձեռամբ իւրով զփայտն, և կամ հրամայել այլոցն՝ զի զայդ արասցեն։ Ըստ այսմ է և պատճառն ք-ա-ր-ի- և ե-ղ-ե-ր-, և պատճառն գ-ո-ր-ծ-ո-ղ-. զորօրինակ ջուրն չիջուցանէ զհուր ք-ա-ր-ի-. և գ-ո-ր-ծ-ո-ղ՝ եթէ ընդ ջրոյն պատահմամբ միացեալ ինչ չիջուցէ զհուր. զորօրինակ հողմն ։ Ի ք-ա-ր-ի- և գ-ո-ր-ծ-ո-ղ. զի գլխաւորապէս գործէ՝ որ զօրութեամբ անձինն գործէ. իսկ մեքենականն կամ գործիքականն, յորժամ զօրութեամբ գլխաւոր պատճառին է գործեալն, բայց ո՛չ անմիջապէս, զորօրինակ գրչաւն գրել։ Ձ-ա-ն-ձ-ի- և ի գ-ր-ո-ւ-թ-ի-ն, ի հ-ո-գ-ի- և յ-ա-ղ-ի-. զորօրինակ հուրն՝ որ մերձեալ ինելի ցամաք հարկաւ զիջանէ. ո՛չ այսպէս մարդ, որ ի գործողութիւնս իւր՝ միտքն հարկաւոր պատճառ է ներկայ առարկային, նոյնպէս աչք՝ տեսանելեացն. բայց կամք մարդոյ ազատ է։ Սոքա և սոցին նման բազմամբ՝ պատճառք կոչին ի մերձաւորն և ի հեռաւորն, ի կատարեալն և յանկատարն, այսինքն ի մտնաւորն և ի թէականն ևն։

ՃԼԵ. Ե-ղ-ե-ր-ի- պատճառն է, յորժամ անդրիագործն վաստակի մուծանել յայն կերպ՝ զոր եղեալ իցէ ի մտի. զորօրինակ եթէ գործեսցէ զանդրիս Աստանդիանոսի մեծի, կերպ և ձևն Աստանդիանոսի համարի գոգցես ներգործիչ պատճառ՝ որ ի գործ մղէ զանդրիագործն յայդ։ Իսկ ն-ր-ի-ն է, յորժամ նոյն նիւթին՝ յորմէ կերտի արձանն, առեալ լիցի իբր շարժիչ անդրիագործին։ Հուսկ ուրեմն գ-ո-ր- կոչի ևս վախճանն, քանզի մղէ գճարտարապետն կազմել զտուն, որ առաջին գոլով ի միտս՝ վերջին գտանի միշտ ի գործողութեանն։

ՃԼԶ. Բայց պատճառքդ այդոքիկ գործել չկարեն, եթէ ոչ ունիցին և զհարկաւոր զիթէութիւնն. զորօրինակ բնական որամադրութիւն խառնի, այսինքն՝ ցամաքութիւնն և մերձաւորութիւնն ի հուր, որք կոչին ն-ե-ր-ի-ն-ա-կ-ա-ն գ-ո-ղ-ք. այնպէս ամենայն պատճառ առ ի գործել, ունի զիւր սեփական թէութիւնն՝ որով հասանել կարիցէ

ներգործութեանն . Սմին իրի յերիս վիճակս ամենայն պատճառն պարտի գտանիլ , այսինքն յ---ԷՒ էւթ-ն հե-----ր , և յ---ԷՒ էւթ-ն դէյ---ր , և չէւէ-ր էւթ-ն . զորօրինակ թէ ոք դնէ ի մտի չինել տուն , ահա ---ԷՒ էւթ-ն հե-----ր . հատանէ զքարինս և զայլ պիտանիս ի գործել գչինուածն , ահա ---ԷՒ էւթ-ն դէյ---ր . յորժամ չինէ արդեամբ զտունն և կատարէ , ահա գտաւ չէւէ-ր էւթ-ն . այսպէս զամենեցուն ։

---

## ՅՕԳՈՒԱԾ Բ .

### ՑԱՂԱԳՍ ԹԷ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿԱՄ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆ ՈՒՆԻ ՅԻՆՔԵԱՆ ՉԻՍԿԱՊԱԼՍ ՁՕՐՈՒԹԻԻՆ ՊԱՏՃԱՌԻ ԵՒ ՁՐՆԴՈՒՆԱԿՈՒԹԻԻՆ Ի ԳՈՐԾԵԼ

ՁԼԷ . Են ումանք ի փիլիսոփայից՝ որք փութան ջանան ուրանալ զանուն և զկար զօրութեան գործելոյ երկրորդ պատճառացն , մի միայն ասելով Աստուած է պատճառ գործողութեանց . որով զառաքինութեանցն զՀին և զբարուց իվեր տապալել մտքիաց ին , և զաղիւք զաղրութեանցն բանալ դիւրին պղտոյզ , ի ձկտս բարութեան հասարակաց և անհատից ։ Ոչ քանզի և Աստ՝ Բերրոնեայ կասկածողի զէութենէ և զգոյացութենէ իրացն հետեւելով՝ ասացին թէ ո՛չ միայն չիք ին զօրութիւն պատճառելութեանն յարարածս , այլև անուանդ դ---ւէ և ծանօթութեան նորա՝ միտք մեր և խիղճ մտաց անհաս են ։ Եւ զորս ասեն ոմանք՝ պատճառս կոչեն և ներգործութիւն , չեն այլ ին բայց միայն շարունակութիւն կամ կարգ միոյն զկնէ միւսոյն , առանց երբէք կախելոյ միբառէս միոյն ի միւսոյն , կամ աղգողական զօրութիւն միոյն ի միւսն , Եւ ևս թէ արարածքն առիթ են միայն , Որքան անմիտութեամբ ոքա զայդ մոլար վարդապետութիւն ջանան մուծանել ի բանական փիլիսոփայութեան ուսումն՝ յայտ անտի է , զի ասեն՝ թէ զգայութիւնք մտ-



դոյ զայլ ին չտեսանեն , զորօրինակ յանդրիագործութեանն , բայց միայն յետ մարմարիոնի ելանել արձանն , զկնի հարց հետեւիլ որդւոցն ։ Որոշելով զգայութիւնն ի բանաւարութենէն , և զի՞նչ է որ միջնորդութեամբ զգայութեանն հասուցանէ զմեզ ի գիտութիւն ճշմարտութեանց . միթէ ի տեսանել աչաց զմանուկն ի գիրկս մօրն , հետևի՞ թէ մանուկն ինքնին զօրութեամբ բնութեան իւրոյ բուսեալ իցէ ի գիրկս մօրն . միթէ որ չէն՝ կարի՞ երբէք լինել է , ո՞չ ապաքէն տեսաք թէ ոչինչն չկարէ ինքեան տալ զէութիւնն . իսկ թէ զամենայն աւուրս տեսանելմբ , զի գոյութիւնք , որք չէին՝ լինին , քարինք՝ յարձանս դառնան , թուղթք սպիտակք գրեալք խօսին , միթէ այնքան անմի՞տ եմք չիմանալ զայդ քան ներգործութեանցն գպատճառս . այդ ցնորելոցն են կատակք և չաղփատփութիւնք ։ Ուստի ընդդէմ սոցա դնեմք զհետեւեալ

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Թէ՝ էւէր-դ-ի դ---ւ --նի չգր--ի և չգ---ն-ի-ի
ի-դ-ի-ս .

ՁԼՀ . Վկայութեամբ մտացն խղճի դիտեմք՝ թէ հոգին մարդոյ ի ներքս ի մեզ գործէ , խորհի , յետս կայ ի խորհելոյ , կամի , յետս կայ ի կամելոյ , շարժէ զիւր մարմին՝ զձեռս , զմատունս և զայլ անդամս . ընդդէմ զգայական կրից մարմնոյ կայ և արդելու զնա ի բնական գործողութենէն , քաղցեալ , ծարաւի մարմինն , և հոգին ուզնի զնա , չարչարէ զնա . զայս ամենայն յառաջ բերեն խիղճ մտաց մարդկան . և են ճշմարտութիւնք՝ որոց իւրաքանչիւր ոք չկարէ ընդդէմ կալ ։ Այնպէս զի ո՛չ միայն ճանաչեն միտք՝ թէ գործէ ի ներքս ի մեզ հոգին մեր այլև իւրով կարողութեամբն և գործէ և ո՛չ այլոցն ։ Երկրորդ՝ բնական զգայարանք մեր վկայեն մեզ՝ թէ որպէս մեք ի մեզ անդ գործեմք , նոյնպէս և որք մեզ նմանք են մարդիկ գործեն . զի տեսանեմք ըզմարդիկ դնել քար ի քարի վերայ և յօրինել չինուած

հոյակապս։ Եւ մանկունք զնոյն գործեն ի վողոցս և խաչատան չինուածովքն իւրեանց։ Երրորդ՝ գործողութիւնք մարդկայինք՝ մի միայն քանզի ի ներքին զօրութենէ ներգործիչ սկզբանն ծագին և ելանեն՝ մարդկան սեփական են, և ֆ-ղ-ն ֆ-ղ-ն համարին. ընդհակառակն յորժամ առանց կամացն որոշելոյ գործողութիւն ինն թէ ի մարդն պատահի, չկոչի այդ ֆ-ղ-ը-ղ-ն ֆ-ղ-ն այլ յաւէտ ֆ-ղ-ը-ղ-ն ֆ-ղ-ղ։ Զորրորդ՝ բառնայր ի մէնջ էական առորոգելին աղաւաղութեան, և բարձեալ աղաւաղութեան՝ բառնային ի մարդկային գործոց՝ բարութեանն և չարութեանն նոցա պատճառ. բառնայր իսպառ առաքինութեանն զարդ. բառնային և բարութեանց և չարութեանցն հաստուցմունք. վիճակ առաքինեացն թշուառագոյն լինէր, և չարեացն երջանկագոյն։ Իսկ արդ յաչխարհի կան և բարութիւնք, կան և չարութիւնք. դիտեմք թէ՝ Աստուած է՝ որ գործէ ի մեզ իբրև յառիթ գործողութեանց. ո՛չ ապաքէն իրաւամբ՝ Աստուծոյ առիպեաք տալ զամենայն չարեացն զպատճառ։ Այս ընդդէմ Աստուածային բնութեան է, և ընդդէմ ուղիղ սկզբանց բանական մտաց և աղդեցութեան բանական բնութեանս։ Աստուած բարի է, վրէժխնդիր է անօրէնութեանց և վարձահատոյց բարեացն առաքինութեանց. այսոքիկ ձայնք են և աղաղակք բնութեանս՝ ընդդէմ որոց չկարէ կալ կամ խանգարել զնոսա, ո՛չ մոլութիւն բարուց և ո՛չ հնութիւն դարուց։ Չինդերորդ՝ ամենայն բնութիւնն արարած խնդրէ և հակի ի վախճանն՝ որոյ վասն առեղծաւ ներքին իմն փափաքմամբ սրտի. արդ զիա՞րդ դատարկութեամբ և անգործունեայ բնութեամբ անդ ի վախճանն նկատել կարիցէ, թէ չունելի լինքեան զգօրութիւն դուն գործելոյ միջնորդութեամբ արդեանցն ունանց հասանել յայդ իւր վախճան։ Վեցերորդ՝ նկատմամբ կենդանեացն զնոյն սուիպիմք առել, թէ պատճառք են գործողութեանց իւրեանց՝ թէև հարկաւորապէս գործելով և ո՛չ ազատութեամբ, բարոյական չիցեն գործք նոցա. բայց միշտ են գործողութիւնք՝ որք ելանեն ի պատճառէ անտի անանձնական



բնութեանն. զիա՞րդ գեղեցիկս յօրինեն մեզ զիարիսխն ի հատաւէտ և յանուշահոտ և ի վտիրի շուշանաց և ի ծաղկանց գաշտացն և հովտաց։ Չիա՞րդ անխոնջ վաստակին յամարայնի միաբան գունդք գունդք մրջնոցն զաւուր պարէնն յարդարելով և նախ պատրաստելով։ Եօթներորդ՝ զնոյն պարտիմք ասել զանոգի իրացն, առ ի՞նչ հուրն զանտառս կիզեալ տոչորէ՝ թէ չունի զգօրութիւն այրելոյ։ Առ ի՞նչ ի լերինս Աւրարատեան և Կովկասու ոչ բուսանին դալարիք և տունկք, և յանդս և յարտորայս հունձք լինին, և ծառք պտղաբերք և բարձունք։ Այս է կարգ և օրէնք բնութեան եղեալ յիմաստութենէ անտի Աւրարչին. զի իւրաքանչիւր արարած ըստ բնութեանն բղխեացէ զներգործութիւն. ո՛չ երբէք դայլք ծնան զոչխարս, և ո՛չ արջք զկորիւնս առիւծուց. այսպէս ամենայն տեսակ արարածոցն։ Ասասի անմտութիւն է ասել թէ մի միայն Աստուած է պատճառ գործողութեանց, և արարածքն առիթք են կամ գործիք, այլ բնական և հաղորդեալ զօրութեամբն ինքեանց յԱստուածուստ իւրաքանչիւրն ըստ բնութեանն իւրում ունի զներգործութիւնս իւր։ Ասա գեղեցիկ յարէ Սուրբն Թովմաս «Ընդդէմ իմաստութեան է յումեքէս գտանիլ իրիք ի գործս իմաստնոյն. քանզի եթէ արարածքն ոչինչ իրիք կարողք են ի գործել, և մի միայն գործողն Աստուած է, ի զուր կարգեցան առ ինամանէ այլքն, զի արասցեն զներգործութիւնս իւրեանց»։ Հուսկ ուրեմն զայս գիտել պարտ է, թէ այս՝ ամենայն արարածք ընդունին յառաջին պատճառէն զկար զօրութեան գործելոյ, բայց աստի չհետևի՝ թէ սոքա բնաւին գործիք լինին կամ առիթք Աստուածային գործողութեանց, այլ բնական զօրութեան. ըստ այսմ և գոյութիւնք իրաց յԱստուծոյ են առեղծեալք, բայց չհետևի անտի թէ այդ գոյութիւնք իրաց են գոյութիւն Աստուծոյ։ Այլ ըստ իմիք թագաւորն առեղծանէ և կացուցանէ զոք իշխան քաղաքի ուրուք և տայ նմա զամենայն իշխանութիւն վարելոյ զայդր քաղաքի զընակիչսն, բայց զոր ինչ գործէ իշխանն, այս՝ իշխանու-

թեամբ թագաւորին գործէ, բայց ո՛չ կամօք և զօրութեամբ բազկի թագաւորին, այլ իւրովն սեփական գործողութեամբ. և թէ գովութեամբ վարիցէ զպաշտօնն, ինքեան հասարի. իսկ թէ դարովելի իցէ, նոյնպէս և անտի չիք իմն երբէք դարովանաց կամ դրուատանաց թագաւորական անձին. զնոյնն զԱստուծոյ։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՃԼԹ. Ծանօթութիւն ներգործական պատճառի վայելէ միայն Աստուածայինն բնութեան, և Աստուածայինն է։ Ուստի արարածոց ո՛չ վայել է. թէ ոչ՝ երկրորդական պատճառքն լինէին իբրև զԱստուածս փոքրիկս, որպէս երբեմն ի հեթանոսս։ Երկրորդ՝ գործելն կամի զանազանի զօրութիւն. իսկ արդ արարածքն չունին զայդ զօրութիւն. ուրեմն չկարեն պատճառ կոչիլ. այսպէս՝ Մալեպրանշ։

Պատասխանեմ՝ զանազանելով ծանօթութիւն ներգործական պատճառի վայել է միայն Աստուածայինն բնութեան, այսինքն ներգործական՝ բացարձակ, և անկախ պատճառի՝ ընդունիմ. երկրորդական պատճառի՝ ուրանամ։ Առ հետեւեալն, նոյնպէս զանազանելով, ասեմ, ո՛չ ամենայն զօրութիւն գործելոյ վայել է Աստուծոյ, այլ միայն բացարձակապէս և անսահման զօրութիւնն, ո՛չ թէ չափաւորեալ զօրութիւնն, որով արարածքն կատարեն զգործողութիւնս իւրեանց։ Առ Բ. նոյնպէս ասեմ ամենայն գործելն ո՛չ ունի պէտս անսահման, և ամենակար զօրութեան. այլ այն գործելն ևեթ, որ ի չգոյէ ի գոյ ածէ զիրս։ Ա.յո՛ ո՛չ ոք ասէ ևեթ երկրորդական պատճառքն այնպիսի զօրութեամբ գործեն, զի զչէան և զգոյն՝ յէս և ի գոյս դարձուցանիցեն, այլ միայն ըստ չափու զօրութեան, ի լոյս ընծայեն և ներգործութիւնք յարարածոցն. արձակել զքարն ի վեր, գրել, ընթեռնուլ են, չունին պէտս անսահման զօրութեան։

Առիպեն՝ թէ ըստ առածին՝ Աստուած է որ առնէ զամենայն, ուրեմն երկրորդական պատճառքն ոչինչ։



Պս. Զանազանելով. Աստուած է որ առնէ զամենայն՝ անմիջապէս՝ ուրանամ. միջապէս՝ դարձեալ զանազանեմ. ֆիզիքական համընթացութեամբն՝ ընդունիմ. բարոյական համընթացութեամբ՝ ուրանամ, Զորմէ բազումս յԱստուածաբանութեան անդ ի խնդիրն համընթացութեան (ՄԺԵ. ՄԺԶ.)։

Առարկեն՝ Բ. մարմինք ինքնին անտարբերք են ի շարժումն, ուրեմն անընդունակ են ի գործել։

Պս. Ընդունիմ զնախընթացսդ. ժխտեմ զհետեւեալն և զհետեւութիւնն. Զէ պարտ զի միշտ գործողն հարկաւ կամ զօրութեամբ բնութեանն կենցէ, այլ երբեմն և սա որ գոյացութեամբ պատահական է՝ յատաջինն ի հարկաւոր գոյութենէ կարէ կախմամբ և հաղորդութեամբ զօրութեանն իսկ գործել, ապա թէ ոչ՝ հետեւէր՝ թէ և ո՛չ յորժամ Աստուած կամիցի շարժել զբնութիւնն արարած՝ կարէ գործել ինչ ինձ. այսպէս մեք տամք զշարժումն անոգի քարանց, և շարժին մինչև հատանի զօրութիւնն շարժիչ հաղորդեալ ինձ։ Ո՛վ անգիտասցէ թէ հուրն այրէ, ջուրն շիջուցանէ, հոգմունք զմեծամեծ նաւս ձգեն ծովուց ի ծովս, ևն։

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ԹԱՂԱԴՍ ԹԷ ՎԵՐՋԻՆ ՎԱԽՃԱՆՆ ՈՒՆԻ ՅԻՆՔԵԱՆ ՀԱՏԿՈՒԹԻՒՆ ՊԱՏՃԱՌԻ

ՃԼՓ. Են ոմանք ի փիլիսոփայից՝ որք ժխտեն զայդ ճշմարտութիւն առաջարկութեանս, և են որք ընդունին. նոքա յաւէտ առ չարութեան կամացն իւրեանց, և ո՛չ թէ առ պակասութեան ըմբռնման մտացն. մեք ընդ ուղիմ վարդապետս ճշմարտութեան յարիմք ի փաստս՝ որք ջատագովք առաջարկութեանս ցուցանեն զնա. վասն որոյ ասեմք։

---

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

### ԹԷ ՓՐԿԵՍ ԼՒՆԻ Է ԳՈՐԾԱ ՆԻՒԹԱՑԱՆ

ՃԽԱ. Նախ սահմանի վերջին վախճանն « այն ինչ յոյր չնորհս գործողն գործէ ինչ » . արդ ասացաք թէ այն ինչ կոչի պատճառ որ կամ գործողութեամբ , և կամազդեցութեամբ իւրով հասանէ ի ներգործութիւն իմն . իսկ արդ վերջին վախճանն է այն ինչ որ ազդեցութեամբ իւրով միայն ասյ հասանել բազմայ ներգործութեանցն. ուստի , Յունական փոքրագոյնն , է ճշմարտութիւն անժխտելի թէ իմաստնոյն է գործել վասն վախճանին . իսկ արդ եթէ գործողութիւն իմաստնոյն ի վախճանէ անտի է , հարկաւ շարժիչ և առիթն գործողութեան՝ վախճանն գաստիցի . ուրեմն ևն : Եւ ի մանաւորի զինչ է այդ որ զբազումս գրկէ ի բազում անցաւոր և չգոյական բարեացն ի յայրս և ի փառարս ճգնազգեաց կենօք զոհս և զգիշեր վարելոյ զխոչտանգելի կեանս՝ է մի միայն վախճանն Բազումք՝ թէ և չարութեան իցէ վախճանն՝ զսպեն զանձինս իբազում իրաց , և ներգործութեանց , որոց պատճառն է մի միայն վախճան նոցա : Դարձեալ վախճանն՝ որպէս ասացաք , է՛ առաջին ի միտս , և յետին ի գործողութիւնս . զօրութեամբ այսր վախճանի , և ի չնորհս մի միայն վախճանի ընտրութիւնք լինին միջոցաց և նպաստից , կարգելն զղանազան միջոց , այնպէս զի մին միւսոյն նպաստեալ՝ հասուկ ուրեմն ժամանել մարթասցին ի վերջին վախճանն : Են գործողութիւնք առանձինն , որք ամենևքեան ընկալան զշարժիչ զօրութիւնն ի վախճանէ անտի : Դի՛ք առաջի աչաց , թէ թագաւորն Գանդիոյ ի մտի եդեալ է նուաճել պատերազմաւ զԱնգղիա , վախճան պատերազմին լիցի նուաճել զԱնգղիա . քանի՛ քանի՛ գործք և խոչտանգանք յանձն առնուցուն՝ քանի քանի ծախք և ղէնք և նաւատորմիղք յարդարեսցին են . զի՛նչ ինչ է , որ ներգործէ յայդքան գործողութիւնս , վախճանն : Ա. ի՛նչ այդքան գործողութիւնք՝ վասն վախճանին ,



### ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՃԽԲ. Նախ՝ ասեն . վախճանն՝ ըստ ձայնին՝ նշանակէ յետին . իսկ արդ որ յետինն է չկարէ զօրութեամբ լինել առաջին , զի լինելը ընդդէմ բնութեանն . ուստի չկարէ լինել պատճառ : Երկրորդ՝ բնութիւն պատճառին յառաջել պարտ է քան զբնութիւն ներգործութեանն , զի սա անտի բղխէ . իսկ արդ բնութիւնն վախճանի հետուն բնութեան ներգործութեանց , ուրեմն չկարէ բղխել ներգործութիւնս . ուրեմն և ո՛չ պատճառ :

Ա. Ա. ասեմ զանազանելով . վախճանն նշանակէ յետին , այսինքն զկրունկն գործոյն՝ ընդունիմ . նշանակէ յետին , չունելով և չտպատուելով զղօրութիւն և զազդեցութիւն իւր ի միտս՝ որովք կամք հասանեն ի նա՝ ուրանամ . նոյնպէս զանազանելով զփոքրագոյնն՝ առ փառաւոր ասեմ զանազանելով . լինելը ընդդէմ բնութեանն , զի որ յետինն է՝ չկարէ լինել առաջին , ըստ կարգի տեղեաց և գոյացութեանն՝ ընդունիմ . ըստ կարգի զօրութեանն և գործողութեանն՝ ուրանամ . և ուրացեալ զհետևեալդ և զերկրակացութիւն՝ ի բացայայտութիւնն ասեմ : Ա. յո՛ առաջաբանութիւն նիւթական բառիւք վերոյ՝ նշանակէ զյետինն . բայց այնպէս յետին , որ յինքեան ունի զղօրութիւն շարժիչ կամայ մարդկան՝ զոր յինքն ձգէ և տայ վաստակիլ բազում առ ի առաջուին : Դարձեալ յետին է ի գործողութեանն և յարդիւնս , բայց առաջին է ի միտս . այնպէս զի՝ առնել զնիթակայն գործել մինչև հասանիցեն ի նպատակ անդ իւրեանց : Ըստ այսմ՝ որ յետինն է , չկարէ առաջին լինել գոյացութեամբ՝ ընդունիմ . զի ո՛չ երբէք որպին՝ որ յետին է գոյացութեամբ , առաջին լինի գոյացութեամբ քան զՀայրն : Բայց խոխր մեծ է ընդ կարգ բնութեանն և կարգ բարոյական վախճանին : Ա. առաջ իսկ է վախճան ամենայն արարածոց . զի՛նչ , մինչ առնեմք , թէ չունի իմն զօրութիւն Ա. առաջ ի շարժելն զմարդ յառաջ քան զհասանիլ մարդոյ ի վախճան իւր ,

քան լինի. և կամ մարդիկ առաջին լինին քան զԱստուած, այնու ալ վախճան է նոցա։

Առ Բ. առեմ. բնութիւն պատճառին յառաջել պարտ է քան զբնութիւն ներգործութեանն, եթէ պատճառն և ներգործութիւնն իցեն ընդ նոյն տեսակաւ՝ ընդունիմ. եթէ այլևայլ տեսակօք իցեն՝ ժխտեմ. քանզի սասցաք՝ թէ վախճանն նախ ծնանի ի միտս, և ի կարգի ծանօթութեան առաջինն է, և նոյն ծանօթութիւնն՝ որ է մտաւորական՝ մղելով զկամս, հասանէ ցարդիւնս գործողութեանն՝ որ է ֆիզիքական, և ծանօթութիւնն մտաց չինայ յայնժամ այլ ևս տեսական, այլ միացեալ ընդ ներգործութիւնն ի թանձրացեալ իրն՝ լինի յետին ի գործողութեանն, բայց միշտ մասամբ իւիք է առաջին և ի միտս, և մասամբ յետին։ Բայց զայսմանէ և զտեսակաց նորին՝ բազում ի բարոյական փիլիսոփայութեանն։

## ՀԱՄԱՌՈՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՄՈՆԱԻՈՐ

### ԲՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ա՛ՈԳ. Ի վեր ընծայեցանել զմիտս մեր՝ մանկունք, արդարև արժան է մեզ ասել. զի գիտութիւն գերագոյն քան զամենայն գիտութիւն բնական է այն՝ որ զգերագոյնն էակէն ճառէ։ Ի բնական Աստուածաբանութեան ժամանեալ ուսումն՝ միտք մեր, որպէս հաւատարիմ ճառագայթ՝ դիւր արձգակն, նոյնպէս ծանուցանեն և ցուցանեն զծընունդն՝ յորմէ ելին, զԱստուած զէակն ամենայն բարութեանց՝ և զպատճառն ամենայն եղելոցն։ Որքան ծանրագոյն է և ներքագոյն առարկայն և նիւթ Աստուածաբանութեանն գիտութեան, այնքան մանկանցդ փութոյ և ուսանդեան և ուշիմութեան պէտս ունի նորին ուսումն. և որքան է երկրպագելի, նոյնքան վաստակ ծաղկափըթիթ տիոցդ անանձրևելի։ Զայս առաջի ունելով աչացդ, վերին նպաստիւք նորին գերագոյն էակին մատիցուք յառաջիկայ գիտութիւնդ։

Ա՛ՈՒԹ. Նախ ուրեմն ծանուցանեմք, թէ թշնամիք այսր գիտութեան են այլ և այլք։ Են՝ որք մուօք և կամօք չընդունին զգերագոյն էակն զԱստուած, և կոչին անաստուածք. յորոց ոմանք անաստուածք գրականք, և ոմանք անաստուածք բայաստականք լսին. նոքա են՝ որք թէ և վկայէ խիղճ մտաց նոցա, թէ գոյ Աստուած, և թէ և յայտնեալ իցէ նոցա ծանօթութիւնդ այդ, բայց և այնպէս ընդդէմ խղճի մտաց չհաւատան յԱստուած. իսկ ոմանք՝ այնոքիկ են, որք ո՛չ երբէք լուան յումեքէ, և ո՛չ իսկ միտք նոցա վկայեն նոցա զԱստուծոյ գոյութենէն (որք երբէք չկարեն լինել. քանզի բնութիւնն չկարէ զրկիլ յայդպիսի ընդհանուր սկզբնէ, թէ Աստուած է արարիչ ամենայն եղելոցն), են՛ն և այլք բազում անաստուածք, յետնեալ դարուս թշուառութեան սակի,

որք մուօք և իրաւամբ Աստուածապէտք դասին, բայց արդեամբ և կամօք այնպէս կեան, և այնպէս խօսին և այնպէս վարին, որպէս թէ չիցէ լուեալ նոցա զԱստուած, և ո՛չ զգոյութիւն Աստուծոյ. որք ուրանան զԱստուած և զգոյութիւն նորա, կոչին ---:---: Իսկ որք ընդունին զԱստուած, բայց կամ չփոթեն զնա ընդ արարած և ընդ տիեզերս. և կամ ընդունին զգոյութիւն Աստուծոյ, բայց ասեն զնա լինել ծնունդ մուտ ևթէ, և ո՛չ թէ կայ առարկայ Աստուածային արտաքոյ մուտս. և կամ ևս վախճանաւ չճանաչելոյ զԱստուած՝ յայտնապէս ուրանան զփաստս, որով ցուցանի ճշմարտութիւն գոյութեանն Աստուծոյ, ասելով՝ անհիմն լինել նոցա. սոքա կոչին Ա---:

Մեք ընդդէմ սոցա ամենեցուն ի նպաստ պարգեւին բնական լուսոյն՝ ցուցցուք զպարգեւատուին Աստուծոյ ըզգոյութիւնն. զորօրինակ ի նպաստ ճառագայթիցն նշմարբեմք զարեգակն. ապա մերձագոյն ևս մատուցեալ ըստ կարի մուտս՝ յանհասանելի բնութիւնն, առցուք զկատցուչն Աստուածային էութեանն, յի՞նչ կայանայ. ապա զԱստուածային զներքին առորոգելիս և զբացարձակս, և ապա զարտաքին գյարաբերականն: Ուստի յերիս գլուխս արհեմք զընդհանուր ուսումնդ Աստուածաբանութեան. նախ՝ զԱստուծոյ գոյութենէ. երկրորդ՝ զԱստուածային էութենէն և զներքին առորոգելեացն նորա. երրորդ՝ զարտաքին առորոգելեացն, որով դ դ-ն իմանամք զերիս խընդիրս, թէ Աստուած ի՞նչ է, ո՞րպէս է, և ի՞նչ գործէ. որք և պարունակեն զամենայն բնական Աստուածաբանութեան դրօվանդակութիւն: Վասն որոյ

# ԳԼՈՒԽ Ա.

## ՑԱՂԱԳՍ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ

### ԱՍՏՈՒԱԾ ՉԻ՞ՆՉ Է

ՁԻՆ. Յառաջ քան զԱստուածս լինել ի հաստատութիւն առաջարկութեանն՝ արժան համարիմ ծանուցանել նախ՝ թէ են ոմանք, որք ասեն թէ գոյութեանն Աստուծոյ հաստատութիւն կամ ճշմարտութիւն բնական լուսոյն մուտ ոչ ցուցանի, այլ այդ գործ և ճշմարտութիւն ի դերբնական յայտնութենէն անտի իսկապէս առանձին մեզ: Են և ոմանք որք ասացին, ցուցանիլ բնական ը---ն ճըշմարտութեանդ՝ ըստ իմիք, բայց ո՛չ իսկապէս և առանց սխալանաց, կամ ցուցմամբ հատաքաքանութեանն:

Գիտելի է երկրորդ՝ թէ ծանօթութիւն գոյութեան Աստուծոյ՝ ոչ է ի կարգի ճշմարտութեանցն որք ---կամ է յ---ընդ յայտնին մուտ մերոյ, այլ յայնցանէ՝ որք դը-դե- բանաւարութեանն նպաստիւք ճանաչին՝ և ցո-ցի-ք է յետոյ (կթ), յորժամ ի ծանօթութենէ ներգործութեանն դամք ի ծանօթութիւն պատճառին, զոր և խառն կոչեն ցուցումն: Ասի յայտ է՝ թէ ո՛չ ոք ի մարդկանէ, ըստ որում բանաւարութեան կարողութեամբն յարդարեալ, կարէ զուրկ գտանիլ ի ծանօթութենէ այսր դերագոյն էակին. ո՛չինչ ասելով զկարծեացն բազմաց, որք պնդեն ցուցանել թէ ծանօթութիւն դերագոյն էակին՝ է մին ի բնածին գաղափարացն: Յորմէ ո՛չ ոք զրկեալ գտանի՝ թէ և յանուսուս անդ. նորոյ աշխարհի և կամ յԱստրալիա վայրենութեամբ ծնեալ կեցցէ. և այսուիկ միայն նուաճին անաստուածին՝ թէ՛ տեսականացն և թէ՛ գործնականացն գաւք:

Գիտելի է երրորդ՝ թէ ցուցումն ճշմարտութեան գոյութենանն Աստուծոյ երբակի սկզբամբ լինել կարէ, կամ

ի բացայայտ սկզբանց, կամ ի ֆիզիքական այսինքն բնական սկզբանց, կամ ի բարոյական սկզբանց՝ որ նոյն է ընդ մեթաֆիզիքական, ֆիզիքական և բարոյական ճշմարտութեան։

Յուցանի ճշմարտութիւն առաջարկութեանդ, նախ՝ ԴՐ-ՖԻՀՒ-Ի-Ն Է--Ի-Ե՝

## ԹԷ ԳՈՅ ԱՍՏՈՒԱԾ

ԱԼՕՁ. Յառնէն մեր գոյ Աստուած, իմանամք լինել դերագոյն իմն էակի, որ ոչ է ի կարգ եղելոցն կամ առեղծուածոյն. ուստի նախ ցուցանեմք զգոյութիւն այսր դերագոյն էակին կամ Աստուծոյ՝ առեալ ի բնութենէ անտի արարածոցն զհիմն այսպէս։ Գոյ դերագոյն իմն էակ ի յաւիտենից, որ կայ զօրութեամբ բնութեան իւրոյ, միայն անառեղծ, յաւիտենական, հարկաւոր, անսահման, և անփոփոխ և ամենակատար՝ յորմէ ամենայն պատահական իրքն կամ արարածքն կախին և են. իսկ արդ ի մէջ արարածոցն չիք իմն էակ, որ այդպէս իցէ, կամ նմին նմանիցի. ուրեմն նա միայն է պատճառ ամենայն արարածոց, և սկիզբն ամենեցուն, որում տամք զանուն Ա.ՍՏՈՒԱԾ։

Ցուցանեմ զմեծագունեն առաջին մասն. պարտ է գոլ ԲԷՐ-Է-Յ Ն-Ն Ե-ՍՀ Ն Յ--Ի-ԵՒՆՆ, զի եթէ չլինէր էակ իմն դերագոյն ի յաւիտենից, ամենայն իրք ոչինչ լինէր՝ կամ որպէս յառաջն ո՛չինչ՝ նոյնպէս և յետոյ ո՛չինչ, զի յոչնչէ ո՛չինչ լինի. և կամ որ նոյն է, պատճառն ոչինչ՝ ունի զներգործութիւն իւր ոչինչ. իսկ արդ նոյն իսկ հակառակորդք գոյութեանն Աստուծոյ ընդունին թէ աշխարհն, և արարածք չեն ոչինչ. ուրեմն ի հարկէ պարտին ընդունել զգոյութիւն էակին իրիք, որ հարկաւորապէս կեայ ի յաւիտենից. թէ ո՛չ ընդդէմ բացայայտ սկզբանց մնացեալ դիմէին, զի անխախտելի ճշմարտութիւն է՝ թէ յոչնչէ ոչինչ լառնել կարէ, Արդ որ ի յաւիտենից կայ, և ո՛չ իսկ կարէ յինքն ընդունել դադարութիւնն ի յաւիտենից։ Քանզի գերագոյն էակն կայով մի միայն ՁԲ--



Ր-Ի Բ--Ր-Ն և ՀՒՒՆ, չէ պարտ զի առեղծանիցի. քանզի հակասութիւն լինէր, յինքենէ կալ՝ և յայլմէ առեղծեալ լինիլն, էր լինել՝ յառաջ քան զլինելն. քանզի յինքենէ լինէրը, և ի միասին միանգամայն յայլմէ լինէրը, որ անընդունելի է։ Այլ յինքենէ կալ՝ չէ այլ ինչ բայց միայն կալ զօրութեամբ բնութեանն, և ո՛չ իսկ ընդունի զառեղծիլն յինքենէ. քանզի լինէր դարձեալ յառաջ քան զլինելն, որ ընդդէմ ուղիղ մտաց է։ Եւ ևս լինել և կալ յինքենէ և ինքնին՝ նշանակէ անկախ գոլ յումեքէ, եթէ անկախ, ապա և անփոփոխ յումեքէ։ Դարձեալ եթէ յաւիտենականապէս յինքենէ, ապա հարկաւորապէս ևս. զի պատահականն միայն անստորբեր է ի լինել և ի չլինել, և չունելով զբաւական պատճառ լինելոյն, նմին իրի կոչի և պատահական։ Եւ ևս որ ի յաւիտենից կայ՝ զօրութեամբ բնութեան իւրոյ միայն և հարկաւորապէս կայ և անկախ, պարտ է զի զամենայն բարութիւնս յինքեան ի գերագանց աստիճանի պարփակիցէ։

Յուցանի Բ. մասն մեծագունեն. ամենայն արարածքն պատահականք ի գերագոյն էակէս յայտնապէս ընդունիլ պարտին զգոյութիւնն։ Զի նախ արարածք կոչին, եթէ արարածք, ապա յարարչէն. երկրորդ՝ ամենայն արարածքն բնութեամբ պատահականք են և անստարբերք ի լինել և չլինել։ Արդ ոչ ո՛չ յինքենէ առեղծան, ո՛չ յոչնչէ, և ո՛չ ի կարելութենէ անտի իւրեանց. ո՛չ յինքենէ՝ զի յառաջ քան զլինելն ոչինչ էին, և հետևէր անառեղծութիւնն ևս թէ էին յառաջ քան զլինելն. ո՛չ յոչնչէ՝ քանզի ոչինչ պատճառին և ներգործութիւնն ոչինչ է. և ո՛չ ի կարելութենէն՝ քանզի լառագոյն իմն է գոյութիւնն քան զկարելութիւնն, և ասոյր զոր ոչն ունէր, քանզի գոյութիւնն չէ կարելութիւն. նա մանաւանդ սա նուաստագոյն է քան զնա։ Ուստի ստիպիմք առնել՝ թէ զորս արտաքին զգոյութեամբ արարածս տեսանելիք, և զմեզ վկայութեամբ խղճի մտոյ ի ժամանակի առեղծեալ՝ ի գերագոյն էակէդ յայդմանէ առեղծեալ եմք, և արարած. և այդ միայն ցուցանէ զգոյութիւն հարկաւոր էակին՝ այն է Աստուծոյ, և ամին իրի ասացաք

թէ ի ծանօթութենէ պատահական իրաց գոնէ ի ծանօթութիւն գերագոյն էակին (տես ՃԻՉ. ՃԻԼ. ՃԻԿ.). քանզի անտեսանելի է կապն ընդ մէջ նոցա և յարմարութեան. և սկիզբն անխախտելի է այս պատճառին. թէ պատահականն է՝ հարկաւ լինի և հարկաւոր էակն. Յաւցանէ փոքրագոյնն, թէ ոչ այնպէս կեղծեցոյն այդպէս է. քանզի ամենայն ինչ՝ որ յարարած է՝ և նորին արարածքն պատահականք գոլով, և փոփոխականք և առհմանեալ, չկարեն յաւիտենական լինել և կալ հարկաւորութեամբ, այլ կամաւոր յայլմէ էութենէ՝ իբր ի պատճառէ. և զայսմանէ չիք իմն տարակուսի նոյն իսկ առ անաստուածս, բայ ի ցնորելոցն։ Ուրեմն հետեւի՝ թէ գոյ Աստուած՝ յորմէ ամենայն արարածք՝ հարկաւորութեամբ բնութեանն կացող, յաւիտենական, կատարեալ և անսահման։ Սուրբն Թովմաս, բաց յայլոցն վաստից յառաջ բերէ և զերկուս այլ ապելով, ամենայն մարմինք և արարածք անտարբեր են ի շարժուն. իսկ արդ մարմինք ինքնին չեն ընդունակ ի շարժիլ, և շարժին. ուրեմն է՝ որ շարժէն զնոսա, սկիզբն անշարժ՝ աղբիւրն ամենայն գործողութեանց։ Երկրորդ վաստն է առնել ի ծանօթութենէ գերագոյն էակին, որ անհաղորդելի և անսահման մնայ. քանզի ապէ. ամենայն արարածք ունին զկատարելութիւնս առհմանեալս, կամ՝ ամենայն արարածք ունին զսահման. իսկ արդ որ առհմանեալն է, միշտ ցուցանէ դյարաբերութիւն առ այլ ոք՝ յորմէ ծագեալ իցէ. զորօրինակ վտակն առ աղբիւրն. նոյնպէս առհմանեալն առ անսահմանն. ուրեմն, այսպէս յառաջ քան զամենայն քայլն Տերտուղիանոս, Աստուած, Ճշմարիտ կարծիսն։ Եւ Օգոստինոս (*) «Տեսին, ասէ, հեթանոսք, թէ որ ինչ փոփոխի՝ չկարէ Աստուած գերագոյն լինել, տեսին զամենայն տեսակ յամենայնի փոփոխական, որ էն՝ որ գինչ այդ իցէն՝ չկարէ լինել թէ ոչ՝ յայտնանէ՝ որ ճշմարտապէս էն, որ չհաղորդի ումեք»։ Եւ Դամասկացին Յովհաննէս «Աստուած ամե-

(*) Օգոստ. Յաղագս քաղաքին Աստուծոյ. Գիրք Ը. Գլ. Զ.



նայն, ասէ, քանզի փոփոխելիք են՝ նաև պարտ է զի արարած իցեն. արդ թէ արարածք, առանց տարակուսի ի ճարտարապետէն յօրինեալ կամ յարարչէն։ Իսկ արդ առեղծողին պարտ է զի անառեղծ լիցի. զի եթէ և նոյն առեղծեալ էր, ապա յայլմէ ումեքէ առեղծեալ լիցի և այդպէս առացուք մինչև յանառեղծ ումն հասանիցեմք։ Ուստի մերթ առեղծողին պարտ է զի անառեղծ լիցի, ամենևին և անփոփոխ է։ Եւ այս ինչ ո՞ այլ ոք կարէ լինել, բայց միայն Աստուած

## ՅՈՒՑԱՆԻ ԲՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԻՒՆ
## ԹԷ ԳՈՑ ԱՍՏՈՒԱԾ

ՃԻՉ. Զարմանալի ներդաշնակութիւն չորից եղանակաց տարերց, կարգադրութիւն և դէղեցկութիւն տիեզերաց, և միոյն ի միւսոյ կախումն, պահպանութիւն տեսակացն, և սերմից կենդանեաց, օժանդակութիւն միոյն առ միւսն, այնքան անթիւ և անհամար առաւելացն պարք, միոյն ընդ միւսովքն անփոփոխելի շրջանակութիւն, ամենեցուն անշփոթ կարգ և տարեկան շրջան, անխախտ օրէնք՝ որով տիեզերս ամենայն հոլովեալ գառնայ ընդ նոյն չափ, տիս և գիշեր, լոյս և խաւար, ծովք և երկիր, լերինք, անտառք և հովիտք, միաբանութիւն անհամար իրացն՝ բնութեամբ և բարուք հակառակացն, համեմատութիւն ամենայն մասանց աշխարհի ընդ միմեանս, գիա՞րդ գեղեցիկ իւրաքանչիւրն հատատարիմ ծառայէ բնական եղեալ իւրոյ վախճանին. ո՞րպէս յարմարութեամբ բնութիւնն կարգեալ է զմիջոցս ի վախճանն համեմատեալ։ Բանականքն զբանական գործս իւրեանց, կենդանիքն առանց բանի զբնութեան գործս իւրեանց, անկենդանքն գիա՞րդ ի ժամու գտուրս իւրեանց կատարեն ի հոլովիլ անդ աշխարհիս։ Աչքիկ և այլ բազումք արարածոցն կարգ և ներդաշնակութիւն զճարտարապետն ցուցանեն իւրեանց զամենիմաստ՝ իբր անսահման հանճարով և գիտութեամբ։ Տիեզ՝ մարդկան սեռի հոգեղէն գործոցն անգամ նախատես. զի որքան ևս ընդդէմ բնութեան կարգի գործս հնարեսցեն եղծիչս, սակայն և այն-

ուիկ անխոով պահէ զարարած բնութիւնն, և զկարգն հաստատ և անվրդով. որպիսի՝ ուրեմն իմաստութիւն իցէ ճարտարապետիս այսորիկ մտաց, որ զամենայն խորհուրդս մտաց տեսանէ հանճարեղականն և կազմէ զկարգ բնութեանն հաստատ և անշեղս յայդպիսի արգելմանց. ամին իրի և գաստապարտեաց Աստուածն զՆեթանոս՝ զի չունէին երբէք պատճառս արդարանալոյ յանհաստատուածութեանն մեղաց, յասելն (*) «Զի գիտութիւն Աստուծոյ յայտնի է ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա. զի անեքերեւոյթքն նորա ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն է միշտնենաւորութիւնն և զօրութիւն և Աստուածութիւն նորա, զի ոչ գտանիցեն ամենեւին տալ պատասխանի. Զի ծանեան զԱստուած և ոչ իբրև զԱստուած փառաւորեցին կամ գոհացան», Եւ Ենորհալին ի լուսոյն կարգաւորութենէ միայն, արեգական նիւթ հաւաքեալ, լուսինն ի տիզ լուսոյ առեղծեալ, և աստեղայց պարս յօրինեալ, որով օրհնի առեղծողն էից, ի բանաւոր պաշտօնէից, Նոյնպէս գեղեցիկս զրէ Պիկերոն (**) մինչև արժանի չհամարիլ մարդ կոչել զայն ոք, որ գիտեալ զգեղեցիկ կարգ բնութեան, պատահմամբ եղեալ գտանի զայն. քանզի «Ո՞ ոք զայնպիսին մարդ ասիցէ, որոյ տեսանել զճշդրիտ չարժմունս երկնից այդչափ հաստատուն, զաստեղային կարգադրութիւն, և այդքան զամենեցուն ընդ միմեանս գյարմարութիւն և զկապ, ժխտիցէ ամենեւին ընտրաս գոլ իմն բանի, և պատահմամբ եղեալ ասիցէ զնոսա, որք որքան իմաստութեամբ վարին արգելօք, ա՛յնչափ իւիք իմաստութեամբ վերահաս լինել մարթիմք. Մինչ երբ մեքենայիւք իմն տեսանելիս չարժիլ երին՝ որպէս գնոսակին, կամ ժամուն և այլոց բազմաց, չհամարի՞մք զայդոսիկ միմիայն գոլ գործողութիւն մտաց. Եւ մերթ նշմարելիք ուժգինս զարմանալի արագութեամբ երկնից չարժել և գառնալ և անվրէպ ընթա-

(*) Հռոմ. Գլուխ Ա. 19։
(**) Յաղագս բնութեան Աստուածոց. Գլ. 28։



ցել և կատարել զչրջանակն փոփոխական գերազանց առաջնութեամբ և պահպանութեամբ ամենայն իրաց, տարակուսի՞մք արդեօք՝ թէ նոքին ո՛չ միայն իմաստութեամբ լեալ իցեն, այլ և գերագոյն Աստուածայնոյին իմաստութեամբ։ Աւրժան է արդ՝ ի բաց առնել նրբութեան վիճաբանութենէն՝ տեսութեամբ իմն ի գնոսին մատչիլ գեղեցկութեան նոցին իրաց, զորս Աստուածային նախախնամութեամբ կոչեմք հաստատեալս», Աստ յարէ ի մտանատրի զլերանց և զբլրոց և զդեղոց նոցա, զդաշտաց և զհովտաց և զվայելչութենէ նոցա, զդարնանային զարգուց բովանդակ արարած բնութեանն, բիւրազգի ծաղկանց, և՛ն. և՛ն. յորոց ամենեցուն յառաջ բերէ զդոյութիւն գերագոյն պատճառի բնութեանն անհասանելի և ամենակատար իմաստութեամբ զարդարել։

## ԲԱՐՈՑԱԿԱՆ ՓԱՍՏԸ ՈՐՈՎՔ ՅՈՒՅԱՆԻ ԴՈՑՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ՁԽՐ. Զի՛ք իմն ազդ՝ թէև յետին դասին իցէ ի կրքութենէն կարդի՝ որ չիցէ ընկալեալ զԱստուած ոք, Այսպէս գրէ Պլուտարգոս. «Թէ ի տար աշխարհս երթիցես, գտցես արդեօք քաղաքս առանց պարսպաց, առանց դրոց, օրինաց, տանց, չինուածոց, զուրկս ի պատկերագիր դրամանց, ի հրահանգական և ի թատերական խաղոց, անգէտս ամենեւին. բայց ո՛չ ոք երես զքաղաքն ինն զուրկ ի տաճարացն և յԱստուածոց, որ չընկիցին զպաշտօն աղօթից, երդմնեցութեան և Աստուածոյն պատգամաց, որ ո՛չ ի բարեացն պատճառ զոհիցէ, ոչ գուն գործիցէ զանուրբս ի սրբոց որոշել։ Ո՛չ ոք երբէք երես (*)», Եւ Պիկերոն՝ «քանզի չի՛ք իմն, ասէ, ազգ երբէք և ո՛չ վայրենաբարոյ, ո՛չ գազանամիտ, որ թէպէտև անգիտանայցէ զորպիսի Աստուած ունել արժան է. բայց պարտ է զի ունիցի՝ քան զի՛ք (**)», Նոյնպէս և Սենեքա ասէ.

(*) Ընդդէմ Պլատոնի։
(**) Յաղագս Օրինաց. Գ. Ա. Գլ. Ը։

«Առ մեզ հաստատութիւն ճշմարտութեան է միով իրիք դատիլ յամենեցունց, որպէս ընդ մէջ բազմանալ լինել Աստուածոց, կարծիք են առ ամենեսին չէ և չէ աղդիմն զուրկ եղեալ յօրինացն և ի բարոյից, որ հաստատ՝ թէ չեն Աստուածք ոմանք, ընծայեսցէ (*)»։ Ըստ վկայութեան այսոցիկ ամենեցուն հեթանոսաց՝ ընդհանուր տրամադրութիւն կարծեաց և մտացն ամենայն ազանց մի միայն կարէ ծագիլ յընդհանուր սկզբանց մտացն և յըզգացմանց բանական բնութեանն, որ ըստ որում ամենայն ոք բանական է՝ հաւասարապէս յայսմիկ դատանի յամենեսին։ Այս այնպէս ճշմարտութիւն է հաստատեալ և բանական, որ չընդունի երբէք զնչոյլս փաստից և տարակուսանաց ինքեան հակառակս. զի ի բնութեան անդ կայացեալ ամենեցուն։ Վկայեն մեզ բազ ի բացայայտ և անտեսանելի զգայմանց և սկզբանց մտաց և բանական բնութեանս, հնախօսութիւնք անգամ անցելոյն դարուց և ազանց՝ ոչ միայն զմի և զմեծ Աստուած բնութեան ուղղիղ սկզբանցն մտաց, և խանդարեալ, և այդ՝ աւազ տկարութեան և անհաւատութեան մարդկային բնութեանս, ամենայն ազգ զիւրն ունէր Աստուածս պաշտպանս. որչափ քաղաքք, այնչափ և Աստուածք բնտանեկանք, և գոգցես ըստ անձանց էին և Աստուածք պահապանք իւրեանց։ Բանական բնութիւնն մտօք առ Աստուած կոչէր ի նոսա, և մտութիւնք կամացն բազումք՝ զձայն բնութեանն խանդարէր ի նոսա. և ըստ Տերտուղիանոսի՝ բնութեանն ազատ գտեալ ի մտութեանց՝ յանակնկալ դիպողութիւնս բնութեանն՝ չդիմէր առ Աստուածս կամաց՝ ասելով, ոչ Աստուածք պահապանք, ոչ Աստուածք քաղաքիս. այլ առ ճշմարիտն՝ ասելով իւրաքանչիւրոց բացագանչել ոչ Աստուած, ոչ պատճառ պատճառաց, Աստուածն մեծ, ոչ Նախախնամութիւն Աստուածային բարեբար, բարեխնամն ղ Աստուած, ողորմած Աստուած, յոր

(*) Թուղթ 117։



ամենեսին՝ յանձուկ և ի դժբաղդ ժամանակի գտեալ՝ խոսէր բնութիւնն, և ճառագայթն բնական ի ճշմարիտ աբեգակնէ ծագեալ շաւիղ թողոյր ճանաչելոյ սկզբանն, յորմէ ծագեաց։ Այսպէս չկարէ բանական բնութիւնն աղաւաղեալ ի ծանրութենէ և ի թեւլադրութենէ անտի մոլութեանց կամացն՝ ոչ ցուցանել զարարիչ իւր, վկայութիւն հոգւոյն յառաջադոյն քրիստոնէի։ Եւ Աբիսաոէ՝ (*), ամենայն ոք ասէ՝ թէ աստուածք ընդ իշխանութեամբ են՝ այսինքն մեծին Աստուծոյ։ Զի՞նչ աւասցուք ընդհանուր կրօնիցն սկզբանց ամենայն հեթանոսաց զապագայ կենաց, զհատուցմանէ բարեացն և առաքինեաց և զապագայ տանջանացն ամբարչաց. ո՞չ ապաքէն բազումք վասն բնական երջանկութեան անտի կենաց բնական լուսոյն՝ զրկեցին զանձինս ի զգայական կենաց, և համեստութեանն զհետ գնացին և արդարութեան և խոհեմութեան, են. են. չունէին գոլ վարձահատոյց և վրէժխնդիր անաչառ յանտի կեանս, միթէ այնքան անմիտ էին, ասա ի զգայութեանց զանձինս զրկէին, թէ և անդ ընդ օգս ցնդիլ։ Ապաքէն չիք իմն այնքան զօրաւոր որ զսպէ զմարդիկ յառ ի մեզն չընկղմելոյ, քան զերկիւղն մեծին Աստուծոյ, որ զաշխարհ յինքեան ունի, և յաշխարհի է, և աշխարհ ինամանէ և ինա և նովաւ կեայ։ Նոյն իսկ ամբարիշտն ի վերջին կէտ մահուն սրտիւ ապաշաւէ, դառնագոյնս հառաչէ, ցաւի և ողբայ զչիմարութիւն իւր։ Զի՞ է՝ զի այդպէս ճշմարտապէս խոսի, փափաքի ճշմարտութեանն. քանզի ցրուեցան կամացն մոլութիւնք և կիրք մարմնոյ, և բանական բնութեանն տուաւ ազատութիւն, զոր յինքեան ունի յայտնել։ Այդ կնքեմք դիտաստաւանութիւնդ ասելով. հաւանութիւն այնքան զանազան ազանց ի մի ինչ, ըստ Կիկերոնի՝ է օրէնք բնութեան։ Դարձեալ հաւանութիւնդ այդ զգեցրագոյն էակէն՝ է ներգործութիւն հաւաստի, հաստատ և ընդհանուր՝ որ խնդրէ և ծագէ ի հաւաստի, ի հաստատ և յընդ-

(*) Յաղագս Հաստատապետութեան. Գիրք Դ. Գլ. ԺԵ։

հանուր պատճառէն, որ է բանական բնութիւն։ Այլ զոր ուսուցանէ մեզ բանական բնութիւնն, ո՛չ երբէք կարէ ստերիւրիլ, քանզի ընդդէմ լինէր Աբարչին առորոգելեացն՝ իմաստութեանն, արդարութեանն և նախախնամութեանն . ուրեմն պարտիմք դաւանիլ թէ ի հարկէ գոլով պատահականի էութեան՝ լոյն և էութիւնն հարկաւոր, ամենիմաստ և արդար. այսմիկ էութեան տամք զանուն ԱՍՏՈՒԱԾ և ՓՅՈՒՌ ԱՇԽԱՐՀ։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՔԿՈՒԹԻՒՆՔ

ԸՆԴԴԷՄ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՈՐ Է ՀԱՒԻՏ ԵՒՆ ԵՒ ԴՈՒՀԱՆ ԵՒՆ ՅԱՆՑՈՒՆԻՆ .

**Ձևթ.** Առարկեն նախ՝ չի՛ք իմն ընդդիմութիւն ասել զբովանդակութիւն իրաց զոլ շարունակութիւն իմն միոյն ի միւսն անսահման. ըստ սկզբանն բնութեան, ապականութիւն միոյն է ծնունդ միւսոյն։ Երկրորդ՝ բովանդակութիւն իրաց՝ է անփոփոխ, և հարկաւորապէս կայ ըստ գոյացութեանն, թէ և ըստ որպիսութեանցն կամ պատահականացն փոփոխական. քանզի գոյացութիւնն ոչ կարէ բղխել զայլն. և չունչէ ոչինչ միայն լինել կարէ։

Առ Ա. պատասխանեմք. ժխտեմ զնախընթացսն. քանզի մասունք իւրաքանչիւր շարունակութեանս այսորիկ են միշտ սահմանեալ՝ և սահմանեալն բնութեամբ, չկարէ ինքնին լինել անսահման. շարունակութիւնն միշտ ունի զյարաբերութիւնն առ սկիզբն և միջակաւորն իւր, երկրորդն առ երրորդն են են, մինչև հասանել ի վերջինն շարունակութեան, բայց միշտ ընդունել կարէ ի վերայ դեռևս ոչ այլոյ իրիք. սմին իրի ըստ սկզբանն, սահմանեալն յաւելեալ ի սահմանեալն՝ միայ սահմանեալ, և չկարէ լինել անսահման՝ որ (անսահմանն) չէ ընդունակ առաւելման կամ նուազման։ Առ փասան ասեմ. ապականութիւն միոյն է ծնունդ միւսոյն. որ ունի զծնունդն բնութեան՝ չկարէ լինել անսահման. զի ճանաչէ զժամանակ, յորում ո՛չ էր երբեմն։ Դարձեալ ապականութիւն միոյն է ծնունդ միւսոյն. այսինքն ծնունդ անկախ յապականութենէ անտի՝ այլ գործողութեամբ Աբարչին, և ո՛չ թէ ապականութիւնն լինի ներգործական պատճառ ներգործութեանն, Առաջ գայդ իմաստասիրացն չարաչար ի կիր արկանի ի միտս նորա սիրացն ոմանց. զի քանզ դիտեն թէ, կիզեալ փայտին՝ լինի սկիզբն մխոյին, ապականեալ մարմնոյն՝ լինի սկիզբն և ծնունդ հողոյն, այսինքն մարմինն ի հող դառնայ, ոչ թէ մարմինն զհողն առեղծանէ։

Առ Բ. ասեմ. բովանդակութիւն իրացն է անփոփոխ, և կայ հարկաւորապէս ըստ գոյացութեանն. ըստ սեռականին՝ ուրանամ, ըստ սեռի գոյացութեանն՝ դարձեալ զնաղանեմ. է անփոփոխ ի պատահական, և յերկրորդ պատճառաց՝ ընդունիմ. է անփոփոխ՝ նոյն իսկ նկատմամբ կամեցողութեան առաջին պատճառի կամ Աստուծոյ՝ ուրանամ։ Նկատմամբ Բ. մասին առաջարկութեանն՝ կայ հարկաւորապէս, այսինքն զօրութեամբ բնութեանն՝ ուրանամ. հարկաւորապէս, այսինքն մինչև կամք իցեն Աստուծոյ զի գոյացութիւնն կեցցէ և պահեսցէ զօրէնս բնականս էութեան իւրոյ՝ ընդունիմ։ Եւ առ փասան՝ զի գոյացութիւն զգոյացութիւն ո՛չ բղխէ, զանազանեմ. առաջին անստեղծ գոյացութիւնն՝ ուրանամ. ստեղծեալ գոյացութիւնն՝ ընդունիմ. նոյնպէս չունչէ ոչինչ լինի, այսինքն ի [illegible] ընդունիմ. ի [illegible], և այդ Աստուածային զօրութեամբն՝ ուրանամ (Ղ.)։ Որ հարկաւորապէս կայ, չէ պարտ զի իւիք պակասիցէ. արդ զգոյացութեամբ այսց փորձեմք՝ գոյութեանցն ոմանց յապականութիւն գառնալ, և ոմանց նորոգութեամբ այլապէս լինել և ոմանց չունչէ ստեղծանիլ, որ յերեկն և յերանդն չէր. ուրեմն չկարէ հարկաւորութեամբ կալ, և անմտութիւն է զայդ ասել։ Եւ Աստիկեանք և Պղատոնականք, որք զնիւթն յաւիտենական ասացին և զաշխարհ, այնու վրիպեցան ի ճշմարտութենէ, քանզի զերկուս սկիզբն ունէին, զայրն ներգործական և զայրն կրաւորական. և քանզի լաւ է գործել քան զչգործելն, նմին իրի աւելին թէ՝ կատարելութեան Աբարչին պէտք էին՝ զի նիւթն

կրաւորական լինելը, զի տիրապէս գործեացն Աբարիչն։

ՃԾ. Առաքելն Բ. ոչ է ընդդէմ ենթադրել զաշխարհ յաւիտենական, որպէս բազում փիլիսոփայք ասացին ընդ Արբոյն Թովմայի. ուրեմն կարելիք իսկ ասել, թէ ինքնին կայ, այսինքն հարկաւորապէս։

Պատասխանեմ. բազումք վրիպեցան ի ճշմարտութենէ, վասն որոյ և մեք պարտիմք վրիպիլ՝ ուրանամ։ Բայց ուղղապէս պատասխանեմ. ոչ է ընդդէմ ենթադրել զաշխարհ յաւիտենական՝ ուրանամ զնախանձացող և գհետեւութիւնն, առ բացայայտութիւն ասեմ. Սուրբն Թովմաս ասաց (*) թէ մի միայն հաւատով զաշխարհ ցուցանելիք՝ ի ժամանակի ստեղծեալ, և ոչ երբէք ցուցմամբ, այն է ի մտաստափրական սկզբամբ։ Ա. յո՝ վասն Արբոյն Թովմայի ասէ խմաստուն Ծիրանաւորն Ճերտիլ, կարծեմ թէ Սուրբն Թովմաս ոչ խաոիս, ճշոիս և իսկապէս հաւնարերցաւ զընդդիմութիւն յաւիտենականութեանն աշխարհի զոլ անցուցանելի. բայց չասաց թէ յերոյ ևս անցուցանելի մնասցէ։

ՃԾԱ. Առաքելն ընդ Քանթ. Ծանօթութիւն Աստուծոյ է ենթակայական, այսինքն ի հոգիս մեր, զոր յերոյ գերագոյն իմն էակի հաւաքաբանութեամբ տամք (բայց յանիրաւի). քանզի ցուցումն ի թուաբանականն և յզգայարանաց առարկայն լինել կարէ միայն. Բ. նոյն ինքն Աստուած ցուցանէ և յայտնէ մեզ զինքն. ուրեմն չունի պէտս այլոց վաստից։

Պատասխանեմ. է ենթակայապէս, բայց ունի զգրական առարկայն և յառաջ գայ յիրական առարկայէն Ծանօթութենէդ այդ՝ ընդունիմ. այլապէ՝ ուրանամ. առ փաստն՝ զանազանեմ. ցուցումն լինի ի հաշիւն միայն՝ ուրանամ. ի հաշիւն անդամ՝ ընդունիմ. ոչ զգայարանք միայն կամ միտք մարգոյ են աղբիւրք ճշմարտութենէն, և ունին զսկզբունս իւրեանց ճշմարիտս, այլև է բանն մնաց, կամ բանաւորութիւնն, որ հաւաքաբանութեամբ նոյնպէս

(*) Մատն Ա. Վիճ. ԽԶ. Յօդ. Բ։



գճշմարտութիւնս ցուցանէ մեզ, Որպէս յայտ անտի է ի տրամաբանութենէն, քանզի անտնօրինելի է մեզ ունել գծանօթութիւն ահմանելոյն, առանց ի վերինն անդ ներքնելոյ ծանօթութիւն գերագոյն էակին և անսահմանին. և գործիքնակ ասէ քաջն Ֆենելոն՝ զբացատականն գրականաւն ի միտ առնումք, որպէս զմոլութիւնն՝ առաքինութեամբն, զխաւարն՝ լուսով, զդիշերն՝ տուընջեամբ, Զիա՞րդ հնար է մեզ ճանաչել զպակասութիւն իրին՝ առանց ճանաչելոյ զնոյն իրն՝ եթէ ամենայն արարած բարութիւնք և բնութիւնն ահմանեալք են, ապա ունին գյարաբերութիւն առ անսահմանն. զահմանեալն ճանաչել և զանսահմանն անգիտանալ՝ լինէր արդարև անմտութիւն խմացողին. ուրեմն ծանօթութիւնն Աստուծոյ է գրական և ոչ տրամաբանական, այսպէս՝

Առ Բ. ասեմ. նախ պատասխանելով — ՛բէն, ցուցանելն և յայտնելն ճշդիւ յուզեալ, նշանակին կամ պահանջին միջնորդ իմն, ի ձեռն որոյ ցուցանի առարկայն. քանզի յայտնել կամ ցուցանել զիմն, ոչ է տեսանել զիմն. ուստի, ևն։ Երկրորդ և ուղղապէս՝ ասեմ զանազանելով. այսինքն Աստուած ցուցանէ զանձն մեզ, անմիջապէս՝ ժխտեմ. միջնորդութեամբ բանաւորութեանն՝ ընդունիմ. և ժխտելով գհետեւեալդ և գգրականութիւն, ասեմ. յիրաւի Աստուած յայտնէ զինքն մեզ, բայց ոչ [illegible], այլ [illegible]. կամ այժմ տեսանելմբ զնա իբր ընդ հայելի օրինակաւ, և ապա դէմ յանդիման տեսցուք զնա ի վերինն անդ տեղի երջանկութեան, ընդ երջանկացն դասս։ Եւ քանզի հարկաւոր է կապն և զօդն ընդ ներգործութիւնն և պատճառ՝ եդեալ պատահականին և սահմանելոյն, ի հարկէ պարտիմք խնդրել զպատճառն այսր պատահականի, որ ինքնին չէտ ինքեան գէութիւն կամ գոյութիւն, այլ յայլմէ պատճառէն։

## ԼՈՒՆԱՆԻՆ ԴԻՑԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

ԸՆԴԴԷՄ ԲՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՐՈՒ.

ՆՈՒՐ. Աստն Ա. կարող էր լինել աշխարհիս ի դիպուածական բաղադրութենէ հիւլէից. զոր օրինակ՝ Նղիականնն Հոմերոսին և Նեւտական Վիրգիլեայ ի դիպուածական կարգաւորութենէ այբբենական տառից կազմեցան գեղեցիկն բանաստեղծութեանց։ Բ. Հիւլէից ի բնութեան կայ ներքին իմն առաձգական զօրութիւն, որով միմեանց չհպին, ուրեմն նոյնպէս և աշխարհս։

Ա.ՌՆ Ա. պատասխանեմ. ժխտելով զննիադրութիւնդ և զօրինակդ և զեզրակացութիւնն. քանզի որքան նուրբ իցեն հիւլէքդ այդոքիկ՝ միշտ մարմինք են ներքագոյնք և անտարբերք ի շարժողութիւն. արդ բազումն տեսաք, և տեսցուք յաչխարհաբանութենան անդ՝ թէ բնաւին ընդդէմ է մտաց ասել, մարմինք զօրութեամբ բնութեան իշխանն կամ են, և ոչ իսկ ընդունակք են ի շարժուն, դի անտարբերք են։ Ասասի անմտութիւն համարի այդ հնոցն առարկութիւն, և ըստ Պիկերոնիի՝ (*) զարմանք մեծ առնէ ի դիպուածական կարգադրութենէ բազմաբերպ գրոցն և տառից չկարելիք առանալ զտարեկանն Աննիոսի, զոր չդիտեմ թէ արդեօք զմին ևնթ ոտ երդոյն չնորհել մեզ մարթասցի՞ բազդն. և թէ համընթացութիւնն հիւլէից զտիեզերս կազմիցէ, է՞ր զի զորահս, է՞ր զի զտաճարս, է՞ր զտուն, է՞ր զքաղաք չկարիցեն կանդնել, որք նուազ աշխատութենանց պէտս ունին, և կարի յոյժ դիւրինք են։ Ասուպիս այնպէս յանդգնագոյնս զաչխարհէս բարբանջեն, զի երևի ինձ թէ ոչ երբէք զգարմանալի երկնից դեղեցկութիւնն, որ մեծագոյնն է, նշմարեալ իցեն։

ՆՈՒՐ Բ. Պատասխանեմ, զանազանելով. հիւլէից ի բնութեան կայ ներքին իմն առաձգական զօրութիւն, ի

(*) Զբնութենէ աստուածոց. Գիրք Բ. Գլ. Լէ.



բնութենէ անտի շնորհեալ՝ ժխտեմ. յայլմէ պատճառէ կամ յԱստուծոյ՝ ընդունիմ. ուրացեալ և զեզրակացութիւնն՝ ասեմ. մարմինք ի բնէ անտարբերք են ի շարժուն. ոչ երբէք շարժին ի տեղւոյն՝ մինչև յարտաքուստ անտի զօրութեամբ իւիք շարժեսցին, և տեսցուք թէ սկիզբն ամենայն շարժողութեան է պատճառն պատճառաց. և ի սկզբանէ շարժմանն բաց յայլոյն փաստիս Սուրբն Թովմաս եցոյց ընդդէմ հերձանոաց զդոյութիւնն Աստուծոյ։

ՆՈՒՐ. Փաստն՝ ի կազմուածոյ բնութեանն կամ Աշխարհի ոչ ցուցանէ զդոյութիւն Աստուծոյ ստեղծողին, այլ միայն կարգադրողին աշխարհի և ճարտարապետի։ Բ. գաղափարն աշխարհի ենթակայական է, և անատոյգ ճայ՝ թէ արդեօք, զոր առարկայ կոչեմք զաշխարհ, ահա մնանեալ՝ համեմատ գոյի ենթակայական գաղափարի՝ թէ ոչ։ Գ. ի ներգործութենէ կամ ի դործողութենէ արարածոց ոչ ճանաչի բովանդակ էութիւնն պատճառին. քանզի այնքան կատարելութենանց պատճառին վկայել կարեն մեզ ներգործութիւնք, որքան կատարելութիւնք գտանին ի նոսա և ոչ առաւել ևս. ուրեմն և ոչ զէութիւն Աստուծոյ ի սահմանելեացս աստի վերաբերել կարեմք։ Դ. յայտացանէ ոչ հաստատ իմն ճշմարտութիւն յառաջ գայ, այլ միայն հաւանական իմն կարծիք, թէ գոյ Աստուած, Ուստի՝

Ա.ՌՆ Ա. այնպիսի կարգադրողին՝ որ ի վեր է քան զընութիւն արարածոյ՝ ընդունիմ. կարգադրողին իբրև ոչ առաւել քան զիմաստուն ճարտարապետն և զարարած՝ ժխտեմ. նախ՝ անատոյգ ուրանան նաև զդոյացանել ի կազմուածոյ աշխարհիս զդոյութիւն կարգադրողին, թողումք զառեղծողին. ուրեմն յայսմիկ ՓԱՆԹ ընդ մեզ մնքառի հակառակ անատոյգ իցեն։ Բայց զի՞նչ, ո՞րպիսի արդեօք կարգադրողին. այնպիսւոյն՝ որում պէտք էին անատմանն կարողութիւն և զօրութիւն, զի զերկիր և զերկինս շրջեացէ և շարժեացէ։ Այնպիսի կարգադրողի, որում պէտք իցեն անչափ գիտութիւն և անատմանն. զի ծանիցէ զանթիւ և զանչափ արարած վարել յիւր սե-

վական վախճան. և անչափ և անսահման գիտութիւն, որ և զամենայն ի միասին զբովանդակութիւն արարածոց համառօտանալ մարթացուք ի մի վախճան արարչութեան։ Անչափ և անսահման գիտութիւն և իմաստութիւն, որ ի յաւիտենից գիտիցէ զամենայն խորհուրդս խորհրդակցաց, և այնպէս կարգել զամենայն արարած բնութիւն, զի անվհատ՝ թէ և ընդդէմ բնական կարգի ծնանիցին բազում խորհուրդք, եղծիչք այնորիկ. սակայն և այդպիսիկ անապիժաք հասանիցեն ի գէմ եղեալն նպատակ կամ վախճան։ Որ միտք են՝ որ ճանաչեն զամենայն խորհուրդս ազատ կամաց մարդկան և զիրեշտակացն անդամ։ Այս միայն բաւական է ցուցանել զԱստուածային գոյութիւնն, յանսահման գիտութենէ և յիմաստութենէ ճարտարապետս այսորիկ։

Ա.ռ. Բ. ապաքէն խայտայ Քանթ իւրովք բանաւորական կամ մտաւորական դրութեամբ. արդեօք զոր մեք աչխարհ կոչեմք՝ արտաքուստ մեզ, յարմարիցի՞ գազափարի մերում հոգեկանի. ապաքէն բազում ասացաք՝ թէ ո՛չ զի մեք եմք՝ նմին իրի է աչխարհս, այլ ընդհակառակն՝ է աչխարհ՝ նմին իրի եմք և մեք կամ փոքրիկ աչխարհս մտաց մերոց, և եղեալ և ոչ ընկալեալ՝ թէ արտաքուստ և առարկաբար չիցէ աչխարհս, նովին՝ զի միտք ունի զգաղափարն աչխարհի, այն սա է իրական իմն. ապա թէ ո՛չ ստա լինէր թէ ոչնչին՝ այնչ է և գաղափար. արդ եղեալ թէ իրական է գաղափարդ, անտարակոյս ի պատճառէ կամ յատարկայէ ումեք պարտի լինել, կամ յատաջ գալ՝ ո՛չ ի մտաց մերոց. զի միտք մեր ըմբռնեն զիրն, և ոչ ստեղծանեն. եթէ ստեղծանէին, ապա և ինքն ստեղծանէր միտքն, զի ի ժամանակի եղև. ո՞ւստի էր ուրեմն միտքն և իրական գաղափարդ, միտքն և իրական գաղափարդ սահմանեալ է. ուստի ստիպիմք խընդրել զանսահմանն, քանզի սահմանեալն յարաբերական է. եղեալ ժխտողականին՝ այն է սահմանելոյն և ծանուցեալ, միթէ հնա՞ր էր չճանաչել զանսահմանն կամ զդրականն ըստ Յեննելոնի և Ռեսաւիոսին. զի՞նչ, ըստ



բազմաց և մեք ունիմք և ասեմք՝ թէ նախադոյն է դրական սկիզբն՝ քան թէ բացասականն կամ հակասականն, Չի խաւարն լուսով ճանաչի. և որ էն՝ յաւելագոյն է քան զայն՝ որ չէն (ՁՐ. առ Գ.)։

Ա.ռ Գ. ասեմ. իններդործութենէ բովանդակ էութեանն պատճառն ոչ ճանաչի, կատարելապէս՝ ընդունիմ. անկատարելապէս՝ ուրանամ. և նախ առ քան մեր չէ զծանօթութենէ էութեանն Աստուծոյ, այլ զդոյութենէնէն, Եւ չնորհելով ասոխիս՝ ասեմք, առ ի ճանաչել զէութիւնն Աստուծոյ, չէ պարտ զի և մեք կամ արարած բնութիւնն Աստուած լինեաք, այլ բաւ է՝ զի զօրութեամբ և հարկաւորութեամբ բնութեան մերոյ ստիպիմք հասանել ի ծանօթութիւն ևթէ արարչին բնութեան պատճառական իրաց, թէ ո՛չ հայեցղապէս և ըստ ամենայնի, գոնէ մասամբ ևթէ։ Դարձեալ այլ է ճանաչել զիրն զօրութիւն պատճառի և ներդործութեան, և այլ է ծնանիլ. արարած բնութիւնն յԱստուծոյ անտի կամ զօրութեամբ Աստուծոյ ստեղծաւ, բայց ո՛չ յէութենէ անտի ստեղծաւ. մեք ի կատարելութենէ արարած բնութենէն և զօդիւ պատճառի՝ գամք ի ծանօթութիւն զերազոյն իմն պատճառի և ամենիմաստ ճարտարապետի, և այդ չատ։

Ա.ռ Դ. պատասխանեմ ժխտելով զամենայն. և հասատատ ճշմարտութիւն է ասել վասն գոյութենէնն Աստուծոյ ի տեսութենէ արարած բնութենէն. նմին իրի և իրաւամբ դատապարտէ և Աստաբեայն զհեթանոս, որք յարարածոց անտի ո՛չ ծանեան զԱստուած, և ո՛չ իբրև զԱստուած փառաւորեցին (*)։ » Նոյնպէս և Յովբ. « Բայց աղէ, հարց զշրջբռոտանիս՝ եթէ ասիցեն քեզ՝ և թռչնոց երկնից, և ցուցցեն քեզ։ Ճառեա՛ երկրի եթէ խելամուտ արասցէ զքեզ, ո՞վ է որ ոչ գիտաց այսու ամենայնիւ եթէ ձեռն տեառն արար զայս (**) »։ Սակայն ո՛չ տկարագոյն իմն հաստատութեամբ ցուցաք ի տրամաբանութենէն անդ, թէ

(*) Հռոմ. Ա. 21.
(**) Յովբ. ԺԲ. 7.

միաբն, խիղճն մնայ, բանն մնայ, և արուարքին և ներքին զգացմունք և զգայութիւն են աղբիւր ճշմարտութեան. և առաքինութիւնն առացեալ ի նոցանէ՝ է մեծագիւղքական, այն է անփոփոխելի, ընդհանուր, ամենեցուն հաւասար, հաստարակ. ապաքէն նախասիրեա առնէ ո՛ք զայնպիսին խօսի. ապա ուրեմն Ա.բարիչն բնութեան ետ մեզ նպատաս և միջոցս, որք ինքնին անկարէն են և անպիտան ծառայել վախճանին. ապա ուրեմն առակել պարտ է զհմաստութիւն գերագոյն բնութեանն ճարտարապետիս, որ չկարգեաց զնպատաս համեմատս վախճանին: Ա.պա ուրեմն առորոգելիքն Ա.ստուածայինք՝ բարութիւն, արդարութիւն, նախախնամութիւն, են, արատաւորեսցին ի հարկէ. քանզի կարգեցին զնարդն ի վախճանն, և չէ փոյթ՝ հասցէ թէ ո՛չ այսմիկ վախճանի. եդ միջոցս ի բնութեան և պակաս խնդրելոյ զԱ.բարիչն, մերթ նոյն միջոցքն անպիտանք են ի հասուցանել զնարդն ի վախճանն կամ ի կատարումն պարտուցն, են. են. զորս ամենայն առելն միայն անարժան իմն է զԱ.բարչէն, թողումք թէ հայհոյութիւն բնդդէմ գերագոյն բնութեան բարեբարին առեղծեալ բնութեանն:

## ԼՈՒԾԱՆԵՒՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ

ՐՆԴՓԻ ՔՐՅԱՆ ՀՈՎՓՈՓՈՒՆԱ ԾՓԼՐ:

ԱՆԳ. Փաստն ի միաբանութենէ կամ հաւանութենէ ազգաց անտի առեալ անտեղի և անաւոյդ իմն է. նախ հաւանութիւնդ այդ չէ ընդհանուր և հաստարակ ամենայն ազգաց. զի անծանօթ են մեզ բազում ժողովուրդք աշխարհաց: Զի բազումք ի միլիոնավայից և յիսնամեայ յանառաուածութեան մոլորութիւն անկան, զի և բազումք ի ճանապարհորդաց վկայեն զբազում ժողովրդոց անաստուածս զոլ. ուրեմն են:

Պատասխանեմ ժխտելով զնախընթացդ. առ փաստն առեմ. նախ նկատմամբ ժողովրդոցն՝ որք անծանօթ են մեզ (զոր ի նեղկայս հանդերձ չդատանել այլ ևս) որքան



զօրէ վասն հակառակորդացն մերոց՝ այնքան զօրէ և մեզ. քանզի նոքա չկարեն ի ժողովրդոցդ ո՛չ բացառել և ո՛չ առել զԱ.ստուածդ խոսութիւնդ. իսկ նկատմամբ ծանօթ ազգացն՝ հնախօսութեանց և վիպասանութեանց պէտս ունիմք, վկայեն մեզ զրիւք հնախօսութեանց ազգացն Քաղդէացւոց, Ասորւոց, Եգիպտացւոց, Յունաց, և Հռովմայեցւոց են, Հոմերոս, Հերոտոդոս, Սոկրատն, Պղատոն, Ա.րիստոտէլ, Սիկերոնէ, Վիրգիլիոս, Օվիտիոս, և այլք բազումք՝ թէ ամենայն ազգ ճանաչէր զԱ.ստուածս. բայց ճանաչել զԱ.ստուածս, ո՛չ է չճանաչել զԱ.ստուած զմիայն հզօրն և դյուխնեականն. այլ այսչափ միայն ասել կարեն, թէ խանդարեալ էր վարդապետութիւնն ազգութենէ միոյն Ա.ստուծոյ, և ճանաչէին զԱ.ստուած, բայց ո՛չ ամենեքեան զճշմարիտն Ա.ստուած: Սակայն և այդ առաջաք ի հաստատութենէն՝ յորպիսի պարագայիցս կամ պատճառաց յառաջ գայր՝ յայտ է արդէն. ընդհանուր հաւանութիւն ազգացն էր, և յայտնէր յայս միայն ակիզբն դ-ըեէ դ-էր և ՀԱ.-ՀՀ--ն: Եւ ևս ընդհանուր հաւանութիւնն ամենայն ազգաց յայնժամ ի վեր կարէր երթել, յորժամ բանական բնութիւնն ազատ կայր ի կրից անտի. և կիրքն յանձկութիւնս և ի նեղութիւնս և ի յանկարծադէպ իրողութիւնս լուեն ամենեքին՝ և խօսի միայն բնութիւնն, որպէս պարան է բացատանգութեամբ, ո՛վ Ա.ստուած, ո՛վ բարեխնամ Ա.ստուած, ո՛վ նախախնամութիւնն Ա.ստուծոյ, չերկնչի՞ս յԱ.ստուծոյ, միթէ չի՞ք Ա.ստուած, քննող սրտից Ա.ստուած է, և այլք այսպիսիք բազումք, որք յառաջ գան ի խորոց սրտից բանական բնութեանն, և յամենեսեան մի և նոյն գոլով մարդկային բնութեանն՝ հաւասարապէս ամենայն ուրեք լսէին, մի և նոյն հաւանութիւն և համոզմունք և զգացմունք. իսկ նկատմամբ փիլիսոփայիցն ունիմ՝ որք անաստուածք համարին, են, բայց արդեամբ անաստուած՝ կամ գործոյիւ, ոչ թէ տեսականապէս կամ համոզմամբ վարդապետութեան: Եւ եդեալ ևս՝ թէ երկոքումբք ևս, առ այդքան բազմութիւն ազգաց փոքրիկն՝ սխմարք ունիմք առ ոչինչ համարին:

ՃԾԸ. Առաքեն, եղեալ ուշ ընկալեալ թէ իցէ Աստուած, այդ յերկիւղէ անտի մարդկան, ըստ Պետրոսեայ «զառաջինն յաշխարհի զԱստուածս սրտի երկիւղն՝ յարձակել բարձր չանթից յերկինից ի վայր» յանգիտութենէ բնական իրաց, զորոց զպատճառս Աստուծոյ ակնաստ տգիտութիւն մարդկան վերադրել, ի խաբէութենէ քահանայիցն, յօրէնադրացն բռնութենէ, կամ ի բնական հակամիտութենէնէն՝ որ կայ յամենեսին։

Պատասխանեմ, ժխտելով. քանզի ցնծութեամբ խրնճոյիչ, թատերական հանդիսից, և հռչակմամբ տարեկան տօնից՝ կատարէին Աստուածոցն պաշտօնք և գովութիւնք, և վատահութիւն սրտից նոցա՝ ծագեալ ի բնութենէ անտի՝ այնքան աճէր՝ որքան մերձագոյնս մատչէին առ Աստուածս իւրեանց. նա յաւէտ՝ զայդ երկիւղ միայն կարեմբ պատճառ կոչել անաստուածութեանն. քանզի ամենայն անօրէնութեանց սանձ արկանի ամբարշտաց, և երկնչելով մի գուցէ զԱստուած ընդունելով յետս կացցուք ի գործոցն անօրէնութեան, և յանախս հանդերձեալ պատժոցն չհանդիպիլ՝ փութան ի մուսց ջնջել զանջնջելի և զբնածին ծանօթութիւնն Աստուծոյ. և ոչ ի տգիտութենէ անտի բնական իրացն, քանզի որքան ոք զբնականն ճանաչէ, այնքան մատչի ի ծանօթութիւն Արարչին բնութեան, և առաւել ևս ի մէտ առնու՝ թէ անհնարին իմն է՝ զի արարած բնութիւնն սկիզբն յարարածոյ ումեք առեալ իցէ, այլ յաւէտ յԱստուծոյ։ Նոյնպէս երկիւղն քահանայից յետնագոյն է քան զպաշտօն քահանայութեան. զիա՞րդ նախ՝ և յորմէ՞ սկզբնէ շարժեալ կարզեցան պաշտօնեայք Աստուածոց, ասասցեն մեզ նախ ասխարհ՝ և ապա առասցեն՝ թէ երկիւղն քահանայից աճ զժողովուրդն յԱստուածգիտութիւն, հանն զծանօթութիւն Աստուծոյ, ո՞ր միայ պաշտօնն քահանայութեան գոհանալոյ, զոհելոյ, էն։ Ջնոյն պատասխանի տալ պարտ է՝ առողացն թէ յիշխանութենէ կամ ի բռնութենէ օրէնադրացն՝ ծագեցաւ ծանօթութիւնն Աստուծոյ. քանզի յառաջել պարտ է ծանօթութիւն կրօնի և Աստուծոյ, քան զսահմանադրութիւն



իշխանացն՝ որով զիւրաքանչիւր հպատակս ի պաշտամանն իւրում ունէին. թէ ոչ սարաժէր նախ առ ամենեսին համոզումն զԱստուծոյ և զկրօնից, հնար ինչ էր ի կիր արկանել թագաւորաց զայդպիսի միջոց։ Ո՛ր դիցուք զի բազմացն ի միահեծան դրութենէնց՝ հաստատակաձեռութեամբ սկսեալ, զարմանալի իմն կրօնասիրութեամբ պաշտէին զԱստուածս։ Հուսկ ուրեմն՝ այս ծանօթութիւն և պաշտօն մատուցանել Աստուծոյ՝ ի բնական իմն հակմանէ մարդկային բնութեան եղև, բայց նախ համոզեալ և ստիպեալ գոլով բանական բնութենէնն ի բնական ներքինն զգայութենէնէ՝ թէ ԿԱՐՈՂ Ի ԴՐԴ Ե ԴՐՈՂԻ ՎԱՐԴԱՊԵՏ։

Զիք իմն համեմատութիւն ընդ մէջ Աստուծոյ և արարածոց. ուրեմն յայտնէ առ այն չկարելեմբ լեալնել։

Պխ. զանազանելով. չիք համեմատութիւն իրական կամ էութեան՝ ընդունիմ. չիք համեմատութիւն կախման և յարաբերական՝ ժխտեմ։ Այլ չունելով արարածոցն ըստ էութեանն զիմն Աստուածային՝ չիք համեմատութիւնդ այդ, բայց չկարելեմբ զայդ ասել զյարաբերութենէ արարածոց ընդ Արարչին իւրեանց. քանզի յարաբերութիւնն հարկաւորապէս կայ, և ցուցանէ զԱրարիչն. զորօրինակ առանելով զգեղեցիկ իմն շինուած, անդէն և անդ մտօք բերիմբ ի ծանօթութիւն խմաստուն իւրոյ ճարտարապետին, որ կանդնեաց զայդ, այդքան բաւ է մեզ։

ՃՁԶ. Միտք մարդոյ բնականապէս է սխալական. զորօրինակ յառաջ քան զԲրիսառս գոգցես ամենայն աղգք անկեալ էին ի կռապաշտութիւն և ի բազմաստուածութիւն. ուրեմն հաստատութիւն մարդկային սեռի ոչ է ցոյց բացարձակապէս ճշմարտութեանն։

Պխ. զանազանելով. միտք մարդկան է սխալական, բայց որում՝ մարդկային միտք և ոչ Աստուածային՝ ընդունիմ. է սխալական վասն որոյ և սխալի, դարձեալ զանազանեմ. ի գիտարինան և ի բնազանցականն՝ ընդունիմ. ի դիւրինն՝ ժխտեմ. և ժխտեալ զհետևեալդ և զհետևութիւնդ՝ ի բացայայտութիւն որոյ՝ ասեմ. բացարձակապէս՝ այսինքն ի հարկաւորութենէ բնութեանն, այլ մարդ-

կային միտք չէ անսխալական. գործիքնակ միտքն Աստուածային անհնար է զի սխալիցի. բայց սխալական գոլով մարդկային մտաց՝ չասեմք թէ յամենայնի արդեամբ առերեսի և յամենայն ծանօթութիւնս իւր, այլ յայնոսիկ միայն՝ որք գործարինքն են, և ոչ ամենայն մտաց բերք՝ կամ առարկայք. ո՛չ այսուիկ սկզբամբ բազումք դժանօթութենէ միոյն Աստուծոյ առերեսութեան, և որքան աղք կային նոցա, երկիր, քաղաք և տունք՝ այնքան զոգեւս Աստուածս հնարեցին, և ձեռամբ կերտեցին. այլ աղտեղութեամբ և խանդարմամբ բարուցն և կրից նոցա, ո՛չ սկզբանց մտացն անասելով, այլ յաւէտ խանգարեալ բարուց և կրից. և եթէ Աթենակորայ հաստատ ընծայել արժան իցէ, ի շնորհս երեսաց մեծին Աստուծոյ՝ պաշտէին զիտքրիկ Աստուածս. քանզի էին և աստիճանք ի մէջ Աստուածոյն փոքրագունիցն և մեծամեծաց՝ և ամենամեծին Աստուծոյ, Աչնպէս զի հպատակէին ընտանեկանքն քաղաքին Աստուածոյն, և քաղաքինն՝ աղգայնոյն, և աղգայինքն՝ մեծին Աստուածոյ. զայս վերագրել պարտիմք ո՛չ բանական բնութեանն ողջամիտ սկզբանց, նա՛ յաւէտ գործովելի մտութեանցն կամաց. Տկարագոյն, այլ անարատ բնական լոյսն անշէջ վառէր ի նոսա, բայց չրջապատեալ գոլով ի կրից անարժան հրգեհէն՝ լոյսն անարատ երկնային ոչ ազդէր ի նոսա, մինչև լոյսն ճշմարիտ շնորհաց ի վերուստ անտի ծագեալ օժանդակէր նմին. բայց նոյն իսկ առարկութիւն հակառակորդացն՝ ի վնաս դառնայ նոցա. քանզի ճանաչել զԱստուածն՝ ոչ է չճանաչել զԱստուած, այսինքն թէ մի իցէ առհեթանոս Աստուած, թէ բազումք, սակայն միշտ հաստատուն յայսմիկ միաբանէին՝ թէ գոյ Աստուած. ուստի գաղափար բազմաստուածութեանն եղև, բայց ո՛չ միշտ և հաստատ, որպէս գաղափար գոյութեանն Աստուծոյ, որ միշտ և հաստատ եկաց ի միտս հեթանոսացն. Եւ ևս զբարի և զչար հրէշտակաց զանազանութիւնն առեալ հեթանոսացն՝ ըստ գերագոյն Աստուածն դնէին նախ զարարիչն ամենայն արարածոց, և զհրէշտակս իբրև զաստեղս անդամ փոքրիկ



Աստուածս. Այսպէս Պղատոն ի Տիմէական գիրս ըստ քոյին Ալկենէոսի՝ ի բացատրութեան նորա զՏիմէականէն Գլ. 14, 15. այսպէս և Կիկերոնիւ (*).

---

## ԳԼՈՒԽ Բ.

### ԳԱՂԱԳՍ ԷՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԼԵԱՅՑ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԱ

### ԱՍՏՈՒԱԾ Ո՞ՐԳԻՒ Է

ՃՇԻՒ. Թէ գոյ Աստուած՝ յաւէտ զաւաղարկութիւնն, արդ մերձաւորագոյնս ևս մատուցեալ յանմերձենալին՝ ուսցուք թէ ո՞րպիսի Աստուած իցէ, զի՞նչ բնութիւն նորա, կամ էութիւն, զի՞նչ կատարելութիւնք նորա կամ առորոգելիք. Արդ յԱստուած՝ ըստ ըմբռնման մերում՝ դնեմք նախ զկացուցիչն բնութեան նորա, գներքին կատարելութիւն կամ զառաքինութեան. կացուցիչ Աստուածային բնութեանն կոչեմք զայդ էական յատկութիւնն, որ իբրև հիմն բովանդակ Աստուածային կատարելութենանց իցէ, և իբրև աղբիւր յորմէ բղխեն այլ ամենայն կատարելութիւնք կամ առորոգելիքն Աստուածայինք. զարձեալ՝

ՃՇՄ. Ըստ ըմբռնման մերում՝ յԱստուածային առորոգելեացն զոմանս Նեգէն- կոչեմք բացարձակս էականս, և զոմանս -ջա-էն- կամ յարաբերականս. Նեգէն՝ ըստ ուրում նոյն Աստուածային էութենանն կատարելութիւնք պատկանին նմին ի ներքուստ, և առանց որոց բնութիւնն Աստուածային չկարէ կալ. վասն որոյ և կոչին բացարձակապէս առորոգելիք, Իսկ -ջա-էն- և յարաբերականքն

---

(*) Ցանուրջս Եբրայեցի.

այնպէս կոչին՝ վասն յարաբերութեանն՝ զոր ունին առ արուսեակ, այսինքն առ արարած բնութիւնն. բայց ըստ որում առանձինք յէակաբանութեան անդ՝ ընդ-ունդ արուսեկին և ներքին կատարելութենէ յԱստուածային բնութիւնն, կամ նոյն իսկ ընդ մէջ կատարելութենէ և կատարելութենէ առեալ զանազանութիւնն ի մէնջ միայն՝ չունին երբէք տեղի իրականապէս, այլ զօրութենական և ըստ զանազանութեան բանաւարեալ կամ տրամաբանեալ բանին (ձԻՐ.). բայց այդ ամենայն լինի առ տկարութենէն մերոց. զի զոր միանգամ՝ նշմարեմք, զայդ տրոհելով կամ զանազանելով առնեմք. զի որ առ բազումն ի միասին չզօրէ, զատելով մի առ մի՝ վախճանին ժամանէ. բայց յԱստուած՝ էութիւնն, գոյութիւնն և գործողութիւնն չունին զզանազանութիւն, այլ մի և նոյն են ընդ Աստուածային էութենէն։ Մի միայն ըստ կարգի՝ որով միտք մեր որքան զօրէն գտանել՝ յատաջ ընթացուք, սկսանելով նախ յայդ կատարելութենէ Աստուածային բնութենէն, որ էական գատի նորա և կացուցիչ նորա, և իբրև հիմն կամ աղբիւր յորմէ այլքն մի ըստ միոջէ բղխին։ Ուստի յայս երկրորդ գլուխս խօսեցուք զներքին կատարելութենէ Աստուածային բնութենէն ուրոյն ուրոյն առանձին յօդուածովք, և յերրորդն զարտաքին կատարելութենէն նոյնպէս։ Ուստի՝

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳԱՏ ԷՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ՆՈՒԹ. Էութիւնն է այն ինչ, որով իրն կամ իմն է և կայ. որ և սկիզբն լինելով կատարելութենէն իրին՝ լինի աղբիւր նորա, յորմէ ծագին նորա կամ յատաջ գան։ Բայց յԱստուածային բնութիւնն զի՞նչ իցէ կատարելութիւնդ այդ, որ առաջին լիցի այլոցն Աստուածային կատարելութենէ. և կամ յի՞նչ կայանայ Աստուածային էութիւնն, որ զնա, այս՝ և ո՛չ այդ բնութիւն կացուցանէ, և յայլոցն ամենեցուն որոշեալ գատէ, է վէճ ընդ մէջ գերիմաստ Աստուածաբանից և փիլիսոփայից։ Են ոմանք՝ որք ընդ գլխաւորին իւրեանց Կուլէնմոլ Օգդամի համարեն, թէ էութիւնն Աստուածային կայանայ ի քո-ղո-րո-ւթ-ե-ան ան-ձն-ի-ն ո-ր-ով-հ-ե-տ-ե-ն-ա-ց-ն-ե-ա-ն, են այլքն՝ որք ընդ Սկովտի գնեն զնա յա-ր-ա-տ-ե-ա-ն ե-ռ-ա-ն-ձ-ն-ո-ւ-թ-ե-ան, կամ ի հ-ա-յ-ր-ա-կ-ա-ն ան-ձ-ն ի-ն-ք-ն-ո-ւ-թ-ե-ա-ն, ըստ որում յէութենէն Աստուծոյ՝ ամենայն կատարելութիւնք հնարաւորք ապարամին ի հարկէ գտանիլ։ Են և այլք՝ որք ի ն-ե-ր-գ-ո-ր-ծ-ո-ղ կամ յա-ր-ա-տ-ե-ա-ն ն-ա-խ-ա-գ-ո-ւ-թ-ե-ա-ն, Հռուակ ուրեմն՝ որոց և մեք հետեւիմք՝ են բազումք ընդ Թովմայականան՝ որք զէութիւնն Աստուծոյ գնեն ի ը-ն-թ-ա-ց-ի գ-ո-յ-ա-ն-ա-լ-ո-ւ-թ-ե-ա-ն, կամ գ-ո-յ-ա-ն-ա-լ-ո-ւ-թ-ե-ա-ն Աստուծոյ (aseitate), կամ ի հ-ա-յ-ր-ա-կ-ա-ն ը-ն-թ-ա-ց-ո-ւ-թ-ե-ա-ն կամ ք-ա-ղ-ա-ք-ա-ց-ի Աստուծոյ, որք ամենեքին մի և նոյն՝ կամ նոյնանշան են։ Ա-յ-ս-մ-ի-կ կատարելութեանս առմք զանուանդ դր-ո-ւ-թ-ի-ւ-ն կամ բ-ն-ա-կ-ա-ն ե-ր-ի-ց Աստուծոյ, որ և պարտ ունել զչորս թէութիւնս զայսոսիկ. զի նախ՝ ներքին և բնական իցէ իրին. երկրորդ՝ զի զիրն յայլոցն որոշեսցէ. երրորդ՝ զի առաջին լիցի այլոցն ամենեցուն. չորրորդ՝ զի այլոցն կատարելութենէ ամենեցուն լիցի հիմն և աղբիւր։

ՃԿ. Պատճառ մի միայն ինքնագոյութենէն լինելոյն առաջին, էական և բնութենէ կացուցիչ առաջնոյ է՝ զի յիշեալ թէութիւնքն ի նմա գտանին. քանզի ի բնութենէն իրաց նախ ներհատրի էութիւնն, և ապա զանազան կատարելութիւնք էութենէն, որք յարարած՝ թէ՛ ըստ ժամանակի՝ թէ՛ բնութենէ՝ և թէ՛ կարգի յետնագոյնք են, բայց յԱստուածային բնութենէն՝ ըստ առաջնութենէ բնութենէ և կարգի՝ նախագոյն գնի էութիւնն քան զայլ կատարելութիւնս, և ապա առքա մի ըստ միոջէ, թէ և ո՛չ յետին ըստ ժամանակի, այլ միայն բնութենէն և կարգի։ Ե. Բռնանդակութիւնն ամենայն կատարելութենէ չկարէ առաջին լինել առաջնոյ Աստ-

ատ այլին էսթիւանն. քանզի նախ ի կարգի բնութիւանն հասանելոյ արգէն ենթադրեմք զէսթիւն կամ զբնութիւն իրին, և ապա զկատարելութիւնս նորա. զորօրինակ նախ զէսթիւն հոգւոյն՝ և ապա զմիտս և զգայութիւն, են. ո՛չ եթէ նախ զմիտս զնեմք կամ զգայութիւն, և ապա զհոգին յարեմք ի վերոյ, որ ընդդիմ լինէր բնութիւան կարգի. Գ. Պատճառ չլինելոյ բովանդակութիւանն կատարելութիւանց առաջին, յաստղատնութիւնէ անտի և ի լուծմանէ նորին բովանդակութիւանն բառին. քանզի եթէ բովանդակութիւն է, ապա ունի զինուորս (յոր բնորոշման մերում) զառաջինն՝ զմիջինսն և զկատինն, զոր ի մի հաւաքեալ՝ անուանէքին ասեն զբովանդակն կատարելութիւանց Աստուածային բնութիւան. Ուրեմն ոչ ունիմք զոյգ վարդապետաց կարծիս, զոր և յաժարութիւանն մեծարեմք անդամ՝

ՃԿԱ. Պատճառն չլինելոյ և արմատական անտահմանութիւանն առաջին, կամ հարկաւորութիւան անուանոյն կատարելութիւանցն՝ են գոգցնս մի և նոյն վերոյիշեալքն. զայս միոյն յարեմք, այլ արմատական անտահմանութիւնն, այսինքն էսթիւնն Աստուածային, հարկաւ պարունակող անուանոյն կատարելութիւանց, կամ ինդրոյ զանուանոյն կատարելութիւնս, որչափ հնար է՝ պարտի հարկաւորապէս պարունակել զանուանոյն կատարելութիւնս, բայց միշտ ձեռք գ՛ատարին ի միտս մեր՝ թէ զիա՞րդ գոնէ բառատնջատութիւան կարգի կատարելութիւնցդ չզանազանին ի նոյն սկզբնէ կամ ի բնութիւնէ, յորմէ հարկաւորապէս ինդրին. զի եթէ ինդրին, ապա է որ ինդրէն. իրին գոյութիւն և ինդրատածն՝ թէ ո՛չ բառ կերպատարական զանազանութիւանն և բառատնջատութիւան ժամանակին ատրէրիցին, սակայն գոնէ զգալութենական զանազանութիւանն և բառատնջատութիւան բնութիւանն և կարգի՝ պարտին ատրբերիլ և միտս ի ատրբերին.

ՃԿԲ. Պատճառն հաւասարապէս չլինելոյ և գործնական իմացողութիւանն Աստուծոյ, կամ արմատական իմացականութիւան առաջին, ունենալոյ յայտ անտի է. քանզի



իմացողութիւնն է գործողութիւն միայն, և նոյն իսկ միտքն յետ բնութիւանն կամ էսթիւանն ենթադրի. երկրորդ էական կամ կացուցիչ բնութիւանն, այլ Աստուածային էսթիւնն միշտ ի գործնական իմացողութիւանն իւրոյ Աստուածային բնութիւանն կայ, և կատարելութիւանց իւրոց. սակայն միտք՝ որպէս առաջաբ, ենթադրեն զնութիւանցն միայն, բառ մերոյ ըմբռնման, և յԱստուած՝ միտքն Աստուածային միշտ յար ի գնին կայ իւրոյ յատենական էսթիւանն, և արգեամբ յիմնացուին կատարելութիւանց իւրոց. Ուրեմն և ո՛չ այսոցիկ կարծեաց պարտիմք հետևիլ, զոր և ո՛չ այսոցիկ պախարակեմք.

ՃԿԳ. Ներգոյութիւանցն կատարելութիւանցն՝ առ հասարակ գիտելի է, զի առ Դասակարան կատարելութիւանցն ունիցի տալին գանուածս գ=ը=գ- գ=ը=է, կամ ք=ջ=ք=կ=գ- գ=ը, և կատարելութիւանց ունիցի գանուածս, գ=ը ը=ա ն՛ն՛ կամ ք=ա՝, Կատարելութիւնքն գ=ը=գ- գ=ը՝ նորա են, որք չինչ ինչ ունին երբէք զազակաութիւն կամ զանկատարութիւն, և բառագոյնք են քան զինչ կատարելութիւնն՝ ընդ որս ի մի և նոյն ենթակայ չկարեն կալ երբէք. Պետրոս է խնամատար, ասա կատարելութիւնդ, որ է խնամատարութիւն, հակառակ է անխնամութիւանն, և միշտ խնամատարութիւնն բառագոյն գասի քան զանխնամատարութիւնն կամ զանխնամութիւնն, և չկարէ երբէք կալ ընդ հակառակորդին իւրում ի մի և նոյն անձն կամ յենթակայն. զի եթէ Պետրոս է խնամատար, ապա անհնար է զի անխնամատար անձին իցի. Զնոյն ասա զգործարութիւնէն և զգործութիւնէն. Սակայն կատարելութիւնն գ=ը ը=ա ն՛ կամ ք=ա՝ ոչ է այնպէս, այլ չինչ ինչ կարէ ունել զգազակաութիւն կամ զանկատարութիւն, և կատարելութիւնն նորա ոչ է բառ առաջնոյն բացարձակապէս կամ յար և իցէ անդրն, այլ բառ միոյ և եթէ իւրոյ անդր, կամ բառ միում առանձին ենթի. զորօրինակ կոչեմք կատարելութիւն յոյսի գոյացութիւանն. կատարելութիւնդ այդ է մի միոյն չիւր անդրն, քանզի անկատար է և չունի զառաջնոյն գյատակութիւնն, զի բացարձակապէս յառնոյն անդր կատարելու-

թիւն լիցի . այսպէս եթէ մարդն ակնդէն լինէր , ի կենացն և յզգայութեանն կատարելութենէն զրկէր . ուրեմն կատարելութիւնդ ակնդէն՝ խառն է ընդ անկատարութեան . այսինքն է կատարելութիւն ի տեսակի միոջ , և ո՛չ յամենայնի : Այսորիկ զանազանութեանս հնդինակ լինել զառաջինն Համարին զՍուրբն Աստեղինս (*) :

ՃԿԴ . Երկակի կատարելութիւնդ գտանիլ կարէն ի մի ոք կամ ՝Եդ=--ը=դե՝ այսինքն քոյս ձևոյն , և կամ ֆեբ=ըձ=յուէն : Կերպաւորապէս ոք ունի զկատարելութիւն իմն յորժամ տիրապէս կամ իսկապէս քոյս իմաստին և տահմանի նորին կատարելութեանն յինքեանս ունի զնա . զորօրինակ յաստեղ՝ Աստուծոյ իմաստութիւն , Աստուծոյ արդարութիւն են . կատարելութիւնդ՝ իմաստութիւն և արդարութիւն , քոյս ամենայն իմաստի էութեանն իրեանց զըտանին յԱստուած . նմին իրի և կոչին գտանիլ ՝Եդ=--ը=դե= ի մի ոք . զի կերպն է քոյս աստուծին , որ տայ զէութիւն իրին կամ իմիք : Գերազանցօրէն ունի ոք զկատարելութիւն ինչ , յորժամ տայք զայս նմին իսկապէս . զի ո՛չ միայն ունի զկատարելութիւնդ , այլ և ի գերազոյն աստիճանի ունի զնա . զորօրինակ յաստեղ՝ միտք Աստուածային , տայք Աստուծոյ զիմաս , որպէս ի մեզ են միտք . բայց նորայն միտք ո՛չ միայն ունի զկատարելութիւն մտաց մերոց , այլ և ունի զնա ի գերազոյն աստիճանի՝ որ ի մերումն չիքն և չգտանիլ այնպիսի կատարելութիւն : Դարձեալ ունել զկատարելութիւն ինչ գերազանցօրէն բաժանի յայլ երկու տեսակս , այսինքն գերազանցօրէն ըստ-բնէ=է և գերազանցօրէն հա=հա=---է . նա է , յորժամ իմ է և չունի ոք զայդ կատարելութիւն , բայց ունի զգօրութիւն տանելոյ զայդ . իսկ սա՝ յորժամ իմ է և չունիցի զայդ կատարելութիւն , բայց ունի զայն որ հատուած է նոյն կատարելութեանն . զորօրինակ չունիս զակնի հարիւր դահեկանի Դադղիոյ Նաթալէան , ունիս զ20 ֆռանկ :

Զայսոսիկ ծանուցեալ զկատարելութեանցն՝ մնանեմք յայս

(*) Յառաձնախոսութեան . Գլ . ժե :



## ՑՕԴՈՒԱԾ Բ .

### ՑԱՂԱԳԱՑ ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ԱՆԿԱԽ Է ՑՈՒՄԵԲԷ , ԱՅՍԻՆՔՆ ԻՆՔՆԱՑՈՑ Է

Ճկն . Որ ո՛չ ունի զկախումն յայլոյ ումեքէ և կատարելութիւնս իւր , նա իսկապէս միայն կոչի անկախ . և որպէս անուանք յէակարանութեան անդ և ի վերոյիշեալ յօդուածդ , զերազոյն էակն այն է՝ որ կայ զօրութեամբ բնութեան իւրոյ՝ թէ՛ ըստ կարգի էութեան բնութեան և գոյացութեանն՝ և թէ՛ ըստ կարգի կատարելութեանցն , ինքն յինքենէ լինելով և ազբիւր ամենայն իրաց կամ կատարելութեանց , թէ՛ գոյացականացն և թէ՛ կարելեացն : Այլ որ կայ զօրութեամբ բնութեան իւրոյ , և ո՛չ զօրութեամբ այլոյ պատճառի , անկախ կոչի ըստ էութեանն . այսպէս որ կախի յայլմէ պատճառէ՝ կախեալ կոչի . զորօրինակ արարած յարարչէն իւրմէ . իսկ արդ Աստուած ինքնագոյ է , և արարիչ ամենայն արարած բնութեանն . ուրեմն պարտ է զի անկախ լիցի , և ինքն միայն անկախ բացարձակապէս ըստ էութեանն :

Դարձեալ՝ է անկախ յումեքէ նոյն իսկ ի կատարելութիւնս իւր . քանզի ամենայն կատարելութիւնդ՝ թէ՛ գոյացականք իցեն , և թէ՛ կարելիք՝ Աստուածայինն անդ բնութեան , կամ լուսաւոր էութեանն գտանին ըստ գերազանց աստիճանի նմա , որ լուսագոյն իմն է քան զաստիճանն կերպիւ կատարելութեանց : Եւ նմա լինելով ինքնագոյ , պարտ է զի ամենայն կատարելութիւնդն Աստուածայինք ի նոյն Աստուածայինն բնութիւնէ ծագիցին , և ո՛չ թէ մնուրացիկք . որ լինէր ընդդէմ էութեան գերազոյն էակին՝ որ կայ զօրութեամբ բնութեան իւրոյ միայն , և հարկաւորութեամբ կայ՝ որպէս էութեանն նոյնպէս և կատարելութեանցն . քանզի չէ Աստուած՝ բայց միայն զի կատարեալ իցէ յամենայնի : Զի՞րդ կատարեալ թուիցի՝ և չինքնէնէ այն՝ որ յայլմէ անուն առնուցու զկատարելութիւնս իւր , կամ այլում կարօտիցի : Այս կարի յայտ իմն է . ուստի՝

և ո՛չ առաւելոյ չէութեան. ոչ կարէ նուազիլ քանզի հարկաւոր է, և ոչ առաւելուլ՝ քանզի լի է, այսինքն անսահման։

Յառել և զայս, թէ ամենայն ինչ՝ որ ունի զէութիւն իւր, կամ զբնական կամ զբնազանցական՝ այսինքն մետաֆիզիքական, բազմութիւն իմն կամ կազմուածք է։ Եւ ամենայն բազմութեանն բաւական պատճառ Աստուած է՝ իբրև պատճառ և ազբիւր ամենայն իրացն։ Եւ նոյն իսկ առ ի՞նչ ունակք են արգելանաւ բազիք՝ և ունակք գործութեանն, և կան ի կարգի կարելեացն, որքան և իցեն Աստուած է բաւական պատճառ նոցին։ Այնպէս պի անհնար է գնել պիլիս կազմուածս առանց հասարակելոյ գոհիցն նորին Աստուածային անդ գերազոյն էութեան, զոր չէր հնար առնել թէ ո՛չ հասարակ ի մէնք ունէաք թէ էութեան Աստուծոյ չէր սահման ի կարգի կազմուածս։ Հասակ ուրեմն կազմուածիւք և բազմութիւնք բան որում՝ այնպէս, որքան և իցեն, չեն անհաղորդելի ընդ միմեանս. այսինքն հնար է՝ պի ամենայն կազմուածիւնք բովանդակիցին ի մի։ Այդ յարարած բնութեան բովանդակութիւնդ այդ կազմուածից անհնար է, պի միւն զմիւսն արտաքոյ գործութեան բնութեանն. գործիչնակ կէսքն մնարդ է կազմուածիւն, բայց գործ է ի կազմուածիւնէն կէսդ անփոփոխապէս՝ կամ յատեանականապէս. առաջ գործութեան բնութեանն, քանզի պատահական է կէսքդ մնարդ կոյին։ Այդ մի միայն ի գերազոյն էակին և ի հարկաւոր էակին էութեան հնարաւոր լիցի բովանդակութիւն ամենայն կազմուածից և բազմութեանց այդ ոչիւ. իսկ արդ՝ որ ինչ հնարաւորն և կարելին է յԱստուած՝ ընդ գոյութեան Աստուծոյ մի և նոյն է, այսինքն չէք կատարելութիւն կազմուածից էութեան Աստուծոյ, այլ ամենայն ինչ արգելանաւ կայ յԱստուած. ուրեմն առիթիմք առնել՝ թէ ամենայն կազմուածիւնք մի միայն յԱստուած գոյնին էութեանն գոյանին, որ անհնար լինէր՝ եթէ էութիւնն նորա չէր անսահման, այսինքն լրումն ա-



## ՅՕԳՈՒԱԾ Գ.

### ՅԱՂԱԳԱՑ ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ԱՆՍԱՀՄԱՆ Է

**ՃԿԶ.** Որ չունի զչափ՝ զսահման կամ զեզր ի կատարելութիւնս իւր, նա միայն կոչի անսահման, կամ հասարակաւ ասացեալ՝ զերազոյն և բացարձակ կատարելութիւն։ Այլ Աստուած անսահման է, նախ պի ինքնագոյ է կամ յինքենէ՝ և հարկաւոր էակ. քանզի զոյութիւ յինքենէ՝ չկարէ ունել զսահման կատարելութեանց իւրոց ո՛չ յապլմէ և ո՛չ յինքենէ. ո՛չ յապլմէ՝ քանզի չընկալաւ զէութիւն իւր յապլմէ պատճառէ, պի ունիցի անզամ զչափ կատարելութեանցն, և եւս պի անկախ է յումեքէ. և ո՛չ յինքենէ՝ քանզի չեւ ինքեան զէութիւն իւր, այլ հարկաւոր գոլով կայ զօրութեամբ բնութեան իւրոյ. և պի ասէն կանոնք է անփակաւն՝ որ չեւ էութեան է։ Զարձեալ Աստուած այնքան է, որքան լինել կարէ. իսկ արգ Աստուած առանց սահմանի կատարեալ լինել կարէ. ուրեմն անսահման է։ Զարձեալ՝ եթէ Աստուած սահմանեալ լինէր կամ սահմանափակ ի բազմութիւնս և ի կատարելութիւնս իւր, արգէն չլինէր գերազոյն էակ կամ ազբիւր ամենայն բազմութեանց. և լինելոցն գերազոյն էակ՝ պարտ է՝ պի չունիցի ո՛չ զգերազոյնն ի վեր քան զինքն, և ո՛չ ինքեան հաւասար. ո՛չ ի վեր քան զինքն, քանզի այնու չլինէր գերազոյն էակ. ո՛չ հաւասար ինքեան, ապա թէ ո՛չ չլինէր հարկաւոր էակ։ Ամէն նման ասէ գերխնամն Աստուած. «Ո՞ւմն այսորիկ Աստուած կոչի անսահման բացարձակապէս, խակապէս, և գոգցես ի չաւաջնոյն. քանզի այդքան է ներգոյն կատարելութիւն, պի չկարէ հնար ունել զոք ո՛չ բազմագոյն ինքեան, և ո՛չ հաւասար ինքեան, որ այլով զանազան իցէ բնութեամբ (*)»։ Զարձեալ քանզի հարկաւոր էակ է, չկարէ ո՛չ նուազիլ,

(*) Զ Աստուծոյ. Գլուխ Բ. Գլ. Ա.

մինայն էութեան. Ի վախճանի դիտել պարտ է՝ թէ ո՛չ ամենայն կատարելութիւնք մի օրինակ վերագրին Աստուածային էութեան, այլ կատարելութիւնքն բացայայտապէս պարզագոյնք քան իմաստին և ահմանի իւրեանց, վայելեն և են յԱստուած, բայց ո՛չ պարզագոյնքն քան իրիք կամ իրաւն կատարելութիւնք. այլ զոսա առեալ ունել Աստուծոյ գերազանցօրէն կամ զօրութենաբար.

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՃԿԻ. Եթէ էութիւնն Աստուծոյ անսահման լինէր՝ հարկաւ պարտ էր դի պարզութեամբ բնութեանն չվայելէր. դի զօրօրինակ հոգի մարդոյ պարզ է, քանզի է հոգի միայն, նոյնպէս Աստուած բազադրեալ, քանզի է բարութիւն ամենայն, Ե. Անսահմանութեամբն Աստուծոյ լուծանին այլ ամենայն պատահական գոյութիւնք և գոյացութիւնք. քանզի հարկաւորապէս կենալն, լուծ է զպատահականապէս կենալն. կամ Գ. Յինքն պարունակէր զոյացիկ ամենեցուն զկատարելութիւնս. Դ. Ամենայն կատարելութիւնք պատահական կամ աղաս էակաց լինէին իւրաքանչիւր մասունք Աստուածային կատարելութեանց.

Ա. Ա. պատասխանեմ զանազանելով. չվայելէր պարզութեամբ բնութեանն Աստուած, եթէ ի բազում կատարելութեանց՝ իրրև ի բազում առհմանեալ մասանց բազկանայր՝ ընդունէմ. եթէ այլով եզանակաւ՝ ուրանամ. և առ նմանութիւնն ժխտելով, ասեմ. Աստուածային գերբազոյն բնութիւնն այնպէս կատարեալ է, դի ինքն պարզ է՝ և այնու իսկ պարզ գոլով, զամն գերազանցական կատարելութեանն, միայն մարդոյ՝ որ միշտ գրամանդակն չգործէ գիտել, զատելով և լուծանելով յատուկ վարի ի գիտել զիրոլոր իմն մասունսն պատկառ, և քան մասոց միոց և կատարելութեանցն արարածոց, որպէս մեք բազկացեալ եմք, նոյնպէս քան մեզ՝ չափեմք և այլազգ չկարեմք առնել, թէ ոչ բաժանելով զիրոլորն ի մասունս. ուստի պարտիմք ասել՝ թէ Աստուածային էութեանն կատարելութիւն այնպէս է, զի Գ, դ-ըչ և ՃՀ-ՃՃ գոլով՝ զամն գերազանցութեան կատարելութեանն ամենայն կատարելութեանցն մերոց բաւական. զօրօրինակ՝ հաստատագոյն և քաջ առն միոյ զօրութիւն բաւական է ընդդէմ դնել զօրութեանց բազում տկարացն կամ մանկանց. նա՛ զի մասունք չափաւորք ո՛չ երբէք ի մի կատեալք զամն գերչափն կամ զանսահմանն, այլ միշտ առհմանեալ և չափաւոր ինան. զի չիք անսահմանութիւն ի հաշիւն. նա՛ մանաւանդ բուն իսկ ծանօթութիւն անսահմանութեանն պարտ է զի միայնակ և պարզ լիցի, որպէս զի չունիցի մանն յորմէ բաժանիցի կամ առհման ունիցի միոչև ցայլն, Անպարագիմք գնմանութիւնդ. քանզի չիք երբէք համեմատութիւն իրական կամ բազդատութիւն ընդ մէջ արարչին և արարածոց. այո՛ հոգին իսկ պարզ է, և մեք չտրանամք թէ յետ Աստուծոյ՝ իւրէ իմն էութիւն պարզ, բայց հոգին ի կատարելութիւնս իւր ճանաչէ զչափ և զառհման, զի պատահական է, այսինքն առիթոփեալ և առհմանեալ յամենեսին.

Ա. Բ. պատասխանեմ զանազանելով. եթէ էութիւնն Աստուածային պարունակէր զամենայն կատարելութիւնս, ո՛չ միայն զօրութենաբար, գերազանցօրէն և թափանցականապէս՝ ժխտեմ. այլ և ներթագէս և կերպաւորապէս՝ կամ տարածմամբ՝ ընդունիմ. զոր մեք ի վերոյ բացայայտեցաք. ուստի առիթոփեալ գոյութիւնք կամ կատարելութիւնք ոչ գոլով մասունք Աստուածայինք, և չունելով համեմատութիւն իրական ոչ եզծանին, նա՛ մնասուն Հարկաւորապէս գոգին ընդ Հարկաւոր էակին. զի չիք իմն ներգործութիւն առանց բանաւոր պատճառի.

Ա. Գ. և Դ. զնոյն պատասխանի շնորհեմք.

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ՑԱՂԱԳԱՑ ԹԷ ԱՆՁԱՓ Է ԱՍՏՈՒԱԾ

ՃԱՐ. Գիտել արժան է նախ, թէ զանազանութիւնն Աստուծոյ չէ պարտ չափել ընդ անչափութեանն Աստուծոյ, քանզի նա վերաբերի կատարելութեանց Աստուածային էութեանն, ըստ որում չունի սահման ի կատարելութիւնս իւր. իսկ սա վերաբերի գոյացական ներկայութեան էութեանն Աստուծոյ. կամ՝ նա հայի ի կատարելութիւնս էութեանն և սա հայի յեզանակ լինելոյ Աստուածային գոյացութեանն. այսինքն ինքնագոյ լինելով էութեանն կայ ինայ յինքեան՝ և միանգամայն է ներկայ ամենայն իրաց ո՛չ միայն գրականացն՝ այլ և կարելեացն. Գիտել պարտ է երկրորդ, թէ չէ՛ պարտ նմանապէս չափել զանչափութիւնն Աստուծոյ ընդ լինելութեան նորա յամենայն ուրեք. քանզի անչափութիւն է բացարձակ և ներքին և հարկաւոր աստրոգելի Աստուածային էութեանն. իսկ յամենայն ուրեք լինելն յարաբերական, արտաքին և պատահական, կամ թէական աստրոգելի. քանզի ենթադրէ զարարած բնութիւնն, [illegible] և քանզի արարած բնութիւնն յաղագս կամացն Աստուծոյ էառ զգոյութիւն, նմին իրի թէական և պատահական կոչի վերագիրգ Աստուծոյ [illegible]։

ՃԱՓ. Աստուած չի՛ք զանազանութիւն իրական՝ ո՛չ ընդ մէջ էութեան նորա և կատարելութեանց և ո՛չ ընդ մէջ իւրաքանչիւր կատարելութեանց իւրոց, կամ աստրոգելեաց, այս յայտ յէակաբանութենէ անտի է. արդ յորժամ Աստուած ներգործէ զօրութեամբ իւրով յամենայն իրս և գոյացութիւնս և յարատև պահէ զարարած բնութիւնս՝ և զամենայն իրս հարկաւորապէս, պարտ է՝ զի գոյացութեամբ իւրով անչափ լիցի։ Երկրորդ՝ ասացաք թէ յինքենէ կամ ինքնագոյ է Աստուած, և ցուցաք զայդ. արդ՝ որ յինքենէ և զօրութեամբ բնութեան է, չկարէ չունել



գնել իւրումն էութեան. քանզի չէտ զգոյացութիւն ինքեան՝ այլ յինքենէ լինելով, այնքան լիցի գոյացութեամբ՝ որքան զօրէ հարկաւորութիւնն էութեան նորա, այսինքն առանց չափու. և ո՛չ իսկ յայլմէ էառ զչափ, զի ինքն միայն է գերագոյն էակ, և նա՛ լրումն էութեան. ուրեմն ո՛չ յինքենէ կարաց չափել և ո՛չ յայլմէ ումեքէ, Երրորդ՝ ասացաք թէ անսահման է. եթէ ունէր զչափ՝ ապա սահման ունէր Աստուածային էութիւնն. զի ունել զսահման ի կատարելութիւնս՝ չէ այլ ինչ յԱստուած, բայց միայն լինել բարութեան իրիք՝ որ չէ Աստուծոյ, կամ չգոյանի յԱստուած. բայց ասացաք՝ թէ ընդ մէջ էութեանն Աստուածայնոյ և կատարելութեանցն չիք խորհրդ կամ զանազանութիւն. ուրեմն եթէ Աստուած անկախ է, պարտ է զի անչափ լիցի. և եթէ Աստուած անսահման է, պարտ է նմանապէս զի անչափ լիցի գոյացութեամբն. Դարձեալ եթէ Աստուած ունէր զչափ՝ ապա չլինէր կատարեալ Աստուած, զի պակասէր իրիք, կամ լինէր այլ իմն կատարելութիւն, որ պակասէր կամ անկախ կայր յաստուածային էութենէն. բայց արդէն յայտ է թէ չէ Աստուած, բայց միայն զի կատարեալ իցէ. Դարձեալ ասացաք յէակաբանութեան անդ՝ թէ էութիւնն Աստուածային է աղբիւր ամենայն էութեանց և իրաց գրականացն և հնարաւորաց, և պատճառ ամենեցուն. եթէ ունէր զմի միայն իմն՝ որ չունիցի զսկիզբն ինանել, ապա չլինէր աղբիւր և պատճառ ամենայն լինելութեանց։ Արժան է լսել վերստին Արբոյն Թովմայի. «Ի Աստուած յամենեսին զօրութեամբ իւրով, ըստ որում ամենայն ինչ կարողութեան իւրում հպատակք են. է յամենեսին ներկայութեամբ իւրով, ըստ որում ամենայն ինչ մերկապարանոց կայ աչաց իւրոց. է յամենեսին էութեամբ իւրով, ըստ որում առընթեր կայ ամենեցուն, իբրև պատճառ լինելոյ (*)»։ Այս ամենայն յաւաչ գայ և ի տիրական բանէն (**).

---

(*) Մատ Ա. վիճ. Ը. ցօդ. 3.
(**) Գործք Առաք. Գլ. ԺԷ. 27. 28։

« Նա և ո՛չ հետի իսկ է յիւրաքանչիւր ումեք ի միջի. զի նոքա կեաքն, և շարժիքն, և եմք » . և « Նորա և ազգ իսկ եմք » ըստ Հեթանոսաց : Եւ Օգոստինոս (*) « Ձի՞նչ է ամենակարողդ Աստուած , զի՞նչ , թէ ո՛չ անչափ , անասելի , անպարունակելի , ի վեր քան զամենայն , արտաքոյ քան զամենեսին , և ներքագոյն քան զամենեսին , Հասակ ուրեմն ուշի ուշով միտ դնել պարտ է այսմիկ , թէ չասեմք զԱստուած գոլ անչափ յէութեան . քանզի ունի զամենայն կատարելութիւնս առեղծուած բնութեանս , և ներկայ է ամենեցուն գոյացութեամբ իւրով . զի ոչքս ամենեքեան չափաւորք են և չրջապատին , այլ յաւէտ անչափ է Աստուած՝ վասն աստուածայնին և ներքագնոց իւրոց սեփականէութեան . զորօրինակ չասեմք զԱստուած ամենակարող՝ վասն առեղծելոյն զոհեզերս , այլ վասն բըղխման զօրութեանս այսորիկ Աստուածայնին ներքագոյն էութենէն . քանզի կարէր զայսպիսի անթիւ տիեզերս գոյացուցանել , բայց չառնէ՝ զի ոչ է պարտաւորեալ , այլ ազատ է յառնելոյն և ի չառնելոյն » : Ուստի ամենայն կատարելութեանց և իրացն ներկայ է , ընդ ամենայն գոյացութեամբ իւրով , չրջապատէ զամենեսեան , յինքն պարունակէ զամենեսին , և զերազ զամենեքումբ : Տիեզերք նոքա կեան , և իննիւս են , և նա յինքեան ունի զամենայն իրս , իբրև զծով՝ որ յինքն ունի զամենայն գետս ,

ՃՀ . Որպէս էութեանն Աստուծոյ ոչ գոյ չափ՝ պարտ է նոյնպէս զի գոյացականապէս զամենայն ինչ պարունակելով , ամենեցուն թափանցել և յամենայն ուրեք , ուր գոյք գոյութիւն իմն կամ էութիւն , գոյք և պարփակեալ յիւր գոյութեանն զամենայն , և պարտ է միոյն աստուածայնին բնութեանն լեռ լինել սեփական՝ զի ամենայն ուրեք գտանիցի , և որքան իցեն տեղիք , յամենեսին գոյք Աստուած , ո՛չ բաս մասին , այլ բաս ինքեան . որպէս խօսի Սուրբն Թեոփիլոս (**) . այնպէս զի կատար-

(*) Ձոս գրանից Աստ.

(**) Մատն Ա . Վխ . Ը . Յօդ . 4 .



եալ իցէ ի բոլորն , և կատարեալ ի մասին . ո՛չ չրջապատեալ՝ այլ չրջապատիչ ամենայնի . ո՛չ որպէս մարմինն պարունակէ զհոգին սահմանաբար , և որոշեալ եզանակաւ , այլ անսահմանաբար կայ Աստուած յիւրաքրն ինամս . բայց այսպէս Աստուած ինասա կայ , զի չկարօտի միջոցի և ո՛չ ի տեղւոջէ իմեք պարունակի , որով և ո՛չ անարժան համարելի է աստուածայնին էութեանն , զի յամենայն ուրեք լինի ի գովելին և ի դատուելին , ի պատուականն և յանպատուին , Քանզի չկարօտելով միջոցին և չպարունակելով ի տեղւոջէն՝ ո՛չ ընդխառնի գոյացութեանց և հրաշալի իմն եղանակաւ թափանցէ զամենեսեան , Ուստի կատարելութիւն է մեծագոյս աստուածայնին բնութեանն , զի էութեամբ իւրով յամենայն ուրեք գոյ , քան թէ զօրութեամբ , կամ կարողութեամբ , կամ գիտութեամբ իւրով . զի լաւագոյն է ներկայութիւնն գոյացական քան թէ զօրութեամբ և միօք , և այն ինչ որ կատարելութիւն է , հարկաւորապէս պարտ է՝ զի յաստուածայնին բնութիւնն գոյ . ուստի Աստուած անչափ է : Այսպէս ասէ Օգոստինոս (*) . « Ծանաչեալ է Աստուած ընդ ամենայն , սակայն ո՛չ զմիջոցիւք տեղեացն՝ իբրև զբլուր ծառոյ , այնպէս զի ի կէս աշխարհիս մարմինն կէս լիցի , և յայլ կէսն՝ կէս , և այսպէս ընդ բոլորն բոլոր , այլ միայն յերկինս բովանդակ , և ի միայն յերկիրգ բովանդակ . և ոչ պարունակեալ ի տեղւոջէ իմեք , այլ յաւէտ ինա ինքն՝ յամենայն ուրեք բովանդակ » : Դասականքն աստղին զԱստուած անսասրած գոլ կերպաւորապէս , և տարածեալ զօրութեամբ , այսինքն անչափութեամբ զօրութեանն , որ յաստուածայնին էութենէ անբաժանելի գոլով առբերի առ ամենայն՝ որ ի տեղիս են , և յամենայնի է պատճառ էութեան ամենեցուն :

ՃՀԱ . Եւ քանզի գոգցես մի և նոյն չափաւորութիւնք Սահմանին են առարկութիւնք ընդդէմ անչափութեան Աստուծոյ , զորս յարուցին արդէն ընդդէմ

(*) Ա . Քաղք առ Տաման (87) :

անսահմանութեան նորա, նմին իրի թողութիւն և զնոսա. միայն զայս ասեմք, թէ ամենայն ինչ, որ է՝ բարի է ըստ ինքեան, և բազում իրք՝ որ ըստ մեզ անպատիւ համարին, ո՛չ են այնպէս առ Աստուած. և նոյն իսկ ի գևս գտանի Աստուած, ըստ որում ունին զէութիւն և զգոյացութիւն իւրեանց. գտանի, բայց և ի միասին մարտնչի ընդ նոսա՝ իբրև արդարութեան դատաւոր։

---

## ՑՕԴՈՒԱԾ Ե.

### ՑԱՂԱԳԱՑ ԹԷ ԱՆՓՈՓՈԽ Է ԱՍՏՈՒԱԾ

ՃՀՐ. Նա է անփոփոխ, որ միշտ կայ ի նոյն վիճակի, և նա փոփոխի, որ ի միոջէ ի միւսն անցանէ վիճակ։ Բայց ո՛ կարէ կալ ի նոյն վիճակի, թէ ո՛չ էութիւնն աստուածային, որ հարկաւորութեամբ կայ, որ կատարելութեամբ անսահմանապէս կայ, որ անբռնադատելի է առաւելմանն և նուազմանն։ Նախ անփոփոխ է, քանզի հարկաւորութեամբ էութեանն կայ, և կալն հարկաւորութեամբ նշանակէ թէ ամենայն ինչ որ յԱստուած է՝ միշտ է, և ի նոյն վիճակի է, և չէ անցեալ վիճակէ ի վիճակ, և չկարէ ի կատարելութեանց իւրոց միանն նուազիլ, և ո՛չ կատարելութեանց միանն յաւելուլ, ապա թէ ոչ՝ էութիւնն նորա չլինէր հարկաւոր և հետեւաբար չլինէր Աստուած։ Երկրորդ՝ անփոփոխ է Աստուած, քանզի անսահման է՝ այսինքն լրումն ամենայն հնարաւոր կատարելութեանց. ուստի չկարէ ո՛չ նուազիլ և ո՛չ պակասիլ ի կատարելութենէ իմէ, որք ամենեքեան էականք են, և չէ պատահական կատարելութիւն կամ որպիսութիւն ինչ ի նմա. և փոփոխութիւնն մի միայն պատահական արարածոյն բնութեան է սեփական. զի ամփոփեալ և սահմանեալ գոլով, ընդունակ է այլոյն կատարելութեանց յաւելման և նուազման, զորոյ զամենայն աւուրս առնումն զիտէ. Հուսկ ուրեմն



փոփոխական կոչի՝ որ բաղադրեալ իցէ բազում մասամբք. զի կամ ապականելոյին մասունք և անտի այլ յառաջ գայցեն մասունք՝ կամ մասանց վերայ յաւելցին այլ մասունք. իսկ արդ էութիւնն աստուածայինն ամենապարզ է, ո՛չ միայն էութեամբ կամ գոյացականապէս՝ որպէս գասականք խօսին, այլ և բարոյապէս կամ գործողութեամբ. զի յԱստուած էութիւնն և գործողութիւնն չիմոքին, և միանն ընդ միւսոյն առեալ լինի, ցաւել և զայս առեալով՝ անփոփոխ է Աստուած. քանզի է գործողութիւն ամենապարզ, զի ոչ ունի ինն յատնակութեան կամ զօրութեան, զի անտի ի զօրութենէ նորա անցցէ ի յարգիւնս կամ ի գործս, այլ ամենայն ինչ նորա՝ է պարզագոյն գործողութիւն կամ գործ. զի լաւ է արդեամբ կալ, քան թէ ունակութեամբ և զօրութեամբ։

ՃՀԳ. Աստ յիրաւի ընդ առաջ ելանեն մեզ դժուարութիւնք ծանուցք, և այդ յաւէտ ի տկարութենէ ըմբռնման մտացս՝ քանզի թէ իրապէս յաստուածայինն անտի բնութենէն՝ Աստուած, ասեն, ունի ծանօթութիւնս և կամեցողութիւնս պատահականս և կամաւորս՝ այսինքն առաս. են ուրեմն գործողութիւնք բազումք՝ որք կարեն լինել յԱստուած և չեն, և են բազումք որք են, և չլինել կարեն. զիա՞րդ ուրեմն անփոփոխ է Աստուած. կամ բարձի ազատութեանն կատարելութիւն և հաստատեցի բնութեանն անփոփոխութիւն, կամ սա բարձի և այդ ուրացի։

Պատասխանեմ նախ՝ ո՛չ է բանաւոր ուրանալ զմին յերկուց ճշմարտութեանց, առ անկարող լինելոյ միայն մտացս գտանել զերկոցունց զմիաբանութիւնն. քանզի ճշմարտութիւն ճշմարտութեան ո՛չ երբէք ընդդէմ կայ, և քանզի չէ Աստուած՝ բայց միայն զի կատարեալ իցէ. անփոփոխութիւնն է կատարելութիւն, և ազատութիւնն է կատարելութիւն. ուրեմն հարկաւ պարտին երկոքին իսկ գտանիլ ի գերագոյն էակին բնութեան։ Բայց թող կարի զօրեմք ևս ձեռնամուխ լինել ի ցոյց ներդաշնակութեան երկոցունցն։ Ուստի ասեմք երկրորդ, նախ՝ յԱ-

տուած երկու են տարբերութիւնք գործողութեան. մինն ներքին՝ ըստ որում ի կիր արկանէ զգօրութիւն իւր յատարկայն, և միւսն ներգին. զի ի գործելն զնոր ինն սահնայ իղձ և զդաժուձն՝ զոր ոչն ունէր յատակինոյն, Երկրորդ՝ Աստուած մի և նոյն գործողութեամբ կամացն կամի և առնէրն յէութիւն իւր, և արտաքս առ արարածս. առ այն՝ հարկաւորութեամբ, և առ այս՝ պատահմամբ և հարկաւորութեամբ իւիք։ Երրորդ՝ Աստուած հարկաւորապէս կամի զբարութիւն իւր, բայց ոչ հարկաւորապէս զայնոսիկ կամի, որք են վասն բարութեան իւրոյ։ Զորրորդ՝ գործողութիւնն Աստուծոյ երկակի լինել կարէ՝ ըստ ըմբռնման մերում. եղանակաւ, ըստ որում զօրութիւնն ի յէութեան կայ ներքին, և կոչի գործողութիւն ներգործական՝ կամ ներգոյացութիւն արտաքուստ առ առարկայս, և կոչի առարկայական։ Աստէս առանձի աչագ ունելով զվերոյ եղեալսդ, ասեմք՝ թէ ծանօթութիւնքդ և կամեցողութիւնքդ կամ գործողութիւնք ազատ կամացն Աստուծոյ, եթէ դիտեցին գոյացականապէս, կամ ի ներքոստ էականապէս, հարկաւոր են և անփոփոխք. իսկ եթէ նկատեցին արտաքուստ առ պատահական առարկայս՝ իրը յարաբերութիւն էականին առ արտաքս, են ընդհանուր, ազատ և փոփոխական՝ ըստ որում փոփոխականք են առարկայքն, առ որս բերին յարաբերութիւնքդ։ Եւ զվերջնդն՝ ներքոստեան մնացն գերազոյն քան զամենայն հնդինակս, որք ցայսօր եղեն, դրէ Սուրբն Թովմաս (*). «Մի և նոյն գործողութեամբ կամի զանձն (իւր) և զայլս, բայց ունակութիւն իւր (այսինքն ընդունակութիւն կամ յարաբերութիւն իւր) առ ինքն է հարկաւոր և բնական. ունակութիւնն առ այլս է ըստ յարմարութեան և ըստ իմիք, ոչ թէ հարկաւոր և բնական, և ոչ իսկ բռնի կամ անբնական, այլ կամաւոր։ Իսկ որ կամաւոր է՝ չէ պարտ զի իցէ ոչ բնական (ֆիզիքական) բռնի և ոչ հարկաւոր», զորոյ զպատճառն դնէ յ19 վիճաբանութեան ասելով. «Քանզի մինչ բարութիւն իւր, որ կամացն իւրոց է բուն սեփական առարկայ՝ կատարեալ է, և առանց այլոցն (բարութեանց) կարէ լինել, մերթ ոչինչ ինն կատարելութեան յայլոցդ, ինքեան յաւելուլ կարէ, հետևի թէ կամելն զայլս քաց յինքենէ՝ չէ հարկաւոր, այլ կամաւոր և ազատ». Ուրեմն նոյն աստուածայինն կամացն գործողութիւն կարէ հարկաւոր լինել և ազատ. հարկաւոր և անփոփոխ՝ նկատմամբ էութեանն կամ նկատմամբ ներքին գլխաւոր առարկային, այսինքն աստուածային բարութեան. կամաւոր ազատ և փոփոխական՝ նկատմամբ երկրորդ առարկային արտաքս քան զԱստուած՝ որ է արարած բնութիւնն, առ որ աստուածայինն կամացն յարաբերութիւն է՝ ըստ յարմարութեան իմիք միայն և երկրորդաբար. յայսոցիկ ամենեցուն քաղեմք զայս սկզբունս, բարութիւնն է վախճան կամաց կամ կամելոյ։ Արդ զամենայն ինչ՝ զոր կամի, կամ կամի իբրև զվախճան, կամ իբրև միջոց վասն վախճանի. իսկ արդ կամքն Աստուծոյ միացեալ է արդէն անմիջապէս ընդ վախճանին իւրոյ. ուրեմն չկարէ կամել զայլս իբրև հարկաւորս իւրում վախճանի, այլ ազատութեամբ կամիցի զոր ինչ արտաքոյ սկզբնական և գլխաւոր առարկային եղեալ իցէ. քանզի առանց կամելոյ իսկ զնոսա, արդէն հասեալ է վախճանին իւրում, և չունի պէտս միջոցաց. ուրեմն ոչ հարկաւորութեամբ, այլ կամաւորութեամբ և ազատութեամբ կամ ըստ յարմարութեան իմիք կամիցի զայլս։ Դիցուք՝ թէ հարկաւորութեամբ կամիցի և զարարած բնութիւնն, յայնժամ առարկայն հարկաւոր կամեցողութեանն լինել պարտ էր հարկաւոր. այսինքն արարածն պարտ էր զի միանգամայն լինէր չարարած՝ այն է հարկաւոր, և ոչ հարկաւոր, որ է հակասութիւն. ուրեմն պատճառ չկամելոյ Աստուծոյ զարարածն հարկաւորութեամբ, այլ ազատութեամբ մի միայն ի բնութենէ անտի պատահականացն է, զի նմանութիւնք են Աստուածային բարութեանն՝ պատահականք, և ոչ մասունք էութեան նորա, զի և նմին վախճան լիցին։

(*) Ընդդէմ Հեթան. Գիրք Ա. Գլ. 28։

ՃՀԴ. Ա.յս՝ հարկաւորութեամբ իւիք սիրէ պղծութ ձեռաց իւրոց, բայց թէական հարկաւորութեամբ, այսինքն եգեալ թէ ազատութեամբ կամեցաւ առեղծանել զնոսա՝ քանզի բարի են, չկարէ չսիրել զնոսա, բայց միշտ սիրովքն՝ որ հարկաւոր է թէութեամբ, որ և ընդ ազատութեան կարէ կալ։ Դարձեալ ասացաք թէ Ա.ստուած մի և նոյն գործողութեամբ առբերի յէութիւն իւր՝ և արտաքս առարարածս։ Էականապէս և հարկաւորապէս գործողութիւնքն աստուածայինք է անփոփոխ, իսկ յարաբերութիւնն արտաքին կարէ լինել և չլինել իսկ, և ըստ այսմ արտաքին յարաբերութեան՝ փոփոխականէ գործողութիւնն Ա.ստուածայինն՝ նկատմամբ արարածոց առարկաբար, և ո՛չ նկատմամբ աստուածայնին էութեանն՝ կամ էականապէս։ Ցառել և զայս՝ թէ ոչ լինելոյին աշխարհիս յառելու կատարելութիւն իմն Ա.ստուած, և ո՛չ չլինելոյին, ուստի և ո՛չ փոփոխութիւն իմն էական. քանզի չիք գործողութիւնն որ ի զօրութեան կայցէ առ Ա.ստուած, և առա անցցէ յարդիւնս, այլ միով պարզագոյն և անսահման գործողութեամբ ներգործէ յարարածս, ո՛չ որպէս արարածք յառաջին գործողութենէ, որ զօրութեամբ կայ, անցանէն յերկրորդ գործողութիւնն՝ որ պատճառէ զէական փոփոխութիւն ի գործողն. բայց Ա.ստուած չլինելով զօրութեան, այլ միայն պարզ և արդեամբ գործողութիւն գոլով չկարէ ունել առիթ ներքին փոփոխութիւնն կամ էական։ Ա.յսպէս ըստ նմանութեան, աղբիւրն՝ որ բղխէ ի տասն վտակս, նոյն տասն վտակացն չուրք թէ բաժանեալքն ի 20 վտակ՝ կամ միասցին ի հինգ վտակս, նոյն ձեայ աղբիւրն և անփոփոխ։ Նա մանաւանդ՝ մի և նոյն բղխելն չուրց հարկաւոր է, և դառնալ նոցա յայսկոյս յանկոյս կամ բաժանիլ 10 վտակացն ի 20 կամ միաւորիլ ի 3. ազատ է՝ այսպէս արեգականն ճառագայթ ողջ աչացն չընորհէ զլոյս՝ և անառողջացն բառնայ զլոյս. նոյնպէս մի և նոյն արեգակն հալէ զդնառակն մոմեղէն՝ և կարծրացուցանէ զդնառակն տղմոյ հողեղէն. մի և նոյն օրէնք բերէ առաքինեացն երջանկութիւն՝ և անօրինացն թշուառութիւն։ Ո՛չ



աղբիւրն, ո՛չ արեգակն՝ և ո՛չ օրէնք ի գործողութեանց անտի հետևելոց ընդունին զփոփոխութիւն իմն էականապէս կամ գոյացականապէս։ Ա.յսպէս զՊետրոս զքան ամ արդար՝ սիրէ Ա.ստուած, և ատէ յետոյ զքան ամ՝ անբզդամ. զառաքինին սիրէ Ա.ստուած գիտութեամբն՝ զոր կոչեն գաստականք -ը ՝Եէդ-ցե-Լ և ատէ զնա ՝Եէդ---դե-Լ կամ Լ՛-ցե-Լ գիտութեամբ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Զ.

### ՑԱՂԱԴՍ ԹԷ ՑԱՒԻՏԵՆԱԿԱՆ Է ԱՍՏՈՒԱԾ

ՃՀԵ. Ա.յն ինչ յաւիտենական կոչի, որ կայ առանց սկզբան, առանց վախճանի՝ և առանց փոփոխութեան, կամ յաջորդութեան ժամանակի. ուստի յաւիտենականութիւնն է անփոփոխ մշանջենաւորութիւն կամ յարատևութիւն իրին։ Գիտելի է՝ թէ յաւիտենականութեանն բաց ի բուն իմաստէն են այլ ևս իմաստք երկու. այսինքն նախ կոչեմք յաւիտենական և զբանական հոգիս մեր, և զիմանալեացն հրեշտակաց զանեւթի գոյական կամ գոյացութիւնս՝ յաւիտենականս։ Բայց չեն յաւիտենականք ո՛չ մերքն բանականք, և ո՛չ իմանալեացն հրեշտակաց ոչ իբ սիրապէս. քանզի ունին զսկիզբն կալոյ թէ և առանց վախճանի իցեն, գոլով նոցա և անմահ անապական։ Այլ զայդ եղանակ կէլոյ յաւէտ վայելուչ դառիմք կոչել միջին ժամանակ. այսինքն՝ ո՛չ յաւիտենական է իսկապէս՝ և ո՛չ անյաւիտենական. քանզի ունի զսկիզբն, բայց ո՛չ զվերջն, անյարմար կամ ընդդէմ կենացն անկոց և ծաղկանց, որք այսօր ակասանին, և վաղիւն վախճանին։ Երկրորդ՝ յաւիտենականք կոչին և խորհուրդք, և ազատ կենք է որոշմունք աստուածայնին մտացն և կամաց՝ նկատմամբ պատահական կամ արարած բնութեանն իրաց։ Ա.յ՛ և խորհուրդք և կենք կամաց Ա.ստուծոյ չունին զսկիզ-

բըն և ո՛չ վախճան. բայց քանզի առաքեալք իւրեանց պատահականք են և ազատք, նմին իրի այսպէս կոչին յատուկնականք՝ յիրաւի էականապէս և դոյացականապէս և յարմանն, բայց ո՛չ յատկնականք բացարձակապէս. զորօրինակ էութիւնն աստուածային և կատարելութիւնք նորա ներքինք իսկապէս և յատկապէս և բացարձակապէս յատկնականք են, և մի միայն յայս իմաստ Աստուած յատկնական է, քանզի չունի զակիզբն և ո՛չ զվախճան, այլ հարկաւորութեամբ բնութեանն մշտնջենաւոր է, և անսահման. Աստուած ի սահմանի թէ յատկնականութիւնն է անփոփոխ յարատեւութիւն։

ՃՀԶ. Արդ յարատեւութիւնն՝ նոյն ինքն իրն դոյութեան իրիք, երկակի եղանակաւ դոյութիւն իրաց ինալ կարէ. կամ ինալ ի ժամանակի, այսինքն յաջորդութեամբ վայրկենի ի վայրկեան, կամ առանց յաջորդութեան վայրկենից։ Աստ ժամանակն չէ այլ ինչ՝ բայց միայն յաջորդութիւն միմեանց փոքրիկ վայրկենից գոյութեան առեղծուածոց։ Եւ այս եղանակ կոչի ի ժամանակի՝ առեղծուած բնութեան և գոյութեան իրաց է անփական. և բաժանումն ժամանակի յ–ն–ը–ն, է–ն–ը–ն և յ–ո–ւ–ն՝ ի յարաբերութենէ անտի է ասպին միմեանց. քանզի –ն–ը–լ ժամանակ կոչի այն յաջորդութիւն վայրկենից գոյութեան իրիք, որում հետևի Ն–ը–ն յաջորդութիւնն, և –ո–ւ–ն ժամանակ կոչի այն յաջորդութիւն վայրկենից գոյութեան իրիք, որ դեռ չէ եկեալ և ներկայացեալ։ Այս եղանակ խոսելոյն է կարի ռամկական. զբուն եղանակ խոսից ժամանակին թէ ի կիր առնուլ ցանկացուք, պարտիմք ասել՝ թէ անցեալն չի՛ք, և ապառնի ո՛չ գոյ. ներկայն կայանայ միայն ընդ մէջ երկու վոքրիկ մասանց վայրկենի՝ որք սրընթաց յանան թօթափել յաջորդն միմեանց. զորօրինակ՝ թէ ոք անցանէ զբազմակնեայ կամրջան, կամ նստեալ ի կառս ընդ իւրև բազմապատիկ ճառագայթիւք կառաց անիւն դառնայ սրընթաց, ունի ըզներկայ ժամանակ այնքան, որքան տևէ յաջորդութիւն միոյ ճառագայթին միւսոյն. այսչափ է ժամանակ կենաց.



և վասն իւրաքանչիւր ակնթարթիդ պարտ է զի կամիցի և կրկնեսցի կամք Աստուծոյ, ապա թէ ոչ չկարէ ինալ գոյութիւնդ, և յոչինչ դառնայ։ Բայց յառաջելոց յայտ է թէ ժամանակն կախի հարկաւորապէս ի գոյութենէ իրաց, և առանց նորա չի՛ք ժամանակ։ Հուսկ ուրեմն գիտելի է թէ գյատկնականութիւնն երկակի ներկայի բնութեամբ. նախ՝ բացարձակապէս և ըստ ինքեան, երկրորդ՝ յարաբերութեամբն առ գոյութիւնս և առ ժամանակն. բացարձակապէս խորհրդով զնամանէ, յորժամ ներհատրեմբ զնա առանց իրիք յարաբերութեան առ ժամանակն, այլ ըստ աստուածային անփոփոխ և անհասանելի գոյութեանն։ Խորհրդով զնամանէ յարաբերութեամբ, յորժամ կից նմին և ընդ նմին դնեմբ զժամանակն, բայց ո՛չ ի նմա այսինքն ի յատկնականութեան կալ ասեմբ զժամանակն. զի չունի մասն՝ այլ պարզագոյն ինալն կամ մշտնջենաւորութիւն աստուածային գոյութեանն է։ Եւ յասելս մեր՝ թէ ի յատկնէից էութիւնք իրաց կան յէութեանն կամ ի միտս Աստուծոյ՝ չէ պարտ դնել զժամանակն անդամ հատագոյ յատկնականութեանն. քանզի առաքեալքար և կատարելութեամբ էին իրքն՝ և ո՛չ իրապէս և արդեամբ կամ ըստ բնութեան առեղծանելոյ իրանց. և չի՛ք անոր դժուարութիւն թէ գիտութիւնն Աստուծոյ զնացանէ չէ ի գործութեան կամ կարելի, այլ արդեամբ. քանզի գիտութիւնն իրաց ոչ է բնութիւն իրաց, և ըստ այսմ միայն՝ այսինքն առաքեալքար ամենայն ինչ ի յատկնականութեան միանգամայն կայ ներկայ, և ո՛չ ըստ ժամանակի բնութեան իրացն առեղծելոյ. կամ լաւ ևս ասացից, ծանօթութիւն ժամանակի ներկայ գոյանի միանգամայն ի յատկնականութեան, բայց գիտելիքական կամ բնական ժամանակն կից կայ յատկնականութեան սահմանաւքար և մտանաւորաքար, և ո՛չ ի յատկնականութեան կայ՝ անսահմանաքար։ Զայսոսիկ ծանուցեալ՝ գամք ի ցոյց առաջարկութեանն։

ՃՀԷ. Աստուած ինքնագոյ է, այսինքն ոչ ունի սկիզբն և ո՛չ վերջ, ուրեմն յատկնական է. ամեն իրի հարցեալ

ուրուք զանուն Աստուծոյ, յերկնից ուսաւ գոլ Ոչ Ե։ Դարձեալ՝ Աստուած հարկաւորութեամբ բնութեանն կալով՝ ո՛չ յայլմէ է, և ոչ յայլմէ կախի. զի նա է էից էակ և առնչիչ գերագոյն և շարժիչ ամենեցուն. ուրեմն ոչ կարէ ճանաչել զժամանակ, և ո՛չ հետևաբար ունել զյաջորդութիւն ժամանակի ի գոյութեանն։ Դարձեալ՝ բայ ի յինքնագոյ լինելոյն և հարկաւոր և անկախ, Աստուած անսահման իսկ է և անչափ. եթէ յաջորդութեամբ ժամանակին կեայր, չլինէր անսահման և անչափ, և յաւիտեան ուրեք գոյացութեամբ ներկայ. զի որ շարժի ի տեղւոջէն, անցանէ ի տեղին՝ ուր չէր անդ նախ. ուրեմն չրջապատեալ է, ուրեմն չէ անսահման, ուրեմն չէ անչափ, ուրեմն չէ յաւիտեան ուրեք ներկայ գոյացութեամբ։ Սմին իրի գեղեցիկս ասէ Սուրբն Թովմաս (*). «Յաւիտենականութիւնն հետևի անփոփոխութեան, որպէս ժամանակն հետևի շարժմանն. ուստի լինելով Աստուծոյ կարի անփոփոխելի, կարի վայել է նմին՝ զի և յաւիտենական լիցի»։ Սմին իրի «զինչ այլ ինն իցէ ժառանգութիւն Աստուծոյ, բայց միայն յաւիտենականութիւն», ասաց Տերտուղիանոս (**) (ընդդէմ Հերմոգինեայ)։ Հռչակեալ ի գաւանական վիլիսոփայութեանն ճեմարանս՝ գերագոյնն այլոց ամենեցուն յաւիտենականութեանն սահման մեծին Պօէտիոսի (***). «Ուրեմն որ զանսահման կենացն զբոլոր բովանդակութիւն պարփակէ և յինքն ստացեալ ունի, յորմէ չպակասի ինն ապագայն, ո՛չ անցելոյն հեղեալ իցէ, այդ յիրաւի յաւիտենական է». այսինքն Աստուած զանցեալն, ներկայն և ապառնին միով յաւիտենականութեամբն առանց փոփոխման կամ յաջորդութեան ժամանակի պարունակէ միշտ ներկայապէս. զրօրինակ կեդրոնն կամ միջին կէտ շրջանի անչարժ ինայ թէև ամենայն ինչ շուրջ զնովաւ դարձեալ հոլովիցին. այսինքն պարզ,

(*) Ընդդէմ Հեթան. Գիրք Ա. Գլ. ԿԶ.։
(**) Գլ. ԺԲ.։
(***) Ջմխիթար. փիլիսոփա. Գիրք Ե. Առաջ. Զ.։



անմասն և անչարժ ինայ ի միջի և ամենեցուն հաւասար։ Ո՛չ այսպէս գոյութիւնն արարած, որ ներկային ստացող գոլով միայն՝ անցելոյն և ապագային չունի ինն զիշխանութիւն, այլ և ո՛չ իսկ զներկայն՝ ճշգրտապէս խօսելով. քանզի ներկայդ այդ վայրկեան՝ բաժանի յայլ վաթսուն(60)րոպէս կամ երկակս, և իւրաքանչիւրն ի նոցանէ յայլ 60, և այսպէս մինչև անզգալի փոքրիկ մասունս, որք սրընթացութեամբ հոսեն իբրև զջուր։ Բայց ասէ Աստուած, քանզի յաւիտենականութեամբ կայ, հազար ամք մեր իբրև վայրկեան մի է, և ներկայ աչաց նորա, այսպէս (*) «Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես... զհազար ամ յաչս տեառն, որպէս օր երեկի» ասաց ոմն։

---

## ԳՕԴՈՒԱԾ Է.

### ԳԱՂԱՓԱՐ ՊԱՐԶՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ՃՇ. Պարզ կոչի այն ինչ որ չունի զմասունս, կամ որ չէ բաղկացեալ ի մասանց։ Մասունքս այսոքիկ լինել կարեն՝ կամ մեթաֆիզիքականք, կամ ֆիզիքականք, կամ բարոյականք. մեք որպէս տեսաք յէակաբանութեան անդ (ՃՕՀ. ՃԺԹ) յաստուածայնին էութիւնն չճանաչեմք զբաղադրութիւն իրական որ և իցէ տեսակի, ո՛չ մեթաֆիզիքական, ո՛չ ֆիզիքական, և ո՛չ բարոյական. այլ միայն ընդդէմ Աստիկեանցն հնացելոց, ընդդէմ Սբինոզայի և Սալվաթորի Հրէի՝ ասեմք զԱստուած պարզ, այսինքն անմասն լինել բնութեամբ կամ էութեամբ։ Թողեալ զԱստիկեանսն, որք զրկեալ ճնացին ի գերբնական լուսոյն, բայց և ո՛չ սովիմբ անմեզադրելի. Սբինոզա ասաց զԱստուած գոլ բաղադրեալ յամենայն ուրեք, և զորպիսութիւնս Աստուծոյ կոչեաց զաչխարհ, և որ ինչ ի նմա

(*) Սաղմոս. ՂԹ. Զ. 4.։

արարած ըստ սեռին և տեսակին՝ յորմէ հետևեցուցանէր զբազմաստուածութիւնն. այսմիկ հետևեցան և խեղայեղն Եբրայեցի Սալվաթոր. ընդդէմ առաջարկութեանս են և այնոքիկ՝ որք դնեն զիրական զանազանութիւնն ընդ մէջ աստուածային էութեանն և առարոդելեաց նորա բացարձակ կոչեցելոց կամ յարաբերականացն, բայց մեք զօրութեան կամ մտաց զանազանութիւնն ընդունելի է ասեմք ընդ մէջ նոյն էութեանն և առարոդելեացդ և ընդ մէջ նոյն առարոդելեացն, այսպէս ամենայն քաջխմաստ Աստուածաբանք։ Մեք ըստ բնական լուսոյն ասեմք թէ Աստուած ամենազարդ է։

ՃՀԹ. Եւ դիւրաւ ցուցանի այսու հաւաքաբանութեամբ. այն ինչ պարզ է որ չունի զերկրակի եղանակիդ զմասն, այսինքն ո՛չ մեթաֆիզիքապէս և ո՛չ ֆիզիքապէս, և ո՛չ բառոյապէս. իսկ արդ աստուածային էութիւնն չունի զերկրակի բաղադրութիւնդ. ուրեմն։ Ձմեծագունէն չի՛ք ինչ տարակոյս. մնայ փոքրագոյնն, զոր հաստատես ասելով նախ՝ Աստուած չի՛ք բաղադրութիւնն մեթաֆիզիքական, զերօրինակ կատարելութիւն կամաց կամ աղատութեան և կատարելութիւնն իմաստութեան չեն իրականապէս զանազանեալք էութիւնն աստուածային. բայց մեք մտօք նազանեալք էութիւնն աստուածային. բայց մեք մտօք նազանեալք էութիւնն աստուածային, վասն զայդ կատարելութիւնս զանազանս Աստուծոյ, վասն բուական լինելոյ գերագոյն բնութեան նորին ընտրել զամենայն պէս տկարութեանց և կարօտութեան մտաց մերոյ. զերօրինակ ամենայն ոք ընտ զամեն իւր ի մի և նոյն աղբերէն. աղբիւրն մի է, և զամենս ընտրել կարէ անթիւս, այս ըստ նմանութեան տկար մտացս։ Երկրորդ՝ և ո՛չ իսկ կայ բաղադրութիւն ֆիզիքական Աստուած. զի ո՛չ իսկ կայ բաղադրութիւն ֆիզիքապէս՝ որ բաղկացեալ է ֆիզիքապէս՝ հարկաւ ունիցի զամենայն կամ զնոսա. իսկ արդ Աստուած անամենայն է, հարկաւոր է, անչափ է, ևն. և զի չէ Աստուած՝ բայց միայն զի կատարեալ իցէ, լաւ է պարզ լինել քան բաղադրեալ յաստուածայինսն. ուրեմն։ Երրորդ՝ և ո՛չ իսկ բարոյապէս բաղկացեալ է Աստուած. զերօրինակ ի հնեթանոս աղգ մարդկան հաւանեալ սային Աստուծոյ զբաղումս կատարելութիւնս և պաշտօնս սեփականս և օրոշս. այլ զոր ինչ ունի ըստ կատարելութեանց, նախ՝ լինելով նորա լրումն էութեան կամ գերագոյն էակ՝ պարզութեամբ բնութեանն ունի զնոսա, այսինքն չունի զիրական զանազանութիւն կամ բաղադրութիւն ի բնութեան և յառարոդելիսն՝ այլ զօրութենականաւն կամ զանազանութեամբ բանին ունի զայդ. երկրորդ՝ ունի զնոսա զօրութեամբ բնութեան իւրոյ, քանզի ինքնագոյ է կամ յինքենէ ունի զոր ինչ ունի և չունի պէտս այլում ումեք և ոչ փոխ առնու յումեքէ։ Ցաւե՛լ և զայս թէ հոգիք բանականք կամ իմանալի զուարթնոց գոյութիւնք ըստ էութեանն պարզ են, ո՛րքան առաւել վայել է առեղծողին հոգւոց և իմանալեացն գաստ՝ զի նոյն պարզութեան կատարելութեամբն վայելեացէ։ Ինքեմք ուրեմն ասելով. յԱստուած չկարէ լինել երբէք իմն բաղադրութեան. ուրեմն պարտ է զի պարզ լիցի, և հետևաբար Աստուած է նոյն էութիւն իւր, նոյն լինել իւր, նոյն ամենազարդ գործողութիւնն կամ բովանդակ գործողութիւնն. և այնպէս պարզ է՝ զի ընդ ո՛չինչ ումեք բաղդատիլ կարէ. քանզի որ ինչ առեղծուած է՝ միշտ բաղադրութեան իմիք կայ ենթակայ՝ թէ ո՛չ ֆիզիքականին՝ գոնէ մեթաֆիզիքականին կամ տրամաբանականին։ Սմին իրի

ՃՁ. Զկարելիք երբէք ի միտ առնուլ՝ թէ զիա՛րդ Սբինոզային աստուածային էութեանն մարմնեղէն լինել երևակերպեալ իցէ. քանզի բաց յայնմանէ՝ զի յատկութիւնք մարմնոյ հակառակ կան աստուածային կատարելութեանցն՝ վասն ինքնագոյ լինելոյն՝ անսահման լինելոյն՝ անչափ և յաւիտենական լինելոյն, հակառակք կան նոյն իսկ հոգւոյն կատարելութեանց. զի մարմինն ոչ կարէ խորհիլ, և հոգին խորհի. մարմինն ոչ կամի և հոգին կամի, ևն, ևն։ Եթէ հոգին հակառակ կայ մարմնոյ, ո՛րքան և սա հակառակ կայցէ աստուածային բնութեանն, որ ինքնագոյ է։ Եւ ևս եթէ մարմնեղէնն լինէր, ի միասին ինքնագոյ լինէր և չլինէր, այսինքն ոչինչ լինէր. ուստի հակառական դոյով զմիմեանս եղծանեն։ Ըստ այսմ Որ-

դիւնէս (*). «Չէ պարտ ուրեմն մարմին իմն կամ լինել ի մարմնի համարել զԱստուած, այլ իմացական պարզ բնութիւն անբնդունակ առանձնման իմիք յինքեան. զի մի՛ մեծ իմն կամ փոքր լինել համարիցի, այլ զի յամենուստեք լիցի, (Μόνος) միայնակ և այսպէս ասացից (Ἕνος) մի միտք և աղբիւր՝ յորմէ է սկիզբն ամենայն բանական բնութեանն կամ մտաց։»

---

## ՑՕԴՈՒԱԾ Ը.

### ՑԱՂԱԴՍ ԴԻՏՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ՃԶԱ. Երկակի իմանամբ ընդհանրապէս զդիտութեանն զիմաստ. նախ՝ գիտութիւն ասելմբ զյայտնի և զբացայայտ ծանօթութիւն մտաց, որոց չեն պէտք նպաստք կամ հատաքաքանութիւնք։ Եւ ի սոյն միտս կոչի անգամ իմաստութիւն, որ է ճանաչել զբարձրագոյն և գնուրբ պատճառս իրացն բացայայտապէս։ Ա.յս կատարելութիւն միմիայն աստուածային մտաց է սեպհական, և անկատար և լայն տարածմամբ տամբ զայն և սրարած մտացն։ Երկրորդ՝ իմաստ գիտութեանն է՝ որ և իցէ ծանօթութիւն մտաց առացեալ յուղիղ տրամաբանութենէն, կամ նպաստիւք հատաքաքանութեանն՝ այսինքն ցուցմամբ և բազդատմամբ պատճառացն։ Զայս երկրորդ իմաստ ըստ որում անկատար՝ զի առացեալ լիցի յետոյ պատճառօք, չտամք Աստուծոյ. թէ ո՛չ անուղղապէս և լայն իմաստիւն։

ՃԶԲ. Գոլ ուստի ըստ առաջին եղանակի գիտութեանն ՅԱստուած, ո՛չ ոք կարծեմք միայն թէ չիցէ խնդալեղեալ՝ խորհել կարիցէ զայդ զԱստուծոյ ըստ որում կատարելութեան աղբիւր, ըստ որում ճարտարապետ բնութեանն տիեզերաց, և ըստ որում արարիչ իմանալեացն

(*) Բէրի արխան (Περὶ ἀρχῶν) Գիրք Ա. Գլ. Ա.։



գաւուց և բանականաց մտաց, որ ամենեքին հարկաւորապէս կամին՝ զի միտք աստուածայինն գերագոյն իմաստութեամբ և գիտութեամբ վայելիցէ. և այնպիսի գիտութեամբ՝ որ վայելիցէ իւրում աստուածային էութեան. այսինքն որպէս սա պարզ, անփոփոխ, անսահման և ինքնագոյ է, նոյնպէս և գիտութիւն նորա պարտ է՝ զի այնպէս լիցի. զի առարկայ աստուածայինն մտացն է նոյն էութիւնն Աստուծոյ. և թէ իսկապէս ընդ Սրբոյն Օգոստինեայ խօսել կամիցիմք, ասել պարտիմք, թէ ճանաչելն և լինելն միմի և նոյն են (Աստուծոյ). ուրեմն ոչ պարտիմք վաստակիլ ի ցոյց այսորիկ, նա՛ յաւէտ փութալ առաջի դնել զեզանակ նորա, որ ո՛չ գիւրին իմն է։

ՃԶԳ. Գիտութիւնս այս ըստ զանազան առարկայից իւրոց բաժանի կամ ունի զանազան անուանս։ Նախ կոչի գիտութիւն պարզ իմացողութեան, յորժամ նկատեն միտք աստուածայինք զկարելի էակս միայն, որք մտօք և պարզապէս ևեթ ըմբռնելին, և չունին և չունիցին երբէք զարգեամբ լինելութիւնն կամ զգոյութիւնն։ Երկրորդ՝ գիտութիւն տեսութեան կոչի, ծանօթութիւն մտաց նկատեալ զառարկայս, զանցեալն, զներկայն և զապառնին, որք կալան, ունին և ունիցին զգոյութիւն իւրեանց, և նմին իրի կոչի գիտութիւն տեսութեան. քանզի թէև առարկայք նորա ի զանազան ժամանակի եղիցին, բայց միտքն աստուածայինն յաւիտենից զայդ զանազանութիւն ժամանակի ի յաւիտենականութեան իւրում իբր առաջի աչաց ներկայ տեսանէ. զորօրինակ մարդ՝ որ ի բարձրադիտակն կացեալ տեղւոջ նշմարիցէ միով աչացն հայեցմամբ զերիս ճանապարհորդս, զանցեալն նախկին, զներկայն որ երթայ զկնի, և զեկոյնն, թէև միմեանց անտեսանելիք. բայց ներկայ և տեսանելիք միանգամայն աչացն բարձրադիտին։ Է և երրորդ իմն կարծիք վարդապետաց ոմանց, որք ասեն գոլ այլ գիտութիւն ևս որ կոչի միջանկեալ կամ միջին գիտութիւն. այսինքն յորժամ միտք աստուածայինն ունէին թերևս և ծանօթութիւն գիտացոյց ոմանց, եթէ պարագայիք ոմանք յաղաւթենէ կա-

մաց մարդկան ի կիր արկանէին. և քանզի ոչ արկան ի կիր, նմին իրի չեղեն դիպուածքդ կամ գործողութիւնքդ այդոքիկ տիրապէս։

ՃԶԴ. Մեք յարգելով զկարծիսդ ընդունիմք զնոսա, և պատճառ ոչ ընդունելոյ ոմանց զայս կարծիս այս է, Նախ զի չէ գիտութիւն, այն որ չունի զառարկայ. իսկ արդ և սա չունի զառարկայ. ուրեմն։ Հաստատեն զվիճբանդոյնդ, առարկայքդ կամ դիպողութիւնքդ թէականք կամ ազատք, կամ ունելոյ էին զնզելութիւն և զգոյութիւն և կամ ո՛չ. եթէ ունէին՝ թէև յազատ կամաց, ահա զի պատկանին տեսութեան գիտութեանն. թէ չունէին, ահա զի պատկանին պարզ իմացողութեանն գիտութեան. այսինքն ընդ կարելի և հնարաւոր էական դասին. ուրեմն ոչ ինայ երբորդ իմն տեսակ որ կարիցէ ո՛չ տեսութեան գիտութեանն և ո՛չ պարզ իմացողութեանն պատկանիլ կամ միոյն կամ միւսոյն ի սոցանէ հարկաւ վերաբերիցի։ Ուստի չունի տեղի միջանկեալ գիտութիւնն Աստուած։ Երկրորդ՝ զամենայն ազատ որոշողութիւնս մարդկան ի յաւիտենից ճանաչէ Աստուած միոյնէ ամենապարզ դրծողութեամբ մտացն, իբրև զկարելի էակս, որք ունին զհիմն յաստուածային անդ էութեան. Եւ գիտութիւնն Աստուծոյ անսահման է ո՛չ այսու աղագաւ զի ճանաչէ զամենայն առարկայս ընդ որոշիսի և իցէ տեսական գիտութեան, այլ զի առարկայ յաւիտենական նշմարանաց իւրոց է նոյն անսահման էութիւնն, ամին իրի և գիտութիւնն նորա անսահման կոչի. ո՛չ զի առեղծ զաշխարհ՝ նմին իրի ամենակարող է, այլ զի ամենակարող է՝ նմին իրի առեղծ զաշխարհ, և ո՛չ իակ գադափարք լինել ամենակարող, թէ և չէր նորաստեղծեալ զաշխարհ. նոյնպէս գիտութեան նորա ոչ գոլով, քանզի ոչ դոյ չափ էութեան նորա, որ է նմա առարկայ յաւիտենական, Այսպէս Օգոստինեան և Թովմայեան կոչեցեալ Աստուածաբանք, և Պաւվիէ գալղիացի վիլիսոփայն ի բնական Աստուածաբանութեան իւրում, որոց չեն խոպան եպերելի կարծիք։

ՃԶԵ. Ժամ է մեզ յաւէտ ներքոյիս զնդանակ ճա-



նաչելոյ աստուածային մտացն զնեփական գիտութեանցս այսոցիկ զառարկայս բացայայտել, թէ և Աստուած չիք իրական զանազանութիւն գիտութեան իրականապէս, այլ գիտութիւն նորա միևնոյն է ընդ էութեան նորա, բայց առ գերազանցութեանն բազում գիտութեանց իրապէս զանազանից բառական է, նմին իրի բան զանազանութեան առարկայից՝ զօրութեամբ առեալ Աստուած զանազան գիտութիւնք, բայց ո՛չ ենթակայապէս։

Նախ ճանաչէն և գիտեն միտք աստուածային պարզ իմացման գիտութեամբ զամենայն էակս կարելիս՝ գիւրաքանչիւրն ըստ սեփական բնութեան իւրեանց որոշակի հայելով և նշմարելով զէութիւնն իւր գյաւիտենական. քանզի որպէս աստացաք յէակաբանութեան անդ, ամենայն ներքին կատարելութիւնք կախին յաստուածային էութենէն՝ իբրև աղբիւր կամ յաւէտ նախատիպ ամենայն էութեանց, և ամենայն էութիւնք կարելիք ճանաչեն զբանաւոր պատճառութեանց յաստուածայինն անդ անսահման և ինքնագոյ էութեան, և են իբրև նմանութիւնք և յարաբերութիւնք նոյն անսահման և դերագոյն էութեանն և ճանաչեն ամենքին զհիմն և զսկիզբն իւրեանց յայնմ միայն։ Եւ միտք աստուածային թէ կարօտեր այլում առարկայի ի գիտութեան իւրում բաց յաստուածային էութենէն և արտաքոյ նորա, ապաքէն կատարելագործեր ի գիտութեան իւրում զոր չէ վայել ասել զԱստուծոյ. ապաքէն յէակաբանութեան անդ (ՃՐ) ցուցաք բառականապէս։ Յաւել և զԸրբոյն Թովմայի (*). «Որ ինչ ունի զէութիւն իմն կամ ճշմարտութիւն ինչ, Աստուած գոանի զօրութենաբար»։

Երկրորդ՝ զայնոսիկ՝ որք բացարձակապէս և ազատութեամբ լինելոց են, ճանաչէ և գիտէ Աստուած ի յաւիտենից. քանզի եթէ ամենայն որ ունի յինքեան զիմն էութեան կամ ճշմարտութեան, գոանի զօրութենաբար յաստուածային էութիւնն. և եթէ մի միայն անսահման առարկայ աստուածային մտաց է նոյն յաւիտենական էու-

(*) Ընդդէմ Հեթան. Գիրք Գ. Գլ. Ծ.։

թիւն նորա։ Եթէ գիտութիւնն Աստուծոյ ի յաւիտենից է, հետևի թէ հարկաւ ո՛չ միայն պարզ իմացմամբ ճանաչէ զկարելիսն, այլ և տեսութեան գիտութեամբ ճանաչէ և զապառնի ազատ գործողութիւնս։ Եթէ ասեմք չճանաչէ, և կամ ճանաչէ ի ժամանակի՝ ելզանեմք զԱստուծոյ էութիւնն. քանզի եթէ չճանաչէ և ապա ճանաչէ, ապա կատարելագործի և առաւելու գիտութիւն նորա, և փոփոխի էութիւն նորա, քանզի ստացաւ զայլ վիճակ. բայց Աստուած անփոփոխ է, Աստուած անսահման է, և Աստուած յաւիտենական է. և զի՞նչ է Աստուած՝ բայց միայն զի կատարեալ իցէ. ուրեմն պարտիմք ասել թէ՝ ի յաւիտենից Աստուած տեսութեան գիտութեամբն ծանեաւ զապառնին ամենայն։ Եւ քանզի յաւիտենականութեամբն իւրով տեսանէ զամենայն ի միասին, պարտիմք ասել թէ չիք յաջորդութիւն ժամանակի ի գիտութեան նորա. զի յաւիտենականն՝ անցեալն, ներկայինն և ապառնին ներկայ է, նմին իրի նկատմամբ Աստուծոյ՝ գիտութիւն Աստուծոյ կոչեմք զծանօթութիւնս իւրայն. իսկ նկատմամբ մերոց՝ որ ի ժամանակի և յաջորդութեամբ ճանաչէ զիրս, որ գիտութիւն է Աստուծոյ՝ առ մեզ կանխագիտութիւն կոչի։

Երրորդ՝ միջանկեալ գիտութեամբն ճանաչէ զամենայն ազատութեան գործողութիւնս, որք թէ և չեղեն, բայց այդ՝ զի պարագայք ոմանք եղելութեանն հարկաւորք չեդան. ուստի չեն բնաւին իբրեւ զառարկայս պարզ իմացման գիտութեան կամ պարզապէս ներքին կարելի էակ, այլ առաւել քան զնոսա, այսինքն եղելոյ՝ բայց թէութեամբ իւրով։ Ուստի և այսոցիկ ամենեցուն պարտ է զի տեղեկացին միտք աստուածային։ Այսմիկ վկայեն գոգցես ամենայն մարդիկ, որք վերադրեն զբազում գործողութիւնս կանխագիտութեանն Աստուծոյ ասելով. Աստուած գիտաց յառաջագոյն այսպէս լաւագոյն լինել, նմին իրի թոյլ եա այնմիկ կամ արար զայդ, և քանի քանի մանկունք և երիտասարդք ի ծաղիկ հասակի զմահ ճաչակեն, և զայդ մեք վերադրեմք աստուածային կանխագիտութեան, և ի նոյն



յաղօթս մեր պատասխանս մատուցանեմք առ Աստուած. եթէ ձեռնարկեալ գործոյն բարւոյ իցէ վախճանն, նա ի կատարն երջանկութեամբ հասուցէ, ևն. որք ամենեքին աստուածային միջանկեալ գիտութեանն վերադրին, ըստ Մոլինայի քան Աստուածաբանին. թէպէտ և Օգոստինականք և Թովմայականք ասեն զնա մի լինիլ և նոյն ընդ իմացողութեան գիտութեանն։ Գիտելի է հուսկ ուրեմն թէ կանխագիտութիւնն Աստուծոյ ոչ ասեղծէ զիրս, այլ ճանաչէ զնոսա, և չկարէ ճանաչել զնոսա, թէ ո՛չ նախ առարկայն ենթադրիցի, կամ իցէ։ Գիտութիւնն է վասն առարկային և ո՛չ առարկայն վասն գիտութեան. կամ յաւէտ գիտութիւնն ելանէ յառարկայէն և նմին հետևի, և ո՛չ ընդհակառակն։ Աստուած առանց միջոցի իրիք կամ անմիջապէս ճանաչէ զամենայն. ո՛չ այսպէս միտք մարդոյ, որ ի ձեռն սկզբանց և առածի՝ որք միջոց են, ճանաչէն զիրս։

---

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Ի ՆՈՑՆ

ՑԱՂԱԳՍ ԿԱՆԽԱԳԻՏՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ՃՁԶ. Նախ գիտելի է՝ թէ ամենայն ներքին կարելիքն, ըստ որում յէակաբանութեան անդ (ՃՓ.) ասացաք, յաստուածային էութենէն կախին ըստ էութեանն իւրեանց, և ըստ ճշմարտութեանն՝ յաստուածային մտաց, և են նմանութիւնք կամ յարաբերութիւնք աստուածային էութեանն առ արտաքս։ Գիտելի է երկրորդ՝ թէ ո՛չ գիտութիւնն պարզ իմացողութեան և ո՛չ տեսութեանն գիտութիւն առեղծանեն կամ կացուցանեն զէութիւնս իրաց կարելի իրացս, այս ինչ որ էն, և ո՛չ այն։ Այլ պաշտօն գիտութեանն է ճանաչել զիրն և ոչ առնել զայդ. ըստ որում վտքը մի անդր ծանուցաք, գիտութիւնն է վասն առարկային և ո՛չ առարկայն վասն գիտութեան. այսինքն յաստարկային պարտ գալ գիտութիւնն, և ո՛չ յառաջ քան

զառարկայն : Երրորդ՝ առ Աստուած չիք յաջորդութիւն երկակի ժամանակին, այսինքն անցելոյն և ապառնւոյն, այլ յաւիտենականութիւնն՝ որպէս առաջ, է սեփական. զի միով ամենապարզ տեսութեամբ ներկայ ունիցի ինքեան զանցեալն և զապառնի ժամանակն, յորում կան արարած էութիւնք իրաց : Ըստ այսմ սխալ է ասել Աստուծոյ զգիտութիւն առաջին կամ կանուխ և զգիտութիւն վերջին, այլ յաւէտ ամենայն ինչ ներկայ գոլով ինքեան՝ ճանաչէ զամենայն ներկայաբար, և ճանաչել զիրն ներկայաբար՝ է գիտել զնոսա. ուստի սխալական է իսկապէս և ըստ Աստուծոյ խօսելով, տալն զկանուխ կամ զյառաջագիտութիւնն այսինքն զկանխագիտութիւնն աստուածային մտաց, այլ յաւէտ զգիտութիւնն՝ որ է ներկայապէս ծանօթութիւն իրաց : Բայց ըստ մերս տկար տեսութեան մտաց, քանզի առանց յաջորդութեան ժամանակի չկարեմք կալ և առնել կամ խորհիլ ինչ, նմին իրի ըստ մեր մտաց ասեմք զգիտութիւնն Աստուծոյ՝ զյաւիտենական կանխագիտութիւն Աստուծոյ կամ յառաջագիտութիւն Աստուծոյ : Բայց չէ կանխագիտութիւն յԱստուած, այլ պարզ և յաւիտենական գիտութիւն : Զորրորդ՝ առաջք չէակաբանութեան անդ թէ էակքն կարելիք յաւիտենականք են, ըստ որում նմանութիւնք աստուածային յաւիտենական էութեանն և ճշմարտութիւնք յաւիտենականք և անփոփոխելիք, ներքին կատարելութիւնն՝ որ ոչ երբէք ի գոյութիւն եկեալ, է առարկայ աստուածային պարզ ըմբռնման կամ խնայողութեանն գիտութեան · արտաքինքն որքան են՝ եղեռն և եղիցին՝ բացարձակապէս յաղաւս կամացն և ի հարկէ բնութեանն են առարկայ տեսութեան գիտութեանն Աստուծոյ : Ս. յոգիկ այսպէս եղելոց՝ դիւրաւ լուծանին ամենայն դժուարութիւնք, որք ծագին վասն կանխագիտութեանն Աստուծոյ և յաղաւսութենէ կամաց մարդկային գործողութեանց. քանզի առն նախ .

ՃՁԷ . Եթէ ընդունիմք յԱստուած զկանխագիտութիւնն, ապաքէն ուրանալ տիպիմք զազատութեանն



մարդոյ զգործողութիւնս . քանզի զոր յաւելագոյն գիտաց Աստուած, այդ անպատճառ լինելոց է, քանզի անսխալ է նորայն կանխագիտութիւն : Այլ՝ անսխալ է նորայն կանխագիտութիւն, սակայն ըստ եդեալ սկզբանցն և ճշմարտութեանց՝ Աստուած ի յաւիտենականութեան իւրում տեսութեան գիտութեամբն ծանեալ ի յաւիտենից զազատ գործողութիւնս մարդկային կամաց . նախ՝ չի՛ք ինչ ի կանխագիտութենէ . քանզի նախ գնի էութիւն գործողութեանցդ իբրև առարկայ աստուածային գիտութեան, որով հետևաբար Աստուած ճանաչէ զգործողութիւնդ . քանզի ասացաք թէ եղանակ յաւիտենական գիտութեանն է՝ զամենայն զանցեալն և զներկայն և զապառնի, ի մի գործ տեսութեան և պարզապէս ներկայ տեսանել զիրս, որք առ մեզ առարկաբար ի յաջորդութիւն ժամանակի կատարին . բայց առ Աստուած ենթակայապէս յաւիտենականութեամբ տեսանին : Ըստ այսմ Օգոստինոս (*) . « Ձի՞նչ է կանխագիտութիւնն, եթէ ոչ գիտութիւն հանդերձելոցն . բայց զի՞նչ հանդերձեալն իցէ առ Աստուած, որ զամենայն ժամանակօքն անցեալ զանցանէ . քանզի եթէ գիտութիւնն Աստուծոյ ունի զնոյն իրս՝ չեն հանդերձեալ նմա, այլ ներկայ . Եւ ամին իրի ոչ արդէն կանխագիտութիւն, այլ գիտութիւն ևեթ ասիլ կարէ », և այլուր ևս (**) « Ցառաջ քան զի լինէին իրքն, էին և չէին . էին ի գիտութեան Աստուծոյ, չէին ի բնութեան իւրեանց, այսինքն ի գոյութեան », Երկրորդ՝ աստուածային գիտութիւնն ոչ է պատճառ իրացն, այլ է ծանօթութիւն իրացն քաղեալ յիրացն անտի, որք ունին զհիմն իւրեանց յաստուածային անդ էութեան, զորօրինակ թէ ոք տեսանէ ի հեռաստանէ զկոյրն որ երթայ անկանել ի խորխորատ, միթէ համարիցի՞ պատճառ անկմանն, քա՛ւ . բայց և ոչ գիտութիւնն իսկ ունէր տեղի, թէ չէին առարկայք նորա . զի ոչնչին ոչինչ է և ծանօ-

(*) Առ Սիմպլիկիա . Գիրք ԺԱ . վ. ի՛ճ . Բ . :
(**) Ցաղագս Երրորդութեան :

թուխքիւնն ։ Երրորդ՝ գիտութիւնն Աստուծոյ ճշմարիտ է, յորժամ յարմարի առարկայի իւրում. ապա թէ ոչ չլինէր աստուածութիւն կամ ճշմարտութիւն. և եթէ ի յաւիտենից ծանեաւ զառարկայս իւր, ըստ բուն բնութեանն ծանեաւ զնոսա. այսինքն որպէս հանդերձեալ էին լինել ի բնութեան իւրեանց ։ Որք հարկաւորութեամբ լինելոց էին, ըստ հարկաւորութեան բնութեանն ծանեաւ զնոսա. և որք ըստ բնութեանն ազատ լինելոց էին, իբրև ազատս ծանեաւ զնոսա. ուստի ոչինչ անտի միտս բնութեանն ապագայից ի կանխագիտութենէն Աստուծոյ ։ Եւ անսխալ է և հեռւաւոր ծանեաւ զնոսա, քանզի ամենայն և վերջին որոշմունք ազատ կամացն ի սկզբանէ բանաւորութեան մարդկան և գործողութեան ազատութենանն մինչև ցվերջն իբրև զկէտ մի ներկայք են յաւիտենական գիտութեան նորա ։ Ուստի եթէ գիտութիւնն նորա անսխալ է, ո՛չ թէ պարտաւորէ զազատութիւն կամացս մարդկան ըստ գիտութեան իւրոյ գործել, այլ նմին իրի անսխալ է՝ քանզի ամենայն յետինն որոշմունք և առաջինք ներկայ են նմա՝ իբրև արդէն եղեալ և լրացեալ, և անհնար է զի յայլ որոշմունս հակիցի, և յետ աւարտման՝ լաւ և առաջից, յետ աւարտման գործոյն՝ հեռւաւոր և անսխալագէս տեսանէ զնա։ Կամ հեռւեալ հարկաւորութեամբ գիտութեանն, այսինքն ենթադրելով զգործողութիւնն նախ՝ և ո՛չ յաւաղ քան զայդ կամ յաւաղենթայ հարկաւոր գիտութեամբ. քանզի զոր միանգամ աւարտեալ ծանեաւ՝ յանհնարին է անաւարտ լինել կամ չեղեալ ճանաչել,

ՃՁՐ. Իակ թէ այնգիտես արդէն չեն եղեալ, զի՞րդ ներկայ ունիցի ինքեան գիտութիւնգ աստուածայինն զնոսա, ասեմ թէ ներկայ ունի յայնժամ զնոցայն զազատանութիւնն՝ թէ արժան իցէ այսպէս խօսիլ. քանզի յաւիտենականութեամբ տեսանէ զազատնեսին՝ իբրև զներկայ, զչեղեալսն տակաւին՝ իբրև զեղեալս ։ Ուստի յաւաղագոյն ծանեաւ Աստուած զհանդերձեալ իրս՝ քանզի հանդերձեալ էին որոշմամբ կամացն և հեռւաւոր, և ո՛չ թէ հանդերձեալ եղեն իրքն՝ քանզի ծանեաւ զնոսա Աս-



տուած ։ Կա՛ք զի օրինակ կանխագիտութեանն Աստուծոյ զՁերն՝ որ առաքիցէ զծառայն իւր ի քաղաքն, և յերկուց ճանապարհաց որ առաջի կան այնց ծառային, զուդիղն ցուցցէ նմա զպղտոտայն, և մի՛ երթալ խրատիցէ զնա ընդ միւսն՝ որ տանիցի ի գիւղն, և ինքն եկեալ ի բարձրադիտակ լերինն նշմարել կամ գիտել զծառայն ։ Եթէ ծառայն նախ անսացեալ խրատու տեսանն՝ կայցի զուդիղն, և ապա կամովին թողեալ զայդ չերթիցէ ի միւսն՝ որ տանի ի գիւղն, ապաքէն յառաջ քան զհասանել անտահակ ծառային ի գեօղն՝ տեսանն նորա կացեալ ի բարձրադիտակն տեղւոջ՝ ծանեաւ արդէն զվախճան նորա ։ Արդ յառաջագիտութիւնն տեսանն պատճա՛ռ հանդերձից տեսչութեան ծառային իւրոյ, քա՛ւ լիցի, նմանապէս են ։ Ուստի սխալ է տեսչն ոմանց՝ թէ Աստուծոյ գիտութիւնն ոչ է անփոփոխ, կամ թէ տեսանէ Աստուած զազատութեան մարդկան զգործս՝ ո՛չ անփոփոխապէս տեսանէ զնոսա կամ անսխալապէս, այլ մակաբերութեամբ իւիք, ըստ որում գերիմաստ է. բայց անարժանութեամբ ասեն՝ զի գիտութիւնն մակաբերական է կատարելութիւն՝ բայց պակասութ, և Աստուած չունին տեղի պարզ կատարելութիւնքն ըստ իմիք կամ խառն՝ այլ ամենայն կատարելութիւնք նորա են ամենապարզք՝ այսինքն գերագոյնք, և չկարեն կալ ընդ նուաստագոյնն ։ Եթէ գիտութիւնն աստուածայինն մակաբերական է, ուրեմն կարէ սխալել, բայց որ կարէ սխալել՝ չկարէ լինել լրումն էութեան և գիտութեան կամ գերագոյն էակ, այսինքն Աստուած. զի չէ Աստուած՝ բայց միայն զի կատարեալ իցէ. ուրեմն ։

ՃՁԹ. Սակայն՝ եղեալ թէ Աստուած ի յաւիտենից գիտաց զբաւութիւնս կամ զէակս, քանզի ունին սոքա զէութիւն իւրեանց առարկաբար կամ իրապէս. բայց չհետևի թէ և միանգամայն գիտել կարէ և զչարութիւնս կամ զմեզ՝ որք չունին զէութիւնն ։

Սակայն թէ զերօրինակ Աստուած ի յաւիտենից ծանեաւ զամենայն զբաւութիւնս, նախ՝ յէութեան իւրում իբրև յարմանն ամենայն բարութեանց, և երկրորդ՝ ի սեփական

և յապուրդ չնորհէ լիովին աստուածային կամացն, վասն որոյ կամքն աստուածային հարկաւորապէս կամի և խընդրէ զկնի սեփական առարկայ բարութեան, և ի կամէն գիրն հարկաւորապէս՝ չեն կամքն ազատ։ Մերս ուրեմն բան է զազատ կամացն Աստուծոյ. ուստի ասեմք, թագ յաստուածային էութենէն՝ որ է ներքին առարկայ աստուածային կամացն, կան և արտաքին կամ արարած բարութիւնքն, որք առեղծան և գոյացան ըստ պատկերի և նմանութեան աստուածային էութեանն, որք են յատկութենական էութիւնք կարելւոյն և նախատիպք առեղծեալ բարութեանց։ Զայս առեղծեալ բարութիւնս ևս կամին կամքն աստուածային, բայց զանազանութիւն է մեծ ընդմէջ առաջին և սեփական առարկայի Աստուծոյ կամացն և երկրորդական առարկայից նորա. զայդ հարկաւ պահանջէն՝ և զայսահիկ պատահմամբ և ազատութեամբ։ Քանզի էութիւնն աստուածային է վերջին վախճան և յաւիտենական աստուածային կամաց. իսկ բարութիւնքն արարածք պատճառին ի կամաց Աստուծոյ, ոչ իբր սեփական առարկայ և վախճան՝ այլ երկրորդաբար. քանզի էութիւնք արարածք են վասն էութեանն Աստուծոյ, և ոչ վասն երջանկութեան կամ լրման աստուածային կամացն, և առ երջանկութեան աստուածային կամաց չեն պարտ բարութիւնքս այսոքիկ, այլ են գործ աստուածային կամաց՝ վասն յայտնութեան փառաց մեծվայելչութեան և գործութեան Աստուծոյ։ Ահա ի չհամել զայսոսիկ բարութիւնս կամ կամել աղաս է Աստուած։

ՃՂ.Ա. Դարձեալ՝ կարողութիւնն կամաց կամ ազատութեան Աստուծոյ ոչ կայանայ ի կարողութիւնն կամելոյ և չկամելոյ զմի և զնոյն ինչ, և կամ կամելոյ զբարին և զընդհակառակն բարւոյն՝ զչարն. քանզի այդ ի մարդկային տկարութենէ անտի յառաջ գայ, և ի տկարամտութենէ մերմէ. քանզի որ կամի զմի ինչ, և ապաշաւեալ չկամիցի զայդ՝ կարճամիտ է կամ տկարամիտ. բայց չիք կարճամտութիւն կամ տկարամտութիւն առ Աստուած. և որ կամի նախ զբարին, և ապա զհակառակ բարւոյն զգ-





բնութեանս իւրեանց և ի գոյութեանն. նոյնօրինակ տեսանէ ի յաւիտենից զընդդէմ բարութեանցս այսոցիկ. զոր օրինակ ճանաչեմք զխաւար իբր պակասութիւն լուսոյն, այսպէս զմեղս իբրև պակասութիւն և ներհակս կարգի բնութեան և բարութեանց։ Ուստի ո՛չ իբրև սեփական էութիւնք, այլ պակասութիւնք բարութեան ճանաչին. որ ճանաչէ զբովանդակ բնութիւնն բարութեան, հարկաւ ծանիցէ զպատկասիլն անգամ այսր բարութեան, այսինքն զմեղս և զչարութիւնս, և զայդ ի յաւիտենից՝ զի չիք անցեալ և ապառնի առ որ յաւիտենականապէս կայ։

---

## ՅՕԳՈՒԱԾ Թ.

### ՅԱՂԱԳՍ ԿԱՄԱՑ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ՃՂ. Կամքն կամ կարողութիւնն կամաց ասհմանի, «կարողութիւն փափաքելոյ զբարին և խորշելոյ ի չարէն կանխաւ մտօք ըմբռնելով զնոսա». Աստուած կամքն կամ ազատութիւնն մի և նոյն են ընդ էութեան նորա, և չիք ինձ խտիր կամ զանազանութիւն իրապէս ընդ մէջ աստուածային կամացն և էութեան. նմին իրի անփոփոխելի է նորա կամքն, և կատարեալ և ամենապարզ որպէս նորայն էութիւնն։ Եւ եթէ ի դասս զանազանութեան ինչ դիցի, այդ զբօրութեան է, և ո՛չ իրական. սմին իրի ըստ առարկայիցն է և զանազանութիւն կամաց նորա։ Երկու են ընդհանուր առարկայք աստուածային կամացն. մին ներքին, այսինքն էութիւնն աստուածային՝ որ է դերազոյն բարութիւն և աղբիւր ամենայն բարութեանց. երկրորդ՝ արարած բարութիւնք։ Նկատմամբ աստուածային էութեանն՝ քանզի խնդրել զբարին սեփական է կամացն, կամքն աստուածային խնդրէ զիւր բարութիւնն, որ է աստուածային էութիւնն, որ և քանզի առարկայն աստուածային կամաց՝ է էութիւնն անսահման Աստուծոյ, որ ընդ

չարն, այնպիսին բնութիւնք սխալական է և չարութիւնք ղաժեալ. բայց չէք առ Աստուած վրիպանակ նշմարանք և չարութեան։ Ա.Լ յայտ կայանայ կամք և ազատութիւն Աստուծոյ, զի զարարած բարութիւնս յաւէտ այսքան կամի և յայս աստիճան բարութեան, և ո՛չ այլ քան և յայլ աստիճան. բայց դխոել պարտ է՝ թէ առելով պարտած բարութիւն, չէ պարտ ի միտ առնուլ զյատկանական ճշմարտութիւնս կամ զէութիւնս կարելեացն. քանզի որպէս ասացաք՝ ի յատկանէից անփոփոխելի են նոքա, զի որպէս ասացաք՝ ի յատկանէից անփոփոխելի են նոքա, և չանկանին ընդ կամաք Աստուծոյ, այլ հիմնեալ կան և հաստատեալ ի յատկանէից էութենէն աստուածային։ Եւ ո՛չ իսկ զխոութեանն Աստուծոյ ննջեակայ են կարելեացն էութիւնք, այսինքն չկախին ի զխոութենէն Աստուծոյ. և առաւել չկարեն կախել ի կամացն Աստուծոյ, որ հնար առաւել չկարեն կախել ի կամացն Աստուծոյ, որ հնարաւոր է զխոութեան ներա։ Ա.Լ մի միայն արարած բնութիւնք՝ զոյացութիւնք առնմանելոք՝ կախին և խնդրին Աստուածային կամացն՝ իրրև երկրորդաբար, կամ յարմարութեանք իւրք. այսինքն վասն յայտութեան փառացն և կարողութեանն Աստուծոյ, այր վասն առեղծ կամաց աստուածային զաչխարհ և զիրեցութիւնն ինձա։

ՃՂԲ. Ա.յսմիկ աստուածային դրծոզութեանն, որով կամի և սիրէ զաչխարհ, առաք զանազան կամաց բարեհաճութեան կամ անաստրկութեան, որ և խնդալէս կամք հաճութեան կամ անաստրկութեան, որ և խնդալէս կամք կոչի. քանզի նիհ մեք կամիմք զիմն, կամիմք զայն իբրև բարութիւնս մեզ. այսինքն զոր ոչն ունիմք, յանկամք ունել, բայց ո՛չ այսպէս Աստուծոյ կամք են. քանզի մեզ կամք անցանել ի զոյութիւնել ի դրծոզութիւն, որով և կամք անցանել ի զոյութիւնել ի դրծոզութիւն, որով և կատարելագրծի. զի լաւ է դրծոզութեամբ կալն քան զդատարկութեամբ, և առ Աստուած չիք կատարելութիւնն առանց գործոյ։ Դարձեալ կամք Աստուծոյ, ըստ մեզ զօրութեան, Դարձեալ կամք Աստուծոյ, ըստ մեզ զօրութեան, դնեցեալ կամն և ի յերկրորդ կամ հնարաւորել կամն, նա՝ յորժամ ի կոզմունէ առարկային չհ

աստածային էութեան, որ հարկաւոր իցէ աստուածային կամաց. ուրեմն բաց յաստուածային բարութենէն կամ չէութենէն՝ որ նոյն է, չիք այլ բարութիւն ինձ՝ որ հարկաւոր առարկայ իցէ աստուածային կամաց. ուրեմն կամն Աստուծոյ զայլ բարութիւնս՝ ոչ է կամել զնոսա հարկաւորապէս, այլ կոչի կամք և կամեցողութիւն ազատ. ուրեմն են, Երկրորդ՝ ցուցանի ի հարկաւորութենէ էութեանն Աստուծոյ, զի եթէ այլ բարութիւնքն իսկ հարկաւոր առարկայ լինէին աստուածային կամաց, հնարէր անտեղութիւնն՝ թէ բաց յաստուածային հարկաւոր էութենէն պէտք և հարկաւոր լինէին և այլ բարութիւնք առեղծուածոց, այսինքն ամենայն ինչ հարկաւոր, որ ընդդէմ է մտաց սկզբանց և բնութեան կարգի. Երրորդ՝ եթէ առեղծեալ բարութիւնք հարկաւորապէս կամիցին Աստուծոյ, աստուածային կատարելութիւնն առաւելցի և նուազէր, քանզի անցանէր ի զօրութենէ ի գործն. և լաւագոյն է արգեամբ առանալ և գործով զնոսին՝ քան թէ զօրութեամբ կամ ընդունակութեամբ. զի էր երբեմն, յորժամ ոչ էին բարութիւնքդ, և այժմ են. և եղիցի երբեմն՝ յորժամ բազումք էին, և այժմ չեն. Զորրորդ՝ նոյն իսկ բնութեանն օրէնք ցուցանեն զայդ ազատութիւն կամաց Աստուած. քանզի եթէ հարկաւորապէս կամէր Աստուած զաշխարհ, առ ինչ ի յաւիտենից չէր աշխարհ. և եթէ Աստուած հարկաւորապէս կամէր զաշխարհ, և ինչ զսխեղբս չարար ոսկւոյ և ազատուական քարանց, Չինդերորդ՝ եթէ մարդն գործ աստուածային ձեռամբ վայելէ ազատութեան ձրիւք, զիա՞րդ Աբրիէն արարածոց և ազբիւրն ամենայն կատարելութենանց պրկիցի յայդ կատարելութենէ. բայց ազատքէն տիմարութիւն մեծագոյն ժխտողացն զայս՝ զկամացն և զազատութիւնն զկատարելութիւն աստուածային բնութեանն. յաւէտ ի գժուարութենան նկրտեսցուք,

## ԼՈՒԾԱՆԻՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՆՔ

ՃՂԴ. Աստուածն նախ՝ Աստուած չիք զանազանու-



թիւն գործողութեան, որով գործողութեամբ կամացն կամի և սիրէ զէութիւն իւր, նոյնին գործողութեամբ կամի և սիրէ զարարած բարութիւնն կամ զայլսն. իսկ արդ գործողութիւն կամաց՝ որով սիրէ զինքն, է հարկաւոր. ուրեմն հարկաւորապէս կամի և զայլսն, Բ. Եթէ Աստուած՝ որ հարկաւորութեամբ սիրէ և կամի զէութիւն իւր, նոյնին կամաք չսիրէ և զայլսն՝ փոփոխութեամբ գործողութեանցն արտաքոյ զէութիւն իւր, որ է անփոփոխելի, Գ. Որ կամի զվախճանն՝ կամիցի և զմիջոցն հարկաւորս վախճանին. իսկ արդ կամի Աստուած հարկաւորութեամբ զէութիւն իւր, և զէութեան իւրոյ և զկարողութեան զիարս. ուրեմն պարտի կամել հարկաւորութեամբ և զայլսն,

Պատասխանեմ առ Ա. զանազանելով զմիջադոյնն. որով գործողութեամբ զինքն՝ նոյնիսկ և զայլսն, այսինքն գործողութիւն իւր՝ որ յաւել գայ ի ներքուստ յաստուածային բնութենէն, է նոյն ընդ որ ստրածի արարքս, է նոյն՝ ըստ արմատոյն և բնութեանն՝ ընդունիմ. է նոյն ըստ առարկայիցն՝ ուրանամ. Նոյնպէս զանազանելով զվերջադոյնն, ուրանամ զհետևեալն և զհետևութիւնն. և ի բացայայտութիւն զանազանութեանցն առաջ, Ա.յ՝, սկիզբն գործողութեան և արմատ՝ է նոյն աստուածային էութիւնն, բայց որ նոյն է ներքուստ՝ ոչ նոյն ինչ արտաքուստ ըստ յարաբերութեանն՝ որով յաճի յաւարկայս. Եթէ յաճի գործողութիւնն կամաց ի նոյն էութիւն իւր, քանզի է յղացիչ երջանկութեանն Աստուծոյ, հարկաւորութեամբ յաճի կամ յախշտակի ի ներգործն առարկայէ իւրմէ. Բայց ոչ այնպէս յաճի յառարկայն՝ որ չէ վախճան իւր. զորօրինակ մի և նոյն ազբերն ջուր յերկուս առուս բաժանեալ, եթէ յառուցդ միոյ կոր ի խոնարհ բացեալ իցէ և միւսն ուղիղ ի հարթ դաշտն, նոյն ջուրն ազբեր սրընթաց հոսանօք ի խոնարհեալ առուն, և դանդաղեալ ի միւսն աստանդութեամբ չրջաբերեցի. զի՞ է միթէ փոփոխեցա՞ւ բնութիւն ազբերն ջուրց, քա՞ւ այլ բաս յարաբերութեան վտակաց զանազան լինին ջրոյն

ընթացք. Մին սրընթաց վազէ, քանզի քարչի ի կեզրանն և վախճան, և միւսն յուլայնալ գանգատէ, քանզի իբր յոչ կարացեալ արտաքուստ գվախճանն խնդրէ՝ ըստ սոյն օրինակի.

Ա.ռ Բ. Աձեմ զանազանելով. նոյնպէս փոփոխի իսկապէս ի ներքուստ՝ ըստ արմատոյն, ուրանամ. փոփոխի անիսկապէս արտաքուստ՝ այսինքն ըստ յատկութեան առարկային, և սորին բնութեան՝ ընդունիմ։ Ա.յո՛, ընդունի զփոփոխութիւն իմն, բայց յատկ արտաքուստ՝ որ ո՛չ ճշտաւէ իմն ներքին բնութեանն. զորօրինակ եթէ յոչ կոշմն զո նատցին տան բարեկամք ունիք, և ապա եկեալ անցցեն յահեակն, այս փոփոխութիւն իմն տանեաց բայց յատկութեամբ և արտաքուստ՝ ո՛չ թէ բնութեամբ ի ներքուստ։ Ուստի.

Ա.ռ Գ. Պատասխանեմ զանազանելով. որ կամի զվախճանն՝ կամի և զմիջոցն, եթէ առանց միջոցացդ բացարձակապէս չկարիցէ առանալ զվախճանդ՝ ընդունիմ. եթէ կարիցէ՝ ուրանամ, քանզի, այո՛ առնդ Ա.ստուած զարատ բնութիւնն վասն յայտնութեան փառաց իւրոց, և առարկելոյ, բայց չառնդ հարկաւորութեամբ և առնմանէ. թէ ո՛չ պակասէր ի կատարելութիւնս, եթէ չէր առնդեալ զայնքարն. ուր յայտ է թէ՝ որպէս էր ի սկզբան երջանիկ՝ նոյն երջանիկ կայ այժմ, և յետ յարեան. որում հաճոյ զվախճանն, չէն պէտ միջոցք հաճոյանելոյ այնմ. և եթէ հաճոյելոյն վախճանին իւրոյ դէպ յետ միջոցս որոնել, այդ ո՛չ ի հարկաւորութենէ՝ այլ յատկութեամբ առնէ զայդ և վասն յարմարութեան իրիք։ Նմանապէս կամացն Ա.ստուծոյ չիք իմն հարկաւորութիւն որոնելոյ զայլ բարութիւնս՝ մերթ ինչ չիներեան երջանկութեամբ կայ։ Բայց վասն փառաց էութեան իւրոյ կամի և զարարածն. և այդ վասն յարմարութեան փառաց էութեանն և ո՛չ հարկաւորութեան։

---



## ՅԱՂԱԳԱՍ ԳԱՒԹԱՍԱՀԱՄԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՑ ՅԱՍՏՈՒԱԾԱՑՒՆ ԿԱՄԱՑ Ի ՅԱՒԻՏԵՆԻՑ

ՃՂԵ. Գնաչ ի մտի և առալի աչաց ունել պարտիք զոր ինչ միանգամ առապաք զգիտութենէ կամ զկանխագիտութենէն Ա.ստուծոյ (ՃՁՍ. ևն.), զորս եթէ տիրապէս ի միտ առիք, արդէն դուք իսկ ձեզէն իսկ հետևումբիւն այդոցիկ ամենեցուն գնետ բերէք զիրացն ամենեցուն գյատկութենական վճիռ և գնախատահմանութիւն, եւ ննիշատրեալ զորս ծանուցաք ի (ՃՁՉ), յատկութիւնք ի նոսա և զայս՝ թէ կարողութիւնն կամացդ հետևի կարողութեանն մտաց, վասն որոյ և ի փիլիսոփայից կամքն կոչի կոյր կարողութիւն. քանզի միշտ գէտս ունի լուսաւորութեան մտացն, այնպէս զի եթէ կամացն առարկայք ի ճառագայթից մտաց անտի չլուսաւորին, ո՛չ երբէք կամացն առանձին, և ի կամացդ անտի փափաքելի լինին, զոր բացայայտ ճշմարտութեանն՝ թէ «անձանօթին ո՛չ երբէք փափաք լինին», կամ «անձանօթի չիք և փափաք». պիտ՞ղ փափաքեացիս զոր ոչն գիտես։ Բ. Գիտել պարտ է՝ թէ կամքն՝ որպիսիս ներկայացուցանեն մտք զառարկայս, այնպիսիս և ո՛չ այլազգ փափաքին և կամին զայդ առարկայս։

ՃՂԶ. Ուստի այսոցիկ այսպէս եղելոց, յայտնապէս ի բնականապէս հետևի՝ թէ զոր ինչ միանգամ կամքն առաւածային ի յաւիտենից վճռեալ իցէ, զայդ կամելով վճռեալ է. և զոր կամքն վճռեցին՝ այսպէս կանխաւ ծանուցեալ էին արդէն մտաց գնոսա այնպէս. և որպէս մտաց ճառագայթել մտոյն կարեն զառարկայս իւր, և ո՛չ թէ առնդանել գնոսա, և նոյնպէս կամքն գներկայացեալսն նմին ի մտոյ առանց փոփոխելոյ գնոսա կամի և վճռէ։ Գիտելի է՝ թէ որպէս յէակարութեան անդ առաջաք (ՃՒ.), ներբին էութիւնք իրաց ո՛չ մտոյն չիակեին յառաւածային կամացդ,

այլ և ո՛չ յաւուրածային մնայ, և մի միայն յաւուրածային էութենէն կախին. աւուրածային միտք հայեցեալ լիւր սեփական յատկութենական առարկայն՝ նշմարեն զոր առաջի աչաց ունին, և տեսանեն զոր ինքեան ներկայ է, այն է գյատկութենական էութիւնն Աստուծոյ. և որպէս անդ աւուրց, ո՛չ միայն տեսանեն աւուրածային միտք զէութիւնն յատկութենական ևեթ, այլ և յայս յաւուրածային էութենէն տեսանեն զամենայն էութիւնս բարութեանց և իրաց, որք պարունակին իբրև յատմանն և յաղբիւրն ամենայն բարութեանց, և ևս տեսանեն զամենայն նմանութիւնս և գյարաբերութիւնս առ արտաքս այսր աւուրածային էութենէն և զոյին պահպանութիւնս: Զոր ինչ տեսանեն միտք և նշմարեն լիւր սեփական յատկութենական առարկայն, և իսկոյն իբր յաղբիւրն և յատմանն ամենեցուն իրաց, զնոյնն միտք ներկայացուցանեն աստուածային կամաց. և կամացն կոյր գործով կարողութիւն՝ կամի և փափաքի ներկայանալ առարկային, և կամելն Աստուծոյ վճիռ գոսի մէջ՝ և լսի: Եւ քանզի Աստուած ի յատկութենականութեան կայ, տեսանէ, և կամի, այսինքն զամենայն ինչ առանց սպասման և առանց անցելոյն, այլ ներկայաբար լիւր էութենէն, և գյարաբերութիւնս և զնմանութիւնս և զպահպանութիւնս այսր յարաբերութենէն, հետևի թէ՝ և զէութիւնս իրացն ի յատկութենէ տեսցէ, այսինքն և զնմանութիւնս և զպահպանութիւնս այսր նմանութենէն, և հետևաբար ի յատկութենէ գիտասցէ, և ըստ այսմ՝ կանխագիտութենէն կամելի ի յատկութենէ ընդնմանութիւնս էութեան իրոյ և գյարաբերութիւնս սորա առ արտաքս: Տեսանելն և կամելն ի յատկութենէ զայս նմանութիւնս, գյարաբերութիւնս և զպահպանութիւնս սոցա՝ է և կոչի ոմանք ՆԽՆԱՄԱՆՈՒԹԻՒՆ ԷՈՑ. ո՛չ թէ էութիւնք իրացն յաւուրածայնոյ անտի նախատահմանութենէն ելանեն, այլ սա յայնցանէ. այսինքն եթէ նախատահմանեալ իմն, է՝ քանզի այնպէս էր յինքեան. ո՛չ թէ այնպէս եղև յինքեան, քանզի նախատահմանեալ էր: Նախ՝ են և յաւուրածին էութիւնք իրաց, և անտի բղխէ



նախատահմանութիւնդ այդ, և ո՛չ թէ ակիզբն և պատճառ էութեանց իրացդ է նոցին նախատահմանութիւնն, Բայց որպէս ծանուցաք զկանխագիտութենէն, նոյնպէս զնախատահմանութենէն ասեմք, բուռդ այդ է ոմանցն, քանզի Աստուած ի յատկութենականութեան կալով, ինձին կամի և վճռէ զիրս. այսինքն ասացոյ զնախակին և զկետին ժամանակն սակայ աստուածային էութեանն, ասա որ չի՛ք ապառնի իմն և ո՛չ անցեալ, այլ ամենայն ինչ ներկայ և մերկապարանոց կայ նմին. քան այսոցիկ գրեաց և Աստքեալն (*). « Ձի զորս յաւուրն ճանաչէր, յաւուրագոյն և հրաւիրեաց, և զորս յաւուրագոյն հրաւիրեաց, զնոսին և կոչեաց, և զորս կոչեացն, զնոսին և արդարացոյց »: (**) Ըստ այսմ « Ողորմեցայց, որում ողորմեցայցին ». են. յորմէ յայտ է թէ կամքն աստուածային հետևի կանխագիտութենեն. իսկ սրդ գիտութիւնն ճանաչէ զառարկայն և ոչ առեղծանէ զէութիւն իրաց. ուստի և ո՛չ նախատահմանութիւնն՝ որ է դրդծողութիւն աստուածային կամաց՝ փոփոխէ զէութիւն իրացն: Դադարեսցին ուրեմն անօրինացն անիրաւ արտունջք ընդդէմ աստուածային կամացն և պատուհասին նախատականք, որք չուարեալք և նեմնացուցեալ զխիղճ մտացն և զլոյսն բնական՝ զԱստուած ունին և զաստուածային կանխագիտութիւն և զնախատահմանութիւն զոմացուցանեն թիւրեալ սրտից իւրեանց իբրև առիթ. որոց

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՃՂՂ. Նախ՝ յառաջ քան զլինել բարոյական գործոց յաղաւութենէ մարդկան, առ Աստուած արդէն ի յատկութենից ծանուցեալ և վճռեալ միայր վերջ և վախճան ամենայն մարդկան: Իսկ սրդ բառնին այսու ամենայն բարոյական գործողութիւնք մարդկան, և աղաւութիւնս մեր յումեքս, որ է ընդդէմ բնական և բարոյական սկզբ-

(*) Հռոմ. Ը. 29. 30.
(**) Անդ. Թ. 15.

բանց : Ուրեմն ճշմարտապէն է ասել թէ չէք իմն վճիռ յաւիտենից սատուածային կամաց . կամ նախատահմանութեան : Բ . Առեղծան ամենայն բանական կենդանեաք ի փառս Արարչին և սորոգելոյ նորա . եթէ ի յաւիտենից սահմանէին ոմանք լինել երջանիկ և ոմանք ապերջանիկ , ապաքէն հեռանին անառեղութիւնք բազումք , օրինակ իմն՝ ընդդէմ իմաստութեան՝ ընդդէմ նախախնամութեան , գթութեան , արդարութեան Աստուծոյ են . քանզի զրկեր Աստուած ի վախճանէն ի մասին ապերջանկացն , ո՛չ գթայնալ ինոսա հաւասարապէս ո՛չ նախախնամել և սիրել զնոսա . ուրեմն չէք վճիռ ի յաւիտենից :

Ա. Ա . ընդունիմ զմեծապոյնդ , և ուրացեալ զխորքագոյնդ , ուրանամ և զերկրակացութիւնդ , և ի բացայայութիւն որոց ասեմ . չէք երբէք արդելք մարդկային ազատութեան և բարոյական գործողութեանց ի նախասահմանութենէ անտի աստուածայնոյ . քանզի որպէս ասացաք , Աստուած ի յաւիտենականութեան կայ , և չէք առ Աստուած ապառնի կամ անցեալ . որք եղեն , և որք լինելոցն մինչև ցյաւիտեան կէտ աչխարհիս . ամենեքեան ներկայ են յաչս նորա . և որ վշտացուցանէն զմեզ , է մի միայն տկարութիւն և թէութիւն կենցաղս . քանզի մեք ի յաղորդութեան կեանքն ժամանակին , բան մուտ մերոց հասանելոյ կեանքն և զԱստուած . բայց ոչ է այնպէս . և զտրօրինակ մարդ ոք առաքի աչաց ունելով զերկուս ունիս , յորոց մին ի բարեբարել կայ , և միւսն ի խաչատնել զմարդիկ , անխտրապէս զամն զառաքինին արդար և զմիւսն անիրաւ , նոյնպէս Աստուած զամենայն ինչ ունի առաքի աչաց ներկայ , և տեսանէ զամենայն , ճանաչէ զամենայն և կամի զբարին և զարշի ի չարէն , թէպէտ և մեզ ազատեալ թողեալ և անցեալ , բայց ո՛չ այնպէս յաչս Աստուծոյ . ուստի միտք աստուածային իրրև նիւթ և առարկայ ունի ինքեան զամենայն գործողութիւնս ազատ կամաց մարդկան . և աստուածային միտքն ոչ փոխէ զէութիւն իրաց , այլ միայն ճանաչէ զնոսա , զէութիւնս նոցա և զորպիսութիւնս նոցա , և որպէս ներկայացուցանէ զառարկայս իւ-



րեանց աստուածային կամաց , կամքս այս այնպէս փոփոխի այնց առարկայից՝ եթէ ներելութիւնք են աստուածային էութեանն . և գարշի յայնց՝ որք չեն ներելութիւնք՝ կամ են պակասութիւնք ներելութեանց այսոցիկ : Ուստի ազատութիւն և ազատ գործողութիւնք մարդկան յաստուածային քան զաստուածային դիտութիւն և զվճիռ . քանզի է գիտութիւնն վասն առարկային , և ո՛չ թէ առարկայն վասն գիտութեան . կամ լաւ ևս առայիս , եթէ է գիտութիւն ինչ , է՝ քանզի է գիտելի առարկայ , ո՛չ թէ առարկայն է՝ քանզի է գիտութիւնն : Զոյնն ասա և զաստուածային ազատութենէն կամ գյաւիտենական վճռոյ աստուածային կամաց , այսինքն զնախատահմանութենէն :

Ա. Բ . առեմ . ընդունիմ զմեծապոյնդ , և ուրացեալ զխորքագոյնդ և զփոստդ՝ ուրանամ և զնեռութիւնդ . ի բացայայութիւն որոց ասեմ . թէ երջանիկ լիցին մարդիկ և թէ ապերջանիկ , Աստուած հաւանէ վախճանի գործողութեան կարողութեան իւրոյ . քանզի որ վարձատրէն բարւոյ և չարւոյ՝ նոյն ինքն Աստուած է . եթէ առանց նորայն կամաց կարող պրէին արդարութեանն վարձք , և այլ լինէր որ առեղծանէր վասն փառաց իւրոց , և այլ լինէր որ յաւիտեանքն զարարած ի ձեռանէ նորա , ունէին արդեօք տեղի հակառակորդքն . բայց քանզի ինքն Արարիչ է , որ կենցուցանէ , և նոյն ինքն՝ որ մեռուցանէ , նոյնն իջուցանէ ի գժոխս , և նոյնն որ հանէ , ոմանս իբրև ո՛չ երբէք զրկի ի վախճանէն՝ որ վասն առեղծանն . զի թէ գթութիւնն և թէ զառնդարամտութիւն , թէ զարարիս և թէ զչարս՝ նորինն են եթէ վարել բարձր անշուքութիւն : Ուստի ի զուր քրքիջին ճշմարտութեանն հակառակորդք՝ իբրև նախանձաւոր աստուածային փառաց : Եւ ո՛չ երբէք ունին զտեղի յիշեալ անառեղութիւնքն , ո՛չ ընդդէմ իմաստութեանն . քանզի գիտեալ՝ այնպէս զմիջոցս գործելոց և վայելուչս առ վախճանն , զի ո՛չ երբէք անօրէնք անօրէնութեանն լիցին երջանիկք , և ո՛չ արուարքն օրինաւքն և արդարութեանն լիցին ապերջանիկք : Եւ այդ իսկ է ճշմարիտ նախախնամութիւն և գթութիւն և արդութիւն ,

## ՅՕԳՈՒԱԾ Ժ.

### ՅԱՂԱԳԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՑ

ՃՂՊ. Ասանօր դիտել պարտ է նախ, թէ ոչ են բանք մեր զղանազան միութեանց, այսինքն զբաղադրութեան միութենէ, զբարոյական միութենէ, զմեթափիզիքական միութենէ, և ո՛չ իսկ զպարզութեան միութենէն, էն. այլ զթուական միութենէ. այսինքն զայն միութենէ, որոյ ենթակայն չկարէ բաժանիլ կամ լինել երկու կամ երեք ի մասին իւր թուով. և ո՛չ միայն չկարէ բաժանիլ մեթաֆիզիքապէս, ֆիզիքապէս կամ բարոյապէս, այլ և ո՛չ մտօք իրականապէս։ Զզանազան միութեանցս այսոցիկ ասացաք արդէն յէակաբանութեան անդ (Գլ. Գ. Յօդ. Բ.), ժամ է արդ մեզ խօսել զմիութենէն, որոյ մի միայն աստուածային կարէ ենթակայ լինել դերակատար գոյացութիւն և բնութիւն։

ՃՂԹ. Դուք յայդքան յօդուածոցդ, զորոց երկար խօսեցաք, ծագիցի կասկած ինձ բաժանման ընդ մէջ այդքան կատարելութեանց աստուածային բնութեանն, Բայց բաժանմունքդ այդոքիկ են նախ զօրութենական կամ մտաւորական, և ո՛չ իրական. և քանզի յաստուածային դերագոյն բնութեանն նշմարեմք զայնքան կատարելութիւնս՝ որք նկատմամբ մեզ արարածոց՝ իրականապէս և կերպաւորապէս բազում են ի մեզ, և ո՛չ մի. նմին իրի համարին միտք մեր, թէ և Աստուած ասցի բազմութիւն կատարելութեանց իրապէս բաժանելոյ՝ այլ այդ անպատեհ է զաստուածային բնութենէ, որ մի և միայնակ գոյ լով ի ինքս, նոյնն մի ինալով և ամենապարզ՝ զանազան կատարելութեանցն որք ի մեզ՝ բաւէ, և ունի յինքեան, առանց զրկելոյ ի պարզութեան կատարելութենէն՝ զամենայն խումբ կատարելութեանց, զպարզապէս պարզագոյնին և գերազանցապէս։ Եւ թէպէտ մտացս այնպէս յօրմէք երևիցին, այդ ի տկարութենէ մտոցդ էն, որ չկարէ ըմբռնել միանգ թէ ո՛չ բաժանելով զայդ ի մասունս, զոր և յանդգնիմք առնել նոյն աստուածային պարզագոյն բնութեանն. բայց խոստովանիմք զԱստուած լինել բնութեամբ պարզ, նմին իրի և բաժանմունք կատարելութեանցդ այդոցիկ յաստուածային բնութեան՝ են զօրութենական կամ բանատրութեամբ մտաց։ Ուստի այսպէս յարդարեալ զվճռակ առաջիկայ վիճաբանութենանս ընդդէմ բազմաստուածեցին և մանաւանդ Մանիքեցւոցն չաստագոված գոյութեան երկուց դերագոյն սկզբանց բարւոյն և չարին, դամբ ի ցոյց առաջարկութեանս՝ թէ՝

### ԱՍՏՈՒԱԾ ՄԻ Է

Մ. Յերիս սկզբանց ցուցանեմք զճշմարտութիւն առաջարկութեանս. Ա. ի ծանօթութենէն կամ ի բնութենէ հարկաւոր էակին. Բ. ի բնութենէ դերագոյն էակին և կատարելագունին. և Գ. ի բնութենէ ինքնիշխան և բացարձակ էակին։ Նախ՝ Աստուած մի է, քանզի է հարկաւոր էակ. և հարկաւորութիւն լինելոյն ապացանել կարէ մի միայն էակին, և ո՛չ երկուց կամ բազմից. վասն որոյ չկարեն լինել հարկաւորք երկու կամ բազում էակք. քանզի նովիմբ, զի երկու են՝ բառնի յերկուցունց իսկ հարկաւորութիւնն էութեան։ Զի եթէ բառնի միոյն, միոյ տակաւին միւսն. ուրեմն էութիւնն բարձելոյն չէր հարկաւոր. զի եթէ լինէր հարկաւոր, պարտ էր զի բարձեալ միոյն՝ բառնային և այլքն ամենայն. ապա թէ ո՛չ ամենայն ինչ լինէր հարկաւոր՝ և ո՛չ հարկաւոր, որ է հակառակն և հակառակ մտացն ուղիղ սկզբանց. ուրեմն հարկաւոր էն մի է, վասն որոյ և Աստուած մի է։ Դարձեալ՝ մի է Աստուած, քանզի նա միայն է դերագոյն էակ։ Ապաքէն եթէ լինէին երկոքին իսկ դերագոյն էակք բաժանեալք ի միմեանց, ասվիմբ զմիմեանս եղծանէին. քանզի լինել դերագոյն, ոչ է այլ ինչ՝ թէ ո՛չ լինել դէր ի վեր քան զայլս ի բնութեան և ի կատարելութիւնս բնութեան. իսկ արդ եթէ լինէին բազումք միմեանց հաւասարք, ապաքէն ամենեքին իսկ չլինէին դե-

բազմութիւն՝ այլ միմեանց հաւասարք, և ո՛չ ոք գերազոյն. այսինքն ամենեքին գերազոյնք՝ և ո՛չ ոք գերազոյն, որ անտեղի է։ Դարձեալ՝ լինելն իւիք և դեր քան զայլս, ոչ կարէ նա առաւելուլ կամ նուազիլ բարութեամբ և կատարելութեամբ. իսկ արդ եթէ երկու կամ բազումք լինէին էակք՝ կատարելութիւնք, որք իմիոքն՝ ոչ գոյանէին ի հարկէ և իմիւսն, վասն որոյ և պակասէր իւրաքանչիւրն կատարելութեամբ ընկերին, և ընդունէր միոքն զկատարելութիւն միւսոյն. քանզի յայնս պակասէր՝ Ո՛ոք այնքան բծամիտ իցէ՝ որ ոչ խոստովանիցէ զանհնարութիւն փոստից հակառակորդացն. ուրեմն հարկապրիմք բնական միտօք առել՝ թէ մի միայն է գերազոյն էակն, և այն Աստուած է միայն։ Յառել աստ և զամենայն փաստս կատարելութեան և զանսահմանութեանն Աստուծոյ յիւրաքանչիւր սեփականաւանդ՝ ի երկար գրեալ։ Դարձեալ եթէ լինէին բազումք անձնիշխանք և բացարձակք, ապաքէն ո՛չ ոք լինէր անձնիշխան և բացարձակ. քանզի Աստուած է այն էակ որում հարկ է լինել. եթէ լինէին բազումք, և նոքա պարտէին հարկաւ լինել. քանզի որպէս միոքն ունէր իրաւունս հարկաւ լինելոյն, նոյնպէս և այլքն, որով ամենեքին լինէին անձնիշխան՝ այսինքն ամենեքին ակիզբն, և ո՛չ ոք ակիզբն։ Եւս այսու ո՛չ ոք լինէր բացարձակ. քանզի բացարձակին վայելէ լինել անկախ յումեքէ, և զամենեսեան ունել կախեալ յինքենէ. եթէ բազումք և իւրաքանչիւրն յինքենէ, զիա՞րդ բացարձակ ասէր՝ կամ Աստուած, և ո՞րպիսի Աստուած, որ բաց յինքենէ են այլք բազումք Աստուածք անձնիշխանք և բացարձակք. քանզի Աստուած պարտի լինել ակիզբն ամենայն արարածոց և պատճառ ամենայն գոյացութեանց. եթէ բազում անկախք և անձնիշխանք իմիմեանց, զիա՞րդ ամենեքին Աստուածք էին։ Մինն բաւէր լինել ակիզբն և պատճառ այլոցն արարածոց, և ահա Աստուածքդ այլք ի նմանէր Աստուածք եղեալ էին, Աստուածք անպատշաճանք և անզօրածնեալք։ Ուրեմն անկախ և անձնիշխան էակն դէ է, և այդ Ա-----ծ է. վասն որոյ



ՄԱ. Ասեմք թէ Աստուած մի է, թէ ոչ կամիմք ընդ ամենք հարկանել զխիղճ մտաց և զընթերցուածս ակզբունս և զօրէնս։ Քանզի եղեալ և ոչ ընկալեալ՝ թէ են երկու ակզբունք աստուածայինք, զարձեալ յոչինչ գառնան. քանզի զի՞նչ է չարութիւնն, եթէ ոչ պակասութիւն բարութեան. զոր օրինակ խաւարն է պակասութիւն լուսոյն։ Ակիզբն չարութեան սմին իրի լինելոր ակիզբն պակասութեան, կամ այնոր իրին՝ որ չէ. արդ ո՞ ոք անդամանայ՝ եթէ ակիզբն ոչինչ իրին, ոչինչ լիցի. այնպէս զի պակասութիւն գերազոյն էութեան կամ բարութեան լինէր ակիզբն գերազոյն չարութեան կամ ոչինչ գերազոյն. ուրեմն չունի զրպականապէս զէութիւն իւր՝ ակիզբնեզ այդ հնարեալ չարութեանդ չար Մանեքեին և Մանիքեցւոց՝ խանդարողացն զմիտս իւրեանց, ի Զօրատրական անուն փիլիսոփայութենէն։ Եւ ևս եղեալ և ոչ ընկալեալ՝ թէ իցեն երկոքին այդ ակզբունքդ, զարձեալ յանօգուտս հնարեալ են ի բացայայտութիւն չարութեան և բարութեան. քանզի երկոքին ակզբունքդ այդօրիկ կամ ունէին զհաւասար զօրութիւն միմեանց ներհակս, և կամ միոքն զօրաւոր կամ ակարագոյն քան զմիւսն, յոր կոչին իսկ յինուլ կամիցին, կործանին. քանզի եթէ հաւասար կայան միմեանց զօրութիւն և կարողութիւն, ապաքէն զօրչափ բարութիւն միոքն առեղծանէր, զայդչափ չարութիւն և միւսն երկնէր, և բարութիւն և չարութիւն՝ զօրութիւնք երկու հաւասարք միմեանց ընդհարեալք, զիմեանս եղծանէին, և ոչինչ ծնայր։ Դիցուք թէ ակիզբն բարութեան զառաւել ունէր չար զօրութեան, ահա յայտ է թէ զօրագունն անկանէր յայնժամ յաղթութիւնն, և չարութիւնն եղծանէր. իսկ եթէ ակիզբն չարութեան զօրագոյն լինէր, ահա դի յաղթէր բարութեանն։ Միով բանիւ երկուցունց կալ ի միասին անվկանդ յանհնարին էր՝ դի կամ բարութեանն յաղթեալ ծնայր մի միայն չարութիւնն, և կամ չարութեանն՝ և ծնայր բարութիւնն և եթէ։ Բայց յաւէտ զարմանալ պարտ է ընդ անմիտն Պաւլեայ, որոյ չհարացեալ զիմիզիքական բնութեանն լուծա-

նել զԵսրհուրդ, այսինքն զի յաշխարհի պէսպէս ձախողութիւնս և զիշատակարութիւնս՝ խոստովանի անտեղութեանց փառացն Մանիքեցւոց դոլ տեսականապէս անաւելի, բայց և գործնականաւն յատէս ընդունելի զնոցայն յիմարութիւն, որոց ամենեցուն

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՄԲ. Աւանն Ա. ի կարգի արարածոց են բազում ինչ՝ որք ո՛չ միայն անօգուտք են, այլ և ջնասակարք մարդկային կենցաղոյս. ուստի ի չար սկզբանէ են. Բ. եթէ չէին չարիքս այսոքիկ ի չար սկզբանէ, ապաքէն աստուածային համարէին և նոքա իբրև զբարիս, որ է ընդդէմ աստուածային բնութեան. Գ. եթէ չարիքս այսոքիկ չէն յԱստուծոյ, նա՛ հակառակ աստուածային բնութեան, արդէն պարտ էր ջնջել զնոսա յերկրի, ապա թէ ո՛չ, Դ. հետևէր՝ թէ յԱստուած է սակարութիւն բառնալոյ զնոսա. Ե. եդեալ թէ չի՛ք իմն սակարութիւն առ Աստուած, առ ի՞նչ ոչ ջնջէ զնոսա. քանզի որպէս հարկաւորապէս աստուածային բնութիւնն՝ բարութեան ազբիւր հանի և կամի զբարին. նոյնպէս պարտի դարշիլ ի չարէն, Ուրեմն եթէ են չարիք ընդդէմ աստուածային բնութեանն, են՝ զի Աստուածք բազումք են, յորոց միոքն ո՛չ ընդխառնի ի գործս միւսոյն, վասն որոյ որքան բարութիւնք գոյցեն՝ այնքան և չարութիւնք, են։

ՄԳ. Յառաջ քան զուղղապէս պատասխանելն իւրաքանչիւրոցն, սասացուք նախ զի՛նչ են չարութիւնքդ այդոքիկ, և քանի՛ տեսակք չարեացս. նախ չարութիւնն, ո՛չ այլ իմն է՝ եթէ ո՛չ « պակասութիւն բարութեանն ». անգիտանալն չարութիւնն՝ ուր վախճանի բարութիւնն. ասաց Յառաքեա առ Օգոստինեայ. բարութիւն ասի այն ամենայն՝ որ « ունի զէութիւնն իւր դրականապէս կամ իրականապէս ». և բարին այն է՝ որ է, և որ ինչ է՝ ճշմարիտ է, և որ չէն՝ չար է և սուտ. ուստի չարութիւնն չէ՝ այլ ինչ, բայց միայն՝ որ ո՛չ է կամ որ չունի զէութիւն իւր դրականապէս. այլ պակասութիւն է բարութեան՝ որ լինել պարտ։ Վասն որոյ ամենայն ինչ՝ որ ստեղծաւ, գոյութիւն է կամ գոյացութիւն, վասն որոյ բարի է, և մի միայն ոչինչն չըստեղծաւ, զի առանց նորա եղև և ոչինչ (*)։ Բարութեանցն տեսակք՝ որպէս են բնականք և բարոյականք, նոյնպէս պակասութիւնք նոցա համարին դոլ բնական կամ ֆիզիքական չարութիւն, և բարոյական չարութիւն։ Իսկապէս խոսելով ո՛չ այդքան չարութեանդ անուն յարմարի ֆիզիքական բարեացն պակասութեան՝ որքան բարոյականացն. քանզի բարոյական բարեացն և չարեացն սկիզբն և պատճառ է ազատութիւն մարդկային կամաց, յորմէ ելանեն և են ամենայն գործք բարութեան և չարութեան, որպէս տեսցուք ի բարոյականին։ Այնպէս զի բազում ֆիզիքական չարիք կամաւորապէս պատճառեալք՝ են ճշմարիտ բարիք բարոյականք. զորօրինակ բազումք մատնեն զմարմինս իւրեանց ի տանջանս սրոյ և հրոյ վասն Քրիստոսի, և զկեանս անգամ. բայց ո՛չ երբէք բարոյական չարիք կամաւորապէս պատճառեալք՝ լինին ճշմարիտ բարիք։ Սոցին այսպէս ծանուցելոց,

Ա.ո Ա. ասեմ՝ ԺխտելովՀ զամենայն առաջարկութիւնդ և զհետևութիւնդ. քանզի էակն՝ որ ստեղծ զայդ ամենայն, անսահման իմաստութեամբ յարդարեալ է, և գերիմաստ ճարտարապետին է՝ այնպէս յարդարել և պատրաստել զմիջոցս առ վախճան գործոյն, զի մի՛ գոյք ի նմա ո՛չ աւելորդ իմն՝ և ո՛չ պակաս։ Այ՛ նկատմամբ մեզ՝ բազում ինչ յումեքս՝ նա՛ ջնասակար իսկ գաւին աշխարհի. բայց այնու ասելի է՝ թէ վիճակ և վախճանն աշխարհի կամ ամենայն արարածոց՝ չեն յայտ մեզ յամենուստ, և ո՛չքն ո՛չց օգտակարք յաւէտ քան ջնասակարք իցեն, և կամ ո՛չք ո՛չց ջնասակարք քան թէ օգտակարք՝ անդիտանամբ։ Ընդ իրի յաւէտ պարտիմք խոստովանիլ զտկարութիւն մերոցս մտաց, ոչ զօրելով ի միտս առնուլ զվախճան ստեղծմանն ամենայն գոյիցն մեծաց և

(*) Յովհ. Ա. 3։

փոքունց միմեանց. ո՛ այժմ ուրանալ կարէ զանպատմելի օգուտս և պշահ զանազան դեղօրէիցն հատաքելոց և յօրինելոց ի ճնասակար ծաղկանց։ Այսպէս ասացեալ զգանազան տեսակացն թունից, զորս ճարտարութիւն քաջ բժշկացն այսօր կազմէ դեղերիկս ի մարդկան յաւուղջութիւն։

Ա. Բ. ասէ՝ զանազանելով. զչարիս առեղծեալս, որք իսկապէս չեն չարիք նկատմամբ վախճանի տիեզերացս, այլ աղագաւ եղեն յԱստուծոյ՝ ընդունիմ. զբարոյական չար գործս՝ ուրանամ. քանզի այդոքիկ չեն յԱստուծոյ, այլ ի մարդկային մոլի կիրառութենէ կամացն և ազատութեան, որք ո՛չ երբէք յառեղծանել մարդոյն հարկաւորապէս լինելոց ննթադրին։

Ա. Գ. ասէ. կարէ արգելուլ զչարիսդ Աստուած՝ ընդունիմ. պարտի ջնջել զնոսա հարկաւորապէս՝ ուրանամ. քանզի այլ իմն է կարողութիւն ջնջելոյ զչարիսդ՝ և այլ է պարտաւորութիւնն ջնջելոյ զնոսա. զայդ՝ և ո՛չ զայս ունի կամ կամել պարտի Աստուած. քանզի ո՛չ ինքն աբար զչարիսդ, այլ մոլութիւն կամացս և ազատութեան մարդկան. ջնջել զբարոյական չարիսն՝ է բառնալ զմարդկային ազատութիւն, և հինեալատակ առնել զառաքինական գործս և զարդիւնս։ Բարձ զազատութիւնն ի մարդոյ՝ և ահա կործանեալ զէական առորոգելի մարդոյն, և մարդն զրկեալ յազատութենէ՝ չէ մարդ, այլ մարդ որ ի պատկերի մարդոյն չրջի։ Ուրեմն կարէ այո՛ բառնալ զբարոյական չարիսդ, բայց ոչ պարտի, և քանզի չպարտի բառնալ, հակառակորդքն ի զուր։

Ա. Դ. ասեն թէ հեռւի պակասութիւն կարողութեան յԱստուած, և մեք ուրանամք զայդ. քանզի չունի զոք հատասար ինքեան, զի յընդհարկանիլ ընդ միմեանս՝ միոն պարտիցի և միւսն յաղթիցէ, այլ գերագոյն քան զամենայն նա է ինքնիշխան և բացարձակ տէր և արարիչ ամենեցուն։

Ա. Ե. ասէմք. քանզի ոչ պարտի արգելուլ զնոսա, նորին վասն ոչ ջնջէ զնոսա. և առ փաստն ասեմ՝ զանազանելով. որով հարկաւորութենամբ կամի զբարին, նովիմբ



պարտի զարչիլ ի չարէն. եթէ հարկաւորութենամբ կամէր զարարած բարութիւնս, և ո՛չ ազատաբար՝ ընդունիմ. եթէ միայն ազատութենամբ կամի զարարած բարութիւնս՝ ուրանամ։ Քանզի ազատութենամբ կամի զարարած բարութիւնն, նորին վասն ազատ է Աստուած ի թողլ տալն զբարոյական չարիսն, որոց ոչ է պատճառ։ Եւ դիտելի է առաւելոր թէ ընդունակութիւնն պահանջոյ մարդկային բնութենան՝ է ի նոյն մարդկային առեղծեալ բնութենէն, և այսմ տառիք զանունդ մեթաֆիզիքական չարի, զոր և ո՛չ Աստուած ամենակալ զօրութենամբն կարէ բառնալ զայս թէութիւն մարդկային բնութենան. այսինքն մարդն՝ ըստ որում է՝ միշտ ընդունակ է առանալոյ զպէտպէս աչխճանս բարութենան՝ և ոչ երբէք կարէ հասանել ի զերակատար թէութիւնն առաւաժային բնութենան։ Ասի Աստուած զմարդն առեղծանել կարէ մարդ միայն, և ո՛չ Աստուած. ահա այսմ պակասութենան մարդկային վիճակի տառիք զանունդ մեթաֆիզիքական չարի կամ պակասութենան. և ուստի ամենայն բարոյական, և այլք ֆիզիքական և պատժոյ չարիքն ունին զհեռւոր և զվերջին պատճառն, այր աղագաւ ամենայն ոք կարէ չարութենամբ կեալ յայսմ կենցաղի՝ կամ բարութենամբ. քանզի սահմանեալ գոլով բնութենամբ՝ կարէ առաւելուլ ի բարութենանցն աչխճանի և պակասիլ ի բարութենէ. բայց այսոցիկ ամենեցուն՝ այսինքն իսկապէս կարողութենանն պատճառ է նոյն ազատութիւնն մարդկան։ Զէ՛ և չէ՛ հարկ անկանել ի հնարս Աստուածոց բազմաց. զոր եթէ գըտցեն չեն առաւել քան զմարդ։ « Ես ասացի թէ Աստուածք իցէք », այսինքն աստուածայինք կամ մարդիկ կատարեալք, հաղորդակիցք աստուածային կատարելութենանց (*)։

---

(*) Գեղեցիկ խօսի և մեծն Տերտուլիանոս ընդդէմ Պլատոնի և աստղացն թէ նիւթն ինքնին չինչեան ունի զչար չարժուն ինչ, վասն որոյ և ո՛չ յԱստուծոյ եղև, կամ անկար է Աստուած արգելուլ և տիրել նմին. զի կամ կարաց Աստուած ուղղել զնիւթդ՝ բայց ոչ կամեցաւ, կամ կամեցաւ յիրաւի՝ բայց ոչ կարաց Աստուած, գոլով ան-

# ԳԼՈՒԽ Գ.

## ՅԱՂԱԳՍ ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ՉԻՆԶ ԳՈՐԾԷ

ՄԴ. Խօսեցաք զէութիւնէն և զներքին կատարելութենանց աստուածային բնութեան. ժամ է արդ յայտիկ վերջին գլուխս խօսել զարտաքին ստորոգելեացն, այսինքն զկատարելութիւնեանցն զայնոցիկ որք իբրև զճառագայթս արեգական յաստուածային բնութենէ անտի ծագեալ՝ գործին առ արտաքս, այսինքն յարարածս. Ուստի Աստուած նախ ստեղծանէ զարարածս, երկրորդ՝ պահէ զարարածս, երրորդ՝ վարէ կամ համրնթանայ ընդ արարածս, չորրորդ՝ նախախնամէ զարարածս. և յիրաւի ստեղծեալ Աստուծոյ զարարածս՝ պարտ է զի պահիցէ զնոսա յէութենան իւրեանց, և վարեսցէ զգործողութիւնս նոցա, և հուսկ ուրեմն մատակարարեսցէ նոցա զայն ամենայն հարկաւոր և զէական նպաստս և կարգել զօրէնս, որովք մնրթասցին ժամանել նպատակին, որ աղագաւ եղեն, որք եղենն. Ուստի ի չորս յօդուածս տրոհեմք զառաջիկայ գլուխն՝ բան յիշեալ չորեքկին պատճառացն կամ գործողութեանց.

---

կար: Եթէ կարաց, բայց ոչ կամեցաւ, չար և նոյն ինքն. և քանզի չարին նպատակատոյց եղև, նորին և ողբիչ տիրապէս դառնացի, թէպէտև չիցէ նորին արարիչ. բայց քանզի թէ չէր կամեցեալ նորա զայն՝ չլինէր, ինքն արդէն արար զի իցէ, զոր չկամեցաւ զի չիցէ. զի՛նչ յոռեգոյն քան զայդ: Իսկ եթէ կամեցաւ զի իցէ՝ զոր ինքն չկամեցաւ զի արարեալ իցէ, ընդդէմ գործէ իւրումն անձին. մինչև կամեցաւ զի իցէ այն զոր չկամեցաւ՝ զի արարեալ իցէ, և չկամեցաւ զի արարեալ իցէ, զոր կամեցաւ զի իցէ, զոյի Աստուած գործեալ չարաչար, եթէ կամաք՝ անարդարար, եթէ առ հարկի՝ ուստի կամ ծառայ լիցի Աստուած չարին, և կամ բարեկամ (Նորին). ո՛չ միոյն, և ոչ միւսոյն, այլ միայն զի ոչ պարտի: Տերտուղիանոս, ընդդէմ Հերմոգինեայ. Գլ. ժ.



## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳՍ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՐԱՐԱԾՈՑ

ՄԵ. Գիտել պարտ է նախ՝ թէ այլ է ստեղծանել զինն յոչնչէ, և այլ է ստեղծանել. այսինքն այլ է ստեղծանել զինն որ ոչն էր, կամ զայն որ ոչն է, առնել՝ զի գոյութեամբ իցէ, և այլ է ստեղծանել զինն ըստ ժամանակին կամ կերպին. առաջնոյն տարբ զանուն յԱՐԱՐԻՉ և ԲՈՂՈՔԱՏԻ, և երկրորդին միայն ԱՐԱՐԻՉ. քանզի թէ Արարիչն ստեղծանէ յոչնչէ զարարածս և կոչի Ստեղծիչ. և թէ անդրիմադարձն զվէմս ի ձև կամ ի կերպ մուծանէ արարածոց, և կոչի արարիչ նոցա. Բայց ընդ մէջ Արարչին գոյութեան իրաց յոչնչէ բազում խտիր կայ, և այնր՝ որ զստեղծեալ գոյութիւնս ի ձև ինչ միայն մուծանէ. առաջնոյն պիտոյն զօրութիւն անսահման, և ամին ոչ այդքան. Դարձեալ՝ գիտելի է թէ ոչ զի ստեղծ Աստուած զաշխարհ, նմին իրի և զօրութիւն նորա է անսահման, այլ զի անսահման է զօրութիւն նորա, նմին իրի ստեղծ զաշխարհ, Եւ մի միայն՝ վասն զի յանսահման յաստուածային էութենէ անտի յառաջ գայ զօրութիւնդ այդ, կոչի ԲՈՂՈՔԱՏԻ կամ ՔՐԻՉ. Աստի չեն մեզ կամք, զի հաստատիցեմք՝ թէ յստեղծանել զաշխարհ չեն ինչ պիտոյ անսահման զօրութեան կամ կարողութեան, այլ զի զպատճառն ցուցցուք անսահման լինելոյ աստուածային զօրութեանն. և զի անսահման զօրութեամբ վայելէ աստուածային էութիւնն. Նմին իրի մի միայն Աստուած կարաց ստեղծանել զաշխարհ, և ոչ այլ ոք: Զայս ասեմք Աստուածութեանն ուրացան թէ առ ի ստեղծանել զաշխարհ չեն պէտք անսահման զօրութեանն, այլ թէ աշխարհ տկարագոյն ևս զօրութեամբ իւիք ստեղծանիլ կարէր. ընդդէմ որոյ լիցի

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԹԷ ՔՐԻՉՆ ՈՒՆԻ ԶԻՆՁ ՅՈՒՆՎ՝ ՈՂՈՔԱՏԻ Ե
ՀԱՅՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ ԼԻՆԻ ՎԱՅԵԼ Է:

ՄՉ. Յուցանի առաջին մնան առաջարկութեանս. Նախ՝

առեղծանել զինն յոչնչէ՝ է զայն, որ ոչն է՝ առնել զի իցէ գոյութեամբ. զի՞նչ է այն որ ոչդոյն ի գոյս դարձուցանէ՝ թէ ո՛չ անսահման զօրութիւնն. երկրորդ՝ ընդ մէջ էիցն և չէից կայ անսահման միջոց. առնել զի չէքն էակք լիցին, է զանսահման միջոցաւ անցանել զանցանել. և ո՛ր առեղծեալ զօրութիւն կարէ զանսահման միջոցդ և ղժուարութիւն անցանել, և յոչնչէ ևս առնել, թէ ո՛չ առեղծիչ անսահման զօրութիւնն։ Երրորդ՝ որքան ակնարկութիւն կամ անընդունակութիւն լիցի ենթակային իրիք ի յօրինուած, այնքան զօրութիւն առաւել պարտի լինել ի յօրինողն, զի նպատակին ժամանեսցէ. իսկ արդ ոչինչն յամենայն էութենէ զուրկ է, և ո՛չ երբէք է՛ր. և որ ո՛չ երբէք է՛ր, ցկատարած է՛ր. ուրեմն առ ի լինել ոչինչն ինչ, պարտի և կարօտի այնպիսի զօրութեան, որ յատկանական է. և որ յատկանական է, անսահման է՝ զի յատկանիչ միայն չիք սահման. ուրեմն առեղծիչ զօրութիւնն անսահման է։ Հուսկ ուրեմն եթէ առեղծիչ զօրութիւնն սահմանեալ լինէր, որպէս առաջ՝ ոչինչն ցկատարած է ոչինչ, և յատկանականապէս ոչինչն առ ի լինել ինչ, պէտս ունի զօրութեանն յատկանականի, լինէր ընդդէմ ուղիղ մտացն ակզբանց և կարգի բնութեան. քանզի ներգործութիւնն գերազոյն լինէր քան զպատճառն, և փոքրն ծնանէր զմեծագոյնն քան զինքն, որ է անտեղի։ Ցառնլ և զայս գ՛ի կարգէ և ի փոքձոյ առեալ արարած բնութեանն, ո՛ր է յարարածոցս կէնդանեացդ որ յոչնչէ առեղծեալ իցէ զինն. ընթերցեալ իցէ արդեօք միոյն ի ձէնջ զայդպիսի իմն, ո՛չ երբէք. ուրեմն առեղծիչ զօրութիւնն պարտի անսահման լինել։

ՄԻ. Յուցանեմ և երկրորդ մտաց առաջարկութեանն. նախ՝ բնական զգայութիւնն և լոյսն համոզէ զմեզ՝ զի ուր երբէք ընկերացեալ ձայնքդ --ԵՂԵՒՆ ՂԵ--ՐԻ՜Ն, --Ե--ՐԱՀ--Ն ՂԵ--ՐԻ՜Ն, են, ցանկ վերջերիմք մնօք յԱստուած՝ յարատեան արարածոց. ուրեմն նոյն իսկ ձայնն բնութեան և լոյսն բնական դատաւորակ են մեզ անսակրիւռ՝ թէ զօրութիւնն առեղծիչ և գործք արարչութեան միոյն և նոյն



Աստուծոյ պատկանի և վայելէ. երկրորդ՝ յայտ անտի է ի գաղափարէն հարկաւոր էակին, զի արարած չէզձն յոչնչէ, և ո՛չ ի կարելի էակաց և ո՛չ յինքենէ. ուրեմն ի հարկաւոր էակէն. ուրեմն զօրութիւնն առեղծիչ միոյն նոյն հարկաւոր էակին պատկանի, այսինքն Աստուծոյ. ապա թէ ոչ՝ չլինէր հարկաւոր էակ. կոյս ՀԻՒ---Ր, քանզի եղեալքն ամենայն հարկս և պէտս ունին այն այսմ զերազոյն էակին։ Երրորդ՝ եթէ առեղծիչ զօրութիւնն պարտ է՝ զի ենթակայապէս և արմատապէս, այսինքն անսահման լիցի և բղխիցի յանսահման բնութենէ, ո՛ր ուրացայն՝ թէ բաց յաստուածային զօրութենէ, այլքն ամենայն ամփոփեալ և սահմանեալ իցեն. հուսկ ուրեմն եթէ աշխարհ յայլմէ զօրութենէ եղեալ լինէր, գոգցես ամենայն աստուածային աստրոգելեացն լինէր հակառակ գործոյդ՝ և անսեղութիւնք անտի ծագէին անհամարք. քանզի յայնժամ չվայելէր Աստուած բացարձակապէս գործողութեամբն, անկախ էութեամբն, ամենակարողութեամբն, անսահման էութեամբն ևն, ևն։ Եւ ո՛չ եղանակաւ իմն երբէք զանազանէր յայլ երկրորդական պատճառաց, և լինէր իբրև զայլ արարած, որք առեղծանել զինն կարեն յ-ՉՆՉ Ն-Ր միայն՝ և ո՛չ յոչնչէ ԵՒՐ-Կ-ՅԻՒ և Ն-Ր։ Սոքա ամենեքին ընդդէմ են ուղիղ տրամաբանութեան ակզբանց և մտաց։ Ուրեմն կայ ճշմարտութիւն առաջարկութեանն՝ թէ առեղծիչ զօրութիւնն անսահման է, և թէ սոյն այս գործողութիւն արարչութեանն Աստուծոյ ևեթ վայելէ բացարձակապէս։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՄՂ. Նախ՝ ընդդէմ Ա. մտաւին առաջարկութեանն ասեն, թէ չէ պարտ զի աշխարհս անսահման ի զօրութենէ առեղծանիցի. քանզի բնութիւն ներգործութեանն հետեւի բնութեան պատճառին, իսկ արդ ներգործութիւնն սահմանեալ է՝ ուրեմն և պատճառ նորա. երկրորդ՝ ընդդէմ Բ. մտաւին առաջարկութեանն ասեն, ո՛չ վայել է Աստուծոյ նմա հակառակ է աստուածային անփոփոխելի բնու-

թեանն գործն արարչութեան. քանզի գործողն հաղորդեաց ի հարկէ զգօրութիւն իւր ի գործեալն, ահա բայ ի փոխոխութենէն՝ պակասէր զօրութիւնն Աստուծոյ հաղորդելոյն ի ներգործեալն. ուրեմն Գ. ընդդէմ ուղիղ առածին է՝ թէ յոչնչէ ոչինչ լինել կարէ։

Առ Ա. Ուրանամ զնախընթացող. աւ փաստն՝ զանազանեմ զմեծագոյնդ. բնութիւն ներգործութեանն հետեւի բնութեան պատճառին, ի կարգի ծննդեան արարածոց միոյն ի միւսէն՝ ընդունիմ. ի կարգի առեղծմանն՝ ուրանամ, և ընկալեալ գփոքրագոյնն, ուրանամ զհետեւեալն և զհետեւութիւնն. ի բացայայտութիւն որոց առեմ. ճշմարիտ է առածդ՝ բայց այդ ի կարգի ծնանելոյ միոյն ի միւսմէ. քանզի մարդն ծնանիցի միշտ զմարդ, և ոչխար՝ զոչխար, ևն, բայց աւտ էայդ ի կարգի առեղծմանն արարածոց. այլ աստուածային անսահմանն զօրութիւնն է՝ որ առեղծ զաշխարհ, բայց ոչ հետեւի առաի յայտնանէ՝ թէև աշխարհ պարտ էր լինել անսահման, ապա թէ ոչ և ճարտարապետն ի չինել զտուն հարկադրէր հաղորդել շինուածոյն զմասն բնութեան իւրոյ. քանզի այլ է ներգործութեանն բնութիւն ծագեալ ի կարողութենէ հոգւոյն՝ և այլ է բնութիւն ներգործութեանն ծնեալ յումեքէ. Աստուած ոչ ծնաւ զաշխարհ, այլ առեղծ զաշխարհ. եթէ ծնանէր, այլ պարտ էր՝ զի յայնժամ և աշխարհ աստուածային բնութեան հաղորդէր։

Առ Բ. Աստ՝ուրանալով զամենայն. չիք անտի խնդիր, որ հակառակ կայցէ կատարելութեանցն աստուածայնոց, քանզի որպէս ի վերոյ ասացաք, Աստուած առեղծանելով զաշխարհ, ոչ ծնանէր զաշխարհ, որով պարտաւորեցոյ հաղորդել նմա զաստուածային բնութեան իւրոյ զմասն և ոչ իսկ իբրև զարարածս հաղորդէ զմասն զօրութեան իւրոյ ներգործութեանն, քանզի պարզութեամբ բնութեանն կայ և անմասն է, և անբաժանելի. այլ զօրութիւն նորա է էութիւն նորա, և կամք նորա է նոյն էութիւն նորա. զօրօրինակ ճարտարապետին միտք յօրինեն զտուն և անմի ոչ ինչ խնդիր անհնութեան պատճառի ճարտարապետին։



Առ Գ. Ուրանամ զամենայն. քանզի առեղծանէ Աստուած զաշխարհ ի գրական և ոչ ի բացատական յոչնչէ (Գ.Ջ.), և առաջիկ իմաստ՝ նկատմամբ մարդոյ ի գրական ոչինչն՝ ճշմարիտ է, և նկատմամբ Աստուծոյ ճշմարիտ է ի բացատական ոչինչն և սուտ է ի գրականն. Ապաքէն գեղեցիկ գրեաց Սուրբն Օգոստինոս թէ աշխարհս լինել չկարէր, թէ ոչ յաւտոյգոյն յԱստուծոյ ճանաչէր. մեզ անհնարին է զաշխարհ ճանաչել, եթէ յաւտոյգոյն աշխարհս չլինէր։

---

## ՅՕԳՈՒՄԱՆ Բ.

### ԾԱԳԱԳՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՋԱՐԱՐԱՆՔՈՒ

ՄԹ. Աստուած աստուածային և անսահման զօրութեամբն առեղծեալ զարարածս վասն վախճանի իմիք, կամի և պահէ զնոսա, զի հասցեն այսմ սեփական վախճանին. զայսմանէ չիք ինն տարակոյս ի մէջ փիլիսոփայից. Բայց որպէս պահէ զնոսա և կամի՝ զի հասցեն արարածքդ իւրեանցն վախճանին, աստ սեղի ետ վիճաբանութեանց նոցին իմաստասիրացն. այսինքն ոչ զնոյն պահպանութենէն, այլ զեղանակէ նորին պահպանութեանն. Ոմանք ի փիլիսոփայից ասեն թէ՝ պահէ Արարիչն զառեղծուածս իւր գր-ի-ն-դ- կամ -ղը-դ-, և ոմանք բ-ց---ի-ն-դ- կամ -ն--ղը-դ-. Պահէ Աստուած գր-ի-ն-դ- կամ նէր-ջ-ի-ն-դ- զառեղծուածս արդեամբ՝ միշտ և հանապազ կրկնելով զոգցս զկամացն հաճոյս վասն ընդալոյ իրացն ի գոյութեան իւրեանց մինչև ցվախճանն ահմանեալ ինամեալ. պահէ բ-ց---ի-ն-դ- զարարածս, քան զրուժ չկամի յոչինչ դարձուցանել զնոսա, այլ թոյլ տայ յետ արդեամբ միանգամ առեղծանելոյն, զի ի գոյութեան իւրեանց կեցցեն. և ինքն կայ չէզօքականապէս. զօրօրինակ՝ մայր որդւոյն, որ ի ծաղկալից դայտին ունի միշտ պահեակ ձեռանէ որդւոյն՝ գծաղիկն

աչով ի յամին ժողովոցին, ասի ցրւիցեն պահել զամս որգւոյն ի չգլորելոյն. և մայրն որ արձակեալ զորդին ի մէջ հովտին, թողու զնա ըստ հաճոյն առաւնդիլ, ՀԸՐՄիլ, և չարգելու ի ՀՐՄելոյն, ասի ֆոյուիցեն պահել զորդին, կամ ֆէուիցեն: Ի՛ և երրորդ իմն՝ բայց սխալ կարծիք ոմանց, իբրև թէ՝ կեանք առեղծուածոց այնպէս կայ ի ձեռն Տեառն, որպէս թէ յամենայն և յիւրաքանչիւր վայրկենի վերստին առեղծանել զնոսա, վասն որոյ արարած միշտ յառեղծմանն կան և ի մահու, առեղծանին և մեռանին: Այս կարծիք ո՛չ երբէք վայելէ իմաստնոյն մտաց. քանզի իմաստնոյն գործք միևչև ժամանեալ իցեն կարգեալ նպատակի՝ կանխագոյն ո՛չ ջնջին զրկեալ ի վախճանէն. ապա թէ ո՛չ ճարտարապետն բնութեան չասէր և կոչէր ամենիմաստ: Այսորիկ այսպէս եզրեալ՝ մնայ մեզ ընտրել զընտիրն յառաջնոյն անտի:

ՄԺ. Որք չառագոլք են առաջին կարծեացն՝ ճըշմարտութեան հետեին, և առ այս բաւէ մի միայն փաստն թէ՝ առաւաժային կամք միշտ ի ներգործութեան կայ. քանզի լառագոյն է գործել՝ քան զկալն անգործ: Ցաւէ զերկրորդն թէ չի՛ք իմն, որ շարժիցի կամ աճիցէ կամ գործեացի առանց առաւաժային կամացն. ապա թէ ո՛չ չիներ աղբիւր ամենայն բարեաց ընդդէմ անսահմանութեան նորա. ապա թէ ո՛չ չիներ ամենակարող, չիներ գերագոյն էակ և անկախ՝ նա և ո՛չ երբէք համընթաց դասէր Առաւած արարածոցն գործողութեանց, և ո՛չ երբէք ամենեցուն նախախնամ. ո՛ւր թողացումք՝ զինուիթեզէնքն բաց յանընդունակութենէ ի առեղծանիլ, անտարբեր են ի շարժուածն՝ բնութեամբ պատահականք գոլով:

ՄԺԱ. Ասացաք թէ՝ առաւաժային կամք միշտ ի ներգործութեան կայ. կայ ի յաւիտենից ի ներգործութեան՝ նկատմամբ բերման կամացն ի յիւր բարութիւնն, և այդ հարկաւորապէս. իսկ նկատմամբ արարածոցն՝ պահէ և կամի զնոսա աղաւաւթեամբ, այնքան պահէ՝ ցորքան կամի զկալն նոցա: Գիտելի է երկրորդ՝ զի են բարիք յաչխարհի, են և չարիք. չարիքն ըստ նուիթականին՝



ըստ որում դրականք՝ բարի են, ամին իրի կամի զնոսա, ո՛չ ըստ չաղութեանն մտածին, որ ոչ բղխէ ի բնութենէ կամ ինուիթոց իրացն, այլ ի բարոյական. և մարդկային գործողութենէ անտի, զոր չկամի. բայց թոյլ տայ մտառակարարեալ զգործելիսն նուիթեզէնս:

Հուսկ ուրեմն առանց առաւաժային կամացն գործողութեան՝ զի իցեն առեղծուածք, ակնթարթի մի ո՛չ կարեն կալ ի գոյութեան իւրեանց. զորօրինակ թէ ոք թէլիս կապէր զդնառակ մի և զառ ի վայր կախեալ ունէր զայդ ձեռամբ, մինայր դնառակդ ցորքան կամք ունողին լինէին՝ զի կախեալ մնասցէ զձեռանէն՝ զոր եթէ ի բաց թողցէր ի ձեռանէ, նոյն ընդ նոյն անկանէր. այնպէս ամենայն մասունք՝ որք կազմեն զարարածս, ո՛չ կապին ընդ միմեանս հարկաւոր զօդիւն, այլ անկախ կան իւրաքանչիւրն ի միմեանց. Առաւաժուսա կազմեալ գոլով. արդ դադարեալ առաւաժային կամացն ի պահպանելոյ կամ ի գոյութեան ունելոյ զնոսա, անդէն և անդ յոչինչ դառնան. ուստի գործն յոչինչ դարձուցանելոյ զարարածս՝ ոչ է դրական գործողութիւն, այլ յաւէտ բացասական, ի բաց կամ յետս առնելով զզօրութիւնն, որով կան արարածք:

Առէն քանզ ճանապէ մեծութիւն յանդգնութեան անօրինացն, որք յարատևեն յանօրէնութեան վիճակի, թէև կախեալ իցեն կենանք նոցա զձեռանէ Արարչին իւրեանց, Առաւաժային կամացն ազդեցութեամբ կան արարածք՝ և յարատևեն ի գոյութեան իւրեանց. թէ չիներ առաւաժային կամացդ գործողութիւն, այլ ինքեանք ինքեանց ճնային, յարատևութեանն զրկէր իսկ Արարիչն ի նպաստակէն. ուստի գոգցես յարատևէ արարչութիւնն ի նպաստս այսր պահպանութեան առաւաժային կամացն ի ձեռն գործողութեան և զօրութեան իւրոյ, զոր ոչ իմացեալ քանզ առօրև յիշեալ իմաստասէրն, ընդատեալ առերիւրեցաւ յոյժ. ընդդէմ որոյ

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՄԺԲ. Առ Պաիլէ. Նախ պահպանութիւնն իրայ՝ է

յարատև առեղծուածն իրաց. քանզի իրքդ ինքնին չկարեն կալ ի գոյութեանն, և որպէս առ ի առեղծանել յոչնչէ ի գոյութիւն ածան նախատիւ արարչական զօրութեանն, նոյնպէս պէտս ունին ամին այսմ զօրութեան ի պահպանութիւն անթերի։

Պատասխանեմ. ուրանամ զնախընթացսդ՝ և առ փաստն զանազանեմ. իրք չկարեն կալ ի գոյութեան առանց դարձեալ և հանապազ առեղծանելոյ՝ ուրանամ. առանց պահպանութեանն նոցա Աստուծոյ՝ ընդունիմ։ Այլ է առեղծանել յոչնչէ զարարածս, և այլ է պահել զնոսա ի գոյութեան իւրեանց. այդ յինքն բերէ զնորոգութիւն կամ զնոյն գոյութիւն իրաց, և սա ո՛չ այնպէս, այլ սոյն կալ ձեալ ինոյն գոյութիւնն անթերի. պէտս ունի այո՛ արարած բնութիւնն աստուածային զօրութեանն՝ զի կեցցէ, բայց ո՛չ՝ զի առեղծցի վերստին. զայս ասելով չասեմք ընդոսոխս աստուածային պահպանութեան՝ թէ արարածքն կան յինքեանէ, կամ՝ բնական զօրութեամբն ինքնովին, այլ ինքնին կան. բայց ինքնին կալն ոչ է չնչին կալ կամ զօրութեամբ իւրով՝ որ միոյն ևեթ Աստուծոյ է սեփական։

ՄԺԳ. Առարկեն. եդեալ և ո՛չ ընկալեալ թէ իցեն պէտք աստուածային պահպանութեան, յայնժամ բառնային արդիւնք գործողութեանց երկրորդական պատճառացն կամ արարածոցն։

Պատասխանեմ զանազանելով. բառնային ամենայն արդիւնք և գործողական զօրութիւնք երկրորդ պատճառացն, եթէ պահպանութիւնն աստուածային բառնայր բնաւին զզօրութիւն բնութեանն յարարածոց՝ ընդունիմ. ոչ ջնջելով զբնութիւն, այլ պահելով միայն զբնութիւնն՝ ուրանամ։ Հաղորդելով վերնոյն զզօրութիւն պահելոյ զարարածս՝ իբրև զառաջին աղբիւր ամենայն բարեաց և զառաջին գերագոյն պատճառ երկրորդ պատճառացն, ոչ բառնին արդիւնք և պատճառ գործողութեանն. զօրօրինակ որդւոյն ընկալեալ ի հօրէ զինչս ընդ պահպանութեամբ և հրամանաւ հօրն՝ ամենայն գործողութիւնքն նմին որդւոյ վերագրին՝ և ո՛չ հօրն։ Նմանապէս միայն



թէ՝ արարածք համաչարժ գոյին արարչական զօրութեանն, Արդիւնք և գործք ամենայն՝ մարդկային համարին և կոչին. քանզի նովաւ կեամք՝ ինամ՝ և ինամիմ։ Բայց միշտ ճշմարիտ է թէ ինքնին՝ այսինքն կեամբ ի նմանէ։ Զայս նրբագոյնս իմն տեսցուք յայս

---

## ՅՕԴՒՈՒԱԾ Գ.

### ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ՀԱՄԸՆԹԱՑՈՒԹԵԱՆ

**ՄԺԴ.** Առեղծեալ Աստուծոյ կարող զօրութեամբն զարարածս, և պահեալ անթերի զնոսա ի գոյութեան իւրեանց, պարտ և վայել է իբրև ամենիմաստ հեղինակին բնութեանն, զի ի գուն գործելն արարածոց ժամանել վախճանին՝ գործակից լինելը նոցա ի գործողութիւնս և յարարս, մատակարարելով նոցա զպիտանին ի դոյժել։ Արդ ցուցեալ միանգամ զպահպանութեանն յԱստուածուստ զճշմարտութիւն՝ ժամ է մեզ բարեպատեհ ցուցանել զաստուածայինն իսկ ի գործս արարածոց զհամընթացութիւն՝ զորմէ ընդ մէջ գերիմաստ Աստուածաբանից և փիլիսոփայից վիճաբանութիւնք ծագեալ են ծանուն։

**ՄԺԵ.** Նախ գիտելի է՝ թէ առ ի սեպհականել ումեք զգործ իմն, չէ պարտ զի զամենայն զնիւթեղէնն իսկ գործողն առեղծանիցէ. զօրօրինակ արձանագործին գործք կոչին անդրիք յօրինեալք և կոփեալք ի ձև կամ պատկեր այսր մարդոյ կամ կենդանւոյ՝ են. բայց ո՞վ անդիտանայ՝ թէ ի յօրինեալ անդրիտդ մարմարիոն նիւթն յԱստուծոյ է առեղծեալ. ո՞վ ուրացցի թէ՝ այլ ամենայն գործիք երկաթեայք՝ հարկաւորք արձանագործիդ՝ ո՛չ ի սմանէ՝ այլ յայլոց արհեստաւորացն են յօրինեալք, և յԱստուծոյ առեղծեալք. բայց և ի վերայ այսր ամենայնի արձանն բոլորովին կոչի ձեռագործ անդրիագործին, կոչի ընդհանրապէս [illegible]։ Գիտելի է թէ՝ բաս

ամին օրինակի յամենայն մարդկային արարս՝ կամ գործս արարածոց երեք ինչ գտանին հարկաւորապէս. նախ՝ նիւթն գործոյն, զորօրինակ երկաթին, փայտն, ևն, և գործիք որով մարդ զգործ իւր արտահանէ. այսմիկ մասին գործոյն տամք զանունդ հնոցդ. Բ. գտանել՝ պարտ է հոգևկան զօրութիւն և ընդունակութիւն գործողին, և յարմարութիւն նիւթոյն առ վախճան գործոյն. և անտարբերութիւն առ այդ, այսմիկ ևս տամք զանունդ դիզդ. Գ. գտանել պարտ է և ձևն կամ կերպն գործոյն, այսինքն որոշել զնախընթաց անտարբերսն ի մի գործ անպհական, կամ ուղղել զնոսա ի դիտաւորութիւն կամ վախճան գործոյն որ հոգևկան է, և կախել յազատութենէ մարդկային կամ յարարածոյն կամաց: Առաջին և երկրորդն ըստ որում նիւթական և իրական և գրական, բարի են միշտ նդ-ի-ն-ն-դե. իսկ երրորդն հոգևկան գոլով, ոչ է այլ ինչ՝ բայց միայն հատանութիւն կամաց և ազատութիւն հոգւոյ առ այս կամ այն վախճան ուղղելով զնիւթական բարիսն, այսինքն զնիւթ և զգործիս: Նոյն իսկ առ ի հատանիլ այսմ կամ այնմ իրի, և որոշել զինն՝ հոգի մարդոյ պէտս ունի երկուց նիւթոցն՝ հնոցդ և դիզդ, որք անտարբերք են ի չարութիւն և ի բարութիւն գործոյն. և եթէ ի կիր արկցին ի գործողութենէն՝ ինքեանք նիւթականապէս բարի են, յԱստուծոյ և դրականապէս կելով. բայց բովանդակ պատճառ բարութեան կամ չարութեան գործոյ իրիք առեալ լինի յերրորդ թէութենէն, այսինքն ի յազատ հատանութենէ կամաց՝ որ լուսաւորի ի մտաց անտի. քանզի միտքն յառաջ քան զտալ զհատանութիւնն՝ լուսաւորէ զկամն, և ծանուցանէ զբարութիւն կամ զչարութիւն հատանութեանդ: Եւ յետոյ կամքն ինքնին հետևի՝ կամ յետս կալ, կամի կամ զգուի ի վախճանէ անտի: Ա.Հա սմին իրի է՝ զի գործն կոչի բարի կամ չար. և թէ գործն նիւթականապէս առեալ՝ բարի է, և կերպաւորապէս կամ հոգևկանապէս առեալ՝ չար է. զորօրինակ թէ ոք սպանանէր յանտառի զմարդ, համարելով խոզ սպանա-



նել, գործ նորա բարի է, վախճանն նորա բարի գոլով. և թէ յետ ճանաչելոյ զորպիսութիւն գործոյն, ոչ հաւանեալ հաճեսցի, նա ցաւեսցի, վարձս ունի. քանզի վախճան նորա, որ էր զանբան զկենդանիս որսալ, բարի էր: Տե՛ս զի ամենայն բարութիւն և չարութիւն գործոյն ի վախճանէ անտի ազատութեամբ ընտրելոյ ծագի, և ո՛չ երբէք այլուստ: Սմին իրի և վախճանն դնի տիրապէս ի կարգի ներգործական պատճառաց (ձԽ. ձԽՍ. ձԽՐ.):

ՄԺԶ. Ա.յսոցիկ այսպէս եղելոց, են ոմանք յիմաստասիրացն՝ որք ասեն թէ՝ Աստուած գործակից լինի մարդկային գործոց դԶ-դե-, այսինքն առեղծեալ զարարածս՝ տուեալ է իւրաքանչիւրոցն զբաւական կարողութիւն ի գործել և կեալ, և ինքն ոչ առնէ ինչ արդեամբ, այլ անտարբեր կայ: Են և ոմանք որք յոյժ տուեալ աստուածային համբնթացութեան, ասեն թէ Աստուած -ն-դԶ-դե- գործակից լինի մարդկային գործոց, այնքան՝ մինչև չարժել զկամս և որոշել զնա կամ նախատահմանել առ այս ինչ կամ առ այն: Յայսմիկ վարդապետութեան, այսինքն Թովմայականացն՝ ո՛չ Սրբոյն Թովմայի, վտանգ մեծ կայ ազատութեան կամաց, և անխմանալի գոգցես եղանակ բացատրելոյ զայն, այսինքն զաստուածային շնորհացն զօժանդակութիւն և զմարդկային կամացն զազատութիւն. մեծարեմք յիրաւի զԱստուած աբանիցն վարդապետութիւն, և ոչ պարտաւեմք՝ մինչդեռ և կեզեցին իսկ անտարբեր կայ զվարդապետութենէ նոցա, բայց ոչ հետևիմք. և համարիմք թէ որպէս առաքինութիւնն, նոյնպէս և ճշմարտութիւնն ի միջին կայցէ, որ է փիլիսոփայիցն երրորդ կարծիք և բնական լուսոյն յաւէտ յարմար և համեմատ. այսինքն է Աստուած -ն-դԶ-դե- այնպէս օժանդակէ արարածոցն և գործակից լինի նոցա, զի ո՛չ բոլորովին անկախ՝ և առանց Աստուծոյ լիցին մարդկային գործողութիւնք, և ո՛չ բոլորովին գործիքական պատճառաց սակի՝ աստուածայինք կոչնացին, այլ ի միասին զԱստուած գործակից ունելով անմիջապէս ինքեանց և օժանդակիչ, գործեացեն զգործս արարածք՝ վասն որոյ

## ԱՒԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ա-----ծ -ըբե-ջ և -ձվե-դե- է-ր-ե-ից լ-ի -ր-ր-ծ-ց
է-ր-ը-ը-ե-ց ի- ն-ր-ր-ե-ն ե-ի-ը-ը գ-ժ-ո-ց։

*Ա.յսպէս յուցանի Համառօտապէս.*

*Մ ժ ի.* Նախ մի միայն փաստն առեալ ի դրականապէս աստուածային պահպանութենէ զարարածս՝ բաւական է մեզ անտի յառաջ բերել՝ թէ յամենայն գործս արարածոց Աստուած գործակից է, և համբնթաց երկրորդ պատճառացն. քանզի եթէ ցանկ ի դոյութեան իւրեանց պահէ Աստուած զարարածս ներգործութեամբ կամացն, պահեացէ զնոսա ի հարկէ և ի լինելն նոցա, ամենայն վայրկեան և մասունք կենաց նոցա անկախ գոլով ի միմեանց, Լինին՝ յորժամ գան ի գոյութիւն, թէ՛ բազմանալով միմն ի միւսմէ ըստ սեռին, թէ՛ գործելով զնոր ներգործութիւնս, զի և ոչքա անդամ լինել սկսանին, որք յառաջն չէին. այսինքն ներգործութիւնք եղեալք յարարածոցն և ծնեալք՝ պէտս ունին աստուածային անմիջապէս գործակցութեանն. ուրեմն Աստուած գործակից է արարածոցն գործողութեանց անմիջապէս։ Երկրորդ՝ արարածք ի գործելն կատարեալգործին բնականապէս, զի ստանան զգործողութիւն, զոր յառաջն չունէին՝ և կամ ունէին զօրութեամբ միայն. իսկ արդ գործողութիւն կանխագոյն գործողութեան պէտս ունի ի լինել. ուրեմն արարածք պէտս ունին աստուածային գործակցութեանն ի գործողութիւնս իւրեանց՝ և այդմ անմիջապէս։ Երրորդ՝ եթէ Աստուած ո՛չ արդեամբ, այլ զօրութեամբ միայն գործակից լինէր արարածոցն գործոց, պակասէր կատարելութեամբ. քանզի լաւագոյն է արդեամբ գտանել ի գործ իմն, քան թէ զօրութեամբ. ուրեմն, ևն։ Զորրորդ՝ եթէ Աստուած անմիջապէս չլինէր գործակից արարածոցն գործոց՝ գործողութիւնքդ այդ գոգցես սահման դնէին աստուածային յամենայն ուրեք արդեամբ և գոյացութեամբ ներկայութեանն. ուրեմն գեղեցիկս Ա-



*նեքայ զմեծէն Աստուծոյ խօսելով ասէ. «Կարես կոչել զնա պահապան տիեզերաց, և տէր աշխարհի, ամենայն գործողութեանց, կամ գատակնիք ճակատագրական, կամ նախախնամութիւն, կամ բնութիւն, կամ աշխարհ»։ Զերմէս կոչէին նախնիքն զայն՝ զոր մեք պահապան և տեսուչ (ասեմք) տիեզերաց, հոգի և զօրութիւն աշխարհական գործոցս այսոցիկ, տէր և ճարտարապետ՝ որում ամենայն անուն պատուոյ վայել է։ Կամի՞ս կոչել զնա ճակատագրական կենիք, ոչ սխալիս. այս է յորմէ կախին ամենայն ինչ, պատճառ պատճառաց։ Կամի՞ս նախախնամութիւն կոչել զնա. ուղղապէս գտար. քանզի է, որոյ խորհրդով խնամի աշխարհս այս՝ զի անմնացորդ ընթացցի և զգործս իւր արասցէ. կամի՞ս զնա բնութիւն կոչել. ոչ մեղանչես. քանզի է յորմէ ծնանի ամենայն, որոյ հոգւովն և (ոգւով) կեամք. կամի՞ս զնա աշխարհ կոչել. ոչ խաբիս. քանզի ինքն է բովանդակն այդ՝ զոր դու նշմարես. բովանդակն մասամբ իւրով յարդարեալ, և զանճն կազուցիչ սեպհական զօրութեամբ իւրով (Վիճաբանութիւն բնական. Գլուխ 3.). յորմէ յայտ է թէ՝ ամենայն ինչ նոքաւ, և զօրութեամբ կամ համբնթացութեամբ Հերմեայ լեալ է. բայց հա՛ն զՀերմեայ զանուն և զԱստուծոյն գի՛ր փոխանակ այնր, ունիցիս զճշմարիտ վարդապետութիւն, յորմէ կախին ամենայն ինչ յաշխարհի, և նոքաւ՝ ի նմանէ և ինձմա կեամք, և նորին հոգւովն և զօրութեամբ. և ըստ որում ասաց Առաքեալ ոմն (Ռ. Կորնթ. Գ. 5.) «Իբր ո՛չ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրև ի մէնջ՝ այլ բանականութիւնն մեր յԱստուծոյ է»։*

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ

*Մ ժ Ը.* Նախ՝ եթէ ընդունիցիմք զաստուածային համբնթացութիւն անմիջապէս յամենայն գործողութիւնս՝ Ա. բառնայր ներգործական զօրութիւնն յերկրորդ պատճառացն. քանզի չլինէր ի ներքին ներգործական սկզբնէ՝ այսինքն ի հոգւոյն, Բ. Բառնայր պատճառն բարոյական

գործողութեանց. քանզի ինասէր մարդկային աղաւթիւնն կրելով կից ինքեան զայլն զօրագոյն քան զինքն զօրութիւն. Զի՛ք անոի անտեղութիւն իմն ընդդէմ աստուածային կատարելութեանց. քանզի ի սկզբան անդ գոյացութեանն իւրաքանչիւրն ընդունի յարարչէն, զոր ինչ միանգամ ունի զօրութիւնն և ընդունակութիւն ի գործել, Գ. Նա՛ յաւէտ ընդդէմ լինէր հանճարոյ մտացն իւրոց, քանզի բազմաքն կատարէր զգործ իմն՝ զոր միոջիւ կատարել բաւէր։

Ա.ո Ա. Ժխտեմ զնախընթացսդ, և առ փաստդ ասեմ զանազանելով. չլինէր գործողութիւնն իններքին սկզբնէ՝ եթէ աստուածային գործակցութիւնն միայն գործէր, և ջնջէր զարարածոց զներգործութիւնն՝ ընդունիմ. բաստուգաբանութեան գործակցութեանն և համընթացութեանն՝ ուրանամ. քանզի թէև արարած ունին զզօրութիւն կամ զընդունակութիւն ի ծնէ անդ իւրեանց պարգեւեալ նոցա յԱստուածուստ գործելոյ, բայց զօրութիւնդ այդ ո՛չ երբէք արտաքսէ զաստուածային գործակցութիւնն. նա՛ մանաւանդ արդեամբ գործողութիւնն արդեամբ գործողութեամբն կատարի. զի զօրութիւնն ո՛չ երբէք գայ յարդիւնս՝ թէ ո՛չ գործողութեամբն, որ արդեամբ իցէ տիրապէս. զոր գործողութիւն ո՛չ ոք ի մարդկանէ ստացեալ ունի ի բնէ։ Ա.րդ արարած միացեալք զօրութեամբ իւրեանց բնականաւն՝ յաստուածայինն գործողութիւն՝ գործակից ընդ միմեանս. և ամին իրի է՝ զի կոչի գործողութիւն արարածոց. քանզի զօրութիւնն ներքին մարդկային կամ արարած գործող սկզբանն միացեալ ընդ աստուածայնոյն՝ գործեն զոր գործեն, Վասն որոյ չէ պարտ չփոթել զներգործական զօրութիւն արարածոց ընդ արդեամբ աստուածային զօրութեանն, որ է գործողութիւն. այլ իմն է կարել գործել, և այլ տիրապէս արդեամբ գործողութիւնն. այո՛, աստուածային բնութեանն է սեպհական՝ և այդ արարածոցն միացեալ և միամտակցեալ, արարած բնութեանն չնորհին ամենայն գործողութեանդ արդիւնք նիւթեղինացն յԱստուծոյ անսի չնորհեալ նպաստ և օժանդակութիւն. վասն որոյ նկատմամբ չարութեանց մարդկան ասացի, « երբեմն ի մեզ ձեր ծառայեցուիք զիս ». զի զորօրինակ մանուկն անկար ի քայլ ինքնին՝ տայ զալ ձեռն ի ձեռն մօր, բայց և այնպէս ասի մանուկն ընթանալ մարքն հանդերձ, սոյնպէս և ես։

Ա.ո Բ. ասեմ. ուրացեալ զնախընթացսդ, և առ փաստն Ա. ուրացեալ և զայս՝ առ Բ. փաստն զանազանելով ասեմ. եթէ համակցութիւն դերագոյն աստուածայինն զօրութեանն ո՛չ միայն չնպաստէր, այլ և բառնայր զկար զօրութեանդ՝ ընդունիմ. այլապէս՝ ժխտեմ. ի բացայայտութիւն որոյ ասեմ. ո՛չ ի նիւթական զօրութիւնն կայանալ արդիւնք գործողութեանն և պատճառ բարոյականութեանն, այլ ի հոգեկան ազատ ընտրութեանն արարածոց ի բարի և ի չարի վախճանն։ ապա թէ ո՛չ պատրաստմունք և յաղթութիւնք չասէին Ա.ղեքսանդրի, Աննիբաղայ, Կեսարու, կամ Միհրդատայ կամ Տիգրանայ, նա՛ յաւէտ զօրագ նոցին, Եւ ո՛չ անդրիք արձանագործաց և պալատաք հոյակապք ճարտարապետաց, նա՛ յաւէտ վարձկանաց նոցին։ Զայս առի քալ որոշել եդաք իվեր անդր զկատնոնս, թէ զի՛նչ և քանի՛ թէութիւնք պէտք են ի գործել զիմն։

Ա.ո Գ. ասեմ. ժխտեալ զնախընթացսդ, և առ փաստն՝ ասեմ. եթէ ի սկզբան անդ իւրաքանչիւրոցն չնորհէր զօրութիւնն և արդեամբ գործողութիւնն միշտ և յարատեւ՝ ընդունիմ. միայն զզօրութիւն և զընդունակութիւն՝ ուրանամ. քանզի յայնժամ անկախ լինէին գործողութիւնք երկրորդ պատճառացդ յառաջին պատճառէն, անմասն լինէր աղբիւրն բարութեան յարարածոցն բարութեանց. սահման դնէր բովանդակութեանց Աստուծոյ, և անտեղի քան զայդ՝ չլինէր իմն յաչխարհի։ Որք այսպէս ասեն, կամ ապիտանան ի մասին աստուածային կատարելութեանցն, և կամ յոյժ ամբարշտութեամբ ընդ Աբարիչն վարիլ և մարտնչիլ կամին. անմիտք անմտութեամբ վարեալք։

Ա.ո Դ. ասեմ. ուրացեալ զնախագասդ, առ փաստն ասեմ. եթէ կարող լինէր ի գործողութիւն արարած բնութիւնն ինքնովին՝ ընդունիմ. այլապէս՝ ժխտեմ։

## ՑՕԴՈՒԱԾ Դ.

### ՑԱՂԱԳՍ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

**ՄԻԹ.** *Հուսկ ուրեմն գաստուածային նախախնամութեանէ խօսելով, երկակի իմանալ կարեմք գնա. կամ յեղեռնական իւրում, և չէ այլ ինչ՝ բայց միայն միտք աստուածային, որ կարգեաց զօրէնս և զընդհանուր նպաստս, որ ընդունակք և կարեւորք իցեն վախճանի իւրոցն և աշխարհի. և կամ յառաջիկայն, այսինքն յարարածս, և ոչ է այլ ինն ինչ՝ բայց միայն նոյն աստուածային մտացն և կամացն կարգադրութիւն, որով կառավարին տիեզերք յԱստուածոյ, և տիրապէս անվրէպ ժամանեն վախճանին իւրեանց. ամին իրի զնախախնամութիւնն կոչեաց Սուրբն Թովմաս, պատճառ իրացն ի վախճան՝ որ (պատճառն) կայ յԱստուած: Մեք զնախախնամութիւնն ըստ որում կարգադրութիւն աստուածային մտաց, որով վարին ընդհանուր արարածք՝ արդեամբ ի ձեռս առեալ ցուցանեմք թէ ոչ ոք յարարածոց կայ ի բնութեան իւրում և ի գոյութեան, առանց այսր աստուածային նախախնամութեան. «Ո՞ ոք ճարտարապետ անտես արասցէ զգործս ձեռաց իւրոց», ասաց Սուրբն Ամբրոսիոս. վասն որոյ զառաջարկութիւնս դնեմք,*

Ա-փ---ք-չն ն-խ-խն-մ-ր-ն-ն է-ւ-վ ե-ր-ն գ-ն-ա-ն-ն-ն ա-ր-ք-ց-ն .

*Մի. Բայց և կանուխ գիտել պարտ է՝ թէ հրամանն և կարգադրութիւն աստուածային կամացն ունի ինքեան առարկայ զբնական կամ զֆիզիքական օրէնս արարածոց. երկրորդ՝ զբարոյական օրէնս արարածոց. զերկոսին ի միասին առեալ ընդհանրապէս ասեմք և այսպէս հաստատեմք: Նախ՝ իմաստունն ի գործելն գիւմն, այնպէս կարգէ զմիջոցս օգտակարս և չահաւէտս ի նպաստակ գործոյն, զի ոչ երբէք կարէ զրկիլ ի նմանէ. ապա թէ ոչ չկարէր իմաստուն կոչիլ. արդ տիեզերք ամենայն՝ թէ կենդանիք թէ անկենդանք իցեն՝ գործք են Աստուծոյ ձեռաց՝ կար-*



*գեալ ի նպաստակ ընդհանուր. եթէ ոչ ամենայն ինչ աստուածային կարգադրութեամբն վարէր՝ ապաքէն չլինէր ամենիմաստ էակ արարած բնութեանն. քանզի յումեքէս բազումք ստեղծեալ լինէին անօգուտ վախճանին իրացն. քանզի եթէ պիտանիք էին, առ ի՞նչ ոչ ի կիր արկանին. եթէ չէին՝ առ ի՞նչ եղեն. ոչ ապաքէն անմտութեամբ առնէր, որ այդպիսի գործոյն հետևէր. Երկրորդ՝ ընդդէմ աստուածային բարութեանն լինէր, եթէ ամենայն ինչ չխնամէր յարարչէն իւրմէ. քանզի կարգէր զայնոսիկ ի նպաստակն, և կամէր զի ծառայեալ ժամանեսցեն այսմ նպաստակի. իսկ արդ լինքեանք ինքնովին անկարգ գոլով, և զրկեալ յարարչական և ի նախախնամական նպաստից՝ զրկէին և ի սեպհական նպաստակէն, որ ընդդէմ լիներ աստուածային բարութեանն. Երրորդ՝ չխնամել կարէ ոք զիմն, կամ զի անկար է առ այդ, կամ զի արգելու խնամել զայդ, կամ զի նուազէր ի բարութիւնս, և կամ զի ապաշաւէ ընդ եղեալ գործն. Արդ ոչ ոք ի սոցանէ ունել կարէ զբանաւոր պատճառն առ Աստուած. քանզի նախ կարող է առ այդ, և որ ստեղծանէն յոչնչէ զիրս, կարէ և պահել զնոսա. որ զմեծագոյնն առնէ, և առաւել և զփոքրագոյնն, զի մեծագոյն զօրութեան պէտք են յոչնչէ ի գոյ ածել զարարածս, քան թէ գոյիցն խնամել, և վարել տեսչութեամբ. Ըստ այսմ մեծն Պղատոն «Զգոյշ լինել պարտ է մեզ զԱստուած անարգագոյն քան զմահկանացու ճարտարապետս ունել, որք որքան իմաստունք իցեն, այնքան գործս իւրեանց զփոքրիկս ընդ մեծամեծսն գերագոյնս կատարեալ յօրինեն (*)», Երկրորդ՝ ոչ արգելու յումեքէ վասն այդր. քանզի ամենայն ինչ ի կամս նորա անսխալ յառաջ եկեալ են, և չէ ի կարգի գոյիցն, որ ընդդէմ իցէ աստուածային կամաց իւրոց. ամին իրի ասաց նոյն վերոյիշեալ Սուրբն (**). «Ո՞ ոք լքանիցէ կամ ծանիցէ զոր ինքն կանգնել խորհեալ իցէ», Երրորդ՝ ոչ խնամելոյն չպակասի ի բարութիւնս. քանզի ազբիւր է*

(*) Գիրք ժ. Յաղագս օրինաց: (**) Ամբրոսիոս.

ամենայն բարութեանց և կատարեալ ի բնութեան։ Զորրորդ հուսկ ուրեմն գոլով անփոփոխելի ի յէութեանն՝ չկարէ ապաշաւել. քանզի որ ապաշաւէնն, ցաւի ընդ արարեալ գործ իւր. արդ ամենագէտ է Աստուած, և գիտութեանն չիք սահման. ուրեմն, Ամենայն գոյութիւնք ընդհանուրք պահին ի զարմանալի իմն կարգ բնութեանն. թէ կենդանիք, թէ անկենդանք, թէ բանականք և թէ անբանք գեղեցիկ իմն օրինօք պահեն զկարգ, զօրէնս, չնո և զանասակս իւրեանց, և ո՛չ միոյն ի սեռից կամ ի տեսակաց զրկեալ գտանի ի վախճանէն. Տի՛նա գեղեցիկ իմն ներդաշնակութեամբ հոլովին առաւրք չորից եղանակաց. այնպէս զի իւրաքանչիւրն ըստ պահանջման բնութեանն առ ղարգասիս, և զբնդմնաւոր պտուղս և զպարգեւս առնդնալ բնութեանն, վայելչութեամբ որոց զարդարի երկիր, և որ ինչ ինձա տեսակ կենդանեաց։ Մինէ զայգ ամենայն և զայնքան ներդործութիւն առանց գերազոյն պատճառի՝ եղեալ գտանիցեմք. ո՛չ ապաքէն ունին զկենդանատուն, և սա ամենեցուն կամի կենդանի, որ աղագաւ առեղծանն հասանել վախճանին. և նմին իրի խոստովանեալ Կիկերոն (*). «գերազոյն քան զԱստուած չիք այլ ումն էակ. ուրեմն պարտ է զի ամենքերք ինձանէ միայն վարեցին. նա մանաւանդ բանականացն սեռ՝ զորս առեղծեալ վասն իւր, այդ է գերազոյն վախճանին, զոր ի ձեռս բերել զոզջս յանհնարինն, զիա՛րդ առանց վերնական բարձր ձեռնտուութեանն այնմ հասանիցեն, ո՛չ ապաքէն թշուառագոյն լինէին քան զանասունս. զի՞ է զի անբանքն բնական վախճանին հասանիցեն, և բանականքս ի պատակեր արարեալ Աբարչին, յեանեալք ի գերազոյն նպատակէն զրկիցիմք. այսմ ոչ ներեսն արքունութիւն, զթութիւն և արդարութիւն Աբարչին, Եւ ևս ո՛չ ապաքէն վիճակ անօրինացն լաւագոյն լինէր քան զարդարոցն, եթէ նոցա՝ իմաստութեամբ և արդարութեամբ Աբարչին չպատրաստէին վարձք բարութեան,

(*) Յորագս բնութեան Աստուածոց. Գիրք. Ա. Գլ. Իզ.



և նոցա՝ չարութեան։ Զհամրդ երկոցունց գործոդութիւնք միմեանց հակառակք, բարք և վարք եղծիչք միմեանց. աղաւտութեան կամաց նոցա կեան, և օրէնք բնութեան ո՛չ միայն չկործանին, այլ և հաստատեալ յԱստուածուստ իւրաքանչիւրոցն ըստ գործս իւր, անխախտ կայ ձեայ աշխարհ՝ և որ ինձա արարածք»։ Հինգերորդ՝ է ձայն բնականն զդայութեան բղխեալ յամենեցունց իսրտէն «Ողորմած Աստուած, Աստուած բարեխնամ է, ո՛վ բարեխնամ Աստուած, ո՛վ Նախախնամութիւն աստուածային»։ Անկեալ ազգ մարդկան յանձկութիւն և յուսահատեալ յարարածոցն օժանդակութենէ, առ Աստուած դիմէին ամենայն ազգ, ամենայն մարդ, ասելով ինա և ասելով «Տէրն տեսցէ, ողորմած է Աստուած»։ Եւ զայդ նոյն իսկ անզգամք խոստովանէին ինեզութիւն և ի վիշտս անկեալք, և արտասուօք աչացն ասելով «ապաւինիմք ի խնամս Աստուծոյ»։ Եւ թէ «արդարութիւն Աստուծոյ, մի յերեսս իմ հարցես զանզգամութիւն իմ»։ Են. Են։ Ուրեմն յայտնիկ ամենեցուն ցուցաւ թէ ամենայն ինչ նախախնամութեամբ Աստուծոյ վարի և կարգի. յառաջ բերել կարեմք և զորս միանգամ գրեցաք ի ցոյց գոյութեանն Աստուծոյ, ի բնական իրաց և ի բարոյական վաստից (ձԽէ և ձԽԸ), որով ամենեքումբք գամք ի հաստատութիւն առաջարկութեանս, թէ «Աստուած է որ խնամէ զամենայն արարածս իւր». ո՛չ միայն զմեծագոյնն՝ այլ և զփոքուներս, զի գիտէ պատճառն իրաց՝ զինչ պիտոյ իցէ նոցին իրաց. ո՛չ ապաքէն երկու ճնճղուկ դանկի միոյ վաճառին, և միոն ինոցանէ յերկիր ո՛չ անկանի նպաստու և խնամով այնր, որոյ առաջի ամենայն հերք գլխոյ մերոյ թըւեալ են, որպէս վկայեաց ի ճշմարիտ վկայից ումն (*)։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ

ՄԻԱ. Առարկեն ոմանք աստուածային նախախնամութեանն, ջատագովք բազդի. և Եպիկուրեանք Ա.

(*) Մատթ. Գլ. Ժ. 29, 30։

անվայել է երջանիկ բնութեան նորա ընդխառնել զինքն ի հոգս աշխարհի յանկատարս և յանվայելուչս մեծվայելչութեան նորա. զինչիսիլ ի նուաստ գործողութիւնս արարածոց և ի փոքունս։ Ք. Հակառակէր Աստուած այսու բանական մարդկային բնութեան ընդհանուր ձայնի, ի վաստակիլ քրտնաջան վաստակօք, մերթ ճշմարտութիւն ճշմարտութեան չկարէ հակառակ կալ։

Ա. Ո. Աստ ուրանալով զնախընթացսդ. քանզի լաւագոյն է գործել քան զդատարկութեամբ կալն. և թէ ի խնամել Աստուծոյ զարարածս և զգործս նոցա, ո՛չ զօրէն սոցա վաստակի, նուազի ի զօրութենէ, յօրինէ, և զյօրինուածս աւերէ, և վերստին սկսանի, այլ կատարեալ գործողութեամբ՝ և անբասիր. և պատճառ պակասելոյ մարդկան ի գործս՝ է ի մեթաֆիզիքական չարութենէ անտի եդեալ ի բնութեան առեղծուածոց ի բնէ անտի, քանզի պատահականք են և անկատարք։ Բայց ո՛չ այսպէս և արարիչ բնութեանն. քանզի անփոփոխ է, ինքնագոյ և կատարեալ, գերագոյն աղբիւր ամենայն բարութեանց, «Քարինք մեծամեծք առանց փոքունց չկարեն կալ ի չինուած իմն, ըստ ճարտարապետացս», ասաց Պղատոն. այսպէս և Աստուած յորմէ, որով և յոր՝ ամենայն ինչ եղեն, են և կեան։

Ա. Բ. Աստ՝ ուրանալով. քանզի խնամելով առեղծուածոց իւրոց զգործս, ո՛չ ի կիր արկանէ զնոսա իբրև գործիքական պատճառս, յորոց զօրութիւնք և ոչինչ՝ լոկ մեքենայ գոլով, իբրև զդրիչ գրագրաց կամ ի ձեռն մատենադրայն, այլ պահէ և պահանջէ զարարածոցն անդամ ընդգործութիւն, և այդ խորին իմաստութեամբ աստուածային նախախնամութեանն, զի թէև օժանդակէ և մատակարարէ զզօրութիւն, և զկար գործելոյ արարածոցն, բայց և այնպէս ո՛չ սեպհականէ անձին զօգուտ և զվարձս գործոցն արարածոց, այլ յօգուտ և ի վարձս նոցա. ամին իրի այսպէս պատասխանէր Սուրբն Ամբրոսիոս, որոց ասէին՝ թէ չեն պէտք նախախնամութեան Աստուծոյ, և բնդդէմ ազատութեան է մարդկան. «Եթէ անիրաւութիւն է վարձն, ո՛չ ապաքէն մեծագոյն անիրաւութիւն է ստեղծանելն (զարարածս). զի չառնելն իմն՝ չէ՛ անիրաւութիւն ինչ, բայց արարեալ՝ չխնամելն մեծ անիրաւութիւն(*)»։



Պնդեն ասեն. Եթէ էր աստուածային նախախնամութիւն, ապաքէն լինէր և արդարոցն և անօրինաց վարձք, և պատուհասից արդար տրամաբանութիւն յամենայնի. արդ առ բազումս նշմարեմք զանօրէնսն ամենայն բարձեալ վասօք և երջանկութեամբ, և զարդարսն լցեալս վշտօք և անձկութեամբք։ Ք. անմեղքն գըտանեն անդամ զվերնոյն պատուհաս. զի ծնեալք յաշխարհ, և զլոյս չտեսեալ աւուրն՝ զնոսն ճաշակեն, են։ Ուրեմն չի՛ք նախախնամութիւն Աստուծոյ։

Ա. Ա. Աստ. Նախ՝ այլ է երջանկութիւնն անցաւոր, և այլ յաւիտենական. նա՝ փախստական և սուտ, սա՝ մշտնջենաւոր և անկորուստ։ Պատասխանեմ երկրորդ՝ զանազանելով. Եթէ երջանկութիւն բարեացն կենցաղոյս կախեր յերջանկութենէ և յուղղութենէ վարուց և բարուց՝ ընդունիմ. եթէ յայլոց անտարբեր պատճառացն՝ դարձեալ զանազանեմ. և այդ միշտ և ընդհանրապէս՝ ուրանամ, երբեմն՝ ընդունիմ։ Ժամանակաւոր բազդի բարութիւնքն չեն անբաժանելի ընդ բարոյական գործողութիւնս արարածոց. բազումք՝ անօրէնք ի բարոյական գործս, բայց իւրեանցն երկրի և տուրնաւորութեան կարի վարժք և աչալուրջք, երկրին տուրնաւորութեան վիճակեալք՝ քաջ արհեստին կանոնաց, ի հարկէ բերրեն զարդասիս. բայց այդ չէ՛ երջանկութիւն իսկապէս, այլ կեղծուպատիր և անցաւոր բարիք, ո՛չ գուրկ ի հոգելից վշտաց. բայց և ի վերայ այսր ամենայնի, չիք իմն անտի անտեղութիւն ընդդէմ վերնոյն տեսչութեան, նա մանաւանդ եդեալ՝ յայղպապէս քաջ կանոնացն արհեստին. եթէ չյաջղէին վաստակոցն համեմատ արդասիք՝ ընդդէմ լինէր աստուածային նախախնամութեանն նա և արդարութեան։ Բայց է երջանկութիւն յորմէ անզգամք խոպատ գրկեալ

(*) Ի գիրսն Յաղագս Պաշտամանց. Գլ. ԺԳ.

# ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

«Ծանիր զքեզ»

ՍՈԿՐԱՏԷՍ·

ՄԻՋ. Ոչ միայն հինաւուրց պատուէրն՝ «Ծանիր զքեզ» Սոկրատայ, այլ և կարգ բանի՝ յոր միջամուխ լեալ եմք, խնդրէ իրաւամբ զի յետ Աստուածաբանութեանն ճառիցեմք զԴոգեբանութենէն. քանզի յետ ընդհանուր համաբնաբանութեանն իջեալ ի մասնաւորն խօսելով զառաջինն էակէն, վասն զգերագոյնն ունելոյ ըզառեղի ի վեր քան զարարածս, այսինքն զԱստուծոյ, արդար է զի զառաջինն ի կարգի արարածոց ունիցի զառեղի յետ Աստուծոյ Հոգեբանութիւնն, որ է՝ ի-ր-ն-ե-ն հ-ո-գ-ի. քանզի բայ յայնմանէ՝ զի զաստուածայինն յինքեան ունի զպատկեր հոգեզէն բնութեանն, խորհրդածութեամբ մտացն և գործողութեամբ կամացն, յաչխարհին անգամ յինքեան ունի զմասունս՝ գոլով հոգի՝ այն է ի-ւ-ր-ա-կ-ա-ն ե ն-ո-յ և ի-մ-ա-ց-ո-յ. ամին իրի և ոչ յանիրաւի կոչեալ է ի-ր ա-կ-ա-ն՝ յիմաստնոյց անտի։ Եւ ևս չեն բնութեան օրէնք ճաշակել ի պտղոյն, և զծառն անտես թողեալ անգոնել. ուստի որ պատճառն է գիտութեան ճշմարտին և բարւոյ, որով և վախճանի երջանկութիւն մարդոյ, ճանապել պարտի նախ՝ թէ զի՛նչ է, և ապա թէ՝ ո՛րպիսի ինչ է։ Սակայն քանզի մեզ ծանօթագոյն մասունքն նիւթեղէնք կամ մարմնեղէնք, և երկու բնութիւնք հակառակք և հակասական յատկութեամբ միաւորեալ են ի մի, և զգարմանալի իմն կերտուած յօրինեն՝ զմարդն ասեմ, վասն որոյ և մեք զգիտութիւն մեր ի նոցանէ անտի զհոգւոյ առնեալ վճռեմք, նմին իրի և գիտութիւնդ անտի քաղեալ յոյժ դժուարին՝ այլ քաղցր է. զի ամենայն ոք ցանկայ գիտել զոր ունին, և այդ ախորժանօք։ Ցայս ապաստանեալ, մանկո՛ւնք, ցանկամ և ես հասանել ձեզ ի բնութեանդ և անձանցդ գիտութիւն, ասելով ձեզ ճանապել զձեզ։ Բայց



գտանին, այսինքն է անդորրութիւն և լուիկ խղճի մտացն ցնծութիւն ծագեալ ի յանդորրութենէ անտի. Երկրորդ՝ յաւիտենական բարեացն և չարեաց արդար տրամաբաշխութեանն յոյս հաստատուն՝ շնորհեալ յԱստուածուստ. զայս առաքինութեանցն և մեղութեանց զարդար հատուցմանն զձայն լսէ և գոչէ նոյն բանական բնութիւնն. չլսէ՞ զայդ Արարիչն բնութեան, թէև կարեմք ասել իսկ՝ եթէ խաղաղասէրքն և առաքինիքն ո՛չ միայն բարոյական և երկրաւոր յիշեալ երջանկութեամբն վայելեն, այլ և անցաւոր բարեմասնութեանց երկրի հաղորդք, հարստութեանց, յաջողութեան, առողջութեան են. քանզի սոցին յետնոցս տեսակք հասարակք են և անտարբերք առ մնասին,

Առ Բ. ասեմ. եթէ տեսականապէս և ի վերացեալն խորհրդիք զիրաւանց Արարչին զարարածոց իւրոց, չիք երբէք պատճառ քրմին նկատից ստեղծուածոց Ստեղծողին. քանզի որ ոչն ունի իրաւունս զգոյութեան իւրոյ զպարգև պահանջելոյ յԱստուծոյ, այն է առ ի ստեղծանիլ յոչնչէ և կեալ, նոյնպէս չունի իրաւունս պահանջելոյ հասանելոյ այսմիկ կամ այնմիկ վախճանի. քանզի լաւագոյն է ընդհանրապէս լինելն քան չլինելն. զարձեալ՝ լաւագոյն է լինելն տանջանօք քան չլինելն երբէք, և չարութիւն հատնելն մտաց մարդկան՝ փառք և զօրութիւն է աստուածային կամաց, Երկրորդ՝ ի թանձրացեալն խօսելով՝ ենթադրեալ զիմաստութիւնն Աստուծոյ և զբարութիւն և զգիտութիւն, ստեղծեալ զանմեղն՝ զրկել յերջանկութենէ զնա, կորուսանել զանմեղ մանկունսն ընդ մեղաւորս հատասարապէս՝ ի պատերազմունս, ի չրոցն հեղեղ, ի Սոդոմ և ի Գոմոր. աստ զկայ առնուն միտք մարդկան, և պշուցեալ յապուշ կրթին, և ստիպեալ խոստովանել պարտի զակարութիւն անձին. և կոչելով ընդ Օրբոյն Պօղոսի և Օգոստինեայ «Ո՛վ խորք իմաստութեան Աստուծոյ, ո՛վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՛վ եղև նմա խորհրդակից» անեղ բնութեանն երկրպագանել։

ՄԻԳ. Երրակի կարէ ոք ճանաչել զանձն, կամ՝ նախ ի պէսպէս գործողութեանց մարդոյ, ճանաչել զընութիւն և զէութիւն հոգւոյն՝ և զյատկութիւնս յարմարս նմա, և զյատկութիւնս՝ որք հակառակք և հակասականք են նմա, կամ երկրորդ՝ զառօրոգելիս և զկատարելութիւնս հոգւոյն, և կամ երրորդ՝ զգործողութիւնս հասարակս երկոցունց կողմանցն թէ՛ հոգւոյ և թէ՛ մարմնոյ. այսինքն ըզհաղորդութիւն և զյարաբերութիւն երկոցունց ընդ իրեարս. ամին իրի յերիս գլուխս տրոհեմք զբովանդակ հոգեբանութիւնն. նախ՝ խօսելով զընութենէ հոգւոյն, և զպէսպէս յատկութեանց նորա՝ ի բաց դնելով և հերքելով զվարդապետութիւն այնոցիկ, որք խառնեալ չփոթեցին զհոգեղէնն ընդ նիւթեղէնս՝ զոմանս յատկութիւնս նոցին տալով, և զնոցին՝ սոցին. երկրորդ՝ զառօրոգելեաց հոգւոյն կամ կատարելութեանցն. երրորդ՝ զգործողութեանցն՝ թէ՛ ի հոգւոյ և թէ՛ ի մարմնոյ ի միասին կախելոցն։

---

# ԳԼՈՒԽ Ա.

## ՑԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՀՈԳՒՈՑ ԵՒ ՑԱՏԿՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԱ

ՄԻԳ. Հոգին ըստ որում էակ իմն կենդանի՝ է. սահմանի ի-ր-ը-ի-մ ո-ւ-ղ և ի-ն-ա ը-ր-ը-ե-լ. ի պէսպէս գործողութեանցն և ի յատկութեանցն ճանաչի՝ թէ ո՛րպիսի բնութեամբ կամ էութեամբ իցէ։ Աստուած լինել էակ իմն կենդանի՝ առ ի բաց որոշել զնա յաստուածային էութենէն, ի կարելի էակացն և ի հոգեղէն զուարթնոց՝ որք թէպէտ և ունին զկամն և զմիտս, և յայնս միաբանեալ գտանին ընդ հոգւոց մարդկան, բայց տարբերացուցիչ ինչ ի նոսա գաղափարաւն զատին ի սոցանէ. զի նոքա անմարմինք են ի բնութենէ, և սոքա մարմնով։

ՄԻԵ. Ջատագովք նիւթոյն զհոգւոյն անդամ զգործողութիւնս վերագրեցին թանձր նիւթոյ՝ զիսորհուրդ, զմիտս և զկամն, են. որովք ուրացան զհոգին բնութեամբ



մեկին և որոշ գոլ, և առաւել հակառակք, և հակասականս յատկութեամբք գոլ ընդդիմամարտ նիւթոյն և յատկութեանց նորա. մեք ի բնութենէ յատկութեանցն հոգւոյն և նիւթոյն միմեանց հակասականացն՝ ցուցցուք զտարբերութիւն էութեան հոգւոյ ի նիւթոյ անտի, և զիւրաքանչիւր յատկութիւնսդ առանձինն յօդուածովք ցուցցուք. վասն որոյ

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՑԱՂԱԳՍ ԳԱՐԶՈՒԹԵԱՆ ՀՈԳՒՈՑ

ՄԻԶ. Ներքին զգայութիւնն՝ այսինքն է խիղճ մտաց ազդէ մեզ՝ թէ ի միևնոյն ժամանակի կարէ ենթակայն՝ որ ի մեզ, ունել զերկու կամ զբազում զգայմունս միմեանց հակառակս. զորօրինակ եթէ ոք դնէ առաջի իւր զերկուս ամանս լցեալս, մինն լցեալ ջերմ ջրով, և միւսն ցուրտ ջրով, ընկղմեսցէ զայն ի ջերմին՝ և զձախն ի ցուրտին, ի միևնոյն ժամանակի ունի զզգայութիւնս երկուս՝ հակառակս միմեանց. և կամ միով ձեռամբն կոխեսցէ զիւրաքանչիւրն հինգ մատանց զհինգ զանազան և կամ հակառակս միմեանց առարկայս՝ զորօրինակ զմինն ի ջերմ ջուր, զմիւսն ի ցուրտն, զայլն ի վերայ կարծր քարի, զայլն ի վերայ բամպակի, և զվերջինն ընդ մշտահոս աղբիւրն, ունիցիս զջերմութեան, զցրտոյն, զկարծրութեան, զկակղութեան և զչարժման զգաղափար։ Արդ՝ եթէ ենթակայն զգայողութեանցդ բաղադրեալ նիւթն լինէր, զի՞րդ հնար էր ի միասին ի նոյն ժամանակի ունել զայդքան միմեանց հակառակ գաղափարս, ո՛չ երբէք և ո՛չ ուրեք. քանզի բաղադրեալն կարէ ունել զգաղափարսդ զայդոսիկ, բայց ո՛չ երբէք ի նմին ժամանակի, այլ որոշակի և հետզհետէ. և այդ ի բնութենէ անտի նորին բաղադրելոյն է. քանզի դիցուք՝ թէ ալ ձեռնդ ունիցի զզգայութիւն ջերմին, չկարէ ունել և զզգայութիւն ցրտոյն.

քանզի բաղադրեալ է, և այն ոչ է ձախ, զի ի զգալ զառաջինն՝ զգայեէ և զնորին հակառակն, այլ մի միայն զկերման կարէ յառաջ բերել զծանօթութիւն, և ո՛չ երբէք զգուրան՝ ընդ կերմին ի միասին. զորօրինակ հոգին մարդոյ զգայ, քանզի սա պարզ է՝ և չէ արդելեալ ի մասանց առ ի ըմբռնել զզանազան գաղափարս. բայց ո՛չ այսպէս նիւթն, որոյ իւրաքանչիւր մասն զմին լոկ գաղափար կարէ ստանալ, և ո՛չ երբէք զերկուս ի միասին, և զայդ հակառակս և հակառականս միմեանց։ Ը. Հոգի մարդոյ ունի զկար վերադառնալոյ յինքեան և ճանաչելոյ ի մի և նոյն ժամանակի զանձն, զխորհուրդս՝ զներքին և զարտաքին զգայութիւնս իւր զառեալս կինքենէ, զի ամենայն ոք խոստովանի և ճանաչէ թէ ես, և ընդ ինքն իսկ ես. ճանաչել զանձն, ճանաչել զզգայմունս անձին և գոգեալ ելեալ կինքենէ՝ ասել և հաստատել թէ այս և այդ գործողութիւնք ես, երեքին սոքա են գործողութիւնք պարզագոյնք և ի մի և նոյն ժամու պատահին մարդոյ։ Ուրեմն հնէականն այսոցիկ գործողութեանց պարզ է, և վասն նոյն ընդ նոյն ժամանակի ճանաչելոյ զգործողութիւնս, պահէ զնոյնութիւն իւր (ՃԺԴ), ճանաչէ զանձն, զաստ կինքենէ զզգացողութիւնս իւր՝ երբև առարկայ առաջի աչաց եղեալ զնոսա, և դարձեալ յարէ զնոսա կինքն՝ ասելով զգայմունքս այսոքիկ ես, զոր թանձր նիւթն ո՛չ երբէք կարէ առնել, կամ կինքն դառնալ՝ և թափանցեալ զմասունս իւր։ Գ. Դիցուք՝ թէ զգացող էակն բաղադրեալ նիւթէն է, ծանուցեալ միոյ մասին բաղադրելոյ զանձն ո՛չ երբէք ի միասին ճանաչէր և զզգայմունս իւր, նա՛ յաւէտ ոմն ի մասանց ճանաչել կարէ զմինն, և միւսն մասանց զմիւսն, և իւրաքանչիւրն իսկ զիւրն միայն ճանաչէր զառարկայ, և ո՛չ երբէք ազդէին և հաղորդէին միմեանց զգիտութիւնս իւրեանց. քանզի բազումք են մասունք, և անկախք ի միմեանց։ Վասն որոյ մինն զմի մասն ծանօթութեան առարկային և եթ ստանայր, և միւսն զմիւս մասն, անծանօթ բնութիւնն ի միւսմէ. և այսպէս ո՛չ երբէք պահէր պարզութիւն ըմբռնման, և նոյնութիւն զգացող հնէականի։



թականի. այսինքն ամենայն զգայմունք ո՛չ վերադրէին միւսմ հնէականի, այլ բազմաց. որով հիմնայատակ կործանէր բնութիւն ոչ միայն ամենայն գիտութեան, այլ և բարոյական գործոց, յորմէ անարժան հեռւութիւնք բըղխէին անմիւք, և վնասէին օրէնք բարութեան բարուց և վարուց։ Զգացող հնէականն պարզ գոլով՝ ո՛չ միայն ունի նոյն ընդ նոյն զգիտութիւն անձին, և զզգայութեանցն իւրոց, այլ և ճանաչէ և որոշէ զզանազան գաղափարս և զզգայութիւնս իւր, և բաղդատէ զնոսա ընդ միմեանս, ո՛րք ո՛յց յարմար են, կամ նմանք, և ո՛րք ո՛յց հակառակք են միմեանց և անհնմանք։ Արդ եթէ բաղադրեալ լինէր զգացող հնէականն, ոչ երբէք կարէր համեմատել զնոսա ընդ միմեանս, միաւորել զնմանսն ևն, և զհակառական բացորոշել՝ և հակառակս միմեանց հրաժարակել. քանզի զորօրինակ ի վերն, մասն՝ որ ընկղմի ի ջուրն ջերմ, չունի զծանօթութիւն և ցրտոյն, նոյնպէս սա՝ ջերմին, և անծանօթ մնալով միմեանց, ոչ երբէք հաղորդել և միաւորել կարէին համանգամայն. վասնորոյ և ո՛չ գաւոզութեան բովանդակութիւն լինել կարէր, զի իւրաքանչիւր մասն զատեալ ի միւսմէն, զատ զատ գործողութիւնս առնէր, անկախս ի միմեանց։ Ուրեմն Գ. նոյն իսկ ընդդէմ է կարգի բնութեան և մտացն ուղիղ տրամաբանութեան և սկզբանց. ամենայն ոք գիտէ՝ թէ խորհըրդածութիւնն՝ գործողութիւն է պարզ, և ո՛չ ոք կարէ ասել, թէ այս ինչ մի մասն կամ կէս մասն է խորհրդոյս, այլ գործողութիւն խորհելոյն բովանդակ պարտի լինել և պարզագոյն։ Եթէ պատճառն բաղադրեալ արտայայտէր զպարզ ներգործութիւնն, հետևէր՝ թէ գերագոյն և ազնուագոյնն կարէ ծագիլ ի նուաստէն՝ կամ այսպէս ներգործութիւնն գերագոյն և ազնուագոյն լինէր գեր քան զպատճառն և կամ նոյն պատճառն ո՛չ բղխէր զնոյն և զնման ներգործութիւնն, ընդդէմ հաստարակ և ճշմարիտ սկզբանց մտաց. ուրեմն հնէականն մարդկային մտացն գործողութեան պարզ է, կամ զուրկ ի մասանց. ուրեմն բնութիւն հոգւոյ ո՛չ է մի և նոյն ընդ բնութեան նիւթոյն,

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՅԱՂԱԳԱՏ ԹԷ ՀՈԳԻ ՄԱՐՄՈՑ ՀՈԳԵՂԷՆ Է

**ՄԻՆ**. Պարզութիւնն ասրբերի ի հոգեղինութենէն յայտ, զի սա՛ անկախ է ի նիւթոյն ի գոյութեան. բայց ո՛չ այնպէս պարզն, որ կախի և պէտս ունի նիւթոյն։ Զայս իմանալ կամիմ ձեզ զարարած պարզութենէ իրացն, ո՛չ թէ զանստեղծ գոյացութենէն, որ ի յաւիտենից կայ պարզագոյն բնութեամբ և ինիւթականացն և յանկառուրիցն աղաւ և անկախ բովանդակապէս։ Այնպէս զի հոգիք մարդկան ունին ի հարկէ զերկոսինն անդամ, այսինքն է զպարզութիւն և զհոգեղէն բնութիւնն. բայց ո՛չ այնպէս է ի հոգիս անբան կենդանեացն, որք մի միայն պարզութեամբն վայելեն։ Ուստի ամենայն՝ որ հոգեղէնն է, պարզ է և ի միասին, բայց ո՛չ անդրադարձութեամբ՝ ամենայն որ պարզն է և հոգեղէն է։

Ա.յսոցիկ այսպէս ծանուցելոյ՝ դամք ի հաստատութիւն առաջարկութեանս

ԹԷ ԵՒ-Ն՝ ՀՐԵՒՆ ՓՐՕՓՈՍԻՏԻՈՆ ՀՈՒԵԼՔ Է.

**ՄԻՔ**. Զորօրինակ ի բնութենէ պէսպէս ներգործութեանցն հոգւոյ ցուցաք զորպիսութիւն՝ այն է զհոգւոյն պարզութեանն յատկութիւնս, սոյնպէս ընթացուք ի ցոյց հոգեղէն բնութեան նորա։ Եւ նախ՝ այն որ չունի պէտս ի կալն և ի գործողութիւնս իւր նիւթոյն՝ կոչի հոգեղէն. իսկ արդ մարդկային գործողութեանցն ենթակայն չունի պէտս առ բաղումս թանձր նիւթոյ. ուրեմն՝ Զիք զմեծագունէն տարակոյս երբէք, նմին իրի ցուցանելմք զփոքրագոյնն։ Մարդկային գործողութեանցն ոմանք միայն վերաբերին, և ոմանք կամաց. միայն մարդկան այնքան բաղում են ըմբռնումնք, ծանօթութիւնք, դատողութիւնք, սկզբունք և ճշմարտութիւնք ստացեալք ի ձեռն բանականութենէն, որքան էութիւնք և ճշմարտութիւնք կան, անստեղծք, և



աննիւթք. զորօրինակ խորհի զԱստուծոյ, զաստուածային սաորոգելեացն, զանթիւ կարելեացն, զվերացեալն իրաց, զճշմարտութեանց, զառաքինութեանց, զմնայնութեանց, զբարութեանց, զյարաբերութեանց, զչարութեանց, զառաջինն մուտից սկզբանց, են. յորոց միոնն ո՛չ կախի ի նիւթոյ անտի, այլ էութիւնք են իրականք կամ տրամաբանականք, կամ բարոյականք, կամ հասնարնաբանականք, անկախ բնութիւն ի նիւթոյ, և մի միայն հոգեղէն և տեսական ճշմարտութիւնք, և ծանօթութիւնք ստացեալ ի սկզբանէ գործողութեանց և խորհրդածութեանց. ուրեմն սկիզբն այդ է հոգեղէն։ Եւ միանգամայն պարզ լինել պարտի. քանզի նիւթականքն մի միայն ինիւթականացն առնուն, գործեն, կամ գործին, եւ ո՛չ երբէք զԱստուած ընդ իւրև պարունակին. յաւէլ և զծանօթութիւնս սեռից ընդհանրապէս, տեսականացն և զամենայն վերացեալ գաղափարացն, որք բաս որում հնչին՝ չեն ի նիւթն. զորօրինակ կանաչն, կարմրութիւնն, այլ յանթիւ անհատից վերացեալ՝ և իբր ի գաղափար և ճշմարտութիւն ձևացեալ, զոր նիւթեղէնն մարմինն առնել ոչ կարէ. քանզի վերացուցանել դեր քան զնիւթն՝ և զիւր ահմանն ելանել չկարէ. իսկ եթէ ելանէր արտաքոյ քան զահմանն, ապա ոչ նիւթեղէն լինէր, այլ հոգեղէն։ Ա.յսոցիկ ամենեքին ուրեմն զգիսին ի հոգեղէն սկզբնէ իմեքէ, որ ո՛չ այլ ինչ է՝ բայց միայն հոգին որոյ ներգործութիւնն տարաժելով գոգցես առ ամենայն ինչ զընդհանուր օրինացն և զկանոնաց՝ որով վարին ամենայն տեսակք էութեանց Ա.ստուծոյ սկսեալ յարարչէն մինչև ցյետին արարածն՝ ցուցանէ զոլ ենթակայն տիրապէս հոգեղէն։ Երկրորդ՝ դամք ի գործողութիւնս կամացն. փափաքն և իղձ անյագելի առ առաքինութիւնս, առ Աստուած և առ հոգեղէն իրս, և ցնծութիւն նորա ի հասանելն վախճանին, զորօրինակ իմաստութիւնն, բարութիւնն, աստուածային սաորոգելեացն հայեցողութեամբ, զորս ամենայն ո՛չ կարէր առնել թանձր նիւթն, եթէ լինէր ենթակայն։ Ցաւե՛լ և զանթիւ իղձս և զփափաքս, զանար-

պարզութիւնն էականապէս, բայց ամենայն պարզն ո՛չ ի հարկէ պահանջէ զգործ խորհելոյ։ Երկրորդ՝ յիշեալ առաձգութիւնն, ծանրութիւնն են, են այլ պարզ յատկութիւնք՝ որք գտանին ի նիւթեղէնն, բայց ո՛չ ինքեանք են նիւթեղէնք. ապա թէ ո՛չ մի և նոյն իրն լինէր և չլինէր ի միասին, այսինքն, լինէին է՛ պարզ է՛ բաղադրեալ լայնութեամբ զգածեալ. քանզի նիւթն ո՛չ է զուրկ ի լայնութենէն և ի բարձրութենէն, այլ ունելով զլայնութիւն և զբարձրութիւն՝ հարկաւ պահանջէ զմասունս՝ որք զմիմեամբք եղեալ բազադրեցեն զնիւթդ. բայց անմասութիւն հականակորդացդ ի մշանջենաւոր օրինացն արարած բնութեանս ցուցանէ, և եղծանէ խաչառ. քանզի դիցուք առ ժամ մի թէ նիւթեղէնն խորհիցի, դիցուք ևս թէ տեսակն այն՝ որ ՛ւ-ւ-ն ՝ւ-ի յորջորջի՝ նիւթեղէն իցէ, այսքան նիւթեղինացն գործողութիւն մի և նոյն պարտ է լինել, կամ գոնէ յարմարիլ, և երբեմն ևնթ ի յայտ գալ գոլով ամենեցուն բնութիւն մի և նոյն, Ի բաց առեք յայսքան անթիւ մասանցն նիւթեղէն տիեզերաց զմասն մի փոքրագոյն, որ է աղգ մարդկան. արդեօք հնա՞ր իցէ խօսիլ լերանց զբան մի արտասանեալ. արդե՞օք լուեալ է ի բնութենէ այխարհի ցայսօր կերտել տուն մի, գրել գիր իմն, ո՛չ երբեք, ո՛չ ուրեք, ո՛չ ումեք պատահեալ է. զի՞ է գժտարութիւն այդմ, միթէ չե՞ն նիւթեղէնք ամենեքին, միթէ՞ գործողութիւնք մարդկան. եթէ սոքա նիւթեղէնք են, չեն հասարակ առ ամենեսին, առ ի՞նչ քարինք չչարժին ի տեղւոջէն, առ ի՞նչ լերինք չծընանին զխորհուրդ, կամ գբաղաքս յօրինեն են են. բայց բնութիւնն ո՛չ ատէ և սիրէ, այլ լերինք են յատենականք և անչարժք, սոքա ամենեքին ցուցանեն զանտեղութիւն հականակորդացս։

Առ Բ. Ասեմ. խորք գխորս կարդան՝ և անգիտութիւն զանգիտութիւն. միթէ այդ միայն են իրապէս և դրականապէս ճշմարտութիւնք, որք մարմնով տեսանին, ապաքէն, և ո՛չ ըստ սոցա կարեմք զԱստուած և զաստուածային ջծանօթութիւն խաչառ ըմբռնել. քանզի Աս-



ժան ցանկութիւնս են, մարմնոյ՝ որում չանսացեալ այսր գերագոյն ևնթականին անարդեալ նուաճէ և ցրուէ զնոսա առ բազումս. եթէ նիւթոյն լինէր գործողութիւնդ այդ, կարէր լինել երբեք այդ հականակութիւն գործողութեանց, ո՛չ երբեք։ Ուրեմն յերկուց զանազան նիւթականէ պարտ է զի լիցին՝ յորոց միոյն հոգեղէն և աղնուագոյն, և միւսն նիւթեղէն ըստ մարմնոյն, միոյն միւսոյն հակառակ։ Հուսկ ուրեմն վերծիչեալ գործողութիւնքդ պարզագոյն են և հետևաբար գերագոյնք քան զբաժանձր նիւթն. եթէ պատճառ և աղբիւրն նոցա նիւթեղէն և բաղադրեալ լինէր, ապաքէն հետևէր անտեղութիւնդ այդ, թէ ներգործութիւնն ունի զկատարելութիւն իմն՝ զոր ոչ ունի նոյն պատճառն. քանզի լաւագոյն է պարզ էութիւնն՝ քան զբաղադրեալն, կամ ներգործութիւնն գերազանցէ գնոր քան զներգործական պատճառն, և չգտանէր բանաւոր պատճառն կատարելութեանդ այդորիկ. այսինքն մի և նոյն իրն լինէր և չլինէր ի միասին՝ որ է ընդդէմ ուղիղ սկզբանցն մտաց և տրամաբանութեան։ Ուրեմն կայ մեզ հաստատ և առաջարկութեանս ճշմարտութիւն՝ թէ ևնթական մարդկային գործողութեանց պարզ է և միանգամայն հոգեղէն։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ

Մ ի թ. Եթէ խնդրիցես զպարզութիւնն ի նիւթեղէնսն՝ գտանես. զորօրինակ առաձգական զօրութիւնն, շարժման զօրութիւնն, ծանրութիւնն, և այլ բազումք, որք ի բնականն թաքուցեալ և մեզ անծանօթք են. ուրեմն կարեն առանձնալ զներգործութիւնս, որք հոգւոյ վերագրին. Ր. անտեսն հոգի՝ բնութեամբ չկարէ տիրապէս ճանաչիլ, և որ ինչ առորոգելիք իցեն նորին հոգւոյն և կատարելութիւնք՝ մակաբերութեամբ են, և անհիմն։

Պատասխան. Առ Ա. Նախ՝ ո՛չ զի պարզ են հոգիք՝ նմին իրի և խորհին. այլ զի խորհին, նմին իրի պարզ են։ Գործողութիւնն՝ զորօրինակ խորհելոյ՝ ի հարկէ կամի ըզ-

տուած չտեսանի. ո՛ոք ուրացի ի բանականացն՝ թէ և գեալ ներգործութեան ուրուք հարկաւ դիցի և պատճառ նորա. ապա թէ ո՛չ տուտ լինէր ընդհանուր և յաւաչաժամանօքն, թէ չի՛ք ներգործութիւնն առանց բանաւոր պատճառի։ Այսպէս ի ծանօթութենէ արարածոյն գհնտ բերմամբ ճանօթութիւն անտես գերագոյն էակի և ղստորոգելեացն։

ՄԼ. Առարկեն. եթէ պարզութիւն և հոգեղինութիւն պահանջին ի խորհել և տրամաբանել, ապաքէն և անտանոյն հոգիք զայդ առնել մարթէին. իսկ արդ սոքա ո՛չ. ուրեմն և ո՛չ հոգիք մարդկան խորհին, այլ արարած նիւթեղէն բնութիւնն։

Պատասխանեմ. Ձանտանոյն հոգւոց բնաւին անգիտանամք, և զի՛նչ վախճան իցէ նոցա, մեզ անյայտ. այլ ո՛չ իսպառ ասել կարեմք զսոսա մի և նոյն տեսակ ընդ նիւթեղէնն. այո՛ պարզագոյնք են, և հոգեղինութեանն յատկութեանց մերձաւորք, բայց ո՛չ հոգեղէնք. եթէ հոգեղէնք իսկ լիցին, բայց ո՛չ ըստ նոյն տեսակի և աստիճանի հոգեղինութեան մարդկան։ Մարդն է բանական կենդանի, բայց ո՛չ ամենայն կենդանի է բանական. նմին իրի մի են ի կենդանութենէն վերագիր, բայց ո՛չ այնպէս և ի բանականութենէն, որոյ պակասութեան աղագաւ ո՛չ ունի զտարբերութիւն բարւոյն ի չարէն, ընդ նմին և ո՛չ զբարոյական գործողութեան սկիզբն և պատճառ։ Բայց ի սեպհական կենդանութենէ իւրմէ, ունին հոգիք անասնոց զգայութիւնն անգամ, կամ զտեսակ ինն ըմբռնման. քանզի որոշեն զայս առարկայ յայնմանէ, և ընտրեն զմին քան զմիւսն, և ուսանել, զորօրինակ երիվարին տեսանել զտէր իւր՝ խայտայ ի նորոգ տեսանելն զնա զկնի ժամանակի իրիք. անկեալ իշոյն ի տղմուտ ճանապարհին՝ և ի գառնալն և յերթալ ընդ այն ճանապարհն՝ խոհեմութեամբ գոգցես մտացն շնդի և ի բաց ի հեռաստանէ երթայ, ահիւ ինն հայելով յայն տեղին։ Ա՛յսքիկ ամենեքին ցուցանեն՝ թէ նիւթեղէնն ո՛չ երբէք կարէ ննթակայ լինել խորհրդոյ. և հոգեղինացն գործոց. ուրեմն



եթէ հոգիք անասնոց ունելոյն իսկ պարզութիւն, և ըստեսակ ինն ինչ հոգեղինութեան, և այնպէս անկար են խորհրդածութեանց, տեսական իրացն, գիտութեանց և գաղափարացն, ո՛րքան անմտութիւն լիցի պնդել թէ այդ ամենայն գործողութիւնք ի թանձր և ի խոշոր նիւթոցն կարեն յառաջ գալ։ Ուրեմն ի բնութենէ պէսպէս գործողութեանց անտի հարկաւորապէս գհնտ բերմամբ, թէ ենթակայն և սկիզբն այդց գործողութեանց պարզ է և հոգեկան, նմին իրի և ամենևին զուրկ ի նիւթական իրացն։ Զայս պարտիմք և ևս պարզագոյնս յուցանելոյ թէ դէմ ընդ դէմ մարտնչին և եղծանեն զմիմեանս յատկութիւնք խորհրդածութեան ընդ յատկութիւնանիւթոյն՝ հաստատել։

---

## ՑՕԴՈՒԱԾ Գ.

### ՑԱՂԱԳՍ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՆԻՒԹՈՑՆ

ՄԼԱ. Ընդդիմանի խորհրդոյ ընդ նիւթոյն՝ բղխել յընդդիմութենէ յատկութեանց երկաքանչիւրոցն միմեանց. քանզի նախ էութիւն խորհրդոյ ի պարզութեան կայ, և նիւթոյն ի բաղադրութեան այնպէս զի՝ բարձեալ պարզութիւնն ի խորհրդոյ, ո՛չ կարէ կալ սա, և բարձեալ բաղադրութեանն ի նիւթոյ՝ եղծանի իսպառ և սա։ Բարձեալ խորհուրդն՝ չունի մնան զի ունիցի զերկայնութիւն, զլայնութիւն և զբարձրութիւն, և նիւթն առանց երից քանակութեանցս այսոցիկ անտեսանելի, անիմանալի, և անկարելի է. քանզի նոյն իմաստ նիւթոյն՝ զիրն ուղղել զերեսին յատկութիւնս նշանակէ. դարձեալ խորհուրդն է անբաժանելի, իսկ նիւթն բաժանելի. այնպէս զի եթէ տացես բաժանել զգործողութիւնս խորհրդոյ՝ ջնջես զէութիւն նորա. և եթէ բարձցես զբաժանումն ի նիւթոյն՝ ջնջես զընութիւն նիւթոյն. խորհուրդն չունի գծանրութիւն, չի՛ք նիւթ առանց ծանրութեան. խոր-

հուրդն չունի զպատակը կամ զկերպ, իսկ նիւթին կամ է բոլորակ չրջան՝ կամ քառանկիւն կամ եռանկիւն, կամ յայս կամ յայդ կերպարան. այսքիւք և այլովքն անթիւ անհամար եղանակօք ընդդէմ են միմեանց երկոքին սոքա, Արդ յատկութեանց այսոցիկ բազմացն այնքան պէտս ունի իւրաքանչիւրն ըստ բնութեան իւրում, զի եթէ բարձցես զմինն ի միոյն՝ և ասցես միւսոյն, երկոքին իսկ եղծանին, և այս է իբնութենէ իւրաքանչիւրոցն. քանզի նիւթեղէնքն նիւթ գոլով՝ և ըստ որում այնպէս, ոչ երբէք կարեն խորհրդոյն յատկութեամբ կալ, և նոքիմիք վայելել. և նոյնպէս խորհրդածութիւնք և ամենայն ներքին հոգեղէն գործողութիւնք՝ ըստ որում այնպէս, ոչ երբէք կարեն նիւթականք լինել. զորօրինակ բարձ զպարզութիւնն ի խորհրդոյ, և տուր նիւթոյն՝ որ էականապէս թանձր, հակառակք գոլով միմեանց՝ երկոքին իսկ եղծանին, և մինն ոչ կարէ կալ։ Ուրեմն սուտ է վարդապետութիւն նիւթականացն, որք պաշտպանեն զնիւթն, տալով ձրի, այսինքն առ ի ցուցանելոյ զկար խորհրդածութեան խոշորնիւթոյս, յորոց վերայ ճնայ և ճնացեալ ցյատիանան, պարտին ցուցանել զբան իւրեանց՝ որք յատիտեան և հանապազ ուանիցին և երբէք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանիցեն՝ յանդգնելով փոխել զկարգ և զօրէնս բնութեան իրացն։ Ուստի յայտնի և պարզ գոլով վերոյիշեալ յատկութեանցն ընդդէմ հակասականութեան և հակառակութեան, ի զուր վաստակեմք զմեզ և զժամն վատնեմք. զորոց տեսցուք յաւէտ զառարկութեանցն զորպիսութիւն,

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՄԼՔ. Ա.սեն նախ. Եթէ նուրբ իմն արհեստիւ և բաղկացութեամբ զնաեղեցոյս զնիւթն դուջ կարիցէ լինել ակիզբն խորհելոյ. Բ. եթէ բաղադրեալ գոլով նիւթոյն՝ տկարացեալ յատաջ բերել զրուանդակ ծանօթութիւն առարկայի իրիք, գոնէ իւրաքանչիւր մանդ յատաջ բերցէ զիւրն. ուրեմն ոչ հակառակք են նիւթն՝ խորհրդոյ, և ոչ խորհուրդք՝ նիւթոց։



Ա.ռ Ա. սեմ՝ ուրանալով զամենայն. քանզի կոփեցին, տաշեցին, ներուքեամբ զնտեղեացին որքան կարիցեն, միշտ նիւթ ճնացեն՝ ոչ առաւել քան զանդրիս Միքայէլ Անճէլոյի, և կամ զաստուածային դրիչն Բաֆայէլլոյին ներքացին, որոց արհեստին հռչակք առեալ են ընդ ամենայն տիեզերս. բայց և ի վերայ այսր ամենայնի ընդդէմ կամացն և ըղձից գոգցես ճարտարապետացն իւրեանց անմռունչք՝ աչս ունին՝ և ոչ տեսանեն, ականջս ունին և ոչ լսեն, բերանս ունին՝ և ոչ խօսին, Նպատակեալք օրինացն բնութեան յաւէտ՝ քան չինողացն փափաքման։

Ա.ռ Բ. Ասեմ՝ ուրանալով և զայդ. քանզի կամ մասունքդ այսոքիկ պարզ են կամ բաղադրեալ. եթէ պարզ, (զոր ոչ ևս ընդունիմք) (ձԺԹ—ձԻԳ) ահա արտաքոյ բըննաբանիս են. քանզի որ պարզն է՝ չէ նիւթ ը-ն-ջ. եթէ բաղադրեալ, ահա վերստին ծագի նոյն տարակոյսն, և մնանեն ի մոլար չրջանն։ Հուսկ ուրեմն չկարէ նիւթին սկիզբն լինել խորհրդոյ. քանզի մասունք նորա զանազան են, և անկախք ի միմեանց ի կարգի գոյութեանն։ Յաւէ և զայս, թէ բառիս ը-ն-ջ-ն-ի- ստուգաբանութիւնն է՝ ածել զխորհուրդ. և պարունակէ զերկու կողմանս կամ զեզերս, ը-ն-ջ յ-ր-ա, և ը-ն-ջ յ-ր-ե. մինն յ-ր-ա ածի խորհուրդ՝ և միւսն յ-ր-ե ածէ խորհուրդն, և կամ ը-ն-ջ խորհրդոյ և ը-ն-ջ-ի-ն խորհրդոյ. ուստի հարկաւ՝ զի այսպէս ասացից՝ ենթակայն զատի ի խորհրդոյ, և գործողութեամբ իմն յարէ զայդ յինքն. բայց այլ է էութիւնն կամ ը-ն-ջ-ի-ն ը-ն-ջ-ե-ր, և այլ ը-ն-ջ-ե-ր-ք, յոր վայր ևս գիմիցես՝ ունիս զկրճին. եթէ պարզ, այդ նախ անհնար է՝ քանզի մեք, ոչ զի պարզ է հոգին, տամք նմին զխորհուրդ, այլ զի հոգեղէն է՝ և յԱստուածուստ կարողութեամբ խորհելոյ զարդարեալ, նմին իրի տամք զխորհուրդն՝ որ ներգործական է և պարզ. առա թէ ոչ յայդմ կարծիս, մասունք վերջինք բաղկացուցիչք մարմնոյ, ըստ ջաւագովայ պարզութեան լիտին մասանցն մարմնոյ՝ պարտ էր զի խորհէին և խօսէին, և պարտ էր զի հոգիք իսկ

անաւանոց զնոյն բարբառոյն պարտ և կիր արկանէին, որ է ընդդէմ փորձի բնական կարդի արարածոցն. իսկ եթէ բաղադրեալ, ապաքէն զանազան գոլով ենթակայից զանազանէին և խորհուրդք նոցա։ Գիտել պարտ է՝ թէ և զբազումս ի նիւթեղէն ներքին յատկութեանց ո՛չ գիտեմք, բայց այս միայն յայտ է թէ յատկութիւնք խորհելոյ մարդոյն ընդ յատկութիւնս նիւթոյն՝ հակառակ և հակասականապէս, և որք հակառակ են բնութեամբ, և յատկութեամբք՝ և ո՛չ իսկ Աստուած իւրացն ամենակարող զօրութեամբ կարէ առնել՝ զի միաբանիցին և յարմարիցին ընդ միմեանս. ապա թէ ո՛չ նոյնն կարէր յայնժամ լինել, և չլինել ի միասին։

ՄԼԴ. Եւ ո՛չ իսկ հեռանալ կարեն իմն իւրեանց կենաց և յաճմանէն՝ առնել զիաստ, կամ յատուկ արանց մարմնոց անուն. քանզի կեանք ծառոց ո՛չ այլ իմն, բայց եթէ նուրբ և նօսր հիւթոյն և խոնաւութեանն յարատև չլինն՝ և կարծրութիւն՝ զօրութեամբ չերմութեանն, որով առնին յԱստուած ուստ առնկը ամենայն. նոյնպէս և յատուկ զգալի զօրութիւնն է յատկութիւն իմն պարզ՝ թէև բնութեամբ ըստ իմիք մեզ անծանօթ՝ ընորհեալ յԱստուածուստ մարմնոց. մեք չասեմք թէ կարողութիւն խորհելոյ չկարէ միաւորիլ ընդ նիւթն, այլ թէ ոչ կարէ ծնանիլ ի նիւթոյն, որոյ յատկութիւնքն՝ որպէս տեսաք ի վերոյ՝ հակառակք են միմեանց. և ո՛չ իսկ ի պարզութիւնէն լեռս բերելմք զկար խորհրդածութեանն, այլ ի ներքինն բնութենէ հոգեղէն գոյացութեանն յԱստուածուստ պարգեւեալ. և ո՛չ իսկ յանընդունակութենէ նիւթոյն առ խորհուրդն առարկել կարեն մեզ ոտիքն՝ անսի յայնմանէ զգայական ութիւն կամ գկարողութիւն աստուածային ամենակարողութեան. քանզի ճշմարիտ է բանն՝ թէ չիք իմն առ Աստուած անհնարին. բայց այդորիկ իմաստ է՝ չիք իմն անհնարին ի լինել և գալ ի գոյութիւն այնց ամենեցուն՝ որք կարելիք են և ունին գյարմար յատկութիւնս, ո՛չ եթէ որք հակասականքն են և հակառակք յատկութեամբք՝ որք զիմիմեանս եղծանեն



և չկարեն գալ յէութիւն իմն. զորօրինակ առնել՝ զի չրջանն չրջան ձեալով, լիցի և քառակուսի ի միասին՝ որ յանհնարինն է ի կողմանէ յատկութեանց իրին (ճ.), և ոչ թէ յաստուածային կարողութենէ։

---

## ՅՕԳՈՒԱԾ Դ.

### ՅԱՂԱԳՍ ԱՆԱԳԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳՒՈՑ

ՄԼԴ. Ի մէջ այլոց յատկութեանցն հոգւոյն՝ է և անդ անանպականութեանն, որով տիրապէս հակառակի նիւթոյն. որ է ենթակայ ապականութեան, որ սահմանի լուծանել կամ լքանել մասանց զմիմեանս ի բնական վիճակէ յորում կեայր գոյութիւն իրին։ Աւրդ բազում ի հնոցն իմաստասիրաց անապական ասացին զհոգիս մարդկան, յորս Պիւթագորաս, Սոկրատէս, Պղատոնէն, Աննեքա, Կիկերոն և այլք անթիւք ընդ արդի փիլիսոփայսն. բայց և բազումքն մոլորեալ ընդ Եպիկուրեանն, Լուքրետիոսի, Ովրատիոսի, ուրացան զանապականութիւնն հոգւոյ և գըժբաղդութեամբ Աբիատոտէլ անդամ յերկմտութեան կայր զհոգւոյն երջանկութենէն. զի ասաց հառաչելով, «եղե՛ւկ, զի՛ կարճատօտ է երջանկութիւն մարդոյ (*)». և յարդի փիլիսոփայիցն բազումք նիւթականքն, Թօլիանա, Հօպպէզ, Աւնօլդ և Քարթէզիոն, որք ուրացան յետ մահուան զյարատևել հոգւոցն ի գոյութեան իւրեանց։ Բայց յանիրաւի. ընդդէմ որոց ցուցանեմք ի հետեւեալ առաջարկութիւնն՝ թէ «հոգիք մարդկան անապականք են, և նիւթեղէնքն միայն ապականացուք»։

ՄԼՆ. Երբակի կարէ իմն ապականիլ, կամ լուծանիլ բազկացուցիչ մասանց ի միմեանց. կամ կորուսեալ և բարձեալ էական յատկութեանն՝ յորմէ կախեալ իրն ի գոյու-

(*) Ի բարոյական գիրս. Գիրք. Ա.

թեան, և կամ արարչական զօրութեամբ յոչինչ դառնալ իրին։ Եթէ զառաջինն ասիցես, որպէս տեսաք ի վերոյ՝ հոգի մարդոյ պարզ գոլով, այդ է զուրկ ի մասանց և հոգեղէն՝ չկարէ կորուսանել զմի կամ զերկու մասունս ինքեանէ. քանզի ո՛չ ոք կարէ կորուսանել զոր ոչն ունի. զորօրինակ ո՛չ ոք կարէ պարգևել երբէք զոր ոչ ունի։ Ասպաքէն զպարզութիւն հոգւոյ և զհոգեղէն գոյացութիւնն ցուցեալ ի վերոյ եղեալ յօդուածսդ՝ որոց պատճառքն և փաստքն անհնարին ցուցանեն՝ խորհրդոյն և ենթակային խորհրդոյ թանձր և բաղադրեալ լինել. զորմէ դեղեցիկս գրէ Կիկերոն (*). «Ոչինչ իմն խառնման ի հոգիս, և ոչինչ թանձրութեան, ոչինչ կապի և կառուցածոյ դառնի, ոչինչ կրկնակի, որոյ այսպէս գոլով առցիս՝ ո՛չ զատիլ կարէ և ո՛չ բաժանիլ, ո՛չ պատառիլ և ո՛չ ընդլայնիլ, և ո՛չ ուրեմն եղծանիլ անդամ. քանզի չէ՛ այլ ինչ եղծումն, բայց եթէ իւր դարձ և անշատումն մասանցն այնոցիկ, որք յառաջ քան զեղծումն միաւորութեամբ իւիք ունէին զիրն»։ Երկրորդ՝ հոգի մարդոյ ո՛չ կարէ եղծանիլ ըստ որում ի կալն և ի լինելն, այսինքն ի գոյութեանն չկախի յայլոյ իմն ապականացու գոյութենէ. եւ թէպէտ նկատմամբ կենացն մարդոյ՝ կախի ըստ իմիք ի մարմնոյ, բայց ո՛չ երբէք նկատմամբ կենաց էութեան հոգւոյ. նա՛ զի միտք մարդկային անապական է, ուրեմն և հոգի մարդկային անապական լիցի, որ է իմացական գոյացութիւն (**)։ Երրորդ՝ զի են երկու իրք բնութեամբ և յատկութեամբ ներհակք. քանզի նախ մարմինն և նիւթն բաղադրեալ գոլով ի մասանցն՝ զամենայն աւուրս եղծանին՝ կորուսեալ բաղկացուցիչ մասանցն զբոլորն իւրեանց. այդ անժխտելի է և անտարակոյս, մինչև ընդդէմ լինեը խզճի մտացն՝ և բնական գոյութեանն ուրանալ զաւուրն հաշակեալ՝ թէ [illegible] զի ահարկին, ապականին, բուսանին և աճին. և

(*) Տուսկուլ. խնդ. Գիրք Ա.։
(**) Աստր Թոմաս. ընդդէմ Հեթան. Գլ. ՀՔ.։



ամենայն արարած և անկենդան յայնմ կայանան օրէնս բնութեան. «եթէ ոչ հասան ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. և եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ (*)», այսպէս ճշմարտութիւնն։ Յայսմ կայանան և մեծութիւնք աշխարհի և բարութիւնք բաղդի, և վայելչութիւնք նոցա, որք այսօր են և վաղիւն չերեւին, փախստականք՝ յոր անմիտք չարաչար պատժին։ Զորդ՝ ո՛չ եղծանին հոգիք՝ և ո՛չ յարարչական կամայ և ի զօրութենէն. քանզի իմաստոցն է կարգել վայելչապէս զիրս ընդունակս վախճանին։ Արդ յաշխարհի աստ ամենայն ինչ գոանէ՝ յոր յարիցին, և հասանի վախճանին. մի միայն մարդն զրկի ի վախճանէ աստի աշխարհականէ, քանզի որպիսի և բարեմասնութեամբ զարդարիցի և վայելեսցէ, միշտ յանհանգստութեան և յանյագութեան կայ կատարելութեանց իւրոց։ Եւ ստեղծանել զինն վասն վախճանի ուրուք, և չտալ նմա ժամանել այնմիկ, առ Աստուած անագորոյն իմն կիրք լինէին, և պատկառութիւն խոհեմութեան մտաց, զոր զԱստուծոյ ասել անվայել է։ Ուրեմն անհնարական է հոգին, նախ՝ բան ուրուք ի հարկաւորութենէ բնութեանն հոգի մարդկային պարզ և հոգեղէն է. երկրորդ՝ ֆիզիքապէս իսկ չկախի ի բաղկացութենէ մարմնոյ և անդամոցն, թէ ո՛չ նկատմամբ մարմնաւոր կենաց. երրորդ՝ անհնարական է բարոյապէս, բան ուրուք ստուգածային կատարելութենանցն անվայել, զոր ընդարձակագոյն տեսուք ի յառաջարկութենէ անմահութեան հոգւոյ մարդկան. ուրեմն հոգիքն անհնարականք են, և նիւթեղէնքն ապականացուք։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ

ՄԼԶ. Զօրօրինակ նիւթեղինացն մասունք եղծանին և փոփոխին, նոյնպէս և հոգանակք կամ որպիսութիւնք հոգւոյ եղծանին և փոփոխին. ուրեմն՝ Ր. Ծնեալ մարդոյ՝ աճի և հոգի նորա. զի ի մանկութեանն մարդն ան-

(*) Ցհաւ. ԺԲ. 24, 25։

բան իմն է, և յերիտասարդութեանն ամենայն կատարելութեամբ լի և առաւել, և ի ծերութեանն մտաթափ, և ի զառամութեանն կրկին տղայացեալ. ուրեմն,

Ա.ռ Ա. ընդունիմ զնախընթացսդ, և ուրանամ զհետեւեալն և զհետեւութիւնն. քանզի առ ի քաջ լինել համեմատութեան երկուց իրացն, պարտ է զի երկոքինն իսկ իրքդ զգաժեալ իցեն նոյն յատկութեամբ և բնութեամբ, զի զօրեսցէ բազդատութիւնդ կամ համեմատութիւնդ. ապաթէ ոչ՝ չէ ուղիղ, և չիք երբէք հետեւութիւն անտի. եղծանին ի նիւթեղէնսդ մասունք էականք էութեան նիւթոց, եղծանին կամ անցանեն խորհուրդք և եղանակք հոգւոյ, պատահականք հոգւոյն. մասունքդ կացուցանեն և կազմեն զէութիւն հոգւոյն, բայց ոչ այնպէս եղանակք հոգւոյն. այսինքն անցաւոր եղանակքն՝ խորհուրդք, ցաւք, վիշտք, ցնծութիւն, ևն. եթէ ոսոխդ ցուցանել կամիցին, ցուցցեն մեզ զկորուստ էական յատկութեան հոգւոյն. զորօրինակ ցուցցեն մեզ՝ թէ հոգին կորուսանէ երբեմն զկարողութիւն խորհելոյ, կամ զդիտութիւն ներքին խղճի մտացն, և կամ զբանականութիւնն և զկենդանութիւնն, Եւ ոչ իսկ առանձին ինձն պնդելով զցնորելոցն ի մտաց զօրինակս, որք ի բաց եդեալ թէ ի բիւրաւորացն միոյն պատահի, և այդ ոչ ի հոգւոյն էութիւնն, նա յաւէտ ի գործարանին խանգարման կայանայ, որով արգելու մտաթափն զմտացն զուղիղ սկզբունս և զդատմունս ի կիր արկանել, բայց և ոչ այնու հոգին եղծանի. քանզի միշտ խորհի և խօսի և գործէ, զոր և ոչ միոյն երբէք ի նիւթոցն կարացեալ է ի ծննդենէ անտի արարածոցն արտահանել,

Ա.ռ Բ. ասեմ՝ զանազանելով. յերեսին և չորեսին վիճակս եթէ զարգանալով մարդոյ՝ զարգանային և հոգիք մարդկան և զդայարանք՝ ընդունիմ. միայն զդայարանք և գործարանն հոգւոյն՝ և ընդունակութիւն ոսոց յատուկ յայտել զդաղափարս հոգւոյն՝ ուրանամ. քանզի պարզ գոլով հոգւոյ մարդկան չկարեն աճիլ և զարգանալ, անընդունակ գոլով բազկացութեանն. բայց յիշեալ վիճակիդ



պատահիլ կարեն մարդոյ. այսինքն է գերազոյն բազդրութիւնն ի մարմնոյ և ի հոգւոյ, ոչ եթէ հոգեղէն էակացն, զորոց զանընդունակ լինելն բազդրութեան ցուցաք ի վերոյ,

---

## ՑՕԴՈՒԱԾ Ե.

### ՑԱՂԱԴԱՍ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՑԻՆ ՀՈԳԻՈՑ

ՄԼԼ. Ա.պաքէն մտանեմք ի խնդիր ոչ նուաստ, նա՝ յաւէտ ծանր և ազնուագոյն բազմացն, որոց ցուցեալ ցուցանի և մարդկային երջանկութեանն ճշմարտութիւն, Ոսոխք անմահութեանն հոգւոյ այլք են ուղղապէս, և այլք անուղղապէս. որք ուղղապէս ուրացան զայդ, են դոգեաս մի և նոյն, զորս յատաջ բերաք ի վեր անդր. իսկ անուղղապէսքն այլք՝ բոլորովին ժխտեցին զանմահութիւն հոգւոցն ցուցանել բնական լուսով. սակայն գերազանցօրէնն ասեն ցուցանել ի յատուածային յայտնութենէ Սուրբ գրոցն, յորս Սուրբ Հարքն՝ Ս.Բրոսիոս և Օգոստինոս, որ և ասաց՝ եթէ ոմանք եղեն յիմաստասիրացն, որք բնական լուսով գտին զանմահութիւն հոգւոյ, որք և սակաւք ոմանք եղեն(*): Ս.յլք ի չփոթութեան եղեն և ի տարակուսի, Ս.Բիսոստէլ և նորայն բարձր ճեմարանին աշակերտք, թէ հոգիք մարդկան յետ մահուան վայելեսցե՞ն արդեօք յերջանկութեան, թէ ոչ, Ս.յլք խոստովանեցան ցուցանել միրագէս զճշմարտութիւն անապականութեան հոգւոյ, բայց յերկբայս կացին զանմահութենէ. թէ անկարելի ինայ ցոյց նորա՝ յորս Կայեսանոսն, Ս.յլք և ևս ծանուցք յիրաւի Ս.աուածաբանք յետ բազումս աշխատ լինելոյ, վճռեցին ոչ ցուցանիլ հարկաւորապէս՝ և ապացուցական փաստիւք ճշմարտութիւն հոգւոցն անմահութեան, այլ միայն հաւանական փաստիւք, յորս Սուրբ Թովմաս բերելով զբան և

---

(*) Ձնբր-րդութենէ. ԺԴ. Գլ. Բ.

մի փաստս, զորս ամենեսին հաւանականս դատի. և Սկովտ որ ասացն, ուրեմն եթէ փաստապանութիւնդ հնարեալք յառաջնոց անտի ո՛չ ցուցանին, յայլոսա անդամ զայլոցն գմնաւ ածել գնորոց չեն մեզ պէտք, խոստովանիլ պարտ է՝ ոյնչ իւիք փաստիս բնութեան ցուցանել կեալն հոգւոյ անմահական կենաց, Հուսկ ուրեմն՝ արդեան ամենայն փիլիսոփայք յամենայն ղօրութենէ անձին գուն գործեն ցուցանել զանմահութեանն մարդկային հոգւոց գճշմարտութիւն տիրապէս, ընդ որս և մեք ընդդէմ հնոյն և նորոց նիւթականացն, և Քանթեանց, վասն որոյ առաջարկութիւնդ •

ՀՈԳԻ ՀԱՐՑԱՆ ԱՆՀԱՒ ԵՒ.

ՄԼՐ. Ա.յսպէս ցուցանի ապացուցական և հարկաւոր փաստիւք: Մարդկային հոգին պարտի անմահ լինել՝ եթէ զայդ պահանջէն թէութիւն և կատարելութիւն հոգւոյն, և կատարելութիւն կամ առաքինի՝ Աստուծոյ՝ Արարչին հոգւոյ. իսկ զայդ պահանջէն իսկապէս և տիրապէս. ուրեմն: Ցառաջարկութեանն են երկու մասունք. նախ այն՝ որ ի կատարելութենէ հոգւոյն, երկրորդ այն՝ որ յաստուածոյ Աստուծոյ. իւրաքանչիւր մասն որոշեալ ուրոյն ցուցցուք: Եւ նախ ի կողմանէ բնութեան հոգւոյն անյապաղ իղձ և բնական և մշտնջենաւոր փափաք հոգւոյն ի կատարեալ յերջանկութիւնն հաստատեալ կայ և անդադար միայ ի մեզ. այսորիկ բնական հակամիտութեան զօրութեամբն և բնական ներքին զգայութեանն եռանդեամբ առաքիմք, և ձգիմք ի վիճակ կատարելութեան և լցման ամենայն ըղձից և բնութեան փափաքմանց, որով երջանիկ լինել ըղձամք, և այդ ցյաւիտեան կամ մշտընջենաւոր երջանկութեամբ, զոր աշխարհս ո՛չ տայ մեզ և չունի զի տայցէ, և մշտնջենական փորձիւ գիտեմք թէ ո՛չ ոք կարէ այդմ յաշխարհի աստ ժամանել. նա՛ յաւէտ այնպէս են բարութիւնք աշխարհի զի անհնարին գոգցես են միաբանիլ ի մի ենթակայ. քանզի աստի ցաւք և վիշտք յառացմանն, անտի ձախորդութիւն և երկիւղ զի կորնչին, թէ ո՛չ ահիւ և երկիւղիւ և դողութեամբ պատասպարիցին,



պաշտպանիցին, և պահիցին: Արդ բանական բնութեանն բնական զգայութիւնք ճշմարիտք են. և բնութիւնն զմեզ չկարէ խաբել կամ առերեսել նկատմամբ վախճանին. ուրեմն ազգեցութիւն բանական բնութեանն ի ձեռն ներքին փափաքմանն և հակամիտութեան յերջանկութիւնն յաւիտենական՝ այն է թէ մարդն յետ մահուան անմահ լիցի, է ձայն ճշմարտութեան հնչեալ և բղխեալ յաղբերէն ճշմարտութեան. ուրեմն. Երկրորդ՝ հոգի մարդոյ ունի զերկու գլխաւոր կատարելութիւնս. զմիսս՝ որ միշտ խընդրէ և առաքի ի ճշմարտութիւնն, և զկամն՝ որ փափաքի և խնդրէ զբարութիւնն: Արդ այսոցիկ յագուրդ գտանել անհնարին իմն է յանցաւոր բարեմասնութիւնս առանց կենաց. քանզի միտք բանական որքան գտանէ զճշմարտութիւն աստանօր, և առաւել յաւելու ի գտանել. և ո՛չ միայն այնու ոչ չառանայ, նա և առաւելու տենչ և փափաքն ինամա, ի բարձրագոյնն նկրտիլ. և որքան զբերկար կեանս վարեսցէ ոք յաշխարհի, դարձեալ ի վերջին կիտի կենաց ոչ լիացեալ և չառացեալ՝ խնդրէ զառաւելն գտանել. և ո՛չ երբէք հանդչիցի, մինչև յաղբիւրն հաստատեցէ անսահման ճշմարտութեանն, յորմէ ամենայն իրական էութիւնք և ճշմարտութիւնք: Զայսմանէ չիք իմն տարակոյս. քանզի ներքին զգայութեամբ խղճիս գիտեմք և ճանաչեմք, թէ չիք լրումն գիտութեան և հանգիստ մտաց մերոց յաշխարհի աստ. նոյնպէս կամք, որպէս են միտք մեր, միշտ և հանապազ առաջեալ զբարեմասնութիւնս թէ հոգւոյ, թէ բաղդի, ո՛չ երբէք նուաճիմք հանդչի և դադարի, այլ յաւէտ զառաւելն առանալ նկրտի, խնդրէ, վաստակի, զտիւ և զգիշեր տքնի երջանիկ լինել. բայց աւա՛ղ, զի որքան մերձեցեալ և մօտագոյն զանձն երջանկութեանն գտանի, այնքան յայնմանէ յետնեալ գտանի. և վաստակեալ և կատեալ ի զօրութենէ՝ զաչս հառաչելով վերամբարձեալ՝ դոչէ. «Տնաչութիւն երկնից, ե՞րբ իցէ զի գոցուք զհանգիստս»: Երրորդ՝ զորօրինակ ստիպեալ ի բնական զգայութենէ, ի թէութենէ և ի տրամադրութենէ բանական բնութեանն՝ անձկայ և

խնդրէ հասանել երջանկութեանն, ի հարկէ զայդ խնդրէ քանզի ենթադրէ՝ թէ յարատեւ և յաւիտենական լիցի կեանք նորա յետ մահուն, և զայդ չկարէր խնդրել և այնմ փափաքել՝ թէ ոչ կանխաւ դիտութեամբ իւրով ըզկենացն յաւիտենականաց ըմբռնէր զծանօթութիւն, եւ ծանօթութիւնս այս ո՛չ յառացական առթէ և պատճառաց յառաջ գայ, և կայ ի միտս բանական սեռին կենդանեաց, այլ ի բնէ անտի իւրմէ իւրաքանչիւրոցն, եւ չորրորդ՝ է ձայն բանական բնութեան, ամենածանօթ և հասուսաուն, ընդհանուր և անխոտորելի թէ՝ առաքինութիւնն պահպանի, և մոլութիւնք պատժեսցին, բարեացն վարձք լիցի երջանկութիւն, և չարեացն զրկումն և թըշուառութիւնն. և այսմ ապաւինեալ անխարդախ բնութեանն ձայնի արդարքն, թէպէտև զրկանք և լկեալք յանօրինացն անտի, բայց և այնպէս ոչ թոյլն զերասանակ անձին ի հաճոյս աշխարհի և յօրինաղանցութիւն. այսմ յուսացեալ փրկաւէտ բնութեանն խրատու՝ բազումք ի սէր հոգեղէն առաքինութեանն վարձուց ընտրեն զրկել ի կենաց աստի, քան ընդդէմ օրինաց գործել, ցայտնեալ բազումք յանօրինացն զդատաստանաւք ի մոլութենէ յետս կասին և լքանեն զդործս յոռութեանն, երկիւղիւ զրկելոյ յերջանկութենէ և ի վախճանէ ամենայն կատարելութեանց հոգւոյն։ Սրդ յայտնիկ ամենեցուն զայս գիտեմք բերմամբ, թէ բնութիւնն բանական յինքեան ունելով զայդքան յատկութիւնս՝ յորոց իւրաքանչիւրն անսուտելիւր խնդրէ զվախճան իւր, ժամանեսցէ այսմ տենչալի վախճանին, յորում գոյէ զկարօտութեանց և զկատարելութեանցն զյաղուրդ և զվախճան, ապա թէ ո՛չ ամենայն անկարգութեան սկիզբն և պատճառ լինէր նոյն բանական բնութիւնն, և նուաստագոյն քան զամենայն տեսակս արարածոց, յորոց և ո՛չ միոն վրիպի ի սեփական նպատակէն՝ առ որ կարգեալ էին, զոր քան լիցի ասել մեզ։ Քանզի

ՄԼԹ. Երկրորդ՝ ի կողմանէ Աստուծոյ իսկ արդեւլումք ասել զայդ. քանզի նախ իմաստնոյն հանճար յայնմ



կայանայ յառնելն զինն վասն վախճանի իրիք, և կարդել ինձնս զայնոսիկ միայն միջոցս՝ որք պիտոյն հասանելոյ վախճանին, և ո՛չ զաւելորդս՝ որոց պակասէր պատճառն բանական լինելութենէն, և պակասութիւն գաւէր իմաստութեան և խոհեմութեան Արարչին յայն իր. զայսմանէ չիք ինձ տարակոյս։ Սորին այսպէս լինելոյ՝ Արարիչ բանական բնութեանն Աստուած՝ է գերագոյն էից էակ, իմաստութեամբն անսահման, ճշմարիտ, արդար, սուրբ, բարերնամ, և գթութեամբն անբաւ։ Նախ՝ ընդդէմ իմաստութեան նորա է զրկել զբանական բնութիւնն ի յաւիտենական կենաց, և յոչինչ դարձուցանել զինա. քանզի յաւմէէտս և յաւելորդն սուղ անէր ի բանական բնութեան զայնոսիկ թէութիւնս, որք հարկաւ պահանջին զկեանս հոգւոյն, յետ մեկնելոյ և լուծանելոյ ի յօդուածոյ մարմնոյս, և որք ընդ ամին պահանջին ընալ զիւղ և զփափաք այսր բանական բնութեան. բայց զայս քաւ լիցի արտասանել զամենիմաստ ճարտարապետէն բնութեանս։ Ուրեմն թէ զայդ չկարեմք ասել, հետևի իսկապէս՝ թէ հոգիք մարդկան անմահ կեցցեն յետ մահուն։ Դարձեալ՝ ընդդէմ լինէր և ճշմարտութեան նորա. քանզի նա է հեղինակ բանական բնութեանն. զորօրինակ լոյսն և ճառագայթ արեգական՝ յարեգակնէ անտի է, նոյնպէս ձայն և բնական զգայութիւն բանական բնութեանն՝ են պարգեւք նորա ճշմարտութենանն. եթէ բնութիւնն յԱստուածուստ պարգևօք զարդարեալ՝ ուսուցանէր մարդկան բնական զգայութեամբն զանմահ կեանս և զերջանկութիւն, բայց և ինքն անկար լինէր հասանել խոստացեալ կենացն, ուստ էր գործն, և ուստ անգամ գործելն, և խաբէր բնութիւնն զմեզ. բայց և զայս ասել անվայել է զԱստուածային բնութենէ. ուրեմն պարտիմք ասել թէ՝ եթէ բնութեան ձայնն և հակամիտութիւն նորա պահանջեն զանմահ կեանս, և բան որում պարգևք աստուածայինք ճշմարիտք բղխեալք յաղբերէն ճշմարտութեան, հասցեն անտարակոյս անապական կենաց հոգիք մարդկան ապին։ Դարձեալ՝ ընդդէմ լինէր և արդարութեանն Աստուծոյ. քանզի

պատուիրէր ի ձեռն բնական լուսոյն և բանական բնութեանն « առնել զբարին և խորշիլ ի չարէն ». և թէ է ի վախճանի արդար տրամաբաչխութիւնն Աստուածոյ անտի բարեացն և չարաց. և ընդդէմ իւրում պատուէրն՝ զրաւէր զբանական բնութիւնն ի յանմահ կենաց. և երկրորդ՝ վիճակ անօրինաց լաւագոյն լինէր քան զառաքինեացն. քանզի գոնէ առաջինքն ըստ իմիք յամենայն հաճոյս մարմնոյ զօրէն անասնոց ընկղմեալք՝ կատարեալ էին ղգանկութիւնս իւրեանց, և եթէ զրկեալք յանմահական կենաց և յերջանկութենէն՝ ապաքէն հասեալք ըստ իմիք մարմնոյն վախճանի. և ահա արդարոցն կեանք վշտալից ի սէր առաքինութեան և երջանկութեան մաշեալք և բարութիւնքն յուսով ապագայ կենացն ի կիր առեալք ի դերև երևանեն, զրկեալք յերկոցունց անգամ, թէ՛ աստ թէ՛ անտ կենացն վիճակէ, որում արդարութիւն Աբրաչին ոչ տանի. Ուրեմն զօրութեամբ աստուածային արդարութեանն կեցցեն հոգիք բանական կենդանեաց անմահութեամբն. Աստուած սուրբ է. ընդդէմ սրբութեան նորա լինէր, եթէ զամենայն անօրինացն զանօրէնութիւն անտարբերաբար ունէր առաջի աչաց, և սեռանէր և թոյլ տայր, անպատրաստ գոլով ի վրէժխնդրութիւն և ի դատապարտութիւն անօրէնութեանց. Աստուած բարեխնամ է. լինէր ընդդէմ բարեխնամութեան նորա, քանզի ոչ կարգէր ըստ գործոց իւրաքանչիւրոցն զարժանի վարձատրութիւն, ոչ կարգէր զօրէնս ի բնութեան ընդունակս վախճանի արարածոց. Թողումք զի անօրէնութիւնք անօրինաց մնային նոցա, և առաքինութիւնքդ աստուածայինք ունայնասցեալք, այլ և վիճակ մարդկային բանական բնութեանն յուսոգոյն և թշուառագոյն լինէր քան զանբան անասնոցն, և քան զանկենդան իրաց, որոց իւրաքանչիւրն անվկանդ ժամանէին իւրեանց վախճանին, և բանական կենդանիքդ միայն զրկէին յիւրեանցն. ո՞ր դիցուք հուսոյ ուրեմն զանչափ պիտութիւն նորա. ահա սրբին վասն է՝ զի ասաց Աբակեբերան. « Որ ուրանայ զանմահութիւն հոգւոյ, պարտի ի հարկէ ուրանալ և զԱստուածութիւն նորա, զի անմահ հոգի չունի զմասունս, զի կարիցէ ընդլայնիլ, բայց ունի զոգւոցն զպանապան աստիճանս, յորոց մի մի նուաղելով նուաղելով, նուաղին և նուաղին հոգիք մարդկան։ Բ. Հոգի մարդկան ըստ մարմնոյ ծնանի, աճի, նուաղի, և ընդ մարմնոյ եղծեալ ցրուի։ Գ. Եթէ անմահ էր մարդկային հոգին, ապաքէն ոչ զամենեսեան երկիւղն մահու պատէր պաշարէր։ Դ. Վախճան հոգւոյն է տալ մարմնոյ զձև կամ զկերպ լինելոյն. իսկ արդ ապականեալ մարմնոյն, ոչ մնայ ձևն. ուրեմն։

Առ Ա. Առեմ. եթէ հոգիք մարդկան բաղկանային ի պէսպէս ոգւոցն՝ ընդունիմ. եթէ ոգիք երևանեն ի հոգւոյ՝ ուրանամ. քանզի որպէս աստղաք ի վերոյ եղեալ յօդուածոդ, պարզութեան և հոգեղինութեան սկիզբն խորհրդոյ պարտի պարզ լինել, ապա թէ ոչ եղծանի ծանօթութիւն և դիտութիւն հոգւոյ բաղադրութեամբն։ Բ. Ոգիքդ այդոքիկ կամ առեալ լինին, ըստ Քանթի փոխա-



տուժոյ գոյութիւնն կամ զլոյսն արեգական». ուրեմն հաստատեալ իրաւամբ և արդարութեամբ՝ թէ կան անմահական կենօք և երջանկութեամբ հոգիք բանական կենդանեաց՝ արդարև է և իրաւացի։

Յաւէլ և զամենայն աղգային զհատանութիւն միաբան և միաբերան զանմահութենէ բանական հոգւոյն, որք յորժամ ի միտսին և միաբան, կամ որպէս ասէ մեծն Տուլիոս՝ ամենայն մարդիկ և ժողովուրդք զանազանք, աղգաւ, հասուով, երկրաւ և սովորութեամբ, բայց զմի և զնոյն ինչ հաստատել միաբանին՝ զայդ բնութեան օրէնս ունել պարտ է, և չինչ բնաւին յամենայն տարակուսութենանց։ Յաւէլ և գոգցես զանթիւ գումար քաջ իմաստասիրացն մերոյս ժամանակի՝ որք միաբան, միահատան ցուցանեն, և հաստատեն զառաչարկութեանս զճշմարտութիւն՝ զՔաֆտաէլի, զՊոնէլլի, զՍտորգենաւ, զԼաֆլուպպի, զՔմովբի, զՊուվիյե, զԼիպերտթօրէ ևն։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԴԻՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ

Մի. Նախ Քանթեան առաչարկութիւնն թէպետև հոգի մարդոյ չունի զմասունս, զի կարիցէ ընդլայնիլ, բայց ունի զոգւոցն զպանապան աստիճանս, յորոց մի մի նուաղելով նուաղելով, նուաղին և նուաղին հոգիք մարդկան։ Բ. Հոգի մարդկան ըստ մարմնոյ ծնանի, աճի, նուաղի, և ընդ մարմնոյ եղծեալ ցրուի։ Գ. Եթէ անմահ էր մարդկային հոգին, ապաքէն ոչ զամենեսեան երկիւղն մահու պատէր պաշարէր։ Դ. Վախճան հոգւոյն է տալ մարմնոյ զձև կամ զկերպ լինելոյն. իսկ արդ ապականեալ մարմնոյն, ոչ մնայ ձևն. ուրեմն։

Առ Ա. Առեմ. եթէ հոգիք մարդկան բաղկանային ի պէսպէս ոգւոցն՝ ընդունիմ. եթէ ոգիք երևանեն ի հոգւոյ՝ ուրանամ. քանզի որպէս աստղաք ի վերոյ եղեալ յօդուածոդ, պարզութեան և հոգեղինութեան սկիզբն խորհրդոյ պարտի պարզ լինել, ապա թէ ոչ եղծանի ծանօթութիւն և դիտութիւն հոգւոյ բաղադրութեամբն։ Բ. Ոգիքդ այդոքիկ կամ առեալ լինին, ըստ Քանթի փոխա-

նակ զանազան գործունէութեան, կամ գործողութեան հոգւոյն, կամ վասն նիւթական ուժգնութեան մարմնաւոր գործոցն. եթէ վասն առաջնոյն թէպէտև գործողութիւնք զտնազանք են ի միմեանց, և մինն գերքան զմիւսն, քան զանազանութեան բնութեան պարագայիցն առարկային և վախճանին, բայց և հոգին ննջեցեալ ամենեցուն մի է պարզագոյն՝ անբաժանելի. զորօրինակ Մարգարէն երբեմն նախանձախնդիր փառաց Տեառն Իսրայէլի, անյիշաչար թշնամւոյն, և երբեմն ի սէր և հաճոյս մարմնոյ մարդասպան և ամբարտաւան, մի և նոյն հոգի Դաւթի է, բայց գործողութիւնք զանազանեալք ի Դաւիթ: Իսկ եթէ վասն երկրորդին, այդ սեփականի անդամոյն նորահաս, կատարեալ զառամեալ վիճակին, յորս տարբերին մի և նոյն մարմնոյն գործողութիւնք, քան տարբերութեան քաղութեան և առոյգ ոգւոցն կազդուրման:

Ա.ռ Բ. Ասեմ. այդ նիւթականացն է, և քան խմիք Աբիսագէլին, ընդ որ հաճէր դոզցես և Սուրբն Օգոստինոս ի գիրս ի վեր՝ Ծննդոց, Գլ. 23. բայց յանկրաւի. քանզի որպէս առաք, ո՛չ յէութեանն, և ո՛չ ի գոյութեանն կախի և կայանայ բնութիւն հոգւոյն ի մարմնոյ անտի. նա՛ յաւէտ հակառակին միմեանց հակառակ և հակառական յատկութեամբ, և ո՛չ առաջինն յիմաստասիրացն եկաց ի վրիպման մտացն, զննեալ զայսոսիկ յատկութիւնս երկաքանչիւրոցն էից, մինչև ասել նորա (*)՝ միաբ մարդկան (հոգի) ո՛չ ի զօրութենէ անտի ներմանն յառաջ գայ զօրէն այլ հոգւոց, այլ յարտաքուստ անտի գայ. ուրեմն ինքնին անկախ՝ ի զօրութենէ նիւթոյն կայ: Այսպէս և մեծն Տուղղիոս (**)՝ զորօրինակ բանական ցուցանի գոլ Աստուծոյ, քանզի չի՛ք ազգ այնքան վատ բարուք՝ որ անդիտասցի Ե էէ Ա.---ն, գոյն օրինակ առ ամենայն ազգս հասարակ են կարծիք հաստատեալք, թէ յետ եղծանելոյ հոգւոյ ժեռելոյն ազատեսցին:

(*) Գիրք զՄատմանէ հոգւոց. Գլ. Գ.
(**) զՄերսութենէ.



Ա.ռ Գ. ասեմ. զչարութիւնն ֆիզիքական կամ զբակտուին մարդկային չինուածոյս ոչ կամիմք. քանզի վշտօք և տառապանօք լուծանին մարմնոյ անդամք ի մաներիմ վիճակակիցէն իւրեանց հոգւոյ, և քաղցր երևի նոցա ներդաշնակութիւն բնական կամ ֆիզիքական կենացն: Դարձեալ՝ որքան օգ զարդարեալ իցէ առաքինութեան բարեմասնութեամբ, դարձեալ անձանօթի դոլով ապագայ վիճակին՝ վհերանօք կամի և դիմէ առ այն. և բազումք ահարեկ լինին ի լրոյ մահուան գառնապէս արտասուելով, ուժգինս հառաչելով. ոմանց ապաշաւեալ ի կէս մահուն՝ և բազմայն չառարեալ՝ տառակին. քանզի մխոք և խիղճ մտացն՝ հառատարմիմ դէտ և առաւչ Աբարչին իւրեանց, ազգ առնէ նոցին իւրաքանչիւրոցն ուղղութեամբ անապատապէս այլևայլ վիճակի հանդիպելոյ՝ ըստ որպիսութեան գործոց իւրոց, և այնու զի երկնչին, հաստատի ճշմարթիւն անմահութեան մարդկային հոգւոցն, քանզի չերկընչէին, եթէ յանտի կենանս անմահ չէին:

Ա.ռ Դ. ասեմ. առաջին վախճան՝ ուրանամ. երկրորդական՝ ընդունիմ. բայց երկրորդին է ծառայել, և հետեւիլ առաջնոյն և գերագունին, և ո՛չ ընդհակառակն. առաջին վախճան բանական բնութեանն է այն՝ զոր պահանջեն յատկութիւնք հոգւոց. զորօրինակ վախճանն ամենեցուն արարածոց ուրոյն ուրոյն ճանապի ի խնդրոյ և ի բնութենէ իւրաքանչիւրոցն զանազան յատկութեանց, որ ի բնէ անտի Աստուածուստ իւրաքանչիւր բնութեան պարգեւի՝ զի անսաեղիւր իւրաքանչիւր զիւրն գոցէ նպատակ, այն է գյատեռնական երջանկութիւն. բայց

---

## ՑԱԽԵԼՈՒԱԾ ԻՆՈՑՆ.

ՄԻԱ. Այսոքիկ ամենայն ցուցանեն՝ թէ անմահ է հոգին, ո՛չ թէ յատեռնական է հոգին. և յատեռնական կամ մշտնջենական կեանք հոգւոցն չունի զբաւական

րին բնութեանն զրկիցէ. քանզի ոչ հնարաւ նորին բնութեանն, զի և նորին բարութեանն ժամանակաց, Եակ արդ բարութիւն և վարձն բանական բնութեանն է երջանկութիւնն, և այդ յաւիտենական. քանզի չէ երջանկութիւն, որ անցաւոր է և կորստական. ուրեմն, Երրորդ՝ թէ առաքինութիւնն և թէ անօրինութիւնն երկու են, և դոյնին եղերք. ննջեցական ընդ գործողութեան, և կարգ բնութեան ընդ Աբարչին բնութեանն. թէպէտ և ննջեցական՝ գործողն կամ գործողութիւնն, որքան բարութիւն կամ չարութիւն առնիցեն, միշտ սահմանեալ է և ունի զչափ բարութեանն կամ չարութեանն. բայց օրէնք և կարգ բնութեան ընդ Աբարչին իւրեանց անսահման են թէ՛ ի բարութեանն և թէ՛ ի չարութեան. քանզի գործն թէև սահմանեալ է ննջեցականապէս ընդդէմ բնութեան օրինաց, բայց քանզի նովին՝ զի լուծանէ և անարգէ զօրէնս բնութեան, անարգէ և զԱստուածն անսահման՝ կարգիչ բնութեան. ուստի առարկապէս առեալ՝ չարութիւնն անսահման է. արդ գործողութիւնն ննջեցականապէս սահմանեալ գոլով յարարած բնութեանն՝ որքան բարիս գործեցէ, ոչ երբէք սահմանեալ բարութեամբն հատուցանել կարասցէ անսահման չարութեանն. նմին իրի յաւիտենականապէս ընդ պարտիս միասցէ հատուցանելոյ զպարտս աստուածային արդարութեանն. այսինքն այնքան կացցէ ի հատուցանել՝ կրելով զվարձս չարութեանն, որքան Աստուած կացցէ վչտացեալ. բայց Աստուած յաւիտենական կայ, Ազատէր գուցէ եղկելին (և այդ ի գերբնական վիճակիս չնորհաց), եթէ բարերարի ուրուք անսահման արդեամբ լցելոյ հասանէր ի ժամու անսահման ողորմութիւնն, զոր ոք անհնար է գտանել ի սեռի արարածոց, բաց ի միջնորդութենէ տէրունական բազկի. ուրեմն վարձք անօրէնութեան յաւիտենական կայ, Զորրորդ՝ որ ընդդէմ գործէ օրինացն բնութեան, զանձն արտաքս արկանէ ի վիճակէն բնութեան կամ կարգի Աստուածուստ անտի ի վախճանն տրամադրելոյ և կարգելոյ. արդ՝ որ արտաքոյ կարգի անկանիցի, չկարէ վերստին ինքնին զանձն ի



իմն պատճառ, մինչև ոչ ցուցցի և հաստատեսցի՝ թէ բարութեանցն և չարութեանցն հատուցումն յաւիտենական է. որ եթէ ցուցցի, յայնժամ յիրաւի ցուցցի և ճշմարտութիւն անմահութեան հոգւոյ, և յաւիտենականութիւն և մշտնջենաւորութիւն այսր անմահ կենացդ հոգւոյ, զոր այսպէս ցուցանեմք, Նախ (ՄԼԸ) ցուցաք՝ թէ ոչ միայն իղձ և փափաք հոգւոյն ի բնէ անտի են յանմահութեան կալ, այլ և միշտ կալ, այսինքն է երբէք ոչ կասիլ ի կեցլոյ. և թէ ցանկան միտք մարդոյ ոչ միայն հասանել լիովին ճշմարտութեանն, այլ անկորուստ ճշմարտութեանն, յորում վայելեսցէ և կեցցէ. նոյնպէս և կամք՝ լուսաւորեալ ի մտացն անտի, մտացն ներկայացուցեալ նմին զառարկայն՝ այսինքն զբարութիւնն, խընդրէ և փափաքի հասանել այնց ամենեցուն, Եւ ոչ միայն հասանելոյն չատանայ, այլ և փափաքի զի միշտ յանկորուստ վիճակի նոցին կեցցէ, և վայելեսցէ ի նոսա. Ապաքէն ասացաք թէ հակամիտութիւնն կարողութեանց հոգւոյ, այն է մտաց և կամաց, յԱստուածուստ անտի պարզևեալ է բանական բնութեանն, իբրև առիթ և նպաստ, որով բնութիւնն ըստ ձայնի և ազդարարութեան նորին հակամիտութեանն հասանել փութացցի սեփական իւրումն վախճանի. որոց հետեւեալ բնութեանն գործք անստեղծ ժամանեսցեն ի վախճան. ուրեմն առաջին փաստ յաւիտենական կենաց, և յաւիտենական վարձուցն ինոյն բնութեանն թաքուցեալ և պահեալ կայ. ուրեմն Աստուած՝ արարիչն բնութեան ոչ յումեքէս էարկ զայդ իղձ և փափաք յաւիտենական կենացն և վարձուց. և քանզի չէ Աստուած, բայց միայն զի կատարեալ իսկ է, հնարաւ թէ ոչ խաբէ զոք, և ոչ խաբի յումեքէ. Երկրորդ՝ վասն յաւիտենական պատժոց, ասէ. որ զօրինօքն անցանէ բնութեան, զոլորինակ արա զբարին և խորշիր ի չարէն, հպատակ լիր Աբարչին բնութեան, արա այլեւս՝ զոր առնել քեզ այլոցն ցանկասցեն, և՝ որ զօրինօքն, ասէ, անցանէ բնութեան, պարտ է զի և ի վախճանէ և ի վարձուց և ի բարեմասնութեանց նո-

նոյն կարգ համբառնալ, պի անկաւ անտի, վասն որոյ և անկարգ. բայց և ո՛չ իսկ Աստուած վշտացեալ յարուցանէ զնա ի վիճակն յորմէ անկաւ. ուստի միասցէ յայն վիճակ անկարգութեան մինչև ցյաւիտեան։ Ուրեմն յայտ է և ցուցեալ համարիմ զճշմարտութիւն առաջարկութեանն՝ թէ արդարոցն պարգև և երջանկութիւն պարտի յաւիտեան լինել, և անօրինացն տանջանք յաւիտենականք։ Ասէ Պիւատոն ասէ (*). «Հոգիք մեղութեամբ զառածելոք՝ մեկնեալք ի մարմնոյ, յայնժամ կացցեն և քաւեսցին մինչև մաքրեսցին ի թանձր մարախղոյ և յաղմկէն, որով զանձինս արատեցին յաստի կեանս»։ և բացայայտապոյնս ևս ասէ Վիրգիլիոս (**), որոյ իմեալ ի գժոխային տարտարոսն դառապարտելոց՝ ասէ յաւիտեան լինել տանջանք ոմանց. «անդ կայ և յաւիտեան կացցէ ապերջանիկն Թևզէոս»։

Մեկ. Ասասցէ ոք. այդ անիրաւութիւն համարիս Աստուծոյ, սահմանեալ յանցաւածոցն կարգել զանսահման պատիժս։ Անիրաւութեամբ ասեմ՝ որ զայնպիսեան բարբանջէր. քանզի թէև գործողութիւնն չար լինիմ՝ կայն սահմանեալ է, բայց առարկապէս առեալ գործողութեանն չարութիւն իսկ անսահման է, քանզի զԱստուած վշտացուցանէ, այսինքն զրկի յերջանկութենէն Աստուածութեան նմին պատրաստելոյ. և քանզի որ բնութեամբ անսպառական է, այդ և յաւիտենական է՝ ըստ Արիստոտէլի, վասն որոյ յաւիտեան զրկեալ լինայ Աստուծոյ անտի. ո՛չ զի Աստուած զրկէ զնա, այլ ինքն զանձն զրկէ ազատութեամբն Աստուծոյ. և արդարութիւնն իսկ աստուածային կամի զի չարութիւնն չարութեամբ զպատուհասն արձանի գոցէ։ Նաև պահեն Աստուծոյ զանօրէնն ի գոյացութեան իբրև լաւագոյն է քան չգոյանել զարձուցանելն զնա. զի լաւագոյն է լինել քան զչլինելն բացասական. Եւ ևս ի մնանելոցն անդամ իմեալ Վիրգիլեայ՝ անդ դնէ զնոսին քաւիչ վասն պատժոց անօ-

(*) Ի գիմէական գիրս։
(**) Վիրգիլիոս Նէապոլեան. Գիրք. Ա.



րէնութեանց ասելով. «Ա՛յլք ոմանք ընդ յօդս կախեալք, և այլոցն ի լայնատարած ջուրց տանջին մեղք կամ տոչորին հուրբն»։ Նա՛ և ևս Պիւատոնականք ամենեքին ասէին՝ յաւիտենական փոխատրի արժանի լինել հոգւոցն յանցաւորաց՝ յետ ազգի ազգի պատժոյն պատահասից կրելոյ զգացաւս. զայս չասին մեօք իւրեանց գիտել իմաստասէրն Պիւատոն, թէպետ և վրիպեցաւ յայնմ՝ թէ որ արտաքսեաց կամ ընկեաց զանձն ի խորխորատն անհնար էր պի ինքնին ելանէր անտի։

---

## ՑՕԴՈՒԱԾ Չ.

### ՑԱՂԱԳՍ ՍԿԶԲԱՆ ՀՈԳՒՈՑ

**Մեկ.** Ո՞ր տեսակ զգանազան յաւելուածիւնս էականս մարդկային հոգւոյն, անուղղակի տեսակ անգամ և զտչին հակառակ՝ այն է զյաւելուածիւնս նիւթոյն. արդ առ ի գտանել ուստի սկիզբն առաք ի բանիս նպատակ, պարտիմք ասել՝ առնպեալ յուղիղ սկզբանց և ի տրամաբանութենէ մուսոյն, զոր ի վերոյիշեալ յօդուածոդ յաւելք բերաք, թէ հոգի մարդկային չէ՛ և չէ՛ բնութենական կամ համագոյ թանձր նիւթոյն ընդդէմ մոլար կարծեաց նիւթականացն, այլ ամենևին որիշ էութեամբ և բնութեամբ և գործողութեամբ լինելոցն, և նոցին ընդդէմ հակառակ և հակառական։ Ծանր է արդ մեզ առաջի այսց ունելով զյաւելուածիւնսդ հոգւոյն, ջնջել-ջնջել մատչիլ ի նոյն բնութիւն առնել այսր հոգւոյ, և տեսանել՝ թէ պի՞նչ է, կամ պի՞նչ է սկիզբն նորա, ուստի ելանէ։ Ասեմ ջնջել-ջնջե՝ քանզի ո՛չ հայեցողապէս ունիմք գծանոթութիւն էութեան հոգւոյս, այլ միջնորդութեամբ բանական գործողութեանն ուրմէ։

**Մեկ.** Բազում բազում իմաստասիրեցին՝ անարժան ասէրապէս իմաստութեան նոցա. ոմանք ընդ բազմաստուածս՝ յորս Պիւթագորաս, Սոկրատէսանք և Պանեթեցիք

համարեցան զՆոգիս գոլ մասունս աստուածային պոյացութեանն և աստուածային բնութեամբ զարդարեալ. որոց մոլորութիւնն եղծանի ի փաստից անտի Աստուածաբանութեան (ՃՂԸ. ՃՂԹ. Մ.). Սրդ փոփոխութիւնդ Հոգւոյ ցուցանէ ինձ թէ Հոգին ոչ է Աստուած. քանզի եթէ Հոգին է պոյացութիւն Աստուծոյ, պոյացութիւնն Աստուծոյ պղծի, պոյացութիւնն Աստուծոյ խաբի, զոր անարժան է ասել զԱստուծոյ (*). Այլք ընդհակառակն դառնային, գոլ Հոգւոյն բոլորովին նիւթական. եղծանի և մոլար վարդապետութիւն ածա ի վերոյիշեալ յօդուածոցդ փաստից. «և ո՛չ մարմին եմք մեք» ասայ Կիկերոն (**). Այլք համարեցան՝ թէ Հոգիք ի ծնողացն անտի զօրէն ցորենոյ ծնանին. կամ իբրև մասունք Հոգւոյ ծնողացն անցեալ ի մարմին որդւոցն՝ և կերպաւորելով զայդ մարմինն ի ծնողաց անտի առեալ, կամ առեղծանելով Հոգւոյն ծնողաց զՆոգիս որդեկացն, և կամ ի մարմնոյ անտի ծնողացն առեալ լինի. բայց զայս վարդապետութիւն ոչ ոք ընկալաւ առ գեղեցկութեան նորա, այլ և առ տկարութեան բնութեան և զգայութեան մարդկային բնութեանն. և համարին տալ զնա մեծին Տերտուղիանոսի, բայց ընդդէմ իմաստութեան նորա. քանզի նա՛ յաւէտ Լուկիբերնաց Հերետիկոսացդ (***), Աստղինն եղծանի այնու զի Հոգիք մարդկան պարզ գոլով և անբաժանելի՝ անընդունակ են, որպէս տեսաք ի վերոյ՝ առ այդ ներգործութիւն, Երկբորդն անգամ անտեղի է. քանզի գործ արարչութեան կամ ստեղծման յոչնչէ՝ միոյն ևեթ Աստուծոյ վայել է. քանզի անբաւ զօրութեան պէտս ունին գործք արարչութեան. ո՞ր աստուած զՆոգիս մարդկան անբաւս և անսահմանս զօրութեամբ, Եղծեալ է ևս առաւել և երբորդն. քանզի եթէ Հոգին յատկութեամբ առաւելադոյն կամ զերազոյն է քան զնիւթ և զմարմին, եթէ

(*) Օգոստ. Թուղթ ՃԿԶ.
(**) Տուսկուլ. խնդ. Գիրք Ա.
(***) Օգոստ. զՀերետիկ. Գլ. ՁԱ.



Հոգին ելանէր ի մարմնոյ, հետեւէր անտեղութիւնդ մեծ, թէ ներգործութիւնն է առաւել կամ զերազոյն քան զպատճառ իւր. քանզի երկրորդ յատկութիւն միոյն ըզմիսն եղծանէ՝ հակառակ և հակասական զոլով միմեանց, Եւ ևս առաւել չկարէ մարմինն առեղծանել զՀոգիս. եթէ Հոգին զՀոգին չկարէ առեղծանել, ո՛րքան առաւել մարմինն զՀոգին, Այսոքիկ թիւր վարդապետութիւնք են, ո՛չ յուղիղ սրամտաբանութենէ ծագեալք, այլ յաւէտ ի պակասութենէ և ի կրից տկար բնութեան և բարուցն.

Մխե. Սրդ զի՞նչ իցէ Հոգին, ժամ է առաջի դնել. է քննութիւն իմ քննութիւն ինձ ինքնութեամբ մտից և ինձ զանձն ճանաչել, տեսչութեամբ յԱստուծոյ, և ինձմէ ի քննութիւնս. է վարդապետութիւն Սրբոյն Հերոնիմեայ (*) որ եղև առաջին յաւետացանելն զայդ, և նմին հետեւեցան ամենայն Հարք Եկեղեցւոյ, թէ Հոգիք իւրաքանչիւր՝ յիւրաքանչիւր մարմինս առեղծանին. Եւ յիրաւի յարմարի և ուղիղ սկզբանց մտաց՝ և կարդի բնութեան վարդապետութիւնդ. քանզի գործն արարչութեան պահանջէ զանսահման զօրութիւն և զկարողութիւն. իսկ արդ ո՛չ ումեք վայել է կարողութիւնդ այդ բայ յԱստուծոյ. ուրեմն մի միայն Աստուած լիցի սկիզբն և առեղծիչ մարդկային Հոգւոյն, և այդ անմիջապէս (ՄԵ. ՄՋ.), զի յարարած չի՛ք բնութիւն, որ կարողն իցէ ընդունել զզօրութիւնդ արարչական յինքն իբրև մեքենայ կամ փոխանորդ. Ուրեմն աստուածային իմն է մարդկային Հոգւոյն էութիւն և սկիզբն յոյժ գերազոյն քան զայլ էութիւնս և զմիջնորդութեամբն եղելութիւնս. ամէն իրի և Կիկերոն գարձեալ անդ՝ պատուէր Նէ-մէ-սի-կոչեայ զայն Սակրատայ ծանիր զքեզ զոր չասացի մեզ, թէ ո՛չ գիտութիւնդ այդ Հոգւոյն աստուածային իմն գաւեր.

Մխջ. Ո՛չ միայն զբնութենէ Հոգւոց, այլ և զժամանակէն առերեւութեան բազումք. քանզի Պղատոն, Պիւթագորաս և հետեւողք նոցին ուսուցին՝ թէ յարարչութեան անդ արարածոց արարան կամ ստեղծան և բնա-

(*) Զվարդապ. Եկեղեց. Գլ. ԺԴ.

ղեկավարության ներքո։ Ամեն մի ֆրակցիա պետք է ունենա իր ղեկավարը, որ ենթարկվում է ամբողջ կուսակցության ղեկավարությանը։ Ֆրակցիայի ղեկավարը պետք է ամեն կերպ ձգտի, որ ֆրակցիայի անդամները ոչ միայն ներկա լինեն կուսակցական ժողովներին, այլև ակտիվ մասնակցություն ունենան նրանց աշխատանքներին։ Ֆրակցիայի ղեկավարը պետք է հոգ տանի, որ ֆրակցիայի անդամները ժամանակին ծանոթանան կուսակցության կենտկոմի և տեղական մարմինների որոշումներին և կատարեն դրանք։ Ֆրակցիայի ղեկավարը պետք է հոգ տանի, որ ֆրակցիայի անդամները ժամանակին վճարեն կուսակցական անդամավճարները

թութեան և ի ծերութեան զգլխաւորսն գոնէ ոչ մոռանամք. մի՛թէ ձեռս իմն ունին միտք ի բազկացութենէ մարմնոյ անտի ի մտաւորական գործս իւրեանց։

ՄԽԸ. Այլ և Ղէիսինիցեանդ դաս անհիմն և ձրի՛ ամբաստան իմն է, զորոյ և գուցէ զկս հրաժարիս դասանեա առ այժմեան բնակիչս դաշտացն Արարիոյ և Ասորեստանի հնէիանոս։ Զիա՞րդ լիցի այդ՝ ցնա հարցանել պարտ է, զի ոչ ամենայն մասունքդ փոքրկունք հաւասարապէս ընդունին ի նոյն ժամու զի վերստաւ իջնալ հոգիսըն, ոչ հաւասարապէս ի նոյն ժամու սկսանին զգործողութիւնս իւրեանց, ոչ ի նոյն ժամու յօրինեն զմարդն, Զիա՞րդ ի վիճակէ մի միայն զգայականութեանն անցանեն ի վիճակ բանականութեան և ազատութեան. թէ յառաջագոյն չունէր, զիա՞րդ զգայութիւնդ այդ ծնաւ զմիտս կամ զկամս, զոր ոչն ունէր. ահա անտեղութիւն և անհաստատութիւն այսր վարդապետութեան։

ՄԽԹ. Հուսկ ուրեմն հոգեփոխութիւնդ այդ անընդունելի է. քանզի եղեալ և ոչ ընկալեալ՝ թէ հոգի մարդոյ ուրուք անցանիցէ յայլ ոք, զի՞ յերկրորդ մարդն հոգին ոչ յիշէ զառաջնոյն գործողութիւնս, թողութիւնս զմարմնականս գոնէ զհոգեկանսն. մի՛թէ փոխեցաւ հոգիդ այդ, ո՞չ նոյն առաջինն է ննթակայ ամենայն գործողութեանց. զորօրինակ թէ փոխէր զհայրենիս և յօտարն պանդխտանայր, մի՛թէ ի մոռացօնս անկանէին ի հայրենիսն պատահեալ գործողութիւնք հոգեկանք. միթէ յետ լուծման կապանաց մարմնոյ ի հոգւոյն՝ մոռացի՞ անմահ հոգին զարարածս իւր, Երկրորդ՝ դիցուք թէ կարէ փոխիլ հոգի մարդոյ ի ձիս, ի ջորիս, ի շունս, ո՞չ ապաքէն անփոփոխ մնան նոյն էական յատկութիւնք և ատորոգելիք մարդկային հոգւոյն. ե՞րբ ոք լուաւ՝ թէ շունն գրեաց, կամ ե՞րբ թէ հաւն զայդ կարդաց. ապաքէն յարմար է ասոյին՝ բանն « Մարդն ի պատուի էր և ոչ իմացաւ, նմանեցաւ անասնոց անբանից » ևն։ Ուրեմն սուտ է ամենևին դրութիւն նոցա, որ զայլ և այլս բարբանջին, և երանի՛ թէ ցուցանէին զբանս և ըզխօսս իւրեանց, զոր անհնար է։ Թողեալ ուրեմն զմոլարան՝



ՄՄ. Գամք ի ճշմարտութիւնն. նախ՝ թէ ըստ Սրբոյն Հերոնիմեայ և Հարց Եկեղեցւոյ՝ վասն իւրաքանչիւր մարդոյ ստեղծանէ Աստուած զհոգի մարդոյ յոչնչէ, և այդ յետ ստեղծման մարմնոյ. և պատճառն այս է՝ զի հոգի մարդոյ բնականապէս կարդի առ բաղադրութիւն մարդոյ կամ մարմին մարդոյ. երկոքին իսկ անկատար համարին զատեալ ի միմեանց նկատմամբ մարդկային սեռի. զի մարդն է էականապէս բաղկացեալ ի հոգւոյ և ի մարմնոյ կամ յանդամոց. ո՛չ հոգին առանց մարմնոյ կոչի մարդ, և ո՛չ մարմինն առանց հոգւոյ կոչի մարդ, այլ բաղադրութիւնդ ի հոգւոյ և ի մարմնոյ կոչի ի միասին մարդ։ Զայսմանէ խօսեացաւ (ՃԳ. Գլ. զկնի)՝ Երկրորդ՝ ինդիր է և ցայսօր անորոշ, թէ ե՞րբ լինի ստեղծումդ այդ, և ե՞րբ սկիզբն առնու հոգին միաւորիլ ի մարմինն՝ և կեալ ի մարմնի. ոմանք առնն յետ անկանելոյ սերմանն յարդանդ ծնողին յերրորդ ամիսն. ոմանք ասեն ի կէտ անկանելոյ այնր. և ոմանք զմիջին ունին կարծիս, թէ առհասարակ ըստ փորձոյ յետ քառասանից զդալի լինի շարժումդ ի յարդանդի մօրն, այսինքն յորժամ մարմինն ինանձրացեալ զընդունակութիւն առանայ գործողութեանցն, յայնժամ հոգին ստեղծանի և դնի ի սեփական նոր մարմնի։ Մեք չորոշեմք անգամ զանօրոշն, և յայտնեմք միայն զճշմարտութիւնդ ընկալեալ Եկեղեցւոյ՝ թէ յետ ստեղծման՝ այն է անկանելոյ սերմանն յարգանդի, ստեղծանի հոգին բանական յոչնչէ էական ատորոգելւօքն և յատկութեամբք. բայց քանզի չիք և ո՛չ վայրկեան մի կենաց մարմնոյ, թէ ոչ նախ ընկալցի սա սկիզբն և պատճառ կենաց, այն է հոգին. զորօրինակ մնկնեալ հոգւոյն ի մարմնոյ՝ չասի այլ ևս կեալ մարմնոյ. նոյնպէս կենանք մարդոյ յստեղծմանէ հոգւոյն և ի մարմնի զետեղելոյ յԱստուածուստ սկիզբն առնու. և եթէ աւուրբք յառաջ քան զհոգին լիցի նիւթն մարմնոյ՝ այդ միջոց կամ կենանք չէ դասել ընդ հասարակ կենաց մարդոյ, և գուցէ լաւագոյն լինէր կոչել զայդ աճումն ինչ գոգեաս անկական քան կենանք մարդոյ բանական։

# ԳԼՈՒԽ Բ.

## ՅԱՂԱԳՍ ՍՏՈՐՈԳԵԼԵԱՑ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆՑ ՀՈԳՒՈՑՆ

**ՄԾԱ.** Ծանուցեալ զէական յատկութիւնս հոգւոյն, և յայտանէ զակիզբն, զէութիւն և զբնութիւն նորա, պարտ է որոնել և ճանաչել զստորոգելիս կամ զկատարելութիւնս հոգւոյն, որք էականք են և կացուցիչ բնութեանն նորա, որով դամբ ի գիտութիւն էութեան հոգւոյս տիրապէս, և որոց գիտութիւն անտնօրինաբար միացեալ՝ պէտք են զի գոյին ընդ ծանօթութիւնս յատկութեան և բնութեան հոգւոյն. և զորօրինակ յԱստուածաբանութեան անդ նախ ցուցաք զգոյութեանն Աստուծոյ, զէութեան և զբնութեան զճշմարտութիւն, և ապա զկատարելութեանցն և զստորոգելեաց, գոյն օրինակ առնեմք և յայսմիկ գիտութեան: Արդ ստորոգելիքդ գլխաւորագոյնք երեք համարին. միտք, յիշողութիւն և կամք, որք երեք կարողութիւնք են բանական մարդկային բնութեանն: Զի բաքանչիւրոյն ուրոյն ուրոյն խօսեացուք:

---

### ՑՕԴՈՒԱԾ Ա.

#### ՅԱՂԱԳՍ ՄՏԱՑ

**ՄԾԲ.** Թէպէտև ի հաւաքաբանութեան անդ (ԿԴ.) խօսեցաք ըստ խմիք զմտաց կամ զիմացական կարողութենէ հոգւոյն, բայց ո՛չ ի գիտղ կարգի և տեղւոջ, այլ ըստ պահանջման և կարօտութեան որոմնաբանութեանն, որ կարօտի մտաց՝ ըստ որում ՝ե-ց-կ-ն կ-ր-ը-ր-ն-ն և -ը-ք-ե-ր ֆը-ր-ը-ն-ն: Արդ վերստին ընթերցեալ և առաջի աչաց կալեալ զամենայն՝ զորս անդ ճառեցաք միանգամայն, առ ըստ որում ի գիտղ կարգի և ուղղակէս խօսեացուք



զմտաց ընդ արձակապէս: Միտք՝ ըստ որում սկիզբն կամ կարողութիւն հոգւոյն զանձն ճանաչելոյ՝ կամ զնեղբին գործողութիւնս հոգւոյն, որք ի հոգւոյն սկսեալ ի հոգւոյն կատարին, կոչի Ե-ը-ց ֆ-ը-ց. զայսմանէ շատ լիցին զորս ի Տրամաբանութեան անդ զրեցաք (ՄԹ. Կ. ԿԱ.): Միտք ըստ որում իմացական կարողութիւն հոգւոյն, կամ անդէն և անդ ի տեսանելն զառարկայս անմիջապէս ըմբռնել զնոսա, դասել զնոսա զոր այս ինչ և զոչ այլ ինչ, թէ՛ ի թանձրացեալն, թէ՛ ի վերացեալն ճանաչէ զնոսա, թէ՛ ըստ էութեանն, թէ՛ ըստ գոյութեանն, և կոչի Ե-ը-ն-ե-ն Ե-ր-ը-ր-ն-ն ֆ-ը-ց. և կամ չկարէ անդէն և անդ ճանաչել զնոսա միջնորդութեամբ յայտնի և բացայայտ սկզբանցն, և բազդրելով զանծանօթսն կամ զտարակուսելին ընդ ծանօթագոյնս՝ արտայայտի հոգւոյն և ճշմարտութեան ասացս, կոչի բ-ն կամ Ե-ր-ը-ր-ն-ն բ-ն-է-ր-ր-ն-ն (ԿՀ. ԿԹ.). զերկոցունց իսկ խօսեացուք յատակիկայս, զոր պարտ է յերկուս մասունս տրոհել:

---

### ՄԱՍՆ Ա.

**ՄԾԳ.** Առաջնոյն այն է իմացական կարողութեանն վերաբերին նախ ըմբռնմունք առարկայից. ըմբռնմունք այդոցիկ և ծանօթութիւնք կամ զէութենէ իրաց են՝ որպիսի սեռակք իցեն, կամ զէական յատկութեանց նոցա և կամ զանհատական յատկութեանց իրաց, զամենեսեան միտք մարդկան ըմբռնէ: Ապա զինչ իցեն ընդհանրապէս մարմինք և էական ստորոգելիք նոցա, զինչ իցեն էակք հոգեզէնք և էական ստորոգելիք նոցա, զինչ իցեն եղանակք և որպիսութիւնքն, զինչ իցեն դրական գոյացութիւնք, և զինչ կարելի էակք, այսոցիկ ամենեցուն ծանօթութեանց՝ թէ ընդհանուր և վերացեալ, թէ մանաւանդ՝ յատակ բնութեամբ զէութեան իւրաքանչիւրոյն գծանօթութիւն, զպատճառն նոցա, գյարաբերութիւն նոցա ընդ միմեանս, զներգործութիւնս, և ոչ յորոց եբանեւ-

ցին հետեւութիւնք, և ասա այս է պաշտօն մտացն. ճանաչէ, այսինքն է ջնջութիւնս սեռից և առանձից, և ըմբռնաւոր նոցա, և դիտակութիւնս մանաւանդ իւրաքանչիւրոց. բայց յորժամ ընկալանել ծանօթութիւնդ միտք մարդոյ ունի կարողութիւն վերացուցանելոյ զդաղափարս. այսպէս նախ ի բաղում յատկութեանց զանազան առարկայիցն զնմանան ի մի հաւաքէ, և զանհնմանն ի բաց մերժելով առանձին ինքնին զընդհանուր և զվերացեալ ծանօթութիւնս և անդրեանս (ԺԲ.): Ասա՝ առաջ պատճառի ի միտս էութեանց իրացն, սեռից և առանձից ծանօթութիւնն. զտրօրինակ [illegible]. և այսու ևդանակաւ ի միտս առնու զընդհանուր և զճշմարիտս անդրեանս՝ թէ [illegible], բայց ի մեծ է քան զիւրաքանչիւր մասն իւր, 4 և 4 առնեն 8: Քանզի դիւրագոյն է ըմբռնել զսեռ, զընդհանուրն կամ զառաջին իրաց, և զսոցին ծանօթութիւն, քան զառանձինն և զանհաս իրաց և արարածոց, և ապա ելանել ի մասնաւոր ծանօթութիւնս անհասս (ԺԱ. ԺԲ.). Նախ զպարզն, և ապա զանպարզն կամ զբազադրեալն, և ըստ Սրբոյն Թովմայի, հազի մարդոյ միշտ անցանել ի գործն, այսինքն է յանկառարելն ի կառարեալն. արդ նախ սակաւ գոլով մտաց մարդկան ի միտս առնուլ զամենայն յատկութիւնս իրաց, չառանայ ճանաչել զմի և զերկու գաղափարս որք ամենեցուն հասարակք իցեն և ամենեցուն յարմարիցին. և երկրորդ՝ պարզագոյն գոլով և դիւրին՝ դիւրաւ միտք անսեալ զառարկայն յաչխատիլ և առբերի յայն, զտրօրինակ յերթալ ուրուք գէպ ի պարտէզ ինչ՝ ի հետաւոտս հայեցեալ տեսանելոյէ զկանաչն, որ յամենայն ծառս գտանի և ամենեցուն յարմարի, և մոռանալ ի պարտէզ անգր, իմանէն միտք ի ծանօթութիւն մասնաւոր գունոց և ծառոց: Արդ յըմբռնելն մերում զբազում ծանօթութիւնս՝ նախ զգայարանք պարտին ներկայացուցանել մտաց զառարկայս, և միտք պարտին ըմբռնել զներկայացեալ զառարկայս. և



հակառակ իմն ընթացիւք զդայարանաց. քանզի ոչքս զանհասն յատակ բերբեն մեզ, և միտք յընդհանուր ծանօթութենէ սկսանի զծանօթութիւնս իւր. քանզի բնութիւն և թէութիւն առեղծեալ մտաց է միշտ յանկատարելն և ի սակաւուց սկսեալ ի կատարելագոյնս և ի բազումս ժամանել՝ և յօրէ յօր կատարելագործել. քանզի ի զօրութենէ կամ ի կարողութենէ ելանէ ի գործ և յարդիւնս. և բազագոյն է արդեամբ ունել զկատարելութիւն իմն քան զօրութեամբ կամ ունակութեամբ՝ այն է կարողութեամբ և յարմարութեամբ:

ՄԾԹ. Սակայն զայս անեղամ գիտել պարտ է՝ թէ ի ճանաչել մտաց զէութիւնս իրացն վերացեալ զաղափարօքն, զակիզբն՝ զպատճառսն իրացն, չէ պարտ զի միշտ վերացեալ զաղափարգ այդօրիկ զդայարանացն նպատակաւք յօրինիցին, այսինքն ի նեղութեան առարկայիցն, այլ երբեմն պատահի և հնար է՝ զի առարկայն ներկայ գրացի, բայց զուրկ ի զգայութենէ դրականապէս և իրապէս. զտրօրինակ անտես և իմացական իրացն հոգեղէն գոյացութենէն, ընդհանուր սկզբանց ճշմարտութենէն են, որք չունին պէտս զդայական առարկայից:

ՄԾԵ. Են և ոմանք՝ որք ասեն թէ չէ պարտ զի ընդհանուրգդ միշտ լիցին և ի գոյ ածցին ի ձեռն վերացուցման յանհասից անտի բազմոց, և ընդդէմ ասեմ և այլք ոմանք պնդեն՝ թէ պարտ է զի ամենայն ընդհանուրգդ յանհասից անտի վերացուցեալ իցեն, ապա թէ ոչ անհնար է լինել ընդհանուր գաղափար: Բայց գործեալ ճշմարտութիւնն ի մէջին կայ տեղոջ. քանզի ըստ Սրբոյն Թովմայի (*) երկակի միտք մարդոյ կարէ ըմբռնել զընդհանուրգդ, ուղղապէս և անուղղապէս. այսինքն միտք մարդոյ երբեմն կարէ ըմբռնել զիմն յինքնեան, առանց հայելոյ ի յարաբերութիւնս այլ իրին առ արտաքս, թէև իցեն առ բազումս. զտրօրինակ ընդհանուրգդ գոյացութիւն թէև յարմարի և զամենեցուն՝ զԱստուծոյ, զը-

(*) Բովանդակ. Աստուածաբան. Ա. մասն. Վիճ. Զե. Ցօդ. ի.:

մարմնոյ, գնոզուց, գմարդոյ, են, բայց կարեմք ըմբռնել գնա իբրև պիճն, որ նշանակէ գէութիւն առանց նկատելոյ և յատկանշելոյ զանհատն. այսինքն է ուղղակէս ընդհանուր, այլ ճանաչելով միայն զանհատն, և յամենեցուն յայտնէ հատուածել ծանօթութեամբն վերագառնալ, և տալ գընդհանուրն միասի իմիք, գայս կոչմամբ ընդհանուր քրոջ կամ եղբայր: Ըստ այսմ ուղղակէս ընդհանուրն գոանի յիւրս ըստ էութեան, թէ և չիցեն միտք որ ըմբռնիցէ զնա. բայց վերագարձ ընդհանուրն այսինքն կանն և գործողութիւնն վերացուցանելոյ ի բազմաց անհատից գընդհանուր գաղափարն՝ կայ ի միտս, որոյ է գործ սեփական. քանզի այլ է առարկայն որ ճանաչի, և այլ եղանակն ճանաչելոյ մտաց զառարկայն. և լաւագոյն ևս, այլ է վերացեալ իրն՝ և այլ կերպ վերանալոյն. սա գայն ենթադրէ՝ ոչ թէ նա զսա: Ասյոսիկ այսպէս ծանուցելոյ գիւրաւ լուծանի կրճիճն երկուց կարծեացն. այսինքն է ուղղակէս ընդհանուրն՝ որ է բնութիւն և էութիւն իրաց, և նորա ծանօթութիւն գոանի յիւրս, անկախ ի մտաց և ի վերացուցմանէն. բայց ընդհանուրն անդրադարձ կամ վերագարձ ի հարիկ կախի յանհատից իրացն, և այդ միշտ: Ուղղակէսն կայ՝ ինայ յաւիտեան, թէև եղծցին միտք մարդկան. բայց ոչ այսպէս անուղղակէսն, որ ընդ եղծանիլ մարդկային մտացն՝ ընդ նմա եղծանի և նա:

ՄԾԶ. Ոչ միայն այսուիկ երկակի ճանապարհաւն միտք մարդկան ճանաչէ զէութիւնս իրացն՝ թէ՛ կարելեացն՝ թէ՛ դոյութեանց և դոյացութեանն, սկզբունս ճշմարիտս, գաղառճառս, դներդործութիւնս նոցա և զէական յատկութիւնս՝ որովք կան, այլ և առանց երբեմն ճանաչելոյ զէութիւն իրին, ուղղակէս ճանաչէ զմնառնաւոր յատկութիւնս իրաց, այսինքն է առանց միջնորդութեան ընդհանրոց, որպէս զայս ծառ, զայս մարդ, զբարւոյ. քանզի ըստ Արբոյն Թոմասի՝ սխալել է չկրնալ ի բնական գործոց.



ուրեմն ճանաչել զճշմարտութիւն է բնական, և չճանաչելն գնա համարի պակասութիւն. բայց եղեն և են արգելամբ սակաւք այոր ընդհանուր կարգութեան բանական հոգւոյն, որք անուղղակէս ուրանալ չկանացին զկար գոյութեան մտաց և խորչիլ նորին կատարելութեան. նախ՝ իրականք կամ գրական կոչեցեալքն, որք ընդդէմ հաստատակ կարծեաց մարդկան սեռի, և մտացն ուղիղ սկզբան՝ ասացին թէ ընդհանուրք որպէս հնչիւնն, քան ամենայն իմաստուն կան գրականաւորէս կամ իրապէս. այսինքն է՝ ոչ է ընդհանուրն վերացեալ ի բազում անհատից, և ոչ միմիայն կայ ի միտս մեր, այլ ի նոյն բնութեան իրաց, որոց ի բնութեանն է կատարեալ հաղորդութիւն ի բնութեան, այսինքն որ է էութիւն և բնութիւն ամենայն իրաց, և չիք զանազանութիւն սեռական, սեռից, մասնաւորաց և անհատից ի միմեանց, բայց միայն ի պատահականն. վասն որոյ և չիք այդպիսի ընդհանուր գաղափար, որ ի բազում անհատից վերացեալ իցէ նմանն, և ի բաց թողեալ աննմանն, այլ ամենեցուն մի է հաստատակ էութիւն և բնութիւն: Սոքա եղծանեն զմիտս և զմտաց սկզբունս ընդդէմ անձանց ապրելով, այսինքն է գոլով մտաց նոցա՝ նոցին սեռիւք ճշնամի. և յայնժամ ոչ միէակ գերագոյն լինի, այլ աստուածք յոլով, և աշխարհս ոչ բնակութիւն մարդկան, այլ աստուածոց. և զարմանք զի Աստուածք են, և նուաղեալ մեռանիմք: Երկրորդ՝ Ըմբռնողականացն՝ որք ասացին ոչ ունել և լինել իրական և գրական իմն յիւրս, այլ որ ինչ է, է յըմբռնման մերում, և մեք ըստ հաճոյից ի մտաց մերոց չերառնալ ըզձևս, բաշխեմք ուրեմն զանհատ յատկութիւն, և այլսւմ ընդհանուր իմն: Ասյոսիկ ևս վարդապետութիւն ընդդէմ վերնոցն, ասյ զամենայնն մտաց. այսպէս Քանթ, Ղէիպնից, և նոցին հետևողքն: Երրորդ՝ Անուանականացն է դաս, որք ասէին չլինել ի բնութեան ընդհանուր իմն յատկութիւն կամ էութիւն, այլ՝ զորօրինակ տամք այսմ, կամ այնմ իրի զայս անուն կամ զայդ անուն, նոյնպէս և ընդհանուրդ՝ նախ գէզական և զանհատ առարկայ իմն

նշանակելով, յոտ վան նմանութեան և յարմարութեան այդր անուան՝ այլոյն անդամ առան. Բանք յիրաւի ոամկայն, բայց և ձրիապէս արտասանելոյ. քանզի յայնքան լեզուայն խառն և զանազանութիւն ոչ ի նմանութենէ բաւիցէ, այլ յիմաստէն գաոի այդր լինել ընդհանուր, և այդր մանաւանդ կամ սեռակ են. զորօրինակ Յունարէն մարդոյն անուն ἄνθρωπος, Պրդելէն Ձէ, Սլաւեներէն չո-ՀՀ, Վլաքներէն (homo) են, որք ոչ երբէք նմանին միմեանց, բայց և ընդհանուրք են. ուր պիտոյ զի բաղդ հարկաւ պարտին ունել զհամեմատ ինքեանց իմաստ, գոլով նոցա միջնորդ արտիցն գաղափարայ; Եթէ չէին գաղափարք, զիա՞րդ լինէին ձայնք յայտնիչք գաղափարայ. զի խորհիմք՝ նմին իրի և խօսիմք, ոչ թէ զի խօսիմք՝ նմին իրի և խորհիմք։

ՄՕՒ. Ընդունելով զծանօթութիւնս իրացն ըստ վերոյիշեալ եղանակի, հետեւի ըմբռնման մերոյ հարկաւոր և զօրութիւնն գաոելոյ, որ է երկրորդ գործողութիւն մերոյ (Ի. ԻԸ.). զոր ինչ առաջաւ զգաոողութենէ անդ ի Տիալէկտիկայն, զայն ամենայն ընթերցանել ձեր, միտ դիք և առաչելոյս. նախ՝ ըմբռնելով զինն արդեալս, զարտ է երկրորդ՝ զի բաղդաւոյ զնոթական ընդ վերնագրին, և երրորդ՝ ըմբռնել դյարմարութիւն և զանյարմարութիւն վերնագրի ընդ նոթականին. զորօրինակ զՊետրոս և զիմաստութիւն՝ արդեալս ի միտ առնուլ. երկրորդ՝ արտ է զի բաղդաւոյն Մ---ՐՒ-Ն ՔՒ-ՏԷ ընդ ԲՐ-Ի-Ն ՊԵՏՐ--, և երրորդ ըմբռնել՝ թէ իմաստութիւնն յարմարի Պետրոսի սերտելս, ասելով Պետրոս է իմաստուն։ Արդ են առարկայք ընդհանուրք՝ բազայայք մերոյ, զորս իսանանելն անդ հայեցողական ի միտ առնու. զորօրինակ չիք ներգործութիւն առանց բանաւոր պատճառի, բոլորն մնձագոյն է՝ քան զիւրաքանչիւր մասն իւր, Աոաւաձ բարի է, արդար է, 3 և 3 առնեն 10 են։ Սոքա զառաջին բազայայս ճշմարտութեանն առնուն զգնոն, և միտք յակաո թեթեւանիլ ըմբռնել, բազդաւել, և յարէ վերնագրին յնոթական. քանզի չիք երբէք ստա-



կոյս գնոցանէ, և հայեցողական ի գերագոյն իմն եղանակս ճանաչէ գնոսս։ Են և առարկայք որք ի նոյն գնոթական խորհրդածութեանց մերոց են, և անմիջապէս պատահին ի նոյն հոգին. նմին իրի միաք մերոյ ոչ գնոցանէ առաքակոյս իմն կարէ ունել. քանզի ի նոյն հոգին ակաոալ, ի նմին կատարին. այսոցիկ անդամ ճշմարտութեանց տամք զանունս ՆԵՑԻՒ ՀՇ-ՐՈ-ՐԻՒ-Ն և ՀՓ-Յ-ՐԻՒ-Ն ՀՓ-Ց, զորս միաք իրրև կարողութիւն խոզճի մերոյ յատակ բնդունի. Զայսոցիկ ճշմարտութիւնս անդամ խոզճ մերոյ ըմբռնէ, բազդատէ գնոսս, և յարէ թէ ՆԵ ՆՀ Ա՛Ց ՀՐՈՐԻ-Ն կամ ԻՐԱՒՈՒՔ Ի՛Ն Է, ևն։ Սոքա անդամ ճշմարտութիւնք նպատակք մերոյ իրր իմնացական կարողութեան հոգւոյն անկախ ի զգայութեանց անտի են ի մեզ և ճանաչին ի մէնջ։

ՄՕՒ. Սրդ երկու են և զգաոմանէ իմնատասխրացն կարծիք. Նախ՝ ոմանք ասեն թէ գործողութիւնն գաոողութեան ոչ վերաբերի մերոյ՝ այլ կամացն. բայց յայներաւթ, քանզի առարկայն մերոյ է ճշմարտութիւնն, և առարկայն կամացն բարութիւնն, գաոել՝ թէ 4 և 4 առնեն 8, է ճանաչել գիմնացական ճշմարտութիւն, ոչ թէ առնել կամ հետեւիլ այնմ. և եթէ գաոելն վերաբերիր ոչ մերոյ՝ այլ կամացն, ապաքէն առաքինի հիմնայատակ ակիզբն բարոյականութեան. քանզի ամենայն գաոողութիւնք կամաք և ազատութեամբ եղեալ համարիր, և եղանիր անոնք անուանգրութիւնն, թէ ոչ գի ճանաչմամբ գչարութիւն՝ նմին իրի այնմ հետեւիմք, այլ հետեւիմք՝ գի կամաք գչարն առնել կամիմք. և առ բազում գործիմք կամաք և ազատութեամբ գչարութիւն ընդդէմ գաոողութեան և ակզբանց մերոց մերոյ, գաոիմք մնօք, զորօրինակ լինել չար, հետեւիլ ցանկութեանց և առփանաց, բայց և ի վերայ այսր ամենայնի չարութեամբ կամացս հետեւիմք. գի գոլով մերոյս հարկաւոր կարողութիւն հոգւոյ, քանզ ոգանդրեալ առարկայիցն՝ և ներկայանալ բնականապէս մերոյն, անհնար է չճանաչել կամ չգաոել զոյնս լինել բարի կամ չար, թէպէտև ընդդէմ լինէին նմա. իսկ

եթէ դառնալ կամայն վերաբերեր, ամենայնիւք ո՛չ երբեք մնօք իրեանց դառէին թէ յետ անցանելոյ կենացս կայ ինչ նոցին մնալ և տանջանք. դառն քաջապէս՝ թէ երթիցեն յանդունդն թէ և դառագութիւնք այդ ընդդէմ լինի կամայ իրեանց. իսկ եթէ գործոցքիւն դառանան վերաբերեր կամայ, ապաքէն ո՛չ երբեք կամք ամենայնայն դառնալ կամէր՝ թէ երթիցեն երբեմն ի դժոխս:

ՄԾԹ. Հասակ ուրեմն առնն և այլք՝ թէ գործ դառագութեանն չունի պէտս նախընթացութեանն գաղափարոյ և պարզ ընդունմանց, բայց և առքս յաներաւոր. քանզի առ ի դառնալ թէ Պետրոս մարդ է, պարտ է նախ՝ ընդունել պարզապէս թէ զինչ է Պետրոս՝ և զինչ մարդ. նոյնպէս Պետրոս է խնամառուն, զՊետրոս և զխնամառութիւն: Երկրորդ՝ բազդատել պարտ է զնոքաւկայն ընդ վերնադիրն, և եթէ իցէ յարմարութիւն ընդ մէջ երկուցն, յարին միմեանց, թէ ո՛չ մեկնին ի միմեանց: Երրորդ՝ ըստ Սուրբն Թովմայի՝ միտք մարդոյ, ի զօրութենէ անցանելով ի գործողութիւն՝ այսինքն յանկատարէն ի կատարեալն՝ գործէ. այսպէս նուաստագոյն է պարզ ծանօթութիւն ընդունման երին, քան զծանօթութիւնն գաւոգութեան երին, որ կատարեալագոյն է: Ուրեմն հարկաւորապէս պարտ է նախ՝ ընդունումն պարզ իրոց իբրև նիւթ և թէութիւն առանց որոյ ո՛չ, այսինքն ոչ կարէ լինել գործ գաւոգութեան. զորօրինակ ոչ չինի առնն՝ թէ ո՛չ կանխագոյն պատրաստին քարինքն:

---

## ՄԱՍՆ Բ.

ՄԿ. Միտք մարդոյ ո՛չ անմիջապէս և հայեցողապէս կարէ ճանաչել զամենայն ճշմարտութիւնս և միշտ, այլ զոմանս անմիջապէս, և զոմանս միջնորդութեամբ իւրաքանչիւր տեսլեանն զանունդ ՝ , և երկրորդին ՝ . բայց երկոցունց իսկ մի ենթակայ է միտքն,



և պաշտամունք մնայ երիակի են. միոն՝ այն է ճանաչել հայեցողապէս զոմանս ճշմարտութեանց, և միւսն՝ միջնորդութեամբ բանաւարութեանն. և երկոքին իսկ անփական են գործողութեան հոգւոյ, և չկարեն ի զգայութենէ անտի ո՛չ միոն և ո՛չ միւսն. բայց զերկրորդն կոչեմք բանաւարութիւն, և յիրաւի. քանզի տարակուսանալ մնայն զճշմարտութենէ առարկայի ուրուք, զոգեաց խօսի բանիւ ընդ միտս իւր՝ առեալ. զորօրինակ եթէ տարակուսէր թէ հոգի մարդոյ է առեղծեալ յՍ.բարչէն, ասէր. չիք ներգործութիւն առանց ներգործի պատճառի. իսկ արդ հոգի իմ՝ ոչ է ի յատիանէից, այլ արարած և ներգործութիւն. ուրեմն է յՍ.բարչէն առեղծեալ. քանզի առաջաք ի Տրամաբանութեան անդ (Լ.) թէ անծանօթ ճշմարտութիւնն բազդատի ընդ ընդհանուր և ծանօթագոյն ճշմարտութեան. եթէ յարմարեսցի ընդհանուրդն, առաքէն ունիցի ի հարկէ ճշմարտութիւն նորա. թէ ո՛չ՝ հակառակ լինի այնմ, կամ ո՛չ յարմարեսցի. և քանզի հարկաւորապէս տարակուսելի ճշմարտութիւնն փոքրագոյն գոլով պարունակեսցի ի մեծագոյնն, խօսին միտք և առանն. եթէ չիք տարակոյս զմեծագունէն և զընդհանրդն, և ո՛չ զմանաւորէ նորա. քանզի մանաւորն պարունակի ի մեծագոյնն, ապա թէ ո՛չ մի և նոյն իմն լինէր և չլինէր ի միասին ճշմարիտ. քանզի զինչ է բնութիւն բոլորին, նոյն լիցի և բնութիւն մանաւորին. և թէ յորոց երկու միաբանին ի մի ինչ ընդ երրորդ իմն՝ միաբանին և ընդ միմեանս. ամենի իրի է՝ զի դասական փիլիսոփայք առհմանեցին զյետոյն տարբերութիւն առեալ ի զուարթնոց անտի՝ թէ [illegible] և [illegible]. և տարբերութիւնն ընդ մէջ հրեշտակաց և մարդկան այս է, զի հրեշտակն զոր ճանաչէնն հայեցողապէս և անմիջապէս, ոչ մարդիկ առ բազում նեղասաւք բանաւարութեան և բազդատելով զմին ընդ միւսն և չափելով զիսոն և ճանաչեն. բայց լաւագոյն է ճանաչել զիմն հայեցողապէս և անկն յանդիման՝ քան թէ միջնորդութեամբ և չափով իւրաքանչիւր:

ՄԿՈ. Սակս ամենի իրի է՝ զի մեծ խորութիւն գնի

ընդ մէջ իմաստութեան և գիտութեան. նորա է հայեցողական ճանաչել զառարկայս, և առանց բազդատելոյ ընդ նոսա ընդ այլ ճշմարիտս սկզբունս ի մէտ առնուլ անմիջապէս զիմաստան, յորմէ և իմաստութիւն և գիտութիւն կոչի ծանօթութիւնն այն՝ որ առացեալ լինի և ճանաչի նպատակաւ փաստարանութեան և ցուցման միջադէպ վասն որոյ լաւագոյն է առել իմաստութիւն Աստուծոյ քան զիտութիւն Աստուծոյ. և եթէ երբեմն անդամ գիտութիւն Աստուծոյ ասացանդ զրի և լսի, այդ անկատարապէս և անբնականէս. քանզի ամենայն ինչ աստուածային մնացն մերկապատրանոց և բացայայտ կայ, և բացայայտին չէ գիտութիւն, այլ ասն գիմաստութիւն անվնասիկոյ մնացն, բայց

ՄԱՐ. Թէպէտև զանազան իմն գոյացս թուոյն բնական կարողութիւնն յիմացականէ անտի, կամ լաւ ևս առայիւ՝ պարտուն նոցա զանազանիլն ի միմեանց, բայց գիտութեանն կամ բանաւորութեան հիմն՝ իմացականն է. քանզի կանոն բանական կարողութեանն է միշտ առնուլ ի ձեռին զբացայայտ և զճշմարիտ և զընդհանուր սկզբունս, որք առարկայք են իմացական կարողութեան մերոց, առանց որոց սկզբանց անհնարին է զի հաւաքբանութիւնն յօրինեսցի. քանզի գիտաց գիտացիդ թէ այս ինչ ճշմարիտ է կամ սուտ, առանց զի նախ՝ ի ձեռին ունիցիմ զանեղարակուսելի ճշմարտութիւնն՝ իբրև զկշիռ արդարութեան և զկանոն հաւատարմութեան: Իմաստութիւնն ուրեմն առաջնորդեսցէ կանխագոյն գիտութեանց մերոց, և ո՛չ գիտութիւն իմաստութեան. և քանզի ի միտ առնումբ՝ նմին իբրև և գիտեմբ, ո՛չ թէ գիտեմբ՝ նմին իբրև և ի միտ առնումբ:

ՄԱՐ. Հաւսկ ուրեմն գիտել պարտ է՝ թէ բուսուցմանեղեան զանազան մնացն, են ևս զանազանութիւնք ընդ մէջ գիտութեան և իմաստութեան. քանզի են ճշմարտութիւնք իմացականք, որք առ աչխարհիկս գիտութիւն են, չլինելով ծանօթութիւնք գոյ ստուգ և ծնունդ մնոց նոցա, այլ լուծուլ և յայլոց անտի առեալ: Են ևս ճշմար-



տութիւնք իմացականք վերնոցն, և մեզ մարդկային մտաց գիտութիւն: Եւ հասակ ուրեմն միտք դերագոյնք ունին գիմաստութիւն դերագոյն, ճանաչելով լիովին քան զայլս՝ զառարկայս, զպատճառս, զսկիզբն, զներքին յատկութիւնս բնութեանց նոցին առարկայից, և զկատարելչս բնութեան նոցա. ամին իբր դերագանցագոյն է իմաստութիւնն դերագոյն էակին՝ քան զարարածոցն իմաստութիւն և գիտութիւն, որք ունին զբարձրագոյն և զնուաստագոյն աստիճան ծանօթութեան և ըմբռնման. զի թէպէտև զորօրինակ յաչս ոսմիկայ չի բիլնս ամենեքեան առանց միմեանց հասարակք երևիցին, բայց յոյժ խորին յաչս աստեղաբաշխիկ. այսպէս և բազում ճշմարտութիւնք՝ առարկայք իմացական և բանական կարողութեան հոգւոյն,

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՑԱՂԱԳՍ ՑԻՇՂԱՒՈՐԵԱՆ ՀՈԳՒՈՑ, ՄՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԿՈՁՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՑ

ՄԱՐ. Հոգի մարդոյ՝ որպէս յայտ է ամենեցուն ի հանապազօրեայ փորձոյն, ունի զկար զօրութեան, զիմանալոյն առացեալ ծանօթութիւնս իւր, և զնուաստագոյնս յետոյ վերոյհին ի միտս բերելոյ, և իբրև զիւր զառանձին ծանօթութիւնս ճանաչելոյ. այսմիկ կարողութեան հոգւոյն տուեալ անուն, և յայտմ միայն զանազանին յիշողութիւնն ի հիշել կամ ի հիշել. քանզի նա բնականապէս առացեալ լինի, կամ լաւ ևս առ՝ յիշողութեամբ առարկայք ներկայանան առանց իմն մտացն հնարելոյ, զոգացս յանկարծակի. և մտածութիւնն կամ մտաբերել պիտի է՝ յորժամ միտք վառակին առ ի յիշել զանցեալ ծանօթութիւն. բայց առ ի չլինելոյ սորա ներկայ՝ ի կիր արկանել զհաւաքաբանութիւնս նոյնաւսուս և յարաբերականս, և առանց նոքին՝ զանցեալս,

Աչխոյէս զի չիշողութեան Ձանօթութիւնք վերանորոգեալք պատահին մեզ բնականապէս, և ինքնակին. իսկ մոռացողութիւնն առացեալ լինի Ձանօթութեամբք, կամօք և հնարիւք։

ՄԿԵ. Չիշողութեանն թէութիւնք են նախ՝ զի միայն զկորուսեալն երբեմն վերանորոգեցէ՝ կամ առասցէ. ապա թէ ո՛չ լինէր չիշողութեան Ձանօթութիւն, որ է զմեռացեալն վերստին ի միտ ածել որ և իցէ հնարիւ, թէ՛ բնականապէս՝ թէ՛ կամաւոր միջնորդիւ, այլ նոր Ձանօթութիւն կամ դիտութիւն։ Երկրորդ՝ պարտ է զի միայն Ձանիցեն՝ թէ իւր էին Ձանօթութիւնքդ այդոքիկ յառաջագոյն. ապա թէ ո՛չ չկարէ դատել ոմրագէս, թէ ՚ի ՚ի ՚ի ՚ի. և չկարէ անվհատանալ ինքեան իսկապէս զիւրաւունս նոցին Ձանօթութեանց։ Երրորդ՝ պարտ է զի որոշիցէ զչիշեալ Ձանօթութեանցդ զանցեալ ժամանակն և զներկայն, թէ յայնմ ժամու առացան, և յայսմ ժամու վերանորոգեցան ի միտս. ապա թէ ո՛չ չկարէ նմանապէս ինքեան անվհատանալ զՁանօթութիւնդ, առանց որոյ միշտ ի տարակուսի կայցէ, արդեօք ներկայ Ձանօթութիւնքս կամ եղեա՞լ էին երբեմն՝ թէ նորոգ առանամ զնոսա. նա զի Ձանօթութիւնք Ձանօթութեանց նմանելոյ աղագաւ, յերկբայս կարեն լինել միտք։ Զորրորդ՝ պարտ է՝ զի միտք ունիցի զդիտութիւն չիշեալ Ձանօթութեանցն զոնէ ընդ աղօտ, որոյ նշանն անառերիւթ է, յորժամ առարկայք ներկայանան մտացս, անդէն և անդ ճանաչեն միտք և համառնեն մինչև ցժամանակ նորոգ չիշեալ դաղափարին. ապա թէ ո՛չ՝ նմանապէս ցանդ տարակուսացի արդեօք իմ եղեա՞լ էցեն այսոքիկ Ձանօթութիւնք։

ՄԿԶ. Ըստ գերազանցութեան մտաց, են և չիշողութիւնք այլք այլոցն գերազոյնք, բայց ո՛չ սակաւք անդամ դատին միտք գերազոյնք և խորագէտք նուրբք, որք թէև քաջ թափանցեն ի խոր միտս պատճառացն իրաց և գիտութեանց, սակայն չիշողութեամբ տկար են. և են երբեմն միտք՝ որք թանձր և ի խորին իրացն խնամս և գիտութեան հասանելոյ անկար, սակայն ի չիշել զանցեալ ժամանակս զվէպս ամենայն պարզապէսք մանրամասնաբար՝ խոպան երջանիկ. այսոցիկ չեն պիտոյ փաստք, մերթ ինքեաք ի ձեզ են։

ՄԿԷ. Արդ յայսոցիկ յայտ է՝ թէ՝ որ և իցէ չիշողութիւնն չկախէ, չկապէ ինքեանց կամ չզոյութեանց անտի, այլ գործ մտաց, և կարողութիւն կամ առարկելի հոգւոյ, և յայնմ տարբերի ի յանասնոցն. քանզի անասնոցն չիշողութիւն զգայական, այսինքն երևակայութիւն իմն՝ որ Ձափի ինձ միջնորդութեամբ զգայութեանցն մարմնեղինաց և բնական զգացմանցս. և սովոր է յարուցանել ի նոսա զգոյութիւնն կամ զգաւ առացեալ յառաջագոյն յայլ նման զգայութենէն կամ ի ցաւոց. զորօրինակ եթէ ոք հարկանէը ցգոլով ի մտանել անասնոյն յախուռն, երկրորդն եկեալ ի դուռն չմտանէ ինքեաք՝ այլ կայ և երկընչի. երրորդն եկեալ դողալով մտանէ, այսպէս առասլիք զայլ և այլ տեսակաց անասնոցն՝ որոց բան խառնեցեալ և առաւելութեան զգայութեանն, խիտ և առաւել են զգայութիւնք և յզգայութենէ Ձափեալ երևակայութիւնք կամ երևակերպութիւնք։ Բայց ոչ այդպէս է միտք և մտացն մարդկայնոց չիշողութիւնք, յորս են հոգեկան գործողութիւնք, այսինքն ճանաչելոյ զյարաբերութիւն անցելոյ ժամանակի ընդ ներկայիս, որոշելոյ զնոսա ի միմեանց, և տալոյ իւրաքանչիւրում զինոսա եղեալ և առացեալ Ձանօթութիւնս, յորոց զուրկ գտանին խոպան անասունք, և մի միայն նմանութեան աղագաւ, որպէս զըմբռնմունս, նոյնպէս և զչիշողութիւն, զոր յատէս բնական զգայութիւն և երևակայութիւն կամ անբան սովորութիւն համարիլ պարտ է։

ՄՂԴ. Որպէս ծանուցաք զյիշողութենէ, նոյնպէս զկարողութենէ երևակերպութեան, որ նուազ կամ առաւել զերպագոյն յայս ոք դտանել կարէ՝ քան յայն ոք, ըստ սրամտագրութեան և պարագայիցն աճեցողութեան



մարմնոյ, նորութեան կազմուածոյ, հասակի, երկրին հայրենեաց, կրթութեան ևն. յորոց կախի սրութիւն մտաց և երևակայութիւն: Ուստի է՝ զի որ դիւրաւ ազդի ազդի երևակայութիւնս և ձևս հնարէ՝ կոչի երջանիկ կամ սուր երևակայութեամբ, և ընտիր բանաստեղծ, գոգցես առեղծող. զորօրինակ այնց որք անցեալն իցեն, և այնց որք չեն իսկ ի բնութեան, բայց յերևակայութեան պատկերահանից և բանաստեղծից ունին սեղմ, ամին իրի զսոցանէ միայն և ամենակարող լինել ասացաւ ի հնութեանցս, զի զոր ինչ երևակերպէին, արձանագրէին և ի տախտակս և յանդիս. որոց ո՛չ յանիրաւի տամք զանունդ ցնորք կամ առասպելք հնութեան, աղճատելով ի բազումս զգեղեցիկ գործս բանաստեղծութեան արհեստին: Ա.ՐԴ.

ՄՂԴ. Ոմանք այնպէն՝ թէ մի միայն առարկայ երևակայութեան իցէ առարկայն աչաց, որ մինն է ի հինգ զդայարանաց, բայց յանիրաւի. քանզի սահման երևակայութեանն է յառաջ բերել զպատկերս անցեալ զդայութեանց. և թէպետև երևիլն և տեսանելն է գործողութիւն աչաց, բայց ո՛չ մակերևութապար առնել պարտ է զայդ. զի միջնորդութեամբ այլոց զդայարանացն իսկ զդայ և ըմբռնէ հոդին զծանօթութիւնս. զորօրինակ թէ ոք լսէր յեկեղեցիս Հռոմայ զգեղեցիկ իմն երգ ներդաշնակութեամբ երգեալ, միթէ անկա՞ր իցէ երևակերպել զայն երգ ի հոդին, այնու զի դտանի ի Կեսարիա. ո՛չ երբէք. զնոյն ասացի՛ք և զայլոց զդայութեանց: Երկրորդ՝ այլք ոմանք պնդեն ընդ պարագլխին իւրեանց՝ Րէիտ և Սթուարտ և Տէճէրանտօ, որք ո՛չ չատացեալ դէյ-փոյ ջէյ-ընդ միայն կոչել զերևակայութիւնն իմացական կարողութեան, ընդոստեալ յայնկոյս՝ յոյժ եռուն երևակայութեանն, ասելով՝ թէ հոդին ստանայ զամենայն ըմբռնմունս և զծանօթութիւնս իւր ի ձեռն երևակայութեան, որ սխալ է. քանզի երևակայութիւնն է կարողութիւն զդայութեանցն անցելոց ներկայացուցանելոյ անձին զպատկերս նորոդ զդայութեամբ. վասն որոյ ոչ կարէ ամբառնալ ի վեր քան զնիւթեղէնն. և զդայութիւնն որ

և գոանէ հասարակ ի յանբան անատունս, քանզի և ըմբռնմունք անատնոյն է երևակերպութիւն անցեալ ղգայութեանցն, զորս բնական ազդեցութեամբ կամ ղգայութեամբ առանան. այսպէս չունն յականել յանուանել կոչեցեալ ի տեառնէ, ի լսելն անդ զսեփական անուան իւրոյ զձայնն կամ ղղգայութիւն, զայ ընդ նմին առ ուէր իւր. միթէ մուծ կամ բանաւարութեամբ, քան. այլ երևակայութեան ղգայութեամբն՝ զոր ղգայ, և ըմբռնէ վերատին ի հնչելն յականջս իւր ձայնի անուան իւրոյ: Այսպէս և երիվարք և ոչխարք և ամենայն կենդանիք, որք գտանան ինոյն գործ ղգայութեանն, ո՛չ այլով իմն զօրութեամբ, այլ միայն երևակայութեամբն, բայց հասարակ գոլով ամենայն կենդանեաց այդ կարողութիւն, ոչ վասն այսր չունն լինի մարդ՝ կամ երիվարն և ոչխարն. ուրեմն յայժ նուաստ կարողութիւն իմն է երևակայութիւնն քան զիմացական կարողութիւնն: Բայց և

ՄՂԵ. Ի վերոյ այսր ամենայնի կոչել կարէ զիմացական կարողութեանն քան զնոյն ղգայութիւնն. քանզի գոլով ընդ մէջ երևակայութեանն և իմացականութեանն մերձաւորագոյն իմն կապակցութիւն, միմ միւսոյն հետևի. և այդ բնականապէս պարտի պատահիլ. քանզի գոլով մարդոյ բազադրութիւն ի հոգւոյ և ի մարմնոյ՝ չկարէ խորհիլ առ բազումս՝ և ըմբռնել զիմն առանց օժանդակութեան հասանելոյ նմա զգալի իմն կամ նեղթեղէն պատկերի. զորօրինակ յարտասանելս զդաղափարդ՝ հարկաւ ենթադրին ծառքն, և ոչ կամիմք երևակերպել զիմն առանց անդէն և անդ իմանալոյ մտացն՝ թէ այս գաղափար նշանակէ զայս կամ զայդ մարդ կամ ջծառ, ևն. զորօրինակ թէ ոք խորհիցի չինել պալատս, եթէ ոչ ներկայացուցանէ նախ անձին գոնէ երևակայութեամբ ի մտի զայլ պալատս՝ իբրև չինեալ և յարդարեալ նախատիպ չինելոյն՝ և ոչ փոքրիկ մասին կարէ միջամուխ լինել չինուածոյն այնորիկ: Բայց և ոչ երևակայութիւնն միայնակ կարէ կատարեալ լինել. քանզի ինոյն երևակերպն՝ զորօրինակ պալատին, խելք մարդոյ նպատակ



ածելով մտաց ճանաչել զայդ օրինակ դիւրաւ և ժամանակելով՝ զի դիւրաւ ևս արտայայտացի. զի խելք չեն այլ իմն, բայց միայն պատճառ՝ հնարք կամ արուեստ մտացն, որով ի կիր արկանէ զիմացական կամ զբանական ծանօթութիւնս իւր արտաքս. և խելագար է՝ որ բռնադատէ զմիտս յանուղիղն:

ՄՂԶ. Որպէս ասացաք (ՄԿՀ.) թէ յիշողութեանն մեծագոյն նպաստ է մտադրութիւնն կամայ առաջին ըմբռնման, որով դիւրագիս վերանորոգին մտացեալ ծանօթութիւնք, նոյնպէս և դիւրաւ երևակերպութեան նպաստէ մտադրութիւնն. զի որքան մեծագոյն լինի մտադրութիւնն յառաջին ղգայութեան, նոյնքան դիւրին լիցի երևակերպութիւնն և ցնորդգ երևակայութեան: Սմին կրի է՝ զի մանկանցն, և որոց միանգամ ուշի ուշով միտ դնեն ղգայութեանց, կամ երկնչելով ի պիտգիս իրաց, արարածոց և անձանց, կամ յոյժ բարեկամաց և կամ սիրելեաց թշնամեաց, այնքան ուժգին յառնեն երևոյթք և ցնորք, այսինքն է ղգայութիւն զուրկ ի ճշմարտութենէ, զի համարին զսիրելիս կամ զառեղիսն կալ առաջք, մերթ բաց ի ցնորից և երևակայութենէ չի՛ք իմն այլ ներկայ. զորօրինակ բերէ Ալկերոնն երբեմն բռնաւորի ուրուք Սիրակուսայ՝ զկոդեան առաջի ի հեռուստ զգլուխ ձկանն. և սահանեցն զարհուրեալ փախեաւ ի տեղւոջէն՝ համարելով զայդ գոլ գլուխ իւրոյ թշնամւոյն, զոր առաւրըք յառաջ ինքն հատեալ էր (*). զայսմանէ այսչափ:

ՄՂԷ. Գոամբ այժմ ի քննութիւն երկոցի՝ քնարչիկ և քնախօսիկ, որոց ամենեցուն է պատճառն նոյն երևակայութիւնն. քանզի ո՛չ միայն յարթնութեան վիճակի զբաղում երևոյթս և զերևակայութիւնս՝ որպէս փորձն ցուցանէ մեզ, վերատին առանամք, այլ և մինչ մեք ի քունն եմք, դառիմք առանալ զայնպիսիս, բայց ո՛չ տիրապէս. քանզի երևակայութիւնն կամ երկոցք պատահին մեզ, յորժամ եմք ի միջին վիճակ արթնութեան և քնոյն.

(*) Յորդոր Մերոբեանց:

ղի յԱստուածոստ և ի բնութենէ անոխ ի հանգիստ և ի
կազդուրումն վաստակեալ մարմնոյ և գործարանացն ան-
կանի թմբրութիւն ինն զմարմնով և զամենայն մասամբքն,
և լքանին ինքեանց, և անկար և անընդունակք մարդ-
կային կամեցողութեանց լինին, մինչև զօրանայցեն՝ և հան-
գուցեալ ըստ բաւականին՝ առ սակաւ սակաւ իսոր թմբ-
րութիւնն թեթեւացեալ նուազի, և ընդ զարթնուլն եր-
բեմն պատահի՝ զի գործարանն երևակայութեան ար-
ձակի դեռ չարձակեալ և զգայարանացն և զգայութեանց
մարմնոյ. և անդ է սեռանալ զզարմանաց արժանի գոր-
ծողութիւնս երևակայութեան զկնդծուպատիրս. այս ոք
թագաւոր կայ, այն ոք զօրավար նորա, այս ոք մեծա-
ցեալ, և այն ոք անձկացեալ, այս ոք իբրև զարծիւս սլա-
նեալ՝ և չրջի յեւրոպա, և անդէն և անդ դարձ առնէ յԱ-
սիա, այլք ոմանք ի մահ մատնին, և այլք ոմանք պատ-
կին, բիւրաւոր երջանկութեանց և արկածից ի դէպ գան,
և յանկարծակի զարթուցեալ ի քնոյն, ցնորքդ անյայտ
լինին իսպառ. և են որք որոմին, են և այլք որք ցըն-
ծան, զի դադարին և զրկին ի յօդապարիկ բարեմասնու-
թեանցդ. և բաղումք ցնծան զի զերծան յաղետալի որ-
թեանցդ. և բաղումք ցնծան զի զերծան յաղետալի որ-
կածիցն ինքեանց իբրև իսկապէս ի քունն պատահելոց:
Եւ երբեմն իսկ ի սասակութենէ երևակայութեանն խօսին
և երազեն բաղումք բարձր ձայնիւ, երբեմն բարբանջե-
լով, և երբեմն զբառս, զբանս արտասանելով, առանց կիր-
առութեանն բանաւորութեան, և բաղդատութեան գա-
ղափարացն և դատողութեանց, առանց կարգի բառից և
իմաստից, որք երազողք կամ անուրջք և քնախօսք լսին.
և երբեմն իսկ այնքան սասկանայ երևակայութիւնն, զի
ոչինչ համարեալ զիմբրութիւն զգայութեանց և զգայա-
բանաց մարմնոյ, տայ շարժել զամենայն մարմինն և շըր-
ջեցուցանել, և անբան և անզգայ գործել իսկ. Եւ եր-
բեմն երևի՝ թէ զգայարանք սեռութեան զարթուցեալ՝
ոչ զարթնուն այնուիկ և միւս զգայարանք. զի շրջին և
սեռանեն իսկ զառարկայս, բայց առ սակաստութեան զգա-
յութեանն և դատողութեան և աղաստութեան՝ ոչ դատին



այն ։-ըշ։ ։-ըչ։-չէ։, այլ միայն ։-ըշ՝ այն է մարմնոյ մար-
դոյ. և այսոցիկ ասեն զանունդ քնաշրջիկ, որոց և եր-
կիւղն՝ եթէ զարթուցանիցես զնոսա յայդմ վիճակի շրջե-
լոյ, այնքան սաստիկս և ուժգինս ցայտեցուցանէ զնոսա,
մինչև մեռանել իսկ ոմանց ի փորձոյ անտի յայս եղեն մեզ:

ՄՂՔ. Իսկ պատճառ այսոցիկ ամենեցուն է կըրկ-
նակի. նախ ի հոգւոյ և ապա ի մարմնոյ. քանզի յմբըռ-
նել մտաց զազգի ազգի առարկայս յարթնութեանն, նո-
ցին գաղափարք ինոյն իսկ քնոյ վիճակի զարթնուն, և
հետեւաբար ինոյանէ անտի ստացեալ զգայութեանցն երև-
ակերպութիւնք, վերակոչին և նորոգին ի հոգին ի հան-
դիստ մարմնոյ: Եւ քանզի հոգին ո՛չ երբէք, և ո՛չ ակընդ-
թարթի մի գադարի ի գործողութենանց իւրոց հոգեղինաց
և յէականացն, դի չկարէ զուրկ ի մտաւանց գոլով թմբրիլ
կամ վաստակիլ, բայց անկար է արտայայտելոյ զգործո-
ղութիւնս իւր. քանզի միջնորդութեամբ գործարանացն
գործէ առ արտաքս՝ որոց կաւելորեն գադարին և գործո-
ղութենանցդ ներգործութիւնք արտաքինք: Երկրորդ պատ-
ճառ երացոյն է՝ նոյն երևակայութիւնն, որպէս ի վերն
ասացաք. քանզի գործարանաց երևակայութեան կից գո-
լով ընդ ուղեղն՝ հաղորդակցութեամբն նոցա և շարժ-
մամբ երևակայութիւնն յառնէ, և ընդ յառնել երեւա-
կայութենանն՝ յառնեն և երազք, այսինքն երևակայու-
թենանն բնական ըմբռնումն առանց զգայութենանն: Յա-
ւելլիք և զայս՝ զի առ բաղումս կարեն լինել շարժմունք
ոմանք յուղեղն անդ՝ ի շարժմանէ արեանն կամ հոգւոց
անտի յանդամանդ՝ և ի կերակրոդ հիւթից պատճառեալք,
նման որոց պատահեալքն իսկեն յարթնութեան անդ. վասն
որոյ վերստին վերանորոգին այնպէս՝ որպէս յառաջն: Եւ
այդ յայտ է անգամ, զի ի հիւանդութիւնս գաղափարք
և երևակայութիւնք հիւանդաց և երազողաց ո՛չ այնքան
կարգեալ գտանին՝ զի չունին զմարմնոյ բնական տրամա-
դրութիւն ընդ ուղղոյ նուաղեալ գործարանացն հաղոր-
դութեան ընդ գլխաւորին իւրեանց: Յայսոցիկ ամենեցուն
թագեմք նախ՝ թէ պատճառ երազոյն և այլոյն յիչելոյ է

նոյն երեւակայութիւնն, բայց անկատար. քանզի պակասի
ի վիճակի թմբրութեան գտողութիւնն, և համեմատու-
թիւն կամ բազդատիչն դազափարաց և զգայութեանց, և
եւս պակասի կիրառութիւն ազատութեան. ամենիւրի զործ-զգ-
այոքիկ՝ որպէս ասացաք, կոչին զործք մարդոյ՝ և ոչ
մարդկային։ Բ. Յայդպիսի երեւակայութիւնս և յանուրջս
ոչ երբէք կասի հոգին ի գործողութենէ իւրոց հողեղէ-
նացն. քանզի որպէս փորձն ցուցանէ մեզ՝ առ բազում
խնդիս մտաց մերոց ազդեն մեզ՝ անհինին և ցնորք երեւա-
կայութեան լինելոյ այդոյիկ ամենայն պատահելոցն մեզ
ի քունն։ Գ. Յերազին և ի քուն՝ թէև կամացն կիրք ո-
մանք լցեն նեւթապէս, բայց ոչ ազատութեամբ. քանզի
չիք ազատութիւն կամ կատարեալ կիրառութիւն բանա-
վորութեան, և չլինելով քաջ գատողութենէն մնացն և
համեմատութեան զազափարացն և զգայութենէնց՝ չկարէ
ազատութիւնն կոչիլ —ը—ի վիճակ թմբրութեան.
նմին իրի յամենայն բարոյական մասանց զուրկ են այդ-
պիսի գործողութիւնք։ Եւ Դ. Հուսկ ուրեմն՝ երազին առ-
հասարակ են երեւակայութիւնք զգայութենէնց զրս առա-
ջեալ իցեմք ի յարթնութենէն, բայց զերկրորդն երեւոյ-
թիւ միայն և ոչ զգայութեամբ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ

### ՅԱՂԱԴԱՍ ԱՐՏԱՔԻՆ ԶԳԱՅՈՒԹԵԱՆՑ

ՄԴԹ. Զբաւականն նպատակին ի Տրամաբանութենէն
անդ (ՀԵ. ՀԶ. Հէ.) ասացաք. զայնոսիկ բան պատշաճին
ընդարձակագոյնս բացայայտեմք աստ։ Նախ՝ անհոյժ ըզ-
հարկաւոր թէութիւնս զգայութեան ի կողմանէ զգայա-
բանաց, առանց որոց ոչ երբէք կարէ մարդ ըմբռնել և
զգալ. երկրորդ՝ զթէութիւնս ի կողմանէ առարկայից.
երրորդ՝ թէ քանի պատրաստեալ յիւրոցունց կողմանցն
թէութենէնց՝ զինչ իւրէ նոյն զգայութիւնն և բնութիւնն նորա



3. Եւ նախ՝ զգայարանք գլխաւորք հինգ են. աչք,
ականջք, հոտոտելիք, ճաշակելիք կամ քիմք, և շօշափե-
լիք, յորոց կախի կեանք զգայականք և զգայութիւնք
արտաքին մարմնոյ։ Կոչին տգէտ ասորին մանն մարդոյ ըստ
որում զնուաստագոյն առարկայիս բերին յեռանալ ի բարձր
մանել մարդոյ՝ այն են միտք և իմացական կարողութիւն
և բանաւորութիւն, են։ Բայց և յատորինագ են՝ որք պար-
զապէս ստորինք են, և են՝ որք ստրնագոյնք. քանզի
ոչ փոխեմբ զկատարելութիւն աչացն զգայութեան ընդ
հոտոտելեացն, և ոչ զայլ կամ զականջացն՝ ընդ ոտից, են։

30. Զգայարանքդ այդոքիկ պարտին հարկաւորա-
պէս հազորդակցութեամբն միանալ ընդ ուղեղն՝ զորմէ
պարտ է գիտել, թէ՝ ի մարդկային գազանն համեմա-
տութեամբ առեալ ընդ այլոյն կենդանեաց՝ առաւելագոյն
է քանակութեամբ. արդ յուղղոյ ատոմ սկսեալ տարածին
ոպիտակագոյն և նուրբ ջիղք ոմանք գերթակս և ցմկանեանս
և ցաղիս հազորդելով ընդ նոսա ամենեսեան՝ որք տարա-
ծեալ յամենայն կողմանս մարդկային կազմուածոյ, որք
ջղային մասունք մարդոյ անուանին, կեանս ընծրհեն աճե-
ցողական մարմնոյն, բայց և ոչ առանց հազորդութեան
ուղղոյ յորմէ բղխի յիւրաքանչիւրան ինոսա, և անտի
ընդ ամենայն մարմինն՝ հիւթ իմն լոյծ, որով զգայակա-
նութենէնն և շարժման ընդունակ լինին զգայարանք, և
ընդ հատեալ այսր հազորդակցութեան նոցա ընդ գլխաւո-
րին իւրեանց, և կամ ճնշեալ՝ ճմլեալ կամ ջնասեալ սոցա
կամ ուղղոյ՝ ամենեին խանգարի կարգ աճեցողական կե-
նաց՝ և զգայութիւնք ընդ նոսա. ուստի առ բազում
խօմութիւնք և առ բազում մանն անդամ պատահի, որ
չէ այլ ինչ՝ բայց միայն խանգարումն՝ և պակասիլ աճե-
ցողական կենաց և ֆիզիքական օրինաց մարմնոյ ի ներքին
գոյացական հազորդութենէ հոգւոյն, պատճառեալ ի
խանգարմանէ մասնակցութեան զգայարանաց և ի պակա-
սութենէ զօրութեան սկզբան գործողութենէնց՝ որ է նոյն
հոգին։ Ուրեմն առաջին թէութիւն արտաքին զգայու-
թեանց՝ է քանի արտաքոյ հիւթին և հազորդութիւն սոցին

ամենայն զգայարանաց ընդ թագաւորին իւրեանց, որ կայ անդ ի գերագոյն տեղւոջն մարմնոյ՝ ի գլուխն, այն է յաղեղն, Բ. Քանզ որպամադրեալ այսոցիկ ամենեցուն՝ պարտ է՝ զի իցէ ինոսա կարողութիւնն զգալոյ, որ է զօրութիւն հոգւոյ ընդ ներկայութեանն, որով գործդք քաջ որամադրեալք չարժիցին և գործեսցեն ներդաշնակութեամբ։ Գ. Բնական գրութիւն առարկայիցն՝ և աղդեցութիւն կամ ներգործութիւն սոցա ի վերայ զգայարանաց. քանզի ո՛չ այնքան պարտին մասունք լինել նոքին առարկայիդ՝ մինչև աներևոյթ և անզգալի լինել տպաւորութեանց նոցա. զի թէև բիւրաւոր ժճղուկք նասցին ի վերայ գլխոյ ուրուք, ոչ տպաւորին ծանրութիւնք նոցա ի մարմինն, և անտի հետևաբար և ո՛չ դոյզն զգայութեան։ Դարձեալ՝ և ո՛չ այնքան հեռի մինչև տկարասցին աչքն որոշել զայս առարկայ՝ կամ զայն. և ո՛չ այնքան ի չարժման կայցեն, մինչև յական թօթափել անցանել՝ յորոց ամենեցուն քաղեմք զգալիս՝ զգայարանօքս։ Որպէսի բնական լինել պարտի թէութիւն և վիճակ առարկայիցն. զի են զգայարանք, որք կամին ի հարկէ անմիջապէս կից լինել առարկային. զորօրինակ ճաշակելիք ի քիմն և շօշափելիք զմարմինն, և հոտառելիք զնուրբ մասունս հատեալս ի ծաղկանց, ի կերակրոց, ևն, և ընդ օդս վերացեալս, որք ի հարկէ ֆիզիքապէս միակից լինել պարտին ընդ սեփական զգայարանս իւրեանց. նոյնպէս և ականջն զձայն, որ ծագի ի փոքրիկ օդակաց մարմնոյն ընդ միմեանս հարելոց և ի հոգմոց ալեկոծելոց, որք անզգալի լինին մինչև ընդհարականիցին ի լսողական երակս կամ ջիղս հոգւոյն. ամին իրի՝ զի ալիք հոգմոցն մինչև չհասանիցեն ի չափս մարդոյ՝ հնչումն և ձայն թնդանօթի անզգալի լինի, և այնքան բազում վայրկենից զկնի լսի, որքան բազում լիցի միջոցն չարժեալ մասանցդ և հոգմոց ի լսելեացն։ Մի միայն աչագ սեռութիւն՝ միջնորդութեամբ անդ բազարձութեանն ճառագայթիցն արեգական նչմարէ զառարկայս. քանզի ճառագայթք անկեալ ի վերայ առարկային՝ անդրադառնան անտի յաչս մեր, որ առնեն զայ



առարկային լուսաւորելոյ. քանզի յառարկայէն լուսաւորելոյ չեռս դարձեալ և ընդհարեալ յաչս մեր յօրինեն ի ինձս բնականապէս զպատկեր առարկային. և այնպէս նպաստիւ ճառագայթիցս այսոցիկ նչմարեն աչք մեր զայն առարկայ։ Հուսկ ուրեմն՝ և պիտ՛րդ լինի զի զգայարանաց միջնորդութեամբն արտաքին իրացն ծագին ի մեզ զգայութիւնք և ծանօթութիւնք. զայդ ամենեսին անդիտացան և՛ նրբամիտ իմաստասէրք ցայսօր. քանզի փորձառութիւնք մեր ոչ տարածին ցայն վայր, և խիղճ մտացն վկայէ զայս միայն մեզ՝ թէ զգայութիւնք բազումք յիս պատահին, բայց ո՛չ յիմմէ անտի սկզբնաւորեցան, այլ արտաքուստ ի զանազան մարմնոց, և զղիարդն չասեն և չվկային մեզ, որով չատացեալք՝ գամք այժմ առանել զսեփական առարկայս այսոցիկ զգայարանաց՝ զորոց զվայելել կարգաւորութիւն ի մարմինն մարդկային՝ Աստուածայինն ևեթ գերակատար իմաստութեամն վերագրել պարտ է. ևն։

ՁԲ. Նախ՝ առարկայ սեռութեանն է լոյս և գոյնք զանազանք իրացն, բայց պատճառն գոնոց է նոյն լոյս արեգական վայր իջեալ յիրս և յառարկայս և անտի յաչս, զի բարձեալ լուսոյն՝ բառնին և զանազանութիւնք գոնոցն. և միջնորդութեամբ սոցին երկուց իրաց՝ և ընդ ազբիմբք ճանաչին ի մէնջ ամենայն մարմինք. և բազադրութեամբ սոցա՝ և ի չնորհս սոցա միայն է ամենայն վայելչութիւն արարած բնութեան, որ կամ բնականապէս՝ զորօրինակ ծիրանի գօտին և գեղեցկութիւնք ծաղկանց՝ անկոց և պաղոց նոցա և արարածոց յԱստուածոյ անտի եղեալ է ի կարգի բնութեան և կամ արհեստիւ և խելամտութեամբ մարդկան, որք զի բնութեան զգանազան գոյնս ի մի բազադրեալ յօրինեն ի բիւրաւոր վայելչութիւն իրացն։

Երկրորդ՝ լսելեացն առարկայք են հնչմունք և ձայնք զանազանք գոգցես այնքան որքան զանազան անձինք և իրք թուին՝ և են նխութականք։ Նոյնպէս համք քանցն և հոտք հատատելոցն բազմադպիք և բազմապիսիք. նոյն-

պէս չօշափելեացն առարկայք բաղումք, ըստ բաղմութեան նիւթական արարածոց. այսպէս կարծրն՝ ի կարծր իրաց, կակուղն՝ ի կակղէն, ցրտութիւնն՝ ի ցուրտ իրաց, ջերմութիւնն՝ ի ջերմոցն, և յատկութիւնք նոցա՝ լայնութիւնն, բարձրութիւնն, ձև կամ պատկերն, ևն, որք ամենեքին են գործիք ներգործական ենթակային, որովք գամք ի գիտութիւն գոյութեան և գոյացութեան երեւութից առնոյն արարածոց։ Ապաքէն ըստ կարգի բանիս՝ ժամ է խօսիլ զընութիւնն եղանակացդ զգայարանաց, որք են գոյնն, հասն, հոտն, ձայնն, ևն, զորոց առ միանգամ եղեալն ի միոջ լուծումն յիշակարանութեան անդ (ՃՐ. ՃՓ.) հրաւիրեմ զձեզ։ Մեք զինչ իցէ նոյն զգայութիւնն զոր յերրորդ տեղի եդաք՝ ի քննին մատիցուք։

ՅԳ. Գիտելի է նախ՝ թէ այլ է ապաւորութիւնն առարկային յարտաքուստ ի մարմինն մեր պատահեալ, և այլ նոյն գործն զգայութեան յետ ապաւորման հետեւեալ. արդ ապաւորութիւնդ կամ ճնշիլդ այդ՝ յարտաքուստ իմն ի զօրութենէ ի մարմինն մեր պատահեալ՝ կրաւորական կարողութիւն է, և գործ զգայութեան է ներգործական՝ ի ներգործիչ ենթակային ծագեալ. այսորիկ ազագաւ՝ բայդ ընդ ներգործական է յամենայն լեզուս։ Առաջին թէութիւնն զգայութեան՝ է արտաքին ընդհարումն մարմնոյ և իրաց անմիջապէս կամ միջապէս ի մարմին մարդոյ։ Երկրորդ թէութիւնն՝ է քաջառողջ լինելութիւնն զգայարանացն՝ և քաջ արտադրութիւն նոցա և ջղացն և երակացն ընդ ուղեղն՝ ի ձեռն յարուցեալ և անարգել հնչման լոյծ հիւթոյ ուղղոյն յամենայն մասունս։ Երրորդ գործողութիւնն զգայութեան՝ ներգործիչ ենթակայէ։ Արդ թէպէտև առաջինն այսոցիկ թէութեանց՝ է գործդ և ապաւորութիւնդ արտաքուստ մարմնոյ, բայց նոյն գործն զգայութեան է ի ներքին ներգործական կարողութենէ հոգւոյն, որ զօրէն առն ի քունն եղելոյ՝ զօրութենէ հոգւոյն յառնէ ի քնոյ անտի՝ պատճառաւ կամ առիթ ձայնին յականջս հնչեցելոյ. մինչ է գործողութիւնն յառնելոյ հոգւոյն՝ պատճառեալ ներգործականապէս



ի հնչմանէ անտի ձայնին, ո՛չ ապաքէն ներքին բնական և ներգործական զօրութեամբ իւրով յառնէ ի քնոյ այդպէս, եթէ չէր ինձա զօրութիւնն ներգործական ներքին և հոգեղէն՝ հաղորդեալ զգայարանացդ՝ զիա՞րդ յառնել կարէր ի խոր թմբրութենէ անտի. մինչ ո՛չ հոգին է մի ևեթ սկիզբն և պատճառ ամենայն զօրութեան, չարժմանն և գործողութեան. բայց ո՛չ առանձին առեալ ինքնին միայնակ ենթակայ է թէ՝ կրաւորական կարողութեանն՝ այն է ապաւորմանդ արտաքին առարկային, և թէ՝ ներգործական կարողութեանն։ Առարկայք ընդհարեալք ի մարմինն մեր ապաւորին ինձա, կամ ճնշին զնա. և ի ապաւորութենէ յայսմանէ իբրև յառիթէն՝ հոգին՝ որ տարածեալ՝ և կամ լաւ ևս ասել՝ ներկայ գոլով յամենայն մասունս մարմնոյ, նոյն ընդ նոյն ըմբռնէ՝ թէ ապաւորութիւնդ այդ ո՛չ միայն մարմնոյ յառաջ գայ, այլ յայլմէ ևս մէկէ. քանզի զայն ևս զանազանեն խիզճ մտայն, քննէ՞ կամ ի յընկերակցէ՞ն իւրմէ իցէ ճնշութիւնդ այդ՝ որում յաւէտ կից կայ և ենթակայ. եթէ յայլմէ արտաքին մարմնոյ իմէ, որում չէ ենթակայ, և ի միասին ղգայ զընութիւն այնր արտաքին մարմնոյ՝ յորմէ ելն ապաւորութիւնդ այդ։ Քանզի զգայ զգրաւութիւնն, զգայ զչերմութիւնն, զգայ զծանրութիւնն, և միով բանիւ զզանազան եզանակս և զնեւրգործութիւնս, որոց առիթք հարկաւ զանազան լիցին բնութեամբ։ Զարձեալ՝ հոգի մարդոյ զգայ զինքն պատահիլ թէ ցաւոց և թէ ախորժանաց. եթէ ապաւորութիւնդ այդոքիկ յարմարեացն ֆիզիքական օրինացն մարմնոյ, և բան կանոնի նորա լիցին, հաճոյական զգայութիւնք կամ հնչտալի լիցին. թէ ապաւորութիւնդ ընդդէմ կանոնաց ֆիզիքական օրինացն մարմնոյ լիցին, յայնժամ պատճառեն հոգւոյս ցաւս ի մարմնի և զվիշտս, ևն. ևն։

ՅԴ. Արդ զգալ պիտի՝ է ըմբռնել զգայարանօք զարտաքին իմն առարկայ, և անբաժանելի է գործն զգայութեան ըմբռնմանէ. քանզի զգալ և ոչ ըմբռնել պարզապէս զգայութիւնն՝ է զգալ, և ոչ ըմբռնել. կամ է զգալ՝

բայց անգէտ ճնալ զգայութենէն. իսկ արդ զգալ և ոչ ըմբռնել թէ ինչ է զգայեալն՝ է զգալ զոչինչ. ուրեմն ի հարկէ կից լիցին միմեանց երկու գործողութիւնքդ այդոքիկ զգալոյ և ըմբռնելոյ, զի զգայութեամբ և ըմբռնեմամբ բերիմք յառարկայս՝ և զգայութիւնն հարկաւ լինքն պարփակեալ ենթադրէ զըմբռնումն, թէպէտև ըմբռնումդ այդ դոզցես զգայական լիցի, այն է խառն ընդ զգայութեան զգայարանաց, և անկատար և անպայծառ։ Ուրեմն առ ի զգալ բաց ի տպաւորութենէ մարմնոց, բաց ի տրամադրութենէ զգայարանաց, և բաց ի ներկայութենէ ենթակային, և գործութեան նորա պարտ է՝ զի ի պարզապէս ըմբռնումն իսկ լիցի զգայութիւնն։

36. Առարկայք, յորոց տպաւորութիւնքդ պարտին ի հարկէ անմիջապէս յարիլ յզգայարանս մեր, որով ճանաչեմք զարտաքին առարկայս, եղանակօքն և պատահական դոյացութեամբն հանդերձ, և եդեալ՝ թէ ամենայն թէութիւնք են առ ի զգալ՝ անհնարին է չզգալ, թէ ոչ կամիցիմք յանտեղիս դիմել, այն է զլինելն և զչլինել ի միասին պաշտպանել։ Եւ ամին իրի քաջ յուցանի ընդդէմ Սկեպտիկեանց իրական և ֆիզիքական դոյացութիւն արտաքին մարմնոց, զոր ի կասկած ածել չկարեն Ներբրեհանք՝ զորոց զմելար վարդապետութիւն դեղեցիկս և իմաստնագոյնս գրեալ Մալբրանշ ի դիրս իւր (*)։ Զայս միայն ասեմ թէ՝ որպէս առաջին բացայայտ սկզբունքդ մտաց յաւէտ անհրաժեշտ՝ քան թէ յուցանին, նոյնպէս անմիջապէս առարկայք զգայարանաց լաւագոյն եղանակաւորեալք անդամ, թողուն զի յուցանին. վասն որոյ առանձին՝ եթէ նախակարգեալ թէութիւնդ իցեն, անհնար է ընդհանրապէս առերեսիլ զգայարանաց։ Եւ նոյն իսկ ընդդէմ իմաստութեան Ակադեմիկոսացն լինելը՝ կարգել զգայարանս իբրև նպատաստ և գործիս մարդկային կենաց և վարձանին, բայց գործիք անկատ, անչահ, նմա մանաւանդ ինքնակատ կենացս. քանզի ամենայն առաքինութեանց և խա-

(*) Յորդոր դպրութեան մարդկային մտաց։



րէութեանց և տպաւորականաց պատճառ լինելին ինքեանք նոյն զգայարանքն, և վիճակին անտանական լաւագոյն լինելը և ի վեր քան զմերն, զի գոնէ նորա հասանէին վարձանի իրեանց, և մեք զրկեալ և յետնեալ յայնմանէ. զոր անարժան է խորհիլ անգամ, թող զասելն զամենիմաստ Ստեղծէն բնութեան։

39. Թողեալ ի բաց զառարկութիւնս ոտիայն զգայարանաց, որք գոգցես մի և նոյն են ընդ այնս, զորս ի Տրամաբանութեան անդ ասացաք և գրուեցաք (ՀՐ), զմի միայն խնդիր ճնայ մեզ լուծանել, որոյ գիտութիւն կարի չահաւէտ է Աստուածաբանական վիճաբանութեանց. քանզի է առած հռչակեալ՝ թէ գործողութիւնք անձնաւորութեանցն՝ կամ անձանց են. իսկ արդ զգայութիւնն է գործողութիւն. ուրեմն անձին վերաբերի և ոչ զգայարանացն։ Նախ՝ ոմանք ուրացան զիմաստ առածիդ, թէ գործողութիւնք ոչ են անձանց, և ոմանք ըստ ճշգրիտ իմաստի բառիցն զամենայն գործողութիւնս ետուն մի միայն անձանց. բայց երկոքեանն իսկ պատճառք և կարծիք սակաւք են ի հաստատել զկարծիս իրեանց։ Գանզի նախ քան զանձն՝ է ի մարդն բնութիւն մարդկային, այն է սկիզբն և ծնողն գործողութեանց, և զօրութիւնն գործելոյ բղխի ի բնութենէ անտի. բայց քանզի բնութիւնն չկարէ գործել առանց իւրոյ սեփական եղանակին, որով կայ և զաւի և զանազանի յայլոցն բնութեանց, նմին իրի որ ինչ լինի՝ բնութեամբ լինի, որ ոչ զուրկ կարէ կալ ի սեփական եղանակէն լինելոյ իւրոյ. ամին իրի է՝ զի ամենայն գործողութիւնն չնորհի անձանց, բայց զանազանելով, ըստ որում անձն միացեալ ընդ բնութեան իւրոյ, և ոչ զաւեալ. արդ երկոցունցն միացեալ իմի՝ ասեն՝ և գործոյց ասեն զանեղ գործողութեան [illegible], այն է միջնորդութեամբ և համակցութեամբ մարմնոյ կամ զգայարանացն և հոգւոյ, ոչ թէ արդեամբ տէր է գործողութեանցն սկիզբն կոչեցեալ՝ այն է անձնաւորութիւնն, որ առանց բնութեան չկարէ կալ. և ոչ բնութիւնն առանց անձին, բայց Աստուածային զօրութեամբն բնութիւնն եր-

բնեին կարէ իսկ կալ, այլոց բնութեանն եղանակաւ՝ և ոչ իւրովիւ սեփական եղանակաւ, որոյ փոխանակ զպաշտօնն այլն գերագոյն քան զսեփականն կարէ կատարել. այսպէս Աստուածային խորհուրդն մարդեղութեան, ըմ մարդկային բնութեան առանց իրիք ինաստ Աստուածային բանին անձնաւորութիւնն յինքն միաբանեաց կամ միաւորեաց զմարդկայինն Քրիստոսի բնութիւն, և գործեաց զԱստուածային և զմարդկային նորա գործողութիւնս մի և նոյն բանին Աստուածային անձնաւորութիւն։ Եւ ևս գործողութեանցդ մարդկայնոց նոյն իսկ իմաստն պահանջէ՝ զի յերկուց կողմանց լիցի գործողութիւնն. յոկզբնէ չարժմանց և զօրութեան՝ և ի մարմնոյ. քանզի անուանդ մարդ է բաղադրութեան անուն ի հոգւոյ և ի մարմնոյ, ոչ մարմինն կարէ գործել զիմն առանց հոգւոյ, և ոչ սա առանց նորա. այլ զօրութիւնն գործողութեան ի հոգւոյ անտի է, բայց ի հոգւոյ՝ որ գործէ միջնորդութեամբ մեքենայիցն իւրոց զգայարանաց, և ոչ առանձնապէս՝ զօրինակ յղղայութիւնս. տես զի՞նչ ասէ գերիմաստն Ղեւտաւիոս զաւագէս զայսմանէ (*). « Ուր, ասէ՝ դիւրաւ ի միաբանութիւն կոչել կարեմք, թէ՛ զայնս՝ որք ունին զայսաւաժ, և թէ՛ զուրացողսն այնորիկ ». քանզի մինչ են թակայն, կամ անձն կամ անձնաւորութիւնն չէ այլ քան՝ թէ ոչ նոյն անհատ բնութիւնն եղանակաւ իւիք զգաժեալ, որ եղանակն ոչ յաւելու զիմն էութեան, և ոչ այնմ վերաբերի. նմին իրի զոր ինչ ասեմք միանգամ զենթակայէն, զնոյնս բնութեան անգամ վերադրեմք, ոչ պարզաբար և ըստ որում յինքեան՝ կամ ի վերացեալն առեալ՝ այլ ըստ որում եղանակաւ իւիք զգեցեալ. նմին իրի գործողութիւնքն են անձանց կամ անձնաւորութեանց՝ չէ այլ ինչ, եթէ ոչ բնութեանն սեփական եղանակաւն զգաժելոյ. զի ոչ թէ եղանակն այն՝ զոր [illegible] կոչեն ի դասս ռամկօրէնս, սակիքն կամ աղբիւր է գործողութեանցն, այլ միայն թէութիւն իմն է՝ [illegible]

(*) Տիրք Ը. Գլ. Բ.։



ընդ. ուստի եթէ ճշդութապէս խօսիլ կամիցիմք, որ ճշդմարտապէս գործէն՝ է նոյն բնութիւնն, նա՛ է սակիքն գործողութեանց, բայց ոչ գործէ բնութիւնն առանց իւրոյ սեփական եղանակի կալոյ։

ՃԼ. Հասեալ արդ, մանկունք ուշիմամիտք, ի գիտութիւնն յատկութեանց հոգւոյն և առաքելական նորա, և ևս ի ձևոս բերեալ զերկուցունց մասանցդ ղնասարակ գործողութեանն գիտութիւն՝ առաջի աչաց յանդիման կացուցանիք ձեզ զորպիսութիւն և զկատարելութիւն հոգւոյդ. ծանեալք զձեզ այժմ սիրապէս՝ զի մարդ էք բանական կենդանիք՝ գերագոյնք քան զայլ ամենայն մարմնաւոր արարածս, որոշեալ յԱստուածուստ ի վիճակ գերագոյն. և ծանեալք զպատիւ անձանց ձերոց զայլն՝ զգերագոյնն քան զամենայն արարածս, այն է զԱստուածայինն. ըստ որում վկայեաց ի յատաչնոց անտի ոմն. « Ես ասացի թէ Աստուած էք »։

## ՎԵՐՋ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

# Ա Շ Խ Ա Ր Հ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՅՀ. Յաշխարհաբանութեանն առաջաբանութենէն յայտ է թէ նեբկայ դիտութիւնն է բան կամ ճառ. զաշխարհէ, այն է զբովանդակութենէ երեւելի մարմնոց և նիւթեղէն իրաց. քանզի երեք են մասնաւոր համարձակ բանութեանն առարկայք. Աստուած, մարդ և արարած բնութիւնն, Ձառաջնոյն երկոցունց, զընդհանուր գյատուկ և զամենեցուն հասարակ օրինացն և գկատարելութեանց, որովք են և կան՝ խօսելոցք. սոյնն նմանի՝ ինոյ մեզ այժմ և գերբորդէն՝ այսինքն զընդհանուր, զներբին և զամենեցուն հասարակ օրինացն, զակզբանց յատկութեանցն և գվախճանէն խօսել, Մեք ուրեմն ճառեսցուք զընդհանուր և զամենեցուն հասարակ օրինացն. քանզի իմանելն ի ջննին մասնաւոր օրինացն կամ յատկութեանց իւրաքանչիւր մարմնոց է ֆիզիքական դիտութեանն զանազան դասուց. որք թէպէտև ըստ որում ցուցանին և ճանաչին բնական լուսոյն, են իւրաքանչիւր մասունք առաջական և բանական փիլիսոփայութեանն. բայց վասն բազմութեան և մեծութեան առարկային, ինքնանք յինքնանս են գիտութիւնք առանձինն։

ՅԹ. Մարդ առաջի աչաց ունելով զսիեզերս համայն ջնիւթեղէն, թէ՛ երկնային աստեղք իցեն, և թէ՛ երկրի նիւթեղէն իրօք՝ կարեմք երբակի վիճաբանութեամբ խօսիլ զսոցանէ, կամ ի ջննին արկանելով և ցուցանելով՝ թէ առարկայք նիւթեղէնք՝ երկրայինք և երկնայինք՝ ---ն-ք և ---ի-ք-ր, բայց ո՛չ հ-ի---ր--ն-ք՝ են, և այսպիսի բնութեամբ կան. կամ յուղել և ճանաչել զակնարն լինելութեան նոցա և գհնութիւն և կամ զվախճան նոցա յարարչութեանն։ Ուստի յերիս գլուխս արօհեմք զառաջիկայ դիտութիւնս. նախ՝ զառարկաբար իսկութենէ և զբնութենէ մարմնոցն և աշխարհի. երկրորդ՝ զակզբանէ, գհնութենէ և գկատարածէ աշխարհի. երրորդ՝ գվախճանէն Աստուծոյ յարարչութեան անդ։

# ԳԼՈՒԽ Ա.

## ՑԱՂԱԴՍ ԻՍԿԱՊԼՍ ԵԻ ԳԱՏԱՀԱԿԱՆ ԴՈՑԱՑՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ՅԻ. Բազումք բազում առացին զլինելութենէ մարմնաւոր գոյացութեանցն, թէ չեն արդեամբ այնպէս՝ որպէս ըմբռնեմք զնութենէն մարմինս։ Այլք այլապէս մոլորեցան. ո՛չ միայն մարմինք արդեամբ են, այլ և հարկաւորապէս իբրև մասունք Աստուածային մարմնոյ, և աստուածք յԱստուծոյ գոլ ուսուցին։ Բազումք հուսկ ուրեմն ընդհանրապէս և անպատճառ լինել աշխարհի ուսուցին. զորոց ամենեցուն զմոլորութիւնն ցուցեալք, և զճշմարտութիւնն իրաց յուցցուք ուրոյն ուրոյն, վասն որոյ լիցի։

---

# ԳՕԴՈՒԱԾ Ա.

## ՑԱՂԱԴՍ ԱՐԴԵԱՄԲ ԵԻ ԻՍԿԱՊԼՍ ԳՈՑԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆՈՑ ԵԻ ԱՇԽԱՐՀԻ

ՅԻԱ. Նախ՝ ի յարդարել և որոշել զվիճակ վիճաբանութեանս, ասեմք թէ երկու եղեն մոլար վարդապետութիւնք, Իրականացն և Գաղափարականացն. սոքա ասացին՝ լինել աշխարհի ո՛չ իրապէս և արդեամբ, այլ մի միայն ընդ յօդս՝ ոմանցդէն խօսելով՝ այն է ի մտի ևնթ. որոց ընդդէմ եղին Իրականքն. և սոքա ևս յերկուս բաժանեցան դասս. զի ոմանք համարեցան դիտել զարդեամբ լինելութիւն կամ զգոյութիւն աշխարհի բանաւարութեանն նպաստիս։ Եւ այլքն ասացին մարմինք անմիջապէս առարկայ գոլով զգայարանացս՝ են և կան անտարակոյս, և կարդեալ են ի կարգն փորձառական ճշմարտութեանց, իբրև ճշմարտութիւնք ինքնին բացայայտք։ Մերձեցան յիրաւի սոքա առ ճշմարտութիւնն, բայց ո՛չ ի ճշմարտութիւնն. քանզի գոյութիւնն մարմնոց նոյն իսկ վկայութեամբ խզճի մտացս յուցանեմ. քանզի ևնթակայն եղանակաց և զգայմանց իւրոց զիտէ և ընդ նմին ի միտ առնու՝ թէ ցաւս այս ոչ պատճառեցաւ յինէն, այլ արտաքուստ ի մարմնոյ իմմէ. ուրեմն է մարմինն իմ գոյացութիւն արդեամբ և իսկապէս կացող. և ցուցեալ իւրաքանչիւրոցն զարդեամբ լինելն՝ անփոփոխան մարմնոյ իւրոյ, ցուցանեմ նոսիա և գոյացութիւն ամենայն մարմնոյ։ Ոչ ուրանամք՝ թէ են այլ էշմարտութիւնք անթիւք և անսահմանք մարմնոց և դրական իրաց, զորս մի միայն նպաստիս փորձի առնումք ի միտ. առանց որոյ անհնար է մեզ ծանօթութիւնն փորձառութեամբ ստացեալ, իսկ Գաղափարականքն՝ նոքա ևս յերկուս ծուէնս բաժանեցան. Ռամկականք կոչեցեալք, և Գերազանցականք։ Նոքա ուրանային զաշխարհին արտաքոյ մեր զգայութիւն, նոյն իսկ անփոփոխան մարմնոյ զլինելութիւնն արդեամբ ուրացան՝ ի միտս գոլով միմիայն պատկեր և գաղափար նոցա ամենեցուն. բայց միայն ընկալան գիտորդածութեանն ևնթակայ, և զարտայն զիրապէս զգոյութիւն։ Սոքա եղեն հինաւուրց Սկեպտիկեանք՝ որք զամենեցունց կասկածս հանին և տարակուսանս զամենայն ինչ ասացին, որոց հետևեցաւ ճարտարն Պիրքըլէյ։ Իսկ Գերազանցականքն չարագոյնք քան զառաջինան, բայց յայնոցիկ՝ զորս առաջինքն ուրացան, ուրացան և ևս զարդեամբ և գիրուղապէս լինելն հոգւոյս ևնթակային խորհրդածութեան. և կերպարանին զմարդն օդապարիկին՝ որ յօդս չրջէր։ Այսպէս Բանթ ցնորեալն, և Ֆիխթէ նոսիա գմայլեալն. մեք ընդդէմ ասացս ամենեցուն ցուցանեմք զարդեամբ լինելութեան աշխարհի գճշմարտութիւն. և քանզի զբացայայտս իրս ցուցանել վաստակիլ է զանտարակոյս տարակուսանս կացուցանել, նոյնպէս ի ցուցումն արդեամբ լինելութեան մարմնոյ կամ աշխարհի՝ է յաւէտ բացայայտել զայդ. ուստի

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Մ-ւրֆ֊ ֆ-՛ -ևէ-ւհ -ւրէե-՛ֆ ֆ-, և -՛ևէ ֆ֊-,

ՅԻՐ. Այսպէս ցուցանեմ. ցուցումն ճշմարտութեան



թեամբ խզճի մտացս ցուցանեմ. քանզի ևնթակայն եղանակաց և զգայմանց իւրոց զիտէ և ընդ նմին ի միտ առնու՝ թէ ցաւս այս ոչ պատճառեցաւ յինէն, այլ արտաքուստ ի մարմնոյ իմմէ. ուրեմն է մարմինն իմ գոյացութիւն արդեամբ և իսկապէս կացող. և ցուցեալ իւրաքանչիւրոցն զարդեամբ լինելն՝ անփոփոխան մարմնոյ իւրոյ, ցուցանեմ նոսիա և գոյացութիւն ամենայն մարմնոյ։ Ոչ ուրանամք՝ թէ են այլ էշմարտութիւնք անթիւք և անսահմանք մարմնոց և դրական իրաց, զորս մի միայն նպաստիս փորձի առնումք ի միտ. առանց որոյ անհնար է մեզ ծանօթութիւնն փորձառութեամբ ստացեալ, իսկ Գաղափարականքն՝ նոքա ևս յերկուս ծուէնս բաժանեցան. Ռամկականք կոչեցեալք, և Գերազանցականք։ Նոքա ուրանային զաշխարհին արտաքոյ մեր զգայութիւն, նոյն իսկ անփոփոխան մարմնոյ զլինելութիւնն արդեամբ ուրացան՝ ի միտս գոլով միմիայն պատկեր և գաղափար նոցա ամենեցուն. բայց միայն ընկալան գիտորդածութեանն ևնթակայ, և զարտայն զիրապէս զգոյութիւն։ Սոքա եղեն հինաւուրց Սկեպտիկեանք՝ որք զամենեցունց կասկածս հանին և տարակուսանս զամենայն ինչ ասացին, որոց հետևեցաւ ճարտարն Պիրքըլէյ։ Իսկ Գերազանցականքն չարագոյնք քան զառաջինան, բայց յայնոցիկ՝ զորս առաջինքն ուրացան, ուրացան և ևս զարդեամբ և գիրուղապէս լինելն հոգւոյս ևնթակային խորհրդածութեան. և կերպարանին զմարդն օդապարիկին՝ որ յօդս չրջէր։ Այսպէս Բանթ ցնորեալն, և Ֆիխթէ նոսիա գմայլեալն. մեք ընդդէմ ասացս ամենեցուն ցուցանեմք զարդեամբ լինելութեան աշխարհի գճշմարտութիւն. և քանզի զբացայայտս իրս ցուցանել վաստակիլ է զանտարակոյս տարակուսանս կացուցանել, նոյնպէս ի ցուցումն արդեամբ լինելութեան մարմնոյ կամ աշխարհի՝ է յաւէտ բացայայտել զայդ. ուստի

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Մ-ւրֆ֊ ֆ-՛ -ևէ-ւհ -ւրէե-՛ֆ ֆ-, և -՛ևէ ֆ֊-,

ՅԻՐ. Այսպէս ցուցանեմ. ցուցումն ճշմարտութեան

իրիք՝ է զանյայտս բազդատել ընդ ճշմարտագոյնն քան զգուշանալի ճշմարտութիւնն. իսկ արդ որք անմիջապէս կիւց կան մեզ, և շուրջ պատեն զմեզ, անտարակոյս են զգայարանաց, և անվեհեր ըմբռնեմք զնոսա. ուրեմն կան մարմինք անտարակոյս արդեամբ և պէտս ոչ ունին ցուցանել ։ Նոյնպէս տեսանելի և առաջիկայ առարկայիցն չկարէ լինել ցուցումն. զի զիա՞րդ ցուցցի, որ արդէն տեսանի. ամին իրի լատագոյն իմն եղանակաւ և գիտութեամբ յայտնին մեզ ճշմարտութիւն գոյութեանն մարմնոց և նմանին աչխարհի՝ քան թէ ճշմարտութիւնք բազումք, որք միչնորդութեամբ ցուցանեն և միջապէս միայն յայտնին մեզ. քանզի կատարելագոյն է խնայական կամ հայեցողական ծանօթութիւնն, քան թէ հաւաքաբանութեամբ ցուցեալ ճշմարտութիւն, որպէս յայտ է. ամին իրի ծանօթութիւն գոյութեանն աչխարհի է հայեցողական գիտութիւն՝ այն է խնաստութիւն, մերթ ծանօթութեանն իւ բանաւարութենէ անտի բղխեալ՝ կոչի [illegible]. ո՞ր ն իւ յերկուց գերագոյն է՝ խնաստութի՞ւնն թէ գիտութիւնն, Բայց զի՞նչ, և ցուցանի անդամ. քանզի ևնթակայն զգայութեանց նոյն գոլով՝ յաւէտ ճանաչէ ո՞յք զգայմանց յո՞յց պատճառաց յառաջ եկին. և անվհատո՞ն մարմնոց իւրմէ՝ թէ յայլմէ. հարկաւ կամ մինն լինի, և կամ միւսն. եթէ յիւրմէ, ուրեմն [illegible] լինի [illegible] և պատճառ, որ է նոյն անվհատն մարմինն իւր. ուրեմն կայ արդեամբ և մարմինն իւր. քանզի Թանուրեմն կայ արդեամբ և մարմինն իւր. քանզի Թանեանքն ընդունին՝ թէ հոգին է ևնթակայ եղանակաց իւրոց, և ըմբռնէ զայսր կամ զայնր եղանակի նորին՝ յայս կամ յայն սկզբնէ պատահելոյ, զգաւ զգաւորժակ ընդվէրս, ևն, ևն. և կամ ճանաչէ՝ թէ եղանակք և զգացումք այդ ո՛չ յիւր անվհատն մարմնոյ, այլ յայլմէ ինչ. ըստ նմին օրինակի, որպէս զայ ի ծանօթութիւնն իրական գոյութեան վոքրիկ իւրոց աչխարհի՝ այն է մարմնոյ իւրոց, նոյնպէս և ուղղապէս մտցէ ի գիտութիւն ճշմարտութեան արդեամբ լինելութեան աչխարհին, եթէ ո՛չ ուրանալ յանդգնիցին զճշմարտութիւն մտացն ճշմարիտ սկզբան՝



« չիք ներգործութիւն առանց իւրոյ բանաւոր պատճառի » և կամ թէ՝ « նոյնն չկարէ լինել և չլինել ի միասին » որ է ընդդէմ բնութեան կարգի և մտացն ուղիղ սկզբանց։ Դարձեալ՝ ունիմք մեք ծանօթութիւն և զպատկերս բազդրեալ մարմնոց՝ զբաղակուռսն՝ զշրջանի՝ զեռանկիւնսն՝ են, են. զկանաչ, զկարմիր, զդեղին, զմանուշակ, զանուշ և զպիտակ մարմինս։ Արդ եթէ մարմինք արտաքոյ հոգւոյս չունիցին զգայութիւն և զյատկութիւնս յիշեալս զիւրս, ո՞ւստի առնուլ իցեն այդ գաղափարքդ կերպարագրեալքդ մտաց հոգւոյն. ասոյդ է, թէ ոչ տայ զայդ Աստուած. քանզի չունի կար զօրութեան իմաբելոյ զարտարածս իւր, մերթ նա է պարգևիչն զգայարանաց՝ որք ճշմարտութեան նպաստք են, և ճշմարտութիւն ճըշմարտութեան չկարէ ընդդէմ կալ. զոր օրինակ ճառագայթք արեգական ի նոյն ճշմարտութենէ ազբերն կախին, ոչ կարէ տալ զայդ պատկերս հոգին, քանզի « ո՛չ ոք տայ զոր ոչ ունի ». և թէ տայր զգաղափար քառակուսւոյն, հակառակ առարկային, որ ինքն լինէր, նոյն հոգին չլինէր փափաքող ճշմարտութեան, Եւ բաւ կանի զկարմրութեանն ևնթակայ լինել իւրոյ հոգւոյն. և բաւ կանի Ֆիբթէ զկանաչ գոյն հոգւոյ իւրոյ. ապաքէն սոքա ճնորք են և խեղկատակութիւն թշնամեացն ճշմարտութեան. եթէ ամենայն ինչ ըստ Քանթի ի հոգւոյ իւրոյ յատկութենական և հարկաւոր ձևոցն յառաջ գային, զի՛ է՝ զի կարօտէր հոգին իւր ազբերն ամենայն բարութեանց. զի՛ է՝ աստ՛ զի կարօտէր կերակրոց և ըմպելեաց. զի՛ է՝ զի ի թափառական շրջել իւրում ծովէ ի ծով կարօտէր նաւուցն նպաստի։ Մերթ երևակայութիւնն և առ աչօքն այնքան իմն զօրաւո՛ր էր, որով արգելոյր զհոգի իւր ի կենաց ի չառնուլն ի բերան զայն որ չէ արդեամբ. առ ի՞նչ են պէտք ձգել զքայլս ոտից. մերթ հոգին վաստակի՛, մերթ հոգին ծարաւի՛, մերթ հոգին խեղդի՛ ի ջրոյ, ըստ որում պատահեցաւ Ներքնեանի ումնէ. քանզի նաւարկեալ սորա ընդ ոմանս ի Գաղղիացւոց ի ծովու, և ի վեր հանեալ գվարդապետութիւն իւր ի խոր քուն մտանելն

կալան գնա՝ և յանկարծ ընկեցին ի ծով, և ի գոչել իւրեանց աղերսանօք առ ընկերս աղաւել գինքն՝ մի՛ երկնչիլ, հոգին յոչնչէ ոչ խեղդի, էառ զպատասխանին և առաւել կեցցաւ և ընկըլաւ ի խորս ծովուն, քանզ առեալ զվորձ ճշմարտութեան բնութեանն՝ թէ իրապէս իցէ ծովն, Ո՛ւր Թողութ՛ զի Աստուած տալով մարդկան զդատաստանս և զբանաւարութիւն ի խոյզ ճշմարտութեան՝ իբրև առիթ հաւատարիմ և բաւական ճշմարտութեանն, լինէր Աստուած ո՛չ ճշմարտութեան՝ այլ աստիճան. ո՛չ նախախնամող, այլ խաբող, ո՛չ բարերարութ, այլ անպատրոյն՝ ևն։ Հասկ ուրեմն՝ ի բազում դիպողութիւնս ի տարակոյս կոչեցեալս ի հակառակորդաց կամ ի մարդկանէ՝ եթէ գոյի չեցեալս ի հակառակորդաց կամ ի մարդկանէ՝ եթէ գոյի ոք որ ասիցէ թէ աչօք իմովք առեալ եմ ինքնս, և ականջօք իմովք լուայ, ցրի ամենայն տարակոյն։ Այս է կանոն և ի բանական օրէնս անցեալ ըստ մեծին Պիկերոնի, եթէ ի մի և նոյն իմն ընդունել լիցի ամենայն աղգաց և ազանց հաւանութիւն. զայդ օրէնս պարտ է համարել բնութեան, որ չինչ է յամենայն տրաւոյ։ Ո՞ ոք ցայսօր զայդ մանէ, այն է զիրական գոյութենէ մարմնոյ տարածելութեան, ո՛չ ապաքէն կեանք մեր ի մարմնոյ և ի մարմնաւորս, ո՛չ ապաքէն վախճանիցի անտի կախի և անուցանի, ո՛չ ապաքէն փափաքելի խաղաղութեանն ժամանելմ ի չնորհս պատերազմոյ և գինուց, և ո՛չ ապաքէն բարբառիմք, և առնեաս ճշմարտութեամբ ամենայն աշխարհս կոյ. բայց այսոքիկ ճշմարտութիւնքն չատ։

ՅԺԴ. Առարկութիւնք ասեցաս գոգցես մի և նոյն են ընդ որս են ի Տրամաբանութեանդ ընդդէմ ճշմարտութեան արտաքին գոյութեանց. այն է՝ գոյացութիւնք մարդոյ կարեն սխալել, և թէ սխալական են՝ և յիրաւի խաբեն զմեզ. զորօրինակ հիւանդացն պատահի զի գքաղցրն լեզի ունին, և չերազս և յանուրջ՝ յորս բազմիցս գոյութիւնք բերեն զմեզ ի պէսպէս երևակայութիւնս և յիրս, յորոց և ո՛չ միւնն ինոյ ի բանալ զաչս մեր. այսոքիկ ամենեցուն ըստ բաւականին պատասխանեալ եմք թէ յէական և թէ ի հոգեբանութեան. և մեծ իմն



նախատանօք նախատեն զմարդկային բնութիւնն, և զԱստուծոյն բանական բնութեանս մերոյ. և նոցին վարդապետութիւն վերի ի վայր տապալել և խանգարել զիարդ բնութեանն, զոր ո՛չ ոք բաց յԱստուածային կամաց անտի խանգարել կարէ, և միայն թէ՝ քանզ տրամադրեալ իցեն գոյացութիւնք, և թէութիւնքդ ի կողմանէ առարկային և ենթակային, անհնարին է չկատարել իւրաքանչիւր զպաշտօն. և նորանոր հրաշալի վարդապետութեանցդ պատճառ չէ այլ ինչ, թէ ո՛չ կամ անճանաչութիւն՝ կամ տեղութիւն և չարութիւն կամաց՝ և կամ խղճ պատուոյ իբրև նորոյ իմն դիւտի հնարողի, որք ամենեքին ընդդէմ են իմաստասիրութեանն դլխաւոր առարկայի և նպատակի՝ այնէ գտանելոյ զճշմարտութիւնն, և հաստատելոյ ճշմարտութեան։

---

## ՅՕԳՈՒՄԱԾ Բ.

### ՅԱՂԱԳԱՑ ՉԱՆԱՉԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ԳՈՑԱՑՈՒԹԵԱՆ

ՅԺԴ. Եղեն միտք յաստուածային լուսոյ զրկեալ ոմանցն, որք բռնութեամբ կարողութեան կամացն յաւէտ քան թէ մտացն բանաւորութեան, զանարժանս և զթիւրս ուսուցանել յօժարեցան, որք ո՛չ միայն ընդդէմ Գաղափարականացն՝ զաչխարհն և զմարմինսդ արդեամբ զեղծութիւն պաշտպանեալ հաստատեն, այլ և առաւել քան զչափն զուղիղ սկզբունս մտացն չարաչար մեկնելով յանոթութիւնս չրջեցին. զի ո՛չ միայն ասեն արդեամբ կայ աչխարհս՝ այլև է մնան աստուածային գոյացութեան։ Եւ անաստեղծ՝ ո՛չ որպէս Մանիքեցւոցն յիմարութիւն՝ զերկուս զբարւոյ և զչարին հնարելով սկզբունս աստուածայինս, այլ զամենայն արարած նիւթեղէն կամ զմարմնեղէն գոյացութիւնս՝ [illegible] ասացին։ Նախ Քսենոփանէս չարաչար մեկնելով զիմաստ առածիս «յոչնչէ ոչինչ

լինել », զհամայն արարածոց կամ զբովանդակ աշխարհի երթալ զառեղծուածն, և հաստատեալ ի մտի մի միայն լինել բնութիւն՝ յաւիտենական, անսահման և անփոփոխ. ընդ որում այլքն ամենայն հաղորդէին և միանային։ Նոյնպէս Առյիկեանք՝ որք ասացին զԱստուած գոլ հոգի աշխարհի, և զաշխարհս իբրև արտաքին մարմին նորա, ենթակայ շարժմանց և եղանակի զօրութեամբ ներքին հոգւոյն՝ այն է Աստուծոյ։ Ձհոյ յիերայական տոհմէն բարբառք Սբինոզա էլ, որ եղ զանձն հպատակել թիւր վարդապետութեան. քանզի և սա չարաչար մեկնելով զգոյացութեանն տհասին, այն է եւրիւ ու ինդին կ՚, ձեռնարկեաց այսպէս. իսկ արդ ինքնին կալ ցուցանէ զհարկաւորութիւն գոյութեանն. ուրեմն գոյացութիւնք հարկաւորք Աստուած են. քանզի ասաց. « զգոյացութիւնն իմանամ զայն ինչ, որ ինքեան կայ և ինքնին ճանաչի, կամ ծանօթութիւն՝ որոյ չունի պէտս ծանօթութեան այլոյ իրիք ի կերպասելոյն ». և ևս « ծանօթութիւն ներգործութեան կախի ի ծանօթութենէ պատճառին, և զայն ինքն պարփակեալ ունի ». և այլուր թէ՝ « գոյացութիւն ոչ կարէ յայլ գոյացութենէ ծագիլ կամ առեղծանիլ ». և հետ ուրեմն՝ « բայց Աստուծոյ չկինել այլ գոյացութեան ». և ասի յայտնեալ կացուցանէ զմի միայն գոյացութիւն՝ և զայդ անսահման. իսկ որ տարածեալն է և խորհրդածութեան կարող՝ այդ ամենայն են աստուածային աստրոգելիք և եղանակք աստրոգելեացն։ Գոգցես զմի և զնոյն վարդապետութիւնն Սբինոզայի նորոգել դուն գործեաց և Ֆիխթէ, որ եղն զմի ԲՐ-Ի-Ց Գ-Ն ՀՈ-Ց-ՈՒՆ՝ և ԲՐԻՆՑ ԸՆԴՈՒՆԻ. զոյն սա կոչեաց գ-ԻՐ ԲՐ-Ի-Ց և ՀՈ-Ց-ՈՒՆ, և ղգանազան առարկայս զօրութեամբ խորհելոյն ի տեղիս տեղիս կացուցանէր, այն է զԻւր մտաւ։ Սբինոզայի հետեւեալ քան զՖիխթէ Եղիլինկ, որ հնարեաց զընդհանուր, զհարկաւոր և զյաւիտենական և զբացարձակ միտս իմն, որով ամենայն ինչ կինէր յաշխարհի՝ իբրև եղանակ և աստրոգելիք իւր, զօրութեամբ իւրոյ անփոփոխ կերպին, որք և ամենեքին իբրև անցաւորք էին, և ոչ



գոյացութիւնք իրապէս։ Ամին հետևեցաւ և Հէկել միաբան յամենայնի գոգցես ընդ նմա, և ի վախճանի ամենեցուն սոցա և Պէնկացի Թեմեամին Ա.հրենս, որ եղ գերագոյն էակին զերկու իմն կարգ՝ զբացարձակ և զանսահման, առ որ վերաբերին՝ ասաց՝ հոգիք և մարմինք։ Սոցին ամենեցուն ընդդէմ առաջիկայ առաջարկութեամբս յուցանեմ

ԹԷ ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ ՈՐՔՈՒՒ ՀՆ Է ՈՐՈՇԱԿԱԼՈՒ ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ ՀԱՏ, և հետևաբար բազանգուածոյ ընդ նմա։

ՅԱԲ. Նախ՝ զի յատկութիւնք աստուածային գոյացութեանն են հակառակ և հակասական աշխարհի գոյացութեան, որպէս յԱստուածաբանութեան անդ ասացաք (Մ) ընդդէմ Մանիքեացւոյն. քանզի Աստուած հարկաւորութեամբ բնութեանն կայ, իսկ աշխարհս պատահմամբ՝ և այդ առաջի աչաց մերոց է. զի ապականութիւն միոյն բան արարածոց՝ է ծնունդ միւսոյն. Աստուած անճնչիխան է և անկախ, իսկ մարմինն ատի և անտի կախի, թէ՛ նկատմամբ էութեանն և գոյութեան, և թէ՛ նկատմամբ գործողութեանցն. Աստուած անսահման՝ և սա լի սահմանօք և յամենուստ շրջապատեալ. Աստուած գերագոյն է և ամենակալ, իսկ սա տկարութեամբ լի՝ զի առնելու և նուազի, և ապականի. Աստուած անփոփոխելի՝ և սա փոփոխական. նա պարզ, սա բաղադրեալ. նա մի, և սա անթիւ՝ են, են. զրոս չէ պարտ աստ հաշուել զամենայն։ Արդ ո՞րպիսի միտք իցեն արդեօք ոսոխացն աստուածային բնութեան, որոց չտեսեալ զայնքան հակասական առաջարկութիւնս և զհակառակութիւնս ընդմէջ աստուածային բնութեանն և աշխարհի՝ յանդգնեցան զոյդ արտասանել. բայց այդ ի թէութենէ մոլորութեան է, քանզի առերեսեալ միանգամ՝ ուրուք յուղիղ շառաչն, ամենայն քայլք ոտիցն յետ այնորիկ են ոխակալանք. միայն զարմանք պարտին ունել զիւրաքանչիւր ոք ի ձէնջ, թէ մարդկային բնութեանն տկարութիւն ցո՞ր աստիճան չարութեան կարէ ձեռս արկանել. և զայսմանէ չատ։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՅԻԶ. Առարկեն ասէքն. Թէ չընդունիս զդոյացութիւնն արարածոց գոլ և պարփակիլ յԱստուած, ապա Աստուած չէ անսահման պարունակող յինքեան զամենայն ինչ բարութեամբ։ Ը. Ընդդիմութիւն գաղափարացդ՝ այն է անսահմանութեան Աստուծոյ, և սահմանեալ գոյացութեան ծագի, եթէ ի մի և ինոյն ինչ բաղդատին ընդ միմեանս, ո՛չ թէ յայլ և յայլ պարագայս։

Պատասխանեմ. առ Ա. ուրանամ զհետեւութիւնդ. քանզի Աստուած պարփակէ յինքեան զբարութիւնս արարածոց զանկատելապէս պարզ, և զբարութիւնս արարածոց զանկատելութեամբ խառնեալան այո՛ պարփակէ և պարունակէ, բայց զերազանցապէս՝ այն է զամենայն զբարութիւնս զայնոսիկ, բայց զգերազանցագոյնն. քանզի զորօրինակ եթէ ուրուք լիցի 100 դահեկան ոսկւոյ և ո՛չ պղնձոյ, միթէ կարիցէ՞ ոք կոչել զնա զուրկ ի 100 պղնձի դահեկանացըն, մերթ զայն ունի՝ և՛ զգերազանցօրէնն. քան ամին օրինակի գոյացութիւնք արարածոց կամ մարմնոց չդատանին յԱստուած բան որում պակասութեամբ լի են. այո՛ զամենայն բարութիւն գոյացական ունի յինքեան Աստուած զարարածոցն, բայց զայնս՝ որք անարատք են և զուրկ ի պակասութենէ. և զրկելն գարարած գոյացութիւնն ի բնական պակասութեանց և տկարութեանցն, որք են չարութիւնք մեթաֆիզիքականք՝ ո՛չ է ի ձեռս և ի կամս Աստուծոյ. քանզի իւրոյն ամենակարող զօրութեամբն իսկ չկարէ անսահման կացուցանել զոր ի բնէ այնպէս է, և Աստուած զարարածս՝ և ո՛չ թէ Աստուածս կարէ առեղծանել։

Առ Բ. ասեմ՝ ուրանալով զամենայն. քանզի ո՛չ միով իւիք եթէ առաքելոյն արարածքն յԱստուծոյ անտի՝ որպէս տեսաք. և եթէ գոյացութիւնն կամ բնութիւնն Աստուծոյ լինէր բովանդակութիւն իւին ամենայն հակառակութեանց և հակառութեանց՝ ունէին արդեօք իրաւունս



անմիտքն և անաստուածքն Գերմանիոյ, զի ի հաստատութիւն առաջարկութեանս տեսաք ո՛չ միով իւիք տարբերիլ աստուածայինն գոյացութեանն յաշխարհի գոյացութենէն, Բայց յայտ է՝ թէ վարդապետութիւնքդ և յաւէտ բանաստեղծութիւնքդ այդոքիկ՝ են պատուդ ո՛չ բանական մտաց, այլ մոլութեան կամաց, կրիւք և անօրէնութեամբ վարեցելոց։ Եւ երանի՛ թէ բանաստեղծութիւնք լինէին, զոնէ հեթանոսացն առասպելաբանութեանցդ նմանէին. քանզի ընդհանուր կանոնն բանաստեղծութեան է՝ զի առարկայ կենդանի երևակայութեանցդ այդոյիկ կամ ճշմարտութիւն է, և կամ գոնէ նմանութիւն ճշմարտութեան, ո՛չ թէ բոլորովին աստութիւն հակառութեան, հակառակութենէն, և հակառակութիւն գործոց և բանից։ Եւ եթէ որ ոչ կարէ ի կիր արկանել զուղիղ սկզբունս մտացն խանդարեալ գործարանացն մարմնոյ, կոչի տիրապէս մտաթափ և յիմար, ո՛րքան առաւել հանճարեացն այդպիսեացն գաղուց, որոց՝ պատրուակաւ բազմացուցանելոյ զԱստուածս յաշխարհս, կամք և դիտաւորութիւն նոցա է բառնալ իսպառ զանունդ Աստուծոյ. զի որ յոյժ ցուցանէ՝ ոչինչ ցուցանէ, և որ յոյժ դրուատէ՝ պախարակէ, և որ բազմացուցանէ զԱստուած՝ բառնայ ի միջոյ զԱստուած։

---

## ՑՕԴՈՒԱԾ Գ.

### ՑԱՂԱԴՍ ԹԷ ԱՇԽԱՐՀՍ Ո՛Չ Է ԱՆՍՏԵՂԾ. ԱՅԼ ՍՏԵՂԾԵԱԼ ՑԱՍՏՈՒԾՈՑ

ՅԻԶ. Եղեն և ոմանք՝ որք ասացին զաշխարհ անառեղծ լինել և յաւիտենական. Ղևվկիբբոս, Թեմոքրէտոս, Եպիկուրեանք և Պղատոն իսկ զոգեաս յայն զիմն կարծիս. քանզի ասացին՝ թէ նիւթն ինքնին յինքենէ է. բայց հպատակ գոլով Աստուծոյ՝ կարգաւորեցաւ և զեռեղեցաւ յԱստուծոյ՝ թէ և ո՛չ յամենայնի. քանզի թէ-

սէտև հպատակ, բայց և անսահակ. այն է՝ ո՛չ յամենայն հնազանդ կամացն Աստուծոյ։ Ընդդէմ սոցա ուրեմն այսպէս հնչեմք զառաջարկութիւնդ.

Աչե-ուն չ-ղ նչ-ղն ո՛չ է հ-ոեչք, այլ ոեչքե-լ Աս-ոն-ծոյ։

ՑԺԻ. Յաստղաբանութենէ անտեղծ բանիս յայտ է՝ թէ որ անտեղծն է, ինքնին և յինքենէ, այն է՝ զօրութեամբ ներքին բնութեան իւրոյ՝ կայ, և հետևաբար հարկաւորութեամբ կայ. քանզի չկարեմք երբէք հաստատել միով իւիք, թէ գոյացութիւն իմն կարէ պատահմամբ կալ. և այդ առանց պատճառի՝ յորմէ սկիզբն առեալ իցէ, ապա թէ ո՛չ ընդդէմ ուղիղ սկզբան մնացս լինել պարտէաք՝ ասելով, կարէ իմն լինել պատահմամբ առանց իւրոյ բանաւոր պատճառի։ Ուստի, որ ոչն ունի զպատճառ լինելոյն բաց յինքենէ, նա հարկաւորութեամբ բնութեանն կայ, և չկարէ պատահմամբ կալ. իսկ արդ աշխարհս է անտեղծ՝ ըստ ասխատն ճշմարտութեան. ուրեմն պարտ է ցուցանել թէ՝ աշխարհս ոչ է պատահական, որով կատարեացն ժամանել նպատակին. առ որ թէ սկզբացին, հետևեալն ինքնին թէ աշխարհս և նիւթն իւրմէ պատահմամբ, անտարբերութեամբ և ազատութեամբ կայ, և որ պատահական է և անտարբեր, և ազատ ի լինել և ի չլինելն՝ ո՛չ է հարկաւոր։ Արդ՝ աշխարհի չլինելն հարկաւոր՝ այլ պատահական՝ ցուցանի. քանզի որ հարկաւորութեամբ կայ, չկարէ անտարբեր լինել նկատմամբ չլինելոյ, այլ միշտ պարտ է՝ զի եղեալ իցէ, և իցէ՝ և լիցի. բայց ո՛ոք արդեօք այնքան անմիտ իցէ, բաց ի հրէշեղդ բանական բնութեան, որ ասիցէ հարկաւոր լինել աշխարհի. քանզի թէ ի լինելն և թէ ի չլինելն անտարբերութեամբ կայ. ո՛չ զի եղեալ է՝ հարկաւորութիւն իմն ծագի անտի բնութեան նորա, և ո՛չ չեզեալ՝ որով հարկաւորութիւն լիցի էութեան կամ գոյութեանն նորա. զի զօրութենակ ձգելոցս զբարն ի վեր՝ ո՛չ զի ձգեցաւ, ծագի անտի հարկաւորութիւն չարժմանն նմին, և ո՛չ զի դանդաղ կայ



ի վերոյ երկրի, ծագի անտի հարկաւորութիւն չարժողութեան. և այս ամենայն քանզի ո՛չ ներքին զօրութեամբ բնութեանն կայ աշխարհս՝ այլ յայլմէ։ Այսպէս դիր ըզքարն և զայլ որպիսի և իցէ մարմին նիւթեղէն յորշեալ իմն երկրէն՝ յատեանն անդ կացցէ անշարժ. քանզի չկարէ ներքին զօրութեամբ անձին կամ բնութեանն տալ զշարժումն անձին։ Զարձեալ՝ որ հարկաւորութեամբ բնութեանն կայ, պարտ է զի ամենակար և զերազոյն լիցի, այն է պարունակող զամենայն տեսակ բարութեան. քանզի լաւ է կատարեալ լինել՝ և ամենայն բարեմասնութեամբ զարդարեալ, քան թէ պակասիլ միով իւիք. և քանզի հարկաւորութեամբ և զօրութեամբ բնութեանն ունելի զոր ինչ ունել հնար է, նմին իրի ո՛չ երբէք և ո՛չ իւիք կարէ բացայայտիլ պատճառն պակասութեան աշխարհի ի բարութիւնս, եթէ ո՛չ մի ևեթ այն՝ զի պատահական է՝ և կախի յայլմէ։ Նոյնպէս ասացաս զամենայն ստորոգելացն Աստուծոյ, յորոց ամենեցուն զուրկ և թափուր գոյանի. քանզի հարկաւորն ո՛չ ունի զսկիզբն և ո՛չ զվախճան, մերթ աշխարհս քանզի հազար ամք են միայն, յորմէ հետէ կայ. հարկաւորն փոփոխութենանց և ազանակի չկարէ կալ ենթակայ, ո՛չ կարէ առաւելուլ և ո՛չ նուազիլ, մերթ աշխարհս յատեան ի փոփոխութեան կայ՝ թէ՝ նկատմամբ գոյութեանն, և թէ՝ նկատմամբ ազանակին. քանզի զի՞նչ ընդդիմութիւն կարէ ելանել, եթէ առնուցի մի մնան աշխարհիս՝ մեռանելով, կամ յայլ իմն փոխադրելով այսր կամ այնր գոյացութեան։ Զի՞նչ ընդդիմութիւն, եթէ ի հազարաւոր արարածոց յատելոյր և այլ իմն արարած. և ո՛չ ասացէն հազարք մեռանին օր ըստ օրէ՝ և հազարք ծնանին արարածոց։ Ասացէն և ո՛չ մի. նա ճշմարիտն այն է, զի զարդարին լերինք և հովիտք գեղեցկութեամբ ծառոց և ծաղկանց և պտղոցն՝ ի գարնան և յամարան, և ի ձմերան խոտն ցամաքի, պտուղք անկանին և ծաղիկքն թառամեալ թօթափին, և անչքանէ ամենայն վայելչութիւն աշխարհիս։ Բայց յամէնս ասացեալս երկարել զբան. մի միայն վասն առեալ ի կարօղութենէ խորհելոյ, բաւէ եղծա-

նել զամենայն զրոյցս վանաքիս ասելացն. քանզի խորհելն պահանջէ զգարշ գոյացութիւն, և աչխարհս բազադրեալ և թանձր և խոշոր՝ ինքնին բազկացեալ և կատարեալ է. ուրեմն իմաստութիւն չէք յաչխարհի: Եւ հուսկ ուրեմն՝ քանզի չէ Աստուած՝ բայց միայն զի կատարեալ իցէ, և աչխարհս այդքան տկարութեամբ զգաճեալ, դոնէ չկարէ Աստուած լինել. բայց որ չէ Աստուած, այդ արարած է. և որ արարած է՝ հարկաւորապէս պատահական է. ուրեմն ո՛չ է անստեղծ աչխարհ:

ՑԺԹ. Բայց ո՞ իցէ արդեօք ներգործական և ստեղծիչ պատճառ այսր արարած բնութեան, ցուցանելմ և զերկրորդ մասն առաջարկութեանս. երից իրաց կարելմբ տալ զշնորհութիւն արարչութեան աչխարհի. կամ նոյն արարած բնութենանն, կամ ոչնչին, և կամ այնմ՝ որ հարկաւորութեամբ կայ: Արդեօք նոյն արարած բնութիւնն յանձնէ անտի և ի շնորհենէ իւրմէ՞ թէ յոչնչէ եղև, ասեմք յերկոցունցն՝ և ո՛չ ի միոջէ. քանզի ստուգաբանութիւն բառիս ՚՚՚

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳՍ ԹԷ ԱՇԽԱՐՀՍ ՈՉ Է ԲՂԽՈՒՄՆ ԻՆՉ ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԳՈՑԱՅՈՒԹԵՆՔ

